3

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՕՍՄԱՆԵԱՆՑ

182 U2

2004

2445

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՕՍՄԱՆԵԱՆ

ՊԵՏՈՒԹԵԱՆ

ՑՕՐԻՆԵԱՑ № 9509

Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶՕՎՍԿԻ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՀԱՏՈՐ Բ.

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1841

9(56)

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՕՍՄԱՆԵԱՆՑ

## ՍՈՒԼԴԱՆ ՄԷՀԷՄՄԷՏ ՉՈՐՐՈՐԴ

ՅԱՒՈՒՐ ութերորդի թագաւորու-
թեան իւրոյ երթեալ մանուկ արքային
Մէյմէդ՝ ած ընդ մէջ զաւսակըն և դար-
ձաւ. և 'ի վաղիւ անդր բարձաւ 'ի
հրապարակէ անտի գիւղն՝ մանաւանդ
թէ ասկերաւն մեծի վէզիրին Ահմէտայ:
Քանզի Ենիչէրի ոմն եգեալ 'ի մտի
թէ ճարալ արանց պարապարաց օգտա-
կար իցէ յօգտացուցիչ, յօշ յօշ պատա-
ռեալ վաճառեր զայն: Զնոյն և խու-
ժանն արար, մինչև չմնալոյ 'ի մերայ ա-
նըն լոկ մայ. Նմին իրի Հէզարփարէ
անուն կոչեցաւ նմա 'ի պատմագրաց,
և համբաւեալ է այրն առ. նոսա ամփ

պաշտելոյ կանանոցին արքունի զամենայն զսէտս փափկութեան անկարծելի իմն առատութեամբ ։

Հարկ էր ըստ սովորութեան պարգեւ բաշխել զօրաց . և զի սպառեալ էր գանձն արքունի, Սոֆու Մէհէմմէտ վէզիրն մեծ խնդրեաց 'ի Ճինճի խօճայէն երկերիւր քսակս դրամոց . և 'ի չտալ նորա առաքեաց այր՝ զի բռնութեամբ առցէն 'ի նմանէ ։ Ճինճին 'ի վայր ոստեալ ընդ պատուհան տան իւրոյ (վա՛չ անդութեան բարձից ծերունւոյն, ասէ վիպագիրն), և փախուցեալ թաքեաւ ընդ փախաթիւ ուրէք ։ Ապտիւլֆէթթահ ոմն զօրական այր զուարճախօս գտեալ զնա յայն գիրս՝ ասէ . « Ո՛հ ո՛հ, աչա ծածկեալ է Ճինճին զանձն իւր փախթիւ, զի զգեան երդմնեցուցէ զանդարամետականս » ։ Իսկ նորա խոժոռս հայեցեալ 'ի նա բարբառեցաւ և ասէ . « Ա՛յ անզգամ, չգիտիցե՞ս զի դատաւոր եմ ես զօրաց և գինուորական » ։ Յայնժամ խցին զբերան նորա և արկին 'ի բանտ, ուր սպառնալեօք տանջանաց հարկեցաւ խոստովանել մի առ մի զտեղիս գանձուցն թաքուցելոց 'ի տան իւրում ։ Եւ էին երկոտասան սափորք նորաձոյլ դրամոց, և եօթանասուն հազար դահեկանք ոսկիք վաղեմիք, որք բաշխեցան 'ի զօրականս՝ բազում ժամանակք էին 'ի յարգի՝ յանուն տեառն

խորհրդոց անուանեալք ճենճի փարա-
ոյ : Իսկ ինքն դատապարտեալ յաքսո-
րս յԱրաբիա՝ մինչդեռ և ասկս ամա-
ռութեանն յապաղէր 'ի Ճանապար-
հին, և մահերիքն խորջանային դարձու-
ցանել զնա անդրէն 'ի թագաւորեալ
քաղաքն, հիւանդն չարաչար տապեալ
'ի դրանէ՝ խեղդամահ արար զնա անդ
'ի Մելիտինէ :

Ընդչէրիքն յետուն հազարք փողս ե-
րեքհարիւր ընկալեալ բաա դլուխ 'ի
աշարդեխ մասին, և յաւելուած նա թա-
շակի, ոչ նա տրանջէին. այլ զի յայսմ
նուագի ոչ ինչ բան լինէր յաղագս
համելոյ զմանկլաւիկան յարքունեաց
և ամբառնալոյ զնոսա 'ի կարգ սպայ-
ից և այլոց իշխանաց որպէս էր սովո-
րութիւն, մերանեցին սոքա և բազք
կալան առ մեկինեմեծ. և թէ փոքր մի
նա յապաղէր կատարումն խնդրոյ նո-
ցա, մեր 'ի վայր շրջէին զարքունիսն [1] :

1 Երրեակ ազգարանք էին՝ յԱտրիանու-
պօլիս և 'ի Գալատիա և 'ի Կոստանդնու-
պօլիս, յորոց յիւրաքանչիւրում կային երկ-
հարիւր մանկունք ընտրեալք յորդւոց քրիստո-
նէից, և մանաւանդ 'ի Պոնտացւոց և յԱլ-
բանացւոց, և կոչէին Իչօղլանը. և էին սո-
քա բաժանեալք 'ի դասս դասս, և դասուց
իւրաքանչիւր պանաչան պաշտամանք էին 'ի
դրան արքունի. իսկ վէսալ ամենեցուն էր
ներքինապետն աղիւսի ներքինեաց Գափու-

Չև հանդարտեալ 'ի սպառ մանկ_
լուկաց՝ յորոց կային ատամքն 'ի բանի
նոցա եղեալք, և բորբոքէին զանխրատու_
թեանց վէրքերն մեծի, և զգենուլեալքն,
և զամենեցուն որք ապանէին զխալահիմ
աղքայ. և միաբանեալ ընդ մանկլաւիկ_
ացն որ եկեալ էին յալքունեաց Դա_
լադիոյ՝ խռովեցին առ հասարակ զքա_
ղաքն: Յայնժամ վճռեաց գենդեան
զգաստանալնեք կատարածի աստամբակելոցն
առ հասարակ, և ենիչէրիք մօտգիւք
ձեռն 'ի գործ առնէին 'ի կատարումն
հրամանին. սակայն խռովեալքն վաղ_
զիջան և գնացին այլ խուրասանջիւր 'ի
տեղիս խուժանոց: Իբրև անցին 'ի վերայ
աւուրք սակաւք, երեք ամանք 'ի զինուո_
րակաց նոցա 'ի մահ տուան 'ի հրա_
մանէ վեզիրին, և զխակուպք նոցա փո_
խանակ ծովանոց լինելոյ արկան 'ի
բացի '. մին կոյ խռով հայեալ ժո_

ղովով ունօրանեալ: Ի պալատանոց առէ ան_
բառնայեն մանկլաբիւն ըստ կարգի և ըստ
ժամանակին 'ի կերուփոյն պալատնանն հեթե_
լադօրան, և ապա ընդ պառաւոյ վեզիրի
մեծի: Համբերելոյ նոցա առ հասարակ մօ_
րենակ էին. սակայն բացմաց գեւօ ալեա_
կեալք ղակածօքն երկայնէին փոխգրելոյ.
քանզի յայս պարան էր, ասէն Տաձիկ, և_
հաղեփն Յովէփ 'ի դրան փարաւոնի:

' Քանզի այս օրէն էր 'ի նախնեաց հե_
տէ, զարմանալ զօրականաց ու 'ի բացի Բա_

ղովեցան վերստին 'ի ձիարձակարանն : Եհաս առ նոսա հրամանն յարքայէ՝ երթալ յիւրաքանչիւր տեղիս, և ես փոխեցից ասէ՝ զվէզիրն և զգնդապետն : Այնինչ հպատակէր վէզիրն հրամանին՝ ենիչէրիք ոչ առին յանձն, և մեծաւ կատաղութեամբ յարձակեալ 'ի հրապարակ անդր մարտ եդին ընդ սպայսն և ընդ մանկլաւիկս, զբազումս 'ի նոցանէ կոտորեցին յանխնայս, ևս և զապաստանեալսն 'ի մզկիթ սուլթան Ահմետայ, և զմնացեալսն ցիր և ցան վարատեցին :

Եկին ծնողք և ազգակիցք մեռելոյն թաղել զդիակունս նոցա. այլ դիակունք երկերիւր՝ զորոց չեղև ինչ խնդիր՝ մնացին 'ի ծով իբրու ապստամբք և անարժանք օրինաւոր աղօթից և կարգաց դենին : Սակայն և սաստի հակառակութիւն մեծ յուզեցաւ 'ի մէջ դասու գիտնականաց. զի յոլովք 'ի նոցանէ, ընդ որս և համբաւեալն Քեաթիպ չէլէպի, պնդէին եթէ 'ի յուզել յայտնապէս ճակատու պատերազմի՝ որք միանգամ սուր 'ի ձեռս անկանին՝ չհամարին ապստամբ. սակայն որք զկողմն ունէին զվէզիրին մեծի, ընդ որս և պատմագիրն Գարաչէլէպիզադէ Ազիզ էֆէնտի, զհակառակն ունէին, և յիրաւի :

զուր յայտնի է 'ի կափակեանս ամբոխին, այլ 'ի ծով ընկենուլ :

Սուֆու Մէհէմմէտ զառաջինն 'ի բարեկարգութիւն աշխարհին Թուրք արդարեւ ուշ առնել զգլխովին բան խորումին շաչու. ամեկա որոյ և փոխանակ մեծի զգլխանցին վեզիրաց զաղեմի կոչեցելոյ զինդզաձևն տէրվիշաց գնէր 'ի գլուխ իւր, զանշարժաւէր բարձն կամելով յայտ առնել, և զհրամեշան 'ի փափկութեանց աշխարհի: Այլ ապա զհետ ակնդեալ կաշառակերութեան և բռնութեան՝ ձգեաց յանձն իւր զատելութիւն ամենեցուն, և մանաւանդ զՄուրատ աղայի զօրավարին ենիչերեաց՝ յառաջինկայ պատճառաւսա: Կամէր վեզիրն հանդերձ այլովք 'ի մահ ատ և զՄարդ հիւսէյին զանն. այլ յաղաչանաց Գուրա Մուրատայ զօրավարին ենիչէրեաց չնորհեաց նմա զկեանսն: Մինչդեռ հիւսէյին մեկնեալ 'ի բաց գնայր 'ի վեզիրէն, տեղապահն Ալապատէ արկ զձեռն իւր զօձեօք նորա. խոկ նա քանզի այր քաջ էր և յաղթանդամ՝ մերկեաց անդէն զսուսեր իւր և ասէ ցնա. «Ո՛հ անմիտ մանուկ, քե՛զ մնաց ձեռն զօձեօքս առկանել». և եհար վիրաւորեաց զմի 'ի ծառայից տեղապահին որ կամէր առնել զնա: Յայնժամ ընթացան 'ի վերայ նորա ամենեքեան, և խեղդամահ արարեալ աչկին 'ի ծով: Ընդ այս զայրացեալ Գուրա Մուրատ՝ անհաշտ թշնամութեամբ ոխացաւ ընդ վեզիրին, և փութայր հա_

նել ընդ կառավին նորա զնախատինս իւր։

Յաւուրսն յայնոսիկ յամին 1649 Տէրն Հիւսէյին սպարապետ զօրուն Կրետեայ ազդ արար 'ի դուռն արքունի, եթէ առ 'ի չգոյէ զօրաց և համբարուց հարկիմ բառնալ զպաշարումն : Ծովապետն կամէր ըստ հրամանին արքունի խաղալ անդր նաւուք հարիւրովք. և վէզիրն մեծ չառնոյր յանձն հանդերձել նաւս աւելի քան զութսուն, և հաստատեցաւ բան վէզիրին : Այլ 'ի հրդեհիլ նաւուց տորմիղին 'ի փոխել 'ի խառնութենէ յուղեւոյ յենիչէրեաց, բովանդակ վշտանն անկաւ զնովաւ : Իսկ նորա ոչինչ կասկած զանձնէ ունելով՝ կոչեաց զզօրագլուխս և զգլխանականն յարքունիս՝ խորհուրդ 'ի մէջ առնուլ առաջի տղայոյ և մօր նորա առ 'ի դարման վնասուն : Մեհմէտ արքայ բազմեալ կայր յաթոռ իւրում, և յաջմէ նորա դշխոյն Մահփէյքէր սուլթան, նա ինքն է Քէօսէմ: Սկաւ Թագաւորն յանդիմանել զվէզիրն վասն չարեացն պատահելոց՝ որպէս խրատեալ էր 'ի մօրէն. և 'ի չքմեղելս լինել վէզիրին ասէ մանուկ արքայն. « Չես դու այր արժանի վէզիր լինելոյ, առեք ցիս այդր զմատանին »: Վէզիրն յապուշ հարեալ և անկարեալ առ վայր մի, մատոյց զմատանին 'ի ձեռըս Թագաւորին, և նա շուրջ յա-

ծևալ զհայեցուածան 'ի ժողովականս անդր՝ կոչեայ զզօրապետն Ենիչէրեայ զԳօրոս Մուրատ, « Ե՛կ, ասէ, աղա, առ զմատանիս. աչա մեզիր կացուցի զբեզ՝ արդ. անսից որպէս վարեսցիս »: Այսպ ասէ Մահփիզբէր զշխոյ· « Ցոլով զանձք վատնեցան, և սակաւ շահք եղեն: Կամեցով կամէին տալանանել զիս · այլ գոհութիւն Աստուծոյ, զի առ եօթամիք թագաւորոք կեցեալ, և արդ եա կենդանի եմ: Թէ մեռանէի եա, աշխարհ ոչ շինէր արդեօք և ոչ կործանէր · այլ արժան իցէ խաղաանել զորքայ, և 'ի հրամայել նորա ինչ՝ առնել ցնա · Վա՜շ ինձ որդեակ, և ո՜ ուսոյց քեզ զդոյն »: Եւ այս կշտամբանք զշխոյս անկնարկէին առ զասաւորն Գօլարաչէքէպիլայաէ:

Եւ զառաջութեամբ եկեալ նորոյ մեզիրին Մուրատայ յասենէ անտի, եա ընդ եա յարքունիս և հաս զինչս Սոփուէին, և աքսորեալ զնա 'ի Մալղարա՝ յեա ասուրց և զհրաման խեղդելոյն արձակեալ զհետ նորա:

Ցերկրորդում ամի Թագաւորութեանն Մէհէմմէտայ դեսպանք յարեւելից և յարեւմտից եկեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ խնդրակից լինէին ընդ նմա և հաշտութեան զդաշինս խաղաղութեան, ուր Օսմանեանք չև էին խաղաղեալ յընտանի շփոթից: Զի 'ի Թագաւորեալ քաղաքին կռուին մեզիրք և զեն_

պէտք երեք մի զինի միոյ 'ի սակաւ ա-ւուրս փոփոխեցան . 'ի փոքրն Ասիա Կիւրճի Նէպի ոմն միաբանեալ ընդ իւր զչամբաւեալ հուզկահարն Գաթըր-ճի օղլու՝ զինեալ գայր 'ի Բիւզանդիոն զօրօք բազմօք . և 'ի Կրետէ ենիչէրիքն ապստամբեալք 'ի սպարապետէն կա-մէին բառնալ զպաշարումն և դառ-նալ 'ի Կոստանդնուպօլիս : Կիւրճի Նէպի խորտակեցաւ 'ի զօրաց վէզիրին մեծի . Գաթըրճի օղլու ներումն հայ-ցեալ՝ ընկալաւ և զկուսակալութեան պատիւ, և բանակն Կրետեայ առ ժա-մանակն 'ի ձմերոց նստեալ սպասէր դալստեան այլ ևս զօրաց 'ի Կոստանդ-նուպօլսոյ :

Գարնայնի սկսեալ վերստին զպա-շարումն՝ Թէպէտ և ոչ սակաւ արու-Թիւնս քաջութեան ցուցանէին, այլ յապաղումն օգնութեան 'ի Կոստանդ-նուպօլսոյ ցաւուրս աշնայնոյն լքոյց զնոսա յոյժ : Զի որպէս ասէ վիպագիրն, մինչդեռ տորմիղ Վենետկեցւոց կա-լեալ էր զնեղուցն 'ի Չանագ գալէսի և չտայր անցս արքունի նաւատորմին, վէզիրք իւրաքանչիւր գիւղազբօս զը-ւարճութեանց ուշ ունէին, և կամ մա-նաւանդ 'ի դաւաճանել զիրեարս : Ին-քըն իսկ վէզիրն մեծ ընդ արս սինլքորս հանդանակեալ 'ի խրախուճս և 'ի շը-ւայտութիւնս պարապէր, մինչև գը-րեաց առ նա դշխոյն 'ի բերանոյ արքայի

և ասէ . « Կացուցի ես զքեզ վէզիր մեծ ոչ զի 'ի բուրաստանս և յայգիս զբօսնուցուս, այլ զի իրաց սպասաւորութեանս խնամ կալցիս . զդատս չեր անձին քում, ապա թէ ոչ՝ հասից ես զկառափըն քո » : Ծանրացուցանն եղև ընդ այս վէզիրն, և կոչեցեալ զսանճադրակին արքունի զՊէշիր աղա՝ կշտամբեաց զնա բանիւք դառնութեամբ , որպէս թէ նորա թելադրեալ իցէ արքայի զխրատն : Երդնոյր այրն և նզովէր զանձն իւր, ոչինչ ոչ գիտել ասէր յայդցանէ . սակայն մերժեցաւ յարքունեաց : Ի յաճախել վէզիրին յապախտիս, զօրավարն Պէկդաշ աղդ արար նմա հրաժարել ինքնակամ յիշխանութենէ անտի: Հաւանեցաւ Սուլտան և անսաց խրատու մտերմութեանն Պէկդաշայ, և երթեալ առ արքայ ասէ . « Մեծազօր տէր , ոչ է բարուք՝ եթէ վէզիրք չորք իցեն 'ի միում պետութեան հոմիշխանք . ահաւասիկ մնամնիք քո ցքեզ . այլ թէ չկամիս զկորուստ աշխարհիս՝ մի երբէք տայցես զդա ենկչէրւոյ ումեք » : Իւ տուաւ մնամնին ցՄէլէք Ահմէտ փաշա :

Սա թէպէտ և այր էր բարեմիտն , այլ ձախողակի կամեցեալ ընուլ զթերութիւն արքունի գանձուն , և հարըզկարգեալ ռոճիկս իշխանաց և սպականաց, և ցածոյց յոյժ յոյժ զյարդ դըրամոց ընդդէմ կամաց նորին իսկ մեր

Թագաւորին ։ Յորմէ ծագեցան ահագին խռովութիւնք 'ի քաղաքին և արտաքոյ, գրեա թէ և յամենայն կուսակալութիւնս արևելից. որովք և լուծաւ իսկ վեզիրին յիշխանութենէ իւրմէ ։ Այլ յառաջ քան զնա փոխեցաւ զենպեան Պէհայի Էֆէնտի. զորմէ լուիցէ անցանել առանոր 'ի կարծոյ ։

Պէհայի Էֆէնտի վաղու եւ ատեցեալ յամենեցուն՝ Թշնամեցաւ և ընդ վեզիրին մեծի, և ընդ զօրավարին ենչէրեաց Պէկդաշայ, որ կամէին ընկեցիկ առնել զծովակալեան 'ի պաշտամանէ անտի նորա՝ ըստ Թախանձելոյ եւրոպական պետութեանց. և գենդպետին չհաւանէր 'ի նոյն՝ անիրաւ զգործըն առնելով, և պտուղ կաշառաց կորզելոյ 'ի դեսպանացն Եւրոպայ ։ Դէպ եղև ընդ նոյն ժամանակս հակառակութեան ինչ լինելոյ դատաւորին Զմիւռնիոյ ընդ հիւպատոսին Անգղիացւոց. և դատաւորին բողոք կալեալ 'ի դուռն արքունի ։ Զայն պատճառ առեալ վեզիրին 'ի Թակարդել զդեսպանն, 'ի նա ապաստան արար զդատն՝ զանպարապութիւն պատճառելով ։ Շփոթեցաւ դենպեան յանակնկալ առաջարկութենէն. կոչեալ զդեսպանն Անգղիացւոց, և ստիպէր զնա ածել զհիւպատոսն Զմիւռնիոյ 'ի դուռն ։ Նա պատասխանի Անգղիացին բնիկ հաստատութեամբն և ցրտութեամբ, եթէ յանհնարից իմն է

զոր պահանջէ գեսպանն ։ Յայնժամ սկսաւ նա անարգել զգեսպանն և ասէ . « Անիծեալ դու և ամբարիշտ . զիարդ իշխես ընտու մեսել յիմ պետութեան , որ մեծամեծս զաւրս ունիմ և զպետութիւն . և միթէ անգէտս զմեզ համարիցիս , զի առաջք դուք Վենետիկեցւոց թշնամեաց մերոց և նոսա և ցորեան » ։ Ասէ գեսպանն անխռով . « Մեք 'ի փորձու տանք զնոսա մեր ում և ալէաց ընկղեցին . և այս ոչ ինչ հակառակ իցէ դաշանցս մերոց » ։ Արտաքնեալ գեսպանին՝ դաշեաց առ ինքն . « Հայար , թող վէզիրն մեծ 'ի բանս արկցէ զգաս » ։ Յայնժամ և գեսպանն բարձրացեալ զբարբառ իւր և ասէ . « Ոչ կարես դու 'ի բանս զիս արկանել » ։ Եւ գեսպանն այլ յայլ մէ եղեալ 'ի սրտմտութենէ բարկութեանն իւրոյ՝ դաշեալ առ իւրն . « Հանէք 'ի բաց զանիծեալդ » ։ Կալան նոքա զամեալ գեսպանին , և կառուցին հանեալ ընդ զդրունս՝ ածին փակեցին զնա յախոռ ։ Ընդ այս շփոթեալ առաջանոյն՝ գիտեցին առ վէզիրն մեծ , և նովաւ հանդերձ բարձք կալան առ արքայ , և լուծաւ յեշխանութենէն Պէհայի , և ընդդիմեցաւ Գաւառաչէլէպիդամէ Աղիղ Էֆէնտի այլն խորհուր և վառասանի . ոչ եթէ առ 'ի չգոյէ լաւագունի առն , որպէս ասէ խակ ինչն յիւրում պատմութեան , այլ 'ի հզօր բարեխօսութենէ զօրավարին Պէկլազեայ առ գլխոյն ։

Արդ ժողովուրդն նեղեալ 'ի խըս_
տութեան գնացից վէզիրին մեծի առ
սա ինքն Ազիզ բաղդադլու ընթացան.
բռնութեամբ նստուցեալ զնա յերի_
վար ածէին առ արքայ, և մտանէին
քարոզ կարդայր. « Ժողովուրդ Մահ_
մետի, լցեալ է չափ անիրաւութեան.
սուր երկսայրի մտեալ ճարակի 'ի մի_
ջի մերում. փակեցին կրպակք »: Յի_
սուն հազար վաճառականք յաւելան
զհեա գենպեանին, և լցին զգաւիթ ար_
քունեացն մինչև 'ի դուռն ներքին: Եւ
բազմեցաւ մանուկ արքայն 'ի գահ. և
յառաջի առնել արուեստաւորեացն
զբողոք խռովեանց՝ ասէ. « Չեն ինձ կամք
ըն անիրաւութիւն լինել ձեզ »: Առա_
քեաց զմի ոմն 'ի պաշտօնէից իւրոց ա_
ծել զվէզիրն, և առանձին հրովար_
տակաւ եբարձ զամենայն յաւելուածոյ
տուրս 'ի ժողովրդեանն: Յայնժամ
գլխաւորք ժողովրդեանն հող 'ի գլուխ
լինէին, աղաղակ բառնային և ասէին.
« Տէր արքայ, լցաւ երկիր անիրաւու_
թեամբ. վեշտասան այր են որ չթո_
ղուն քեզ արդարութեամբ վարել ըզ_
տէրութիւնդ, և ուտեն ծախեն սպա_
ռեն զգանձն արքունի. և այսոց գը_
լուխք են զօրավարացն ենիչէրեաց Գա_
րա չաւուշ, Պէկդաշ, Սաամնանճին, և
այլք. մինչև ոչ անկցին գլուխք նոցա,
ամն յասանէ ոչ փոխեսցուք մեք և ոչ
մեկնեսցուք աստի »: Խորհուրդ կալան

Թագաւորին ընդ հանուրց իւրում և ընդ զինուորօքն, և առաջեցաւ մատանին առ Ախամիւշ փաշա, որ և համոզէր բանիւք արձակելոյ զժողովուրդն 'ի տեղիս իւրեանց:

Մահփէյքեր հանին արքայի, որ և Քիւսէմ սուլթան, անուանեալ օր ըստ օրէ զծերանալ մօրն Մէհէմմէտայ որ կոչէր Թարխան սուլթան՝ 'ի վերայ իւր, խորհրդով Պէկթաշայ զօրավարին և Ենիչէրեաց կամեցաւ առնել պատմօ-զիւք Օսմանեանց՝ զեղ մահու արբուցանել Թագաւորին, և ամբառնալ փոխանակ նորա զեղբայր նորին զՍիւլէյմանն, որոյ մայրն պարզամիտ ոք էր և հրեայ. և յայս ամս Թելադիր եղև Ենիչէրեաց ընդ ձեռն զօրավարաց նոցին՝ խնդրել զգլուխ գլխաւոր ներքինեաց և զներքինապետին Սիւլէյմանայ և զայլոց որ զկողմն արքայամօրն ունէին: Այլախինն՝ որում յանձն էր հանդերձանք մահացու օշարակին, հատոյց անեն զգաւն յանձին Թարխան դշխոյին. և նորա խորհուրդ արարեալ ընդ կատակիցս իւր՝ հատուցանել բառնալ 'ի կենաց զՔիւսէմ:

Լսեալք ամենք հասեալ զինուորայն յարքունիս պատմեցին ներքինեաց՝ և թէ 'ի խորհուրդ բարձեալ Ենիչէրից 'ի ձեռոյցս իւրեանց՝ զայս ինչ և զայս խորամանկեն ընդդէմ արքայի և մօր նորա: Անդէն յամն եկաց ներքինապետն

Սուլէյման խռովք ներքինեօք, և ըն-
թացեալ 'ի պատուհան առաջնոյ սե-
նեկի պալատական մանկութին՝ աղա-
ղակէր. « Զի՞ նստիք, ահա պաշարեալ
ենիչէրիք զօրութեամբ՝ կոտորել զմեզ
կամին. միաբանեալք ընդ Քիւսէմ դըշ-
խոյին խեղդել կամին զարքայ, և զՊէկ-
տաշ թագաւորեցուցանել. հասպա 'ի
զէն »:

Ի յոյզս անհնարինս խռովութեան
հարաւ պալատն առ հասարակ իբրև
զծով մրրկածուփ յաղջամղջին գիշերի.
ընդոստեան 'ի քնոյ ամենայն պալատա-
կանք, ձգեցին զձեռս 'ի զէնս իւրեանց.
և Սուլէյման 'ի դրունս կացեալ նոցա՝
յարձակեցաւ 'ի սենեակն Քիւսէմայ :
Ներքինիք նորին սուսերամերկ կային
պահէին զդուռն նորա. այլ էր որ անգէն
տապաստ անկաւ, էր որ կարէվէր խո-
ցեալ, և այլքն փախեան : Զեզան զի-
նեալքն ուղղորէն 'ի դուռն անդր դըշ-
խոյին, որ ապաւէր գալստեան ենիչէ-
րեաց. և լուեալ զդղրդիւնն զայն՝ ձայն
եբարձ 'ի ներքուստ և ասէ. « Միթէ ե-
կին »: — « Այո եկին, ասաց Սուլէյման,
եկէք եկէք »: Ել նա, ետես և ծանեաւ
թէ ոյք ամենք էին. խոյս ետ յարկն ներ-
քինս սենեկին իւրոյ և թաքեաւ 'ի գա-
րանի անդ 'ի բարձու : Խորտակեցին
բացին արքայ զդրունսն, խուժեցին 'ի
ներքս, և խիլ արկեալ որոնեալ գտին
զդշխոյն, որ ըմբռնեալ Ջամպաղէր նոցա

ռակի բազում և ականս պատուականս, այլ 'ի զուր ։ Քարշեցին արկին զնա 'ի վայր, և մի ոմն 'ի սպիտակ ներքինեաց անտի հատեալ զպատուհանին վարագուրաձիգս՝ նովիմբ խեղդէր զհռչակաւոր գլխոյն ։ Յաղթանդամ էր կինն և կորովի, և մրցէր սաստկապէս ընդ օրհասի մահուն. և ընդ քթան և ընդ ականջան հանէր գունդագունդ արիւն թանձրամած. և 'ի դառն հեծութիւնս և 'ի մոլեգնութիւնս բարկութեան փրջեալ զոգին յերկրորդում աւուր ամսեանն սեպտեմբերի յամին 1651 ։ Յիշատակ նորա անմոռաց է 'ի շինուածս իւր, յորոց մի է և Վալիտէ խանը անուանեալ իջևանն մեծ 'ի Կոստանդնուպօլիս ։

Այն ինչ դեռ ևս եղեալ էր յընթրեաց վէզիրն մեծ, և ընդ նմա րէիս էֆէնտին և դատաւորքն զօրաց, մի ոմն 'ի զօրագլխացն ենիչէրեաց եկն և յայտ արար՝ եթէ խնդրեն ենիչէրիք զգլուխս երից ներքինեաց ։ Յարեաւ գնաց վէզիրն յարքունիս, և տեսեալ զփոթն և զկատարածս որ դեռ ևս գործէին 'ի նմին՝ խոյս ետ 'ի տուն իւր. այլ կոչեցեալ յարքայէ՝ ծանեաւ ըզմահ գլխոյն ։ Իբրև եմուտ առ արքայն, ասէ առ նա. « Պատախարակ իմ, գիտես դու քաջ զամենայն. եղէ ծառայ հաւատարիմ, և հատո՛ դաւաճանացն զչարիս նոցա » ։

Իբրև այդ եղև՝ կայր բազմեալ թա-
գաւորն 'ի գահոյն, և յաջմէ և յահեկէ
նորա պալատականքն և ներքինիք սպա-
սաւորք: Իսկ ենի չէրիք հանդերձ գլխա-
ւորօք ժողովեալ էին 'ի մեծի ձիար-
ձակարանին. այլ իբրև լուան զմահ
դշխոյին՝ խուսափեալ ցրուեցան: Զօ-
րապետքն նոցին Գարաչաւուշ և Պէկդաշ
խեղդամահ եղեն, դիականն ընկեցաւ
'ի պատուոյ իւրմէ և արտաքսեցաւ 'ի Սա-
կըզ, որ է Քիոս, և ամենեքեան զորոց
միանգամ կասկած էր միաբանութեան
'ի խորհուրդ դաւաճանելոյ զարքայ՝ ըն-
կալան զպատիժ պատուհասի չարեացն
գործելոց:

Այսմ ամենայնի կարգաւորու-
թեանց գործադիր գոլով ներքինապե-
տին Սիւլէյմանն՝ չկարէր տանել ինքնիշ-
խան տէրութեանց Սիավուշայ վէզիրին
մեծի. և խորհուրդ արարեալ ընդ մօրն
արքային՝ ետ զնա ընկեցիկ առնել, և
ամբառնալ փոխանակ նորա զիննա-
մենի այրն զԿիւրճի փաշա: Սա այր
ապուշ և փառամոլ՝ ոչ յայլ ինչ մտա-
դնէր, բայց 'ի բառնալ 'ի կենաց և կամ
յաքսորս առաքել զայս ախոյանսն՝ որ
միանգամ կարող էին զլուծել զբռնա-
իշխանութեան նորա. որպիսի ոք ընդ
առաջինն էր Քէօփրիւլիւ Մէհէմմէտ՝
որ աքսորեցաւ 'ի Քիւսթէնտիլ, և ծե-
րունի Ճարտարապետն Գասըմ բաշ-
կամ նորա՝ որ յղեցաւ 'ի Կիպրոս: Բան-

տարդել եղև 'ի վերջէ և կիւրծի փաշա յՆտփդուլէ, և ընտրեցաւ Դարխանձի Ահմէտ. որ և տաէ ցիւրտն. « Կամ բարեկարգեցից զպետութիւնս, և կամ հատցի գլուխ իմ ». և Ճշմարտեցաւ երկրորդն՝ տակս չորաչոր հետամուտ լինելոյ նորա առաջնոյն ։ Զի առ 'ի յաւելլոյ զգանձն արքունի՝ հարկս արկանէր 'ի վերայ ամենայն տանց և աղօթեաց, և օրէնս կարգէր ամենայն կուսակալաց և իշխանաց՝ այսչափ ինչ դրամս ամի ամի առաքել յարքունիս ։ Վասն այսր ամենայնի ամբաստանեալ 'ի Ներքինապետէն և յայլոց՝ խեղդամահ սպանաւ առաջի Թագաւորին, և ընտրեցաւ 'ի տեղի նորին կուսակալն Պաղտատայ Տէրվիշ Մէհէմմէտ եղբացի յաղդէ, այր փառացի, և ընչաւք նորա հաստատեցին մինչև ցգումին ։ Այլ և Ներքինապետն Սուլէյման ոչ ետ շատ յերկարել 'ի տիրապետութեան իւրում, և ընկեցին եղեալ յիշխանութենէ իւրմէ առաքեցաւ յԵգիպտոս ։

Ընդ այն ժամանակաւ յամին 1653 Սուլէյման եղբայր Մէհէմմէտայ արքայի արգելեալ 'ի սենեկի անդ որ 'ի պալատըին արքունի, և անտի յառաջ կոչեցաւ տեղին այն վանդակ արքայորդւոց. զի ցայնժամ 'ի կանանոցին բնակէին նոքա, և ունէին 'ի կալուածս անձանց զհատս նահանգաց ինչ կամ գաւառաց ։

Այն ամ նշանաւոր է և գալստեամբ

գետպանի ուրուեմն յարքայէն Հնդկաց՝ բաղում ընծայիւք. և մանաւանդ յաղթութեանցն զոր կալաւ նաւատորմն Օսմանեանց 'ի վերայ Վենետիկեցւոց՝ յառաջնորդութեան քաջ ծովապետին Մուրատայ, որ ինքնին գլխովին ընդ նաւատորմին խառնեալ՝ աչագին նախանձիւ գործեաց 'ի թշնամիս: Յամենայնն վեցերորդի դարձ առար յաղթանակաւ 'ի Կոստանդնուպօլիս, և պատուեցաւ յարքայէն երրակի խիլայիւք մի զմիոյ կնի:

Ի միւսում ամի լուծան յիշխանութենէ երկոքեան գոտաւորքն զօրաց Մէհմէքզատէ և Խանումզատէ սակս անիրաւ կաշառակերութեան, որով ում և ոչէս վաճառէին զպատիւս և զիշխանութիւնս: Մէվգուֆաթճի Գարա Ապտուլլահ անն կարի իմն զարհեալ ընդ գնացս նոցա, յաւուր միում յաւարտ առնելի վեզիրայն ամբարձ զՃեռըս իւր յերկինս և սկսաւ գրուատել զԽանումզատէ զգատաւորին ասխականն: Ըհաւրց վեզիրն ժպտելով զպատճառս նորատեսիլ գործոյն. և տայ այլն զաւեշտարար. « Տէր իմ, մի ոմն 'ի ծառայից իմոց ըմբռնեալ 'ի տանդէ, ոչ ինչ դիւրութիւն գտանէր 'ի դեղոց և 'ի բժժանաց. 'ի վերջէ նզովեցին զանդրն զայն համօրէն ամենայն մեղօք դատաւորին Ասիոյ, և անդէն ապաքինեաց ջերմն: Ծիծաղեցաւ ատեանն ողջոյն,

և վէզիրն ասէ . « Եւ ե՞ր սակս չյիշեցեր մանաւանդ զզաստաւորն Եւրոպայ » : — « Ո՛հ տէր , ասէ , չկամէի առնուլ զանուն նորա 'ի գուշակելս այս . այլ պահեմ զնա գէթ 'ի դէպս տարաժամ մահու » :

Եհաս և 'ի ձեռս ալքայելեան ծանօթս Թուղթ ամբաստանութեան զամենայն կարգաց պետութեանն : Զարհուրեցաւ Թագաւորն , և հրամայեաց ատեան մեծ կարգել . և յետ ընթերցման Թղթոյն գենոլեան և վէզիրն մեծ յերկարագոյն բանիւք մերժեցին զայն իբրև արդասիս խռովարար մարդկան , և արձակեցաւ ատեանն : Ի վաղիւ անդր վէզիրն հարեալ 'ի կաթուածէ անկաւ 'ի մահիճս , և Թագաւորն առաքեաց առ նա Թուղթ այսպիսի . « Հայր իմ , տուր ինձ աղաչեմ պատասխանի . դիւրաբոյժ իցէ խօթութիւնդ եթէ ոչ : Իրք հաւատոյ և պետութեան չառնուն աւուրց պարապոյ . նմին իրի եթէ ապաքինեսցիս , կացցես մնասցես 'ի պաշտամանդ զամենայն աւուրս կենաց քոց . իսկ թէ ոչ , ազդ արասջիր մեզ » : Վէզիրն դիւրաբուժելի վարկանէր զախտն . այլ բժիշկն արքունի զհակառակն ստուգեաց արքայի . և յետ բազում քննութեանց և ընտրութեանց ընտրեցաւ վէզիր մեծ կուսակալն Բերիոյ Իփշիր , այր կեղծաւոր և գռոզամիտ և ապստամբ : Սա յառնուլ իւ_

բուն զմտաւոնին 'ի Բերիա 'ի ձեռաց
մեծի պաշտօնէի գրանն՝ փոքր մի և ևս
և սպանանէր զնա, փոխանակ զի չու_
նէր ընդ իւր առաքաստուն զխոյակա_
զգեստս ըստ վայելմի սովորութեան:
Այլա գրեալ ծանոյց 'ի դուռն արքու_
նի՝ եթէ կարեւոր պիտոյ աշխարհին չթո_
ղուլն նմա առ ժամանակ մի՝ գալ 'ի
Կոստանդնուպօլիս: Սորջացան աւա_
գանին ընդ ընտրութիւն իւրեանց. և
հրամայեաց արար Թագաւորն առ Խի_
զիր գալ անյապաղ 'ի Թագաւորեալ
քաղաքն: Այլ Խիզիր յանդիմանեալ
յատենի զԹղԹաբերն ասէ. «Տէրպորա_
կան դու, Թուղթ իմն և զիս համ_
գոյն ձեզ վարկանել այր վատ և ար_
համարհ, զի ըստ հրամանի պալատա_
կանաց եկանիցեմ և մեռանիցեմ: Աստ_
րիք. Եգիպտոս և փոքրն Ասիա լի են
չփոթիւք, և զի՞նչ շահ եթէ երթայցեմ
ես 'ի Բիւզանդիոն՝ չև 'ի կարգի եդեալ
զամենայն: Եկից ես այժմ, եկից 'ի դէպ
ժամու, և վախճան արարից կաշառուց
և անիրաւութեանց»: Հրամայեաց ա_
րար առ ամենայն կուսակալս և զօրա_
գլուխս կողմանցն գալ ժողովել յԻկո_
նիոն, զի բարձցուք ասէ 'ի միջոյ ըզ_
կաշառս, և հաստատեսցուք զարդա_
րութիւն: Սահմանեալ կայր բաժա_
նակ Ասիա ընդ ահեղ պատերազմու_
թիւնն, և Կոստանդնուպօլիս 'ի հրծ_
ծանս և 'ի կասկածանս տարակուսա_

նայց կայր մնայր գաւառական գոռոզին։

Իբրև եհաս Խաչիկ 'ի Նիկոմիդիա, Գաթըրճի օղլու կուսակալ Համեայ, որ կանխաւ թշնամին էր նորա, եկն անկաւ առ ոտս նորա և ասէ. «Վեհազն տէր, ահաւասիկ եմ ծառայ քո և խոստովանիմ զյանցանս իմ. ահա սուր քո և ահա պարանոց իմ. 'ի քո ձեռս է հրամանն մահու և կամ թողութիւն»։ Եւ ամբարտաւանն Խաչիկ ներեաց նմա, և մեծարեաց ևս զնա. և պատուեցաւ 'ի նմանէ։ Նոյն մեծարանօք ընկալաւ և զուսուցիչն տէրոյն զՄխիթարայ զմեծերին իւր, որ եկեալ էր յաղօթել զնա. և նորա ասէ. «Տէ՛ր իշխանդ. գիտակ իցէ եմ ես, զի ըստ առաքելոյ շարախօսաց ոմանց դատակնքեալ է արքայ զմահն իմ. այլ ես յանձն առաքեալ զիս Աստուծոյ կամիմ ծառայել հաւատոյ և պետութեան, թող արասցեն նորա որ ինչ կամին թուեցի նոցա»։ Ըիհան երանելի երդմամբ հաստատեաց զնա, եթէ և արքայն և մայր նորա սիրեն զքեզ, և ես ես բարեխօս եղէց վասն քո։

Համեալ Խաչիկայ յԾուակիստար, որ ընդ առաջ եկեալ էր նմա գեղեցկան բազմութեամբ զինուորականաց և աւագերիցակացայ զնոյն անուն մեծահանդիսիւ և եհաս 'ի Կոստանդնուպօլիս յապարանս իւր, և 'ի վաղիւ անդր փեսայացաւ Այլէ ուղղանին, որ կան-

խան խօսեցեալ էր նմա ։ Սկսաւ ապա 'ի գործ արկանել զպաշտօն իւր պատժովք պատուհասիւք Թշնամեաց իւրոց. զոմանս արկ յեղխանութենէ, զկէսս յաքսորս առաքեալ սպան, և զայլըս եւս խեղդամահս առնել, և զգանձըս նոցին յարքունիս գրաւեաց. ընդ որ բնաւ չէին հաճ և Թագաւորն և դշխոյն ։ Զնոյն և կուսակալքն անողորմք առ 'ի նմանէ կարգեալք 'ի տեղիս տեղիս փոքուն Ասիոյ բռնացեալ գործէին. զի յետ կեղելոյ կեղեքելոյ չարաչար զժողովուրդս, պահանջէին 'ի նոյանէ և վարձս իմն առամանց Տէշքերաոք անուանեալ. իսկ զի և զայժս մաշելոյ առամանց իւրեանց ժողովուրդքն ապառնէին հատուցանել կերեալք 'ի նոցանէ որպէս կերակուր հացի ։

Այն ինչ բնակիչքն Ասիոյ գնդագունդ 'ի Կոստանդնուպօլիս դիմէին բողոք արկանել զատաւորանաց իւրեանց, միաբանեցին ընդ նոսա և սպայքըն, որոց առեալ էր Խիշիր, և ոչ կատարեալ զխոստումն բաշխելոյ նոցա հաս և ռոճիկս ։ Ի դէպ պատահեաց և գժտութիւն մեծ ընդ Խիշիր և ընդ ծովակալն Մուրատ, զոր առաքեալ էր նա հանել զնաւան 'ի ծով առանց բաւական հանդերձանաց ։ Վասն որոյ կոչեցեալ Մուրատայ գիշերայն զԹխւրս Մէհէմմէտ և զայլ զօրագլուխս սպայից, յայտնեաց նոցա զխորհուրդ իւր 'ի

գտանել զվէզիրն. և եհան համբաւ 'ի ժողովրդեանն եթէ Խփչիր կամի զօրս յԱսիայ ածել, և զԵնիչէրիսն կոտորել փոխել յԱսիա: Այսպէս ապա յուզելան և Ենիչէրիքն 'ի սպայս անդր, և միահամուռ գնացեալ 'ի հրապարակն, և անտի առ դենպեան, աղաչէին գալ ընդ Իւրեանս առ արքայ: Խոստացաւ դենպեան կատարել զխնդիր նոցին, և նախ առաջին խնդրն գուժեաց զիրսն առ Խփչիր: Որոյ պաղատեալ զպաշտպանութիւն Թագաւորին, արձակեցաւ սենեկապետն արքունի խրատել զնոսա արարն, զի մեկնեսցին յիւրաքանչիւր տեղիս, և ըստ կարգի արասցեն զբողոքն: « Հրաման է անուն մերոյ արքայի, գոչեաց Քիւրտ Մէհէմմէտ. պատրաստ է գիր բողոքոյ մերոյ ընդդէմ վէզիրին մեծի »: Յայնմ գիշերի Ենիչէրիքն առ Իւրեանս հիւրընկալեցին զսպայս. և 'ի վաղիւ անդր ալէկոծեալ ծփէր քաղաքն ողջոյն: Յառաջընթաց լինէին գունդք վշտատեսիցն ամբոխեցելոց՝ ջահս 'ի գլուխս Իւրեանց ունելով 'ի նշանակ հրոյ տառապանացն յորում տաշորէին, և զիղանելոյ ծխոյ հառաչանաց Իւրեանց մինչև յերկինս. և զհետ նոցա սպայքն և Ենիչէրիք խուռն գնացեալ համանէին 'ի ձիարձակարանն: Համբաւէր խմն այնպէս, եթէ դատակնիք ունի տալ դենպեան ընդդէմ սպայից և Ենիչէրեաց. և զի նա ընդ վէզիրին փնացեալ էր՚ի

պալատն արքունի, որքա յարձակեալ կողոպտեցին զապարանս երկաքանչիւրոց։ Ի տան վեզիրին աւելի քան զչորեքհարիւր հազար ոսկիս գտին, և առ գենապետին յոլով մառանս և կրս բաղմագինս, զորս առ հասարակ յափշտակեցին։

Ցայնմ պահու աւագանին ժողովեալ էին յատեան առաջի Թագաւորին. որոյ առեալ զգոյժ աւարառութեանն ասէ. «Եւ արդ զինչ առնել իցէ»։ Իշխանք զխանականքն և վեզիրք լուռ եւեթ կային, ծովապետն Մուրատ անձնարկի արար Քէչէճի օղլու անուն զօրագլխին ենիչէրեաց, և նա յառաջ մատուցեալ ասէ ցարքայ. «Անձնայն ծառայք քո հպատակ են հրամանի տէառնդ մերում արքայի. այլ չկամին զդաւաճանակն քո զվեզիրդ մեծ»։ և մատամբն ցուցանէր զնա։ Հաստատեաց զբան նորա և Վէլի քարոզն արքունեաց և ասէ. «Մինչև ոչ մեռցին վեզիրն և գենապետն Նպուսայխա, ոչ լուծցի ժողովն»։ Տեսեալ Իփշիրայ զանհնարութիւն իրացն, երկիր եպագ առաջի արքայի և մատոյց նմա զմատանին. և նա անդէն ետ զայն ցՄուրատ փաշա, և հրամայեաց ոմն կարգեցաւ գենապետ։

Զայն իբրև լուան խռովարարքն՝ աղաղակեցին եթէ «Սպանցի Իփշիր, սպանցի Նպուսայխա»։ Զգեմ կալան

զինուորականքն առ հասարակ բողոքոյ մահուան գէնպետին. այլ Խփշիր խեղդեցաւ, և գլուխ նորա ընկեցաւ առ խռովիչսն, որք առեալ շուրջ յածեցուցին զայն խնծղանօք, և ապա հարեալ 'ի ձող անկեցին ուրեք, և մեկնեցան յիւրաքանչիւր բնակութիւնս:

Մուրատ փաշա հրաժեշտ կալաւ 'ի պաշտամանէն վասն չփոթից իշխանութեանցն դեռադեռ փոփոխելոց, և վասն նուազութեան արքունի գանձուն առ 'ի հատուցանելոյ զթոշակս սպայիցն և ենիչէրեաց: Ի նոյն պատճառս և յաջորդ նորին Սիւլէյման փաշա աղաչեաց ազատել զանձն իւր 'ի ծանրակիր բեռանէ անտի, գուշակեալ իսկ զահագին պատահարան որ 'ի մօտոյ դիպելոց էին:

Քանզի այն ինչ առաքեալ լինէր կընիքն արքունի առ սպարապետն Հիւսէյին 'ի Կրետէ յամին 1656, գունդք ենիչէրեաց դարձ արարեալ անտի 'ի Կոստանդնուպօլիս՝ պահանջէին զռոճիկս իւրեանց, և յածեալ շրջէին ընդ փողոցս քաղաքին գոչելով եթէ զամս բազումս գետնախշտի լեալ եմք վասն հաւատոյ: Միաբանեցին ընդ նոսա և սպայք ոմանք խռովարարք, և 'ի ձիարձակարանէն ուր ժողովեալքն էին՝ առաքեալ ազդ արարին յարքունիս, եթէ կամիմք զի ատեան կարգեսցի յատենկայս: Ջաւուրս երկուս յամառեալ կա_

ցին 'ի պահանջմանն, մերժեալ զամենայն սաստ և զխրատ պաշտօնէից արքունի. և յաւուրն երրորդի կարգեցաւ ատեանն 'ի բարձրաւանդակ պատշգամին հանդիպի որ կոչի Ալայ քէօշքի, ընդ որով խռնեալ խուժան ապստամբաց աղաղակէր բանալ զպատուհանն զի տեսցի Թագաւորն. և ահա կայր անդ Մէհէմմէտ արքայ պատանի չորեքտասան ամաց, ունելով յաջմէ զդենպեան և յահեկէ զփոխանորդ վեզիրին, և յետկուսէ զերկոսեան Ներքինապետսն՝ որ անտես էին ժողովրդեան:

Դարձեալ աղաղակեաց ամբոխն զի 'ի բաց մերժեսցին յարքայէ Թելադիրքն, և ինքնին խօսեսցի. և Հասան ոմն դատաւոր յառաջ մատուցեալ յամբոխէ անտի, 'ի մէջ երկեր զամենայն Թերութիւնս տեսչութեան լրոց ժամանակին, և ապա ասէ. « Չիք դեղ դարմանոյ այսմ ամենայնի, մինչև անկեալ լիցեն գլուխք արանց երեսնից դրոշմելոց 'ի գրի աստ »: Ձգեցաւ առաւ գիրն առասանաւ 'ի վեր 'ի պատշգամանդր, և Թագաւորն ըստ սադրելոյ Ներքինապետաց որ Թագուցեալ էին յետոյ վարագուրին՝ խօսեցաւ առ ամբոխն և ասէ. (և փոխանորդն կրկնէր զբանս նորա 'ի ձայն բարձր.) « Ծառայք իմ, ինչք արանց դրոշմելոց 'ի գրի աստ գրաւեսցին յարքունիս, և ինքեանք յաքսորս վտարեսցին. այլ մի ևս խնդրէք և

զմահ նոցին »: Բայց 'ի զուր. զի նոքա աղաղակեցին առ ժողովուրդն, « Ի բաց կաց և դու, 'ի բաց »: Յայնժամ զար֊հուրեալ աբբային մանկանն՝ անհնարկեաց սպանանել զերկուս ներքինիսն զանձնե֊կապետս կանանցին, որք և խեղդեալք արկան ընդ պատուհանս պարսպացն 'ի խոնարհ: Այսպէս 'ի մահ տուան այլ ևս երեք ներքինիք. և ամբոխն մոլեգին քարշեալ զդիակունս նոցա մինչև 'ի ձի֊արձակարանն՝ կախեցին զնոսա զսօսոյն մեծէ, որ յառաջ յայնմիկ լցաւ ակաղ֊ձեցաւ դիականմբք իշխանաւորաց:

Տեղապահ վէզիրին Սուրնազէն Մուս֊դաֆա ընտրեցաւ 'ի վէզիր մեծ, այլ 'ի մերժել զնա խռովելոյն՝ կարգեցաւ 'ի տեղի նորա Սեյավուշ. փոխեցան և ամենայն մեծամեծ իշխանութիւնք, և գենպետն անգամ, և հազիւ ուրեմն խաղաղացաւ քաղաքն:

Յետ երկուց ամսոց ծովակետն Քէ֊նան փաշա եղեալ բազմութեամբ նա֊ւուց 'ի միջերկրականն ծով՝ 'ի պարտու֊թիւն մատնեցաւ 'ի Վենետկեցւոց. և առին նոքա զԹենեդոս և զԼեմնոս. ընդ որ վշտացաւ յոյժ թագաւորն և ամե֊նայն քաղաքացիք: Եւ զի մեռեալ էր ընդ այն աւուրս վէզիրն Սեյավուշ, և ընտրեալ փոխանակ նորա ծերունին քաջ Պօյնու Եաղլը Մէհէմմէտ, սա բաղձէր սփոփել զանձայր զժողովուրդն, այլ չէր և հնար: Յաւելու և սպանումն

Մէսուտ անուն գենալետին՝ որ ընդ այլոց ոմանց դաւաճանել կամէր զարքայ, և թագաւորեցուցանել զեղբայր նորին զՍուլէյման . եւ և անդադար սպանութիւնք և պատուհասք՝ որովք վարէր վէզիրն ընդ իշխանս :

Յաղագս այսր ամենայնի միաբանեցին 'ի ծածուկ Սօլագ Մէհէմմէտ գանձապետ դշխոյին, Մէհէմմէտ էֆէնտի ուսուցիչն արքայի, և Ճարտարապետն Գասըմ, և հաւանեցուցին զմայր թագաւորին կարգել վէզիր մեծ զծերունին Քէօփրիւլիւ Մէհէմմէտ զմի միայն այլն արժանաւոր այնմ բարձի, թէպէտ և աղքատ յընչից, յոյր սակս ևեթ չէր հասեալ նորա կանխաւ յայն պաշտօն : Եհարց զնա առանձինն մայր թագաւորին եթէ չերկնչիցի՞ յիշխանութենէ անտի մեծէ . և նա ասէ, « Ոչ, եթէ շնորհեսցին ինձ պայմանքս այսոքիկ . ա̅, զի ամենայն խորհուրդք իմ արկցին 'ի գործ . բ̅, զի ազատութեամբ վարեցայց 'ի բաշխս իշխանութեանց, և մի լուիցին բարեխօսութիւնք օտարաց . և գ̅, զի մի ինչ ունկն մատուսցի որոց չարախօս լինիցին զանձնէ իմմէ » :

Ի վաղիւ անդր կոչեցաւ նա ընդ վէզիրին մեծի առ արքայ . որոյ յանդիմանեալ զՊօյնու եարէլին՝ էառ 'ի նմանէ զկնիքն և ետ ցՔէօփրիւլիւն ասելով . « Ըստ պայմանացն առ 'ի քէն խնդրելոց ահա կարգեցի զքեզ ինձ վէզիր

ինքնիշխան. տեսից որպէս ծառայես-ցես »: Երկիր եպարք Քէօփրիւլին և շնորհս կալաւ նմա. և Թորէլին արտա-սուքն ընդ արծաթափայլ մորուս առնն խոհականի և կորովամտի:

Զառաջին արդիւնս զգօնութեան իւ-րոյ յայտ արար Քէօփրիւլին՝ շնորհե-լով նախորդին իւրում ընդ կենացն և զբդեշխութիւն Գանիժէի, Թէպէտ և Թագաւորն հրամայեալ էր բառնալ զնա 'ի կենաց: Այսպ զինջոյց և զաղմուկ հետևողաց աղանդոյն Գաղըզատէի, ըս-պանեալ զգլխաւորս նոցին. զի սոքա հա-կառակեալ վարդապետութեան Շէյ-խէտտին Սիվասի անուն շեխին, այնդէ-քն սպառնալեօք՝ կործանել զամենայն զաշտարակս մզկթաց, և Թողուլ մի մի-այն. բառնալ 'ի միջոյ զամենայն անօթ ոսկւոյ և արծաթոյ, զմետաքսեայ հան-դերձս, զպընչադեղ, զգահոյս և զա-փիոն, և զերգս և զնուագս և զպարս Մէվլէվի՝ Խալվէթի և Ճէլվէթի տէր-վիշաց. և ինքեանք բաց յայսցանէ՝ յա-մենայն չարիս անխիղճ անկզիտանայքն ասէ պատմագիրն Նայիմա:

Յետ այնորիկ 'ի ձեռն լրտեսաց իւ-րոց իմացեալ զսկզբնապատճառս աղ-մըկին սպայից, որասացաւ դաղտ զսկրոս զօրավարացն Ենիչէրեաց, և հրաման յարքայէ ընկալեալ՝ ետ ունել գիշե-րայն զամենեսեան զնոսա և խեղդամահ առնել: Եւ ապա առաքեցաւ 'ի Թա-

գաւորէն մեծաւ շքով հանդերձ Նաւիրական գլոշխն 'ի պատերազմ ընդդէմ Վենետկեցւոց. որ ընդ այն աւուրս յաղթանակեալ էին 'ի վերայ Օսմանեանց:

Առ Գուամպուրնու ամրոցաւ բազումք յենիչէրեաց խուսեցին 'ի Նաւամարտէն, և պատճառ եղեւ մեծի վնասու. այլ Գափրա Մէհէմմէտ ամն քաջին դիմեալ զնաւ ծովակալին Վենետկեցւոց՝ արձակեալ դիպեցոյց զձիգ թնդանօթին խլրոյ 'ի բուն խուկ 'ի վառօդանոց նաւին, և զնաւն ծովակալաւն հանդերձ յօդս վերացոյց: Եւ վէզիրն մեծ նախ զփախստականսն պատուհասեալ, և զգլխաւորս նոցին չարաչար մահու դատապարտեալ, ապա զօրին Մէհէմմէտ բարձրանուոյն պատուեալ մեծարեաց:

Անտի խաղաց գնաց և պաշարեաց զԹենետոս կղզի. և յաւուրն հինգերորդի ամրականքն գիշերագնաց անտի եղեալ ետուն զկղզին 'ի ձեռս Օսմանեանց, յետ հրաժեշտ առնելոյ զմթերս վառօդոյն, և բեռնելոյ զքառասնիւ չափ թնդանօթսն՝ զորս թողուին անդէն:

Եռօրեայ ջահաւրութիւնք եղեն 'ի Կոստանդնուպօլիս վասն յաղթութեանս, և առաքեցաւ առ վէզիրն դաշոյն և մուշտակ, և նամակ գովութական: Իսկ նորա ուղեւորեալ 'ի Թագաւորեալ քաղաքն՝ արձակեաց յառումըն Լեմնոսի զծովապետն Դոփալ Մէ-

հէմմէտ փաշա. որ և էառ զհաշակա-
ւոր կղզին զկնի վաթսուն և երից ա-
ւուրց պաշարման։

Յայնմ աշնայնի Թագաւորն որսոց
պարապեալ յԱդրիանուպօլիս, 'ի գար-
նան ժամանակի առաքեաց զվէզիրն
մեծ' 'ի նուաճել զիշխանն Թրանսիլվա-
նիոյ զՌաքոցի, որ յամաց հետէ ընդ-
վզեալ իմն էր յՕսմանեանց։ Երկու հա-
րիւր հազար Թաթարք և Խազախք աս-
պատակեալ յերկիրն' 'ի սուր և 'ի հուր
դատեցին զամենայն. և վէզիրն կարգեալ
անդ իշխան զՊառչայ անուն զոմն' փու-
թացաւ գալ առնել յԱսիա, ուր ա-
հեղագոյն հրդեհ ապստամբութեան
բորբոքեալ Ճալալիէր։ Եւ էր գլուխ
չարեացն Աբազա Հասան. որոյ միա-
բանեալ ընդ իւր զկուսակալս բազումս
փոքուն Ասիոյ' որ ըստ օրէ յաւելոյր 'ի
զօրութիւն. սա հասեալ 'ի Պրուսա'
առաքեաց առ Թագաւորն յԱդրիա-
նուպօլիս, և պահանջէր ընկեցիկ առ-
նել զվէզիրն մեծ, փոխանակ զի ապան
նա զխռովարարսն 'ի սպայից և յենիչէ-
րեաց։

Իբրև եկն եհաս բանակ վէզիրին յԱ-
դրիանուպօլիս, Մէհէմմէտ արքայ բազ-
մեալ յիւրում վրանին' խօսեցաւ առ
զօրավարս իւր և ասէ. ‹‹ Անօրէնն Ա-
պազա ըմբոստացեալ ընդդէմ մերոց
հրամանաց' ապստամբէ յԱսիա. արդ
իմ կամք են խաղալ անձամբ 'ի նուա-

ճուամն անօրինին. գայցէք և դուք ընդ իս »: Նոքա իբրև ընդ մի բերան աղաղակեցին և խոստացան չդնել 'ի բաց զսուսերս՝ մինչև նուաճեսցին ընկճեսցին ապստամբքն. միայն թէ որք միանգամ 'ի սպայից և յենիչէրեաց զղջանայցեն՝ թողութիւն շնորհեսցի նոցա: Ջիջաւ թագաւորն առ խնդիրն. և յաւել միոյ 'ի զօրագլխաց անտի, « Այլ զի՞նչ լինիցի անկելոցն 'ի պատերազմի անդ աղանդաւորաց մերոց, որք և ըստ մեզ սովոր են զհինգ նուագս աղօթիցն համապատրաստ կատարել » ընթերցեալ եղեն վճիռքն տուեալք 'ի դենպետէն, որովք օրինաւոր համարէր նա զկոտորած ապստամբելոցն յարքայէ:

Խաղաց գնաց արքայ 'ի Կոստանդնուպօլիս, և անտի անց յԽւսկիւտար. արձակեաց զՄիւրթէզա փաշա իբրև ասպարապետ զօրացն յԻկոնիոն. և ինքն առկս ձմեռայնոյն 'ի վերայ հասանելոյ դարձաւ անդրէն 'ի թագաւորեալ քաղաքն: Խորհեցաւ Ապազա Հասան բապայս հինգհազար արձակել 'ի բանակն արքունի իբրու զղջացեալս, զի հրապոյրս ապստամբութեան արբուսցեն զինուորակցաց իւրեանց, և դաւաճանեսցեն զվէզիրն: Այլ նորա վաղ զգացեալ զդաւն ընդ ձեռն լրտեսաց իւրոց՝ նշանակեաց յանուանէ զնոյնս զղջականսն, և գլխատեաց զնոսա. և յայնմհետէ խորամանկն Ապազա խա-

բամանկագունից ևս քան զինքն պատահէր ոսոխաց։

Բանզի Թէպէտ և ուրեք յաղթեաց նա Մխուրթէզայի, այլ ապա մինչդեռ նա ձմերէր յԱնթապ. և սա 'ի Բերիա, այր ոմն խորագէտ և ճարտարաբան համոզկեր եղև նմա՝ յառաջ քան զամենայն 'ի Բերիա ուշ առնել. և յետ այնմ տիրելոյ, վճարեալ է ամէ ամենայն. և զի ուժգին առնուլ զնա չեմք ձեռնհաս, աղէ առաքեսցուք առ Մխուրթէզա արս հաւատարիմս՝ իբրու գասալիքս՝ երդումն առեալ 'ի նոցանէ 'ի կուրանն և 'ի սուսեր, և ապա գնասցես և դու ինքնին առ նա՝ կերպարանօք խնդրելոյ զհաշտութիւն և զներումն, և տիրեսցես ամրոցն։ Ի նոյն հաստատեալ հաւանեցուցին զնա և դատաւորն Անթապայ և այլք ոմանք՝ 'ի ծածուկ խորհրդակիցք Մխուրթէզայի. և դատաւորն ինքնին զկերպարանս նուիրակի յանձին կալեալ՝ բանս անժխտելիս սերտ բարեկամութեան ածէր 'ի սպարապետէն առ Ապազա, հանդերձ երդմամբ 'ի կուրանն՝ միջնորդ լինելոյ վասն նորա առ արքայ։

Գնաց Ապազա հասան 'ի Բերիա, իջեանս կալաւ բազում մեծարանօք յապարանս սպարապետին, և այլքն որ ընդ նմա՝ ագան 'ի տունս տունս քաղաքացեացն։ Մխուրթէզա կարգեաց ընթրիս մեծ կազմել նմա և երեսուն պաշտօնէից նորին, և բդեշխիցն յարելոյ 'ի նա. և

պատուէր ետ քաղաքացւոցն 'ի ծածուկ զի ընդ արձակել Թնդանօթին 'ի բերդէ անտի՝ սպանցեն այր իւրաքանչիւր զասպընջական իւր : Ի կատարած ընԹրեացն ասէ Մխըրթէզա ցայս իւր . « Տո՛ւք բդեշխիդ եղբարցս մերոց ջուր 'ի ձեռս 'ի լուացումն աղօթից » : Այն նշան էր տուեալ 'ի նմանէ կոտորածի եղկելեացն . և անդէն ողողեցան նոքա յարիւնս իւրեանց : Արձակեցաւ ապա Թնդանօթն , և լցաւ քաղաքն ճապաղեօք . և կառափունք երեսուն բդեշխից առաքեցան 'ի Կոստանդնուպօլիս :

Յայնմ գիշերի սասանեցաւ երկիրն 'ի Բերիա , սոսկացեալ իմն յերեսաց ահեղ դաւաճանութեանն՝ ասէ պատմագիրն Նայիմա . որպէս և հրդեհն բորբոքելոյ յետ աւուրց 'ի Կոստանդնուպօլիս՝ զնոյն վարկանի նա պատճառ : Այլ Թերևս ոչ նուազ խրատացի էր նմա 'ի նոյն պատճառս դասել և զանխրատութիւն քաջի սպարապետին 'ի Կրետէ՝ և ապա ծովակալին՝ Տէլի Հիւսէյինայ , զոր հուսկ ուրեմն հնարեցաւ եբարձ 'ի միջոյ նախանձ և վրէժխնդրութիւն վէզիրին մեծի . նա և զաքսորս դենպետին՝ որ չկամէր տալ զվճիռ մահու առնն անմեղի : Թո՛ղ զայլ խշխանս և զպաշտօնեայս գլխապարտեալս անհամարս գոգցես 'ի բազմութենէ . յորոց ոմանք զարմանք մի մեծ են , զի զառաւել ծերունին եւեթ Կիւրճի

Մէհէմմէտ ոչ միայն կելով եկեաց ամս հարիւր և տասն, այլ և իւրով օրհասաւն վճարեցաւ յաստեացս:

Ի խուռն բազմութեան անդ դատապարտելոցն 'ի մահ՝ նշանաւոր է սպանումն պատրիարգին Յունաց: Քանզի գտաւ թուղթ մի նորա գրեալ առ Կոստանդին իշխան երկրին Վլահաց, յորում ասէր. « Հասեալ է վախճան տաճկական բռնութեանն, և մերձ է ժամանակ տիրապետելոյ քրիստոնէից ընդ բնաւ տիեզերս »: Կոչեցաւ պատրիարգն յատեան դատաստանի, և պարտաւորեալ՝ կախեցաւ 'ի փարմանդ դավու:

Ընդ այն ժամանակս մեռաւ և քաջահամբաւ մատենագիրն Օսմանեանց Քեաթիպ չէլէպի Հաճի Խալիֆէ, այր երևելի իւրովք պատմական և աշխարհագրական հմտութեամբք:

Իբրև ցածոյց մեծ վէզիրն Քէօփրիւլիւ զաղմուկն Ասիոյ, խորհեցաւ ամրացուցանել և ևս զՏըլլեսպոնտ. և զամենայն խոչ խափանարար առ տան կոխեալ՝ կանգնեաց յամին 1659 'ի Դարդանեան կիրճն երկուստեք ամրոցս երկուս քառակուսիս երեքարիւր կըրկաչափ յերկայնութիւն, որ կոչեցան Քիլիտ իւլպահր, այն է փականք ծովու, և Սէտտ իւլպահր, Թումբ ծովու: Ապա և բերդ մի 'ի բերան Տոն գետոյ, և միւս ևս յափն Տնեբերայ:

Այլ նուաղեաց խնդութիւն Թագաւորին ընդ շինութիւնն 'ի հրդեհիլ մեծի և գեղեցիկ մասին Կոստանդնուպօլսոյ. զի բորբոքեալ ամենածախ հրոյն յԱյազմա դառնու, կիզաջինջ արար շուրջանակի և ընդ երկայն զաւուրս երիս, և անցեալ ընդ մէջ մեծի ձիարձակարանին և ձմերոցին Ենիչէրեաց, եհաս մինչև 'ի Գում գաբու և 'ի Սամաթիա և 'ի Նաւակայան Տաւուտ փաշայի: Այրեցան տունք երկերիւր և ութսուն հազար, ապարանք երեքարիւր, իջեւանք հարիւր, և մզկիթք բազումք. և մեռան 'ի հրայրեացն ոգիք քառասուն հազար:

Ի միւսում ամի մեռաւ վէզիրն մեծ Քէօփրիւլի Մէհէմմէտ՝ լեալ ամաց ութսուն և միոյ, և աղօտացուցեալ ըզ փառս լաւութեանց անձինն տարապայման խստութեամբ: Այլ անուն իւր անմոռանալի մնաց ոչ միայն 'ի բազմապատիկ շինութիւնս իւր, այլև 'ի գործս արութեան որդւոյն իւրոյ Ահմէտայ, որ աւելի քան զանգթութիւն հօրն՝ զքաջութիւն նորին ժառանգեաց հանդերձ իմաստութեամբն՝ գոլով ամաց քսան և վեցից: Եւ առ ժամանակօք երկոցունց վէզիրացս պատահեցին մեծամեծ խռովութիւնք ազգին վասն պատրիարգութեանցն Կոստանդնուպօլսոյ և Երուսաղեմի և վասն աթոռոյ կաթուղիկոսութեան:

Քէօփրիւլիւ օղլու Ահմէտ նախ առաջին ընդ ամ մի ողջ հետամուտ եղե իշխանաց յանցաւորաց կամ զուր չարախօսելոց, և սպան զնոսա, և յաքսորս առաքեաց, յորոց մի էր և գենպեան: Քանզի սա համարձակեալ՝ առդիւա առաջի Թագաւորին զխստութեան զընացս վէզիրին առաջնոյ: Ասէ ցնա Ահմէտ. « Այսպէս թէ հայր իմ սպան զոք, քո էր տուեալ զդատակնիքն »: Պատասխանի ետ գենպեան. « Ես ետու զդատակնիքն, այլ առ երկիւղի նորա, զի մի և զիս սպանցէ »: — « Եւ իցէ արժան առն աստուածաբանի, ասէ Ահմէտ, առաւել երկնչել 'ի մարդոյ քան յԱստուծոյ »: Դենպեան լուռ ևեթ եկաց, և ապա աքսորեցաւ 'ի Հռոդոս:

Եւ զի յոլովք 'ի դատապարտելոցն 'ի վէզիրէն ժամանակս ունէին անձանց զմայր Թագաւորին և զներքինապետն, երկոքեան սոքա թելադիր եղեն արքային 'ի բաց կալ այնուհետև յանընդհատ որսոց և հեծելութեանց, և զիշխանութիւն իւր 'ի ձեռս առեալ՝ ամփոփել զվէզիրն. և Մէհէմմէտ արքայ յանձնեալ 'ի զնէին որոց գային յատեան վէզիրին մեծի՝ զբաղմանց 'ի նոցանէ ինքնին քննէր զդատ, և իրաւունս առնէր: Խստագոյնս արգել քրիստոնէից ագանել զգլխարկ կարմիր և հողաթափս դեղնագոյնս, կամ փակեղունս

մնապքնւոյս, և կամ գաշնակս յանձին բերել. յայս սակս և ինքնին եւ յայլակերպս յածէր ընդ քաղաքն, և լրտեսս ամենայն ուրեք կարգեալ էր: Գուն գործէր Ահմէտ չխոտորել 'ի հաճոյից մօր Թագաւորին. և խորհրդով մտերմին իւրոյ Շամիզադէի որ 'ի ժամանակին բէլս էֆէնտի էր՝ յաջողեցաւ ընկեցիկ զներքինապետն առնել. որով և յակատանի եկաց մնաց իշխանութիւն իւր:

Յամաց հետէ պատճառքպատերազմաց յուղէին ընդ Գերմանացիս և ընդ Օսմանեանս վասն ստէպ ստէպ արշաւանաց իրերաց 'ի սահմանս երկրին Մաճառաց: Այլ իբրև կամէին Գերմանացիք խառնել յիւր Թրանսիլվանիոյ, որոյ իշխան յՕսմանեանց կարգեալ էր քաջն Ափաֆի, և բերդ եւ նոր շինեցին 'ի սահմանին իւրեանց՝ Սերինվար անուն, ոչ եւ անսացեալ Մէհէմմէտ արքայ աղաչանաց դեսպանաց նոցին՝ հրաման ետ մեծի պատերազմի յամին 1662. և ինքնին ընդ բանակին երթեալ յԱդրիանուպօլիս, արձակեաց անտի զվեզիրն մեծ հարիւր և քսան հազարաւ 'ի Մաճառս: Զահի հարան ազգք քրիստոնէից առ հասարակ, որոց վաղու եւ մոռացեալ իմն էր զոտնաձայն աւաղակոյտ մարտկացն Օսմանեանց. այլ մինչև գումարեցան 'ի մի վայր եկին նոքա, սոքա յարձակեալ առին զամուրն

Ուլվար և զայլ ևս ամուր ամուրատեղիս, և նիզակակիցք նոյին հարիւր հազար Թաթարք Խրիմու հեղեղօրէն ասպատակ սփռեցին մինչև 'ի խորս Գերմանիոյ, և ամենայն տեղիք ուր կոխեցին ոտք նոցա՝ ծխէին 'ի հուր և 'ի ջերմաջերմ արիւնս անմեղաց, և գերեալքն 'ի նոցանէ ոչ ինչ պակաս էին քան զքառասուն հազար ոգիս ։

Ապա մինչդեռ վէզիրն մեծ իբրև զառիւծ որջացեալ 'ի Պելկրատ 'ի ձմերոց նստէր, ժամ առին քրիստոնեայք 'ի հանդերձանս մարտի, և առաջնորդութեամբ Մոնթէքուքուլի սպարապետին հասեալք 'ի գետն Րապայ՝ Ճակատեցան հանդէպ բանակին Օսմանեանց յայսմ կողմանէ ։ Ա՛նցին Օսմանեանք ահագին յարձակմամբ յայնմ կողմանէ, և նախճիրս բազումս 'ի թշնամիսն գործեալ՝ զբուն զմիջավայր բանակի նոցին ցիր և ցան կացուցին ։ Այն ինչ և թեւքն երկոքեան Գերմանացիք և Գաղղիացիք յետս սակաւ ինչ մարտնչելոյ զթիկունս դարձուցանէին, Սփորք ոմն անուն զօրագլուխ գերմանացի՝ այր լի հաւատով և առանց դոյլութեան՝ անկեալ յերկիր աղօթս առ Աստուած մատուցանէր, և խրախոյս առ իւրսն բարձեալ գոչէր . « Կամ մահ, կամ յաղթանակ »։ Զնոյն բարբառ անդրէն կրկնեցին և այլ զօրագլուխք առ իւրաքանչիւր գունդս, և առ հասարակ յետս ընդդէմ դարձեալ յար-

ձակեցան վարազաբար 'ի վերայ ենի-չերեացն և սպայից, զբազումս 'ի նո-ցանէ 'ի գետ անդր թօթափեցին, և զմնացեալսն հալածական տարեալ վա-նեցին մինչև յայնկոյս գետոյն, ուր գետ. եւ կայր մնայր վէզիրն: Ձգեցաւ մարտն յայգուէ մինչև ցօր հասարակ, և լցան Գերմանացիք ճոխ աւարաւ. և առանձին սքանչելիս համարեալ զյաղ-թութիւնն՝ 'ի վաղիւ անդր միաբանա-կան երգով գոհութիւնս և աղօթս առ Տիրամայրն մատուցին 'ի տեղւոջ անդ ճակատուն, ուր տեսանի ցարդ և մա-տուռն կանգնեալ 'ի նոցանէ յիշատակ:

Յայնմ ժամանակի Մէհէմմէտ ար-քայ զկայ առեալ յԱդրիանուպօլիս՝ յորս և 'ի խրախճանութիւնս պա-րապէր: Եւ յաւել ցնա դատաւորին զօրաց եթէ ժամէ պարտ առնել 'ի Կոս-տանդնուպօլիս, ասէ. „Եւ զի՞ գործի-ցեմ ես անդանօր. ո՞չ 'ի Կոստանդնու-պօլիս անկաւ հայրն իմ յարևէ. և նախ-նիքն իմ ո՞չ ապաքէն անդանօր գե-րեալք էին և սպանեալք ապստամբաց: Լաւ էր ինձ հուր հարկանել 'ի քաղաքն այն և յարքունիս, և 'ի զնին կալ հրդեհին, քան թէ դարձ 'ի նոյն առնել”: Եւ արդարև 'ի գալ ամին միւսոյ ուր ուրեմն դարձաւ 'ի Թագաւորեալ քաղաքն:

Իսկ վէզիրն մեծ զիջեալ 'ի չափաւոր պայմանս հաշտութեան՝ խաղաղութիւն արար ընդ Գերմանացիս 'ի գլխոց ար-

քայլ. և անեկալ բանագնացութեանն զամ մի ողջ, ապա գեսպանք երկուսանք առաքեցան 'ի Կոստանդնուպօլիս և 'ի Վիեննա 'ի հաստատել գլխաւոր ուխտին: Ի Վիեննա արձակեցաւ Գարա Մէհէմմէտ աղա հարիւր և յիսուն արամբք և բազմապատիկ ընծայիւք, և հուշակելայն հմտութեամբ տաճկական լեզուի Մենինսքի՝ թարգման էր նորա. իսկ 'ի Կոստանդնուպօլիս մեծ զօրավարն Վալթէռ, նոյնպէս բազմութեամբ պաշտօնէից և իշխանաց և յոլովագոյն ընծայիւք՝ որոց գինք հասանէին ցերկերիւր հազար դահեկանս:

Դարձ արար և վէզիրն մեծ հոյակապ հանդիսիւ յաղթանակի 'ի Կոստանդնուպօլիս, և մեծարեցաւ յարքայէն և յաւագանւոյն: Ընդ այն ժամանակս կատարեցաւ և շինուած մզկթի Քիւսէմ սուլթանին, յորոյ 'ի նաւակատիս բազում պարգևս բաշխեաց մայր թագաւորին առ ամենայն աւագս, և նմին իսկ արքայի՝ թող զայլսն՝ ձօնեաց դաշնակ մի ոսկի, որոյ երախակալն էր զմրուխտ մեծ և պատուական: Իսկ ծախք շինուածոյ մզկթին հասուցին երեք հազար և ութսուն քսակք դրամոց:

Տեսեալ Վենետկեցւոց զհաշտութիւնն հաստատեալ ընդ Գերմանացիս, հետամուտ եղեն և նոքեանք այնմ հանդիպել. այլ 'ի պահանջել Օսմանեանց

'ի Նոյանէ հարիւր հազար ոսկիս առ մի նուագ, և տարեկան հարկս վասն Կրետեայ ոսկիս երկոտասան հազար, և զամուրն Սուտա՝ որ առ Գանտիա քաղաքաւ կղզւոյն, երբև չառին սոքա յանձինս խուրեանց զպայմանսն, հրատարակեցաւ դարձեալ պատերազմն յամին 1666 ։ Գափլան փաշա գլուխ կարգեցաւ նաւատորմին, և Թագաւորն ինքնին մեծաւ պատրաստութեամբ երթեալ ընդ բանակին մինչև յԱդրիանուպօլիս՝ արձակեաց անտի զվէզիրն հանդերձ նուիրական դրօշիւն 'ի Կրետէ, և ինքն դարձաւ 'ի զբօսանս որսոց ։

Թիւ համարոյ զօրաց վէզիրին մեծի, թող զութսուն հազար հրոսականն՝ քառասուն հազարք էին, որք ապա գամ՛ քան զգամյաւելեալք զանցին զհարիւր հազարաւ ։ Սոքօք խաղացեալ նորա 'ի Կանէա, և գարնայնի 'ի բուն իսկ 'ի քաղաքն Կրետէ, յորոյ առուամն 'ի քան և երից ամաց հետէ աշխատ լինէին Օսմանեանք, խրախուսեաց զզօրավարս բանիւք և պարգևօք, քաջալերեաց զզօրականսն բաշխմամբ դրամոց, և պատնէշ պաշարմամբ 'ի նեղ արկեալ զքաղաքն ամուր մինչև ցաւուրս աշնայնոյն՝ եթող 'ի պատնէշսն պահեկապանս, և ձմերեաց 'ի Կանէա ։ Այլ ցանգ 'ի հընարս առման քաղաքին գուն գործեալ, եա ձուլել անդէն 'ի կղզւոջն թնդանօթս բաղում և մեծամեծս . յորս ա-

կլա եւ ածել 'ի կոստանդնուպօլսոյ զկառն 'նաւուք և նաւակօք բազմօք : Բաղում անգամ խնդրեցին վենետիկեցիք զհաշտութիւն, խոստանալով զդրամն, այլ 'ի զուր · քանզի սա էր վեզիրն , եթէ « Զկրեալ կամիմ ես, չեմ կարօտ դրամոց » :

Ի միւսում ամի վերստին սկիզբն եղև պաշարմանն սաստկապէս · և սաստէպ սաստէպ պարգևքն և խրախոյսք առաքեալք 'ի թագաւորէն և 'ի մօրէ նորին առ վեզիրն և առ կողմնապետս՝ քաջալերելին զնոսա յոյժ յոյժ · սակայն և անպարտելի արիութիւն պաշարելոցն , որ էին այր պատերազմի քառասուն հազար ընդ վենետիկեցիս , ընդ Գաղղիացիս , ընդ Իտալացիս և Գերմանացիս , անընկճելի եկաց մնաց և այն ամ ընդդէմ բուռն յարձակմանց և անհամար ականահատութեանց և անդադար հրձգութեանց պաշարողացն :

Այսպէս անընդհատ յերկարաձգեցաւ պաշարումն ցմիւս ևս ամն 1669, յորոյ 'ի սկզբան դարձեալ նամակ արքունին եհաս առ վեզիրն, յորում գրէր · « Տեսից զքեզ դաստիարակ իմ, տեսից զքաջութիւնքո յայս ամ բարեգուշակ · ահա յանձն առնեմ զքեզ և զպահատակդ որ ընդ քեզ՝ 'ի խնամս բարձրելոյն · պայծառացին երեսք ձեր յաստիս և 'ի հանդերձելումն , այսօր և յա-

ւուր անդ մեծի դատաստանին »: Ի խորհուրդ կոչեաց վեզիրն զզօրավարսն, և ընթերցաւ առաջի նոցա զթուղթն, և նորոգ խրախոյս զգեցան ամենեքեան :

Յամսեանն յունիսի եհաս յօգնութիւն պաշարելոցն տորմիղ նաւուց Գաղղիացւոց վեշտասան հազար արամբք : Մուռոզինի սպարապետ Վենետկեցւոց խորհուրդ արարեալ ընդ զօրավարսն Գաղղիացիս՝ հաստատեաց յարձակել նաւուք 'ի ծովակողմն կուսէ 'ի վերայ պաշարողացն, և պաշարելոցն դիմել 'ի նմին պահու արտաքս 'ի քաղաքէն: Այն ինչ գային մերձենային եօթանասուն նաւքն 'ի պատնէշս անդր, մի 'ի նաւուցն ըստ անզգոյշ իմն դիպաց բորբոքեալ՝ յօդս ամբարձաւ. որով նաւաստորմն ցիր և ցան եղև, և յարձակումն պաշարելոցն 'ի քաղաքէ անտի՝ ձախողակի պատահեաց: Հուպ մերձեցան Օսմանեանք 'ի պարիսպսն, խրամատեցան և քայքայեցան յոլով ուրեք ամրութիւնքն ներքինք և արտաքինք. և պաշարեալքն յանհնարս անկեալ՝ յանձն առին տալ զքաղաքն 'ի ձեռս Օսմանեանց : Գլխաւոր միջնորդ հաշտութեանն եկաց պերճախօս Թարգմանն Օսմանեանց Փանայոթթի, և յաւուրն վեցերորդի հաստատեցան դաշինք խաղաղութեան յութուտասն պայմանս :

Յերկս եօթնեակս ելին մեկնեցան 'ի

Կրետեայ պաշտնակքն և քաղաքացիք առ հասարակ առանց ինչ տուժի. և ոչ ոք մնաց 'ի նմա, բայց միայն յոյն երիցունք երկու, և կին մի, և Հրեայք երեք։ Ի քսաներորդի եօթներորդի աւուր ամսեանն սեպտեմբերի բարձաւ խաչն սուրբ 'ի պարսպացն Կրետեայ, և 'ի վաղիւ անդր ընկալաւ վեզիրն 'ի կոնք մի արծաթի զուլթուն և զերիս բանալիս պարսպաց քաղաքին, և արկ 'ի գըլխանոց բերողին ոսկիս վեցհարիւր, և որոց ընդ նմայն էին՝ բաշխեաց ոսկիս չորեքհարիւր, և խիլայս զգեցոյց նոցա որպէս և Թարգմանին։ Ընկալեալ ապա զխնդակցութիւնս ամենայն տադանոյն՝ գրեաց զաւետիսն առ արքայ, և 'ի վաղիւ անդր ժողովեալ զզօրավարսըն՝ պատուասիրեաց զնոսա գահվէիւ (Թէպէտ նորոգ հրովարտակաւ արգելեալ էր այն) և օշարակաւ, և ասէ ցնոսա. «Որդեակք և ընչիւք չափ աշխատ եղերուք դուք ամենեքեան յայսմ արշաւանիս. զուարթերես լիջիք յառաջ և 'ի հանդերձելումն. արդար և իրաւացի եղիցին ձեզ վայելք հացի տեառն մերոյ արքային. և ես առաջի արարեալ նմա զվաստակս ձեր՝ հատուցից զփոխարէնն ըստ իւրաքանչիւր արժանեաց»։

Զնոյն և առ Ենիչէրիսն և սպայս բարբառեալ՝ զգեցոյց գլխաւորաց նոցին մուշտակս և խիլայս, և յաւուր ու-

բաթու եմուտ 'ի քաղաքն դրօշիւ մարգարէին իւրեանց. զոր և տարեալ տընկեցին 'ի մայր եկեղեցւոջն Կրետեայ: փոխեցին և զամենայն եկեղեցիս քաղաքին 'ի մզկիթս. միայն զմի 'ի նոցանէ գնեաց Թարգմանն փանայոթթի վասն Յունաց՝ գնոց երկուհազար և ութհարիւր ոսկւոյ. և միւս ևս եկեղեցի վասն մերոյ ազգիս գնեաց վաճառապետ վէզիրին ազգաւէրն Այրոյ Չէլէպի:

Չիք քան զԿրետէ ամրոց կամ քաղաք, յոյր սակս այնչափ արեանց հեղումն և ընչից վատնումն, երկարատև պաշարումըն, և աննկուն արիութիւն երբէք լեալ իցէ: Ամս քսան և հինգ յերկարաձգեցաւ պատերազմն. երիցս պաշարեցաւ Կրետէ, և յերրորդումն նուագին զամս երիս. հարիւր անգամ յարձակեցան Օսմանեանք 'ի վերայ, և իննսուն և վեց անգամ վանեցան 'ի պաշարելոցըն: Հազար հարիւր եօթանասուն և երկու ականս բորբոքեցին պաշարեալքն, և պաշարիչքն զերեքպատիկն առաւել: Կորուստ Վենետկեցւոց 'ի բովանդակ ժամանակս պաշարմանն եղև երեսուն հազար արանց, և Օսմանեանցն աւելի քան զհարիւր հազարաց:

Ամիս ինն կացեալ վէզիրին 'ի Կրետէ, նորոգեաց զաւերակս և զխարխարմունս պարսպաց և շինուածոց քաղաքին, և դարձաւ մեծաւ փառօք առ Թագաւորն յամին 1670. որ և հրամայ-

եալ երկու տիւս և երկու գիշերս ջահավառութեամբ առնել ընդ ամենայն տեղիս. մեծապարգեւս մեծարեաց զեկղերն յատենի, և զերեւելի երեւելի զօրավարս. և իբրու 'ի նշանակ գոհութեան առ Աստուած՝ խորհրդով ուսուցչին իւրոյ և քարոզչի Վանեցւոյ, որ կոչէր Վանի եֆենտի, արգել վերստին խստագոյնս զարբումն գինւոյ :

Եմուտ և Գափըլան փաշա նաւատորմաւն համդերձ 'ի Կոստանդնուպօլիս, ձգելով զկնի նաւաքանի մի խոալյցիս, և գրօշք նաւուցն ընդ ալիս ծովուն թաթաւէին : Եւ յորոշել սահմանայն Վենետիկեցւոց և Օսմանեանց, առաջինքն կալցին մնացին տեղայք միայն Սուտա, Սփինալոնկա և Գարապուզա քաղաքացն 'ի Կրետէ :

Ի ժամանակի առմանն Կրետեայ դէպք նշանաւորք պատմին լեալ այսպիսիք : Հրեայ ոմն Սապադայ Սեւի անուն ընիկ 'ի Զմիւռնիոյ՝ սկսաւ յԵրուսաղէմ ասել զանձնէ եթէ Մեսիայն իցէ և փրկիչ Իսրայէլի. վասն որոյ և առաքեաց թուղթ ընդհանրական առ ամենայն Հրեայս աշխարհին Օսմանեանց, մանաւանդ առ Զմիւռնայիս և առ որս 'ի Թեսաղոնիկին էին : Բիւրաւոր Հրեայք խուռներնթաց ժողովէին առ նա ոչ միայն 'ի Զմիւռնիոյ, 'ի Թեսաղոնիկեայ և 'ի Կոստանդնուպօլսոյ, այլ և 'ի Գերմանիոյ, յԱլեկուռնայէ,

'ի Վենետիկոյ և յԱմստերդամայ, և յայլ տեղեաց, և ամբոխ արարեալ մի-ձէին ընդ միմեանս վասն առնն: Ահմէտ փաշա վեզիրն մեծ բանադրել արար զմոլորեցուցիչն. այլ չև ևս լքան հետևողք նորա. զի ասէին եթէ է առ միջ մարգարէութիւն նմա, քան որոյ պարտ է մեսիային աներևակ լինել զամիսս ինն, և ապա դարձեալ 'ի վեր ելանել՝ հեծեալ յառիւծ մատակ, և սանձ նորին իցէ վիշապ եօթնագլուխ: Ապա իբրև գնայր վեզիրն 'ի Կրետէ՝ ետ ածել զսուտ մեսիայն 'ի Չանագ գալէսի. այլ նա և անմի մոլորեցուցանէր զմոլորեալսն: Նեէմիաս ոմն րաբունի յաշխարհէն Լեհաց՝ հընարեցաւ հաւանեցուցանել զՍապատայ, որպէս թէ կրկին մեսիայս գուշակեալ իցեն մարգարէքն. զի կարասցէ և ինքն գտանել երկրորդ նորին լինել. և իբրև դերևացաւ 'ի յուսոյն իւրմէ, յարոյց ընդդէմ Սապատայն և այլս ևս 'ի րաբունեաց, և նոքօք հանդերձ դիմեալ յԱդրիանուպօլիս առ տեղապահ վեզիրին՝ ամբաստան եղև զՍապատայէն, եթէ այր չարագործ է և խռովէ զխաղաղութիւն հասարակաց: Ածաւ Սապատայ յԱդրիանուպօլիս՝ տալ զհամար գործոցն իւրոց յատենի թագաւորին: Ոչ ինչ համարձակեալ արքային 'ի բանից նորա, նշանս խնդրեաց 'ի նմանէ տեսանել. հրամայեաց մերկացուցանել զնա և նշաւակ նետաձգութեան կանգ-

նել առաջի քաջակորով աղեղնաւորաց իւրոց, զի տեսցէ թէ խոցիցէ՞ նա 'ի նետից անտի։ Յայնժամ հարկեցաւ սուտ մեսիայն խոստովան լինել զնենգութիւն իւր. և թագաւորին իրաւունս պահանջեաց 'ի նմանէ սակս այնչափ գայթակղութեանցն և չփոթից, և ասէր. կամ ցից մինայ քեզ, և կամ դարձ 'ի մահմետական հաւատս։ Ուրացաւ մեսիայն զհաւատս հարցն իւրոց, և փոխանակ տիրելոյ ամենայն տիեզերաց, որում զհետ պնդեալ էր, շատացաւ ընդ դռնապանս արքունի դասիլ։ Դարձոյց 'ի հաւատոց և զբազումս յազգակցացն իւրոց, և յետ տասն ամաց աքսորեալ 'ի Պեղոպոնես՝ մեռաւ անդէն։

Յամին յորում առաւ Կրետէ, մեծաւ հանդիսիւ սկիզբն արարաւ ուսման գրոց արքայորդւոյն Մուստաֆայի, որ էր յայնժամ հնգամեայ։ Հարսն խորանք թագաւորին և աւագանւոյն 'ի գիւղն Դողան հուպ յԷնիշէհիր, ուր յայնմ ամի յորս հեծանէր Մէհէմմէտ արքայ։ Ի յաւուր տօնի ծննդեան մարգարէին իւրեանց՝ ածին աւագորեարն շքով մեծաւ զարքայորդին առ հայրն. որոյ յարուցեալ չոգաւ ընդ առաջ որդւոյն, համբուրեաց զաչս նորա, և նստոյց զնա առ իւր. և քարոզիչքն Վանի յառաջ մատուցեալ՝ ասէ. « Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի ». և արտասանեալ զբերսմն և-

եթ տառս ալփաբետացն զառաջինս՝ ԷԼԻՖ, ՊԷ, ԲԷ, ՏԷ, ետ արքայորդւոյն կրկնել երիցս զդասն, և աւարտ եղև հանդիսին. և ժողովականքն ամենայն պատուեալք մուշտակօք և խիլայիւք՝ հրաւիրեցան ապա 'ի մեծահաց ընթրիս 'ի վրանս ատենին:

Ընդ այն ժամանակս աթամանն խազախաց Տոռոժենքօ ընդվզեալ յարքայէն Լեհաց՝ եմուտ ընդ պաշտպանութեամբ Օսմանեանց, և միաբանեալ ընդ զօրս խանին Խրիմու՝ ասպատակեաց 'ի Լեհս: Բողոք կալաւ արքայն Լեհաց Քազիմիր առ Մէհէմմէտ արքայ, և ընկալաւ 'ի վեզիրէն պատասխանի. «Աստուած է որ զհարստահարեալ բռնակիչս աշխարհին խազախաց արկ ընդ հզօր պաշտպանութեամբ մերոյս արքայի. հապա տեղի տացէ Թագաւորդ Լեհաց յՈւքրանիոյ. իսկ եթէ ոչ, ահա գայ մեծազօր արքայս մեր վէհափառ 'ի վերայ քո բազմութեամբ զօրաց իբրև զաստեղս երկնից»: Եւ քանզի քաջ զօրավարն Լեհաց 'ի հերուն հետէ վանեալ էր զՏոռոժենքօ, և առեալ 'ի ձեռաց նորա զամուր ամուր տեղիս Ուքրանիոյ, խաղաց գնաց ինքնին Մէհէմմէտ արքայ մեծաշուք հանդերձանօք 'ի Կոստանդնուպօլսէ յԱդրիանուպօլիս, և անտի 'ի Լեհս. և սպարապետ բանակին էր նա ինքն Քէօփրիւլի Ահմէտ վեզիրն մեծ, որ և մականուն Ֆազըլ կամ Առաքինի ձայնէր:

Յամսեանն օգոստոսի յամին 1672 պաշարեցին Օսմանեանք զամուրն Կամենից. և յաւուրն ութերորդի իբրև առին զառաջին մարտկոցն, և ընդ երկրորդաւն ևս ակամն հատանէին, փութացան պաշարեալքն 'ի վաղիւ անդր անձնատուր լինել խաղաղութեան պայմանօք. յորոց և մի էր 'ի պայմանացն՝ թողուլ Օսմանեանց քանի մի եկեղեցիս 'ի ձեռս Լեհաց, Յունաց և Հայոց։ Առեալ թագաւորին զաւետիս և զխընդակցութիւն աւագանւոյն ընդ յաղթանակն, արձակեաց զխանն Խրիմու և զՏօռօսժէնկօ և զիշխանս Մոլտաւիոյ և Վլախաց, և զոմանս 'ի կուսակալացն Ասիոյ՝ ասպատակել մինչև յԼվով. որք և պաշարեցին զքաղաքն հօյակապ, այլ փախեան 'ի Սոպեսքեայ։ Միքայէլ արքայ Լեհաց յաջորդեալ Քազիմիրայ՝ խօսեցաւ 'ի հաշտութիւն ընդ Օսմանեանս. որով թողոյր 'ի նոսա զՓոտոլիա ողջոյն, և 'ի Խազախս զՈւքրանիա. խոստանայր հատուցանել Օսմանեանց ոսկիս երկերիւր և քսան հազար, և հարկս ամ՝ ըստ ամէ տալ խանին Խրիմու։ Եւ Մէհէմմէտ արքայ դարձաւ յԱդրիանուպօլիս։ Այլ 'ի մեռանել ընդ հուպ Միքայէլի, անդ յաթոռն Լեհաց արքին Սոպեսքի, և ջրեալ զդաշինսն՝ յորս չէին միաբան Լեհք ամենայն, դիմեաց զօրօք բազմօք, և հաստուածելովքն 'ի նա իշխանօք Վլախաց և Մոլտովանից՝ 'ի Խո-

թուն և 'ի շրջակայսն. Եհար խորտա_
կեաց 'ի Ճակատու պատերազմի զբա_
նակն Օսմանեանց. որում ձեռնտու եղև
և խորտակումն կամրջին Տնեսթերայ
առաջի փախստէիցն, և անկաւ 'ի ձեռս
Լեհաց կանաչագոյն դրօշ բդեշխին Սի_
լիստրէի, զոր առաքեաց Սոպեսքի 'ի
Հռովմ 'ի զարդ եկեղեցւոյ սրբոյն
Պետրոսի:

Ի միւսում ամին որ էր 1674, ահե_
ղագոյն պատրաստութեամբ խաղաց գը_
նաց Մէհէմմէտ արքայ յերկիրն Լեհաց,
և էառ պատերազմաւ բազում քաղաքս
և ամրոցս: Եւ ուր ուրեմն միջնորդու_
թեամբ Սէլիմ Քէրէյայ խանին Խրիմու
անսացեալ ստէպ ստէպ աղաչանացն
Սոպեսքեայ 'ի հաշտութիւն՝ դարձ ա_
րար 'ի տեղի իւր. Թէպէտ և Լեհք չև
ևս դադարէին 'ի վանելոյ զԹաթարս և
զՕսմանեանս յերկրէն իւրեանց, և ըն_
դեաշխք Օսմանեանց ընդ ամն ողջոյն
ասպատակէին 'ի հուր և 'ի սուր 'ի տե_
ղիս տեղիս աշխարհին:

Դարձեալ պաշարեաց սպարապե_
տըն Օսմանեանց զԽըզվով. այլ դարձեալ
վանեաց զնոսա անուն Սոպեսքի՝ հա_
սեալ յօգնութիւն քաղաքին. և որպէս
աւանդեն Լեհք, ընկալեալ և զօգնու_
թիւն յերկնից՝ տեղացմամբ ահագին
կարկտի 'ի զօրս Թշնամեաց: Եւ համ_
բաւեալ է յոյժ յԵւրոպա յաղթանակս
այս Լեհաց, թէպէտ և առ պատմ_

գիրս Օսմանեանց չէք յիշատակ ։ Եւ
թերեւս և նոցա , որպէս և համօրէն աշ-
խարհին մնացօնք եղեն իւքն 'ի մեծա-
շուք հանդիսից թլփատութեան որ-
քայորդւոյն Մուստաֆայի , և ապա 'ի
հարսանեաց դստերն արքայի , որ կո-
չէր Խատիճէ սուլթան . այլ քանզի նը-
ւաղ էր 'ի սոսա ճոխութիւն և պեր-
ճանք քան զոր առ Մուրատաւ երրոր-
դիւ, զնկարագիր սոցա չգրեցաք 'ի տե-
ղւոջս ։

Հազիւ հաղ 'ի գալ միւսոյ ամին, այն
ամ էր 1676, յաջողեցան դաշնադրու-
թիւնք Լեհաց ընդ Օսմանեանս , և մը-
նացին 'ի նոցա ձեռս Փոտոլիա և Կա-
մենից , իսկ Ուքրանիա ընդ թեարկու-
թեամբ թագաւորին Օսմանեանց ։

Տասնամեայ ժամանակաւ կացեալ
արքայն Մէհէմմէտ արտաքոյ թագա-
ւորեալ քաղաքին , ապա հաճեցաւ
դարձ առնել անդրէն . սակայն 'ի ժա-
մանել իւրում անդր այնպէս իմն գըժ-
կամակեալ սոռջացաւ ընդ երթն , զի չև
մտեալ յարքունիս, այլ 'ի Տաւուտ փա-
շա և յՕգ մեյտանին իջեանեալ վարկ-
պարագի զամիս վեց , մեկնեցաւ դար-
ձեալ յԱդրիանուպօլիս ։ Եւ պատ-
ճառք այսչափ յարհամարհս ունելոյ
նորա զԲիւզանդիոն համարի յիշատակ
ողորմ կատարածի հօրն իւրոյ անդանօր։

Ընդ նմին յուղի անկաւ խօթացին և
վէզիրն մեծ . այլ անցեալ ըստ Պուր-

ղաղ՝ 'ի դժուարս եղև, և մեռաւ ամաց քառասուն միոյ, կացեալ յիշխանութեան իբրու ամս հնգետասան. և որպէս ոչ ոք 'ի վէզիրաց մինչև ցայսօր ժամանակի այսչափ ամս եկաց ի նոյն յայնմ բարձի, նոյնպէս և սակաւք յոյժ կային իբրև զսա արդարակորովք, քաջայաղթք, մարդասէրք և իմաստունք:

Մեհեմմէտ արքայ մինչդեռ յորս հեծանէր 'ի Խասքեօյ, էառ զլուր մահուան վէզիրին, և առաքեաց զկնիքն առ տեղապահ Նորին Գարա Մուստաֆա փաշա, այր ընչաքաղց և գոռոզ. որ և անդէն սկսաւ ստանիկ արհամարհանօք գնալ ընդ դեսպանս քրիստոնէից, և հակառակ օգտի պետութեան՝ ընդմիմեանս զնոսա արկանել:

Ընդ այն ժամանակս համբաւեալ աթամանն խաղախաց Տոռոժենկօ հատուածեալ անկաւ առ Ռուսս, և ետ 'ի նոսա զՈւքրանիա. ընդ որ զայրացեալ Օսմանեանց՝ հանին յարգելանէ զայլ ումն խաղախ Հմելնիցքի անուն, և 'ի նա աւանդեալ զիշխանութիւն Ուքրանիոյ՝ արձակեցին անդր: Յամին 1677 սպարապետն Օսմանեանց Իպրահիմ փաշա քառասուն հազար զօրօք խաղաց ընդդէմ վաթսուն հազարաց Ռուսաց, որք առաջնորդութեամբ Ռոմոտանովսքի անուն զօրավարին իւրեանց ամրացեալ էին 'ի քաղաքն Չեհրին: Վանեցաւ Իպրահիմ 'ի թշնա-

մեայ 'ի սպառ, և կոտորեալ 'ի Թագաւորէն ընկեցիկ եղև. Նոյնպէս արկաւ յիշխանութենէ և 'նիզակակից նորին Սէլիմ-քէրէյ խան Խրիմու, և հրաման եղև հանդերձանաց մարտի:

Կարգեցաւ յարքայէ սպարապետութիւն վէզիրին մեծ, և խաղաց գնաց 'ի Չէհրին. անդր եհաս և խանն Թաթարաց, և պատուեցաւ ականակուռ զրահիւք և կապարճովք, և սամուրենեաւ: Յառաջնում յարձակման խորտակեցան Օսմանեանք, և որք մնացեալ 'ի փախուստ դարձեալ անկեալ էին անդրէն 'ի բուն բանակն՝ խեղդամահ եղեն. այլ ապա սկսեալ զպաշարումն, և սակայ սակայ ականահատութեամբ խարխալեալ խրամատեցին զմարտկոցսն, և հրդեհեցին զքաղաքն. մինչև ամբոխականացն բևեռս 'ի ծակս Թնդանօթիցն բևեռեալ և գիշերադնաց եղեն. և ընդ այդն առեալ Օսմանեանց ամրոցին՝ խոյս երկոտասան զէնին 'ի գոհութիւն, և զամուրն քանդեցին 'ի հիմանց:

Չորրորդ ամսոյն բանակին հազիւ թէ մնացեալ էր ընդ վէզիրին 'ի դառնալ նորա յԱդրիանուպօլիս. սակայն Թագաւորն մեծապէս պատուաւորեաց զնա սակս յաղթանակին մեծի, և ինքն երթեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ կառոյց 'ի Պէշիքթաշ պալատանոց ապարանս իւր. 'ի հաշտութիւն խօսեցաւ ընդ Ռուսս, որդել զվաճառս դարեջրոյ, և

գարձաւ անդրէն յԱդրիանուպօլիս։ Անդ առեալ զլուր մեծի հեղեղին դիպելոյ 'ի Մէքքէ, որով ջրատար լեալ էին մզկիթն և շինուածք որ առ Քէապէիւ, հրաման ետ նորոգելոյ զնոսին յիւրոց ծախուց։

Յոլով ամք էին, զի նախարարազունք և իշխանք Մաճառաց տեէպ տեէպ երթևեկութեամբ 'ի գուռն վէզիրին՝ հնարէին ելանել 'ի ներքուստ ձեռին կայսերն Գերմանացւոց, և ընդ պաշտպանութեամբ մտեալ Օսմանեանց՝ և թագաւոր զոմն կարգել յիւրեանց աշխարհին։ Հզօրագոյն գտաւ 'ի սոսա Եմրիկոս Թէօքէլի բանիւք և արդեամբք, և մանաւանդ կաշառովք, և յինքն յանկոյց զվէզիրն. որոյ ոչ ինչ ունէին մատուցեալ բազմապատիկ բողոքոյ դեսպանացն Գերմանացւոց, կարգեաց զնա ինքն զԹէօքէլին Թագաւոր Մաճառաց, և պահանջէր 'ի կայսերէն՝ Թողուլ 'ի ձեռաց զՄաճառս, հաստանել Օսմանեանց ամ ըստ ամէ այսչափ ինչ հարկս, քանդել զայս անուն և զայս անուն ամրոցս։

Իբրև ոչ ինչ լսելի եղեն պայմանքն, և ոչ բանից դեսպանին հասելոյ նորոգ 'ի Վիեննայէ որ 'ի խնդիր էր խաղաղութեան՝ անսացին Օսմանեանք. և յամսեանն հոկտեմբերի յամին 1682 խաղաց գնաց բանակն արքունի մեծապէս հանդիսիւ 'ի Տաւուտ փաշայէ յԱդրիա

նուպօլիս․ և ընդ բանակին եկին 'ի Կոստանդնուպօլսէ գունդք գունդք արուեստաւորաց, ըստ յաճախ սովորութեան։ Այլ յայս նուագ պերճութիւն բանակին անցոյց զանցոյց զպերճութեամբ այլոց արշաւանաց ըստ ամենայն գլխոց։ Ածէին վարէին և հօտք հօտք խաշանց, յորոց 'ի ձայն փողոյ ընդ երեկս սպանդք լեալ՝ այգուն այգուն բաշխէր միան 'ի զօրականս։ Ըստ ամենայն գիւղից և աւանաց զկայ առեալ յառաջընթաց զօրաց բանակին՝ արգելուին գիւղականաց 'ի փախուստ գնալ մինչև եկեալ իցէ թագաւորն․ իսկ ապա ազատ էր այր իւրաքանչիւր փախչել 'ի լերինս, զի մի խուեսցին յասխացի զօրացն որ հինաբար գային զկնի։

Ժամանեալ արքային 'ի Պելկրատ, կարգեաց զվէզիրն մեծ զԳարա Մուստաֆա փաշա սպարապետ ինքնիշխան, և ետ նմա սուսեր և երիվար, և զդրօշն նուիրական, և արձակեաց 'ի պատերազմ։ Եւ նմա ընդ առաջ Թէօքէլին, և պատուեցաւ յոյժ․ որպէս և Մուրատ .բէրէյ խանն Խրիմու հասեալ յիւսմթունի Պելկրատ։

Ցասենի խորհրդոյն հաստատեցաւ դիմել դէպուղիղ 'ի Վիեննա․ ուր ծերունի կուսակալն Պուտինայ Իպրահիմ փաշա խորհուրդ տխտանի տայր տան առ տան առնել զերկրակալութիւնն մինչև 'ի հասանել 'ի Վիեննա․

և առակ օրինակի եդածէր 'ի մէջ զԹա-
գաւորի ուրումն՝ որ քսակ ոսկւոյ ե-
դեալ 'ի միջավայրի մեծի իրիք կապեր-
տի, խոստանայր պարգևել զայն առն՝
որ առանց կոխելոյ 'ի վերայ կապեր-
տին ձեռնհաս լինիցի առնուլ ըզ-
քսակն. և մի ումն ամփոփեալ զկապերտն՝
եառ զոսկին : Այլ նա չեղև լսելի :

Մինչդեռ զօրք Թաթարաց 'ի խումբս
խումբս արշաւեալ ասպատակէին 'ի
Գերմանիա, և Օսմանեանք զդիմակաց
քաղաքս և զամուրս առնլով յառաջ
խաղային առաջնորդութեամբ իշխա-
նացն Մաճառաց, կայսրն Գերմանա-
ցւոց Լէոբոլտ՝ հանդերձ ամենայն
պալատականօքն ելեալ 'ի Վիեննայէ
խոյս ետ 'ի վերնագաւառսն. և վեզիրն
մեծ Գարա Մուսդաֆա փաշա 'ի չո-
րեքտասաներորդի աւուր ամսեանն
յուլիսի հասեալ հանդէպ մեծի քաղա-
քին երկու հարիւր հազար զօրօք՝ պա-
շարեաց զայն, և սկսաւ պատնէշս և
մարտկոցս կանգնել ընդվաւ յաջակողմն
կուսէ Դանուբայ :

Ի Վիեննա ոչ ինչ աւելի էին մարտիկ
զօրականքն քան զտասն հազար այր.
այլ նոյն իսկ յանփութութիւն իմն
արկ զվեզիրն՝ առ 'ի չակնդելոյ զպաշա-
րումն անխափանգոյնս. և Թէպէտ երբեք
երբեք յարձակէին զօրքն 'ի պարիսպս
անդր, այլ և ոչ մի անգամ համագունդ-
դիմեցումն առնէին : Ցերեկարեկու

պաշարումն անդր քան զաւուրս քառասուն՝ ընդդէմ պատերազմական օրինի Տաճկաց, և սկսան զօրքն տրտնջել: Իսկ որ ՚ի ներքս անդ էին՝ կիսով չափ կոտորեցան ՚ի պատնշացն վերայ. թող զմեռեալսն յախտէ թանչից որ ՚ի նմին ժամանակի ճարակէր ՚ի քաղաքին. և միայն յոյս նոցա ՚ի զօրս կայսերն էր, որ ունէին հասանել ՚ի թիկունս օգնութեան: Այն ինչ պատրաստէին Օսմանեանք միախուռն յարձակել ՚ի պարիսպն, որոց գոգցես համաշափ էին և պատնէշքն իւրեանց, և ուրեք ուրեք մարտկոցքն ևս ՚ի սոէպ բախմանց թնդանօթիցն խորտակեալ էին, լուր եհաս՝ եթէ զօրք քրիստոնէից դիմեալ գան ընդ լեռնակողմն:

Անդէն վաղվաղակի մեկնեալ բանակեցան ՚ի դաշտին ՚ի ճակատ մարտի, և ՚ի վաղիւ անդր և ահա արքայն Լեհաց Յովհաննէս Սոպեսքի ընտիր ընտիր զօրօք Լեհաց և Գերմանացւոց գայր իջանէր ՚ի լեռնէ անտի հանդէպ Օսմանեանց: Բախեցան ճակատքն երկոքեան, և յայգուէ մինչև ցօր հասարակ արիաբար մարտեան երկոսեանք. այլ յիջանել զօրացն Լեհաց յանկարծակի զօրէն իմն ուղխից ՚ի միջոյ անտառաց, չփոթեցաւ առ հասարակ բանակն Օսմանեանց և ՚ի փախուստ խուճապեցաւ. և լցան լիացան քրիստոնեայքն անբաւ ճոխութեամբ աւա-

րին ։ Զի անդէն 'ի բանակին տեղւոջ կային մնային երեքարիւր Թնդանօթք , հնգետասան վրանք , այլ և ամենայն վրանք վէզիրին հանդերձ գանձուքն և զարդուք , զինուք և նուագարանօք և դրօշիւք , որոց ամենայնին ոչ գոյր թիւ ։ Եւ յաճախութիւն գահվէին գտելոյ 'ի բանակին Օսմանեանց սպա_ճառս ետ մոլից ըմպելւոյս 'ի Վիեննա ։

Սողեպքի 'ի վրանէ անտի վէզիրին գրեաց թուղթ աւետեաց առ դշխոյն իւր . և 'ի վաղիւ անդր եմուտ յաղթա_նակաւ 'ի քաղաքն , տանելով առաջի դրօշ մի մեծ [1] և զերկուսին ձողաբարձ ձարսն որ կային առաջի վրանի վէզիրին ։

Գարա Մուստաֆա 'ի փախչել իւ_րում 'ի Պելկրատ , ուստի վաղ մեկնեալ էր թագաւորն յԱդրիանուպօլիս , թա_փեաց զցասումն իւր յԻպրահիմ փաշա 'ի կուսակալն Պուտինայ և սպան զնա . և փոխանակ զայրանալոյ ընդ անմտու_թիւն յանդգնութեանն իւրոյ , հրամայէր սպանանել եղնէէցիկ առնել զզէդեւաչխա

[1] Ու էր դրօշս այս նուիրական այն ա_նուանեալ դրօշ մարգարէին Տաճկաց , որդէ_ալէն յոլովէ 'ի պատմագրաց Եւրոպացւոց· ցն այն անպաճոյճ էր , և խնաւալտոյն . իւն ա խարիր էր ամէն և ձձ և ոսկեգործ . և 'ի վերայ ասրաբալական գլխոյ բանիցն 'ի խու_րանէ , որ 'ի վերայ առաջնոյն դասաւո_րեալ նէր խոյ մահմետականաց ։

և զզօրավարս որք ոչ կարացեալ էին զդէմ ունել հետամտիցն իւրեանց Գերմանացւոց և Լեհաց ամենայն ուստեք : Իսկ Թէպէտ վէզիրն ըստ օրինի ընկալեալ էր 'ի Թագաւորէն Նամանի և սուսեր ակնանակու. սակս ազատելոյն իւրոյ զզօրսն 'ի կոտորածէ. այլ իբրև առին Գերմանացիքն բաց յայլոց բերդորէից և զամուրն Կրան , յաջողեցաւ Թըշնամեաց նորին առնուլ յանքայն զհրաման սպանման նորին : Գլխատեցաւ նա 'ի Պէրլիրաս, և կնիքն արքունի աւանդեցաւ 'ի անեզապահ նորա , որ կոչէր Գաւրաս Խալրահիմ փաշա :

Փոխեցան փոփոխեցան և այլ աւագանին. էին որ յաջողս առաքեցան , էին ևս որ կախեցան կամ սպանան , այլ չգտաւ որ որ զմնացեալ պետութիւն հաստատեր ընդդէմ Թշնամեաց շուրջանակի հասելոց 'ի վերայ : Քանզի սպարապետն Գերմանացւոց առեալ զբեԹէ զամենայն զամուր ամուր տեղիս երկրին Մաճառաց, ևս և զՊուշվար , ըզՎիշէկրատ և զՀամզապէյ , եկն պաշարեաց և զՊուտայն Բինաուն հազարր զօրօք, և 'ի նեղ արկ սաստկապէս զքաղաքն : Էին 'ի նմա զօրականք միջասասան հազար, և զդէմ ունէին առքա Գերմանացւոց արիաբար իբրև արջք օրհասականք , և զբաղեալ 'ի նոյանէ գիԹաւալ կացուցանէին : Ահա յօգնուԹիւն պաշարելոցն և նոր վէզիրն մեծ

և սպարապետն Սիւլէյման փաշա, այլ անագան. զի Գերմանացիք հարին զվանեցին զմասն բանակի նորա, և ինքեանք խուժեալ ընդ խրամատս քաղաքին 'ի ներքս՝ առին զմեծն Պուտին, և զզինակացն 'ի հուր և 'ի սուր մաշեցին:

Ի միւսում ամի խորտակեցան Օսմանեանք և 'ի Ճակատամարտին 'ի Մոհաչ, և կորուսին այլ ևս բերդորայս բազումս. զի և Ափաֆի իշխանն Թրանսիլվանիոյ բանագնաց էր ընդ Գերմանացիս, և վտարանջեալ ինն յՕսմանեանց. և իշխանքն Մոլտաւիոյ և Վլահաց առ երեսս եւեթ հպատակէին սոցա, այլ 'ի ծածուկ ձեռնտու էին 'ի Լեհս: Միաբանեցան ընդ Լեհաց և Ռուսք՝ որ բարեկամ թուէին Օսմանեանց:

Եւ որ մեծն է, յայս ամենայն ձախող պատահարս Օսմանեանց հայեցեալ Վենետիկեցիք և այլ պետութիւնք Իտալիոյ՝ միաբանեցին ընդ միմեանս, և դաշնաւորեալք ընդ կայսեր՝ խաղացին ընդ ծով և ընդ ցամաք 'ի սահմանս Օսմանեանց: Բազում ամրոցս և քաղաքս առին Վենետիկեցիք 'ի Դալմատիա, և սպարապետ նոցին հռչակաւորն Ֆրանչիսկոս Մօռոզինի էառ պատերազմաւ և պաշարմամբք զամենայն զծովափնեայ տեղիս Պեղոպոննիդայ, որ է Մօռա, սակս որոյ և Պեղոպոննեսական կոչեցաւ:

Այսչափ և այսպիսի կորուսոց ան-

ձանց և տեղեաց 'ի Մաճառս, 'ի Դաղ-
մատիա և 'ի Յունաստան, հարկաւ իմն
յուղէին 'ի զօրուն Օսմանեանց զօրը-
ատունջ և զխռովութիւն. ուր և ամբո-
խըն Կոստանդնուպօլսոյ հանդոյն ծո-
վու ծփեալ կոծէր առ իւրաքանչիւր
գուժիցն հնչմունս: Եւ Թագաւորն
ինքնին 'ի լուր պարտութեան Օսմա-
նեանց 'ի Մոհաչ՝ զաւուրս երիս չէր
ինչ ճաշակեալ:

Մինչդեռ Գերմանացիք բանակեալ
կային առ Վարատինաւ յայնկոյս Դա-
նուբայ, արձակեաց վէզիրն 'ի վերայ նո-
ցա գունդ մի սպայից առանց կահուց
և կարասեաց յայսմ կողմանէ գետոյն:
Զաւուրս երկուս անդադարափ անձ-
րևոյ եղեալ՝ յոգնիս ապաստան արար ըզ-
գունդն անյարկ անծածկոյթ մնացեալ
'ի ճախճախուտ վայրին: Դարձան
անդրէն 'ի բանակն, և ահա խելք կամբը-
ջացն ցանկեալ էին ընդդէմ իւրեանց
հրամանաւ վէզիրին: Քակեցին զցանկն,
և ահագին աղմկաւ դիմեալ եկին 'ի բա-
նակ անդր: Վէզիրն զարհուրեալ, առա-
քեաց առ ընդ առաջ նոցա և հարցանէր
ողոքանօք եթէ զինչ խնդրիցեն. իսկ նոքա
ասեն. «Ոչ կամիմք բնաւ և ոչ ինչ, այլ բա-
րք զվէզիրեն հարկանեմք. հապա թող
'ի բաց առցէ, 'ի բաց, զինիքն և զդրօշն»:
Զայն իբրև զգաց Սուլէյման, եառ
զդրօշն նուիրական և փախեաւ ընդ հըր-
դից ոմանց 'ի Վարատին, և անտի ընդ

Դանուբ 'ի Պելկրատ :

Ի շփոթս անհնարինս յուզեցաւ բա-
նակն ողջոյն 'ի լուր փախստեան Սիւլէյ-
մանայ • այլ Օսման պէյ, Ճատու Նաւ-
ուֆ, Քիւչիւք Մէհէմմէտ և այլք ո-
մանք 'ի գլխաւորաց զօրուն խորհուրդ-
արարեալ՝ խաղաղեցին զզօրսն • ընտրե-
ցին վեզիր մեծ զՍիավուշ փաշա զկու-
սակալն Բերիոյ, և գիր թղթոյ յօրի-
նեալ ընդդէմ Սիւլէյմանայ առ Թա-
գաւորն՝ արձակեցին ընդ Դանուբ և
ընդ Սեաւ ծով 'ի Կոստանդնուպօլիս :

Մինչև հասեալ պատգամաւորաց
բանակին 'ի Թագաւորեալ քաղաքն՝
կանխաժաման եղև անդր Սիւլէյման, և
երթեալ գաղտ առ տեղապահն Քէ-
ձէպ՝ առաքեաց առ արքայ զկնիքն և
զգիրօշն : Հասին և նուիրակք բանա-
կին, և խնդրէին զմահ Սիւլէյմանայ,
և զկնիքն արքունի տալին տալ ցՍիա-
վուշ: Յայնժամ առեալ մեծ խորհըր-
դոյ կողմեաց Թագաւորն • յորում Քէ-
ձէպ զանձն իւր ընծայեցուցանէր առ-
նուլ զկնիքն, և խոստանայր վաղ ընդ-
փոյթ բարեկարգել զամենայն • սակայն
Թագաւորն 'ի պատիւ ընդունեալ՝ կա-
մեցաւ կատարել զկամս աղմկելոցն զօ-
րաց, և առաքեաց զկնիքն առ Սիյավուշ
'ի Նիշ, ուր հասեալ էր բանակն :

Այլք չարեքաստան 'ի գլխաւորաց խռ-
ովչացն առաւել ևս համարձակեալք՝
սկսան խնդրել և զգլուխս ամենայն իշ-

խանաց որ չէին հաճոյ յաչս իւրեանց, և նախ զհամարակալին՝ որ անդէն 'ի բանակին էր։ Վէզիրն բարեխօս եղև վասն նորա. այլ 'ի զուր։ Եւ առ նոսա եղկելի համարակալն և ասէ. « Որդեակք իմ, խնայեցէք յալէխառն մորուս իմ և 'ի խոյրս կանաչագոյն ». այլ անսաց և ոչ ոք, և առ եռեղ գլխատեցաւ նա 'ի մոլեգնելոց անտի։ Նոյա խողխողեցան և այլք ոմանք յիշխանաց 'ի վրանս իւրեանց. և ըէխ էֆէնտին 'ի փախուստ ճողոպրեցաւ։

Այլ իմն դաւաճանութիւն մեքենայէր յայնժամ ակղապաշն Րէճէպ 'ի Կոստանդնուպօլիս՝ չարոյ իւրում։ Արդէն իսկ համբաւէր 'ի քաղաքին՝ եթէ կամք են ապստամբաց ընկենուլ յաթոռոյ զարքայ, և թագաւորեցուցանել զերէցն յերկուց եղբարց նորին զՍիւլէյման. իսկ Րէճէպ կամէր ամբառնալ 'ի գահ զորդին Մէհէմմէտայ արքայի զՄուսդաֆա։ Զգաստ եղև արքայ դաւոյն, և ետ ցպոսթանճիպաշին կրկին նամակս. մին հրաման էր բանտարգել առնելոյ զՐէճէպ, և միւսն՝ սպանանելոյ զնա, որպէս զի բաց յաճախ սովորութեան ցուցցէ նախ նուրակն զառաջին զայն հրաման, և յետ այնորիկ զերկրորդն ածցէ 'ի մէջ։ Այլ վրիպեաց հրամանատարն, զի անգէտ էր գրութեան, և զերկրորդն նախ մատոյց։ Ընդէն աղաչեաց զնա ակղապա-

հըն Րէճէպ՝ մնաց նմա վայրիկ մի, մինչև առցէ ընդ իւր զկարևոր ինչ իրս վասն բանակին, և փախեաւ ընդ միւս դուռն. և ձիարշաւ ընդ քաղաքն լինելով՝ դոչէր առ ժողովուրդն փակել զկրպակս, զի եկին մինին աստ ապստամբքն 'ի ներքըս. իսկ ինքն աներևոյթ եղև:

Սրտմտեալ արքային ընդ անխորհուրդ գործ նուիրակին իւրոյ, պատուիրեաց նմա սպառնալեօք մահու դառնալ զՐէճէպ ցերիս աւուրս. և առ ժամն կարգեաց տեղապահ զՔէօփրիւլիւ Մուստաֆա զեղբայրն Ֆազըլ Ահմէտայ:

Ապա առաքեաց 'ի բանակն զգլուխ Սիւլէյմանայ, և խոստանայր կատարել զամենայն զխնդիրս նոցին, միայն թէ 'ի տագնապ ժամուն դադարեսցեն կացցեն 'ի Փիլիպպէ: Այլ նոքա առ հասարակ ձայն բարձեալ ասեն. « Պարտ էր արքայի կանխաւ ուշ ունել այսմ, և փառաց պետութեանս, և ոչ վատնել զժամանակ իւր յորսս. համպա խաղասցուք յառաջ »: Իբրև հասին յԱդրիանուպօլիս և անտի 'ի Սոլադ չէշմէսի, միւս ևս նամակ արձակեալ 'ի դուռն՝ պահանջէին ընկեցիկ առնել զթագաւորն: Զայն թուղթ իբրև ընկալաւ տեղապահն Քէօփրիւլիւ Մուստաֆա, ժողովեաց զգլխաւորականն վաղ քաջ ընդ առաւօտն յԱյա Սոֆիա, և ընթերցաւ նոցա զբանն. և մինչդեռ ամենեքեան լուռ կային, ասէ տեղապահն.

« Քանզի թագաւորն որոյ միայն պա-րտալի, և 'ի պատեհ պաշտել թշնամեաց զսահմանս մեր շուրջանակի՝ չիք որ վա-նիցէ զնոսա առ չխութոյ թագաւորին, զի՞ ևս յերկուանայցէք խորհրդականք առաքինիք՝ եթէ օրինաւոր իցէ գործ լուծումն իշխանութեան այսպիսւոյ թագաւորի » ։ Իբրև դարձեալ լուեցին և հաւան թուեցան ընդ բանսն, ելին ա-մենայն բազմութիւնն, և երթեալ 'ի վանդակն արքայորդւոց որ 'ի պարտիզին արքունի՝ հանին զեղբայրն Մէհէմմէ-տայ զՍիւլէյման և թագաւորեցուցին յութերորդում աւուր ամսեանն Նոյ-եմբերի յամին 1687, և զՄէհէմմէտ եդին յարգելանի. ուր կեցեալ ամս հինգ՝ մեռաւ նա 'ի հասակի յիսուն և երից ամաց, թագաւորեալ ամս քառա-սուն ։

Զմեծ մասն բազմամեայ թագաւո-րութեան իւրոյ յորսս անցոյց. սակս ո-րոյ բիւրաւոր մարդկամբ ընդ գաւառս և ընդ նահանգս ողջոյն ընթանայր ան-խոնջ անձանձիր իբրև զնոր ոմն Նեբ-րովթ. և սա էր բան զնմանէ յամբոխին՝ որպէս թէ հայր նորա 'ի մահուան իւ-րում անէծս եդն այսպիսի կարգացեալ իցէ որդւոյն՝ թափառական շրջել ընդ լերինս և ընդ դաշտս ։

Էր և թեթեամիտ 'ի բնէ. որով պա-տուիրեալ սենեկապետին իւրում Ասլ-անայ պատմագրել զգործս քաջու-

Թեան իւրոյ, կայր և տողէր նմա զոր ինչ տրուԹիւնս ցուցեալ իցէ իւր երբեք յորս։ Յաւուր միում եհարց ցպատմագիրն, Թէ զինչ ինչ այսօր գրոշմեալ իցէս 'ի գիր. և յասել նորա Թէ չգտի ինչ տակաւին արժանի մատենագրելոյ, եհար զնա ուժգին նետիւն, և ասէ. « Ե՛րԹ, և զայս հա՛ր 'ի գրի »։ Զայս և զայսպիսիս բազումս վիպագրէ նա ինքն Ապոնի յիւրում մատենին։

Սակայն որպէս ասէ պատմագիրն օսմանեան, քան զամենայն Թագաւորս որ զկնի հազարերորդի ամի հիճրէԹին Թագաւորեցին 'ի Կոստանդնուպօլիս՝ բարեբաստիկ և պերճ ցուցաւ արքայս Մեհեմմետ Դ·, և առ նովաւ 'ի հանդստեան և յանդորրու վայելէին աղքատք և մեծատունք առ հասարակ։

## ՍՈՒԼԴԱՆ ՍԻՒԼԷՅՄԱՆ Բ·

ՔԱՌԱՍՈՒՆ և հինգ ամաց էր 'ի թագաւորել իւրում երկրորդս այս Սիւլէյման, պատերազմասէր և աննկուն 'ի փափկութեանց: Յաւուր քսաներորդի եօթներորդի ամսեանն Նոյեմբերի ածաւ զսուսերն յԷյուպ, և դարձաւ հետ ընդ դուռնն Ադրիանուպօլսոյ անուանեալ· յորում ժամու տեղատարափ անձրևէին, և դէպք անկման խուրի թագաւորին 'ի գլխոյ նորա՝ չարագուշակ պատահարք համարեցան յաչս ամբոխին:

Մինչ այս և մինչ այն, հասին խռովայոյզքն 'ի Կոստանդնուպօլիս, և խըմբեալ ենիչէրիք յԱթմէյտանն, և տարայք 'ի ձիարձակարանն մեծ՝ խնդրեցին և առին զգլուխ տեղապահին Բէճէպայ, որ առ դահճին կայր 'ի կալանս: Ապա ընկալան և զավորական պարգևսն, և ուժգին բռնութեամբ փոփոխեցին զիշխանս բազումս, և զպէնպէտն անգամ: Այն չէր շատ, յանդըգնեցան յաւարի առնուլ զապարանս աւագանւոյն, և զվէզիրին ևս, առ որում էին յայնժամ գանձապետն և համարակալն և դատաւորքն երկոքեան:

Սորա 'ի քաղաքամիջն լինելոյ ապստամ_բաց , և 'ի հրձգութենէ յապարանսն՝ հարկեցան ելանել արտաքս , և վէզիրն եւս 'ի բաց գնինքն արքունի . սակայն ոչ շատացաւ զօրավարին ենիչէրեաց Հաճի Ալի անուն , և սնգեաց զաղաշարուանն ու 'ի բառնալոյ զկեանս վէզիրին : Ընդ արշալուսոյս մուտ գնելով խուժանին յապարանսն՝ վէր 'ի վայր տապալեցին զամենայն . և Աբյամլիւշ տեսեալ զի չէր անդի փախուստ , և չհանդուրժեալ ընդ աստակոյին լինել կանանցին իւ_րոյ , ել եկաց 'ի դրան , և նետոփք և հրա_զինուք եհար կործանեաց արս աւելի քան զհարիւր և յիսուն՝ մինչև անկաւ և ինքն , և կանանցն իւր մատնեցաւ յանարգանս և 'ի յափշտակութիւն մո_լեգին խուժանին , որպէս ինչ երբէք չէր պատահեալ 'ի թագաւորեալ քա_ղաքին :

Յայնժամ Օսման էֆէնտի քարոզիչն Սիւլէյմանիյէ մզկիթին ընդ այլոց ոմանց 'ի գիտնականաց կանգնեալ զդրօշն Մահմէտի 'ի վերայ միջնոյ դրան արքու_նի ապարանիցն՝ հրաւիրեաց ընդ նովաւ զամենայն զՏաճիկս : Խուռնընթաց հասին գումարեցան ժողովք բազումք ընդ դրօշիւն . կոտորեցին զգլխաւորս խռովչացն , և զգիշերն ողջոյն 'ի հրա_պարակի անդ կացին մնացին : Սպա_նաւ զօրավարն ենիչէրեաց , փոխեցան դենպետն և դատաւորքն երկոքին , և

այլք վարհուրեալ ցրուեցան յիւրա-
քանչիւր տեղիս ։

Իբրև առեալ Թշնամիքն, զի զօրք Օս-
մաննեանց ոչ ևս ընդդէմ իւրեանց, այլ
'ի բուն իսկ յաթոռն պետութեան
դարձուցանէին զզէնս, յառաջ ևս վա-
րեցին զյաղթանակս իւրեանց, և առին
յոլով աւանս 'ի Մաճառս, 'ի Յու-
նաստան, և 'ի Դալմատիա ․ Թող զայլ
բերդորայս և զքաղաքս մանուանս ։

Խամայիլ փաշա ընտրեալ վէզիր մեծ
փոխանակ Մխամլուշայ՝ կարգեաց պա-
րապետ զօրաց զՆէկէն Օսման փաշա ․
այլ նա ընդվզեալ ապստամբեցաւ, և
կաց 'ի գլուխ հուղկահարաց Ասիոյ, և
քան զայլագնեն ևս ահագնագոյն զատու
Օսմաննեանց ․ զի խաղացեալ առան հա-
զար արամբք 'ի Պէլկրատ՝ կամէր պա-
նանել զՀասան փաշա, որ նորոգ կար-
գեալ էր պարապետ ընդդէմ Մաճա-
ռաց ։ Այլ իբրև եառես զի զօրք Հասա-
նայ գիւրաւ յնէքն հատուածեցան, ոչ
ինչ մեղաւ նմա ․ բայց ընկեցիկ եւեթ
արար, և եառ զիշխանութիւն նորին,
յորում և հաստատեցաւ 'ի նորոյ վէ-
զիրէն 'ի Մուստաֆայէ Հռոդոսցւոյ ։

Ի նմին ժամանակի առ 'ի խնամել
զԹերութիւն արքունի գանձուն գա-
տարկեցոյ յայնչափ ծախուց՝ հատան
դրամք պղնձիք 'ի Դամշանդացը առուա-
նեալ վայրի, և աւելորդ կարգմանք ար-
ծաթիք առաքատանացն արքունի փո-

խեցան 'ի դրամս. և հաղիւ ուրեմն հաւանեցան զօրքն խաղալ 'ի պատերազմ։ Յայնմ ժամանակի առին Գերմանացիք և զՊելկրատ, և զՍեմենտրէ. և զգանկն Գարա Մուստաֆայի պաշարողին Վիեննայի և զշապիկ նորին տարան 'ի Վիեննա, ուր պահի ցայսօր, և շապիկն լի է արաբացի գրուածովք բանից ինչ կուրանին։

Յետ բազում չփոթից և կոտորածից պատահեալ ահագին տօմին ներքին՝ Նիշէն Օսման. սակայն առաւ Պելկրատայ, և ապառումն արքունի գանձուն հարկեցուցին զՍիւլէյման արքայ խնդրել 'ի Գերմանացւոց զհաշտութիւն 'ի ձեռն դեսպանին իւրոյ առն զգօնի, որում անուն էր Զիւլֆիգար էֆէնտի։ Այլս բազումն յապաղեցին Գերմանացիք զպատասխանին, և ապա ուր ուրեմն առաջի արարին պայմանս ծանունս յոյժ. զի պահանջէին անձանց զՄաճառս առ հասարակ, զհամարձակութիւն ամրացուցանելոյ զսահմանս, զաւանդումն գերեզմանի փրկչին որ յԵրուսաղէմ՝ 'ի ձեռս Լատինացւոց, զկատարումն ամենայն առաջարկութեանցն Վենետիկեցւոց, և որ այլ ևս։

Նմին իրի 'ի Կոստանդնուպօլիս հրատարակեցաւ դարձեալ պատերազմ, և Թագաւորն ինքնին խաղաց գնաց 'ի Սոֆիա։ Այլ իբրև խորտակեցաւ 'ի Թշնամեաց սպարապետն Ռէճէպ,

և առան եւս Նիշ և Վխոփն, խոյս ետ Թագաւորն յԱդրիանուպօլիս. ուր ատեան կարգեցաւ մեծի խորհրդոյ, և ընտրեցաւ վէզիր մեծ Քէօփրիւլիւ Մուսդաֆա՝ ամաց գոլով յիսուն և երկուց: Խօսեցաւ Թագաւորն 'ի ժողովի անդ զվտանգէ պետութեանն, և թէ առ. խոտորելոյ ազգիս յօրինացն Աստուծոյ եկեալ հասեալ են չարիքս 'ի վերայ մեր. վասն որոյ յորդոր եղև նոցա յուղղութիւն վարուց, և յաւել եւս 'ի մաքսն որ վասն գինւոյ և օղւոյ: Այլ արիագոյն դտաւ Քէօփրիւլին 'ի դարման չարեացս: Յառաջ քան զամենայն պատուէր ետ ընդ աշխարհն ողոքով վարել ընդ քրիստոնեայս, և քան զճըլ-խահարկն ոչ ինչ այլ պահանջել 'ի նոցանէ. և այն յերիս տրոհելով զնոսին յաստիճանս. յաղնուացն առնուլ ոսկիս չորս, 'ի միջակայնոց երկուս, և 'ի տնանկանաց մի. և կոչեցաւ այն նիզամի ճէտիտ, այսինքն է նոր կարգաւորութիւն: Ապա նուաղեաց զիշխանութիւնս այլոց վէզիրաց, կարճեաց զաւելորդ պերճութիւնս ազգայնեաց. և անհամար կոնքք, ափսէք, սեղանք, ջահք և այլ ևս սպասք արծաթիք արկան 'ի հալոց. և ինքն իսկ վէզիրն յանձնէ առեալ օրինակ, նուիրեաց և զիւր արծաթս 'ի գանձն արքունի՝ պղնձեօք ևեթ շատացեալ, և պատրաստեցաւ 'ի պատերազմ: Որում

կարապետեցին հրդեհք՝ մրրիկ և սա_
սանութիւն ամօրեայ գիպեալ 'ի Կոս_
տանդնուպօլիս :

Խաղաց գնաց Վէզիրիւլն Մուս_
տաֆա, և արիարար մարտ եդեալ
ընդ Գերմանացիս՝ էառ անդրէն զՆիշ,
զՎիտին, զՍեմենդրէ և զԲելկրատ, և
վանեաց զԹշնամիսն անդր քան զԴա_
նուբ և զՍաւա, և դարձաւ յաղթա_
նակաւ 'ի Կոստանդնուպօլիս :

Ի գալ միւսոյ ամին ընկալաւ Վէզի_
րիւլն յարքայէ գիրոյն նուիրական
իբրև սպարապետ զօրաց, և մեկնեցաւ
յԱդրիանուպօլսոյ : Եւ Սուլէյման
արքայ վտանգեալ յախտէ ջրգողու_
թեան մեռաւ 'ի նմին քաղաքի՝ թա_
գաւորեալ ամս երիս, և դիակն նորին
ածեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ թաղե_
ցաւ 'ի Սուլէյմանիյէ :

Առ սորա թագաւորութեամբ գործ
արժանի յիշատակի աւանդի 'ի Հասանայ
զկուսակալէն Եգիպտոսի : Քանզի
հրաման արքունի հասեալ առ սա՝
գրաւելոյ յարքունիս զինչս բարերա_
րին իւրոյ Եուսուֆ անուն Ներքինա_
պետի, Հասան գեղեցիկ առաքի_
նութեամբ երախտագէտ սրտին՝ վա_
ճառեաց զիւրոյսն ծառայս և զստա_
ցուածս, և հանեալ 'ի նոցանէ ինն հա_
րիւր քսակս դրամոց առաքեաց յար_
քունիս փոխանակ ընչիցն Եուսուֆայ :

## ՍՈՒԼԴԱՆ ԱՀՄԷՏ Բ.

Սիրող նուագաց էր Ահմէտ արքայ Բ., և հետամուտ քերթուածոց, այլ անփոյթ 'ի գործս տեսչութեան աշխարհին. և ածաւ ընդ մէջ իւր զաւաներն յԱդրիանուպօլիս:

Իսկ վէզիրն մեծ հասեալ 'ի Պելկրատ՝ անց ընդ Սաւա. և ճակատեցաւ դէմ յանդիման Գերմանացւոց յափն Դանուբայ. այլ տարաժամ ճեպեալ զմարտն՝ անց ինքնին 'ի գլուխ ալայիցն, և բազում նախճիրս 'ի թշնամիս անդր գործեալ՝ մի անգամ և երկիցս յետս յետս մղեցաւ. և յերրորդումն արիագոյն շահատակեալ՝ հարաւ 'ի գնդակէ և անկաւ, և իւրքն խորտակեալ վանեցան:

Կարգեցաւ վէզիր մեծ տեղապահն Ալի, որ սկսեալ ընկեցիկ և մահապարտ առնել զսատարս իւր և զբարեկամս նախորդին իւրոյ, սովոր էր 'ի սայլս ամբառնալ զնոսին և այնպէս տանել 'ի սահմանեալ վայրն. սակս որոյ և Արապաճի մականուն ընկալաւ: Կամեցեալ և զներքինապետն Իսմայիլ ընկենուլ յիշխանութենէ, այն ինչ պատրաս-

տեալ էր զայլն առ դուրս ապարանիցն, միջնորդ եղև գլխոյն առ Ահմետ ադայ վասն ներքինապետին, և զնոյն ինքն զԱլի ետ դնել 'ի սայլն և աքսորել 'ի Հռոդոս. և զմատանին արքունի ընկալաւ կուսակալն Բերիոյ Հաճի Ալի փաշա, այր անշահաւէր և բարեբարոյ:

Ի նմին ամի, որ էր 1692, առին Գերմանացիք և զՎարատին, Թէպէտ և անդադար բանագնաց լինէին վասն հաշտութեան՝ առանց զիջանելոյ 'ի ծանր ծանր պահանջմանց իւրեանց: Եւ Հաճի Ալի փաշա երթեալ ընդդէմ նոցա, ընտրեաց մանաւանդ ամրացուցանել և ս զՊելկրատ, քան հետամուտ լինել թշնամեաց, և դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս: Ընդ յիրս իւր հակառակութեամբ երևեալ ընդդէմ կամաց Թագաւորին՝ ընկեցիկ եղև, և կարգեցաւ 'ի տեղի նորին Պիւյիւգլը Մէհէմմէտ: Սա 'ի դլուել անդ յարքունիս զինչ նախորդին իւրոյ՝ ոչ ինչ աւելի գտեալ քան զքսակս հնդետասան կամ վեշտասան՝ ասէ ցնա. « Որպէս բաւական լինէր քեզ այդ »: Եա պատասխանի Ալի. « Շատ իսկ էր այն 'ի ժամանակի՝ յորում այսչափ ծանրութիւնք կան 'ի վերայ պետութեանս »:

Դէպք երևելիք պատահեցին 'ի նմին ամի, զի 'ի վերջնում գիշերի պահուց բանակին կայր խուռն էր բազմու-

թևն ամբոխին 'ի մզկիթին սուլթան Մէհէմմէտայ ։ Սոցա տեսեալ զհասանել անդր տեղապահին պաշտօնակցք ոմանք՝ զարհուրեալք ոտնակոխ արարին բազում կանայս և մանկունս 'ի խուսափել անդ խուրեանց ։ Յետ աւուրց ինչ չանթ կայծական հարաւ 'ի մզկիթն սուլթան Սէլիմայ յԱդրիանուպօլիս , և սպան յաղօթականաց անտի արս հինգ ։ Բորբոքեցաւ և հրդեհ մեծ 'ի Բիւզանդիոն 'ի դուռն Ճիւպալ Ալի, և յերիս աւուրս բաժանեալ՝ ծախեաց բիւրաւոր շինուածս ։ Չհետ ամսոց ինչ աւերածոյն բորբոքեցաւ հուրն ընդ նոյն տեղիս 'ի զանազան հրդեհս , յորոց մին տևեաց ժամս քսան և չորս ։

Մինչդեռ վէզիրն Գէօբրիլը Մէհէմմէտ 'ի բանակին էր 'ի Գէլիպօլու , տեղապահ նորին 'ի Կոստանդնուպօլիս Գալայըլը Ահմէտ լուծաւ յիշխանութենէն սակս խրոց անտի կարգաւորութեանց 'ի վերայ հպատակաց՝ քրիստոնէից և Հրէից , որոց ոչ միայն արգելըմ չազատել գլխարկս 'ի սամուրենեաց , զդունաւոր հանդերձս , և զդեղին մուՃակս , և չշրջել երիվարօք ընդ քաղաքն , այլ և պատուիրէր բոժոժս իմն կապել յանձինս 'ի բաղանիս՝ առ 'ի խտրելոյ 'ի Տաճկաց ։

Կամէր վէզիրն ընկեցիկ առնել և զհզօր ներքինապետն Նէզիր . այլ նա կանխեաց ամբաստան եղև զվերՃաւ-

րութենէ նորին առ Աշմէտ արքայ, և առաւ կնիքն արքունի ցՍիւլմէյլ Ալի փաշա՝ որ կուսակալ էր Տրապօզոնոյ: Սա և զկնի փոփոխելոյ զօմանս յաւագանւոյն խաղաց գնաց մեծաւ հանդերձանօք 'ի Մաճառս. պաշարեաց զՎարատին ամսօրեայ աւուրբք՝ նիզակակից ունելով և զխանն Խրիմու. և առ անձրեւթաց աւուրցն յաճախելոյ մեկնեցաւ 'ի Պելկրատ, և անտի յԱդրիանուպօլիս. ուր ընկալաւ զդոյժ առման կըղզւոյն Քիոյ 'ի Վենետկեցւոց, և փութոյ անդութեամբ զհետ եղև անդրէն առնուլ զնոյն, պատուհասեալ նախ զիշխանսն որք անձնատուր լեալ էին 'ի թշնամիս:

Ի սկզբան նորոյ տարւոյն որ էր 1695 յետ երկարատև ախտի ջրգողութեան մեռաւ արքայն Աշմէտ Բ., ընթերցասէրն և անդորրասէր: Նախ քան զմահ իւր առաքեաց 'ի Մէքքէ զինքնագիր կուրանն յերեսուն հատածս, զի երեսուն ընթերցողք միանգամայն ընթեռնուցուն զայն 'ի Քեապէին. և միում միում'ի նոցանէ կարգեաց ռոճիկս հընգետասան ոսկւոյ: Միւս ևս կուրան վասն հոգւոյ մօրն իւրոյ առաքեալ անդր՝ եօթանասուն ոսկիս կարգեաց 'ի ռոճիկ երեսուն ընթերցողաց նորին ըստ գլուխ. որովք համբաւեցաւ յիւրոցն յոյժ 'ի բարեպաշտութեան սակս:

# ՍՈՒԼԴԱՆ ՄՈՒՍՏԱՖԱ Բ

Ընդ էն ընդ լուր մահուան Ահմէտայ՝ գենպետն եւ այլ աւագանւոյն խորհրդով վէզիրին մեծի թագաւորեցուցին զերէց որդին Մէհէմմէտայ չորրորդի զՄուստաֆա. որ եւ յաւուրն երկրորդի առանձին հրովարտակաւ յայտ արար զկամս իւր խաղալոյ անձամբ 'ի պատերազմ ընդդէմ Թշնամեաց պետութեանն։ Ած 'ի Կոստանդնուպօլսոյ յԱդրիանուպօլիս զմայրն իւր, փոփոխեաց աւելի քան զքսան ոգիս յաւագորերոյն. եւ զի գանձն արքունի ոչ էր բաւական 'ի բաշխոյս պարգեւաց զօրականին, հրամայեաց տալ 'նոցա համանդամայն երկերիւր եւ յիսուն քսակս վասն ենիչէրեաց, հնգետասան վասն զինուորաց, հինգ վասն Թնդանօթաձիգ զօրաց, եւ հնգետասան վասն սպայից։

Եւ զի վէզիրն մեծ յայնպիսում կարօտութեան ժամանակի կարի իմն շըռայլէր 'ի ծախս տան իւրոյ, արկաւ յիշխանութենէն, եւ ամբարձաւ փոխանակ նորա տեղապահն Էլմաս Մէհէմմէտ փաշա։

Ի նոյն աւուրս թագաւորելոյ ար-

քային Մուստաֆայի 'ի պարտութիւն մատնեցան Վենետիկեցիք յերեսաց նաւատորմին Օսմանեանց առ Քիոս, և ակամայ կամօք հարկեցան թողուլ 'ի նոսա և զկղզին. և աւետիք մեծի յաղթանակիս ոչ միայն 'ի մոռացօնս դարձուցին զառաջին ձախողութիւնն, այլ և խրախոյս մեծ ետուն Օսմանեանց յարշաւանս առաջիկայ պատերազմին ընդդէմ Գերմանացւոց:

Յամսեանն յունիսի յամին 1695 անցեալ արքայն Մուստաֆա 'ի գլուխ քառասուն և հինգ հազար վառելոց ել յԱդրիանուպօլսոյ: Ի Փիլիպպէ անցեալ զայր ոմն քառոտանի և քառաձեռնի՝ կարգեաց նմա ռոճիկս, և ըղհայլն ազատ արար 'ի գլխահարկէ: Ի Սոֆիա ոմանք 'ի բնակչաց կողմանցն ընդ առաջ ելին արքային՝ ունելով 'ի գըլուխս իւրեանց խրձունս յարդի բոլորքեալս, որով յայտ առնէին զառապանս իւրեանց յերեսաց բդեշխի անցելոյն. և արքայն սաստիկ հրամանաւ պատուիրեաց իրաւունս առնել նոցա. և հնչեաց ընդ բանակն հռչակ արդարակորով անաչառութեան թագաւորին:

Յայնմ արշաւանին նիզակակցութեամբ Թաթարաց առին Օսմանեանք զամուրսն Լիփփա, Լուկոշ և Շէպէշ. հարին առ Վետրանինաւ զզօրս Գերմանացւոց, և Մուստաֆա արքայ հանդիսիւ յաղթանակի արար զմուտն իւր զառաջին

՚ի Կոստանդնուպօլիս ։ Դիպակք պէսպէս բազմագինք սփռեալ կային ընդ ոտիւք երիվարաց նորա, և յառաջոյ գնային դրօշք և Թմբուկք և Թնդանօթքըն աւարեալք և գերիք երեքարիւր ։

Սովին աւետաւոր ազդեցուԹեամբ խրախուսեալ ամիրականացն Ազախու պաշարելոյ ՚ի մեծ էն Պետրոսէ, քաջուԹեամբ զդէմ կալան Ռուսաց․ այլ ՚ի միւսում ամի առ դանդաղանաց խանին Խրիմու յետ տևելոյ երկամեայ պաշարման՝ անձնատուր եղեն ՚ի Ռուսս ։

Դարձեալ հրաման ետ արքայ յամին երկրորդի պատրաստուԹեան արշաւանի ՚ի Մաճառս, և բարեկարգեալ բազում ինչ ՚ի կարևորաց պետուԹեան՝ անց գնաց յԱդրիանուպօլիս, և անտի ՚ի Սոֆիա, ուր էառ զաւետիս ծննդեան որդւոյ իւրոյ Մահմուտայ, և հրամայեաց լուսաւորուԹիւնս առնել ընդ ամենայն աշխարհն ։ Ի լուր գալստեան Թագաւորին բարձին Գերմանացիք զպաշարումն Դիմըշվարայ, և ընդ առաջ ելեալ Օսմանեանց՝ հարան խորտակեցան ՚ի նոցանէ․ և Մուստափա արքայ ամրացուցեալ և ևս զԴիմըշվար և զՊելկրատ՝ դարձաւ յԱդրիանուպօլիս ։

Առ ՚ի դարման սպառելոյ գանձուն արքունի յերեսաց այնչափ արշաւանաց ՚ի Մաճառս, ՚ի Դաղմատիա, ՚ի Յունաստան, յԱրաբիա և ՚ի Լեհաստան,

յաւելու մաքուն ծխախոտոյ, և զիջան արժանք դրամոց, մինչև գանձականին Օսմանեանց՝ որ հանապազօր էր առիւծադրոշմ գանձականին Եւրոպացւոց՝ յայնմհետէ չորիւք փողովք նուազագոյն լինել քան զայն :

Մինչդեռ կազմէին պատրաստէին Օսմանեանք վերստին 'ի պատերազմ, եհաս դեսպան 'ի խանէն Խորասանոյ բազմապատիկ ընծայիւք, յորս էր և փիղ մի, և երամակք ընծայաբեր ուղտուց. և մեծապէս փառօք պատուասիրութիւն գտեալ արձակեցաւ անդրէն. և արքայն Մուստաֆա ուղևորեցաւ 'ի Սոֆիա : Ընդ վէզիրն մեծ Էլմաս Մէհէմմէտ երազ տեսեալ էր, որպէս թէ ընդ Քէօփրիւլիւ Մուստաֆային ըմպէր զօշարակ. և 'ի պատմել իւրում զերազն բարեկամաց իւրոց՝ յաւել և զմեկնութիւնն և ասէ. « Ո՛ գիտէ, թերևս վիճակեսցի և ինձ զվկայականն ըմպել զբաժակ յայսմ արշաւանիս » :

Ի Պելկրատ երկիցս անգամ ատեան կարգեցաւ խորհրդոյ. և վէզիրն պընդէր մի հետամուտ լինել Թշնամեաց անդր քան զԴանուբ, այլ նախ յառաջին Վարատինոյ ուշ ունել. սակայն այլ վէզիրք ոխացեալ գոլով ընդդէմ նորա՝ զհակառակն հաստատեցին, և դէմ եդին գնալ 'ի Սեկետին : Զայն իբրև գիտաց Եւգինէոս սպարապետ Գերմանացւոց ընդ ձեռն լրտեսաց իւ-

րոց, առաքեաց 'ի Սեկեալին զօրս, և ինքն խաղաց հանդարտօրէն զկնի վէզի-րին : Այլ ապա իմացեալ 'ի Ճափէր փաշայէն գերելոյ յարանց իւրոց՝ եթէ կամք են Թագաւորին անցանել առ Զէնթա աւանաւ և դնալ 'ի Գըմիշվար, Ճեպեաց զզօրս իւր և էհաս օսմանեան բանակին առ Թիսա գետով : Կէս բա-նակին Տաճկաց ընդ Թագաւորին անց ըստ գետն, և կէսք հանդերձ կարա-ւօքն կային յայսմ կողմանէ : Յայնժամ պահու 'ի վերայ հասին Գերմանացիք, և պաշարեցին զՕսմանեանս կիսաբոլոր ձևով, և օրն ընդ երեկս էր : Տագնա-պեցաւ վէզիրն յոյժ յանձկութեան ժա-մուն. և յուսահատ լեալ 'ի կենացն՝ արկ զանձն իւր 'ի խուժան թշնամեաց, և արիաբար շահատակութեամբ անկաւ 'ի Ճակատուն : Տասն հազարք յՕսմա-նեանց ջրահեղձոյց եղեն, և բազում բդեաշխք անկան 'ի սուր՝ ոչ թշնամեաց, այլ նոցին իսկ ենիչէրեաց ազմկելոց 'ի բանակին : Եօթն ձարբ, չորեքարիւր քը-սան և երեք գրօշք, և մնացածին արքու-նական անցին 'ի ձեռս Գերմանացւոց. Թող զաւարն զոր աւարեցին նոքա մը-տեալք ընդ այգն 'ի բանակեալ Օսմա-նեանց : Զի գտին անդէն կառս ինն հազար, ուղտս վաթսուն հազար, եզինս հնգետասան հազար, երիվարս եօթն-հազար, ռումբս քսանեվեց հազար, թմբուկս ենիչէրեաց հինգհարիւր. բա-

զումարկելս զբանից աւելի քան երեքհարիւր բիւրուց դահեկանաց. զկնաւս Թագաւորին զձգեալն յաւԹուտան ևբնակարաց, և տասն կանայս 'ի կանանոցէն արքունի: Այլ քան զամենայն կապուտն մեծագին էր կնիքն արքունական, զոր տարեալ եդին 'ի գանձն կայսերական 'ի Վիեննա:

Մուսդաֆա արքայ իբրև եհաս 'ի Դմիշվար, անդէն վաղվաղակի կարգեաց վէզիր մեծ զԱմուճազադէ Հիւսէյին փաշա զկուսակալն Պելկրատու, որ և հօրեղբօրորդի էր Քէօփրիւլիւ Ահմէտայ. և նա առ օրին հոգացաւ արս կուսակալս և բդեաշխս կարգել փոխանակ անկելոցն 'ի պատերազմին: Եւ Թէպէտ առ 'ի սփոփելոյ զժողովուրդն կեղծէր հանդերձանս մեծի պատերազմի ընդդէմ Գերմանացւոց, այլ առաւել միտ եդեալ այլին խոհական օգտի պետուԹեանն՝ յայնմ ձմերան զինջանէր 'ի խնդիր հաշտուԹեան, որում յանձն հեռէ մատգիւր միջնորդս լինել ցանկայլին դեսպանքն Անգղիացւոց և Հոլանդացւոց:

Ընտրեցան գործակալք հաշտուԹեանն րէիս էֆէնտին Րամի, և ընդ նմա յոյն Թարգմանն արքունի ՄաւրոքորտաԹ. յանձն առին Գերմանացիք զառաջարկուԹիւնն այսու պայմանաւ, զի հիմն և հաստատուԹիւն հաշտուԹեանն իցեն այնր ժամու հանդամանք

եւեթ պետութեանց, և զի բաց 'ի դաշնակիցս Լեհաց և Վենետկեցւոց՝ մնցեն և Ռուսք 'ի դաշինս ուխտին։ Ստորագրեցին 'ի Թղթին և Բամի և Մաւրոքորտաթ 'ի Սոֆիա. և անդի ժողովոյ դեսպանացն սահմանեցաւ լինել յաւանն Քարլովից առ Վարատինաւ։

Անդ արտաքոյ քաղաքին քառակուսի բանակ հարեալ դումարեցան քրիստոնէից դեսպանք, և Օսմանեանք բանակեալ էին յայնմ կողմանէ։ Կառուցին և ժողովարան չորեք սենեկօք, որ 'ի քառներորդի վեցերորդի աւուր յունուարի յամին 1699 զենի եօթանասուն և երկուց աւուրց խորհրդոյ հաստատեցան դաշինքն. զորս ձեռնագրեալ հաստատեցին դեսպանքն ամենեքեան, և ապա 'ի համբոյր հաշտութեան մեկնեցան 'ի միմեանց. և քրիստոնեայքն կանգնեցին մատուռն մի առ յիշատակէ 'ի տեղւոջ ժողովարանին։

Պայմանեցան ամին հաշտութեամբ, ցամս քսան և հինգ ժամանակելով, զի երկիրն Մաճառաց և Թրանսիլվանիա ողջոյն մնասցէ 'ի ձեռս Գերմանացւոց. և մի բառ միօջէ որոշեցան սահմանքն։ Պեղոպոնես և Դաղմատիա մնացին 'ի ձեռս Վենետկեցւոց, այլ քանի մի բերդորայս հարկեցան դարձուցանել անդրէն առ Օսմանեանս. և ազքա Թողին 'ի Լեհս զԿամենից, զՓոտոլիա և զՈւքրանիա։ Իսկ առ պահանջանս մեծին

Գեւորգայ ոչ զիջան Օսմանեանք. զի բաց 'ի բերդէն Ազախու պահանջէր և զամուրն Կերչ՝ որ 'ի Խրիմ. վասն որոյ ընդ Ռուսս դուլ եւեթ զինուց առնել առժամանեցին զամս երկուս ։

Եւ էին նուիրակքն 'ի Գերմանացւոց կոմն Էօթթինկէն Վոլֆկանկ, և կոմն Շլիք. 'ի Վենետկեցւոց ասպետըն Ռուձձինի. 'ի Լեհաց կոմն Մալախովսքի, և 'ի Ռուսաց Պրոկոպիոս Վոզնիցինով ։

Զկնի նշանաւոր հաշտութեանս որ 'ի Քարլովից, ոչ ինչ կարի պերճագոյն, և ոչ առաջնոյն հաւասար արդեօք կայ մեզ առաջի կարգել 'ի պատմութիւնս անցից ամաց աւելի քան զհարիւր ։ Սակայն մեր 'ի կարեւոր պէտս հմտութեան արդի պատմութեանց եղեալ մտադիր, համակար բերեմք ահա ճշգրտապատում լինել և տալ յառաջ որպէս զարդն, և աւելի եւս. մանաւանդ զի ամին հաշտութեամբ բացեալ տեսանեմք զգալուն ընթեռնագոյն քաղաքավարութեան Օսմանեանց և խաղաղասէր մտերմութեան և զիջական գնացից նոցա ընդ եւրոպական ազինս, յորում տակաւ յառաջադէմ եղեալ անձնցին մինչև ցմեր խակ աւուրս. և որ ահագինք առաւել թուէին յառաջինն, այդ և զարմանալիք եղեն և գովելիք ։

Դարագլուխ հազարերորդի եօթնհարիւրորդի թուականութեանս յեղանակ մեծ էարկ յօսմանեան պետութեան բազմահնչակ հաշտութեամբն որ 'ի Քարլովից: Եւ առ 'ի ճշգրիտ ընկալագրին տալոյ զկրաց աշխարհին որ յայնմ հետէ պատահեցին՝ հարկ 'ի վերայ կայ նշանակել սասանօր 'ի կարճոյ զսուազորեալն որ բարձր 'ի գլուխ ճոխանայրն յայնժամ յամենայնի:

Յառաջադէմ էր ամենեցուն Այմաճազաւէ Հիւսէյին փաշա, եղբօրորդի ծերունւոյն Քէօփրիւլի Մէհէմմէտայ: Սա նիզակակցից գոլով Գարա Մուստաֆային յարշաւելն որա 'ի Վեննա, և ապա բդեաշխ կացեալ 'ի զանազան աշխարհս, զկնի պատերազմին Զենթայի եկաց վէզիր մեծ, և փութացաւ 'ի հաշտութիւնն կարեւոր. զոր և խնամով մեծաւ գուն գործէր պահել անվթար: Ուսեալ էր 'ի սուրս և սիրող իմաստնոց և քերթողաց, զորոց զքերթուածս զգուզնաքեայս անգամ մեծապէս ճոխութեամբ վարձատրէր, և աւուրց յաւուրս բաշխէր աղքատաց քաղաքին փողս հազար:

Զհետ վէզիրին մեծի երևելի էր զօրութեամբ և հանճարով րէիս էֆէնտին Ռամի, քերթող քաջ, և 'ի շարագրածս նամակաց արքունի անհամեմատ համարեալ ըստ ոճոյն վայելչութեան: Եւ սորա զօրավիգն մեծ էր

յոյն Թարգմանն Մաւրոգորտաթ որդի
ան Քիոսցւոյ, որ 'ի Պատուա Իտալիոյ
գլխաւորեալ ուսմանն՝ բժշկութեան
անուամբ մտերմացաւ նախ ընդ մեծի
վէզիրին Քէօփրիւլիւ Ահմէտայ, և ապա
'ի մեռանել Փանայոթթի Թարգմանին
կալաւ զտեղի նորա ։

Հզօրագոյն քան զերեսին զասա և
քան զամենայն նախորդս իւր գտաւ
գենալեան Ֆէյզուլլահ, որ էր 'ի քաղա-
քէն Կարնոյ, և հանէր զազգաբանու-
թիւն իւր ցՍէյխ Շէմսէտտին Թէպ-
րիզի, և փեսայացեալ էր Վանի չելեպի
հաչակելոյ ։ Սա իշխանութիւն մեծ գը-
տեալ առաջի արքային՝ զամենայն զգե-
րադահ պաշտամունս յանձնեցաւ վի-
ճակեցուցանել չորեցուն որդւոց իւ-
րոց և այլոց ազգականաց ։ Ընդ նորին
թեարկութեամբ պերճանայլին և յո-
լովք 'ի բդեշխաց և 'ի կուսակալաց. և 'ի
սոսա անուանի էր Տալթապան Մուստա-
ֆա փաշա, այր անգէտ դպրութեան.
այլ խրոխտ և արիական բարուքն ամ-
բարձաւ նա 'ի զինուորական կարգաց
մինչև ցկուսակալութիւն Պաղտատայ,
և անագորոյն բարուքն ցանգ ատելի եղև
ամենեցուն ։ Սա իւրով կայնաւն բա-
խեալ միանգամ զորմ եկեղեցւոյն Գաղ-
ղիացւոց 'ի Պաղտատ՝ ետ կործանել
զայն 'ի հիմանց. և զկնոջ ուրումն 'ի
ձեռն ժանտ օձից ետ սպանանել զողո-
ղայն, որպէս զի յայտնեսցէ նա զտեղի

գանձուց առն իւրոյ արարացուոյ ։

Տեղապահ վեզիրին էր յայնժամ Տամառ Հասան փաշա. զինակիր արքային՝ Չորլուլու Ալի փաշա, ծովակալ Հիւսէյին փաշա՝ Մէծծոմորթօ անուանեալ. և ներքինապետ՝ Նէզիր աղա, որ Սոլագ յորջորջէր, քանզի ահեկան սովոր էր գրել և մարտնչել, և ընդ աջակողմն աշտանակել յերիվար ։

Մինչդեռ այսպիսի այր անուանիք կալեալ ունէին զերասանակս պետութեան արքային Մուստաֆայի, նա խորհրդով աւագանւոյն մեկնեցաւ յԱդրիանուպօլսոյ գնալ 'ի Թագաւորեալ քաղաքն, զի անդ ընկալցի զդեսպանս Լեհաց, Գերմանացւոց, Ռուսաց և Վենետիկեցւոց՝ որ գային 'ի կնքել զհաստատութիւն դաշինն ։

Ի վերջին աւուրս ամսեան օգոստոսի յամին 1699, այն ինչ արեգակն սփռէր զճառագայթս իւր յերկիր՝ եկին ժողովեցան աւագորեարն առ դրան ապարանից արքունի. և արքային զգեցեալ զսամուրենին ազնիւ, սուսեր ընդ մէջ իւր, կապարճս արկեալ զուսովք, և գլխարկ 'ի գլուխ, հեծաւ յերիվար աշհապարանոց ։ Դենպեան և դատաւորք զօրաց և երևելիքն 'ի դասս գլխանականաց զգեցեալք զքառաթեղան մուշտակսն Մուվահհասի անուանեալս, և զգլխանոցսն մեծամեծս, անկան յուղի. և զհետ նոցա վեզիրն

մեծ աշտանակեալ 'ի ձի ոսկեկազմ, արկեալ զիւրև պատմուճան վարդագոյն, և եդեալ 'ի գլուխ զբրդաձև գլխանոյն Գալլեվի կոչեցեալ, հանդերձ լայնատարած կարմրագոյն վարտեօք, և աղեղն և կապարճք 'ի վերայ ուսոց իւրոց ըստ նմանութեան Եգերացւոց: Զկնի նորա գային համարակալն, ռէիս էֆէնտին և գանձապետն, ամենեքեան սամուրենիս զգեցեալ, և գլխանոցս բոլորաձև՝ որոց Սէլիմիյէ կոչէին: Ապա գնդապետք հեծելազօրուն և զինակիրք և սենեկապետք՝ մուշտակս ագուցեալք երկուսեան սամուրապատս, և զնոցա կնի վաճառապետքն խոճակեան անուանեալք՝ հանդերձ գլանաձև բարձր գլխանոցօք, և զհետ նոցա ախոռապետքն անդրուվարօք արքունի՝ վահանս ունելով 'ի ձեռին ականակուռ շողշողեալս:

Յաւուրն երեքտասներորդի մեկնելոյ արքային յԱդրիանուպօլսոյ՝ եհաս 'ի Սիլիվրի, ուր կանխեալ էին կառօք վեզիրն և զենապետն՝ յարդարել կազմել զամենայն առաջի արքային: Եւ 'ի վաղիւ անդր, որ օր տասն էր սեպտեմբերի, անցեալ ընդ Տաւուտ փաշա՝ եմուտ արքայ 'ի Թագաւորեալ քաղաքն մեծահանդէս Թափօրիւ: Յառաջընթաց լինէին ութուտասան վաշտք հեծելոց, և հնդետասան գունդք ենիչէրեաց հանդերձ ձարամբ և ծխանապատ ար-

կեղջք գանձուն . և յառաջոյ արկեղաց համարակալն և գանձապետն ընդ վեց. հարիւր զինագործոց և հազար զօրականաց:

Սոցին զհետ ընթանային սպասաւորք արքունեացն, խոհակերք, փայտահարք, ջրկիրք և որ այլն եւս, և ուսուցիչք, և գիտնականք, և երկքարիւր և վաթսուն չաւուշք ընդ իւրեանց նուիրակապետօք. և զհետ նոցա առնագպկին արքունի, և զօրավարն ենիչէրեաց, և ներքինապետն, դատաւորն Կոստանդնուպօլսոյ, րէիս էֆէնտին, չորեքեան վեզիրք աւագք, վեց ձարք վեզիրին մեծի, երաժշտական երգեցողք նորին և անձնապահապետք և սուրհանդակք. ապա ինքն իսկ վեզիրն մեծ և գենապետն հեծեալք յարծաթաման երիվարս, որոց ականակուռ էին համետք. և ապա տեղապահն, երկուքին դատաւորք զօրաց, եւրոպեան և ասիական կողմանակալք, և դրօշ մարգարէին իւրեանց և կուրանն եդեալք յուղտ մի դիպակազարդ: Եւ 'ի վերջէ ամենեցուն սոցա ընդ մէջ փետրազարդ սաղաւարտից ոխգաւորաց և մնդաւորաց շողայր ոսկեհուռն և ականախիտ գլխանոցնորին ինքեան արքայի: Զհետ նորա ընթանային մանկլաւիկք արքունեաց, և դասք ներքինեաց սեաւք և սպիտակք. և ապա անդրուվարք քառասուն, և որսորդք արքայի բազէկիրք

և բարակապանք, և հաւերք և միմոսք. և զինի ամենեցուն գունդք գունդք սպայից, ենիչէրեաց, և այլոց զօրականաց, և խորանահարք հանդերձ երեքարիւր ուղտուք, և ջորեօք՝ բեռանց տկարարձ երիվարօք:

Ոչ ինչ արդեօք կարի նուազ էր շուք հանդիսին որով 'ի նմին ժամանակի և դեսպանն Օսմանեանց Իպրահիմ փաշա եմուտ 'ի Վիեննա արամբք երկերիւրովք և եւս աւելի, և բազմապատիկ և բազմագին ընծայիւք ոսկի և արծաթի սպասուց և ականակուռ զարդուց, գիպակաց, կապերտից, շղարշից, մշկոյ, անթեղայի, երիվարաց և ընձուց: Զճանապարհայն պատահեաց ամին և դեսպանն Գերմանացւոց Էօթթինկէն. որ նոյնպիսեաւ գոգցես հանդերձանօք եմուտ ապա 'ի Կոստանդնուպօլիս, և մատոյց արքայի և աւագանւոյն գեղաբուեստ յօրինուածս ազգի ազգի սպասուց արծաթեայ, ընտիր ժամացուցից, և մեծամեծ հայելեաց. որոց առհասարակ գինք ոչ ինչ պակաս էին քան զդահեկանս հարիւր հազար ըստ այնր ժամու դահեկանաց:

Շքեղագոյն քան զԳերմանացւոյն էր մուտ դեսպանին Լեհաց Լեշչինսքեայ 'ի Թագաւորեալ քաղաքն. զի բաց յընծայիցն առաւելութենէ և թիւ մարդկանն որ ընդ նմա՝ աւելի էր քան զհինգհարիւր: Կանխաժաման

լեալ էր քան զնա դեսպանն Վենետ-կեցւոց Սորանցօ, և ապա Ռուսացն Ուքրայնցով. որոց ամենեցուն ևս յաջողեցան հայցուածք և պահանջանք ՚ի հաստատութիւն և ՚ի յաւելուածս դաշանցն պայմանելոց ՚ի Քարլովիչ:

Նախապատիւ էր ՚ի սոսա Գերմա-նացւոցն. որ և ընկալաւ զոր միանգամ խնդրէր ՚ի պէտս եւրոպացի կրօնաւո-րաց յԵրուսաղէմ, և յօգուտ ուղղա-փառ քրիստոնէից որ յարևելս. և Անգղիացւոցն ևս առանձին խնի պա-տուով մեծարեցաւ յարքայէ, որ ինքնին յայտ արար դեսպանին զշնորհակալու-թիւնս իւր յաղագս միջնորդ հաշտու-թեանն կալցս պետութեան նորին ՚ի Քարլովիչ:

Գաղղիացւոց ևեթ դեսպանին իրք ոչ որպէս պարտն էր յաջողեցին: Քանզի սա Ֆերիոլ անուն ջերմագլուխ ոմն այր՝ եկն յարքունիս մատուցանել զընծայսն իւր, որ էին հայելի մի մեծ յոյժ, ժամացոյց ճարտարագործ, և բազմազգի դիպակք ազնիւք և ընտիր սուսեր: Այն ինչ զգեցեալ Ֆերիոլ զոսկեդիպակ զպատմուճանն հան-դերձէր մտանել առ արքայ, և ահա որ մերձն կային՝ նկատեալ տեսին ՚ի ներքոյ զգեստու նորա սուսեր մեծ, և ազդ արարին նմա դնել զայն ՚ի բաց: Ֆերիոլ արկ զձեռն իւր ՚ի սուսերն և ասէ. « Չիք ոք որ ՚ի բաց յինէն առ-

նուցու զսուսերս իմ բայց միայն 'ի Թագաւորէն իմմէ »: Ասէ ցնա Մաւրոքորտաթ. « Հակառակ է այդ օրինաց աշխարհիս, և չէ արժան ումեք 'ի մարդկանէ զինու հանդերձ մտանել առ արքայ »: Ասէ Ֆերիոլ. « Նախորդն իմ պատմեաց ինձ, զի նա սուսերաւն հանդերձ մտեալ է առ արքայ, և ես հիմ ոչ »: — « Խաբիս, ասէ վէզիրն. և թէ իցէ՝ կալեալ իցէ նախորդ քո զսուր իւր յանձին, այլ այն փոքր ինչ թուի լեալ և աներևելի »: Զուր աշխատ եղեն և այլ աւագորեարն համոզել առնն լինել. և նուիրակքն և սենեկապանք արքունի որ յանթա մտեալ նորա ունէին ածել 'ի ներքս, ջանային գաղտագողի խլել 'ի նմանէ զսուսերն. այլ նա արմկցի և աքացի հարեալ վարատեաց զնոսա 'ի բաց, և գոչէր առ Մաւրոքորտաթ. « Ա՞յսպէս ուրեմն դրժին աստանօր իրաւունք ազգաց. իսկ արդ բարեկամք իցեմք մեք, եթէ թշնամիք »: — « Բարեկամք եմք, ասէ Մաւրոքորտաթ. այլ չէ օրէն՝ չէ պատշաճ սուսերաւ մտանել քեզ առ արքայ »: — « Ապա և մտանեմ իսկ ոչ » աղաղակեաց դեսպանն զայրագին. և անդէն մերկացեալ զպատմուճանն, և իւրոցն ևս զնոյն արարեալ, ել 'ի բաց: Ի վաղիւ անդր և ընծայքն իւր դարձուցան առ նա. սակայն արքունիք Գաղղիոյ անդրադարձան իմի զպատահարս.

և Գեբրիով մնայց 'ի կառավարութեան զամս տասն, և չետես երբեք զերես արքայի :

Ընդ հաշտութիւն մեծ և արևելեայց զօրապետք էին հասին 'ի կառավարութեան խնդակից լինել Օսմանեանց . զի և կարեւոր պէտք էին այս անդորրութեան արտաքուստ առ զգեմ ունելոյ ընտանի չփոթից : Քանզի անընդհատ էին գործքս յոյժ խռովութեանց յայնժամ 'ի սահմանս Պարսից, և 'ի Պատրա, յԱրաբիա, յԵգիպտոս, 'ի Տրապոլիս, 'ի Ճեզայիր և 'ի Խրիմ. զորս առ հասարակ ցածոյց խոհական մեքենն Հիւսէյին փաշա՝ արդ ընտիրս և զօր բաղում արձակեալ 'ի կողմանսն :

Յետ այնորիկ մին եղեալ 'ի բարեկարգութիւն աշխարհին , բաղում կարգս պխտանիս հաստատեաց 'ի տեսչութեան պետութեանն, 'ի հրահանգս զօրականին, 'ի բարձս մաքսից, և 'ի նաւատորմին, և առանձինն 'ի խնամս քրիստոնէից՝ թեթևացուցեալ յոյժ զհարկս նոցա : Փոյթ յանձին կալեալ պէգել զմետաղս արծաթոյ որ 'ի Հայս և 'ի փոքրն Ասիա, և ազնուացոյց զգլխաւոր աշխարհին . և յոլով շինութիւնս արար 'ի Թագաւորեալ քաղաքին և յԱդրիանուպոլիս և յայլ քաղաքս :

Ի նախանձ վառեալ քաջագործութեանց Հիւսէյինայ և դեռնալեան Ֆէյզ-

զուըլլահ, հոգ 'ի մտի եդ և ինքն պատուէրս ինչ տալ զխնամակալնոց և ամբոխին, զի բարեպաշտագոյնք իցեն յիւրեանց գենին, յաղօթս, 'ի ծոմապահութիւնս, յուխտապահութիւն և յաղքատսիրութիւն : Սակայն իւրու անկարացեալ բարեաւն յաղթել բարուոյ վեզիրին, 'ի հակառակն նորին ձեռն արկանէր հնարս · քանզի միաբանեցուցեալ ընդ նեկըքինապետին յաչաց հանել արքային զվէզիրն մեծ, և զփոխանորդ նորին կարգել 'ի տեղի նորա : Այսմ իրազեկ եղեալ Հիւսէյին, արկ յիշխանութենէ զփոխանորդն իւր · սակայն և այնպէս չմնաց յակատամանի : Զի եղբօրորդին իւր Գըալէլիզադէ Ալի պէյ ամբաստանեալ 'ի քրէական ինչ յանցուած՝ սպանաւ չարաչար : Ընդ որ սրտաբեկ եղեալ վէզիրն մեծ՝ պատճառեաց զխօթութիւն զանբուժելի, և հրաժարեալ 'ի պաշտամանէն մեկնեցաւ 'ի կալուածս իւր մօտ 'ի Սիլիվրի, և անդէն մեռաւ նա՝ կացեալ յիշխանութեանն զամս հինգ մեծաւ զգօնութեամբ :

Կալաւ զտեղի վէզիրին մեծի ներքնացին յազգէ Տալդապան Մուստաֆա փաշա · որոյ հասեալ յիւսկիւտար և անցեալ յայս կոյս, մինչև մտեալ 'ի թագաւորեալ քաղաքն՝ անց գնաց յԱդրիանուպօլիս · զի անդ էր արքայ, և ընկալաւ 'ի նորին ձեռանէ զմատանին

արքունի և բազմապատիկ պարգևս ։

Յետ աւուրց ինչ հրաման սաստիկ արար Տուլդապան զի մի ոք 'ի քրիստոնէից կամ 'ի հրէից իշխեսցէ յայնմհետէ գեղին ագանել հողաթափս, և գդակ կարմիր. այլ սևագոյն ևեթ. և կանանց եւս լայնատարածս ագանել վերարկուս, և զկօշկատան մի ևս նորին առնել որպէս ցայնժամ, այլ խոշորս և թանձունս, և զեզերս կօշկատին ժապաւինել սեաւ երիզօք ։

Արար Տուլդապան և կարևորս ինչ բարեկարգութիւնս. այլ առաւել միտադիր էր 'ի վրէժխնդրութիւնս իւր ։

Պայրամ աղա ոմն առաքեցաւ 'ի սմանէ առ Հասան փաշա, որ բդեաշխ էր 'ի Շէհրէզուր, հանդերձ պատուիրանաւ խեղդամահ առնելոյ զՀասան։ Իսկ նորա վաղ զգացեալ զիրան, եւ զնա ինքն զՊայրամ սպանանել նովին խեղդամահու զոր նորա վասն իւր էր բերեալ, և զգլուխ նորին առաքեաց յԱդրիանուպօլիս. իսկ ինքն Հասան անդր խնդրեաց ապաւէն փախստի, ուր կարծէր և ոչ ոք, այսինքն է 'ի Կոստանդնուպօլիս 'ի կանանոցն իւր. սակայն վէզիրն մեծ դատապարտեաց զնա 'ի մահ՝ յորժամ ելցէ յերևան. և կոչեցաւ Հասանս այս յայնմհետէ Ֆիրարի, այն է փախստեայ ։

Ըստ սովոր զայրացոյց Աւետիք պատրիարք զհալածումն համազգեացս իւ-

րաց ուղղափառաց, զի մտերիմ էր գենպետին հզօրի և քաղաքակից Նորա. սակայն Տաղդապան ոչ ինչ կարի անսացող գտաւ ամբաստանութեանցն. զի և 'ի գենպետն ընդ սկամբ սկսաւ հայել և խռովութիւնք սահմանացն Խրիմու յերեւաց Ռուսաց յայլ ինչ գործս պարապեցուցին զնա: Կատոյց Նա անդէն 'ի մուտս Նեղուցին Կերչի 'ի հրամանդանն Ազընար պուրնու ամրոց մեծ. զի խիթայր 'ի կազմութեանցն Ռուսաց. և խանն Խրիմու Տէվլէթ Քէրէյ սուէպ սուէպ յաւելոյր զխէթ կասկածանաց մեծի դրանն՝ յաճախութեամբ ինն բարդելով զստութիւնս յաղագս պատրաստութեան Ռուսաց: Ուր ուրեմն 'ի վերայ հասին Օսմանեանք խարկանաց Նորա, և ընկեցին կարարեալ զնա յիշխանութենէն՝ ամբարձին միասանգամ յաթոռն զհայր Նորա զծերունին և զհաշմանդամ զՍէլիմ Քէրէյ: Յայնժամ Տէվլէթ Քէրէյ ընդվզեալ յՕսմանեանց, արձակեաց յառումն բերդաքաղաքացն Ազաքիրմանու և Խամայիլայ զկրսեր եղբայրն իւր զՍաատէթ Քէրէյ. և արքայ եհան ընդդէմ Նորա զօր բազում 'ի կողմանց կուսակալութեան Սիլիստրէի, Նիկոպոլսոյ, Թեսաղոնիկեայ և յայլոց գաւառաց եւրոպականաց:

Այլ 'ի Կոստանդնուպօլիս շշունչ մեծ ընթանայր, եթէ այն հանդերձանք ոչ այնչափ ընդդէմ Թաթարաց յօրինին,

որչափ ընդդէմ Գերմանացւոց և Ռուս-
սաց. և արդարև այս միտք էին Տալ-
դապանին. որ և անուխլ երազոյ պատ-
մեալ մտերմաց իւրոց, « Տեսանէի,
ասէր, յանուրջս, առեալ մեր զՊոլսոյն
քաղաք »: Սակայն դեսպանն Պեկյ-
զուլըահ և Ռամի փաշա չհաճեցան ընտա-
ընդ առաջարկութիւնն, և առաջինն չետ
գլծիւ պատերազմին: Զայս խոչ խա-
փանարար ոչ այլազգ համարէր բառ-
նալ Տալդապան, բայց միայն դեղ մա-
հու արբուցանելով դեսպանին՝ ի խորա-
ճանի: Այլ ՚ի մատնութենէ փոխա-
նորդի վեզիրին զգաց դեսպանն զնենգ-
դաւոյն, և զգուշանայր անձին: Նա
անյապաղ դաշնաւորեալ ընդ Ռամի փա-
շային և ընդ Մաւրոքորտաթեայ, քաջ
ամբաստանութեան մատուցին զնմա-
նէ առ արքայ, այր դաւաճան ցու-
ցանելով զՏալդապան և մատնող և
խանգարիչ պետութեան, և պատճառ
պատերազմին խրխմու: Կոչեաց Մուս-
տաֆա արքայ զՏալդապան յարքու-
նիս, և զմատանին առեալ ՚ի նմանէ
ետ ցՌամի փաշա. և Տալդապան ար-
գելեալ փակեալ ընդ մէջ երկուց
դրանց պալատանն՝ յետ երից աւուրց
գլխատեցաւ:

Ռամի Մէհէմմէտ խաղաղասէրն ՚ի
բնէ և աշխարհաշէն, հոգ ՚ի մէջ դնէր
այնուհետև կարգս սխատնել յօրինել
՚ի պետութեանն. անդէն ցածեաւ առ

մուկ չփոթի Թաթարացն Խրիմու , և առաջնորդք նոցա Տէվլէթ և Սաատէթ Գէրէյ փախեան յաշխարհն Նոգէրացւոց : Ռամի փաշա նուաճեաց և զԱփխազս , և զՄնկրէլս · եհատ որոշեաց զսահմանս աշխարհին յեւրոպակողմն կուսէ ըստ պայմանի դաշանցն հաստատելոց 'ի Քարլովից · կարգաւորեաց զծախս նաւատորմին · բազում շինութիւնս արար յԱդրիանուպօլիս , մանաւանդ 'ի Ջրոյ պէտս , և խրախուսեաց զսատուեգործս Թեսաղոնիկեայ և զմետաքսագործս Պրուսայի՝ ազնուագոյնս զգործածսն յօրինել , որպէս զի մի նուազ ինչ գոցին քան զեւրոպացւոցն Ճարտարս : Սովին տենչմամբ և ունդս դահվէի ածեալ յԱրաբիոյ ջանայր անկել 'ի Կոստանդնուպօլիս : Առանձին իմն ձեռնարկաց եղև 'ի գրաւելոյ զինչս աւագորերոյն, որպէս առաջինքն իւր. և 'ի պատուհասել զյանցաւորս անակնառու էր մեծամեծաց: Սովին իրի զյոլովից որսացեալ զսէր և զբարեկամութիւն, զբազմաց եւ յինքն ձգեաց զոխերիմ թշնամութիւն :

Առաւել քան զամենեսեան զչարէին հակառակ Ռամեայ գունդքն ենիչէրեաց, ոչ միայն զի չէր նա պատերազմասէր ոք , և ոչ արուեստից ինչ վաստակոք ամբարձեալ յայն պատիւ , այլ և զի զհամարակալ նոցին յաղագս անիրա- ինչ գործոյ նորա չարագան հարուա-

ծեալ էր ։ Խեռայլին ընդ նմա և զխա-
նականացն զաւրս, փոխանակ զի մեռ-
րիմ էր զենդեռին՝ որ յամենայն 'ի զե-
րադաս իշխանութեանս զօրգլխոն իւր և
զայրագինցս զետեղէր ։ Յայսոսիկ քրթ-
մնջանս ժողովրդեան յաւելու ապա և
հասարակաց տրտունջ զանդատանաց
ընդ կալ մեալ ակքայի ընդ երկար յԱ-
դրիանուպօլիս՝ որոց պարապելով և
խրախութեանց ։

Այլ բողոքինչք հրդեհին պատրաս-
տելոյ երևեցան գունդք զինագործ
անուանեալ զօրականաց, որոց ռոճիկք
յապաղեալ էին զամիս ինն և աւել
ևս ։ Աճապարեաց գնդապետ նոցին
խալաֆիմ ապա խոստանալ նոցա զռո-
ճիկն, և պարգևս 'ի վերայ. սակայն
անազան էր ժամն. զի և ենիչերիք յա-
ւելան 'ի խռովիչսն, և խուռն բազմու-
թեամբ ժողովեցան յէթմէյտանին յա-
մի 1703, 'ի յուլիսի ութուտասն, և ձայն
բարձեալ աղաղակէին իւրև ընդ մի
բերան. « Մեծ է Աստուած » ։ Ի-
միրք երեսուն, զինագործք երեքարիւր,
և 'ի խառնաղանջ բազմութենէն ամբոխ
յոյժ 'ի մի վայր եկեալ, դրօշս պարզե-
ցին, և ընթացեալք ընդ քաղաքն ետուն
փակել առժամայն զկրպականին ։ Տե-
ղապահ վէզիրին, և գնդապետն բա-
րակապանաց Հասանպատէ Մուրթէ-
զա ապա փորձ փորձեցին դարձեալ խա-
ղաղել զամբոխն՝ 'ի խորհուրդ զգլխա-

կանոնն կոչելով, և զդրօշն պարզելով զնուէրականն. այլ դատաւորն Կոստանդնուպօլսի ոխացեալ գոլով ընդ դենպետին՝ խափան եկաց խորհրդոյն ։ Ի վաղիւ անդր կամեցաւ Հաշիմզատէն գրաւել զարքունիսն և անտի մարտ ընդ խռովիչսն դնել. սակայն նոքա դիմեալ մոլեգին յաւարի առին զտուն զօրավարին ենիչէրեաց. զՀաշիմզատէն հալածեալ սպանին, և զդրօշ մարգարէին իւրեանց պարզեալ՝ նշան կարգային ամենայն ենիչէրեաց որ ոչ դայցեն հասանիցեն ընդ նոսին ։ Եւ մի ոմն յապստամբաց ելեալ 'ի ծառ մի որ էր 'ի ձիարձակարանին մեծի՝ աղաղակեաց առ ժողովուրդն և ասէ, «Տէր ընդ ձեզ եղբարք իմ և բարեկամք. ժողովուրդ Մահմէտի, զո՞ ոք 'ի մէնջ ընտրիցէք դուք 'ի դենպետ. զո՞ ոք զօրավար. զո՞ դատաւոր քաղաքիս »։ Անդէն բարբառեալ գոչեաց խուժանն. «Դենպետ մեզ զՓաշմագճիզատէն կամիմք. զօրավար զՋալըգ Ահմէտ, և դատաւոր Կոստանդնուպօլսոյ զՍանուլլահ էֆէնտի »։

Յայնժամ պահու ապստամբացն ձերբակալ արարեալ զդատաւորն Կոստանդնուպօլսոյ զՍէյիտ Մահմուտ՝ ածին 'ի մզկիթն ենիչէրեաց, ուր կոչեցին և զամենայն զդխանականս և զզօրականս. և մի ոմն Գարադաշ անուն առաջնորդ կացեալ բանին, յարդարեաց պխտակ

խին, մանաւանդ թէ պատուէր հրամանի, որով պահանջէին յարքայէ ընկենուլ յիշխանութենէ զԳենդեան և զորդիս նորա, և գալ ընակել 'ի Կոստանդնուպօլիս. և զխանականս հինգ, երկու երկու զօրականս յեօթնեակ դասուց զինուորութեան [1], և երկուս յամենայն կարգաց Ձեռնարուեստից որոշեցան տանել զպխտակն առ արքայ։

Այն օր քաններորդ երկրորդ էր ամսեանն յուլիսի. յորում աւուր և գենդեան և վէզիրն մեծ ատեանս դումարեալ յԱդրիանուպօլիս հաստատեցին և ոչինչ. բայց միայն գնդապետ զոմն արձակեցին արամբք հարիւրովք ընդ առաջ Նուխրակացն ուղևորելոց 'ի Կոստանդնուպօլսոյ։ Նորա պատահեալ արանցն 'ի Հաֆսա, զպխտակ ապստամբացն այրեաց 'ի հուր, յորոյ վերայ կային ստորագիրք երեքարիւր, և զորան արկ 'ի բանտ։ Իսկ մօրն արքային զգացեալ զխրս ապստամբութեանն, անդէն հաւանեցոյց զարքայ՝ տալ զվճիռ ընկեցիկ լինելոյ գենդեանն և որդւոց նորա։ Այսպէս եհարց արքայ ցՐամի զխրս Նուխրակացն. և նա զխստա բանսարկութեան նոցին գենդեպետան արկեալ, ած հասոյց զորան

[1] Այսինքն են Ենիչէրի. Սիփահի. Սիլիհտար. Ճէպէճի. Թօփճի. Թօփարապաճի. Պօսթանճի։

յԱդրիանուպօլիս . և առ փաշմագճիզատէն ուէտտուրս արձակեաց յաղագս ամբաստանելոյ նորա 'ի գենալետութիւն : Այլ սա խօթացեալ, կամ պատճառեալ զխօթութիւն, հրաժեշտ կալաւ 'ի պաշտամանէ անտի , և կարգեցաւ յայն Մէհէմմէտ էֆէնտի ոմն Պրուսացի :

Մինչ այս և մինչ այն , ամբոխ ապըստամբացն աճելով աճէր 'ի Թագաւորեալ քաղաքին ցրիւր մի արանց . և 'ի գլուխ նոցա անցեալ կային Չալըգ Ահմէտ, Դորիճանըը Ահմէտ , Սիւլէյման աղա , և փեսայ Քէօփրիւլիւ Հիւսէյինի Ահմէտ աղա : Յայնմ պահու Մուստաֆա արքայ ինքնագիծ հրովարտակաւ հաստատէր յիւրաքանչիւր պաշտամունս զարսն ընտրեալս յապստամբաց . անմեղադիր առնէր զզայրոյթ բարկութեան սոցա , և խոստանայր դառնալ ընդ հուպ 'ի Կոստանդնուպօլիս : Այլ հրդեհ ապստամբութեանն վերստին բորբոքեցաւ իբր 'ի մրրկեալ հողմոյ շնչելոյ յերեւել Ֆիրարի Հասան աղայի , որ ցայնժամ 'ի Թաքատեան կայր . և խռովեալքն արք յիսուն և կամ վաթսուն հազար՝ հաստատեցին դիմել գնալ յԱդրիանուպօլիս . զի և արքայ միւս ևս հրովարտակաւ անբասիր առնէր զյապաղանս դարձին իւրոյ : « Ասպաքէն եթէ մնացեալ էր արքայ , գուշէին առ հասարակ , աւուրք երկու շատ իսկ

էին ածել զՏխակն նորա այսրէն. արդ կենդանի գոլով զի՞ է զի ոչ գայ այսր այս աւուրք չորք»: Մինչև յուղի անկեալ՝ խնդրեաց ամիրային հրաման յաւարի հարկանելոյ զԱնդրիանուպօլիս, և 'ի դենպետէն վճիռ դատակնքոյ՝ եթէ օրինաւոր իցէ ապստամբութիւն իւրեանց և խռովութի: Եւ դենպետն հանդերձ գխանականօք և դատաւորօք զօրաց ետ զերեսին վճիռս զայսոսիկ. ա. «Եթէ արքայ թողեալ քեալ զաթոռ թագաւորութեան իւրոյ, 'ի խնջոյս պարապիցի և 'ի զբօսանս որսոց, և զծառայս իւր տառապեցուցանիցէ ծանր ծանր հարկօք, և զգանձան վատնիցէ, արժա՞ն իցէ կալ մնալ նմա 'ի գահոյս իւրում: — Պատասխանի. Ոչ»: բ. «Եթէ հաւատացեալք գլուխ ամբարձցեն ընդդէմ բռնութեց առաջնորդին, արժա՞ն իցէ ապստամբս կարգալ զնոսա: — Պատասխանի. Ոչ»: գ. «Եթէ հաւատացեալք յարիցեն 'ի վերայ առաջնորդին իւրեանց, օրէ՞ն իցէ այլոց ձեռնտու լինել նմա: — Պատասխանի. Ոչ»:

Ապա յիններորդի աւուր ամսեանն օգոստոսի չուեցին գնացին ամբոխեալքն 'ի Տաւուտ փաշայէ յԱնդրիանուպօլիս: Յառաջոյ տանէին զԴրօշն Մահմէտի, և առ նմին զԹիկնոց նորին եդեալ 'ի հասս, և կերպաս կանաչագոյն արկեալ զնովաւ, և զօր ամենայն ընդ ա-

ռաւօտս և ընդ երեկս զավօրական ա-
ղօթան մատուցանէին : Նա էին ընդ ամբոխին եօթն հազար զօրականք յայլ և այլ դասուց , և իննհարիւր էմիրք կամ՝ էմիր կարծեցեալք [1] . Թնդանօթք և ռումբք բազումք և չորեքտասան տակառք վառօդոյ , և եօթանասուն հազար գործիք և մանդղոնք պաշարման :

Իբրև այդ եղև յԱդրիանուպօլիս գխմումն ապստամբաց անդր , աճապարեաց վէզիրն մեծ զօր գումարել , և զբռնութիւն բռնութեամբ վանել : Եկին ժողովեցան 'ի դաշտին Ադրիանուպօլսոյ աւելք իբր ութսուն հազար . և թէ կամեցեալ էր վէզիրին մարտ դնել նոքօք հանդերձ ընդ խռովիչսն , ոչ հանդարտէին ոգւք ընդդիմանալ նոցին և ոչ դոյզն ինչ անգամ : Եւ արդարև խրախոյս մեծ առեալ զօրականացն 'ի քաջալերել բանից վէզիրին , երդուան յայտնապէս 'ի կուրանն և յաղ և 'ի հաց և 'ի սուսեր՝ պաշտպան կալ արքային ցմահ : Սակայն նա հրաման տըւեալ էր սպարապետին , զի յերևել ապստամբացն՝ անդէն վերջանեալ դարձցի յԱդրիանուպօլիս :

1 Զի յայնմ խառնաշփոթեան ժամանակի որ կամէր՝ պատառ իշխանութեան չգիտացի դա- տէր , և առնոյր 'ի մահապարտէն Կոստանդ- նուպօլսոյ պնդրենալ տոմսին փառն ինչ :

Ի տասներորդի աւուր ամսեանն օ_գոստոսի եհաս բանակ ապստամբացն 'ի Սիլիվրի․ անդ զինուորականք ժողո_վեալ 'ի վերայ զօրավարին երիչերեաց Չալըգ Ահմէտայ, ընտրեցին կարգել յաթոռ թագաւորութեան զսուլթան Ահմէտ Գ․, զորդի Մէհէմմէտայ ար_քայի․ և յայնմ օրէ հետէ սորայս անուն յիշեցաւ յաղօթս հասարակաց փոխանակ Մուստաֆայի Բ․։

Ի Չորլու ժամանեցին յԱդրիանու_պօլսոյ առաջինք 'ի զօրավարս բանա_կին արքունի, Հասան փաշա, Խիւսա_մէտին փաշա, Սիւլէյման փաշա, և քարոզն արքունի մուֆթի քաղաքին Ալ_ի էֆէնտի, և այլք ոմանք․ և մնացեալք առ ապստամբեան և մեծ վէզիր ապըս_տամբեաց առ Ահմէտ փաշա, զամե_նայն ձիգն իւրեանց թափեցին հա_մոզել զնոսա 'ի հաշտութիւն խաղա_ղութեան, այլ 'ի զուր․ ապա ցուցին անդէն զխնդիրս զինուորականաց և զնորոյ զենալերոյն՝ որք խրատէին համոզելին զդիտաւորս նոցա, և կարևոր զփոփոխել աթոռոյ թագաւորութեան։ Յայն_ժամ Րամի փաշա փութացաւ ազդ_առնել արքայի, զի թէ կամիցի փրկել զանձն՝ իւրն եկեսցէ կացցէ 'ի գլուխ իւրոյ բանակին․ և նա գնաց անյապաղ 'ի բանակն 'ի Հաֆսա, ուստի ոչ ինչ հեռի էր անդի ապստամբացն քան զաւուր միոյ ճանապարհ։

Սակայն 'ի քանի ինչ աւուրց հետէ բանակքն երկոքեան դադար բանադնացուԹեամբ գաշնաւորեալ էին ընդ միմեանս. վասն որոյ խրրե պատուիրեաց Ռամի փաշա իւրոյն ճակատ յարդարել ընդդէմ ապստամբաց, ըմբոստացան ենիչէրիք ամենք և ասեն. «Կարի անագան է ժամս. վաղիւ ճակատեսցուք»: Ի նոյն և չկամեցին սուսերաց և ճայԹմունք հրացանից լսելի եղեն յամենայն կողմանց. և առ ժամայն ենիչէրեաց գունդք առ հասարակ հատուածեալ անցին 'ի կողմն ապստամբաց: Զայն տեսեալ վէզիրին՝ դէմ փախստի եդ և անձապրեաց յաւէ կարէր. և արքայ ինքնին միաձի ճողոպրեցաւ յԱդրիանուպօլիս:

Ի վաղիւ անդր եկին հասին ապըստամբքն յափն Դունաճա դետոյ հանդէպ քաղաքին. և Մուստաֆա արքայ միւսեալ առ եղբայրն իւր՝ ասէ ցնա. «Եղբայր իմ, ժողովուրդք դրեց խնդրեն իւրեանց 'ի Թագաւոր»: Եւ Ահմետ արքայ նոյն հետայն հաստատեաց յիշխանուԹիւնն նոյին զվէզիրն մեծ, ըղդենիկեան, զդատաւորին զօրաց, և զզօրավարին ենիչէրեաց զկարգեալս յապըստամբաց անտի:

Այս փոխումն եղև ԹագաւորուԹեան Մուստաֆայի, որ Թէպէտ և կարի քաղցր գատու առ հպատակս իւր, բայց նովին և յինչս և յարիւն նոցին ոչ ագահեաց երբէք: Սիրող էր որսոց և

մականախաղին, և գեղեցկագիր յոյժ։ Նա մեռաւ նա յարգելանին 'ի Կոստանդնուպօլիս 'ի վերջնում աւուր 1703 ամին, և թաղեցաւ առ հօր իւրում 'ի Վալիտէ Ճամիսի։

---

## ՍՈՒԼԴԱՆ ԱՀՄԷՏ Գ·

Ի ԾԱԳԻ հասակին Թագաւորեալ Ահմէտ արքայ, չեւ ես երեսնամենի գոլով։ Բազմեցաւ 'ի գահն արքունի 'ի քսաներորդերրորդի աւուր ամսեանն օգոստոսի, ունելով 'ի գլուխ իւր զբոլորաձեւ գլխանոցն Յուսուֆի անուանեալ, եւ սամուրենի փոքր արկեալ զանձամբ. եւ ամենայն աւագանին երդուան նմա զերդումն հաւատարմութեան :

Ի վաղիւ անդր մինչդեռ 'ի մզկիթ երթայր արքայ, քանզի ուրբաթ էր, գունդք ապստամբաց ամբոխ արարեալ աղաղակեցին. « Հա՛ երբ ընդ ոտեր մեր արքայ. այլոց կամիմք դաւաճանս » : — « Ծառայք իմ, ասէ արքայ, գովեմ զհայցուած ձեր. ապաքէն կամակար հաստատեցի ես յիւրաքանչիւր պաշտաման զորսն ընտրեալս առ 'ի ձէնջ » : Յայնժամ գոչեցին ամենեքեան խրոխ ընդ մի բերան. « Թէ այդպէս իցէ, Թող տացին 'ի ձեռս մեր դենապետն, ներքինապետն, գանձապետն, ընդ ամենայն ոքիք վաւթաւն՝ զորոց նշանակեալ եմք

զանուանս . այլ գենդակեան վաղ ընդփոյթ սպանցի , գուցէ կործիցի ապա այլ ոք փոխանակ նորա մահապարտեալ »: Խոստացաւ արքայ կատարել զպահանջանս նոցա . և 'ի նմին աւուր անկեցան առաջի արքունեաց ձարքն ասկեգլուխք' 'ի ցոյց չուելոյ արքայի 'ի Կոստանդնուպօլիս : Բաշխեցան 'ի զօրականս պարգևքն սովորականք' երեք հազար և վեցհարիւր և ութսուն քսակաց : Յայնմ վայրի գենդակեան Ֆէյզուլլահ արգելեալ կայր 'ի խիստ բանտի . հանին զնա յարգելանէն առաջնորդք ապստամբութեանն Գորխճանլը Ահմէտ, Գարադաշ , և Քիւչիւք Ալի հանդերձ խուժանից արբանեկօք , և զերիս աւուրս խոշանդեցին զայլն ազգի ազգի դառն և անագորոյն կտտանօք : Եւ խրրէ աւուրն 'ի նորոյ գենպեանէն զգաստակնիք ապստամբութեանն Ֆէյզուլլահայ , հեծուցին զնա խուրով փակեղամին 'ի գրաստ անակտան յետս կոյս . զագի գրաստուն ետուն 'ի ձեռս նորա որպէս զերասանակ , և հրեայ ոմն բանդապանեալ յածեցոյց զնա ընդ քաղաքն . և 'ի հասանել 'ի մեծ հրապարակն , իջուցին զնա և գլխատեցին , և զգլխակնն ընդ քարշածին պարանաւ ընդ ամենայն բանակըն : Եւ ոչ այսու շատացեալ անգըթութեան նոցա , կարեցին զնոսա ըղքիթ , և զականջս և զշրթունս . Երկիցս

ընկլուզին զնա 'ի գետ անդր, և երկիցս անգամ դարձեալ ձգեցին 'ի վեր, և յերրորդումն մատնեցին զքամեալն զխակնն յորձանաց գետոյն: Նւ սա երրորդ գենպետ է Օսմանեանց չարամահ 'ի նոցունց սպանեալ՝ 'ի սկզբանէ թագաւորութեանն մինչև ցաւուրս մեր:

Զամանեալ արքային 'ի Տաւուտ փաշա, յաւուրն երրորդի եմուտ մեծահանդէս շքով 'ի թագաւորեալ քաղաքըն, և երթեալ յԷյուպ ածին զսուսերն ընդ մէջ նորա զինակիրն, գլուխն եմիրաց՝ որ է 'Նագիպ իւլ էշրաֆ, և զօրավարն ենիչէրեաց, ըստ վաղնջուց սովորութեան Օսմանեանց: Այլ նորատեսիլ իմն այն էր 'ի հանդիսին, զի տարաբաղդն Մուստաֆա Բ յառաջախաղաց լինէր՝ փակեալ 'ի վանդակապատ կառս և պահպանեալ 'ի սպիտակ ներքինեաց. և զկնի գային մայր նորա և քորք և դստերք, և երեսուն կառք լցեալք կանամբք նորին. որք և ածան փակեցան 'ի հին արքունիս, և Մուստաֆա չորեքումբք որդւովքն արգելաւ 'ի նորումն 'ի վանդակին: Նւ թնդմունք հրազինուց արքունեացն և նաւահանգստին աղջունեալ հնչեցին զթագաւորել Ահմէտայ արքային:

Հրաման եղև 'ի նմին աւուր՝ մի ումեք 'ի քաղաքին զէն յանձին ունել. և յաւելան 'ի ռոճիկ զօրականաց փոքր

երկք յաւուր: Զայն տեսեալ Պոսթան-
ձի անուանեալ պարտիզապան զօրա-
կանք արքունեաց՝ խնդրեցին և նոքա
ամբոխիւ պարգևս և յաւելուած թո-
շակի ըստ ոչ սովորութեան: Ընդ որ
ծանրացուցումն լեալ արքային՝ ել 'ի բար-
ձրուանդակ իմն քարայատակ, և շուրջ
պատեալ յաւագանւոյն՝ յայտ արար
զկամս իւր 'ի բաց վանելոյ յարքունեաց
զզօրականսն, և մանկունս քրիստոնէից
ժողովելոյ փոխանակ նոցա: Եւ անդէն
վարեցան յապարանից արքունի եօթն-
հարիւր և եօթանասուն պարտիզա-
պանք, և հազար մանկունս ժողովեցան 'ի
քրիստոնէից: Այս առաջին և վերջին
է 'ի մանկաժողովս զկնի խափանելոյ
նորին 'ի յիսուն ամաց հետէ առ Մու-
րատաւ չորրորդիւ:

Զօրավարն ենիչէրեաց Չալըգ, որ
'ի գլուխ հազարաւորաց իւրոց սատա-
րեաց արքային 'ի ցածուցանել զաղմուկ
պարտիզապան զօրականին, համարէր
շնորհ մեծ ունել այնու յաչս արքային.
այլ իբր համարձակեցաւ հրաւիրեաց
զարքայ 'ի տուն իւր 'ի խրախութիւն,
և սովին պատեհաւ խնդրեաց 'ի նմա-
նէ զբարձ մեծի վեզիրութեան. և ար-
քայ որպէս ընդ կոչունսն, նոյնպէս և
ընդ խնդիրն հաւանեցաւ յօժ կամօք:
Սակայն նոր ներքինապետն Աղաւիւր-
բահման արհամարհանս իմն կրեալ 'ի
զօրավարէն՝ 'ի գերևս եհան զյոյս ա-

կնկալութեան նորա ։ Քանզի սովորութիւն էր արքունեայն Օսմանեանց, զի յամենայն կուշունս արքայի ներքինապետն բարձրէց լինէր վեզիրին մեծի. և սա 'ի խօսել ընդ ներքինապետին ունէր կոչել զնա «Օղլում սուլթանըմ», այսինքն է որդեակ իմ և տէր. և 'ի գալ նորա առ վեզիրն, սա ընդ առաջ երթայր նմա մինչև ցատնդուղն, և այլք 'ի վեզիրաց համբուրէին զձեռս ներքինապետին։ Այդ Չալըգ ոչ միայն զայս չարար, այլ և բազմեալ յիւրում բազմոցին՝ դդակ փոքրիկ ունելով 'ի գլուխ, 'ի գալ ներքինապետին խլրտեցաւ իսկ ոչ, և ասէ ցնա. «Հրամայեա տէր բազմել», և ցուցանէր նմա ձեռամբ զբազմոցն որ 'ի հանդիպոյ ։ Բերաւ ջուր ըմպելոյ և արբ Չալըգ. և 'ի խնդրել և ներքինապետին, Չալըգ մատոյց նմա զնոյն զթերումն բաժակ ։ Ընդ այս բրտութիւն 'ի խոր խոցեցաւ ներքինապետն, այլ ասաց ինչ ոչ ։ Մըտին 'ի ներքս ներքինիք մտերիմք արքայի. և Չալըգ ոչ ինչ մեծարանս ցուցեալ առնոսա, ասէ. «Ենիչէրի եմք մեք, և անհմուտ քաղաքավարութեանց ձերոց, չգիտեմք՝ որդեակս եթէ հարս անուանել արժան իցէ զձեզ. որ զինչ և իցէ, բարեաւ իցէ գալուստ ձեր». և աղաղակեաց 'ի դուռն. «Մանկունք, ածէք զղահվէ»։ Ներքինիքն սովորեալք 'ի խիստ օրէնս քաղաքավարութեան,

բազում շնորհս մատուցին զօրավարին. սակայն մեծապէս դժգմեալք ընդ անպատկառ յեղանակ ընդունելութեան նորա, ըստ պատեհի զգացուցին զխրոն արքային. և Ահմէտ արքայ, որ պատճառս խնդրէր բառնալոյ 'ի միջոյ վաղկամ՝ անհագան զառաջնորդս ապստամբութեանն, սկիզբն արար գործոյն 'ի զօրավարէն ենիչէրեաց այսպէս:

Խորհուրդ արարեալ ընդ վէզիրին մեծի՝ հրաւիրեաց յարքունիս զաւագորեարն զամենայն և զգասս գլխականաց 'ի լուր ընթերցուածոյ կարևոր ինչ օրինագրութեան: Սովորութիւն էր թողուլ աւագորերոյն զերիվարս իւրեանց առ դրան պարտիզին արքունի, և հետի մտանել 'ի ներքս և գնալ 'ի պատշգամն Երևանայ անուանեալ, որ էր տեղի ժողովոյն: Արդ իբրև մտին ամենեքեան 'ի ներքս, երիվարք նոցին ածան յայլ դուռն հեռաւոր. և 'ի լուծանել ժողովոյն հանդերձապետն արկ զուսովք Չալըդ Ահմէտայ պատմուճան մի, և վէզիրն մեծ ասէ անդէն ցնա. «Հրաման է արքայի երթալ քեզ 'ի Կիպրոս՝ կուսակալութեան պատուով»: —«Ես զի՞նչ յանցանք իցեն իմ» աղաղակեաց Չալըդ ընդ ցասմամբ. և հապշտապ ընթացաւ 'ի դուռն արքունական պարտիզին, և ակն ունէր անդ գտանել զերիվարն իւր, այլ խաբեցաւ. և ստիպեցաւ մտանել 'ի նաւն որ առ Դափդա-

փու դրան սպասեալ մնայր նմա ։ Սե_
նեկապետն արքունի եհան յայնժամ
՚ի ծոցոյ խուրձ զդատակնիք մահու նո_
րա զվճռեալն ՚ի գեներալէն. և ըստ այնմ
խնդրանաց եղև Չալըդ ։ Զհետ նորա
սպանան և այլ գլուխք ապստամբաց,
ընդ որս և էնիչէրին Գոլիճանը Ահ_
մէտ, և սոյայն Գարադաշ, և յոլովք
յուսադանւոյն ընկեցիկ եղեալ՝ այլք
՚ի տեղիս նոցա փոխանակեցին ։ Ինքն
իսկ վէզիրն մեծ Ահմէտ, որ պատճա_
ռանօք բովանդակելոյ զթերութիւն
գանձուն արքունի՝ կեղեքէր զժողո_
վուրդան ծանր ծանր հարկահանու_
թեամբ, ատելի լեալ էր առ հասա_
րակ մեծի և փոքու, և առ անյագ ըն_
չախրութեանն Գաւանոս անուն կո_
չեցին նմա ։

Առաքեաց արքայ զկնիքն իւր առ
վէզիրն առնուլ ՚ի նմանէ զկնիքն ՚ի բաց։
Ընդ որ այնպէս խիստ չփոթեալ զդողու_
նի հարաւ այլին, զի և զժապաւէն կնքոյն
անկարանայր լու-ծանել, մինչև քաւկա_
ւըն հանգերձ եա զայն ՚ի ձեռս զինա_
կրին. և նա պատուիրեաց Ահմէտայ
մեկնել ՚ի տուն իւր, որ էր մերձ ՚ի Սիւ_
լէյմանիյէ ։ Զճանապարհայն պատա_
հեաց նմա յաջորդն իւր Տամամ Հա_
սան փաշա փեսայ արքային, և ասէ ցԱհ_
մէտ. « փաշա եղբայր, եթէ ոչ թա_
գուցանիցես զգանձս քո՝ չեքքեղ ու_
տեք ահ երկիւղի » ։ Յայնժամ մատեա_

Ահմէտ և չշնչեաց ինչ յունկն Հասանայ, այլ համբուրեաց զձեռն նորա և գնաց 'ի տուն իւր : Սակայն յետ աւուրց 'ի բաց տուեալ զամենայն զմթերըս զանձուցն՝ յաքսորս տարաբեցաւ յԷնիքէպախթի. և էր նա ընիկ ռուս յազգէ, որպէս ասեն :

Տամոս Հասան փաշա իբր յակամայ կամս 'ի ձեռս առեալ զիշխանութիւնն մեծ, խորհուրդ կալաւ վաղվաղակի ընդ գենպեալն հնարս գտանել բարեկարգութեան պետութեանն : Յայնմ պահու գենպեան յաւելեալ 'ի բանս իւր ասէ . « Գիտես որդեակ, զի ամբոխ ժողովրդեանն է որ ամբարձ զքեզ յայս իշխանութիւն » : Հասան ողջրով իմն կշռեաց նմա յայնժամ զպատասխանին, սակայն և կարի քաջ վերահասու եղև խորհրդոյ բանից գենպեալն . իբրու զի բռնութեամբ ապստամբ ժողովրդեան ամբարձեալ իւր 'ի գենպետութիւն, նովիմբ համարէր կալ յականատնի, և զայլս ևս 'ի նոյն հրապուրէր ձեռնարկութիւն : Այլ Հասան՝ զի ցուցցէ նմա եթէ քանի մեծ է համարձակութիւն իւր և ընտանութիւն առ արքայն՝ ասէ ցգենպեան . « Հրամայեա գալ ընդ իս առ արքայ » : Ասէ ցնա գենպեան . « Այլ նա կոչեաց ոչ զմեզ » : — « Իւ զինչ պէտք իցեն առանձին կոչոյ » ասաց վէզիրն և մեկնեցաւ :

Ի նմին աւուր բազում փոփոխու-

թիւնս արար Հասան յաւագանին, այլ ապստամբիս բարուքն ոչ ինչ հուպ եղև յինչս աքսորելոցն և մահապարտելոց. և ընդ Րամի փաշային ևս մեծաւ զիջ-մամբ և քաղցրութեամբ վարեալ, ոչ միայն զամենայն ինչսն դարձոյց առ նա, այլ և զկուսակալութիւն Կիպրոսի շնորհեաց ետ:

Ընդ այն աւուրս եկին հասին յամե-նայն գոգցեա պետութեանց դեսպանք և նուիրակք 'ի խնդակից լինել Թագա-ւորելոյն Ահմէտայ: Այլ զի մեծն Պետրոս արքայ Ռուսաց յաւելոյր ըղ-թիւս նաւատորմին իւրոյ 'ի Սեաւ ծո-վուն, ոչ սակաւ վանդ երկիւղի էր Օս-մանեանց յերեսաց նորոյ պատերազմի. վասն որոյ ծովակալեան Օսման փաշա երթեալ ամրացոյց կարևոր պահպա-նութեամբ զամրոցս Խրիմու, և զա-մուրն Ենիգալէ կանգնեաց 'ի մուտս նեղուցին Կերչի. և առ կուսակալն Քէֆէի Մխուրթէզա փաշա, և առ ըղ-դեաշխն Օզուի Եուսուֆ փաշա պա-տուէր հրամանի եղև ձեռնտու լինել Օսմանեանց 'ի շինուածսն, և 'ի պատ-րաստի ունել զօրս ըստ ձեռին բա-ւականի:

Իսկ 'ի Թագաւորեալ քաղաքին Տա-մատ Հասան փաշա ոչ դադարէր ան-հետ առնել զպատճառս ապստամ-բութեանն և 'ի գինակամայն գտանէ, որոյ գլխաւոր էր գենդեան:

Յաւուր միում շաբաթու 'ի ժողովել աւագանւոյն յարքունիս՝ մինչեւ ապատակալ մնայր գնդական հրաւիրակին զի մնացէ առ արքայ, զինակիրն արքայի եկն և յայտ արար նմա՝ եթէ հրամանն է յարքայէ գնալ գնդակօք 'ի Պրուսա. և չե 'ի տուն իւր դարձ առնելոյ, մուծաւ 'ի նաւ սպասաւորականն և վարեցաւ 'ի ծով. և կալաւ զանեղի նորա փաշամագձիգասէ Ալի էֆէնտի:

Այսչափ հզօր երեւեալ Հասանայ 'ի շնորհս արքային. բայց ոչ իւիք յանկարծածի կայր յայլ եւ մերձաւորաց նորին. ակլա որոյ և արս անզօրս 'ի բան և 'ի խորհուրդ՝ ջանայր փոխանակել 'ի տեղիս նշանաւորաց: Այսպէս ոչ յաջողեցաւ նմա և 'ի ներքինեաց դատուն փոփոխութիւնս առնել ըստ կամի. և զոմին ներքինապետ կամեցեալ ընտրել հակառակ ընտրութեան մեծին արքային, եւեն անկաւ յիւրմէ իշխանութենէն: Կոչեցաւ 'ի Կրետէայ գաւառապար Գալայըգ Ահմէտ փաշա՝ որդի գիւղականի ուրումն անագողի պղնձեաց, և յաւուր միում 'ի լուծանել ատենին առաջեաց արքայ նուիրակ զոմն զինի Տամատ Հասանայ, եառ 'ի նմանէ զինիքն արքունի, և եա զայն յԳալայըգ Ահմէտ. իսկ Տամատ Հասան հանդերձ կնաւ իւրով՝ որում անուն էր Խատիձէ սուլթան՝ աքսորեցաւ 'ի Նիկոմի-

գիս, և առնոյր ամ՛ յամէ ռոճիկս երե_սուն քսակաց ոսկւոյ: Տամատ Հասան փաշա մեծաւ զգօնութեամբ վարեալ 'ի միամեայ տէրութեանն, բազում բարեկարգութիւնս արար յաշխարհին. և մեց աւուրբ յառաջ քան զընկեցիլն լինել կատարեաց զմեծաշուք հանդէս ճրագալուցութեան 'ի պատիւ ծննդեան անդրանիկ դստերն Ահմէտայ արքայի 'ի 22 սեպտեմբերի ամին 1704 [1]:

Գալայըլը Ահմէտ փաշա, որ սակս իւ_րոյ անփոյթ տէրութեանն Գալայըլը_գօզ կոչեցաւ, ոչ ինչ աւելի յամեաց 'ի մեծի իշխանութեան քան զերիս ամիս. և կարգաւորութիւնք զորս արար նա 'ի ժամանակին, եթէ արժան իցէ կարգա_ւորութիւնս զնոսին անուանել, այս էին, զի արգել սաստկապէս մի այլ ուրեք յեփել զհաց այնիւ՝ բայց միայն յեր_կոտասան փուռնս քաղաքին. խափա_նեաց զվաճառս ազգի ազգի կարկան_դակաց, և սահմանեաց զգինս մուճա_կաց, հողաթափից, փակեղաց, և զան_ցից մարդկանն նաւակաւ կողմանէ 'ի կողմն: Դանդաղ էր 'ի կատարումն հրամանաց արքունի, և 'ի ծախս գան_

[1] Նորայնութիւն իմն էր այս առ Օսմա_նեանս, որ ոչ ինչ կարի մեծ տօնէին ծննդեան դստերաց արքային, որպէս ուստերաց. այլ արդարացեալ է 'ի պատճառս անդրանկու_թեան ծննդեանն:

ձուց 'ի յօրինուածս զանազան և նորաձև հանդերձից շուայլէր անչափ։ Սովոր էր և մեծամեծս կոտորել յախուռըն առաջի ասպանւոյն. որպէս 'ի զնին կացեալ յաւուր միում մեծի երկձկան կարթելոյ 'ի Պոնտոսէ, որ կշռէր լտերս երեք հարիւր, առեր առ որս մերձն կայրին. «Ես մինչդեռ ծովայեալ էի, որսացան ոմանք զձուկն, որոյ երկայնութիւն հասանէր առաւել մինչև ցԼչ յուռպ (մղոնաչափ մի)»։ Եւ զի չիշխէր ըզ յերկբայս զկրան արկանել, նա յաւելոյր բարդել 'ի բանն։ Սակս այսր ամենայնի Պաղթածի Մէհէմմէտ ոմն յաջողեցուցանէր տանել զնա զինակրին, ներքինապետին, և դենապետին. և արքայի առեալ 'ի նմանէ զինքըն եւ ցնա ինքն ցՄէհէմմէտ։

Սա թէպէտ և այր էր խորամանկ և Ճարտար 'ի գիտս հնարից, սակայն 'ի տեսչութիւն մեծամեծ գործոց անփկար էր և անձեռնհաս։ Յաւել և կամաւոր իմն չփոյթ 'ի մէջ խառնել 'ի գործս պետութեանն, որպէս զի զըստգիւտ խրացն զմտերմօքն արքայի արկեալ, որ էին զինակիրն Զօրլուլու Ալի, և առենադպիրն Խալլահիմ, մերժեսցէ զնոսա յարքունեաց։ Ահմէտ արքայ վաղ հոլացեալ էր 'ի Մէհէմմէտայ. վասն որոյ և փորձ փորձեալ հարցանէր ցնա յաւուր միում, եթէ զի է զի ամենայն ինչ խառն 'ի խուռն գնայ 'ի

տեսչութեան աշխարհիս : Նաև Պալ-
թաճին. « Յանհնարինն է բարւոք տըն-
տեսել զաշխարհս առանց օգնականի.
զի և ոչ զերկիր որ մշակել կարէ, թէ
չունիցի զոյգս ընտիր եզանց ». որով
ակնարկէր զզինակիրէն և զատենադպր-
րէն : Այլ նոցա վաղու եւ զթիկունս
հաստ արարեալ էր' զներքինայեան և
զգենոյեան յիւրեանս յանկուցեալ.
վասն որոյ և յորոգայթ զոր թագուցա-
նէր նոցա վեզիրն' զնա ինքն թակարդե-
ցին յամի 1706. և անդ 'ի տեղի նորա
զինակիրն Չորլուլու Ալի փաշա :

Ալի փաշա որդի էր առն հողագոր-
ծի կամ սափրչի 'ի Չորլու գեղջէ, այր
հաճկու, գործունեայ և խորին. որ
և մեծաւ յաջողութեամբ նուաճեաց
զԱրաբացիս ապստամբեալս 'ի Պասրա :
Առ սովաւ պատահեցին 'ի Կոստանդ-
նուպօլիս անխորհուրդ խռովութիւնք
մերոյ ազգին. և Յովհաննէս պատրիարգ
զմիւռնացի մատնեաց զոմանս 'ի հօտէն
իւրմէ 'ի բանտ և 'ի թի, և վտանգեաց
զբազումս օտարանալ 'ի հաւատոյն
քրիստոնէութեան : Միայն տէր Կո-
միտաս երանելի' անյողդողդ 'ի դաւա-
նութեանն կացեալ, կատարեցաւ ուղ-
ղափառութեամբ յամին 1707, 'ի 25
հոկտեմբերի : Եւ պատճառք զայրա-
նալոյ խռովութեանս ոչ միայն մերքն
էին, այլ և այն' զի Ալի փաշա ոչ ես
ունկնդիր լինէր բանից դեսպանին Գաղ-

զինացւոց, զնոսիւ արկեալ զխախուստ Աւետիք պատրիարգին։ Ուր ընդ հակառակն նա ինքն դեսպանն Գաղղիացւոց էր որ զնա ակամայն զայն այր ողւեալ էր յաքսորս վարել 'ի կղզին Յունաստանի առ նախորդաւ Ալի փաշային. իսկ Աւետիք փախստեամբ զերծեալ 'ի Մեղինէ, 'ի Մեսինա, և 'ի Մարսիլիա, անդ կրօնաւորեցաւ 'ի մենաստանի Քափուչին անուանեալ կրօնաւորաց, և մեծաւ ճգնութեամբ վախճանեցաւ անդէն զկեանս իւր[1]։

Զօրլուլու Ալի փաշա դամ քան զդամ հզօրացեալ յիշխանութեան իւրում, ձեռն էարկ և 'ի բազմապատիկ չինութիւնս և 'ի բարեկարգութիւնս. բազմացոյց զթիւս նաւուց, և ձուլարանս հաստատեաց խարսխի. զի յառաջ ժամանակաւ խարիսխք յԱնգղիոյ գային առ Օսմանեանս։ Առ նովաւ և Բամի Մէհէմմէտ փաշա որ կուսակալ էր Եգիպտոսի՝ ամբաստանութիւն կրեալ առ արքայն, աքսորեցաւ 'ի Հառ-

1 Պատմագիրն Համմէր զհետ երթեալ յառաջին անտարագ աւանդից Պօղոսի Դոսնայ, և Լամաթուէի գաղղիացւոյ, բազում խնդ թողէ հայկական մեծամարտութեան իւրոյն, և զԱւետիք պատրիարգ յայն անուանէ, և թէ Յիսուսեան էր որ հախոյս զնա 'ի Գաղղիա, և թէ ուր գիտէ ոչ նոյն զինչ անդր անդին ընդ նա, և որ այլ ևս։

դոս, և անդ 'ի խոշտանգանս տանջանաց մատնեալ՝ զի յայտնեսցէ զգանձս իւր, մեռաւ իսկ 'ի նմին ։

Յաւուրս ժամանակացն այնոցիկ յամին 1708 Թագաւորն Փէտայ Միւլէյ Հասան դեսպանս առաքեալ առ Աննա արքայ, յայտ առնէր նմա թղթով զհպատակութիւն իւր . և ընդ դեսպանին արձակէր մեծաւ շքով պատանի զոմն՝ որդի կարծեցեալ արքային Մէքնէսայ Դ. իբրու եթէ մայր նորին յանցանել երբեմն ընդ Միջերկրականն ծով, ձախողակ ելին հողմոյ դիպեալ և 'ի ծովեզերս Փէտայ անկեալ և անդ ծնեալ իցէ զարքայորդին ։ Ի հասանել դեսպանութեանն 'ի Վ.Քիոս, անդէն արգելաւ պատանին 'ի գիպահոջ, իսկ դեսպանն յետս դարձուցաւ անմխաս ։ Միւլէյ Հասան զժպհեցաւ ընդ իրան . և մի ևս նամակ առաքեալ առ արքայ, խրոխտագոյնս հատուցանէր զիրաւունս արքայորդւոյն յղելոյ յիւրմէ ։ Իսկ արքայ 'ի պատասխանի բանիցն ասէր եթէ « Ճշմարիտ պայազատք օսմանեանս պետութեան ոչ յածին Թափառականք յօտար աշխարհս . ցնորք են այդպիսիք և անտեղի բանջաղանք » ։ Յետ սակաւուց գլխատեցաւ կարծեցեալ արքայորդին, և կատարածն նորա եղաւ 'ի տեսիլ ժողովրդոց հանդերձ արձանագրաւ յանցանացն . իբրու զի յաւակնութիւն արքայի Թևակոխեալ

էր այրն անհնարին յանդգնութեամբ։

Ի միւսում ամին այլ ոմն երեւեցաւ յանկարծ յաշխարհին Օսմանեանց հիւր գերապանծ՝ Հախտղակ իմն պատահեալ բախտի. նա ինքն էր Կարոլոս ԺԲ արքայ Շուեդաց, Տէմիրպաշ՝ յՕսմանեանց անուանեալ. որ խորտակեալ ՚ի Ռուսաց ՚ի մեծի ճակատամարտին առ Փուլթաւա քաղաքաւ, անկաւ փախստական ՚ի Պէնտէր արամբք հազար եւ ութհարիւր ապրեցելովք ՚ի սրոյ թշնամեաց։

Քանզի վէզիրն մեծ Չորլուլու Ալի փաշա պատճառս խնդրէր պատերազմի ընդ արքային Ռուսաց հակառակամաց Ահմէտայ արքայի, եւ գաղտ բանանագնացութե՞ նամականի արարեալ առ Կարոլոս՝ գրգռէր զնա եղանել աներկիւղ ընդդէմ Ռուսաց, եւ յիւրմէ կողմանէ խոստանայր արձակել նմա յօգնութիւն զխանն Թաթարաց բազմաձեռն գնդաւ։ Զայն զգացեալ Ահմէտ արքայ ցասեաւ ընդ գործ վէզիրին, եւ անդէն պատուէր սաստիկ ՚ի վերայ կապեաց

1 Զի ոչ անգէտ էին Օսմանեանք քաջութեան սորա, եւ յաղթութեանցն զորս գործեալ էր ՚ի վերայ Մեծին Պետրոսի (զոր սոքա Ակդըրգ Ջայնէն), եւ ՚ի վերայ Սաքսոնաց եւ Լեհաց. վասն որոյ եւ յորդոր եկեալ էին նմա քեռապան զոք ունել ՚ի Կոստանդնուպօլիս՝ որպէս եւ այլք ՚ի պետութեանց Եւրոպայ։

խանին Խրիմու՝ մի ինչ թշնամութեան պատճառս յուզել բնաւ ընդ Ռուսս : Իսկ Կարոլոս որ անհմուտ էր այսմ ամենայնի , մեծաւ վստահութեամբ 'ի խոստմունս վեզիրին՝ ձեռն էարկ 'ի պատերազմն արամբք ութ հազարաւ , և խորտակեցաւ առաջի անհամար զօրացն Ռուսաց առ Փուլթաւայիւ յամին 1709 , 'ի յուլիսի 8 , և փախեաւ 'ի Պէնտէր . և ընդ նմա լեհացի կոմսն Փոնեաթովսքի , և նիզակակից նորա աթամանն Խազախաց Մազեփփա : Աստ արձակեաց 'ի Կոստանդնուպօլիս զՓոնեաթովսքի՝ առ 'ի խնդրել յարքայէ ձեռն օգնականութեան ընդդէմ Ռուսաց կամ դունդս զօրաց բաւականս առաջնորդելոյ նմա անվտանգ մինչև յաշխարհ տէրութեան իւրոյ . և զօրն զոր խնդրէր՝ երեսուն հազարաւորք էին և քսան հազար ենիչէրիք : Ծանր էր խնդիրն և պատճառք անշուշտ խռովութեան ընդ Օսմանեանս և ընդ Ռուսս կամ Լեհս , զոր չկամէր բնաւ Ահմէտ արքայ . նա զի և դեսպանն Ռուսաց Թոլսթոյ դեռ ևս դաշինս ուխտի պայմանեալ ընդ դրանն՝ պահանջէր արձակել 'ի բաց յաշխարհէ անտի զԿարոլոս : Ահմէտ արքայ ծանոյց Կարոլոսի առանձին հրովարտակաւ և մեծագին ընծայիւք զի դարձցի յաշխարհն իւր . և վեզիրն մեծ յաւել յընծայսն և յիւրմէ կողմանէ . բայց Կարոլոս մերժեաց

զընծայս վէզիրին, զի խռովայր ընդ նմա փոխանակ դաշանցն զորս հաստատեաց ընդ Ռուսս։ Զայրացաւ ընդ այն Ալի փաշա, և բանիւք սպառնալեաց կամէր հեռացուցանել զարքայն Շուէտաց 'ի Պէնտէրայ․ այլ 'ի ծանրացաւոյն լինել կարոլոսի ընդ խան դժկամակեցաւ և Ահմէտ արքայ ընդ գնացս վէզիրին մեծի, և ընկէց զնա յիշխանութենէն և արձակեաց 'ի Կաֆա կուսակալութեամբ հանդերձ աշխարհին յամին 1710։ Քանզի և մայրն արքային հակառակ էր վէզիրին, և յաղերսանըս փանեաթովքեայ զկարոլոսի ունէր զկողմն, մինչև ասել երբեմն ցորդին իւր ցԱհմէտ արքայ․ «Ե՞րբ լիցէ զի օգնեսցես առիւծուն իմում, զի պատառեսցէ զԹագաւորն Ռուսաց»։

Կուսակալն Եւբեայ կամ Էղրիպոզ կղզւոյ Քէօփրիւլիւ-Նիւմամն փաշա՝ կոչեցեալ 'ի Թագաւորեալ քաղաքն՝ ընկալաւ զկնիքն արքունի։ Որդի էր սա Քէօփրիւլիւ Մուսդաֆա փաշային, հինգերորդ և վերջին վէզիր տոհմին իւրոյ, և 'ի հարցն լաւութեանց ոչ ինչ կարի վերջացեալ․ սակայն սպառպայման իւր մտադրութիւն նորա յամ և պէտ իւր՝ խափան եղև յաճախ կարևորաց և պիտանի անցութեանց․ և հասարակաց ամենկալութիւն քաղաքացեայն վաղ դերևացաւ։ Չէր ինչ նմա փոյթ յաղագս արքային Շուէտաց

սատարելոյ · և ընդ պատերազմին եւս գրգռել ընդ Ռուսս չկամէր նա · այլ ահ խին կամեցեալ արկանել Լեհաց՝ համբաւէր ընդ աշխարհն եթէ ահա զօր բազում հանեալք Օսմանեանքս առաջնորդել արքային Շուեդաց մինչև յաշխարհ նորա : Այս յախուռն խորհուրդ ոչ միայն չխափանեաց զպատերազմն, այլ և բորբոքեցոյց եւս · քանզի ենիչէրիք 'ի բաց քերել ըղձանային յանձանց զկեղտ անուն պարտութեանցն զոր կրեցին 'ի յեռին Ճակատամարտն · միաբանեցան ընդ սոսա և այլ գաւք զօրականաց, և առ հասարակ վառեցան կազմեցան 'ի մարտ պատերազմի : Եւ զի յայտ խակ էր ամենեցուն եթէ Դիւանն փաշա ոչ էր բաւական յամենայն գործոյն, կարգեցաւ վաղվաղակի փոխանակ նորա վէզիր մեծ և սպարապետ զօրացն Պալթաճի Մէհէմմէտ փաշա որ կուսակալ էր Բէրիոյ :

Ընդ այն աւուրս ոչ սակաւ բազք և տրտունջ հասանէր 'ի սահմանակալ կողմանց աշխարհին զասպատակութենէ Ռուսաց : Կոչեցաւ խանն Խրիմու Տէվլէթ քէրէյ 'ի դուռն արքունի, և մեծաշուք հանդիսիւ մեծարեալ արքայ՝ խոստացաւ և յայտ արար եթէ կարևոր համրի 'ի վերայ կայ ելանել 'ի վերայ Ռուսաց 'ի մարտ պատերազմի, զի դադար բանադնաց են նոքա ընդ քրիստոնեայս աշխարհիդ · և կամին,

աւէր, հաստանել 'ի տէրութենէդ զեւ_
րոպական մասն ողջոյն : Մեծարեաց
զնա արքայ պատուական սամուրե_
նեաւ, ակնակուռ սուսերաւ, ոսկե_
հուռն կապարճիւք եւ ընտիր երիվարաւ.
Եւ յետ աւուրց առեալ մեծ կարգեալ
հաստատեաց վճռաւ գենոպէտին՝ եթէ
հարկ է մեզ խաղալ գնալ 'ի մարտ
պատերազմի 'ի վերայ արքային Ռու_
սաց. եւ դեսպանն Ռուսաց Թոլսթոյ
արգելաւ 'ի գիպահոջ յԵտիգուլէն :
Բազումս աշխատ եղեն դեսպանք Աւս_
տրիոյ, Հոլանդիոյ եւ Անգղիացւոց խա_
փան լինել պատերազմին, այլ յաջո_
ղեցան եւ ոչ ինչ:

Յամին 1711, յիննեւտասներորդի
աւուր ամսեանն փետրուարի, այն որ
առաջին էր 1124 ամի հիճրէթին, կանգ_
նեցան ձայրքն ոսկեգլուխք առ դրան
վեզիրին մեծի. եւ յետ անօրեայ ժա_
մանակի հարան խորանք Եռիչերեաց 'ի
Տաւուտ փաշա, եւ գունդ գունդ արուես_
տաւորաց ուղեկից եղեն հանդիսին
մինչեւ ցելանիլն է դամփուսու ըստ վաղըն_
ջուց սովորութեան :

Եկին հասին 'ի դաշտ անդր եւ զինա_
գործ զօրականքն որ են Ճէպէճի, եւ սըմ_
բաձիդք հանդերձ երկքարիւր Թնդանօ_
Թովք. իսկ նաւատորմն որ խաղաց 'ի
Սեաւ ծով երեքհարիւր նաւաց էր
հանդէս, եւ 'ի նոսա արք երեսուն եւ
հինգ հազար : Զհետ աւուրց ինչ հրա_

մահ եւ արքայ վիզիրին մեծի չուել զնալ 'ի դաշտն անտի 'ի սահմանս աշխարհին, եւ պատուեաց եւ զնա հրաժեշտի պատմուճանաւն որ Վխտա քիւրքի անուանի: Ապա յանցանել աւուրցի զօրացն յեւրոպականացն կոյս, բղեւաշխք եւ զօրավարք զաւառացն Գարամանայ, Սեբաստիոյ, Բերիոյ, Տիգրանակերտի, Ատանայ, Գանգրայ, Անկիւրիոյ, Աքշէհրի, Սիւրիհիսարի, Թեքքէի եւ Պոլուայ յանդիմանն եղեն արքային, եւ խոխոյսիւք մեծարեցան 'ի նմանէ:

Պալթաճի Մէհէմմէտ 'ի կարգի եւ զեւալ զընթացս բանակին, զապաւէն եւ զգենակիրս առաջապահս արար, զհետ նոցա զերեքհազար թնդանօթաձիգսն եգ խուրեանց հրաղինուքն համդերձ. ապա զգինագործս մէկ հազար, եւ ապա զամենայն այլորդաց 'ի բառնալ զմթերս, եւ զկնի նոցա զկառաւարկիրսն, եւ զհազարաւորս, զջրաբերս, զխոհարարս եւ զխորանահարս: Ի միջավայրի բանակին կայր վեզիրին մեծ համդերձ էնկիչերեօք եւ այլ զօրականօք, եւ այլ կուսակալք եւ զօրագլուխք խուրեանց զօրօքն վերջապահք էին բանակին:

Սոյնն կարգաւորութեամբ խաղաց զնաց բանակն Օսմանեանց ընդ Խազ-ձի եւ ընդ Գարթալ 'ի Մոլտաւիա. եւ իբրեւ եհաս մերձ յաւանն Ֆալչի, աղդ եղեւ վեզիրին մեծի, եթէ անդր ժամանեալ եւ բանակ հարեալ կայ ար-

քայն Ռուսաց՝ անցեալ ընդ Փրութ գետ, և սպարապետն նորա Շէրէմէթեվ պահ ունի խուռվքն անցից գետոյն։ Սակայն ընդ մի թաթարաց անցին յայնկոյս 'ի լող, և Օսմանեանք գիշերախառն արկեալ 'ի վերայ գետոյն կամուրջս չորս՝ անցին և նոքա։

Ռուսք մեկնեալ 'ի Փալչեայ, և բանակեալ էին առ Գուշ քաղաքաւ 'ի Ճախին դաշտի, յորս 'ի Թիկանց բլրինք էին ոչ ինչ կարի բարձունք, և երկուստեք Փրութ գետ, և Ճահիճ մեծ։ Ասպա 'ի խառնել պատերազմին, ոչ կարացին Ռուսք զդէմ ունել բազմաձեռն բանակին Օսմանեանց, զի այսք էին ութսուն հազար ընդդէմ երկերիւր և աւելի ևս հազարաց, և խոյս ետուն 'ի պատնէշս իւրեանց. այլ խանն Թաթարաց պաշարեաց զնոսա և 'ի Թիկանց կուսէ։ Յագնեալ մեծին Պետրոսի յանհնարին անձկութեան պահուն, ոչ գիտէր ելս աղագս հնարել խնամոյ. և ահա դշխոյն Կատարինէ խորհուրդ խորհեցաւ փրկարար Ռուսաց և արքային, և հաւաքեալ կանանց զակն և զակունս իւր պատուականս առ զնոսա վէզիրին մեծի. և Շէրէմէթեվ անդէն Թուղթ առ նա գրեալ՝ աղաչէր զՕսմանեանս 'ի հաշտութիւն։ Նչկն եհաս 'ի բանակն Օսմանեանց առենադպիրն Շափիրով հանդերձ նամակաւն և ընծայիւք. և փոխանորդ

վեզիրին Օսման աղա ընկալաւ զնոսա , և բաժանեցան երկոքին աղքա զգանձն 'ի միջի իւրեանց ։ Բայց հաւանելի է թէ ոչ միայն առ սէր պարգևացն և առ յորդորանաց Օսման աղային զի-ջաւ Պալթաճի Մէհէմմէտ 'ի խնդիր Ռուսաց , այլ զի և կամէր առձեռն փա-ռօք վախճան առնել պատերազմին , և չաչս կարևորս պատրաստել օսմանեան պետութեան ։ Շատ հակառակ եկաց խորհրդոյն խանն Թաթարաց Տեվլէթ Քէրէյ , և կոմսն Փոնեաթօվսքի 'ի դի-մաց արքային Շուեդաց , այլ 'ի զուր . և կնքեցան դաշինքն 'ի քսաներորդի երկրորդի աւուր ամսեանն յուլիսի յամին 1711 ։ Եւ պայմանեցաւ , զի արքայն Ռուսաց տացէ անդրէն 'ի ձեռս Օսմանեանց զամրոցն Ազախու , քան-դեսցէ զամուրսն Քամենքա և Սա-մարա , և զհրազէնս նոյն առ Օսմա-նեանս տացէ . զի մի ևս խառնեսցի յիրս Խազախաց . և զի դեսպանք Ռուսաց մի ևս բնակութիւն կալցին 'ի Կոստանդ-նուպօլիս . և զի արքայն Շուեդաց անցեալ գնասցէ անյապաղ և անխափան յերկիր տէրութեան իւրոյ ։ Այս վախ-ճան եղև ահագին պատերազմութեանց պատերազմին մեծի , յառաւել յիշա յաղթականացն՝ որպէս բանից կարգ է ասել՝ քան յաղթելոց ։

Այն ինչ բանակն Ռուսաց 'ի ձայն թմբկաց ամբարձեալ մեկնէր յափանցն

փրուԹայ, եկն եհաս 'ի բանակն Օսմա-նեանց Կարոլոս արքայ Շուեդաց 'ի Պէնտէրայ. կշտամբեաց զվէզիրն մեծ գառն նախատանօք. «Նու զի՞ բնաւ հաներ, ասէ, 'ի ձեռաց զԹագաւորն Ռուսաց, զոր կարող էիր շղԹայակապ ածել 'ի Կոստանդնուպօլիս»: Պատասխանի ետ նմա վէզիրն ցասուԹե-իմն և ասէ. «Նու ո՞ յայնժամ ունէր զտեսչուԹիւն զաշխարհին նորա»: Սրտմտեցաւ Կարոլոս ընդ բանսն, և զոտս արձակեալ պատառեաց խԹանաւ կօշկին զգլօշակ հանդերձից վէզիրին մեծի. և լցեալ նորա նովին բարկուԹեամբ, և 'ի ձի աշտանակեալ դարձաւ 'ի Պէնտէր: Փանեալ Թովքի եկաց մնաց վայրիկ մի ևս առ վէզիրին մեծի, զի Թերևս հաւանեցուսցէ զնա զէն առնուլ վերստին. այլ նորա լուեալ զազդարարուԹիւն ձայնողին յաղօԹս, յարեաւ. և և գնաց առանց բնաւ ինչ ասելոյ:

Աւետաւոր հաշտուԹեանն գնաց 'ի Կոստանդնուպօլիս նա ինքն փոխանորդ վէզիրին Օսմանն աղա, անձն ունելով կատակալուԹեան ինչ պատիւ առնուլ փոխարէն աւետչեաց. այլ խաբեցաւ 'ի յուսոյն. զի Թէպէտ և զառաջինն խնդաց արքայ և ընծայէր քաղաքին, այլ խանն Թաթարաց և արքայն Շուեդաց և այլ Թշնամիք վէզիրին յանդիմանեցին զանարգանս անօգուտ հաշ-

տութեանն. և Ահմէտ արքայ զՕսման մահու պարտ անուանեալ գլխատեաց, և զՊալթաճին աքսորեաց 'ի Լեմնոս, ուր և մեռաւ նա: Իսկ առ Օսմանայ գտաւ և մատանի դշխոյին Ռուսաց և դրամք բազումք:

Կիւրճի Նուսուֆ փաշա, որ զօրավար էր ենիչէրեաց, կարգեցաւ վեզիր մեծ, և էառ զբանակն յԱդրիանուպօլսոյ 'ի Թագաւորական քաղաքն: Կամք այս էին ամենեցուն, զէն առնուլ անդրէն ընդդէմ Ռուսաց. այն զի յապաղէին եւս ազգս կատարել զպայմանս հաշտութեանն. սակայն վեզիրն մեծ դանդաղագոյնս առնէր զհանդերձանս մարտին. ամին խրի արկանա 'ի պաշտամանէ անտի, և ամբարձաւ Ասպաղա Սուլէյման փաշա:

Ընդ այն աւուրս Ահմէտ արքայ նամակ արարեալ առ Կարոլոս՝ ազդ առնէր նմա դառնալ յերկիր իւր ընդ Լեհաստան, և զծախս ճանապարհին յարքունուստ ընուլ խոստանայր: Պատասխանի ետ Կարոլոս նուիրակացն արքունի և ասէ. « Չէ ինձ մարթ մեկնել գնալ աստի մինչև հատուցանիցեմ զպարտս իմ զհազար քսակաց »: Ահմէտ արքայ առաքեաց առ նա հազար և երկերիւր քսակս ոսկւոյ հանդերձ սիրալիր թղթով: Կարոլոս խոստացաւ մեկնել ընդ հուպ, բայց միանգամայն արձակեաց զդեսպան իւր զՖունք յԱդ-

րիանուպօլիս առ. Ահմէտ արքայ՝ խնդրել 'ի նմանէ այլ եւս քսակս հազար · և արքայ հրամայեաց բանտել զՇուէդն ։ Յետ այնորիկ առեան խորհրդոյ կարգեաց արքայ սակս իրացն Կարոլոսի · և գեներալն Լէհաստանէ վճիռ ետ, զի թէ յամառեալ մնասցէ այլ եւս արքային Շուէտաց, արժան է արգելուլ զնա 'ի դխալահօջ 'ի Տիմէթօքա ։ Կարոլոս մարտեգեալ կռուեցաւ արիաբար երեքհարիւր Շուէտօք ընդդէմ վեցհազար Օսմանեանց եւ քսան հազար Թաթարաց · այլ ընկճեալ 'ի բազմութենէ նոցա պատսպարեցաւ 'ի տուն մի փոքրիկ ընդ երից զօրավարաց, և անտի մարտնչէր ընդ որս կամէին ձերբակալ առնել զնա ։ Այն ինչ հուր հարկանէին ինքնին սպասաւորութեամբ 'ի տուն անդր, խթան կօշկացն խոչ նմին եղեալ՝ անկաւ 'ի գետին · և անդէն հասին 'ի վերայ նորա ենիչէրիք քսան, և կապեալ ածին 'ի Տիմէթօքա ։ Եւ այս եղև յամին 1713, 'ի փետրուարի 12 ։ Այս արհամարհանս գնացք զօրականին ընդ Կարոլոսի զայրացոյց զսիրտ նոցին իսկ Օսմանեանց · և Ահմէտ արքայ յայն սակս կոչեցեալ զՏէֆթէր քէհեայ յԱդրիանուպօլիս՝ ընկէց զնա յիշխանութենէն և աքսորեաց 'ի Հռոդոս, և զԳափլան քէհեայ զաքսորեալն անդր յառաջագոյն՝ կարգեաց դարձեալ խան Խրիմու ։ Արդ յիշխանութենէ

բարձին և զգենակեան Նկպէզատէ, և զնոյն ինքն զվէզիրն մեծ, յորոյ 'ի տեղի կարգեաց զծովակալն Խօճա Իպրահիմ անուանեալ : Սա հնարեցաւ բառնալ 'ի կենաց զփեսայն արքայի զԱլի փաշա որ համարձակութիւն յոյժ ունէր առաջի Ահմէտայ · այլ յայտնեցաւ դաւն, և ինքն փախստական նորա գլխատեցաւ 'ի հրամանէն արքայի :

Տամատ Ալի փաշա անցեալ 'ի գերագոյն պատիւ եպետութեան, փութացաւ հաստատեաց զպայմանս հաշտութեան ընդ Ռուսս, և չափ ժամանակի սահմանեցաւ այնմ ամս քսան և հինգ: Այլ դարձոյց զարքայն Շուեդաց յերկիր իւր՝ տուեալ նմա առաջնորդ չաւուշս վեցհարիւր, և պարգևս առաքեալ առ նա վրան մի ոսկեզօծ, սուսեր մի ականակուռ, և ութ երիվարս արաբացիս. և մեկնեցաւ Կարոլոս յաշխարհէն Օսմանեանց յառաջնում աւուր նոյեմբերի յամին 1714, ամս երկուս զայսօրինակ հիւրասիրութիւն գտեալ յօտար երկրի :

Արիութիւն և Ճարտարութիւն նորոյ վեզիրին քաջ գիտաց խափանել և զայնուհետև խռովութեանն յորում էին Եգիպտացիք 'ի վեցից ամաց հետէ . խաղաղացոյց զաշխարհն, կարգաւորեաց զարժանագրամն, և սահմանեաց

զգլխոյ համբարուց ¹ ։ Այլ ցոյցք խաղաղասէր բարուց նորա ոչ ինչ խափան եղեն Օսմանեանց զնորոյ պատերազմ բուռն հարկանել, ոչ ընդ Ռուսս, այլ ընդ Վենետիկեցիս ։

Չորեքտասան պատճառս պատերազմին գտին Օսմանեանք, և ընթերցան 'ի մեծի ատենին․ այլ այն ամենայն յերեսին յայտնի գլուխս բովանդակէր ։ Նախ զի Վենետիկեցիք յափշտակեալ էին նաւ մի զՕսմանեանց, յորում էին գանձք արքունի ։ Երկրորդ, զի 'ի ժամանակի պատերազմին Ռուսաց գրգռեալ իսկ էր Վենետիկեցւոց զբնակիչս Սեաւ լերին 'ի կողմանս Մակեդոնիոյ՝ ապստամբել յՕսմանեանց․ և երրորդ անգամ, զի յոլով ուրեք կազ և կռիւք յուզեալ էին ընդ նաւս Օսմանեանց և Վենետիկեցւոց ։

Ի սկզբան 1715 ամին խաղացին զնայլն 'ի Տաւրոս փաշա բազմութիւնք զօրացն և հանդէս գաւառաց արուեստաւորաց ։ Յամենայն մայրիս եւ ար-

¹ Արժանք Եաւրըզ տեսանելեաւ ամբոյ սահմանեցաւ լինել 107 փող կամ փարա. ամբոծապրոյ դահեկանին 40 փող, ըոը-Բա կամ փարադոյրոյ կոլէջեալ դահեկանին 60 փող. և մէն մի փողոյ 8 խերբեէլ պղնձի ։ Իսկ ձեռն համբարոյ, 10 պաթման կոփոյ 30 փող. նոյնպէս ձէթ՝ 20 փողոյ. նոյնպէս փահլէ 3 փողոյ, և այլն ։

քայ 'ի ձեռս վէզիրին մեծի զդրօշն նուիրական, և անկաւ և ինքն յաւուր ընդ բանակին : Այլ երբև ժամանեցին յԱզբիստուպօլիս, սպարապետն զօրաց վէզիրն մեծ հրաժեշտ կալաւ յարքայէ, և գնաց 'ի Թեսաղոնիկ . որպէս զի անդանօր անցուցեալ զօր սրբոյն Գէորգայ՝ զխտրէլէզն 'ի նոցանէ անուանեալ 1, անցցէ ապա 'ի Պեղոպոնէս, որ է Մօրա : Այլ մինչև մեկնեալ էր բանակին, հմայս հմայեաց ոմանց յաղագս ելից մարտին, ասէ պատմագիրն, և ետես զի յաջողութեան է գուշակ 2 :

Ընդ երկրախուռն բանակին եհաս 'ի Թեսաղոնիկ ընդ ծով և նաւատորմիղն . որում երթեալ ծովակալին որ կոչէր

1 Քանզի Խտըր էլ Խըլըր Իլեաս և զԳէորգ կոչեն նոքա իբրև մի զոք, և զտօնն է սոյն Խտըրն ասեն զօրավորին յորմէ դալարանան մարգք և ծառք ստածանան. և Խտրէլէզն կատարի երրորդ օր ապրիլի ըստ տոմարին Յունաց :

2 Իսկ, ասէ, ըմոպէտն Սեֆաթի անուան մոպէնագրին, որոյ մականուն է՝ Մէհմէտ-իւլ էնվէր. Ենիփաղաշքյէթ, այսինքն է Արեւելք մարգարէական լուսաւորութեանց. և եբաց ըստ դէպ և եգիտ զտեղին յորում գրի. « Ամենայն զճշմարտութեան յորում խորան յարգի. գթով կարեալք ընդ թշնամեաց, զի հնազանդեսցին յետ և հաստատեսցի » :

Ճանըմ Խօճա, էառ զանառիկն Թինէ երկերիւր առնն քրիստոնէից խաղացոյց վարեաց յեգերս Ափրիկեցւոց աշխարհին, և զերեսուն և հինգ թնդանօթան ասպարեալս բաշխեաց 'ի հնգետասան նաւս տորմղին: Ի Թեբէ աւեան խորհրդոյ կարգեաց Ալի փաշա. արձակեաց զկուսակալն Ամդայ զԳարա Մուստաֆա քառասուն հազարաւ առնուլ զամրոցն Մոռա, և ինքն յառաջեալ մնեցաւ 'ի Պեղոպոնէս ընդ պարանոցն Կորնթոսի: Յերկարեալ ձգեցաւ պաշարումն Կորնթոսի ցամիս երիս. և 'ի վերջէ այն ինչ պատրաստեալ էին քան հազար էնիչէրիք և երկու հազար սպայք յարձակել 'ի վերայ, բացին Վենետիկեցիք զդրունս ամրոյն՝ պայմանաւ մեկնելոյ անտի բերդականացն առանց ինչ վնասու: Սակայն 'ի բորբոքել յանկարծ համբարանոցի վառօդոյն՝ զայրացան Օսմանեանք և ընթացան յասար և 'ի յափշտակութիւն քաղաքին, և սուր 'ի վերայ եդեալ կոտորեցին զՅոյնս և զՎենետիկեցիս առ հասարակ. և քաղաքապետն ինքնին 'ի գերութիւն վարեալ, ապա գնեցաւ 'ի Զմիւռնիա [1]:

Ի լուր առմանն Կորնթոսի անձնա-

1 Պատմագիրն Օսմանեանց Չէլէպի Բարբէ-րէլոյ լաւագոյն ըմբերդակալն արժանէ. Իսկ Վենետիկեցւոյն ընդդիմասիրեն:

տուր եղեն և բնակիչք Եգինեայ և Արգոսի: Յետ այնորիկ յերկուս բաժանեցաւ բանակն Օսմանեանց. մի կէս նոցա երթեալ պաշարեաց զամրոցն որ 'ի վերայ փալամիտի լերին կայ 'ի թիկանց կուսէ քաղաքին Նէապօլսոյ, այն իսկ է Նափոլի տի Ռոմանիա, և միւսն գիմեաց 'ի վերայ բուն քաղաքին: Յառաջնոյն վերայ արձակեաց վեզիրն զԹիւրք Ահմէտ փաշա և զկողմնապետն եւրոպեան, և յերկրորդին զՍարը Ահմէտ փաշա և զզօրագլուխն Ենիչէրեաց. և լիաձեռն գրամս ճապաղելով արկանելոցն՝ խրախուսէր մեծապէս զմարտիկսն: Հազար և եօթնհարիւր էին զօրք Վենետիկեցւոց յամրոցին, և զաւուրս ութ մեծաւ քաջութեամբ պնդեալ կալան պաշարմանն. այլ զի Յոյնք չկամէին մարտ դնել ընդ պաշարիչսն, և զերծանել մահուանէ խնդրէին 'ի պետութենէ Վենետիկեցւոց, առաւ ամուրն, ապա և քաղաքն՝ մատնութեամբ Յունաց: Սակայն և մանկտին անկան 'ի սուր Օսմանեանց, և եպիսկոպոս քաղաքին հանդերձ պաշտօնէիւք. և քաղաքն տուաւ յաւարի, և լցան լիացան հարիւր և քսան հազարքն 'ի ճոխութենէ անտի. մինչև յոլովից 'ի նոցանէ մթերել տասն և քսան քսակս արծաթոյ: Գտան 'ի քաղաքին և թնդանօթք բազումք պղնձի և երկաթի, և վառօդ և կապար, և ռումբ և գնդակ: Նմին իսկ

Աճմէտ արքայ տուեալ զաւետիս յաղթանակին մինչդեռ կայր 'ի Տէափոխթ եայլաղը, եկն 'ի Նէապօլիս, և զեկեղեցին փոխեաց դարձեալ 'ի մզկիթս, և զզօրավարսն պատուեաց պատմուճանօք:

Ի վերջ կոյս ամսեանն յուլիսի պատուէր ընկալաւ ծովակալն գնալ նաւատորմաւն հանդերձ 'ի Կորոն. իսկ զէնք և մեքենայք պաշարմանն Նէապօլսոյ ածան 'ի Մէդոն: Լուր եղև եթէ չէն կամք Վենետկեցւոց ամրանալ 'ի Կորոն և 'ի Նաւարին, և թէ փախուցեալք 'ի դղեկաց անտի և ամրացեալ են 'ի Մէդոն. այնմ իրի և պատրաստեան խաղացեալ անդր ամենայն բանակաւն զաւեղի կալաւ 'ի դաշտին մեծի որ ընդ մէջ կայ Կորոնի, Նաւարինայ և Մէդոնի: Ծովակալն Վենետկեցւոց դէտակն 'ի վեր առեալ՝ ետես զի նաւատորմն Օսմանեանց խաղայր դայր 'ի Մէդոն: Անդէն խորհեալ վերացուցեալ խոյս ետ ամենայն նաւուքն 'ի նաւահանգստէ անտի, ուր էին եմուտ անհակառակ նաւատորմին Թշնամեաց: Այդ արարեալ Ալի փաշա յամուրն՝ տալ զայն 'ի ձեռս խաղաղութեամբ. ապա թէ ոչ՝ տայր, անդադար ապաշաւ ձեր յանօգուտ ձեզ եղիցի: Եւ զօրագլուխն Վենետկեցւոց փութա ոչ ինչ յանձն առեալ զառաջարկութիւնն, 'ի մարտ պատերազմի պատրաստեցաւ:

Պաշարեցին Օսմանեանք զՄեթոն յերրորդում աւուր ամսեանն Օգոստոսի, և պատնէշս և հողաբլուրս կանգնեալ շուրջանակի՝ անդէն 'ի ներքս տարան սաստիկ հրաբորբոք ռմբոց. և պաշարեալքն ոչ ինչ ընդդէմ 'ի նոցանէ հրաձիգ եղեալ 'ի վերուստ անտի պարըսպացն, զխրամս պատնիշաց գփակամբք պաշարողացն լնուին: Զաւուրս երիս անեաց ձգեցաւ մինչեգին պատերազմն. և 'ի չորրորդում երեկոյին յանձնարս մնեալ Վենետկեցւոց՝ բացին կանգնեցին 'ի մարտկոցին վերայ դրօշ սպիտակ 'ի նշան հաշտութեան: Զայն իբրև անսին Օսմանեանք, անդէն դունդադունդ եղին զեղան յիւրաքանչիւր պատնէշաց զօրէն մրջմանց զեռացելոց 'ի մրջնարանէ մեծէ. և ձայն բարբառոյ աղաղակի նոցա զպարիսպս քաղաքին առ հասարակ սասանեցուցանէր: Արձակեցան երկուստեք պատանդք զգուշութեան երկու. և պատգամաւորք Վենետկեցւոց անցին առ սպարապետն Օսմանեանց հանդերձ պայմանօք հաշտութեանն: Եւ զի տարաժամեալ էր օրն, պատգամաւորքն անդէն երեկօթս արարին 'ի բանակին, և զգոյդն լուեալ պատերազմին սատի և անտի: Իսկ յառաւօտուն պահու բացէ 'ի բաց մերժեալ վէզիրին զպայմանսն՝ հրաման ետ զինու զօրութեամբ փութալ յառնուլ քաղաքին. ապդելան պատաշամաւորքն

'ի բանակին, և Օսմանեանք ձեռն արկին անգրէն մարտնչել ընդ բերդականսն : Յայնժամ առաջնորդեալ զօրավարին Վենետիկեցւոց, պատուէր 'ի վերայ եդ ամենեցուն՝ մի բնաւ զէն առնուլ. այլ ունէր եթէ գուցէ ավիմբ զերծուսցէ զբնակիչս քաղաքին 'ի կոտորածէ Օսմանեանց. այլ 'ի զուր : Զէնընկէց եղեն ամենեքեան առ հասարակ, և երթեալ զօղեցին թաքեան իւրաքանչիւր յանծանօթ վայրս, 'ի տարերկրեայս, 'ի գուբս, 'ի շամարանս, յառաստաղս, 'ի գոմս և յաշտարակս. և չերևէր 'ի մէջի և ոչ ոք : Քանզի ձիգս վերակնեալ տեսին զարմացմամբ Օսմանեանք, զի չկայ ոք 'ի վերայ պարսպին. ոչ ռումբք արձակին, և ոչ ձայնք լսին. խրախոյս բարձեալ մխեցան 'ի խրամն, կանգնեցին սանդուղս, և 'ի վեր ողողեալ ոխերցին պարսպացն. անտի իջեալ բացին զդըրունս բերդին, և խուռն բազմութիւն զօրականացն հեղեղաբար դիմեաց 'ի ներքս սուսերամերկ՝ գերել գերփել աւար հարկանել, և զինացեալսն 'ի սուր և 'ի հուր մաշեալ սպառել : Ընդ եր տեսանել զարշաւանսն ընթացս միոյ միոյ 'ի մոլեգին զօրականէն, որ խլեալ զերամս արծուեաց խոյացեալ սրանէին հանէին յանմարդաձայն քաղաքին յիւրաքանչիւր թաքստենէ զկենդանեայն դիակնացեալ բնակիչսն եղկելիս, և

ձեռն 'ի ձեռն կապեալ վարէին տանէին 'ի բուն բանակն, և զոմանս անգէն առեալ չարաչարս տանէին : Իսկ վեզիրն մեծ բազմեալ յիւրում վրանին, ընդ միոյ միոյ քրիստոնէի զոր կենդանւոյն ածէին առ նա՝ երեսուն դահեկանս առատաձեռնէր գերողացն, և ապա զչարիւ_ րոց հարիւրոց գլուխս միանգամայն տայր հատանել առաջի աչաց իւրոց : Գթասրտագոյն դատաւ քան զնա ծովակալն Ճանըմ խոճա, որ զզօրավարն Վենետկեցւոց զփասթա ոչ միայն զերծոյց 'ի ձեռաց գերեվարացն, այլ և մեծապէս պատուաւորեաց զնա, որպէս և զայլս ոմանս 'ի զօրագլխաց : Եւ առաւ Մեթոն յեօթնևտասներորդի աւուր ամսեանն օգոստոսի յամին 1715[1] :

Ահմէտ արքայ 'ի Սէրեզ էր յորժամ ընկալաւ զաւետիս առմանն Մեթոնի, և գոգցես զամենայն քաղաքացն Մորայի, և դարձ արարեալ յԱդրիանու_

[1] Զափոյգ նկարագիր առմանն Մեթոնի աւանդէին մեզ բարեյիշատակ հայրն մեր Յոհան վարդապետ Թոսլայեան և Ղազար վարդապետ Անեցի, որ յետ ազատեալ լինելոյ ամենայն անոյց քաղաքին՝ գերեցան և յՕսմանեանց և վաճառեցան քրիստոնէից, և դերծեալ 'ի բազմադէմ արկածից հասին 'ի Վենետիկ, ուր վաղագոյն ապաստանեալ էր երջանիկ նախահայր մեր Մխիթար աբբայ իւրովք նախնի աշակերտօք :

պօլիս կատարեաց հանդէս մեծ ուրախութեան : Առաքեաց և առ Ալի փաշա Թուղթ գովեստից և սամուրենիս և սուսերս ականակուռս՝ վասն նորա և վասն այլոց զօրապետաց : Միայն 'ի կողմանս երկրին Անատօլուաց և Դամասկոսոյ արիացան Վենետիկեցիք՝ առաջնորդութեամբ քաջի սպարապետին Էմոյի, և զդէմ կալան Օսմանեանց : Եւ յամսեանն դեկտեմբերի Տամատ Ալի փաշա ցրուեալ զբանակն յիւրաքանչիւր տեղիս, դարձաւ յԱդրիանուպօլիս մեծաշուք հանդիսիւ յաղթանակի :

Փեսայ գոլով արքայի և պատուասիրեալ յոյժ 'ի նմանէ, խրոխտացաւ Ալի փաշա ևս քան զևս առմամբն Պեղոպոննիդայ, որպէս ասէ պատմագիրն օսմանեան. բազում ինչ բարեկարգեաց 'ի կարևորաց, և բազում խստութեամբ վարեցաւ ընդ յանցաւորս : Ի պատուհասեալն առ 'ի նմանէ 'ի ժամանակին յայնմիկ՝ համբաւեալ է պարսիկն ուստանուն Շահարաս Գ. որոյ եկեալ 'ի Կոստանդնուպօլիս, ասէր թէ որդի իցէ շահ Սիւլէյմանայ և եղբայր շահին Պարսից Հիւսէյինայ : Կարգեաց նմա պետութիւնն ռոճիկ յամեան երկերիւր դահեկանաց, և ետ նմա տեղի բնակութեան նախ 'ի Մելիտինէ և ապա 'ի Լէմնոս. այլ նորա խոյս տուեալ անտի 'ի Պօղօզ, ժողովեաց զիւրև ասր

որինկայս հազար մի, և նոքօք հանդերձ տիրապետել ձեռնարկէր 'ի գաւառին. և ժողովուրդն կախեալ կայր զնմանէ որպէս զառնէ հզօրէ, զի և կախարդ ամարլէին զնա և դիւթ, և կարող հրաման տալ օդոց անդամ: Սակայն վաղ ընդ փոյթ ձերբակալ եղեալ դըւ-խառեցաւ, և խայտառակեցան պատ-րանք նորա:

Ոչ ինչ նուազէր խռովութիւն վէճիցն մեծի և առ հպատակս եւրոպական պետութեանց: Զի 'ի բողոքել առ նո դեսպանին Անգղիացւոց և խնդրել իրաւունս վասն ծերունւոյ թարգմանին իւրոյ գանակոծ եղելոյ 'ի տանէ ու-մեմնէ, ետ պատասխանի վէզիրն և ասէ. « Յորժամ մահմետական ոք գանիցէ զայր քրիստոնեայ, և ոչ ինչ կարող իցեմ առնել »: Ասէ ցնա դեսպանն. « Այլ զնոյնպիսի գնաչօ տաճկացդ ընդ մերումն ի տախտն մեծ լիցի աուրբեառնիկ վաճա-ռաշահութեան մերում »: — « Ոչ ինչ պէտս ունի, ասէ նա, օսմանեանս տէրու-թիւն Անգղիացւոց վաճառականու-թեան. եթէ դուք մեկնեսջիք, այլք 'ի տեղի ձեր փոխանակեսցեն. սակայն և դուք մեկնիքս ոչ »: Եւ Յովհաննէս Նաւուն թարգման Վենետկեցւոց 'ի Կոստանդ-նուպօլիս՝ հանեալ 'ի կախաղան, փո-խանակ զի նամակագիր լինէր զերայց օսմանեան պետութեանն առ սոսա:

Այլ դարձցուք 'ի մեծ եւ թշնամու-

թիւնս վէզիրին ընդ քրիստոնեայս հան-
դերձ աշխարհախումբ բանակօք ։

Անդստին 'ի սկզբանէ պատերազմին Պեղոպոննիդայ արձակեալ վէզիրն առ Նուգինէոս Սավոյացի 'ի Վիեննա զԽպրահիմ Միւթէֆերրիգա հանդերձ թղթով յորում ասէր ․ «Այն ունիմ զի Աւստրիականդ պետութիւն ոչ ինչ ընաւ խառնեսցի յիրս առաջիկայ պատերազմիս, որպէս չխառնեցաւ և 'ի Ռուսացն»։ Զհետ չորից ամսոց դարձ արար Իպրահիմ 'ի Կոստանդնուպօլիս, ածեալ և թուղթ յՆուգինեայ՝ յորում յայտ առնէր նա զկամս Աւստրիոյ, զի էր միջնորդ հաշտութեան կալ ընդ Օսմանեանս և ընդ Վենետկեցիս ․ այլ այն թուղթ և կայց մնաց անպատասխանի ։ Այսպ 'ի միւսում ամին, որ էր ամի 1716, իբրև նորոգեալ հաստատեցին Աւստրիականք և Վենետկեցիք զդաշինս նիզակակցութեանն որ կայր 'ի միջի, գրեաց Նուգինէոս միւս ևս թուղթ առ Ալի փաշա, որով յուշ առնէր նմա զպայմանս դաշանցն կնքելոց 'ի Քարլովից, և ստիպէր դարձուցանել 'ի Վենետկեցիս զփոխարէնս վնասուցն զորս կրեալ էր նոցա ։

Յայնժամ կարգեցաւ յԷյուպ ատեան մեծ խորհրդոյ, յորում ժողովեցան ամենայն պետք զինուորականաց և զօրականաց ։ Անդ ընթերցաւ նախ րէիս էֆէնտին զյայտարարութիւն

պատերազմին, զյօրինեալն 'ի վէզիրէն. և ասէր նա 'ի նմա, եթէ ոչ ինչ ոչ պայմանեցաւ 'ի Քարլովիչ՝ որ հարկիցէ զկայսրն Գերմանացւոց յօժանդակութիւն Վենետկեցւոց, և թէ պարտ և արժան է արդ խաղալ 'ի վերայ նոցա 'ի մարտ պատերազմի. և յաւել ևս առել բանիւ բերանոյ, եթէ այր վատ է որ խորշեսցի 'ի կարևոր և 'ի շահաւէտ խորհրդոյ առաջի: Հաստատեաց դեսպանն զխրատուն բանից վէզիրին, և այլ ատենակալք յակամայ կամս հաւանեցան ընդ խորհուրդն, զի մի զանուանն վատութեան յանձինս ձգեսցեն: Դարձեալ առեալ կազմեցաւ յայլում աւուր 'ի Տաւուտ փաշա, ուր և արքայ ինքնին գտաւ առաջիկայ. և հաստատեցաւ 'ի խորհրդի անդ, զի վէզիրն մեծ անձամբ 'ի գլուխ կացեալ բանակին՝ խաղասցէ ընդդէմ Գերմանացւոց 'ի Պէլկրատ, և ծովակալն Ճանըմ Խօճա և կուսակալն Ամղայ Գարա Մուստաֆա փաշա դիմեսցեն ընդ ծով առնուլ 'ի Վենետկեցւոց զԿորֆիւրա, որ է Քորֆու:

Մինչև յուղի անկեալ բանակին, հրաման արար վէզիրն դեսպանին Գերմանացւոց՝ ելանել ընդ իւր 'ի Ճանապարհ, և ետ 'ի ձեռս նորա զպատասխանի թղթոյն Եւգինէոսի լի բանիւք խստութեան. և կնիք բանիցն այսպիսի իմն էր. « Իսկ արդ յորժամ դարձեալ

զհաշտութենէ բանք լինիցին, զնմանդ-
հնար իցէ հաստատ ընծայել ձերոցդ
բանից. և իցէ՞ օրէն անուանեալ պե-
տացդ քրիստոնէից յայսպիսիս զառա-
ծանել գործել գործս անարժանու-
թեան: Քաջ է ապա. առ... հաստա-
տեսցէ ընդ մեզ և ընդ ձեզ. և
թէ տեառն կամք իցեն, հաստուցանէ
բարեաց եղիցի անշուշտ մեծի գլխոյ
զգօնութեան, և արժէնն հեղեալ երկ-
տասանք՝ ծանրանալով ծանրագին յա-
նէծս մինչև ցօր կատարածի աշխարհի
'ի վերայ ձեր և 'ի վերայ որդւոց ձերոց,
և 'ի վերայ որդւոց որդւոց ձերոց: Կոր-
ծանումն և կորուստ եղիցի բաժին
ձեր »: Եւ 'ի կողմանէ Թղթոյն նշա-
նակէր, եթէ փոխանակ զի յանցեալ
պատերազմի դեսպանն Օսմանեանց
արգելեալ էր 'ի Գամուրուն, և այժմ դես-
պանն Գերմանացւոց արգելցի առ սուրս
լինչ 'ի Պերկլրաստ:

Ի փիլիպպէ ժամանեալ 'ի բանակն
արքունի խանն Թաթարաց՝ յայս առ-
նէր եթէ վասնդ է 'ի սահմանս աշխար-
հին Լեհաց յերեսաց յարձակման
Ռուսաց. վասն որոյ հարկ է ինձ տալ՝
անդէն պահ ունել երեսուն հազարաւ,
և արս տասն հազար ևեթ այսր արձա-
կել: Ի նմին ելլին հասին Սարք Ահմէտ
փաշա կողմնակալեան Սերրայայ, Ահմէտ
փաշա կուսակալ Կարնոյ, և բդեաշխք
Կեսարիոյ և այլոց գաւառաց, և 'ի

Ղրիմ, եղբայր խանին Սէլամէթ Քէրէյ
տասն հազարաւ։

Հասեալ 'ի Պէլկրատ, հանդէպ ա-
րար վէզիրն ամենայն զօրուն. ապա
մեծաւ շքով և թնդմամբ հրազինուց ա-
րար զմուտ իւր 'ի քաղաքն ամուր։ Խոր-
հուրդ կալաւ ընդ զօրավարաց զօրուն
եթէ յո՞ նախ ուղ արժան իցէ առնել.
'ի Դալմըչվա՞ր եթէ 'ի Վարատին։ Հիւ-
սէյին աղա զօրագլուխ Ենիչէրեաց
ասէր գնալ 'ի Դալմըչվար. Սէլամէթ
Քէրէյ՝ ապաստանէլ 'ի Թրանսիլվանիա,
և Սարը Ահմէտ՝ երթալ պաշարել զա-
մուրն Վարատին. և այս խորհուրդ
հաստատեցաւ յամենայն անդ։ Ազդ եղև
Օսմանեանց եթէ հնգետասան հազար
երդականք են յամփին, և թէ 'ի նոյն
կողմանս գտանի և բանակն Գերմանա-
ցւոց ընդ առաջնորդութեամբ Եւգի-
նէոսի Սավոյացւոյ։ Անդէն գործա-
ւորք չորեքհազար՝ կամուրջ արկին 'ի
վերայ Սաւա գետոյ, և անց բանակն
յայնկոյս. և իբրև եհաս հանդէպ Վա-
րատինայ՝ հրամայեաց վէզիրն պարզել
և կանգնել զդրօշն նուիրական առաջի
իւրոյ վրանին. զի անդ Ճակատեալ
կայր և Ճամբարն Գերմանացւոց։ Զա-
ւուրս երկուս ապատեալ մնացին Օսմա-
նեանք սպասելով պատերազմին. և
յերրորդումն, որ օր հինգերորդ էր
ամսեանն օգոստոսի, վաղ քաջ ընդ ա-
ռաւօտն պատրաստեցաւ Եւգինէոս

սկիզբն առնել ճակատամարտին ։ Ութ-սուն և ութ էին փաշայք հեծելազօ-րուն Գերմանացւոց , և գունդք հե-տեւակացն վաթսուն և երկու ․ 'ի ձախոյ թեւէ բանակին էր ճահիճ մեծ , և յաջ-մէ լերինք սեպացեալք ։ Իսկ Օսմա-նեանք հարիւր և յիսուն հազարք էին․ քառասուն հազարք 'ի նոսա ենիչէրիք , և երեսուն հազար սպայք ․ և այլքն խառնամբոխ մարտիկք Թաթարաց Վլախաց , Արնաւուտաց և Եգիպտա-ցւոց ։ Յաջում թեւի կարգեաց եդ Ալի փաշա զայրուձին ընդդէմ հեծելազօ-րուն Գերմանացւոց , որոց սպարապետ էր Փալֆի ․ իսկ 'ի ձախումն և 'ի միջա-վայրին կարգեցան հետեւակամարտք ։ Ժամ էր երկրորդ առաւօտու պահուն, և սկիզբն եղև պատերազմին ․ այն ինչ զօրանայր կողմն Գերմանացւոց , ենի-չէրիք վանեցին 'ի ձախում թեւի զհե-տեւակ զօրականս նոցա ։ Երկուքումանք 'ի զօրավարացն Գերմանացւոց կարե-վէր խոցեալք անկան 'ի տեղւոջն ․ և երրորդն՝ որում անուն էր Պոնվալ՝ մարտ եդեալ կռուեցաւ երկերիւր ա-րամբք, և 'ի կոտորել սպառել նոցա՝ քան և հինգ զօրականօք ապաստանեաց զճամբար Օսմանեանց և դերծաւ 'ի փախուստ ։ Յայնժամ հրաման ետ Եւգինէոս հեծելազօրու ձախոյ թեւին փութալ յօգնութիւն աջակողմանն որ 'ի պարտութիւն մատնէր ․ և այրուձին

Օսմանեանց պատահեալ ընդ առաջ սոցա, և ոչ ևս կարացեալ 'ի Թիկունս հասանել ենիչէրեաց, 'ի փախուստ աճապարեցին : Ցայն վայր վէզիրն մեծ Տամատ Ալի փաշա կայր մնայր արձանացեալ առ. դրան վրանին իւրոյ ընդ նուիրական դրօշուն . այլ իբրև անկաւ սպարապետ Ճախոյ թևին՝ կողմնապետն Ալիոյ Թիւրք Ահմէտ, և սպայք և զինակիցք դէմ փախստի արարին, թէպէտ և որ շուրջն կային զնովաւ՝ սուսերօք և խարազանօք արգելուլ զփախստեայսն կամէին, բայց անսայր և ոչ որ : Տագնապեցաւ վէզիրն 'ի խռովութեան պահուն . և այն ինչ խորհէր և ինքն լինել Թիկնադարձոյց, հարաւ 'ի ումեք ուստեք 'ի Ճակատն և անկաւ : Անդէն բարձին զնա իւրքն և եդին յերիվար և տարա 'ի կառս, և տարան 'ի Գարլովից, և անդ փչեաց նա զոգին : Իսկ համարակալն Մէհէմմէտ, բէկիս էֆէնտին Մուստաֆա, և պատմագիրն Րաշիտ էֆէնտի, որ զնուիրական դրօշուն կային, յափշտակեալ առին զայն փութանակի և փախուցեալք անկան 'ի Պելկրատ : ... և այդ եղև այս ամենայն 'ի Թևն աջոյ, որոյ սպարապետ էր կողմնապետն Եւրոպական Սարը Ահմէտ, ենիչէրիք ևս խոյս տուեալ մեկնեցան 'ի Պելկրատ : Այս վախճան եղև պատերազմին Վարատինու, որ տևեաց

ժամս հինգ. և անկան 'ի Գերմանացւոց արք երեք հազար, և յՕսմանեանց վեց հազար: Իսկ 'ի բանակին անդուոջ գտին Գերմանացիք Թնդանօթս չորեքտասան, դրօշս հարիւր և յիսուն, ձորս ձիոց հինգ, և Թմբուկս վեց. և զվրան վեզիրին: Ի վաղիւ անդր եղաւ գիւտն 'ի գաւԹի մզկԹին սուլդան Սիւլէյմանայ 'ի Պեշկերտ. զորոյ զգագաղն յանցանել ամաց եօԹանասնից տարւոյ Լաւատն փոխաւոր Գերմանացւոց 'ի Վիեննա: Նոյնպէս զուարճացաւ 'ի կենաց յաղԹականն Պեզգաղոննիդայ Տամատ Ալի փաշա, որ Թէպէտ և քաջ աստեղագէտ զանձն ցուցանէր, այլ աչք մտաց նորա մԹագնեալ էին՝ առ է Բաշիտ էֆէնտի՝ 'ի խոր ամբարտաւանուԹենէ:

Ժողովեցան աւագորեարն 'ի վրան նուիրական դրօշուն, և խորհուրդ 'ի մէջ առնուին, եԹէ զինչ պատճառս պարտուԹեանն առաջի արասցեն Թագաւորին, և որպէս. և Թէ զո՞ ոք ընտրեսցեն առ ժամայն ապարապեալ բանակին: Ասէին ոմանք եԹէ հեծելազօրն ԹշնամեաՅ յարձակեցան Թափով 'ի վերայ նուիրական դրօշուն, և չէր ոք որ պաշտպանէր նմին. այլ սպայք և զինակիրք՝ որոց յանձն էր խնամք զգուշուԹեան դրօշուն՝ բազումք կալան ընդդէմ ամբաստանուԹեանն: Այլք արկին ոմանք զնման զենիչէրեօք. սակայն և սոքա խոռխոտագոյնս ընդդէմ զինեցան

առարկուածոյն: Որ ուրեմն այս բանք հաստատեցան յատենին, եթէ ամենեքին եւ հաւատարմութեամբ լցեալ էին զպարտս պաշտաման իւրաքանչիւր, եւ բովանդակ միտան ոչ այլոյ ուրուք էր, եթէ ոչ մէջլիսին մեծի :

Յաւուր չորրորդի զկնի Ճակատամարտին լուաւ արքայ 'ի Կոստանդնուպօլիս զգործ պարտութեանն, եւ ոչ ինչ կարի խռովեալ՝ առաքեաց անդէն զկնիքն արքունի առ Խալիլ փաշա կուսակալ Պելկրատու : Իսկ ապարապետն Գերմանացւոց Եւգինէոս պաշարեաց զամուրն Դըմըշվար, որ մի միայն պատուար էր Օսմանեանց յայնժամ յերկրին Մաճառաց. եւ 'ի գլուխ քառասուն եւ չորից աւուրց էառ զայն, հրաման տուեալ ամբոխանացն ելանել գնալ 'ի բաց՝ ուր կամիցին : Եւ անտի յառաջ խաղացեալ՝ տիրեաց եւ Եաշ եւ Պուքրէշ քաղաքաց, եւ ապա եկեալ պաշարեաց զամուրն Պելկրատ. զի եւ պատուէր ունէր 'ի կայսերէն մի ինչ անսալ բանից հաշտութեան մինչեւ տիրապետեալ Պելկրատու :

Գործ պարտութեան Օսմանեանց առ Վարատինաւ՝ կքոյց զձեռս պաշարողացն զՔորֆու. որոյ վասն եւ արքս 'ի պարտութիւն մատնեալ փախեան յերեսաց Վենետկեցւոց, որք հետապնդեալ տիրէին եւ այլոց քաղաքաց 'ի Դալմատիա եւ յԱլպանիա : Ծովա-

ալեան Ճանըլըմ խոճա՝ կոչեցեալ 'ի Կոս-տանդնուպօլիս՝ արկաւ 'ի բանտ յԵտի գուլէ , փոխանակ զի ոչ էր Թաքուցեալ 'ի զօրականէն զդոյժ պարտութեան երկրախուսմբ բանակին . ըստ նմին և խանն Թաթարաց արկաւ յիշխանութենէ , փոխանակ զի չեկն յօգնութիւն մեծի պատերազմին :

Յայնմ՝ հետէ յամին 1717 դարձեալ կազմեցան Օսմանեանք 'ի մարտ պատերազմի : Հրաման ետ Ահմէտ արքայ հալել ձուլել զանօթս որ էին 'ի գանձն արքունի՝ արծաթոյ լոտերս իբրու հազար , և դրամ հատանել : Եւ վեզիրն մեծ խաղաց գնաց յԱդրիանուպօլսոյ 'ի Նիշ և անտի 'ի Պելկրատ , և արքայ 'ի Սոֆիա :

Յառաջնում աւուր ամսեանն օգոստոսի երևեցաւ բանակն Օսմանեանց հանդէպ Պելկրատու . ութսուն հազարք 'ի նոցանէ ենիչէրիք էին , տասն հազար ասխականք , նոյնչափ վարձաւորք , քսան հազար սպայք և երեսուն հազար Թաթարք , և որ 'ի Պելկրատն էին՝ ոչ ինչ նուազ էին քան զերեսուն հազար : Ընդ դրօշաւն Եւգինէոսի մարտնչէին կամաւոր բազում այլք ականաւորք գերմանացիք և գաղղիացիք , և փութային վաղվաղակի Ճակատ առնել և զպատերազմին վճարել . այլ վեզիրն մեծ զաւուրս հնգետասան ժամանաճառ եղև խորհուրդ հարցանելով ցա-

ադորեալն, և 'ի վախճանի ոչ անսաց ոչ միումուք։ Յայնժամ Եւգինէոս սկիզբն արար մարտին, և Գերմանացիք մեծաւ համարձակութեամբ պատերազմեալ առին զպատնէշ մի ձախոյ թևին Օսմանեանց, և զհրաձգէնն ընդդէմ նոցին ուղղեալ վանեցին զնոսա. խորտակեցաւ և աջ թևն Օսմանեանց, և առ հասարակ 'ի փախուստ անձապարեցին։ Տասն հազար Օսմանեանք տապաստ անկան 'ի տեղւոջն, և տասն հազարք վիրաւորեցան. և 'ի քրիստոնէից անկան արք երկու հազար 'ի սուր անկան, և երեք հազարք կարեվէր խոցեցան, ընդ որս և Եւգինէոս ինքնին՝ որ վաղ բուժեցաւ։ Թնդանօթք հարիւր և յիսուն անկան յաւար թշնամեաց, ուղտք յիսուն հազար, տակառք վառօդոյ վեցհարիւր, դրօշք յիսուն և մի, և ձորք և թմբուկք, և վրանն վեզիրին մեծի։ Ի վաղիւ անդր առաւ խաղաղութեամբ Պելկրատ, և ամրականքն ելին մեկնեցան 'ի ձայն թմբկաց և 'ի դրօշս պարզեալս։

Իբրև այդ եղև արքային գոյժ առմանն Պելկրատայ, բարկացաւ 'ի վերայ Խալիլայ, և զկնիքն արքունական առեալ 'ի նմանէ տայր ցանեզապահն Տամատ Իպրահիմ փաշա. այլ սա չէառ յանձն առ ահի ձախող հանգամանաց ժամանակին. և ընտրեցաւ Նիշանճի Մեհէմմէտ փաշա։ Սակայն քանզի

ձայնք հաշտութեան լսելի լինէին այնուհետեւ յամենայն կողմանց, անդապաշն Իպրահիմ մտերիմ գոլով արքային՝ ոչ եւս հրաժարէր 'ի գերագոյն պատուոյ անտի, եւ Նիշանճին անդի եւ ամա : Եւ Ահմէտ արքայ յաւուր միում հինգշաբաթի 1 առաքեաց առ նա փոխանակ ոսկի կնքոյն՝ որ նշանակ է իշխանութեանն մեծի, կնիք զմրխտեայ՝ յորոյ վերայ քանդակեալ էր նշանագիծ անուան իւրոյ : Այն օր իններորդ էր մայիսի յամին 1718 :

Սկսաւ յայնմհետէ նորընտիր վէզիրն 'ի խնդիր միաւել հաշտութեան ընդ Գերմանացիս, եւ ոչ եւս անլուռ լինել խաղաղարար բանից դեսպանացն Անգղիացւոց եւ Հոլանտացւոց . սակայն եւ ոչ յետս կասէր 'ի զօրաժողով պատրաստութենէ, զի մի գուցէ անկազմ գտանիցին Օսմանեանք 'ի չյաջողել հաշտութեան :

Զիջան Գերմանացիք 'ի հաշտութիւն խաղաղութեան, այլ պայմանաւ չհանելոյ 'ի ձեռաց զՊելկրատ, եւ զմասն մի երկրին Վլախաց : Արձակեաց վէզիրն 'ի կողմանէ դրանն արքունի զդինակիրն Իպրահիմ փաշա, եւ զՄէհէմմէտ էֆէն-

1 Քանզի Գ է հինգշաբաթին 'ի [illegible]

տի զմականուանեալն Եփրեմեքիզ Չելէպի ․ 'ի Վենետկոյ առաքեցաւ կամն Թալման և իշխանն Վիրմինտ, և 'ի Վենետկոյ առաքեան Ռուզզինի․ տեղի ժողովոյն սահմանեցաւ լինել աւանն Փասարովից՝ որ է 'ի վերայ Մորաւա գետոյ մերձ 'ի Դանուբ։ Դուլ եղև զինուցերկուստեք, և սկսաւ ժողովն 'ի հինգերորդի աւուր ամսեանն յունիսի․ և յետ երկամսեան ժողովոյ և բազմապատիկ վիճաբանութեանց՝ ուուրեմն 'ի 21 յուլիս ամսոյ հաստատեցան պայմանք հաշտութեանն․ արձակեցան անդէն հրամանք 'ի նշան ցնծութեան, և ժողովականքն մատեան 'ի համբոյր խաղաղութեան։ Ըստ սմին հաշտութեանց մնացին Պելկրատ և Սէմէնտրէ 'ի ձեռս Գերմանացւոց հանդերձ այլ ևս քանի ինչ ամրոցօք որ զԴանուբաւ, և Օսմանեանք խոստացան խափանել զաւազակութիւնս հինիցն Ճէզայիրոյ և Տրապօլսոյ, և հեռացուցանել 'ի սահմանաց իւրեանց զԹաթարսն և զայլ Մաճառս ընդվզեալս 'ի կայսերէն։ Պահանջէին Վենետկեցիք անդրէն ըզՄօրէա․ այլ ընկալան միայն զամուրս ինչ Դալմատիոյ, և զկղզին Չերիկօ․ և սահմանեցին ժամանակ հաշտութեանն մեծի ամս քսան և չորս։

Յամսեանն օգոստոսի մեկնեցաւ վէզիրն 'ի Սոֆիա քաղաքէ գնալ Ադրի-

անուայօղլիս ։ Սենեքարեան ալքունի գնաց ընդ առաջ նորա մինչև ցՊաղարձրդ, և մատոյց նմա դաշոյն ականակուռ և սամոյրենի և նամակ յարքայէ ։ Ինքն իսկ Ահմէտ արքայ 'ի ձի աշտանակեալ ընդառաջեաց վէզիրին մինչև ցմղոնաչափ մի Ճանապարհի. և իբրև մօտ եղեն առ միմեանս, քայլս հնգետասան, էջ վէզիրն յերիվարէն իւրմէ, քայլեաց այլ ևս քայլս հինգ, ծունր եդ և համբուրեաց զերկիր. յարեաւ և դարձեալ քայլեաց և երկիր եպագ, և զնոյն դարձեալ արար երրորդ անգամ ։ Յայնմ պահու չաւուշք ամենայն 'ի ձայն բարձր մաղթէին արքայի կեանս երկարս. և խուռն բազմութիւն ժողովրդեան առ մեծի խնդութեան զգերապատուորն յաջող հասելին. քանզի այն երրորդ ամ էր յորմէ հետէ դարձ վէզիրաց պետութեանն ազգաց լեալ էր մանաւանդ քան աւետաւոր ։ Համբուրեաց վէզիրն զասպատանդն արքայի, և յետ յետս երթեալ միւս ևս անգամ երկրպագեաց. ապա հեծաւ յերիվարն կազմեալ նմա ոսկեճամուկ կազմածովք, և անկաւ յուղի. և գրօշն նուիրակին յառաջոյ, և արքայ զհետ նորին, և վէզիրն զկնի արքայի [1] ։

1 Յայսմ ամի էին դեսպանին Անգղիացւոց Մոնթաք անուն, համբաւեալն իւրով հանճարեղ մատենագրութեամբ, [illegible]

Զմնացուած այնր ամի ծախեաց վե-
ղին 'ի պիտանի բարեկարգութիւնս
և 'ի շինութիւնս. զի և հրդեհք և սա-
սանութիւնք պատահեալք 'ի Թագա-
ւորեալ քաղաքին ոչ սակաւ քանդմունս
գործեալ էին 'ի նմա ։ Իսկ 'ի միւսում
ամին համարակալն Իպրահիմ փաշա
կարգեցաւ կողմնապետ Եւրոպեան, և
արձակեցաւ 'ի Վեննա՝ առնուլ 'ի կայ-
սերէն զհաստատութիւն դաշանցն
պայմանելոց 'ի Փասարովից. որպէս և
'ի գնալն կայսեր 'ի նոյն սակս գնաց 'ի
Կոստանդնուպօլիս կոմսն Վիրմոնտ ։
Ոչ էր չափ ճոխութեան երկաքանչիւր
գեսպանացս. այլ օսմանցւոյն մեծու-
թիւն բազմօք զանցանէր զաւստրիակա-
նաւն ։ Այր եօթնհարիւր վաթսուն և
երեք գնային ընդ Իպրահիմայ, երիվարք
վեց հարիւր քառասուն և հինգ, ջորիք
հարիւր, և ուղտք հարիւր և ութսուն.
և ընդ մտանել իւրեանց յերկիրն Գեր-
մանացւոց՝ ընկալան տուրս յարքու-
նուստ ռոճիկ զօր ըստ օրէն, և գունդս

Բնակչաց Կոստանդնուպօլսոյ՝ պատճառ-
քրիստոնէական եղեւ մահկանց նոցին 'ի մահա-
բեր հարուածոց ծաղկին ։ Զի առ առաջին
յանձն էառ փոխել 'ի պատուաստ ծաղկին զոր-
դեակն իւր. որոյ և այլք յեւրոպացւոց և
'ի քրիստոնեայս ծաղկահարաց քաղաքին յորդո-
րեցան 'ի նոյն համարձակել անվրէպ և ան-
վտանգ ։

կայսերական զօրաց յառաջնորդութիւն և 'ի շուք մեծից դեսպանին 'ի Վիեննա : Իսկ պարգևքն զորս մատոյց նա կայսեր՝ այսոքիկ էին . գաւաթն մի , որոյ երախակալն ըստ եզերացն տափաղու յեռեալ էր երկերիւր ակամբք պատուականօք . կապարճք նետից , և զինվառ շղթայ ոսկի զարդարեալ ակամբք և մարգարտօք . և բազմաթիւ համեմք և սանձք և երասանակք արծաթի և ոսկի , և վրանք ոսկեգործք հանդերձ սիւնօքն և կապերանիւք և բարձկներօք : Դեսպանքն երկոքեան պատահեցին միմեանց 'ի սահմանածայրս երկուց աշխարհաց . և իբրև մօտագոյն մերձեցան , իջին յիւրաքանչիւր երիվարաց և պատուաւորեցին զմիմեանս : Եւ իբրև եհաս Վիրմոնտ 'ի թագաւորեալ քաղաքն , թարգմանն արքունի Մուրաքօրսաթ մեծարեաց զնա 'ի դիմաց արքայի ծաղկամբք և պտղովք , շաքարեղինօք և գահվէիւ . և գունդ մի ենիչէրեաց կարգեցաւ նմա 'ի պահպանութիւն պատուոյ , և այլ ես պաշտօնէայք 'ի սպաս ծառայութեան , և ռոճիկ առատութեամբ նմա և արանցն որ ընդ իւր : Վեզիրն մեծ երկիցս պատուաւորեաց զՎիրմոնտ մեծահաց խնճոյիւք հանդերձ հանդիսիւք խաղալեաց , ըմբշամարտեաց , և վաթսունից չափ արուեստական նուագածուաց : Յերկրորդում խրախճանին

հանդէս այլ ընտանութեան և հրա-
ցանութեան կարգեալ, ինքնին վէ-
զիրն Իպրահիմ փաշա բաշխայր ՚ի նմա :
Քանզի անօթք լի ջրով կարգեալք բա-
ցատ ՚ի միմեանց՝ նշանակք էին հանդի-
սացելոցն. որք մինչդեռ Իպրահիմ
ընդ գիրկս մանեալ արձակէր զհրացանն,
Ենիչէրի ոմն մատուցեալ փոխանակէր
անօթ նոր ՚ի տեղի այլոց խորտակելոց
՚ի պահուն. և ահա գնդակն սատու-
ցեալ ՚ի նպատակ անդր՝ անց ընդ մէջ
ոյունից զօրականին և հար խորտակեաց
զանօթ ջրոյն, և դոյզն ինչ ևեթ քե-
րեալ չփեցաւ զմարտեօք նորա. և վէ-
զիրն ընդ ճարտարութեանն մեծի և
այնուամիտ երևեալ, պարգևեաց ան-
դէն զօրականին վանդելոյ դահեկանս
մետասան :

Ոչ ինչ նուազ քան զԱւստրիացւոց
դեսպանն պատուասիրութիւն գտա-
նէր ՚ի Վիէննա և դեսպանն Օսմանեանց
Իպրահիմ փաշա. այլ ոչ սակաւ դըժ-
կամակութիւնք եղեն յարքունիս կայ-
սեր ընդ անողոք խստութիւն դեսպա-
նին, որ չառնոյր յանձն հպատակել
օրինաց աշխարհին ըստ օրինակի նախոր-
դացն իւրոց եկելոց դեսպանութեամբ
՚ի Վիէննա յամին 1565 և 1700 : Ուր-
ուրեմն իբրև զիջաւ նա ՚ի խստութենէ
անտի, և գրով ձեռին խոստացաւ
չխորշել յարարողութեանց երկրին,
հրաւիրեցաւ յարքունիս տեսանել

զկայսրն ։ Նմուտ 'ի կառս ընդ իւրում
առենադպրին և ես հասս մինչև 'ի գաւիթ
արքունեացն . անդ էջ առենադպիրն 'ի
կառացն անտի , և բարձեալ 'ի ձեռս իւր
զհրովարտակն Ահմէտայ արքային՝ եմուտ
ընդ վեզիրին 'ի պալատ անդր ։ Կայսրն
Կարոլոս Զ. , կանգուն կայր անդանօր
ընդ ոսկեգործ հովանոցաւ՝ զգեցեալ
ծիրանիս ըստ սպանիացի տարազու ,
ունելով 'ի գլուխ իւր խոյր ականազարդ
և գարգմանակ 'ի վերայ , և յազդեր
իւրում սուսեր ականակուռ . և յաջմէ
և յահեկէ առենակալք և զօրավարք և
աւագորեարն ամենայն ։ Մինչև մեր-
ձեցեալ առ կայսրն՝ երիցս անգամ խո-
նարհեցաւ դեսպանն , և ապա յայս
արար զպատճառս դեսպանութեանն .
և առենադպիր կայսերն իբրև 'ի դիմաց
նորա պատասխանի արար բանիցն ։
Յայնժամ Իպրահիմ առեալ եդ զհրո-
վարտակն իւր 'ի վերայ սեղանոյն ոսկի
դիպակաւ ծածկելոյ՝ որ կայր առ-
ընթեր կայսերն , և համբուրեալ
զծիրանիս նորին յետս յետս ընդ
կրունկն երթեալ չոգաւ 'ի տեղի իւր .
և 'ի նմին պահու 'ի շարժ հարեալ հան-
դիսայան 'ի մեծի սրահին և ընծայքն
առաքեալք 'ի դրանէն Օսմանեանց ։
Խախր արժանի յիշատակի ընդ այն
հրովարտակ Ահմէտայ արքային և ընդ
առաջինան այս էր , զի պակասէր 'ի նմա
վերջաբանն սովորական՝ եթէ « Ողջ

լիցի որ ընդ ճշմարտութեանն գնայ ճանապարհ »:

Արձակեալ Ահմէտայ արքայի խաղաղութեամբ զդեսպանն Գերմանացւոց 'ի տեղի իւր, և ընդ դեսպանին Ռուսաց Տաշքօվայ հաստատեալ զդաշինս բարեկամութեանն, միտ եդ այնուհետև 'ի կատարել զհանդէս հարսանեաց երեցուն դստերաց իւրոց և երկուց դստերաց եղբօր իւրոյ Մուստաֆայի, և զհանդէս թլփատութեան չորեցուն որդւոց իւրոց որ էին Սիւլէյման, Մէհէմմէտ, Մուստաֆա և Պայէզիտ : Վէզիրն մեծ Տամատ Իպրահիմ փաշա մեծապէս ստար գտեալ յամենայնի զուարճանէր կամաց արքային, զամենայն փոյթ յանձին կալեալ 'ի յօրինուած շքեղ պերճութեան հանդիսիցն' որպիսիք չէին երևեալ 'ի վաղնջուց ժամանակաց հետէ 'ի թագաւորեալ քաղաքին : Սակայն չափ մատենիս չներէ մանրապատում զիրսն առնել աստանօր : Այլ այս ինչ կարևոր իցէ 'ի գիտել, զի Տամատ Իպրահիմ փաշա իւրով զգօն տեսչութեամբն ոչ ինչ ծանրացոյց յայնմ ամենայնի զտուրս հարկաց ժողովրդեանն . նա և մեծամեծ շինութեամբք յաւել զպայծառութիւն քաղաքին : Գիտելի դարձեալ, զի յայս նուագ ոչ արձակեցան հրաւիրակք առ կայսրն Գերմանացւոց կամ առ դուքսն Վենետիկոյ :

Յայնմ ամի և յերկրորդին որ զկնի եր. կոտասան հրդեհք պատահեալ 'ի Կոս. տանդնուպօլիս, այրեցին զբազում տե. ղիս : Հրկիզեցաւ 'ի միում նուագի և աշտարակն Լէանդրի՝ Գըզ գուլէսի ա. նուանեալ, և վէզիրն անդրէն շինեաց զնոյն փայտակերտ : Ընդ նոյն ժամա. նակս դարձ արարեալ յերկրէն Գաղ. ղիացւոց եհաս 'ի Կոստանդնուպօլիս Մէհէմմէտ Չէլէպի՝ Եիրմիսէքիզ ա. նուանեալ, որ ըստ հաշտութեանն պայմանելոյ 'ի Փասարովից դեսպանու. թեամբ գնացեալ էր 'ի Փարիզ : Սա էած ընդ իւր առ վէզիրն մեծ և զպատ. մութիւն Ճանապարհորդութեան իւ. րոյ, յորում քաջիկ տայ զնկարագիր քա. ղաքականութեան Եւրոպացւոց : Նոյն. պէս և յաշխարհէն Պարսից դարձա. եալ անդրէն Տիւրրի էֆէնտի, որ 'ի նոյն աղագս երթեալ էր առ շահ Հիւ. սէյին արքայ Պարսից :

Յամին 1721 եկն դեսպանութեամբ յարքայէն Պարսից Մուրթէզա գուլի խան . և Տամատ Իպրահիմ փաշա մե. ծ աշուք հանդիսիւ ընկալեալ զնա՝ պա. տուասիրեաց յոյժ յոյժ, փոյթ մեծ ցուցեալ մանաւանդ 'ի հաւանեցու. ցանել զպարսիկն՝ եթէ և 'ի քերթողու. թեան մասին և յերաժշտութեան և 'ի վայելչագիտութեան ոչ ինչ յետնեալ են Ճարտարքն Օսմանեանց . և զար. մացաւ դեսպանն : Ի նուակայս կոս.

տանդնուպօլսոյ մինչդեռ 'ի գնին կայր Միւրթէզա գուլի նորոյ խանն առ մեծի և ահագին Թնդանօթիցն նորա, ասէ նոցա որ շուրջն կային՝ եթէ ռումբ մի եթէ արձակեալ 'ի հրազինուց աստի՝ շատ է 'ի խորտակել աննորոգելի զնաւ մեծ պատերազմիկ ։ « Ես զխոհդ կարիցեմ ես , ասէ հիացմամբ դեսպանն , նկարագրել Պարսից ըստ արժանւոյն զմեծագործ հրազէնդ » ։ Պատասխանի ետ երգիծական խանն հեգնութեամբ քերթող Վէհպի և ասէ . « Դիւրին իսկ է մուծանել զանէրդ 'ի մի 'ի գոյանէ՝ զի լաւ ևս զննիցես » ։ Զխնդացաւ զբանն Միւրթէզա, և սկսաւ մտանել 'ի Թնդանօթն . այլ 'ի քերշել առ հասարակ մերձակայիցն՝ չիկնեալ շառաչնեալ յետս կանեցաւ ցասմախառն ամօթով . քանզի 'ի մէտ էառ , ասէ Բաշխո, եթէ Վէհպի հրաւիրէր զնա բանխուն 'ի Թնդանօթ անդր՝ որպէս զի արձակեալ ընկեսցի անդի մինչև յԱսպահան, և զխուրագոյնս վկայեսցէ արգասեաց հրազինուցն Օսմանեանց ։ Զհրովարտակն արքունի որ տուաւ ապա 'ի ձեռս դեսպանին՝ մեծաւ խնամով գեղազարդեցին ճարտարք ըստ հրամանի վէզիրին ։ Յիրտէվսի Հիւսէյին էֆէնտի գրեաց զբանն Մէլլի անուանեալ տառիւք . Մէհէմմէտ էֆէնտի դրոշմեաց Րիգա տառիւք զատուծո ինչ յիշատակեալ 'ի նմա 'ի կարանին . և

մեծ դատաւորին Վէքիլէտոին վայելուչ
յօրինեաց 'ի նմին զԹաւլիգ անուանեալ
պարսկական ձեւ տառին, և գոյնք
տողիցն էին սեաւ, սպիտակ, կարմիր,
կանաչ, կապուտակ և դեղին, և զար-
դարեալք ոսկեգոյն ծաղկօք։ Իսկ պա-
հարան հրովարտակին քսակ էր յոսկե-
գործ դիպակէ յերկայնուԹիւն բա-
զում կանգնոց, և կնիքն մոմ էր շա-
ղեալ մշկով, ունելով 'ի վերայ զդրոշ-
մած արքունական նշանին, և 'ի վերայ
նորին ծածկոյԹ 'ի ձոյլ ոսկւոյ։ Զայս
հրովարտակ 'ի հրաժեշտին պահու
ընկալաւ դեսպանն 'ի ձեռանէ վե-
զիրին մեծի. և արքայ հրամայեաց
շնորհել նմին երեսուն և վեց քսակս
արծաԹոյ։

Միւրթէզա վերջին եկաց 'ի դեսպանս
զորս եղկելի արքայն Պարսից առաքեաց
'ի դուռն Օսմանեանց։ Քանզի Վախ-
Թանկ արքայ Վրաց ապստամբեաց 'ի
նմանէ. ընդվզեցաւ և Միր Վէյիզ իշ-
խանն Գանտահարայ։ Այլ եղբօրորդին
Միր Վէյիզայ, որ կոչէր Միր Մահ-
մուտ, սպան զնա և խաղացզօրու ծա-
նու 'ի վերայ շահ Հիւսէյինայ մինչև
յԱսպահան. էառ զնորին Ջուղա, պա-
շարեաց զԱսպահան, և սով արկեալ 'ի
ներքս՝ առ և զայն յամին 1722։ Եւ
շահ Հիւսէյին յապարանից իւրոց 'ի
հանդերձ սգոյ, և իւրով ձեռամբն
կնքեաց գլխակոր հրաժեշտին որով

թողուլ 'ի Միր Մահմուտ զժառանգու-
թիւն աթոռոյն : Իսկ բնակալքն Մահ-
մուտայ ոչ շատացեալ այնու, հրամայ-
եաց նմա հանել 'ի գլխանոցէն զզարդ-
մանակն ականակուռ և ինքնին իւրով
ձեռամբ հաստատել յիւրն գլխանոց.
և զնա առաքեալ նախ յանշուք ինչ
բնակութիւն, ապա յետ եօթն ամսոց
մատնեաց 'ի սպանումն :

Զյոյզս աշխարհին Պարսից դէպ
ժամանակ վարկան Օսմանեանք 'ի ձե-
ռնառու լինել բնակչացն Շիրուանայ,
որ ընդ իշխանութեամբ Պարսից գոլով՝
աղաչէին զՕսմանեանս իբրև զիւրեանց
հաւատակից եղբարս՝ թափել զնոսա
'ի ձեռաց պարսկադենից : Կարգեցին
նոցա կուսակալ ինքնիշխան զՏաւուտ
խան զոմն, և պարգևեցին նմա դրօշ և
թմբուկ, և լախտ և սուսեր :

Ընախ և կայսրն Ռուսաց Պետրոս
խաղաց 'ի սահմանս Շիրուանայ՝ յօգ-
նութիւն կարդացեալ 'ի բնակչացն
Դարբանդ և Պաքու քաղաքաց որ առ-
եզերբ Կասպից ծովուն, և տիրեաց
նոցին : Որոյ վս̃ տագնապեալ վէզիրն
մեծի՝ 'ի խորհուրդ կոչեաց զդեսպանն
և զաւագանին, և հաստատեցաւ միտք
պատերազմի յարուցանել ընդդէմ
Պարսից . և անդէն խաղացին գունդք
'ի գաւառացն Կարնոյ և Տրապիզոնի
'ի սահմանս Վրաց, և պատրաստեալ բա-
նակին կացուցան Սիլիհտար Իպրահիմ՝

փաշա ։ Ընդ այն ժամանակս իշխանք Մինկրելի, Իմերեթայ և Կուրիէլի հպատակէին օսմանեան դրանն. իսկ դաւառքն Կախէթ, Սամխէթ և Քարթլի՝ յորում է և Տփխիս՝ 'ի Պարսից բաժնի կային, և թագաւորէր անդ Վախթանկ Ն ։ Արդ իպրահիմ փաշա տեսեալ զդժուարութիւն թագաւորաց երկրին ընդ միմեանս, խաղաց 'ի վերայ Տփխեաց, և էառ զայն խաղաղութեամբ, և զբանալիսն առաքեաց անդէն 'ի Կոստանդնուպօլիս յամին 1723։ Կոստանդին Գ., որ ուրացեալ'ի հաւատոյն, և ընկալեալ էր յարքայէն Պարսից զիշխանութիւն թագաւորութեան փոխանակ Վախթանկայ, խոստանայր սպարապետին Օսմանեանց առաջնորդել նմա յառումն և Գանձակայ և Երևանայ 'ի ձեռաց Պարսից, եթէ զթագաւորութիւն Տփխեաց տայց 'ի ձեռս իւր։ Սակայն իպրահիմ կաշառաբեկ լեալ յորդւոյն Վախթանկայ, որ կոչէր Շահնիւազ, զսա կարգեաց իշխան աշխարհին՝ հարկ տարեկան եդեալ 'ի վերայ նորա բաւական հազար դահեկանաց։ Դժկամակեալ մեծի դրանն ընդ այս գործ իպրահիմայ և ընդ զուր ժամավաճառ լինել նորա 'ի կողմանսն, յետս կոչեաց զնա, և արձակեաց 'ի տեղի նորին զկուսակալն Կարուց զՄուստաֆա փաշա՝ զի առցէ զԳօրի. այլ իբրև անկաւ Գօրի 'ի

ձեռս Ռուսաց, արկաւ ի Մուստաֆա յիշխանութենէն, և կարգեցաւ սպարապետ կուսակալն Բաղդադայ Աբրիֆ Ահմէտ փաշա, որոյ երթեալ նուաճեաց զբնակիչս Սոմխեթու :

Յառնուլ Միր Մահմուտայ զԱսպահան քաղաք, Դահմասպ որդի Հիւսէյինայ արքային Պարսից մեկնեալ 'ի Գազվին, և անդ ինքնացեալ թագաւորեաց. և դաշինս բարեկամութեան կռեալ ընդ կայսեր Ռուսաց, եթող 'ի նա զԴարբանդ և զԲագու, և զգաւառս Կասբիականին զԳիլան, զՄազանդարան և զԱստրապատ. և կայսրն խոստացաւ վանել յաթոռոյն Պարսից ըզբռնակալն Մահմուտ, և թագաւորեցուցանել զԴահմասպ : Խնդրեաց արքայորդին առանձին հրեշտակութեամբ և զձեռնտուութիւն Օսմանեանց. այլ սոքա դժգմեալ ընդ դաշինս Ռուսաց, ոչ միայն զդեսպանն Պարսից 'ի դեպահոջ արգելին, այլ և հրաման ետուն սպարապետաց իւրեանց, և յարձակեալ էառ նա մարտիւ պատերազմի զամուրն Խոյ և զայլ քաղաքս Դահմասպայ [1] :

1 Աւանդէ պատմագիրն Չէլէպիզատէ, թէ 'ի տալ անդ դեսպանին յատենին առագանայն պլճիա՝ եթէ իրաւացի է պատերազմ ընդդէմ Պարսից անհաւատից, Քէմալ էֆէնտի ոմն հաւատակից ասաց յատենին՝ եթէ «Չէ մարթ անհաւատս կոչել զայնոսիկ, որ 'ի

կամէին Օսմանեանք և ընդ Ռուսս 'ի մարտ ելանել. այլ 'ի բարեխօսելոյ դեսպանին Գաղղիացւոց դադարեցին յայնմ խորհրդոյ. և դեսպանն Ռուսաց հաւանեցոյց զվէզիրն մեծ ,՝ և յամին 1724 'ի յունիսի 24 , բաժանեցան յիւրեանս զհիւսիսականն և զարեւմտեայ սահմանս աշխարհին Պարսից . ըստ նա_ կողմն ամենայն մինչև ցխառնուրդս Կուրն և Երասխ գետոց անկաւ 'ի բաժին Ռուսաց, և անտի ցՀամատան և ցԿըր_ մանշահն 'ի բաժին Օսմանեանց, որով մնային 'ի ձեռս սոցա Գանձակ, Երևան, Մողան, Սխնիք կամ Գարապաղ. Ա_ տրպատականն և մասն Շիրուանայ: Պայմանեցին և ևս զմնացեալ աշխարհն տալ 'ի ձեռս Դահմասպայ որպէս օրի_ նաւոր Թագաւորի. և թէ նա չառնու_ ցու յանձն զպայմանսն, զայլ ոք ըն_ տրեսցեն արքայ Պարսից՝ բաց 'ի բռնա_ կալէն Մահմուտայ:

Մինչդեռ այս բանագնացութիւնք յերկարաձգէին 'ի Թագաւորեալ քա_ ղաքին, բանակք Օսմանեանց օր քան զօր յառաջ խաղացեալ յաշխարհն Պարսից՝ առին պատերազմաւ զամուր ամուր քաղաքս նոյա, զՀամատան, զԵրևան, զԴաւրէժ, զԱրտաւիլ, զԼօրի և զՍինին : Եւ զօրավարք բանակացն

հարցա- կոյս աղօթէին ». և անդէն տփարէ_ ցաւ 'ի Լէհաս կամն համարձակախօսութեանն:

էին Քէօփրիւլիւ զատէ Աբտուլլահ փաշա, Արիֆ Ահմէտ փաշա, և Հասան Մուստաֆա փաշա ։ Ընդդէմ սորին զօրաց մարտ եդեալ կռուեցան քաջքն Համիձորոյ Դաւիթ իշխան Սիւնի, և նիզակակիցք նորին Մխիթար զօրավար և տէր Աւետիք, զորոց տեսցի 'ի պատմութիւն մերոյ ազգիս ։ Քանզի որպէս յամենայն նուագս՝ և յայսմ անցանէր զանցանէր խաժամուժ զօրականն 'ի կեղեւ զբնակիչս հայաստան աշխարհին. և յետ զամենայն ինչ գնոցա աւարելոյ և յափշտակելոյ, զնոսին ևս ածեալ վաճառէին 'ի Կոստանդնուպօլիս իբրև գերեալս յաշխարհէն Պարսից ։ Այլ 'ի բողոքել պատրիարգին Յակոբայ Կոլոտի առ վէզիրն Իպրահիմ, պատուէր հրամանի արձակեցաւ առ ամենայն զօրավարս բանակին խափան դնել անիրաւութեանցն այնոցիկ ։

Այնչափ յառաջադէմ լինելոյն Օսմանեանց 'ի Պարսկաստան բազմք սատար գտանէին երկպառակութիւն իշխողաց երկրին ։ Քանզի Միր Մահմուտ որ բռնացեալ ունէր զաթոռն Ասպահանայ, 'ի սուր սուսերի կոտորեաց զերիս հազար անձնապահս Հիւսէյին շահին, և զերեքարիւր աւագորեարս աշխարհին, ապա և զհօրեղբայրն իւր զԱպտուլլահ ։ Այլ այն ևս հեղեղք արեան անմեղաց բաւեալ կործանեցին զաթոռ բռնակալութեան նորա. զի

օպարապետն իւր Ամանուլլահ վատ-
րանջեաց 'ի նմանէ, և Էշրէֆ որդի հօր-
եղբօրն իւրոյ Ապտուլլահայ վրէժ-
խնդիր յարեաւ մահու հօրն ։ Զայն
տեսեալ Մահմուտայ՝ լուծաւ լքաւ, և
խոյս տուեալ 'ի քարանձաւս լերանց՝
եւս զանձն իւր յապաշաւ և յողբս
յուսահատութեան. այլ չև բոլորեալ
ամսոյ երկուց, եկն եւ դարձեալ 'ի կա-
ղաքէն իբրև զարջ օրհասական 'ի բայոցէ,
և անդրէն 'ի նախնին իւր յարինաուշտ
խժդժութիւն ձեռն արկանէր . և
ինքնին իւրով ձեռամբ խողխողէր զերիս
հօրեղբարս իւր , և զմետասան եղբարս
և աւելի քան զհարիւր որդիս Հիւսէյին
շահին յանդիման աչաց հօրն նոցա
չուառացելոյ ։ Յայնժամ արդարև ու-
շաթափեալ ցնորեցաւ Մահմուտ, և 'ի
կատաղութիւն մոլեգնութեան ան-
կեալ՝ զիւր իսկ զմարմինն խածատէր, և
'ի պատատուածոյ անտի խղխայթեալ
վիրացն որդնալից լինէր ։ Յայնմ յան-
ճնարին ախտի հեղձամղձուկ մահուամբ
բարձաւ վիրաւն 'ի կենցաղոյս հրամա-
նաւ հօրեղբօրորդւոյն իւրոյ Էշրէֆայ ։

Յամին 1725 տիրապետեաց 'ի Պարս
Էշրէֆ շահ , վանեաց պատերազմաւ
զապխկային Դահմասպ , և արձակեաց
'ի Կոստանդնուպօլիս դեսպան զոմն
Ապտիւլաղիզ խան կոչեցեալ. և ա-
ծէր դեսպանն նամակս երկս . զմին 'ի
դիմաց Էշրէֆայ որ յետս պահանջէր

զաշխարհն արեւելեան Աղուանից. զեր-
կրորդն 'ի գիմաց փոխարքային Պարսից՝
որ նոր իմն բաշխս սահմանաց առնէր
առաջի, և զերրորդն ստորագրեալ
յիմաստուն գիտնականաց Աղուանից որ
անիրաւ ասէին զխաղին Օսմանեանց
ընդդէմ հաւատակցացն իւրեանց Ա-
ղուանից, իբր զի և սոքա Սիւննի են
իբրև զնոսա:

Վէզիրն մեծ Իպրահիմ փաշա բա-
ղում մեծարանս արար դեսպանին, ոչ
այնչափ 'ի պատիւ երեսաց նորա կամ
արքային Պարսից, որչափ 'ի պարծանս
օսմանեան պետութեանն. սակայն
նամականին այն ոչ սակաւ յուզումն
արար յատենին աւագանւոյն: Ուր ուրեմն
գրեցան պատասխանիք թղթոցն. և առ
նամակ իմաստնոցն Աղուանից այսպիսի
տուաւ դատավճիռ 'ի դենպետէն Օս-
մանեանց. «Հարցուած. Իցէ՞ օրէն հպա-
տակել 'ի նմին ժամանակի կրկին Ա-
ռաջնորդաց հաւատոյ 1: Պատասխանի.

Այն է ըստ Տաճկաց Իրան. և է բաժա-
նեալ վարդապետօքն ծովովերդեան կամ ծովու-
րդապետք. այլ առաւելն ասեն ըն-
դունել Ալի. և որդիք իւր Հասան և Հիւ-
սէյին, և իննեւտասան 'ի սերնդոց Հիւսէյի-
նայ: Ցետ ժամանակաց Աբասեանց ղի-
մու անուն իւնեանց սպահանեաներին իբրև
սննաւոր յաջորդք Մահմետի. վասն որոյ և
որդւոց Օսմանեանց մինչև ցայսօր զայն դա-

Միաձայն կարծիք են օրէնագիտաց, եթէ միոյ աշխարհի երկու դենպետք ոչ լինին. հարկ ուրեմն է զի անջրպետ ընդ-կան կայցէ 'ի միջի, օրինակ իմն՝ համատարածն հնդկաց: Հարցումն. Ի միաբանել տաճկականդ մարդկան և 'ի դաւանել առաջնորդ հաւատոյն իւրեանց զվէհափառ խալիֆն երկուց ծովուց և երկուց աշխարհաց, զպաշտօնեայն երկոցուն նուիրական քաղաքաց, զսուլդան Ահմէտ խան, զյաջորդն դերպաղոյն պետաց և առաջնորդաց հաւատոյ, զթշնամին ամենայն նորաձեւութեանց, եթէ յարուցեալ այս անուն ոք ըմբռնացի 'ի սահմանս Աստրահանայ, որպէս եթէ հուպ և կից լիցեն նոքին յաշխարհացն յեւրոպէ նուաճելոց, և հպարտացեալ կոչիցէ զանձն խալ Իմամ. և իցեն տաճկադենք ումանք որ զնոյն պատիւ նմին ընծայեսցեն. և նա եթէ հրեշտակս առաքեալ առ վեհափառ տէրքայն՝ խնդիցէ յետս պահանջել ըզդաւառն զերծուցեալս 'ի լծոյ Պարսից ամբարշտաց, զի՞նչ լինչ արժան իցէ առնել ըստ արդար խրատուց:

Ջէօ յանդիրմա բէրէն: Քենտի Մէլէք կամ Սուլթան Ժամանըքեայ Խըլաֆըթըեան է յայփարար, և Իմամ հուգուքայանին. Խալ Խալիֆէ ղերէքատանըլըրըն և դայ ղըշտնիյերինի. և հարք է Խմամին Կ մուն Լէնէլ, և Էրէնէլէ:

Պատասխանի. Այն անուն այր՝ ապստամբ է. որդ եթէ կամակար խոնարհեսցի ընդ լծով նորա որ պատկեր Աստուծոյ է 'ի վերայ երկրի, բարւոք է. իսկ եթէ յամառեալ ընդդիմասցի յանհաւանութեան իւրում, դատակնիք յանցանաց նորա գրեալ իսկ է յայն բան կուրանին, «Եթէ կողմանք երկու յարիցեն ընդդէմ միմեանց, հարջիք 'ի մահ ըղխստամբականն, մինչև հպատակեսցեն դարձեալ հրամանացն Աստուծոյ»: և 'ի բանն աւանդից հաւատոյ. «Եթէ երկու ամիրապետք (կամ խալիֆայք) թեկն ածիցեն իշխանութեան, մին 'ի նոցանէ 'ի կորուստ մատնեսցի»: — Գրեաց նուաստն յաչս Աստուծոյ թագաւորին թագաւորաց Ապտուլլահ գենպետ օսմանեան պետութեան առ բարերախտ թագաւորութեամբ արքային Ահմէտայ, զոր պահեսցէ տէր ընդ երկայն աւուրս 'ի պաշտպանութիւն ապաւինելոյս 'ի շնորհս նորա և 'ի զօրութիւն զինուց նորա»:

Ըստ այսմ վճռոյ գենպետին յառաջ մղեցաւ դարձեալ պարսկական պատերազմն, և Արիֆ Ահմէտ փաշա ութսուն հազարաւ արանց բախեցաւ ընդ զօրս Էշրէֆայ 'ի սահմանս Համատանի: Թէև զօրաց պարսկայնոյն չէր ինչ աւելի քան զութսուն հազար. սակայն խուժան օսմանեան բանակին դեռ ես անխրաւ զպատերազմն համա-

ընելով՝ յակամայ կամս մնէին 'ի մայրն, վասն որոյ և անդէն ընդ սատակման խաղմին Թիֆլիզմադարձոյցք և զէնընկէցք 'ի փախուստ աճապարեցին, և երկոտասան հազարք տապաստ անկան 'ի ձակատուն։ Էշրէֆ շահ զգօնութեամբ վարեալ 'ի յաղթութեան խորհուրդ, արգել խրոցն հետամուտ փախստէիցն լինել. քանզի խաղաղութեան միանաւանդ քան պատերազմի էր սիրող, ասէր, ընդ համանկգենս իւր։ Յայնժամ և պետութիւնն Օսմանեանց զիջաւ 'ի պայմանս հաշտութեան յամին 1727. որով և մնացին 'ի ձեռս նոցա Կրմանշահն, Համատան, Սինէ, Արտէլան, Նուհաւէնտ, Խուրրէմապատ, Լորիստան, Մէղրի, Մարաղա, Խոյ, Դավրէժ, Արտապատական, Գանձակ, Երեւան, Տփխիս, Նախիջեւան, և ամենայն աշխարհն Վրաց և Շիրուան և Շամախի։ Եւ փոխանակ այսոցիկ հաստատեցին Օսմանեանք զէշրէֆ յիւրում Թագաւորութեանն, և խոստացան նաւն նըմա յիւր անուն տալ կարդալ զաղօթս ուրբաթուց, և դրամ հատանել, և ամ ամի արձակել կարաւան մի 'ի Մէքքէ, առաջնորդ կարաւանին կարգեալ զումն յիւրոց պաշտօնէից։

Ի ժամանակս պարսկական պատերազմին և յետ այնորիկ եւս անհետ խռովութիւնք և ապստամբութիւնք էին 'ի Խրիմ, յԱբգիազաս և 'ի փոքրն

Ասիա. սակայն խաղաղասէր վեզիրն
ոչ միայն ցածոյց զնոսին հետզհետէ
խոհական տեսչութեամբ, այլ և որ
ինչ բարեկարգութեան և շինութեան
աշխարհին օճան էր՝ զամենայն փոյթ
յանձին կալաւ յարդիւնս ածել: Որ-
պէս այն զի խորհրդով Գաղղիացւոյ
ուրումն սահմանեցաւ արս յիսուն 'ի կո-
րովի ենիչէրեաց 'ի վարել ջրհան գոր-
ծիս և շիջուցանել զհրդեհս թագաւո-
րական քաղաքին. և ռոճիկ սահմա-
նեաց նոցա յաւուրն փողս հնգետա-
սան: Յետ փոքու թիւ ջրհանաւորացն
յաւելաւ ցհարիւր և չորս այր. և դըն-
դապետին ռոճիկ կարգեցաւ փողս հա-
րիւր: Արգելաւ կանանց ազգի լայնա-
տարած ունել զվերարկուս օձիս, և
արանց և կանանց որ միջակային ունի-
ցին վիճակ՝ մուշտակս ագանել 'ի սալխ-
տակ աքսից: Արգելաւ և վերնատունս
կամ ճեմելիս փայտակերտս կառուցա-
նել 'ի վերայ տանեաց, յորոց վտանգ
բազում լինէր ճարակելոյ հրկիզու-
թեանց: Եւ զի ընդ այն ժամանակս
փոյթ մեծ էր ամենեցուն 'ի բազմա-
ցուցանել զազգ կակաչ ծաղկան, մին-
չև գայթակղել ոմանց 'ի գլխանկանոցն
Տաճկաց ընդ անչափին ղեղխել բազմաց
'ի ծաղկասիրութիւն, սահմանեցաւ
սակս ինչ հարկաց առնուլ ըստ թուոյ
սոխոց կակաչին: Կարևոր ևս ջան յան-
ձին կալեալ 'ի գործս արդարութեան,

՚նուաղ աւուր զբաղմութիւն սուտ վկայից քաղաքին ։ Սմին իրի հնարեցաւ հրաման եւ դատաւորաց ամենեցուն դատաստանս կեղծս 'ի մէջ ածել, և ելանել 'ի խնդիր վկայից ։ Անդէն 'ի մէր երևեցան վկայք սուտք ոչ ինչ պակաս քան զխոլթուն , որ յախուռն տային վկայութիւն զամենայնէ զոր և հարցանէին. և չարաչար տանջա՚նօք ցցամահ պատուհասեալք լուծին զկէժ անիրաւութեանն միանգամայն 'ի միում աւուր ։

Գիտելով չափ մեղքին զզուարճանէր բարս Աչմէտայ արքայի՝ յաւել 'ի ածել հանդիսիցն Տաճկաց և զպարսկականն 'Նէվրուզ, որ կատարի 'ի գարնանային հասարակածին. Թող զբաղմութիւ հարսանիս դստերացն արքայի, և զնաւակատիս շինութեանն այլ և այլ արքունեաց 'ի գիւղօրէս Վոսփորի ։ Մեծարէր Խալրահիմ և զդաս գիտնականաց, և 'նորին խորհրդով բազմացոյց Աչմէտ արքայ զմատենադարանս հասարակաց 'ի Թագաւորեալ քաղաքին ։ Այլ որ անմոռաց յիշատակ եղև ուսումնասիրութեանն Խալրահիմայ և Թագաւորին, բացումն է առաջնոյ տաճկական տպարանի 'ի Կոստանդնուպօլիս ։

Քանզի տեղեկացեալ մեղքին բազում ինչ իրաց կարևորաց զաշխարհէն Գաղղիացւոց , ուստի գեռ. եւ զարծ

արարեալ էր Իյիրմիսէքիզ Մէհէմմէտ Չէլէպի, և յորդորեալ ևս յուրացողէ ումեմնէ Իպրահիմ կոչեցելոյ որ մաճառ էր յազգէ և հմուտ արուեստի տպագրութեան, խորհեցաւ ընդ դենպետին Ապտուլլահայ կանգնել 'ի Թագաւորեալ քաղաքին գործարան տըպագրութեան: Եւ զի հնար էր նորաձեւութեանն պատճառս գայթակղութեան տալ ամբոխին, վասն որոյ յառեան խորհրդոյ կոչեցին համօրէն ըղգլխաւորս գիտնականաց, և միաբան հաստատեցին զպիտանութիւն տպագրութեան. այլ զկուրանն և զգիրս աւանդից հաւատոյ և զամենայն իսկ զմեկնութիւնս օրինաց ազատս վճռեցին մնալ 'ի մամլոյ. և ոչ միայն 'ի դենպետէն, այլ և 'ի ժողովականաց անտի էառ վէզիրն զվճիռ հաւանութեան նոցա: Յետ այնորիկ և ինքն Ահմէտ արքայ ինքնագիր հրովարտակաւ հաստատեաց զվճիռն, և զնմանն տպագրութեան յանձն արար յԻպրահիմ էֆէնտի, որ և յայն սակս Պասմաճի կոչեցաւ. և առաւ հրովարտակն յամի 1727, 'ի յուլիսի 5: Իսկ մատեանք նախ առաջին տպագրեալք են բառարանն Արաբացի բարբառոյ, զոր Թարգմանեալ է Վանգուլի. բառարանն պարսկական լեզուի, զոր արար Ֆէրհէնկ Շուուրի. պատմագիրք պետութեանն Նայիմա և Րաշիտ և այլք.

և խնամատուն շարագրածք հաճի խալիֆէին, որ և Քեաթիպ չէլէպի:

Ի գալ միւսոյ ամին եհաս 'ի Կոստանդնուպօլիս դեսպանն Էշրէֆայ Մէհէմմէտ խան 'ի հաստատել զուխտ դաշանցն պայմանելոց, այլ ոչ այնչափ մեծարեցաւ 'ի դրանէն որչափ ակն ունէր. զի և դեսպանն Օսմանեանց Րաշիտ Էֆէնտի, որ կողմնապետ էր յայնժամ Նէրպատայ, ոչ ըստ արժանի պատուոյն մեծարանս գտեալ էր յԷշրէֆայ: Սակայն վէզիրն մեծ ոչ վերջացաւ 'ի հիացումն ածել զպարսիկն ընդ ճոխութիւնս օսմանեան պետութեան: Քանզի յատակք դաւթին անգամ ապարանից նորա ծածկեցան պարսիկ կապերտովք. իսկ կապերտք մեծի սրահին համակ մետաքսագործք էին և ոսկեմանք և մարգրտայեռք: Առ ոտիւք վէզիրին սփռեալ կայր ակումբ մարգարտեայ. յաջմէ նորա գրապանակ ականակուռ և կաղամար խուռն զարդարեալ 'ի զմրուխտ և 'ի յակինթ. 'ի ձախմէ աթոռ ականակապ, և 'ի վերայ նորին կուրան մի կազմեալ սևագոյն կերպասու՝ որ լի էր ադամանդիւք: Ընդ մէջ երկուց լուսամտից եդեալ կային այլ կուրանք մեշտառան ոսկեկազմք, և շարագոյնք նոցին բովանդակք մարգրտալիցք. երկուստեք մեծի պատուհանին խուրձք խուրձք սամուրենեայ ժապաւինեալք ոսկեգործ եղիղմք: Իսկ յայլ կողմանս

որոնցն հայելիք էին մեծամեծք, և ժամացոյցք ճարտարագործք : Սպասաւորացն գաւք գօտեւորեալ էին ոսկեթել շղարշիւք, և դաշոյնք և դաշնակք ականակուռ դաստակօք ընդ մէջ նոցա. Թող զատենակալացն հանդերձից պերճութիւն շքեղ մի քան զմի : Իսկ ինքն Վէզիրն մեծ յոտից մինչև ցգագաթն իւր ծփէր իմն 'ի ծով ականց և մարգարտից, ասէ ականատեսն Չէլէպիզադէ :

Մինչդեռ դեսպանն Էշրէֆայ այսօրինակ պատգամաւորէր 'ի Կոստանդնուպօլիս, ինքն Էշրէֆ երթալով երթայր և գիջանէր 'ի մեծութենէն, և Դահմասպ շահ յաւելոյր 'ի զօրանալ ձեռնտուութեամբ արանց քաջաց, յորոց միջի բարձր 'ի գլուխ պանծայաւ Նատըր Ալի խան [1] : Սա 'ի ցոյց հաւատարմութեան իւրոյ առ տէրն Սեֆեանց՝ անուանեալ զանձն իւր Դահմասպ ղուլի խան, յարեաւ 'ի վերայ բռնակալին Էշրէֆայ, վանեալ զնա 'ի զանազան ճակատամարտս և ափրեալ աշխարհէն : Էշրէֆ սպան նախ զհայրն Դահմասպայ զծերունին Հիւսէյին, և ապա դէմ փախուստ եդեալ՝ հալածական անկաւ 'ի սահմանս Գանտահարայ, և անդ սպանաւ 'ի հեստամոյն.

[1] Սա որդի էր ըեալ տան անուանի 'ի Խորասան, երբեմն յանդգնութեան և խիզախ քաջաբեռ յետ եղեւ յեղափոխութեան :

և կառավարն նորա բերաւ առ Դահմասպ : Իսկ Դահմասպ շահ մեծաշուք հանդիսիւ մտեալ յԱսպահան, բազմեցաւ յաթոռ հարց իւրոց. և անդէն հրեշտակութիւնս արձակեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ պահանջէր յՕսմանեանց զամենայն զգաւառսն հատեալս յիւրմէ աշխարհէն, և միանգամայն զօր բազում գումարեալ 'ի ձեռս սպարապետին իւրոյ՝ որում անուն էր Սէֆի ղուլի խան, առաքէր 'ի կողմանս Դավրիժու :

Այն ինչ ժամանեալ էր դեսպանն Պարսից 'ի Կոստանդնուպօլիս, և ահա ձայն գուժեաց 'ի քաղաքին եթէ յարձակեալ են Պարսք 'ի սահմանս Օսմանեանց : Աճապարեաց վէզիրն յատեան խորհրդոյ մեծի, յորում հաստատեցաւ զէն առնուլ ընդդէմ Պարսից. և դեսպան նոյին աքսորեցաւ 'ի Լէմնոս յամին 1730, 'ի յուլիսի 24 : Տեղի ձմերոցի վէզիրին սահմանեցաւ Բերիա կամ Ամասիա, յորում ժամանակի և արքային կալ մնալ 'ի Պրուսա կամ յԻւսկիւտար :

Զկնի տասն աւուրց էանց գնաց վէզիրն մեծ յԻւսկիւտար, ուրանօր կանխեալ և գունդք գունդք ենիչէրեաց, և Թնդանօթաձիգ և զինագործ զօրաց հանդերձ ձողաբարձ ձարիւք և ամենայն պատրաստութեամբ՝ սպասէին գալստեան արքային ընդ նուի-

բական գլուխն։ Անցին ժամք բազումք և արքայ չև ևս երևեցաւ. ընդ որ 'ի տրտունջ հատաւ զօրն ամենայն։ Երկուցեալ վեզիրին թէ գուցէ յանկարծադէպ ինչ խափան եղեալ իցէ չըւոյն, փութացաւ դարձ առար անդրէն յարքունիս, և գիտաց զի չկամի արքայ ընդ հաւաչտասայն այն ուղևորութիւն։ Այլ ուր ուրեմն զկնի միջօրէին հաւանեցաւ նա անցանել յԻւսկիւտար ընդ նաւիբակեան գլուխն, և չարագուշակ թուեցաւ այն յաջախուժանին ¹ ։

Մինչդեռ Օսմանեանք որ 'ի յօր յապաղեալ անդադանէին 'ի չուն, լուր եղև եթէ առին Պարսք զՀամադան և զԿրմանշահն և զՆահավենդ, և զԱպտուլլահ փաշա հալածական տարաւին մինչև յԵրևան. և էին ևս որք շշնչէին 'ի քաղաքին՝ եթէ ձեռն վեզիրին մածիեր ընդ կուսակալին Դավրիժու 'ի մատնել զքաղաքն, և այլք այլ ինչ անըրջարանէին առ տապնալ որոյ խորեանց. բայց վեզիրն և տեղապահ նորա չանելոյ առնէին զամենայն։

Ի քսաներորդի ութերորդի աւուր ամսեանն սեպտեմբերի ընդ արևուն ճառագայթել ժողովեցան առաջի դրան մզկթին սուլդան Պայեզիտայ ենի-

¹ Վասնզի ընդունայնահաւատք համարէին անյաջողակ համարելն գործոյ սկսեալ զկնի միջօրէին ։

չէրիք եօլթնեատան, և ՚ի գլուխ նոցա առնաւուան ազգաւ Փագրոնա Խալիլ ոմն. և անցեալք ընդ հին վաճառանոցն աղաղակէին. « Վրէժխնդիրք իրաւանց, ժողովուրդ Մահմէտի, փակեցէք զկրպակսդ և եկայք զկնի մեր »: Եւ զարհուրեալ ոմանց ՚ի կրպակաւորաց անտի՝ եւլին փակեցին զխանութս իւրեանց: Իսկ ենիչէրիք հա՛ գերձ կատաղին երթեալ գնդեցան ՚ի հրապարակն Աթմէյտանի. և Փագրոնա Խալիլ գնաց ՚ի դուռն զօրավարին ենիչէրեաց Հասանայ և սպառնայր հանել ՚ի բանակէ զկալանաւորս: Շփոթեցաւ Հասան ընդ պատահումն, և կատարեաց զպահանջանսն. սակայն և անդէն յայլակերպս եղեալ աճապարեաց ՚ի փախուստ, որով և ապստամբութիւնն անշիջանելի բորբոքեցաւ: Ընթացաւ վաղվաղակի Փագրոնա ՚ի ձմերոց զինագործ զօրականաց, և անտի եւ յափշտակեալ զկայթայն ենիչէրեաց տարաւ ՚ի նոյն հրապարակ:

Ծովակալեան ՚ի նմին խակ աւուր երթեալ ՚ի տունն իւր ՚ի Չէնկէլքէօյ՝ մտադնէր իւրում բուրաստանի, և ըէխ էֆէնտին եւ յիւրում գեղջ զբօսանաց պարապէր: Իսկ վէզիրն մեծ իբրազեկ եղեալ շփոթիցն յուզելոյ ՚ի Կոստանդնուպօլիս՝ փութացաւ ՚ի խորհուրդ ընդ դենպետին և ընդ ամենայն աւագանւոյն, և հաստատեցաւ զի դարձցի

արքայ հանդերձ խուրակքն և դրօշուն անդրէն 'ի Կոստանդնուպօլիս ։ Եւ դարձաւ արքայ յապարանս իւր ընդ դուռն Դոփի գափու մերձ 'ի ծովափնեայ պարտիզանին Եալը քէօշքիւ անուանեալ, ընդ իւր ածեալ ըստ խորհըրդոյ քեռն իւրոյ Խաթիճէ սուլդանին և զամենայն զաւակորեարն, որպէս զի զնոցին կեանս փոխանակեսցէ ընդ խռովուին՝ եթէ յայնպիսի ինչ պահանջանս մտաբերեսցեն ապստամբք ։

Այնեան կազմեցաւ խորհրդոյ յապարանս արքունի ․ և վէզիրն ասաց ելանել կարդալ զժողովուրդն ընդ հովանեաւ նուիրական դրօշուն ․ այլ յանել զօրավարին ենիչէրեաց թէ գուցէ ոչ ոք իշխեսցէ գալ 'ի կոչն, համանեցին կանգնել զդրօշն 'ի վերայ միջնոյ դրան արքունեաց ։ Առաքեցաւ զօրագլուխն պարախզապան զօրաց քան արամբք առ ապստամբսն ասել 'ի դիմաց արքային, զի պատրաստ է արքայ կատարել զխրաւացի հայցուածս նոցա, միայն թէ լուծցեն առ ժամայն զժողովքն ։ Պատասխանի ետուն ապստամբքն և ասեն ․ « Չիք մեր բան ընդ արքայի ․ այլ թող տացին 'ի ձեռս մեր 'ի պահու երկուց ժամուց մատնիչքն չորեքին ․ այսինքն են վէզիրն, տեղապահն, ծովապետն և դենապետն »։ Եւ արքայ 'ի ձեռս պարախզապանացն զտեղապահն և զծովապետն, և պատուիրեաց ասել

ապստամբաց, զի յանձն առնու արքայ ընկենուլ յիշխանութենէ իւրեանց զվէզիրն և զգենպետն: Այլ նոքա դարձեալ ետուն պատասխանի. « Թող աքսորեսցի գենպետն, սակայն վէզիրն տացի 'ի ձեռս մեր »:

Մինչդեռ այս բանագնացութիւնք լինէին, խաժամուժ ամբոխն յաւարի առնուին զապարանս քաղաքապետին Գալաթիոյ, և քարոզքն աղաղակէին զի քրիստոնեայք և Հրեայք մի՛ ինչ երկիցեն, միայն թէ ըստ դուռն տանց իւրեանց մի՛ ելցեն: Դարձեալ և այլ քարոզք յարքայակոյս կողմանէ 'ի ձայն բարձր կարդային առ ամենայն տաճիկս գալ ժողովել ընդ կանաչ դրօշիւն, որոց և արքայ դահեկանս երեսուն տացէ՝ անէին՝ ըստ գլուխ, և առ յապայս ռոճիկ երկուց փողոց յաւուրն: Սակայն սակաւք յոյժ գտան անսացողք հրաւիրանացս, և նոքին ևս 'ի տարաժամել աւուրն մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս. և աւագորեարն միայն օթեցան յայնմ գիշերի առ դրօշուն, որպէս սովորութիւն էր:

Ի վաղիւ անդր որ օր 30 էր սեպտեմբերի, կանխեաց գենպետն 'ի ժողով գինանկանոց. և ընդ նմա դատաւորն Կոստանդնուպօլսոյ Զիւլալի Էֆէնտի, և քարոզիչն Այա սոֆիայի Խափըղառէ, որ սադրիչքն էին ապստամբութեանն: Ընդ սկսաւ գենպետն ս-

տենապանել զանձնէ եթէ զխորդ ծե_
րացեալ յեցեալ է 'ի բազմութիւն ա_
ւուրց, և թէ քանի մեծ անիրաւու_
թիւն է թաթաւել զայնպիսի ակն յա_
րիւնն անպարտ. և յասել ամենեցուն
իբրև ընդ մի բերան, «Քաւ, մի լիցի»,
յաւել գենպետն. «Եւ արդ քանզի
ապստամբեալքն զայլ ոք կամին իւ_
րեանց՝ խնամ դերագոյն, հարկ 'ի վերայ
կայ փոխել զարքայ»։ Յայնժամ պաշ_
տեցին զաղօթս առաւօտուն, և յարու_
ցեալ չոգան 'ի պատշգամն Դէվան
քէօշքին անուանեալ։ Անդր եհաս և
վէզիրն մեծ և ասէ. «Այր մի մեռեալ
եմ ես. այլ մեր ամենեցուն պարտք
են խնամ ունել աւուրց մերոյ արքայ_
ին». և ապա դարձեալ առ գենպետն
ասէ. «Արքայ հրամայէ հրաժարել
քեզ յիշխանութենէդ և յաքսորս գը_
նալ»։ Մատզիւր յանձին կալաւ գեն_
պետն, և անդէն ընտրեցաւ Մուսդա_
ֆա էֆէնտի ոմն. և առ 'ի չգոյէ այլ_
տակ պատմուճանի՝ որպէս օրէն էր,
զգեցուցին նմա սամուրենի կանաչա_
գոյն։

Գործ էր ապա գտանել զոք որ առա_
նիցի առ ապստամբս զպատասխանին
արքային առ պահանջմունս նոցա, և ընտ_
րեցաւ Խազնադարէ Սէլիմ Մէհէմ_
մէտ, և այլ ոմն։ Այն ինչ սոքա մե_
ծաւ դողութեամբ եկեալ գնային,
դարձոյց արքայ յետս զՍէլիմ Մէ_

Հեմմէտ, և գաղտ պատուիրեաց նմա
առնել ցխռովիչսն, եթէ պատրաստ է որ-
քայ մատնել նոցա և զվէզիրն ։ Ցայն-
ժամ չև ևս միաբանեալ էին ընդ ենիչէ-
րիս զօրավարք նոցա․ վասն որոյ ընտրե-
ցին նոքա հապշտապ նորանոր զօրավա-
րս և իշխանս․ և 'ի գալ Սէյիտ Մէ-
հեմմէտայ՝ պահանջէին 'ի նմանէ զի
կատարեսցէ արքայ ոչ միայն զառա-
ջին զիւրեանց խնդիրս, այլ և զնորըն-
տիր զօրագլուխսն հաստատեսցէ, և
ինքնագիր հրովարտակաւ արքունի
տորագրելով յամենայն գլխաւորանաց՝
խոստասցի անվնաս մնալ ինքեանց և
յապագայս, և զայս ամենայն ծանու-
ցին արքային 'ի ձեռն բէկս էֆէնտիին
իւրեանց և մեծի դատաւորին, որ Զի-
ալըն էր ։ Հաւանեցաւ արքայ ընդ
բանսն․ և ընդ երեկս աւուրն առեալ
ներքինապետին զկնիքն 'ի վէզիրէն՝ ած
ինա առ տէ գայապահն և ծովապետն, որ
'ի սրահի գահամպետին ժամ 'ի ժամէ
մնային դատակնքոյ մահուն իւրեանց ։

Ի մէջ գիշերին դարձեալ խորհուրդ
կալան ապստամբքն եթէ զիա՞րդ որ-
ժամ իցէ առնուլ ինքեանց զբրիանուէ-
րեալն մոլեգին ցասման իւրեանց,
կենդանիս եթէ մեռեալս․ և հաստա-
տեցին կենդանւոյն առնուլ ։ Իբրև այգ
եղև, գեներալն և դատաւորն մեծ կո-
չեցան շտապ տագնապաւ առ արքայ,
և նա հրամայեաց 'ի մահ տալ վաղվա-

ղակլի զերիս կալանաւորսն . զի ահա ամբոխ ապստամբաց առաջի հանդի-սարանի արքունեացս խռնեալ կայ ա-մէ ։ Սուտ էր համբաւն 'ի խաբեբայ մարդկանէ ուստեք հնչակեալ . սա-կայն անդէն հեղձամղձուկ մահուամբ բարձան 'ի միջոյ երեքին արքն այնո-քիկ, և գլխկունք նոցա ածան սայ-լիւք 'ի հրապարակ անդր ։ Իսկ ապըս-տամբք առեալ զնոսին , զգլխակն ծովա-պետին արկին առաջի ապրէրին որ Հոր-հոր չէշմէսի կոչի, և զանեղապահին առ-դրան Իմթմէյանի հրապարակին ։ « Այլ միւսն ոչ վեզիրին է , աղաղա-կեցին ապստամբակեալքն . պահեալ է արքայ զվեզիրն, և զՄանոլ զոմն մուշ-տակագործ յոյն 'ի մահ մատնեալ է . և իցէ պարտ և արժան այսօրինակ խա-բեբայ լինել առն Թագաւորի » ։ Զայս և զայսպիսի բարբառս կցկցեալ , հաւա-նեցուցին զտխմար մարդիկն, առէ Սիպա-հի , 'ի բանս ստութեան իւրեանց . և բարձեալ զգլխակնն 'ի գրաստ մի ա-ռաքեցին բազում նախատանօք 'ի դու-ռն ապարանիցն արքունի ։

Զայն իբրև գիտաց Ահմէտ արքայ , կոչեաց վաղվաղակի զդենպետն հան-դերձ գլխաւորօք և ասէ ցնոսա . « Արդ ծանեայ հաւաստեաւ զի ոչ կամին դոքա Թագաւորել ինձ 'ի վերայ նոցա . ես իսկ ինքնին ձանձրացեալ եմ յաթոռոյս , և վաղու ես եդեալ էր 'ի

մօրն զՄահմուտ զորդին Մուստաֆայի Բ. ամբառնալ 'ի աթոռն : Մնայ արդ միուս 'ի ձէնջ գնալ առ ապստամբսն և երդմնեցուցանել զնոսա զի մի ինչ մեղանչեսցեն ինձ և որդեկացն իմոց» : Մինչդեռ գլխանականքն ամենայն յապուչ հարեալ 'ի վարանս կային անբարբառք, Խափիրղաւէն և Զիւլալի էֆէնտի յանձն առին զպատգամաւորութիւնն. և յերկրորդ ժամու գիշերոյն դարձեալք անդրէն առ արքայ՝ ծանուցին ուրախութեամբ եթէ հաճ են ապստամբք ընդ իրսն, և երդնուն 'ի կուրանն՝ չմեղանչել ինչ արքայի և որդւոց նորա :

Յանցանել 'ի վերայ իբրու կիսոյ ժամու՝ ածաւ եղբօրորդին Ահմէտայ Մահմուտ առաջի նորա. յարեաւ արքայ և համբուրեաց զճակատ նորոյ թագաւորին, և նա համբուրեաց զձեռըն Ահմէտայ և ընկալաւ զօրհնութիւն նորա : Ապա և որդիքն արքայի ողջագուրեցին զՄահմուտ, և Ահմէտ արքայ նոքօք հանդերձ մեկնեցաւ 'ի սենեակ վերարկուին Մահմէտի :

Այս վախճան եղև քսանեօթնամեայ թագաւորութեանն Ահմէտայ արքայի, որ աղմկաւ ամբարձեալ 'ի գահ, դարձեալ և աղմկաւ էջ անտի. այլ աւուրք թագաւորութեան նորա լի են անմոռաց յիշատակօք պերճութեան օսմանեան պետութեանն. որ-

պիսիք են առումն Մոռայի, հաշտութիւնքն մեծամեծք, և հիմնարկութիւն մատենագարանաց և տպարանի: Սէրող գոլով թռչնոց և կակաչից և մեխակաց, նա և հայելեաց և ջահալոյց հանդիսից, ոչ ինչ կարի տաղտապէր 'ի խնամս անուշութեան աշխարհին. և ըստ բախտի հանդիպեալ առն խոհականի, որպիսի ոք Իպրահիմն էր 1, բազում կարգաւորութեամբ յաջողեցաւ 'ի Թագաւորութեան իւրում. և եղեն Ահմէտայ որդիք երեսուն և մի:

1 Առանդի 'ի Գրոսսածոդելապանին Գուղլիելմոյ, որ 'ի ժամանակին յայնմիկ 'ի Կոստանդնուպօլիս էր, էթէ վէզիրն մեծ Իպրահիմ ծուլա հայազգի իցէ 'ի բնէ. թէպէտ և պատմագիրք Օսմանեանց ասեն զնա որդի լեալ փաձկի ուրումն Ալի աղա ծուլէճեայ: Այս ինչ հաստատի է, զի Իպրահիմ ընդ մեծամեծ յիշատակս առատապայեանութեան և իմաստուն տեսութեան իւրոյ եթող և գանձ բազում, բայց ոչ այլազգիսութեամբ ժողովեալ. զի թող զայսոսիկ անհամար պաշտօնածոյն, գտան թողեալ 'ի նորոյ ապարանոցի ապարանից նորա երէք արկեղ՝ յորս էին վաթսուն հազար ոսկիք. և այլ ևս արկղ մի լի ակամբք պատուականօք և դիպակօք և զինուք և սպասուք, որոց գինք աւելի էին քան զերիս հազար քսակս ոսկւոյ:

## ՍՈՒԼԴԱՆ ՄԱՀՄՈՒՏ Ա.

Յերկրորդում գիշերի ամենայն հոլանեմերի Թագաւորեաց Մահմուտ արքայ , ամաց գոլով երեսուն և հնգից ։

Պատդամաւորք ապստամբացն հանդերձ դասուն գխնակաանց ժողովեալ երկիր պագին նորոյ Թագաւորին , և մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս ։ Այլ 'ի վաղիւ անդր գլխաւոր սադրիչ ապըստամբութեանն Փադրոնա՝ կոչեցեալ յարքայէ ,յանդիման եղև նմա 'ի հանդերձս հասարակ ենիչէրի զօրականի և մերկ սրունիւք ։ Ասէ ցնա արքայ ․ « Զի՞նչ վարձս հատուցից քեզ » ։ —« Իմ ամենայն տենչ սրտի լցեալ է , ասէ Խալիլ , զի տեսանեմ զարքայ իմ բազմեալ յաթոռ Թագաւորութեան ․ բայց արդ գիտեմ զի մահ նախատանաց է բաժին իմ » ։ — « Երդուեալ 'ի հարս իմ , ասէ արքայ , զի ոչ մի ինչ չար անցցէ ընդ քեզ ․ խնդրեա ինչ փոխարէն , և այժմ իսկ տացի քեզ » ։ Եւ Փադրոնա խնդրեալ ընկալաւ զբարձումն օրինաց մշտնջենաւոր կալուա-

ծոց 1 ։ Ապա փոխեաց արքայ զամենայն աւագանին որ թեարկեալ էին Իբրահիմայ, և զսիլըհտար Մէհէմմէտ փաշա հաստատեաց 'ի մեծի վեզիրութեան ։ Սակայն ամբոխ ապստամբացն չև ևս դադարէր յաղմկելոյ յըմբոստանին ։

Ի միւսում ուրբաթուն, որ օր վեց էր հոկտեմբերի, ածաւ արքայ զսուսերն ընդ մէջ իւր յԷյուպ ։ Յառաջընթաց լինէին թափորոյն երկոքին առաջնորդք ապստամբութեանն Փադրոնա և Մուսլու, հեծեալք յերիվարս, ունելով փակեղունս 'ի գլուխ, և մերկ զսրունս, և սփռէին զճանապարհայն ոսկի առ ժողովուրդն, և փոխանակ երկոտասան քսակաց՝ որպէս էր սովորութիւն՝ յիսուն հրամայեաց բաշխել արքայ ։ Հրաման հայցեցին ապստամբքն յարքայէ բոցակիզել զամենայն ամարաստան անդլս զորս կանգնեալ էր աւագանւոյն 'ի Սատապատ, որ է Քէաղըթխանէ. և Իբրահիմ փաշա

1 Այն ինչ է Մալիքեանէ, զոր հաստատեալ էր յամին 1695 վեզիրին մեծ Էլմաս Մէհէմմէտ փաշայ 'ի թագաւորութեան զՄուստաֆա, այսինքն է զտարեկան հասոյս զոր տային 'ի գանձն արքունի վարձկանք արքունական կալուածոց ։ Սակայն յամին 1759 և առ յաղգս դարձեալ խափանեցան այս օրէնք և խափանին մինչև ցայսօր ։

հարիւր և քանիւ չափ պատշգամս կանգնեալ անդրէն, և շուրջանակի ծառաստանօք զարդարեալ էր։ Սակայն արքայ քանդել ևեթ զնոսին արար հրաման իւրաքանչիւր տերանց ցերիս աւուրս · զի մի, ասէ, առակ նշանակի կայցուք ազգաց քրիստոնէից, հուր հարկանելով 'ի մեր ձեռակերտս իբրև յայլազգենից ումանց։

Զհետ երից աւուրց եղին յարքայէ պարգևք թագաւորութեանն բարձեալք 'ի հարիւր և 'ի յիսուն սայլս, և 'ի միում միում քանակք արծաթոյ յիսուն. և այս ամենայն եօթնհազար և հինգ հարիւր քանակք բաշխեալք 'ի քառասուն հազար ենիչէրիս, յութսուն հազար թնդանօթաձիգս, 'ի քսան և երկու հազար զինագործս, և 'ի քսան հազար հեծելազօրս, ցածուցին զաղմուկ ապստամբութեանն · բարձան վրանք ամբոխելոցն 'ի հրապարակէ անտի, և բացան վերստին ամենայն կրպականին յետ չորեքտասան աւուրց խափանածոյ։

Սակայն ցորչափ կենդանի էին անհամբոյր գլուխք ահագին խռովութեանն, անհնարին էր խաղաղութեան տեղի տալ 'ի քաղաքին։ Փադրոնա Խալիլ և Մուսլու բռնացեալք 'ի վերայ վէզիրին մեծի, յախուռն տային նմա փոփոխութիւնս առնել պաշտամանց · մինչև յայն զոմն զիւրեանց մա-

գործ՝ Եանաքի անուն՝ ամբարձին յիշխանութիւն Մոլտաւիոյ փոխանակ Հիքայի, որ ՚ի չորից աւուրց հետէ ևեթ հաստատեալ էր ՚ի պաշտօնն. և զխանն Խրիմու զՄէնկլի Քէրէյ ընկեցին արտաքսեալ, կարգեցին յաթոռ նորա զԳափլան Քէրէյ:

Ոչ ևս հանդուրժեալ ընդ այս ամենայն և ընդ այսպիսի բռնութեան քաջ ներքինապետն Պէշիր, միաբանեաց ընդ իւր և զնա ինքն զԳափլան Քէրէյ, որ ՚ի Կոստանդնուպօլիս էր յայնժամ, և զծովապետն Ճանըմ Խօճա, և զդեսպետն և զվէզիրն մեծ, և զդնդապետն ենիչէրեաց զայր հուժկու և յաղթանդամ Փէհլիվան Խալիլ անուանեալ, և զայլս ոմանս, և նոքօք հանդերձ հաստատեաց օր սահմանել՝ ՚ի բառնալ ՚ի միջոյ զխռովայոյզ մարդիկն: Քանզի կամէին նոքա ընկենուլ յիշխանութենէ զվէզիրն և զդեսպետն և զներքինապետն. կարգել վէզիր մեծ զզօրավարն ենիչէրեաց, ծովապետ զՓադրոնա Խալիլ, և զօրավար ենիչէրեաց զշովաղնորին զՄուսլու:

Խորհուրդ ՚ի մէջ առեալ աւագ որերոյն՝ օր պայմանեցին առնելի. յորում աւուր Փադրոնա թէ հարկ է խաղալ մարտիւ պատերազմի ՚ի վերայ Ռուսաց: Խանն Թաթարաց զդէմ կալու խորհրդոյն. բայց ՚ի զօրանալ բարբառոյ հակառակ կողմանն, յայն որ ձգե-

ցին զկրան : Ապա 'ի 25 աւուր ամսեանն նոյեմբերի դարձեալ ժողովեցան 'ի խորհուրդ, և 'ի կատարածին ծանոյց վէզիրն Փադրոնայի՝ եթէ կամք են արքայի զամուրենին ազդուցանել նմա և կողմնապետ հաստատել Եւրոպեան : «Չկամիմ ես» գոչեաց Փադրոնա յո-խորտանօք . զի ակն եդեալ էր զօրավար ենիչէրեաց լինել : Յայնժամ 'ի վերայ եած Գափլան.քերէյ . «Ո՛ն երթիցուք նախ զպատերազմին խորհուրդ ծա-նուցանել արքայի» . և յարեան ամե-նեքեան 'ի միասին գնալ 'ի պատշգամն Բէզան քէօշքին : Յայնմ պահու փէհ-լիվան Խալիլ հանդերձ երեսուն և եր-կու արի արամբք դարանեալ կայր 'ի մերձակայ սենեկին . ընդ ժամանել ատենակալաց 'ի պատշգամն՝ վէզիրնետ յանկարծ զարդ նշանին, և դարանա-մուտքն ոստեան պատառաղէնք 'ի դուրս 'ի Թոպանենէ անտի : Յառաջ մատեա-լին փէհլիվան և գոչեաց առ ծա-ռայ առ Փադրոնա . «Ո՞ր այն չուա-ռական իցէ որ զօրավար ենիչէրեաց լի-նել յանդգնիցի» : Աճապարեաց Փա-դրոնա ձեռն 'ի դաշոյն ձգել . այլ ան-դէն խողխողեցաւ նա և Մուսլու : Մու-ծան 'ի ներքս և արբանեակքն նոցա արք-քան և վեց, զի խիլայեսցին յարքայէ, և անդէն փողոտեցան և նոքա : Այս-պէս ընկճեցան 'ի միջոյ խռովարարք աշխարհին . և Միւհսին զատէ Ապտուլ-

լաւ կարգեցաւ զօրավար Ենիչէրեաց , և փէհլիվան խալիլ առաջին փոխանորդ- նորա , որ է Գուլ քեահեասը ։ Յետ սակաւուց արկաւ յիշխանութենէ և վէզիրն մեծ , և ամբարձաւ փոխանակ նորա Գապագուլագ Իպրահիմ փա- շա ։

Մինչև անցեալ ամսոց երկուց՝ միւս ևս անգամ ծագեցաւ աղմուկ խռովու- թեան . և Ենիչէրիք յարձակեալ 'ի դուռն զօրավարին իւրեանց՝ կամէին սպանանել զնա ։ Նա խոյս վիրաւոր մազ- ապուր ճողոպրեցաւ 'ի փախուստ , և վրանք ապստամբաց հարան դարձեալ յԷթմէյտանին. և պատճառ ապստամբութեան էր իշխանին Մոլտաւիոյ Ղանաքեայ կուսակցին փադրոնայի ։ Փութացաւ արքայ անդէն 'ի սկզբան ցածուցանել զաղմուկն , և հրաման ետ պարզել զդրօշն նուիրական . և զինագործքն և փայտահարք և պարտիզպան զօրա- կանք անկեալ 'ի վերայ Ենիչէրեաց՝ ցրուեցին յիւրաքանչիւր տեղիս ։

Յայնմ հետէ փոյթ յանձին կալաւ վէզիրն մեծ ոչ միայն զաւագորեայն փոփոխել , այլ և զնորին ապստամբու- թեան սպառսպուռ. չքացուցանել . որպէս զի 'ի ժամանակի վեցից ամսոց կոտորեաց արս հնգետասան հազար, էր զոր յայտնի և էր զոր 'ի ծածուկ ։ Տրտունջ կալաւ ամբոխն զայսչափ մա- հուանց տարապարտ գործելոյ 'ի վէզի-

րէն, զի 'ի յագուրդ խուրումն քինու միտ դնէ ասէին: Թշնամացաւ ընդ նմա և ներքինապետն Պէշիր, և արար ընկեցիկ, և առաքեաց զնա որպէս կուսակալ յԷյրիպօզ. իսկ զկնիքն արքունի ընկալաւ Դօփալ Օսման փաշա: Եւ յանդորրանալ այսպէս իրաց պետութեանն պարապ էառ արքայ խորհել զիրաց պարսկական պատերազմին:

Թագաւորեալ Մահմուտայ արքայի՝ ոչ ինչ ունկնդիր եղև բանից դեսպանացն Պարսից, և պատուէր ետ զօրավարաց օսմանեան բանակին յառաջ վարել զպատերազմն: Սպարապետն Պաղտատայ Ահմէտ փաշա էառ անդրէն զԿրմանշահան. և հէքիմզատէ Ալի փաշա 'ի դաշտին Գուրիճանայ՝ որ մերձ 'ի Համատան՝ մարտ եդեալ կռուեցաւ ընդ զօրս Պարսից և եհար զնոսա 'ի հարուածս սաստիկս, մինչև չիմալոյ 'ի նոցանէ այլեւս, որպէս ասեն դէն պատմագիրք Օսմանեանց: Այսպէս խորտակեցաւ Դահմազպ շահ, որ 'ի սադրելոյ ատագանեայն իւրոյ կացեալ էր 'ի գլուխ բանակին. ուր քաջամարտիկն Նատըր պաշարէր յայնժամ զՀերաթ: Դահմազպ շահ միածի ճողոպրեցաւ 'ի Դեհրան. իսկ Օսմանեանք հեղեղաբար արշաւեալ ընդ ամենայն երկիրն՝ առին և զՈւրմիա և զԴավրէժ, և ընկալան յարքայէ թուղթըս գովութեան և պարգևս շնորհա-

կալեալ: Ուր ուրեմն 'ի սկզբան ամին 1732 տապալեալն Օսմանեանց Ահմէտ փաշա զիջաւ 'ի խնդիր տեղ տեղ հրեշտակութեանցն Դահմասպայ, և հաստատեաց ընդ նմա զդաշն խաղաղութեան, որով դեռն Երասխ սահման եղև աշխարհացն երկոցուն, և Գանձակ, Տփխիս, Երևան և Նախիջևան հանդերձ լեռնակողմամբքն մնաց 'ի բաժին Օսմանեանց, իսկ 'ի Դավրիժէ և անդր 'ի ձեռս Պարսից:

Ի լուր դաշանցն պայմանելոց դըժկամակեցաւ Մահմուտ արքայ ընդ կորուստ Դավրիժու. և զի վէզիրն մեծ զհակառակն խորհէր՝ ընկեցաւ յանկարծ յիշխանութենէ: Արկաւ 'ի պատուոյն և գենպեան փաշմագձիզատէ Ապտուլլահ էֆէնտի, որ ընդդիմակալ մտերմութեամբ վէզիրին մեծի՝ ունչս առնել թուէր զհրամանօքն արքայի: Ի սորա աւուրս գանձապետն արքայի գտանէ 'ի մի յարկեղաց գանձուն վէմ մի՝ յորոյ վերայ երևէին հետք երկուց ոտից. վճիռ եղուն գիտնականք՝ եթէ անշուշտ նշխար է այն մարգարէին իւրեանց. և արքայ հրամայեաց ագուցանել զնոյն յոսկի մզկիթին որ յԷյուպ: Ընդ նոյն ժամանակս և դեսպանք յեւրոպական պետութեանց ջանեալ պարգևօք խնդակից լինէին թագաւորելոյն Մահմուտայ: Այլ չև ևս ունէին սոքա յաջս օսմանեան դրան զպա-

ախտն զոր այժմ ունին . քանզի արքու-նի պատմագիր ժամանակին Սուպհի Էֆէնտի յիշատակեալ զմուտ դեսպանին Գերմանացւոց առ արքայն , զայս օրի-նակ արհամարհանօք բարբառի . «Մու-ծաւ անիծեալն այն , ասէ , յատեան արքայից արքային . և իբրև խոնարհեալ մածոյց զճակատ իւր 'ի հող և 'ի փոշի սեմոց արքունական սրահին , և աւան-դեաց զնամակն և զընծայսն զորս բար-ձեալ բերէր , զգեցուցին նմա զհան-դերձ պատուոյ անհամեմատ իւրոյ նը-կուն հասակին : Այսպա արբեցեալ իմն բարեբաստութեամբն՝ եւ մեկնեցաւ յապարանից արքայից արքային . և յան-ջհեա կորնչել չքոտի անձին նորա , ակ-նակձիտ պայծառութիւն արքունեաց պարզեալ սրբեցաւ 'ի բծէ աղանդու-թեան նորա » :

Սակայն Գաղղիացւոցն դեսպանն բա-զում մեծարանս եգիտ 'ի դրանէն . զի վեզիրն մեծ Գոփալ Օսման փաշա սի-րէր յոյժ զԳաղղիացիս : Եւ այն իսկ թերևս յաչաց եհան արքայի և աւա-գանւոյն զայլն խաղաղանէր :

Այստանօր չկարեմք զանց առնել զոր-ժանալուր յիշատակս երախտագէտ մտաց առնս մեծի յօրինակ սքանչելի ամենայն մարդկան : Սա մինչդեռ քսան և հինգ ամաց էր՝ առաքեալ յարքայէ յԵգիպտոս , և 'ի ճանապարհին պա-տահեցաւ նաւու միոյ հինից Սպանիա-

ցւոյ. մարտ եղ ընդ նոսա մեծաւ քաջութեամբ, և 'ի նոյն խրախուսեալ յորդորեաց զիւրսն. սակայն 'ի վերջէ ընկճեալ 'ի բազմութենէ անթիւ թշնամեաց՝ վէրս էառ 'ի նոցանէ 'ի բարձն և անկաւ 'ի գերութիւն: Իւրով ազատամիտ և բարեհամբոյր բարուքն սիրելի եղև նա յաչս նաւապետին. այլ անբուժելի եկաց մնաց վէր բարձից նորա, յորմէ և կաղութեանն եղաւ նմա յորջորջումն:

Իբրև եհաս նաւն 'ի Մելիտինէ, որ է Մալթա, եկն յայց նաւորդացն գաղղիացի այցելու նաւահանգստի կղզւոյն Արնո անուն: Զնա իբրև ետես Օսման, ասէ ցնա. «Իցես դու այր մեծախորհուրդ. հապա փրկանաւորես զիս 'ի գերութենէ աստի, և գիտա՛ զի ոչ սորջացցիս »: Սքանչացաւ Գաղղիացին ընդ ազատական բանս գերւոյն վիրաւորի, և քննեալ տեղեկացաւ զի հազար ոսկւոյ էին գինք առնն. «Եւ զիա՞րդ, ասէ, ծախիցեմ ես ընդ վայր այսչափ դրամս՝ 'ի խոստումն ևեթ վստահացեալ առն անծանօթի »: Ասէ Օսման. «Ստանօր զուգապէս արդարանամք երկոքին. զի ինձ յիրաւի է տենչալ խնդրել ազատութեան, և քեզ՝ ոչ դիւրահաւան լինել բանից առն անծանօթի: Այլ աղէ դու մի անարգեսցես զխոստումն իմ, և մի դանդաղեսցիս ազատութիւն շնորհել ինձ՝ ընդ որ երբեք ոչ ապաշաւեսցես »:

Գիտաց Առնօ եթէ ոչ երեքդանգեան որ է այրն որ զայնպիսի բարբառէր, և անդէն փրկանաւորեաց զնա ընդ վեց_հարիւր ոսկւոյ․ ապա դարմանեաց և զվէրս նորա և բժշկեաց․ և Օսման թէ_պէտ և կամէր զառաջինն տալ ածել 'ի Կոստանդնուպօլսոյ դրամս 'ի հատու_ցումն բարերարին իւրոյ, այլ ապա տե_սեալ զանչափ մարդասիրութիւն նորա՝ խնդրեաց 'ի նմանէ յինքն ապաստան առնել զվճարումն իրացն․ և Առնօ մնա_դիւր զիջաւ 'ի խնդիրն ։ Գնաց Օսման անտի յԵգիպտոս, և ընդ նաւապետի իւրում առաքեաց առ բարերարն իւր ոսկիս հազար, և սամուրենիս ազնիւս 'ի պարգև ։

Ապա 'ի դառնալ իւրում 'ի Կոստան_դնուպօլիս և 'ի կարգիլ զօրավար բա_նակին Օսմանեանց ընդդէմ Վենետկե_ցւոց յամին 1715, և յառնուլ քաջու_թեամբ զԿորնթոս, մեծացաւ յոյժ պատիւ նորա, և յամին 1722 կարգեցաւ կուսակալ Մօռայի ։ Ընդ պատուի_րեաց հիւպատոսին Գաղղիացւոց ազդ առնել Առնոյի՝ զի առաքեսցէ առ ինքն զորդի իւր, և ես մեծացուցից ասէ զնա յոյժ․ որպէս և արարն իսկ, և շնորհեաց նմա ազատութիւնս բազումս 'ի վաճա_ռաշահութեան, որով կարի իմն փար_թամացաւ նա ։

Իբրև եկաց Օսման կողմնապետ և սրա_պաշտօն մասին՝ կոչեաց զԱռնօ և զորդի

նորին առ իւր, և մեծապարգև մեծա_
րեաց զնոսա ընդելական սիրով ։ Թուէր
ինձ այնպէս՝ եթէ լուելի հառոյց Օս_
ման ցայս վայր զպարտս իւր առ բարե_
րար անձինն. այլ նա հաւաստեաւ գի_
տէր, և արդեամբք ստուգեաց, եթէ
ոչ ըստ երախտեաց կշռելի է երախ_
տագիտութիւն ։ Սմին իրի իբրև ամ_
բարձաւ 'ի մեծագահն իշխանութիւն
վէզիրութեան, աճապարեաց առնել
զդեսպանն Գաղղիացւոց՝ զի կոչեսցէ 'ի
Կոստանդնուպօլիս զԱհնօ ։ Եկն եհաս
նա անդր զհետ չորից ամսոց՝ ածեալ
ընդ իւր հանդերձ ծանրագին ընծայիւք
և գերիս երկոտասան օսմանցիս փրկա_
նաւորեալս յիւրմէ ։ Հրամայեաց Օսման
տողել զգերիսն առաջի իւր, և յան_
դիման բարերարին իւրոյ Ահնոյի ասէ
ցպաշտօնեայս իւր. « Սոքա ամենեքեան
ազգակիցք մեր երախտապարտք են
առնս այսմիկ վասն ազատութեան
իւրեանց. իսկ ես երախտապարտ եմ
սմին՝ ոչ միայն սակս սոյնօրինակ ազա_
տութեան 'ի դառն կապանաց գե_
րութեան, այլ և վասն կենացս զկնովին և
վասն փառացս յոր վայելեմ յաւուր
յայսմիկ ։ Սա յանդէտս փրկանաւո_
րեաց զիս ընդ յոլով գերեաց. հա_
ւատաց 'ի բանս իմ և արձակեաց
զիս, այլ և յաւել ետ ինձ զնաւ իւր ։
Քանի՞ք իցեն յաշխարհի այսպիսի բա_
րերարք » ։ Ապա եցոյց Օսման Ահնոյի

և որդւոյ նորին զամենայն խնամս և զգուշութիւն մտերմութեան, Ճոխացոյց զնոսա անթիւ պարգևօք, և շնորհեաց նոցա բազմապատիկ ազատութիւնս :

Այն չէր շատ, այլ և ամենայն Գաղղիացւոց եղելոց 'ի քաղաքին՝ 'ի բազում ինչ կարևոր իրս եղև ձեռնտու և օգնական, և թոյլ ետ նոցա կառուցանել կրկին եկեղեցիս 'ի Ղալաթիա : Սովիմբ և ազատութիւն յոյժ յորդեաց 'ի Կոստանդնուպօլիս, և բարգաւաճեաց մեծապէս տուրևառութիւն վաճառաշահութեան : Այլ Օսման ոչ զերծաւ յայսմ ամենայնի 'ի ժանեաց նախանձորդացն իւրոց, որք ամբաստանեցին զնա առ Ներքինապետին և գենապետին և առ մօր թագաւորին որպէս ձեռնտու յեւրոպացիս. և նորա ետուն արքայի ընկենուլ զնա յիշխանութենէ անտի և առաքել 'ի Վիրս իբրու կուսակալ աշխարհին, և զկուսակալն Վրաստանի զՀէքիմ զատէ Ալի փաշա 1 կարգել վէզիր մեծ 'ի տեղի նորա :

Զհետ երկուց ամսոց եկն եհաս վէզիրն նոր 'ի Կոստանդնուպօլիս. և զի հմուտ էր իրաց աշխարհին Պարսից՝ ետ արքայի բազում փոփոխութիւնս առ-

1 Այսինքն՝ թէ հայր սորա Նոյ էր Հէքիմ իմաստնոյ՝ բժիշկ թագաւորին էր, և 'ի Պարսկաստան հրահանգեալ 'ի բժշկութեան ճարտար և բժշկագէտ հանճարու արուեստի :

նել 'ի զօրավարս զօրուն ։ Փոյթ կալաւ առաւելուլ և զարժէս դրամոց՝ որ նուազեալ էին յոյժ ․ և մանաւանդ 'ի գլուխ տանել զկարևոր և զկենցաղօգուտն շինուած՝ զոր սկսեալ էր շինել արքայ ․ այն իսկ են ջրհորքն պեղեալք 'ի լեռնամէջս Պիւյիւքտէրէ անուանելոյ գեղջ ․ զի անտի ած երեր զջուրն 'ի Պէյօղլու և 'ի Ղալաթիա , ուրեք ընդ ստորերկրեայ ադուգայս անցուցեալ ․ և ուրեք 'ի վերուստ կողմանէ մեծաշէն կամարաց ։ Յայնժամ կանգնեցաւ և որ 'ի Պէյօղլու Ջրաբաշխն է՝ Թագսիմ կոչեցեալ ․ և անտի հորդէր ջուրն աւելի քան 'ի քառասուն աղբերս՝ զորս կամակար յարկեցին յոլովք յաւագ որերոյ քաղաքին [1] ։

Դահմազ գուլիխան դարձ արարեալ ընդ այն ժամանակս մեծաւ յաղթութեամբ 'ի Հերաթէ , իբրև գիտաց զհաստատել դաշանց բարեկամութեանն ընդ Օսմանեանս և ընդ Դահմաստ արքայ , զայրացաւ յոգի իւր , և անտի պատճառս կալեալ ընդվզեցոյց յարքայէ զամենայն նախարարեանն , և մեկեալ յԱսպահան՝ արկ յելխանու-

1 Քանզի բարեգործութիւն մեծ է առ Օսմանեանս արբուցանել զծարաւեալս , մինչև ասել 'ի գիրս օրինաց նոցա ․ « Գլուխ ամենայն ողորմութեանն՝ ջուր մատուցանել կարօտելոց » ։

թենէ անտի զԴահմասպ, և թագա-
ւորեցոյց անուամբ լոկով զորդին Դահ-
մասպայ՝ որ տղայ էր քառամսօրեայ ։
Այս արձակեալ 'ի Կոստանդնուպօլիս
դեսպան զոք՝ ասէ ․ « Հարկ 'ի վերայ
կայ տալ 'ի բաց զամենայն զգաւառս
զորս հատէքն յաշխարհէս Պարսից, և
կամ 'ի մարտ պատերազմի պատրաս-
տել » ։ Զայս ասաց, և ինքն խաղաց
գնաց 'ի սահմանս աշխարհին, և 'ի
սկզբան 1733 ամին՝ եկն և պաշարեաց
զՊաղտատ ․ քանզի Օսմանեանք թէ-
պէտ և արխաքար մարտ եդեալ կռուե-
ցան ընդ Պարսս 'ի զանազան տեղիս,
այլ զի անազդ էր պատերազմին՝ վաղ
մեկնեցան ամրանալ 'ի Պաղտատ ։

Յայնժամ հրաման ետ Մահմուտ
արքայ, և Դոփալ Օսման փաշա ա-
ռեալ զիշխանութիւն սպարապետ և
սպասալար [1] կալեալ ամենայն բանակին
Օսմանեանց, անց գնաց ընդ Մուսուլ
ընդդէմ Պարսից արամբք իբրու հա-
րիւր հազարօք ։ Իբրև եհաս 'ի Քէր-
քիւք՝ թուղթ ընկալաւ 'ի Նատըրայ լի
թշնամանօք ․ « Այդ եղև ինձ, ասէ, եթէ
սպարապետ ոք Օսմանեանց յարու-

1 Աւանդին յաւագութեան էր Օսմանեանց զօրավարաց պարագլխաց պատերազմաց ու Սե-րասքեր անուանել, այլ նորին իսկ Պարսից բառիւ՝ Սիփէհսալար ․ արդ Դոփալ Օսման երեւեցուցանէր նա յորջորջանօք ձեռաւր ։

*ցեալ դայ 'ի վերայ իմ, վասն որոյ աղա-չեմ երադել զգալուստդ. քանզի Թէ-պէտ և Պաղտատ արդէն իսկ յիմում ձեռին է, սակայն ըղձանամ խորտակել նախ զապարապետդ, և ապա դէմ դնել 'ի Կոստանդնուպօլիս. և այն ունիմ ոչ միայն զբանակդ ընդ բաժանս արկանել, այլ և զԴոփալ Օսման իբրև զմանուկ խանձարրապատ ։ Պատասխանի ետ Օսման և ասէ. « Արդարև Դոփալ է անուն իմ, և կաղս 'ի կաղս Թուիմ գալ 'ի վերայ քո. սակայն և այնպէս յաղ-Թահարեցից զքեզ հանդոյն Նեբրով-Թայ » ։*

*Չու արար Օսման փաշա բանակա-ւըն հանդերձ 'ի Քէրքիւքայ. և անդէն 'ի կարգի եդեալ զամենայն զօրականն, զաջ Թեւն ետ 'ի զօրագլուխն Ենիչէ-րեաց յԱպտուլլահ, զյառաջապահն ցփուլատ Ահմէտ փաշա, զձախն ցԻպ-րահիմ փաշա, և զվերջապահն ցՄէ-միշ փաշա ։ Թիւ յառաջապահիցն և վերջապահից ոչ ինչ աւելի էր քան զվեց հազար, և 'ի համար հրազինուցն վաԹսուն ԹնդանօԹք եւեԹ էին ոչ ինչ մեծամեծք ։ Իսկ Նատըր առեալ զմասն մի հնոյն Պաղտատոյ որ յայն-կոյս գետոյն կայ, Թումբս և ամբար-տակս առ գետափամբն կառուցանէր առ 'ի մարտնչելոյ ընդ ամրոցին. և կարծելով իմն եԹէ յանհնարս անկեալ 'ի տարակուսի կան պաշարեալքն՝ ա-*

ուղղեաց 'ի ներքս առ զօրավարն Օսմանեանց Ահմէտ փաշա սայլ մի լի մեղրապտղիւ. և Ահմէտ զգօնագոյն պատասխանի արարեալ ծաղուն՝ ելից զնոյն սայլ ճերմակ հացիւ և դարձոյց անդրէն առ Նատըր. « տե՛ս ասէ, զի չեմք տակաւին սովալլուկք, և այդ պարէն է ահա ամրականացս մերոց »:

Երբև լուաւ Նատըր զհաստանել Օսմանեանն բանակին, եթող զկնի իւր գունդ մի երկոտասան հազար արանց, և ինքն եօթանասուն հազարաւ խաղաց ընդդէմ Օսմանեանց, և պատահեաց նոցա առ ափն Տիգրիս գետոյ յեօթնետասներորդի աւուր ամսեանն յուլիսի յամին 1733: Ի ծագել առաւօտուն հայեցեալ տեսին Օսմանեանք զբանակն Պարսից յերկուս գունդս բաժանեալ. և Թոփալ Օսման, որ ցայնժամ դահաւորակաւ բարձեալ բերէր 'ի պատճառս բազմաթիւ խոցուածոցն, վառեալ յարութիւն քաջութեան՝ աշտանակեաց յօդապարիկն երիվար, և անց եկաց 'ի գլուխ ամենայն բանակին: Արիւնառուշտ յոյժ եղև պատերազմն, և ժամս ինն տևեալ մնայր անպարտելի: Ի վախճանի ուրեմն խորտակեցան Պարսք. բիւր մի հեծելոց 'ի նոցանէ անկաւ 'ի սայր սուսերի, և մնացեալքն հալածական եղեալ դարձան 'ի փախուստ, և Պաղատ զերծաւ 'ի պաշարմանէ անտի:

Յաւուրն չորրորդի եմուտ Դոփալ Օսման փաշա 'ի Պաղտատ, և մեծապատիւ մեծարեաց զԱհմետ փաշա՝ փոխանակ զի արիաբար պահեալ կալեալ էր պաշարմանն : Սակայն ոչ սակաւ գալարեցան ազգք նորա 'ի տեսիլ սովամահ վախճանելոց քաղաքացեացն, որոց դիակամբք լի էին փողոցք քաղաքին . քանզի աւանդեն զթիւ մեռելոցն հարիւր և ութսուն հազար լեալ 'ի տասնամսեայ պաշարման ժամանակին : Իսկ 'ի հնչել աւետեաց յաղթութեանս 'ի Կոստանդնուպոլիս՝ աւագորեարն ամենայն չոգան 'ի համբոյր ձեռաց արքայի, և զերիս աւուրս ջահալուցութիւնք եղեն 'ի քաղաքին . աւետաբերն ընկալաւ 'ի պարգևի մաշկին քսակս հինգ արծաթոյ, որդին Դոփալ Օսմանայ Ահմետ ընկալաւ յարքայէ զամուրենին սպասուոյ, և առ նա ինքն Օսման առաքեցաւ զարդմանակ և գաշոյն ականակուռ . և յայնմ օրէ հետէ յաւելաւ 'ի մաղթանս ուրբաթուցն յանունն արքայի և մակդիրս Ղազի, այն է յաղթող : Այլ ոչ յոյժ յերկարեցին այս ուրախութիւնք . քանզի յետ երից ամսոց գոյժ եհաս, եթէ հարաւ բանակն 'ի սպառ 'ի Նաշըրայ մերձ 'ի Քէրքիւք, և Դոփալ Օսման ինքնին անկաւ մեռեալ 'ի ճակատուն :

Յայնմ ժամանակի վէզիրն մեծ Ալի փաշա բազում բարեկարգութիւնս

առնէր 'ի Թագաւորեալ քաղաքին · բարձրացոյց զվաշտամանս զօրավարաց զօրուն, և զյոլովս 'ի գլխաւորացն աքսորելոց անդրէն դարձոյց · և զատ_կաւս ոմանս եւեթ 'ի մահ դատապար_տեաց, և զքարոզիչն Այասոֆիա մզկը_թին՝ որ համարձակախօս լինէր զերաց պետութեանն՝ յաքսորս առաքեաց: Սակայն և սա ինքն չկարաց տոկ ունել 'ի բարձին առաջի մեծի իշխանութեան ներքինապետին Պէշիրայ, և արկաւ 'ի պատուոյ անտի՝ յամին 1735, փոխա_նակ զի ընդդէմ կամաց նորա և արքայի ձեռներէց լինէր Ալի սպարապետ կալ պարսկական արշաւանին:

Կիւրճի Խամայիլ փաշա անցեալ 'ի տեղի նորին՝ յամնօրեայ իշխանութեան իւրում փոփոխութիւն մեծ արար 'ի դրամս, և զերրեակ ազգս ոսկւոյ որ էին Ջերմահպուպ, Ջինճիրլի և Դուղ_րալը [1], և նուազեալ յոյժ էին յար_ժէս, ամփոփեաց 'ի միջոյ և փոխա_նակ սփռեաց դահեկանս արծաթիս քառասուն փողոյ: Ջհետ ամսեան և կիսոյ կաշառակուրծ գտեալ վեզիրին՝ ընկեցաւ 'ի պատուոյն, և անուանե_ցաւ փոխանակ նորա զինակիրն Սէյիտ Մէհէմմէտ փաշա · Թէպէտ և զգործ

1 Գին՝ Ջերմահպուպին էին ֆողջ 830 · Ջինճիրլի ոսկւոյ 110 · Խոյ Դուղրալըն ար_ժէր ֆողջ 103 :

տեսչութեանն ներքինապետին ունէր ։ Իսկ արքայ 'ի գլխաւոր ամարանոցացին պարապէր զօրս բազմացուցեալ էր զափամբք Վոսփորի ։ Դադարեալ էին յայնժամ բազմաթիւ հանդէսք ատենից սահմանեալք առ արքայիւն Ահմետաւ ․ սակայն զօրն ծննդեան մարգարէին իւրեանց որ Մէվլուտ անուանի՝ մեծահանդէս շքով կատարէր արքայ , զի ներքինապետին էր հանդիսադիր կալ ատենին ։

Զայս ամենայն անդորրութիւն զուարճութեան վեր 'ի վայր յեղաշրջէր պատերազմին Ռուսաց և Գերմանացւոց ընդ Օսմանեանս ․ և այս պատճառք էին զուոյն ։ Քանզի խանն Խրիմու ըստ հրամանին արքունի զօր բազում առաքէր ընդդէմ Պարսից , և հարկ էր Թաթարացն անցանել ընդ լեռնակողմանս Կովկասու որ ընդ ձեռամբ Ռուսաց էին ։ Զամս երիս բողոքեալ Ռուսաց զարշաւանէն առ Օսմանեանս , և ոչ որպէս կամէինն լսելի լեալ, ձեռն արկին զինու զօրութեամբ խափանել զչուն Թաթարաց ։ Ծանր էր Օսմանեանց 'ի ժամանակին յայնմիկ ելանել 'ի մարտ պատերազմի ընդդէմ Ռուսաց և Նիզակակցաց նոցին Գերմանացւոց , ուր և ընդ Պարսս սաստկանալով սաստկանայր պատերազմին յարևելից կուսէ ․ սակայն և յիրաւանց անտի որ միայն նոցա 'ի մասն

ինչ ընտանեկողմանն՝ չկամէին հրաժարել, և 'ի գեսպանէն Գաղղիացւոց մանաւանդ գրգռէին 'ի պատերազմ. և նորին թելադրութեամբ բողոք հարկանէին ընդ մտել Ռուսաց և Գերմանացւոց յիւր աշխարհին Լեհաց :

Յամին 1736 պաշարեցին Ռուսք զամուրն Ազախ, և ասպարապետն նոցին Մունիք կամ Մինիք զինեալ բազմաձեռն գնդաւ մտանել 'ի Խրիմ։ Տագնապեցաւ վէզիրն և ամենայն աւագանին ընդ լուրն, և տեսեալ կարգեալ խորհրդոյ 'ի 28 աւուր ամսեանն մայիսի հրատարակեցաւ աղդ պատերազմին ըստ վաղնջուց օրինի : Անդէն ընդ ձառագայթել արեւուն եկին ժողովեցան 'ի դուռն արքունի աւագօրէարն և զօրավարք ամենայն. երկոտասան չէխք կամ քարոզիչք արքունական մզկթաց ընթերցան զգլուխ կուրանին որ յաղթութիւն մակագրի, և օրհնեցին մի առ մի զձողաբարձ ձար վէզիրին մեծի. զոր Քեահեա պէյին բարձեալ յուս իւր՝ տարաւ 'ի գաւիթ անդր, և կանգնեաց առաջի մեծի սրահի տանեին. և զենան գառինք մետասան 'ի յաջողութիւն ելից արշաւանին :

Զհետ աւուրց վեցից անցին 'ի հանդիսի արուեստագիտացն գաւք, և արքայ 'ի զնին կայր 'ի պատուհանն Ալայ քէօշքին։ Նախընթաց լինէր թափօրոյն դաս երկրագործաց, որ տանէին զարօր

մի ձգեալ յեզանց, և զհետ արօրոյն սերմանացանն՝ ցորեան 'ի ճանապարհին սերմանելով ։ Ապա գայր պատանի ոմն հեծեալ յերիվար, ունելով առաջի գլխակալ, և 'ի վերայ նորին զկուրանն 'ի բաց · զհետ նորա դասք հացարարաց որ բարձեալ բերէին փուռնս երկուս շարժականս, և ընդ նոսա կըշռողն ծանրութեան հացից ։ Զկնի նոցա գային աղօրէպանք՝ ցորեան աղալով յերկանի, և հովիւք ձգելով զհետ իւրեանց խաշինս 'ի փոկ ոսկեղէն . և զհետ նոցա մսագործք զենլով զխաշինս և մորթելով ։ Զայս օրինակ անցին 'ի հանդիսի դասք վաճառուն և չորս ընդ հայ և ընդ յոյն, և միոյ միոյ 'ի դասուցըն յառաջապահք էին երկերիւր և երեքարիւր հեծեալք սպառազէնք ։ ժամն վեց տևեաց հանդէսն, և էին 'ի նմա արք իբրու տասն հազար ։

Ի վաղիւ անդր որ օր երրորդ էր յունիսի՝ խաղացին գնացին ենիչէրիք, և ապա ամենայն բանակն և աւագանին մեծաւ հանդիսիւ 'ի Տաւուտ փաշա ։ Անդր եկեալ և դեսպանք Եւրոպացւոց՝ մաղթեցին վեզիրին զյաջողութիւն պատերազմին . և նա չուեաց մեկնեցաւ անտի յաւուր շաբաթու ։ Ի նոյն աւուրս մեռաւ Ահմէտ աղայ . և հասարակաց կարծիք էին ընդ Օսմանեանցն իսկ ասելոյ՝ եթէ դեղեցաւ նա առ կասկած երկիւղի նորոյ իւրք խռո-

վութեան 'ի տագնապ ժամանակին :

Ի բառնալ այսպէս Նորոյ գրան պատերազմի յարեմնից կուսէ, հարկ 'ի վերայ կոյր դադար տալ մարտին որ դառայր յարեւելս. և զի յոլով ուրեք յաղթական գտեալ էր Պարսից քան յաղթեալ, պէտք էին Օսմանեանց զինջանել 'ի պահանջանանոցս : Քանզի թէպէտ և զկնի անկանելոյն Դոփալ Օսմանոյ Դահմազգուլի խան ոչ 'ի սահմանս Օսմանեանց ընթացաւ, այլ 'ի նուաճել զապստամբեալ աշխարհն արևելից՝ որ արդ Պելուճիստանն կոչի, սակայն յամին երկրորդի դարձ արար 'ի Վրաստան աշխարհ, և առ զամուր ամուր տեղիս, զԳանձակ, զԵրևան և զՏփխիս. և առ Ախուրեան գետով վանեալ զբանակն Օսմանեանց 'ի հարուածս սաստիկս՝ եհաս մինչև 'ի Կարս :

Մինչդեռ Նադըր 'ի Մուղան դաշտի բանակ հարեալ՝ զթագաւորութիւնն Պարսից յինքն առնոյր միաբան հաւանութեամբ զօրացն իւրոց, որով և կոչեցաւ յայնմ հետէ Նադըր շահ, եհաս անդր 'ի դրանէն Օսմանեանց Կէնճ Ալի փաշա 'ի խնդիր հաշտութեան : Ջինջաւ պարտիքն, այլ պայման եդ զի և Պարսիցն ուխտաւորք ունիցին այնուհետև սեպհական առաջնորդ կարաւանի ուխտագնացից՝ Էմիրիւլհաճ անուանեալ, և զի աղանդն

Ճաֆէրի ընդ ուղղադաւանս համարեա_
ցի 1. և զի գործակալ ոք յօսմանեան
դրանէ բնակութիւն կալեալ կացցէ
այնուհետև յԱստահան. և զի գե_
րեալքն յաշխարհէն Պարսից յետս դար_
ձուսցին առանց փրկանաց: Այսպիսի
պահանջանօք արձակեաց զԿէնձ Ալի
'ի Կոստանդնուպօլիս, և ընդ 'նմա յիւր_
մէ կողմանէ զԱպտիւլպագը խան և
զԳլխաւորն գխանականաց Պարսից զԱպ_
տիւլքասըմ, և զօրէնսուսոյցն մեծ զԱլի
Էքպէր:

Ի հասանել դեսպանաց 'նատըր շա_
հին 'ի Կոստանդնուպօլիս, ընտրեցան
և 'ի կողմանէ օսմանեան դրան գործա_
կալք հաշտութեանն բէկս էֆէնտին
Իսմայիլ, առենադպիրն մեծ Մուսդա_

1 Քանզի 'ի բնէ կասկածին դասք հաւատին
ուղղադաւանաց առ մահմէտականս. Սիւննի կամ
ուղղադաւան անուանեալ. այս ինքն են Հա_
նէֆի, Շաֆիի, Մալիքի և Հանպէլի, յա_
ռաջնորդաց իւրեանց զայսոսիկ յորջորջմանս
ընկալեալ, որ 'ի մահմէտական օրինաց իւրեանց
կարգային զանազանին յիրերաց յիրս իրս. և
Օսմանեանք առ հասարակ ամենին պահպանողք
ութեանն Հանէֆի, բայց և զայլսն լինոփէն:
Արդ 'նատըր շահ առաջի առնէ և զաղանդն
Ճաֆէրի. այն իսկ է զոր հաստատեաց ամ_
աղէտն Ճաֆէր Ա. 'ի թուին Աբասեանց
ամին 847, Բնեալ որևէրիմ յաջորդեալ ամ_
այն Ալեանց կամ պարսկատէնից:

Ֆա Էֆէնտի, և որ բազում անգամ պատգամաւորութեամբ երթեալ էր 'ի Պարսս Ռաղիպ Մէհէմմէտ. յաւելան և որպէս հմուտք օրինական իրաւանց արք ականաւորք 'ի գիտնականացն գաւուց: Յերեաներորդի աւուր ամսեանն օգոստոսի յամին 1736 բազմեցան ժողովականքս 'ի խորհուրդ, և 'ի 24 սեպտեմբերի յութերորդում ատենին սահմանեցան պայմանք հաշտութեանն. այս ինքն են, ա՛. Զի զամենայն փոյթ 'ի մէջ առցեն Օսմանեանք, որպէս զի անքոյթ երթիցեն ուխտաւորք Պարսից 'ի Մէքքէ անցանելով ընդ Արաբիա. բայց առաջնորդ կարաւանին այլ ազգ ինչ անուանեսցի, և ոչ Էմիրիւլհաճ: բ՛. Զի կացցէ մնացէ 'ի Պարսս պաշտօնեայ ոք յօսմանեան դրանէ, և 'ի Կոստանդնուպօլիս մի ոմն 'ի դրանէն Պարսից, որք և փոխեսցին յերիր ամս: գ՛. Արձակուրդ լիցի ամենայն գերելոցն յաշխարհէն Պարսից: դ՛. Ըստ օրինին սահմանելոյ անդստին 'ի ժամանակս Մուրատայ Դ., արքային Օսմանեանց և Վէզիր նորա գրեսցեն զթուղթս իւրեանց դէպ ուղիղ առ թագաւորն Պարսից, և 'ի Պարսից թագաւորն ևեթ գրեսցէ առ արքայ, իսկ փոխարքայն առ Վէզիրն մեծ: Դարձեալ զի Պարսք դադարեսցեն այնուհետև 'ի թշնամանելոյ զՕսմանեանս իբրև այլադէնս և մոլորեալս. մեծարանօք հանդերձ յիշա-

տակ արասցէն չորեցուն նախնի յաջորդաց մարգարէին իւրեանց, և տասանց նիզակակցաց նորա 1, և որ այլն են. և կնիք բանից դաշնագրին այսպիսի ինչ է. « Ի կնիք հաստատութեան յետկարի դաշանցս կարգամք զանուն ամենակալին Աստուծոյ, յիշատականշանագործ մերոյ մարգարէին և ահիւ աւուրն կատարածի, և խոստանամք հաւատարմութեամբ կատարել անթերի զայս ամենայն. և որ ոք իշխեսցէ լուծանել ինչ 'ի պայմանացս սահմանելոց՝ չարիք լիցին 'ի գլուխ նորա »:

Յաւուր յորում չուեցին Օսմանեանք 'ի Տաւուտփաշայէ՝ սպարապետն Ռուսաց Մինիք կամ Մունիք մեկնեցաւ 'ի Խրիմ ընդ Օր դափու արամբք յիսուն և չորս հազարաւ. արձակեաց զզօրավարն Լէօնդիէվ 'ի պաշարել զամուրն Գըլպուրուն, և ինքն արշաւեալ հինաբար ապստամբութեամբ էառ զկէօզլէվէ, զՊաղչէսարայ և զԱգմէջիտ: Կամէր և զՔէֆէ առնուլ՝ ուրանօր ամբարեալ էին թաթարք, այլ խափանե-

1 Չորեքին յաջորդքն Մահմետի Խալիֆէք անուանեալք՝ որ են Էպուպէքիր, Էօմէր, Օսման, և Ալի. և տասն նիզակակիցք նորին Ասհապ կոչեցեալք՝ յերկինս համարին 'ի մահմետականաց օսմանեանց. քան զայլոց մարդկանէ, բայց 'ի մարգարէից, անգիտանաւ աւէն զպայման յանգի կեանս:

ցաւ 'ի խօլթուլթենէ, և յուժգին դիմակալութենէ Թաթարաց։ Դարձ արարեալ յՕր գաւառ՝ ընկալաւ զաւետիս առման Գըլպուրունայ և Ազախու. և քանդեալ զամրութիւնս Օրին՝ մեկնեցաւ անտի։ Ի լուր իրացս խռովեալ Օսմանեանց՝ ընկեցին յիշխանութենէ զԳափլան քերէյ, փոխանակ զի ոչ բարւոք պաշտպանեաց երկրին, և ամբարձին 'ի տեղի նորա զՖէթիհ քերէյ։ Արկաւ 'ի պատուոյն և ծովակալն Ճանըմ Խոճա, և փոխեցան բազումք 'ի զօրավարաց զօրուն։

Զձմեռն զայն անցուցին Օսմանեանք 'ի հանդերձանս առաջիկայ մարտին. սակայն վէզիրն մեծ Իսաէյա Մէհէմմէտ փաշա վարանէր ընդ ելս արշաւանին, և կամէր լինել անսալ միջնորդութեան դեսպանին Գերմանացւոց Թալմանայ, և խաղաղութիւն առնել ընդ Ռուսս, թէպէտ և դեսպանն Գաղղիացւոց զհակառակն տայր խորհուրդ։

Ի սկզբան միւսոյ ամին ժողովեցան պատգամաւորք Ռուսաց, Օսմանեանց և Գերմանացւոց 'ի քաղաքն Լեհաց 'ի Նեմիրով՝ յափն Պուկ գետոյ. և 'ի 16 աւուր ամսեանն օգոստոսի սկիզբն եդև պատգամաւորութեանցն։ Պահանջանք Ռուսաց 'ի հինգ գլուխս բովանդակէին. ա, Ջնջել ամենայն դաշանց յառաջադոյն կուելոց ընդ Ռուսս և ընդ Օսմանեանս. բ, Անցանել Խրիմու

և ամենայն երկրին Թաթարաց 'ի ձեռս Ռուսաց. Գ. Մտանել իշխանացն Վլահաց և Մոլտաւիոյ ընդ թևարկութե̃ Ռուսաց. Դ. Ազատօրէն անցանել նաւացն Ռուսաց 'ի Սեաւ ծովէ 'ի Միջերկրականն. Ե, Զի լինելոց կամ կայսերս և կայսրուհիս անուանեսցեն և Օսմանեանք զԹագաւորս և զդշխոյս Ռուսաց: Յաւելլին և Գերմանացիք պահանջել յՕսմանեանց զմասն աշխարհին Վլահաց և զՄոլտաւիոյ մինչև ցգետըն Տումպովիցա: Բողոք կալան պատգամաւորք Օսմանեանց ընդ տարապայման պահանջս երկոցուն պետութե̃ց. և զիրաւունս իւրեանց ոչ միայն 'ի բանից կուրանին հաստատէին, որպէս յայլ նուագս, այլ և 'ի մերոց մատենից. « Այսպէս հիմունք հաստատութեան խորհրդոց Թագաւորաց կամ օրէնք հաստատոյ են, ասէին, կամ բան մտաց, և կամ երկաքանչիւր են. բայց արդ ձերդ գնացք հակառակել թուին և բանից աւետարանին, և իմաստիցն Գրոտիոսի »: — « Թէ այդպէս իցէ, ասեն քրիստոնեայքն, ահա յետս ընդդէմ օրինացն ձերոց գործէք Օսմանեանքդ. զի նոքին պատուիրեն ձեզ մի դաշինս դնել ընդ նոսա, այլ սուր սպառնալ՝ եթէ ոչ դարձցին 'ի մահմետականութիւն »: Պատասխանի ետուն Օսմանեանք. « Բան կուրանին զկուապաշտից և զհերձուածոց է, և ոչ զայն-

ցանէ որ հաւատան յաւետարանն և 'ի հին օրէնս, և հաստուցանեն զգլխահարկ կամ խնդրեն զհաշտութիւն »: Յայն միջոց ժամանակի վէզիրն մեծ փոխեցաւ, և անց 'ի տեղի նորա Միւհսինզատէ Աղատուլլահ փաշա. և զի ժամանակ բանադնացութեան ժողովոյն սահմանեալ ցամիսս երկուս՝ անցեալ էր, նմին իրի և պատգամաւորքն դարձան 'ի Նեմիրովայ յիւրաքանչիւր տեղիս:

Յայնժամ Նամականի տարեալ օսմանեան դրանն առ ամենայն պետութիւնս Եւրոպայ՝ յայտ առնել զպատճառս լուծանելոյ ժողովոյն. սակայն և միջնորդ հաշտութեան աղաչէր լինել զպետութիւնն Գաղղիացւոց. զի ընդ նոյն աւուրս էառ Միւնք սաստիկ պատերազմաւ զամուրն Օզու, և զօրավարն Լասցի մտեալ 'ի Խրիմ վանեաց զԹաթարս մինչև անդր քան զԽարասու և զԱգմէջիտ և զՊաղչէսարայ: Դարձեալ և կայսրն Գերմանացւոց Կարոլոս Զ, նիզակակից Ռուսաց եղեալ՝ արձակեաց զպատրաստեալս իւր զՍեքենտորֆ, զՀիլտպուրկհաուզէն, և զՎալլիս 'ի Սերվիա, 'ի Պոսնիա և 'ի Վլահս: Այլ քանզի երկպառակութի էր 'ի զօրավարսն, ոչ ինչ կարևոր արութիւնս ցուցին նոքա յայնմ արշաւանի, և զամուրսն որոց տիրեալ էին՝ վաղ ստիպեցան թողուլ 'ի բաց. զի բաղում

ուրեք հարին զնոսա զօրավարք Օսմանեանց Քէօփրիւլիւզատէ Աճմէտ փաշա, Հէքիմզատէ Ալի փաշա, Այվազ Մէհէմմէտ փաշա և Եկէն Մէհէմմէտ փաշա։

Ի սկզբան ամին 1738 Եկէն Մէհէմմէտ փաշա եկաց վէզիր մեծ փոխանակ Մուհսինզատէ Աբտուլլահայ. և զի այր խորոտ էր և արհամարհոտ, որպէս ատտանէ պատմագիրն Սուպհի, խիզախէր ընդդէմ ահագին ոսոխացն. և առ ողոքական բանս դեսպանին Գաղղիացւոց Վիլնէօվայ ետ պատասխանի. « Այս կամք են արքայից արքայի, զի մինչ չև առեալ անդրէն զՕզու, զԳըլբուրուն, զԱզով, զՊէլկրատ, և զԴէմիշվար, և կացուցեալ զԽաքոչի իշխան Թրանսիլվանիոյ և երկրին Մաճառաց, ոչ դիցուք 'ի բաց զզէնս մեր»։

Յութուտասներորդի աւուր ամսեանըն մարտի խաղաց գնաց վէզիրն ըստ օրինի մեծահանդէս շքով 'ի Տաւուտ փաշա. և արքայի աւանդեալ 'ի ձեռս նորա զդրօշն նուիրական, և զսամուրենին ագուցեալ նմա, և սուսեր և կապարճս ականակուռս նմա պարգևեալ, յուղարկ ես գնաց ընդ նմին հարուստ մի Ճանապարհ, և դարձաւ անդրէն, և վէզիրն չուեաց յԱդրիանուպօլիս։ Յայնում արշաւանի մեծապէս քաջութեամբ մարտ եդեալ կռուեցան Օսմանեանք

ընդ Ռուսս և ընդ Գերմանացիս, և ոչ թողին նոցա այլ ևս խաղալ յառաջ. սակայն և 'ի պայմանս շահաւէտ իմն հաշտութեան մնացին զիջանել ցանկային : Եղէն Մէհէմմէտ միայն հակառակ թուէր խորհրդոյն · վասն որոյ և 'ի դառնալ իւրում 'ի Կոստանդնուպօլիս՝ այն ինչ միւսանգամ հանդերձէր կազմէր 'ի մարտ պատերազմի, անկաւ յիշխանութենէ 'ի 22 մարտի յամին 1739, և անց 'ի տեղի նորա Այվազ Մէհէմմէտ փաշա, այր քաջ և անկեղծաւոր :

Ի սկզբան 1152 ամին Տաճկաց Մահմուտ արքայ աւանդեաց 'ի ձեռս անդրապահին Ահմէտայ զդրօշն նուիրական, և նա առաջնորդեալ բանակին մինչև յԱդրիանուպօլիս, ուր անդ էր վէզիրն մեծ, ետ 'ի նա զդրօշն ըստ օրինադիր հանդիսի :

Զաւուրս քառասուն դադարեաց վէզիրն 'ի Սոֆիա, մինչև եկին հասին և նորընտիր զօրք յայլ և այլ գաւառաց, և գումարեցան համօրէն այր աւելի քան զհարիւր հազար · ապա խաղաց գնաց նոքօք հանդերձ 'ի Նիշ : Կայսերական բանակին սպարապետ էր Վալլիս · որոյ հասեալ 'ի Դանուբ յիսուն և վեց հազար արամբք՝ վաղվաղեաց անցանել ընդ գետն կիսով չափ զօրուն և բախել ընդ Օսմանեանս առ Գրոցքա աւանաւ : Յարձակեցան հարին Օսմա-

նեանք զԳերմանացիսն 'ի հարուածս սաստիկս և զմնացեալսն յետս ընկրկեալ վանեցին անդրէն ցԴանուբ. յայգուէ մինչև ցմտանել արևուն ձգեցաւ պատերազմն, և անկան 'ի Գերմանացւոց արք հինգ հազար և եօթն հարիւր 1, և չորք հազար և հինգ հարիւրք վիրաւորեցան: Մեծապէս արիացան Օսմանեանք յայսմ պատերազմի 'ի քաջալեր բանից վէզիրին. վասն որոյ և վարձատրեցան լիաձեռն պարգևօք. զի բաշխեցան 'ի նոսա քառասուն հազար քսակք արծաթոյ. և իբրև հասաւ արծաթն՝ թուղթս խուրով վաւերականաւ տայր ամենեցուն որ կառափունս թշնամեաց բերէին նմա:

Յայնմ գիշերի խորհուրդ արարեալ զօրավարացն Գերմանացւոց՝ հաստատեցին մի մարտնչել այգուցն. վասն որոյ և անփոյթ եղեն յօգնութիւն կարդալ զզօրագլուխն Նայփէրկ որ յայնկոյս Դանուբայ կայր մնայր հանդերձ միւս կիսով բանակին: Իսկ Էլհաճ Մէհէմմէտ ընդ ծագել արևուն յառաջ խաղացեալ հինգ հազար ենիչէրեօք՝ իբրև ետես եթէ Գերմանացիք ոչ ամենևին անկազմք են 'ի ճակատամարտ, մեկնեցաւ 'ի Հիսարճըգ: Անդ

1 Պատմագիրն Օսմանեանց Սուպհի քսան հազար հաշուէ զմեռեալսն, և զգերեալսն ոչ ինչ պակաս քան զքսան հազար:

չուեաց 'ի Վիտինիցա. և հասեալ հան-դէպ Պելկրատու՝ հրդեհեաց նախ զարձակավայրս նորին, և ապա ազդ արար քաղաքապետին տալ 'ի ձեռս իւր զամուրն, և գնալ ամբականօքն հանդերձ անբոյթ 'ի Պաւոլին քաղաք. այլ փոխանակ պատասխանւոյ զթնդանօթս հրացինուց ընկալաւ : Անդր ժամանեաց և սուսերացոյց զայլքունական բանակն իւրովք նահատակօք և Հէքիմզատէ Ալի փաշա կուսակալն Պոսնիոյ, որ բազում ապստամբութեամբ վտանգեալ էր յոյժ յոյժ զԱւստրիականսն 'ի կողմանս կուսակալութեան իւրոյ :

Սակայն ոչ նոյնօրինակ քաջացան Օսմանեանք և ընդդէմ Ռուսաց 'ի Պեսարապիա և 'ի Մոլտաւիա : Քանզի Ռուսք ոչ ինչ միտ եդեալ բողոքոյ Լեհաց՝ անցին ընդ աշխարհ նոցա արամբք իբրու եօթանասուն և ութ հազարաւ. և զի երեքտասան հազար Խազախք էին 'ի նոսա ոչինչ ընդհատք անագորունութեամբ քան զնախինի հրոսակս Օսմանեանց, ոչ գոյր չափ աւերածոյն և յափշտակութեանցն և հրձգութեանց գործելոց 'ի նոցանէ, մինչև հասին ընդ Սորոքա և ընդ Մոհիլեվ յափն Տնեստերայ հանդէպ Խոթունայ: Սպարապետն Ռուսաց Մունիխ անց քան հազարաւ ըստ գետն. և զօրագլուխն Րումեանցով ութ հազար արամբք յարձակեալ բախեցաւ ընդ զօրացն Օսմա-

նեանց ճակատելոց հանդէպ ամրոցին։ Մեծապէս արիացաւ 'ի ճակատուն զօրապետն Օղուլի կէնճ Ալի փաշա, այլ 'ի վերջէ փախեաւ իւրովքն 'ի Պէնտէր, և սակաւք ոմանք զերծան 'ի խոթութ։ Եօթն հարիւր ենիչէրիք ևեթ կային յամրոցին. վասն որոյ զօրավար նոցին Էլիաս փաշա հաշտութեամբ խօսեցաւ ընդ Ռուսս, և ետ 'ի նոսա զամուրն[1]։

Դիմեաց Մունիխ 'ի Խոթնոյ 'ի քաղաքն Եաշ և անաշխատ կալաւ զայն, զի իշխանն Մոլտաւիոյ Հիքա շատ առաջնագոյն փախուցեալ էր անտի. այլ խոստութեամբ գնաց ընդ մեծարապատուին և ընդ աւագանւոյն, և զօրք իւր յոլով չարիս անցուցին ընդ քաղաքն։

Իբրև այդ եղև այս ամենայն վէզիրին մեծի, հրաման ետ անդէն վաղվաղակի զօրավարաց կողմանց կողմանց աշխարհին առձակարել յօգնութիւն Օսմանեանց 'ի Մոլտաւիա, և ամրացուցանել և ևս զԻպրայիլ, զՔիլի և զԻսմայիլ. իսկ ինքն պնդէր սաստկագոյնս զպաշարումն Պելկրատու։

Մինչդեռ Ռուսքն յաղթանակէին անխափան 'ի Մոլտաւիա, Աւստրիականք բանագնաց լինէին ընդ Օսմանեանս 'ի

[1] Ու նոյին Ռուսաց 'ի բանի իւրեանց, ասէ Սաղտի, և գերի վարեցին զամենայն զԵնիչերականն։

հաշտութիւն խաղաղութեան. որ և
յաջողեցաւ 'ի վախճանի 'ի ձեռս Գեր֊
մանացւոցն պետութեան և 'ի նախա֊
տինս զօրավարաց նոցա որ կնքեցին
զպայմանս ուխտին ։ Քանզի կամե֊
ցեալ կայսեր վախճան առնել պատե֊
րազմին չափաւոր պայմանօք՝ միջնորդ
հաշտութեան կալաւ զդեսպանն Գաղ֊
ղիացւոց զՎիլնէօվ, հրաման տուեալ
նմա խոստանալ Օսմանեանց զմասն
ինչ երկրին Վլահաց ։ Վէզիրն մեծ
չկամեցաւ անգամ ընդ առաջարկութեն
հաշտութեանն՝ մինչ չև ընկալեալ զխա֊
կանս Պելկրատու. և կոմսն Նայփէրկ
յանխորհուրդս խոստացաւ տալ զքա֊
ղաքն, միայն թէ քակեսցուք առ նախ
զամրութիւնս քաղաքին ։ Ոչ զիջան Օս֊
մանեանք և ընդ այս պայման, մինչև
յանձն առ Նայփէրկ՝ զի նորագործ
ամրութիւնքն ևեթ քակեսցին. որով
յետ ամսօրեայ բանագնացութեան
կնքեցաւ հաշտութիւնն քսան և եօթն
ամաց յեօթներորդի աւուր ամսեանն
սեպտեմբերի յամին 1739. և վէզիրն
մեծ եմուտ մեծահանդէս շքով 'ի Պել֊
կրատ, և կուսակալ քաղաքին կար֊
գեալ զՀէքիմզատէ Ալի փաշա՝ մեկնե֊
ցաւ 'ի Նիշ ։ Ընդ հաստատեաց և զուխտ
խաղաղութեան ընդ Ռուսս՝ որք խոս֊
տանային քակել զամրոցս Ազախու, և
չունել և չկազմել տորմիղ նաւաց յԱ֊
զախ և 'ի Սեաւ ծով. և Օսմանեանք

խոստացան կայսրուհի ճանաչել և ա-նուանել զդշխոյն Ռուսաց և զյաջորդս նորա, և ազատս թողուլ զբնակիչս մեծ և փոքր Կապարթայից, և որ այլն ևս:

Ի վախճան ամսեանն հոկտեմբերի դարձ արար վէզիրն մեծ Էլհաճ Մէ-հէմմէտ փաշա 'ի Թագաւորեալ քա-ղաքն, և մեծաւ հանդիսիւ առան-դեաց 'ի ձեռս արքայի զդրօշն նուիրա-կան: Եւ Մահմուտ արքայ մեծա-պարգև մեծարեաց զվէզիրն և զկուսա-կալս եւրոպակողմեան և զՊոսնիոյ, և զաւագորեարն որ զհոյակապ հաշտու-թիւնն Պելկրատու կնքեցին. և դես-պանին ևս Գաղղիացւոց ազգոյն արքայ զսամուրենին պատուոյ և պարգևեաց նմա երիվար ոսկեկազմ, և ազատութի երեսուն գերեաց Գերմանացւոց որ 'ի նաւակայս Կոստանդնուպօլսոյ ար-գելեալ փակեալ կային. զի պատիւ մեծ ունէր այրն առաջի աշխարհա-մուտ դրանն: Եւ ատենադպիրն քաջ Րաղըպ Էֆէնտի Թուղթս և հրովար-տակս աւետեաց գեղեցկագիրս և պեր-ճաբան գրէր առ կուսակալս և պետս Տաճկաց որ յԱսիա և յԱփրիկէ, ազդ-առնելով նոցա զառումն Պելկրատու՝ զոր պատուար դնէին իւրեանց կոչէին Օսմանեանք ընդդէմ քրիստոնէից: Իսկ կայսրն Աւստրիոյ նմին հակառակ պատուհասակոծ արար զիւրսն զՎալ-լիս և զՆայփերկ, փոխանակ զի թե-

լագրութեան մախմանց լուրեանց ան_ սացեալ մանաւանդ՝ քան աշխարհին օգտից, զի ջան վաղվաղակի յանարգական պայմանս հաշտութեանն Պելկրատու :

Ընդորրացեալ Մահմուտայ արքայի 'ի պատերազմացն Ռուսաց և Գերմանացւոց, 'ի բարեկարգութիւն պետութեանն կամէր այնուհետև ուշ ունել : Դաշինս ուխտի բարեկամութեան կըռեաց ընդ Նէապօլսեցիս և ընդ Շուեդս, և ընդ Գաղղիացիս նորոգեաց զվաղեմի դաշինսն : Կատարեաց յամին 1740 զհարսանիս դստերացն երեցուն, և արար բազմապատիկ տօնս ուրախութեան : Ցայց եւ և 'ի մատենադարանն՝ զոր հրամայեալ էր կանգնել առ մզկթաւ Այա Սոֆիային, և յորում եդեալ կային 'ի պահեստի՝ Թող զայլ մատեանս անգիւտ՝ և կուրանք երկու գըրեալք Քիւֆի 1 անուանեալ տառիւք 'ի

1 Բանալի փականաց ալգէ գիտութեան հաշուին ըստ Օսմանեանց . և Երկրաչափ 'ի նոյանէ՝ որ Նէութի և Տիլանի կոչին՝ յաճախագոյնս գոն 'ի դէպս, իսկ այլն տպարան և օրինակագրաց են ծանօթ. որպէս Սըյագաթն անուանեալ՝ որ 'ի հաշուեգիրս տպագրաց վաճառականութեան 'ի դէպս է . և Թաւիգ՝ որ 'ի Գրաբիւնս քերթողաց վարի, և Սիւլեա՝ որոշիւրագիրք մաքենից տրուծն, և Ճեւրի՝ որ 'ի հրաճարտակս և յարդանագիրս

ձեռն Օսմանայ և Ալեայ ամիրապետաց. և երեք այլ կուրանք դրօշմեալք 'Նեսխի տառիւք ձեռամբ Եագութ անուն գեղեցկագրին համբաւելոյ ։ Եւ այս օրէն էր 'ի մատենադարանի անդ, զի մերձաւորք տան այգուն այգուն ընթեռնուին անդանօր 'ի լուր ժողովականաց ճառս ինչ յաւանդական մատենէն Պուխարեայ, և այլք մեկնէին. և այլ մերձաւորք դարձեալ ըստ աւուրց ինչ սահմանելոց զկուրանն կարդային ։

Այլ ըմբոստութիւն խաժամուժ ամբոխին յանակնկալս 'ի վեր երեւեալ՝ վրդովեաց զխաղաղութիւն աւուրցն ։ Քանզի նեղեալ սոցա յերեսաց ծանրագնի վաճառելոյ պարենից 'ի պատճառս պատերազմին և ձմերայնոյն սաստկութե̃, միաբանեցան գունդ կազմեցին, և ընթացեալք ընդ փողոցս քաղաքին աւարեցին բազում ինչ, և ապա աղաղակէին զի փակեսցին կըրպակք ։ Վէզիրն մեծ մինչդեռ զգնայր

մանաւանդ պատուաճեալ է ։ Ի երբեք մի կոխանակ տառս Քիւֆի անուանեալ գրութեան ուրի 'ի մակագիրս մզկիթաց. և է սա հնագոյն քան զարաբացի տառս։ Կոչի մի ըստ քաղդէականաց անկիւնաւոր տառն նուրբ, որ և 'ի դրամս Սելճուգեանց երևի. և կոչեցեալ է այսպէս յանուանէ Քիւֆէ քաղաքի Արաբիայ ։

'ի Քեսաղատխանէ՝ խրազէկ լեալ եղելոցն, դարձաւ անդրէն փութանակի. աճապարեաց և զօրավարն ենիչէրեաց իւրովքն հանդերձ զդէմ առնուլ աղմկին, և ցրուեաց զամբոխեալսն. և առքա ամենեքեան մեծարեցան յարքայէ սամուրենեօք վասն քաջութեան իւրեանց և խաղաղասէր փութոյ: Նա և զի պատճառք խռովութեանն յուզելոյ Առնաւուտք էին և այլոց եկամուտ ազգաց խառնիճաղանճք, յուզեցան խնդրեցան նոքա, և որք միանգամ ոչ ունէին հաւաստեալ թէ 'ի տասնամեայ ժամանակաց հետէ բնակ լցեն Թագաւորեալ քաղաքին, վարեցան 'ի հայրենի աշխարհս իւրեանց:

Զև անցեալ 'ի վերայ աւուրց տասանց, միւս ևս ապշող խռովութեան յարեաւ յամբոխին 'ի կեղծուպատիր աղաղակէ հրէի ուրումն: Վաճառական գոլով սա սուտեաց, և ներեալ յենիչէրւոյ ումեմնէ, սկսաւ զաղաղակ հարկանել թէ ապստամբ է ենիչէրիս այս: Անդէն վեր 'ի վայր հարեալ խռովեցաւ առ հասարակ վաճառանոցն, և խուռն բազմութիւնք կրպակաւորաց յարձակեցան բրօք և վրդօք և սպանեցին զհրեա զօրականին՝ որ փախչելով փախչէր շտապ տագնապաւ: Վաղ հանդարտեաց աղմուկն այն. բայց արքայի սրտմտեալ ընդ վէզիրն մեծ՝ զի ոչ կարաց 'ի կարգի և յանդորրու

զբաղաքն պաշնել, կաս 'ի նմանէ զհնիքն ազգունի և եւ ցնկիշանձի Աշմէտ փաշա 'ի 23 աւուր ամսեանն յունիսի ։ Իսկ Եղշանձ Մէհէմմէտ անուանեցեալ կուսակալ Ճիտտէի, և ապա Կանեա քաղաքի. և այնքան ինքնագլուխ հրամատակաւ զեկեայ եօթանց կարգաց զենուորութեան որ 'ի Կոստանդնուպօլիս զպատճառս ընկեցիկ լինելոյ վէզիրին, և յաւել յորդոր լինել նոցա 'ի պաշպանութիւն անդորրութեան քաղաքին ։ Նա յայնմ հետէ ամրութիւն եղև Թագաւորայն Օսմանեանց ծանուցանել զօրականին զպատճառս փոփոխութեան վէզիրաց ։

Յամսեանն յուլիսի եհաս 'ի Կոստանդնուպօլիս դեսպանն Գերմանացւոց Ուլֆէլտ, զի մձարեսցէ զիրս որոշման սահմանաց երկաքանչիւր աշխարհաց ըստ պայմանաց դաշինն Պելկրատու. այլ ոչ որպէս կարծէրն պատուեցան նա ։ Խնդրեաց 'ի դեսպանաց եւրոպական պետութեանց երիվարս և անդրուվարս 'ի զարդ հանդիսի միոյն իւրոց 'ի Թագաւորեալ քաղաքն, և նոքա պէսպէս պատճառանօք անլսող եղեն խնդրոյն ։ Նուիրակալութեան կամ Չաուշպաշին փոխանակ յաւաջընթաց լինելոյ Ուլֆէլտայ՝ որպէս և այլոց դեսպանաց, զաջակողմն կալաւ զնորա. և 'ի Թեանկոխել դեսպանին զի անցցէ յահեկէն յաջ կոյս. Նուիրա_

կապեան անց եկաց յետուստ կողմանէ Ուլֆելտայ: Այսպիսի անշուք հանդիսիւ մտեալ դեսպանիս 'ի քաղաքըն՝ մատոյց արքայի և դշխոյին և աւագ որերոյն անօթս արծաթոյ և հայելիս, և սեղանս և ժամացոյցս. սակայն և այնպէս հարկեցաւ զիջանել մանաւանդ յՕսմանեանցն պահանջանս, քան զնոսա յիւր առաջարկութիւնս հաւանեցուցանել:

Ի նոյն աւուրս եմուտ 'ի Վիեննա և դեսպանն Օսմանեանց արամբք իննհարիւր և քսան և երկու, ածեալ ընդ իւր ուղտս հարիւր և երեսուն և հինգ, ջորիս հարիւր և եօթանասուն, և երիվարս իննհարիւր. իսկ ընծայիցն զորս ածէր առ կայսրն՝ չէր չափ պատուականութեան և բազմութեան: Բայց մինչ չև յանդիման եղեալ կայսեր՝ բազումս ընդդիմացաւ և սա չհնազանդել օրինաց և սովորութեան աւստրիական արքունեացն: Եւ ծախեցան 'ի պէտս նորա և որոց ընդ նմա՝ հարիւր հազար դահեկանք և աւելի ևս [1] յարքունի համարուէ:

Ի վերջ կոյս 1740 ամին վախճա-

[1] Մի դահեկան օսմանեան արժէր 'ի ժամանակին աւելի քան զմի ֆլորին. այնպէս զի չորեքհարիւր դահեկանք համազօրք էին չորեքհարիւր ութսուն և չորս ֆլորենաց:

նեալ Կարոլոսի կայսեր՝ անցանէր յա-
թոռն Աւստրիոյ դշխոյն Մարիամ Թե-
րեզիա. և իբր Ուլֆելտայ ձախողագոյ-
նըս պատահէին, մինչև յանձն առնուլ
նմա գոգցես զամենայն զպահանջմունս
Օսմանեանց՝ թէպէտ և հակառակս
դաշանցն դեռ ևս կալելոց 'ի միջի. և
լուեալ Մարիամ Թերեզիա, քանզի
վտանգ պատերազմի 'ի վերայ կայր նմա
և յերեսաց Բրուսաց աշխարհին 1:

Հզօրագոյն քան զաւստրիականն էր
'ի ժամանակին յաչս Օսմանեանց Ռու-
սացն պետութիւն. սմին իրի զոր ինչ
տագնապ վտանգի հասուցանէին նո-
քա Գերմանացւոց, զնոյն գոգցես 'ի
Ռուսաց կրէին, որ չկամէին քակել
զամուրն Ազախու: Սակայն ուր ու-
րեմն յամին 1741 'ի մեռանել դշխոյին
Ռուսաց Աննայի և 'ի թագաւորել
Եղիսաբեթի Փեթրովնայ՝ յանձն առ
դեսպան նոցին Ռումեանցով քակել

1 Ի նոյն աւուրս երեւեցաւ երկնա-
հանգէտ մրրկալից հողմոյ և որոտընդոստ
ձայլակնաձև անձրեւ 'ի Հեղարբաթ.
միայն 'ի նոյնանէ բնակարան օդոյ ծանրա-
թեան էր, այլ Սաղմի եփենտի, և մի-
այն երկնա: Զայս պատահար, որպէս և
ներդեհան մեծամեծս յաճախեալ 'ի քաղա-
քին՝ մեկնաբանէ Սաղմի 'ի վերայ դի-
պուածոյ ժամանակին, որպէս առաջնորդն
է այս Օսմանեանց:

զամուրն Ազախու, և սակաւ ինչ հեռագոյն նոր կանգնել ամրոց. և Օսմանեանք յայտնապէս յանձին կալան զկայսերականն պատիւ տալ այնուհետև Թագաւորաց և գլխոյին Ռուսաց:

Եւ ոչ սակաւ նպաստ եղև յանդորրութեան վճարումն նոցա խոհականութիւն վեզիրին մեծի. որ թէպէտ և անգէտ էր դպրութեան՝ որպէս ասեն, սակայն արդարասէր և զգօն բարոյիւքն բազում մեծարանս ցուցանէր դեսպանաց եւրոպական պետութեանց, և 'ի խրախուճանս խնջոյից եւ հրաւիրէր զնոսա երբէք երբէք: Մեծապէս սատար լինէր նմա և ընկեր էֆէնտին Րաղիպ՝ այր հանճարեղ և զգաստ և մարդասէր, և ամենայն նոցա պետութեանն քաջահմուտ:

Յաւել և զապստամբս պարսկական պատերազմին որ յարնելոց կուսէ դոռալ թուէր ընդդէմ Օսմանեանց յերեսաց Նատըր շահին, թէպէտ 'ի ժամուն խաղաղութեան պայմանաւ պատգամաւոր լինէր 'ի ձեռն դեսպանին իրոյ: Սա չորիւք կամ հնգօք հազարօք արանց եկեալ 'ի Պաղտատայ, և անցեալ ընդ Ամիդ և ընդ Րագգա և ընդ Բերիա, եկն եհաս մերձ 'ի Կոստանդնուպօլիս: Առաքեցաւ ընդ առաջ նորա մինչև 'ի Գէնէր պաղչէսի Խալիլ էֆէնտի ումն՝ հանդերձ պատուիրանաւ՝ զի յուղւոջ

անդ յաջմէ նորա գնայցէ. այլ 'ի գժկամակել դեսպանին ընդ իրսն՝ խաղել ընդ այլ ճանապարհ եհաս 'ի տեղին ուր ճաշել ունէին. սակայն դեսպանն ձեռնպահ եղև յամենայն 'ի կերակրոց որ մատուցան նմա առաջի, և հաց եեթ ճաշակեաց և մածուն: Զհետ հնգից աւուրց փիղքն զօրս ընդ իւր ածեալ էր՝ անցուցան 'ի Պէշիքթաշ 'ի լաստս լաստս, և ինքն յետ մեծածախ խնջոյից պատուասիրութեան յԻւսկիւտար՝ անց յԷյուպ մեծաւ հանդերձանօք: Յերեսներորդի աւուր ամսեանն մարտի, յորում սահմանեալ էր մտանել դեսպանին յատեան և յանդիման լինել արքային, 'ի ծագել արևուն տողեալ երևեցան 'ի միջնոյ դրանէ ապարանից արքունի մինչև 'ի սրահ ատենին երիվարք արքայի երեսուն առ հասարակ ոսկեսանձք, և համետք և կազմածք նոցին համակ ականակուռք և մարգարտալիցք, և հեծեալքն 'ի նոսա զարդարեալք գլանաձև գլխանոցօք: Ի բացեայ 'ի նոցանէ արձանացեալ կային անձնապահապետք արքայի աղեղնաւորք և տիգաւորք ոսկեփայլ սաղաւարտիւք և ոսկեդիպակ հանդերձիւք, և փետուրք հոյակապք ծածանէին զգըլխովք նոցա: Ընդ աջմէ կողմանէ 'ի շարի կային ենիչէրիք տասն հազար՝ իւրեանց զօրագլխօք, և սպայակոյտ ամբոխին հանդէպ Երրորդի դրանն դա-

դարեալ կայրին ապառաժէնք ։ Յաջմէ դրանս յխուռն անձնեկալեաք սամուրենիս զգեցեալք՝ և 'ի ձեռին նոցա գաւազանք արծաթիք . և 'ի գմբէթարդ արահի ատենին վէզիրն մեծ և ծովապետն և համօրականն հանդերձ ամենայն ատենակալօք ըստ իւրաքանչիւր կարգի ։ Մինչ չև ծագեալ էր արեգական՝ չոքաւ նուիրակապետն ածել զդեսպանն յարքունիս . և ընդ մտանել նորա անդր ընդ միջնադուռնն՝ և ահա ենիչէրիքն աւասն հազարք յարձակեցան անկան 'ի վերայ կերակրոյ բրնձոյն որ 'ի պնակս պնակս սփռեալ կայր 'ի հրապարակին՝ իբրև զարծուիս 'ի վերայ որսոյ՝ աւէ պատմագիրն . և յապուշ հարաւ դեսպանն ։ Իսկ ինքն զգեցեալ էր ըստ Պարսից օրինի սամուրենի կարճ՝ որ հազիւ թէ 'ի ծունկսն հասանէր, և 'ի գլուխ իւր ադուցեալ գլխանձև գլխարկ տէրվիշաց՝ զորով պատեալ էր արտախոյր կանաչագոյն ոսկեմանն, ընդ որ ծիծաղէին աւէ ամենեքեան ։ Ճաշեաց նախ դեսպանն առ վէզիրին մեծի. և ապա 'ի մտանել իւրում՝ 'ի արահն մեծ առաջի արքային՝ իբրև ետես զնա բաղմեալ 'ի գահոյս, և զնովաւ կարգ ըստ կարգէ զվէզիրն մեծ, և զծովապետն, զզօրավարն ենիչէրեաց, զհամօրականն, զշէխս էֆէնտին և զզօրագլուխս զօրացն, ընդարմացաւ դեսպանն և չխօթեցաւ, և զայս ևեթ կարաց բարբա-

ռել, « Տէր արքայ », և ոչ այլ ինչ. և անդէն հանեալ եւ զթուղթ Նատըր շահին և ցուցակ ընծայիցն զորս ընդ իւր ածեալ էր[1] : Յայս նուագ յանդիման լինելոյ օտար դեսպանիս առաջի արքային՝ քանզի հազար և երկերիւր արք էին ընդ դեսպանին, և արք չորեք հազար առաջնորդք էին նոցա, մեծաճշգրտութեամբ կատարեցան ամենայն օրէնք սահմանեալք յարքունիս Օսմանեանց, որպէս զի երբեք չէր երեւեալ այնպիսի ինչ՚ի Կոստանդնուպօլիս, և յետ այնորիկ և ոչ տեսաւ նոյնպիսի : Յետ սակաւուց վէզիրն մեծ պատուաւորեաց զդեսպանն բազմախորտիկ խնջոյիւք ՚ի Քեաղաթխանէ . զնոյն

1 [illegible]

և այլք յաւազանւոյն արարին՝ 'ի ցոյց օսմանեան սերձութեանն համբաւելոյ։ Իսկ առ խնդիր դեսպանքն, որ էր զի և Օսմանեանք յանձին կալնուցուն իբրև ուղղադաւան զհինգերորդ ազանդն Ճաֆէրի անուանեալ զհաստատեալն 'ի Նատըր շահէ, և առն պատասխանի եթէ ոչ ինչ դանդաղեսցի երբէք պետութիւնս մեր հաւանել ընդ այն ամենայն որ չհակառակի օրէնաց և Ճշմարտութեան դենիս մերոյ․ և արձակեցին ընդ նմա դեսպանութբ առ Նատըր զՄիւնիֆ էֆէնտի զոմն, և զօրէնսգէտն Նաշիֆ Մուսդաֆա էֆէնտի։

Այլ այս պատգամաւորութն Նատըր շահին յայտնապէս ցուցանէր՝ թէ պատճառի ինն նա առ 'ի յուզելոյ դարձեալ զմարտ պատերազմի․ վասն որոյ անդէն վաղվաղակի փոյթ 'ի մտի կալեալ Օսմանեանք կազմել պատրաստել զզէնս ունել արշաւանին, այլ 'ի ծածուկ․ թէպէտ և լուր ևս հասանէր՝ եթէ Նատըր շահ դարձ արարեալ յաշխարհէն Հնդկաց, դեպուղիղ յարձակեալ գայ'ի հիւսիսակողմանս աշխարհին Պարսից 'ի վերայ Լազկիեցւոց և լեռնականացն Կովկասու։ Մահմուտ արքայ հնարեցաւ զանխուլ պահել առ ժամն զխէթ վաղնգին յամենայն անձն բարեպաշտութեան խորհրդովք․ զի պարգես մեծագինս առաքեաց 'ի Մե_

առնէ, և զներուազէմ նա մեծարեալ՝ առաքեաց անդր նոր ծածկոյթ ծանրագին յոսկեգործ դիպակէ 'ի ծածկել զվէմ լերինն յորոյ վերայ կամէր Աբրահամ զենուլ զորդին իւր ըստ հրամանի տեառն. և ոչ այնչափ 'ի պահպանութիւն վիմին յերեսաց օդոյ էր ծածկոյթն, ասէ պատմագիրն Սուլհի, որչափ 'ի խափանել անտի զհայեցուածս ամբարշտաց, և զհպել ձեռաց անօրոց:

Արուեալ նա պատարագեաց միւս և բանք ամբոխին 'ի դէպս արանց երկուց հասելոց ընդ նոյն աւուրս 'ի Կոստանդնուպօլիս: Եւ անչափ ինչ էր շշուկ խրոցս 'ի ժողովրդեան, զի և վէզիրն մեծ հարկ իմն համարեցաւ ծանօթս տալ արքայի զայցանէ. որ և յայտ առնէ զդիւրահաւանութիւն և ամբոխին և զօամանեան պատմագրին Սուլհեայ: Առաջինն 'ի սոցանէ անուանէր զանձն իւր որդի Կարոլոսի Զ. կայսեր Գերմանացւոց՝ ծնեալ 'ի Հեղինեայ ումեմնէ, և սնեալ 'ի Հռոմ որպէս վայել էր իւրումն մեծութեան. և այժմ ծանուցեալ ասէր՝ զՃշմարտութիւն օրինացն Մահմէտի, և անցեալ ընդ Ճէզայիր՝ այսր հասեալ կամ: Հարցաւ զիրացս Թարգմանն արքունի, և վկայեաց վաւերական լինել ազգաբանութեան առնն. և ազդուցաւ սմա սամարբէնին պատուոյ, և շնորհեցաւ

բնակել 'ի տան րէիս Էֆէնտիին :

Իսկ դէպք անցից երկրորդին որում անուն էր Հասան՝ զՍոպէնտանի Քաւիւ_ղօէ զպատասհարացն Թուխն իմն բերել զնշմարանս : Իբրու զի առաքեալ առ_բա յարքունուստ պիտոյից ինչ աղա_գաւ 'ի Խրիմ, մինչդեռ դառնայր 'ի Կոստանդնուպոլիս՝ պատահէ ահա_գին իմն մրրկի , և նաւակոծեալ քան և չորեք աւուրք զերծանի յՕձից կղզի որ հանդէպ բերանոյ Դանուբ գետոյն կայ : Անդ խուզս բնակութեան յօրի_նեալ առցա 'ի տախտակաց նաւին , զամ մի ողջ և աւելի ևս անցուցանեն յամայի կղզւոջն՝ ձկունս մեծամեծս որսալով 'ի կերակուր : Ի մեռանել առ_ցա մեծաւ մասամբ և 'ի մնալ չորից ևեթ , որոց կերակուր զխակունք ըն_կերացն իւրեանց էին , հասանէ առ_նոսա յանկարծ նաւ մի , և դառնան նովաւ 'ի Կոստանդնուպոլիս . և Հասան ցուցանէր 'ի լանջս իւր և 'ի թիկունս զայլս մկրացն զորս մկրատուրեալ էր 'ի մօրանչել իւրում ընդ շանաձկան միոյ՝ որոյ չորեքհարիւր օգգա ծանրութիւն էր ասէր . այս ինքն է ինն հարիւր լտար :

Հանդերձ այսու ամենայնիւ դուժ_կամք հասանալք որ բաս օրէ 'ի սահմա_նացն Պարսից յաձախէին զահ երկիւ_ղին , և զարտուղի ժողովրդեան . և ներ_քինապեան Պէշիր խիթացեալ վասն կենաց արքային և իւր իսկ գլխովին,

հնարեցաւ արկ յիշխանութենէն զԱհմէտ փաշա, և ամբարձ 'ի պատուէ մեծի վէզիրութեան երկրորդ անգամ զՀէքիմզատէ Ալի փաշա 'ի սկզբան 1742 ամին: Հարիւր և յիսուն քսակաց արծաթոյ տէր էր Ահմէտ, այլ արքայ շնորհեաց նմա զայն հանդերձ ապարանիւքն. սակայն երկինք ոչ շնորհեցին, ասէ պատմագիրն, և յետ սուղ ինչ ժամանակի հրդեհ մեծ պատահեալ լափեաց զամենայն:

Ալի փաշա յերկրորդում նուագիս իշխանութեան իւրոյ առաւելագոյն զգօնութեամբ վարեալ, մինչդեռ յարեելս կայր 'ի հանդերձանս մարտին ուշ ունէր, ոչ ինչ զանց առնէր 'ի կարեւոր ջանից անխափանս պահելոյ զբարեկամութիւնն ընդ արեւմտեայս. ընդ Ռուսս ասեմ և ընդ Շուետս և ընդ Գերմանացիս, ընդ Գաղղիացիս և ընդ Բրուսս: կամէր և ընդ Լեհս զիջանել 'ի դաշն բարեկամութեան. այլ հերձուածք աշխարհին նոցա ոչ սակաւ տագնապեցին զվէզիրն, որպէս զի յետ լսելոյ երկայնամիտ ունկնդրութեամբ պատ 'ի պատ բանից դեսպանին նոցա Պէնօէ՝ ասէ. «Եւ արդ զո՞ր դաշինս ուխտի մարթիցիմ ես կռել ընդ պետութեան՝ զորոյ զերեսուն հազար գլուխս 'ի մի գլխարկ հարկ իցէ ամփոփել մինչև սահմանեալ ինչ 'ի պխտանեաց»:

Ի սկզբան միւսոյ ամին, այն ամ էր

1743, Աhմէտ փաշա կուսակալն Պաղ-
տատայ ազդ առնէր 'ի դուռն արքու-
նի, եթէ Նատըր շահ ծանրացուցանէ
եղեալ ընդ այն զի փոխանակ իւրոյ
դեսպանին՝ որ խան էր և հաւատար
պատուով ընդ իշխանութեան վէզիրի՝
արձակեալ էր Օսմանեանց առ նա օ-
րէնսդէտս երկուս, պահանջէր զազատ
համարձակութիւն վաճառականու-
թեան, և զի կարողասցի և ինքն առա-
քել 'ի Մէքքէ զծածկոյթ Քէապէին. և
զի և Օսմանեանք ուղղադաւան համա-
րեսցին զաղանդն իւր զՀինգերորդ՝ որոյ
վասն և առանձին աղօթանոց կամէր
կառուցանել 'ի Մէքքէ: Այդ եղև դար-
ձեալ եթէ Նատըր շահ գիմեալ գայ 'ի
Կարին՝ եդեալ 'ի մտի առնուլ նախ
զՊաղտատ և զՏիգրանակերտ: Խոր-
հուրդ արարին Օսմանեանք, և հաստա-
տեցին 'ի պատերազմ ձեռն արկանել.
կարգեցին սպարապետ բանակին զկու-
սակալն Տիգրանակերտոյ զԱլի փաշա,
թէպէտ և ոչ անդիմանայն զթշնա-
մութիւն նորա ընդ կուսակալին Պաղ-
տատայ, և դահեկանս հինգհարիւր
հազար առաքեցին առ բդեաշխս Կար-
նոյ և Պաղտատայ 'ի պէտս զօրաժողո-
վոյ: Մինչ այս և մինչ այն՝ լու եղև ե-
թէ պաշարեալ է Նատըր շահ զՊաղ-
տատ, և անկաւ շշուկ մեծ 'ի ժողո-
վրդեանն Կոստանդնուպօլսոյ, և հրդ-
դեհք յաճախեցին. և զօրականն ենիչէ-

րեաց ջան 'ի գործ եդեալ խափանէր զամենայն ժողովականս որ գործէին 'ի զբօսարանս քաղաքին ։ Հանին Օսմանեանք 'ի տանէ բանտի զՍաֆի Միրզա զանուանեալն որդի շահ Հիւսէյինայ, և համբաւեցին հռչակաւ՝ եթէ արդարև օրինաւոր ժառանգ է այրն աթոռոյ Պարսից ․ և պատմագիրն Սուպհի Մէհէմմէտ էֆէնտի շարադրեաց 'ի դիմաց նորին գիր հաստատութեան իրայն ․ և ածաւ Սաֆի մեծաշուք հանդիսիւ առաջի Մահմուտայ արքայի ։ Յօրինեաց և րէյս էֆէնտին Րաղըպ յանուն պարսկայնոյն հրովարտակս բազումս 'ի բարբառ Պարսից ․ յաւելան նմա պաշտօնեայք և սպասաւորք, և համարակալն պատուէր ընկալաւ հոգալ առատապէս զամենայն զպէտս նորա ։ Սակայն 'ի գուժել բանակաց եթէ առաւ և Քէրքիւք, և Պաղտատ և Պասրա 'ի վտանգի կան, արկաւ դարձեալ յիշխանութենէն Հէքիմզատէ Ալի, և ամբարձաւ Իսակյա Հասան փաշա՝ որ յառաջ ժամանակաւ ենիչէրի էր սակայն ։

Նորընտիր վէզիրն մեծ անուանեցաւ և սպարապետ պարսկական պատերազմին ․ այլ ոսոխք նորա նեղքնամեաքն երկոքեան և խնամին արքունի Փիրի էֆէնտի՝ այր անձնահաճ՝՝ հաւանեցուցին զարքայ անդէն 'ի քաղաքին պահել զվէզիրն ։ Սակայն և սմա յաջողեաց

հեռացուցանել յարքունեաց զխոհական բէխ Էֆէնտին զՄաղեալ՝ բդեշխութեան պատուով առաքեալ յԵգիպտոս, և զմտերիմն արքայի զՔեսրիէլ՝ յղեալ զնա 'ի Կարին որպէս համարակալ բանակին ։

Յամսեանն սեպտեմբերի լուր եհաս առ Նատըր, եթէ գնդպետն Օսմանեանց վճիռ հանեալ և բացէ 'ի բաց դատապարտեալ է զաղանդն հինգերորդ ։ Եթող վաղվաղակի զՔէրքիւք, և երթեալ պաշարեաց զՄուսուլ՝ կանգնեալ զդրօշս իւր 'ի վերայ շիրմին Յովնանու մարգարէի ։ Ամբարձ զքաղաքաւն մարտկոցս չորեքտասան, յորս էին թնդանօթք հարիւր և վաթսուն, և ռումբք երկերիւր և երեսուն, որք ոչ դադարէին 'ի հրձիգ լինելոյ 'ի քաղաքն ։ Չորեքտասան ականահատութիւնք պայթուցեալ՝ յետս կոյս բախեցան, և զնոսին իսկ զՊարսիկս կոտորեցին. և երկոտասան անգամ յարձակեալ Պարսից 'ի վերայ պարսպացն ձեռնունայն կասեցին. զի թէպէտ և թիւ ամբոխանացն չէր ինչ աւելի քան զերեսուն հազար արանց, սակայն ոչ էր չափ արիութեան կուսակալին Բեքիրոյ՝ որ 'ի գլուխ նոցին անցեալ կայր ։ Զհետ երեսնօրեայ պաշարման մեկնեցաւ Նատըր 'ի տեղւոջէն, զի կորուսեալ էր յիւրոցն աւելի քան զերեսուն հազար. և 'ի

չունել նա անդ խորում հարուածս չարաչարս ընկալաւ, և խնդրեաց խօսել 'ի հաշտութիւն, այլ առանց զիջանելոյ 'ի պահանջմանցն ։

Դէպք ինչ նշանաւորք պատահեցին 'ի տարւոջն 'ի տօնի բանակադինն 'ի Կոստանդնուպօլիս ․ զի առ վրիպակ տեսչութեան արարողապետին՝ որում անուն էր Աղըֆ Մէհէմմէտ՝ զօրագլուխք զինուորացն և Թնդանօթաձիգ զօրաց յառաջեցին քան զենիչէրիս 'ի համբոյր քղանցից արքայի ։ Կասկած երկիւղի կալաւ անդէն զարքայ եթէ գուցէ ցասնուցուն ենիչէրիք ընդ նախատինսն, և հրամայեաց առ ժամայն 'ի մահ տալ զարարողապետն ․ բայց ապա խոնարհեալ յաղաչանս զօրավարքին ենիչէրեաց՝ դատապարտեաց զայրն յանդարձ աքսորանս ։

Ի գալ միւսոյ գարնայնոյն իբրև ազդեցաւ Նադրշայ, եթէ ազատեալ Օսմանեանց յարդելանէ բանտին զՍաֆի Միրզա և զնա զօրութեամբ թեարկեալ նմին գան միանգամայն 'ի վերայ իւր 'ի կողմանս Կարուց, ժողովեաց զամենայն խմաստունս Բաշլ և Գուխարս և Քէրպէլէ և Հիլէ քաղաքաց, և առեալ 'ի նոցանէ վճիռ հակառակ վճռոյ դենպետին Օսմանեանց՝ հրատարածեաց յընդհանուրս՝ եթէ և հինգերորդ աղանդն Ճաֆէրի ուղղադաւան է իբրև զայլս ․ բայց եղ և մեծա-

բեաց զշիրիմն Նուրու Հանիֆէի, և զշի-
րիմն Ալեայ և Հիւսէյինայ, և ապա
դիմեաց դէպուզիղ 'ի վերայ Կարուց.
և Հասեալ անդր յամսեանն մայիսի,
մարտ եդ ընդ Օսմանեանս, և եհար
զնոսա և վանեաց սաստկապէս: Յետ
երկամսեայ պաշարմանց միւս անգամ
Ճակատ յարդարեալ կռուեցան բա-
նակքն երկոքեան ահագին քաջու-
թեամբ ժամս ութ. անկան երկուս-
տեք բազում արք անուանիք, այլ պա-
տերազմն մնաց անպարտելի, և Նա-
տըր շահ դարձեալ 'ի բանակացու-
թիւնս իւր ձեռն արկանէր:

Սպարապետն Օսմանեանց Ահմէտ
փաշա ոչ ունէր իշխանութիւն 'ի պատ-
գամաւորութիւնս անկանել ընդ Նա-
տըրայ. սակայն սախալեալ 'ի տրամըն-
ջանաց ամբոխին՝ արձակեաց առ Նա
դեսպանութեամբ զՔէօրիւլին Հան-
դերձ այլ ևս երկուք ոմամբք: Սորա
վստահացեալ 'ի վաղեմին իւր մտեր-
մութիւն ընդ արքային, և յուսացեալ
վաղագոյն վախճան առնել հաշտու-
թեանն՝ Հաւանեցոյց զՆատըր՝ մի ընդ
այլում ումեք խօսել այլ ևս, բայց ընդ
նմին ինքեան արքայի. և ինքն իսկ
Քէօրիւլին համարձակեցաւ չդառնալ
անդրէն առ սպարապետն, և դիմեալ
գնայր 'ի Կոստանդնուպօլիս: Սակայն
անդէն իսկ յուղւոջ գոլով ընկալաւ
հրովարտակ յարքայէ՝ որ գովէր զգնացս

պարապելոյն, և զնորայն պարտաւէր, և դատաւորնինք պատուհասի 'ի վերայ կայեր՝ երթալ կալ 'ի կապանս բանտի 'ի Սամսոն։ Յայնժամ սկսեալ 'նաւորը աստակադոյնս զպաշարումն քաղաքին. և Օսմանեանք զամենայն ձիգն 'ի վար արկին 'ի նեղութեան զդէմ ունել յարձակմանն Պարսից. այլ որ արտաքուստ հասին յեղակարծ 'ի վերայ բանակին Պարսից, չփոթեցին յոյժ զնոսա և հալածականս վարեցին, և թափեցին աւար բազում։

Ի ժամանակի անդ պաշարմանն Կարս քաղաքի եհաս 'ի Կոստանդնուպօլիս դեսպան յարքայէն Մողոլաց՝ որում անուն էր 'Նասրէտտին Մեհէմմէտ. և ած էր 'նա զնուր աւերածոց և անդորութեանց զորս գործեալ էր 'Նատըր շահ յաշխարհին Հնդկաց. և աղաչէր զՕսմանեանս 'նիզակակից լինել թագաւորին իւրում 'ի խորտակել զբռնակալն 'Նատըր։ Այլ Օսմանեանք շատ համարեցան բանիւք մտերմութեան պատուասիրել զայրն և արձակել 'ի տեղի իւր։

Կարևորագոյն ես դեսպանութիւնք առաջի կային 'նոցա 'ի գնալ եւրոպական պետութեանց, որ զմիմեամբք ելեելս արարեալ 'ի խռովութիւն և 'ի մարտս պատերազմաց՝ ոչ դադարէին 'ի դրդուելոյ անդադամ զՕսմանեանս հակառակ իրերաց։ Այլ Մահմուտ ար-

քայ ոչ միայն առ անպարապութեան յերեսաց պարսկական պատերազմին, այլ և առ աղէտ գործոյն 'ի վերայ Մարիամու Թերեզիայ դշխոյին Աւստրիոյ՝ զուր տարապարտուց դատափետելոյ յայլոց պետութեանց՝ միջնորդ խաղաղութեան կամեցաւ կալ 'ի միջի, և արձակեաց առ ամենայն պետութիւնս Թուղթ յորդորանաց 'ի սէր։

Զկնի բառնալոյ պաշարմանն Կարուց առաւ յԱհմէտ փաշայէ սպարապետութիւնն և տուաւ ցՆէկէն Մէհէմմէտ փաշա որ երբեմն վեզիր էր։ Սա համարձակեալ 'ի մանաւոր յաջողութեանց բդեշխից ոմանց ընդդէմ զօրացն Պարսից, խաղաց գնաց հարիւր հազար արամբք 'ի կողմանս Երևանայ, զի անդ էր Նատըր. և վստահացեալ 'ի ստուարութիւն իւրոյ բանակին, հարաւ բախեցաւ ընդ բանակին Պարսից յայգուէ մինչև ցօր հասարակ։ Յայնմ պահու հնգետասան հազար հեծեալք գումարեալք 'ի գաւառացն Ասիոյ՝ 'ի փախուստ դարձան 'ի բանակէ անտի։ Զաւուրս չորս տևեաց դարձեալ պատերազմն, և 'ի հինգերորդումն մեռանէր և սպարապետն ինքնին առ վշտին, և կամ որպէս այլք ասեն՝ հարեալ յումեմնէ յիւրոցն ըմբոստացելոց. և անկան յՕսմանեանց արք աւելի քան զքսան հազար։

Նատըր շահ 'ի լուր մեռանելոյ սպա-

բայէտին Օսմանեանց փութացաւ ար-
ձակեալ անդէն առ յաջորդ նորին Նէ-
ճաճ Ահմէտ փաշա դեսպանութեամբ
զհաւզուր խան, և առաջի անձեր զհաշ-
տութիւն խաղաղութեան՝ պայմանաւ
զի 'ի Պարսս տացին Վան և Քիւրտիս-
թան և Պաղտատ և Պասրա, և երկոքին
քաղաքքն Նէճէֆ և Քէրպէլէ յորս էին
շիրիմք Ալեայ և Հիւսէյինայ։ Այլ այս
պատգամաւորութիւն յաւել գրգռել
զՕսմանեանս 'ի մեծ եւ պատրաստու-
թիւն նորոյ պատերազմի։ Հէքիմզատէ
Ալի փաշա կարգեցաւ սպարապետ բա-
նակին մեծի, և առ ամենայն կուսա-
կալս գաւառաց գաւառաց հրաման
պատուիրանի հասանէր զօրաժողով
լինել և գալ իւրաքանչիւր զօրօք 'ի բա-
նակ սպարապետին. և ահա գային
հասանէին մի զմիոյ կնի բդեաշխք ա-
մինկան գաւառացն որ էն Խիւտավէն-
տիկեար, Գարէսի, Պէկշէհրի, Ագչէ-
հիր, Գարահիսար, Նիկտէ, Անկիւրիա,
Սուլդանէօնիւ, Ամասիա, Չորում, Իչ-
իլի, Ալայէ, Գոճա իլի և Ատանա. և
յեւրոպականացն որ էին Շքոտրա, Օխ-
րի, Ավլոնա, Տէլվինօ, Իլպասան,
Տուգաքին, Փէրզէրին, Իւսքիւպ, Եա-
նեա, Սէլանիկ, Հէրսէկ, Քիլիս,
Զվօրնիք և Պոսնա. և մէն մի 'ի սոցանէ
անէր ընդ իւրում ձեռամբ արս երեք
կամ չորեքհարիւր և նոյնչափ կամ
աւելի եւ հեծեալս վարձաւորս. ընդ

ամենայն որք վաթսուն կամ ութսուն հազար ։ Եկին յաւելան 'ի սոսա և կուսակալք Սեբաստիոյ, Տրապիզոնի, Գարամանայ, Կարնոյ, Բերիոյ և Մարաշոյ հազարաւորք իւրեանց ։

Մինչդեռ Օսմանեանք յայս հանդերձանս էին, դայր հասանէր գեսպանութեամբ յաշխարհէն Պարսից Ֆեթհ Ալի խան, և տուաւ նմա 'ի բնակութիւն ապարանք Րաղիպ փաշայի, և Նաղիֆ Մուսդաֆա ապաեդաւ առ նմա որպէս Միհմանտար, կամ գործակալ ։ Յամսեանն փետրուարի յամին 1746 հրաման ետ արքայ ինքնագիծ հրովարտակաւ, զի քննեսցին յատենի առաջարկութիւնք դեսպանին ․ որոյ վասն ամենայն նամականին նորա թարգմանեցան 'ի տաճիկ բարբառ և վերծանեցան յատենի անդ ։ Ոչ ևս ակնդէր Նատըր շահ 'ի կանգնումն նորոյ աթօթանոյն 'ի Մէքքէ, բայց միայն զի համարձակ լիցի և Պարսից հետեւողաց աղանդոյն Ճաֆէրի մտանել 'ի մզկիթս Սիւննեաց, և Նէճէֆ և Քէրպէլէ հանդերձ Աստրաբատական աշխարհաւ թողցին 'ի Պարսս ։ Եւ հաւանեցաւ ատեանն ընդ պայմանս Նատըրայ, և յանձն էառ զհաշտութիւն ․ սահմանեցաւ արձակել ընդ դեսպանին Պարսից 'ի դիմաց օսմանեան դրանն զՆազիֆ էֆէնտի հանդերձ նամականաւ արքայի և վեզիրին մեծի և դենպեանին

առ Նատըր շահ և առ որդի նորին Շահ-րուխ և առ գենդերան Պարսից . և հիմն պայմանաց հաշտութեանն էր՝ զի սահմանք երկաքանչիւր պետութեանց կայցեն մնասցեն ըստ օրինակին որպէս էինն առ Մուրատու չորրորդին :

Մինչև 'ի հասանել դեսպանացն եր-կոցուն 'ի Պարսս՝ բազում փոփոխու-թիւնք պատահմանց եղեն 'ի Կոստան-դնուպօլիս : Գենդերան փոխեցաւ ար-կաւ յիշխանութենէ իւրմէ սակս սա-րապայման իշխանակրութեանն, և կա-լաւ զտեղի նորա բժիշկն արքայի Հայ-աթիզադէ Մէհէմմէտ Էմին Էֆէն-տի, որ և սա ոչ յերկարեաց 'ի բար-ձին 'ի նոյն պատճառս : Մեծագոյն դէպք էին և մեծագունից պատճառ փոփոխութեանց՝ մահ հզօր ներքի-նապետին Պէշիրայ յերրորդի աւուր ամսեանն յուլիսի . և էր նա ամաց ին-նսուն և վեցից . և որ մանուկ գոլով եթովպացի՝ գնեալ էր յարքունիս ընդ երեսուն դահեկանի, 'ի մեռանել իւ-րում եթող ութսուն հազար քսակս արծաթոյ, և կազմածս ձիոց հարիւր և վաթսուն, և ութհարիւր ժամա-ցոյցս ականակապս : Սորա էր շինեալ զմզկիթն Աղա Ճամիի 'ի Կոստան-դնուպօլիս, և դպրոցս երիս, և աղ-բիւր մի և մատենադարան : Ընդ մահ առնն հզօրի խնդաց մեծապէս վէզիրն մեծ, և սկսաւ փոփոխել զաւագանին

ըստ հաճոյս կամաց իւրոց . սակայն յետ ամսօրեայ ժամանակի անկաւ և ինքն յանկարծ յիշխանութենէն , և ամբարձաւ Իլչհաճ Մէհէմմէտ փաշա՝ մականուանեալն Թիրեաքի, որդի տէր-վիշի ուրումն :

Նորանոր հրդեհք պատահեալք 'ի նոյն աւուրս 'ի Կոստանդնուպօլիս՝ պատճառս եառուն բազմապատիկ բանից ամբոխին . մանաւանդ այն՝ որով կիզաւ յարկն ևեթ ծածկութի միոյ յաշտարակաց մզկթին սուլդան Պայէզիտայ , զի ասէին առէպ առէպ զառակն տաճկական . « Քէլլէ սաղ օլսուն , ճէ-հաննէ դէր քէլահ էքսիք գէլէ » . և յընկեցումն վեզիրին ակնարկէր բանն՝ ասէ պատմագիրն Խալի :

Զայսու ժամանակաւ հնչեաց 'ի Կոստանդնուպօլիս աւետիս հաշտութեան եղելոյ , և սկիզբն եղև անդէն պատրաստութեան ընծայից առաքելեաց 'ի Պարսս : Քանզի Նազիֆ էֆէնտի եհաս 'ի բանակն Պարսից 'ի Քէրմէն՝ ընդ մէջ Գազվին և Դեհրան քաղաքաց՝ 'ի չորրորդում աւուր ամսեանն սեպտեմբերի : Բազմեալ էր Նատըր շահ 'ի գահ մեծ և հոյակապ 'ի ձև սիրամարգի՝ զոր ածեալ էր 'ի Տէլհի քաղաքէ Հնդկաց , և ունէր 'ի գլուխ իւր պսակ ականակուռ, և գարգմանակ փետրազարդ 'ի վերայ , 'ի բազուկս իւր ապարանջանս մարգարտա-

զարդս և զմիխանեայս, զպարանոցաւն մանեակ ադամանդեայ, 'ի լանջսն պաճուճանս ականակուռ, և ընդ մէջ իւր գօտի լայն համակ ականազարդ։ Զառաջեաւ աթոռոյն կանգնեալ կային երկրորդն արքայի և դենպետն Պարսից, և եօթն աւագանին, ամենեքեան 'ի հանդերձս ոսկեթելս։ Աւարտեալ օսմանեան դեսպանին զատենաբանութիւն իւր 'ի դիմաց արքային Մահմուտայ, և մատուցեալ զնամականին, եհարց զնա Նատըր շահ եթէ ողջո՞յն իցէ թագաւորին Օսմանեանց. ապա մօտագոյնս կոչեցեալ զնա՝ բազում ինչ խօսեցաւ սիրողաբար զարքայէ, և 'ի վախճանի հաստատեաց զպայմանս հաշտութեանն։

Ընտրեցաւ 'ի Կոստանդնուպօլիս 'ի տանել զընծայսն՝ Քէսրիէլին, քանզի վերստին շնորհս գտեալ էր նորա յաչս արքայի. և տուաւ նմա պատիւ կուսակալութեան Սեբաստիոյ, և հեծեալք չորեքհարիւր յուղեկցութիւն։ Եւ զի ազդ եղև 'ի թագաւորեալ քաղաքն՝ եթէ պարսիկն առաքէ ընծայ արքայի գահ ոսկի զարդարեալ ակամբք և մարգարտօք, և գլխակս նորահնարս, և չորս կարգս փղաց, զամենայն փոյթ 'ի մէջ առին Օսմանեանք առ 'ի հաւաստել պճնամաւեալն իւրեանց պերճութիւն՝ որ յառակս իսկ է յարևելս։ Ընտրեցին երե-

վարս խնամուն 'ի Հայաստան աշխարհէ գեղեցիկս յոյժ յոյժ՝ 'ի զարդ ուղղո_ րութեան դեսպանին և յընծայ արքա_ յին Պարսից. Նոյնման էֆէնտի որ մի էր յիմաստնագունիցն 'ի վարժապետս Կոստանդնուպոլսոյ՝ առաքեցաւ ընդ դեսպանին որպէս դատաւոր բանակի, և համբաւեալ քերթողն Րահմի՝ որ_ պէս պատմագիր դեսպանութեանն. իսկ ընծայիցն այնպէս գերապանծ էր ճոխութիւն և պատուականութիւն, զի այնպիսի ինչ երբեք չէր առա_ քեալ Օսմանեանց առ թագաւոր ոք Ասիոյ կամ Եւրոպայ, որպէս և ոչ յետ այնորիկ: Քանզի վաթսուն և ինն կարգք էին ընծայիցն, և ամե_ նայնն գործ ճարտարագործ և ակա_ նակուռ, որպէս դաշոյնք և սուսերք և կապարճք և աղեղունք. թող զառափ_ տոյն ոսկիս, զժամացոյցս ադնիւս, զդի_ տակուռս գեղեցիկս, զհրազէնս և զճեղանակս, զկազմածս երիվարաց, և զբարձկնեար և զդիպակս և զկապերտս և զծիրանիս. որոց ամենայնի գինք անցանէին քան զդահեկանաց չորեք_ հարիւր հազար: Նա ժողովեալ զայս ամենայն յապարանս վէզիրին՝ 'ի դիր դրոշմեցին զթիւն և զգինս վէզիրն մեծ, և դեսպանն և ծովակալն համ_ դերձ համարակալաւ և երկոքումբք դատաւորօք զօրաց, և եդեալ զնոսին յարկեղս արկեղս՝ կնքեցին մեծաւ

կնքով պետութեանն ։

Ի սկզբան 1747 ամին հանդէս մեծ եղև 'ի Կոստանդնուպօլիս 'ի պատճառս գալստեան խանին Խրիմու անդըր· զի այն առաջին անգամ էր եկաւորութեան Սէլիմ գէրէյայ 'ի թագաւորեալ քաղաքն ։ Իջ 'նա յերկիւղէն խրմէ արտաքոյ պարսպաց քաղաքին, և անդէն մեծարեցաւ 'ի գործակալէն խրմէ՝ որ բէկս էֆէնտին էր ։ Ի վաղիւ անդր եմուտ մեծահանդէս շքով 'ի քաղաքն, զի ընդ 'նմա գային և վէզիրն մեծ և դեհնպետն և ծովապետն, և զօրավարն ենիչէրեաց՝ հանդերձ իւրաքանչիւր պաշտօնէիւք և զօրագլխօք զօրաց ։ Զկնի մեծահաց խնջոյից պատուեցաւ նա և որ ընդ 'նմա էին՝ ազնիւ սամուրենեօք · ապա մտեալ առաջի արքային՝ ընկալաւ և 'ի նմանէ այլ սամուրենի, և դաշոյն ականակուռ, և ժամացոյց ոսկի, և երկուս քսակս լի ոսկւով, և տուփ մի ոսկի լի խառնուածովք անուշից յօրինելոց յաշքուծիս, և ապարանջանս ոսկի յորում ընդելուզեալ էր գեղթափ քար՝ անհամեմատ գեղեցկութեամբ և գնով ։ Պատուեցաւ առանձին խնջոյիւք և յամենայն աւագորերոյն, և ապա մեկնեցաւ 'ի քաղաքէն նոյնպէս շքով հանդիսի ։

Այս ամենայն պատիւք առատաձեռնեալք խանին Խրիմու՝ հաստատէին

ղնա 'ի հաւատարմութեանն առ դուռն Օսմանեանց, և միանգամայն աչ խնն արկանել թուէին պետութեան Ռուսաց: Այլ դեսպան նոցին Նեփլույեվ հաստատեաց դարձեալ ընդ Օսմանեանսն ուխտ բարեկամութեան 'ի միանգենաւորս: Զնոյն յաջողեցաւ առնել և դեսպանն Գերմանացւոց Փէնքլէր՝ 'ի թագաւորել ընդ Մարիամու Թերեզեայ Ֆրանչիսկոսի կայսեր. քանզի հակառակորդ նորին դեսպանն Գաղղիացւոց Կասթէլան ոչ ևս կարէր խափան լինել խոցն, որովհետև 'ի նմին ամի մեռանէր 'ի Կոստանդնուպօլիս գործակից նորին ուրացեալ գաղղիացին Պօնվալ՝ այլն խորոխտ և բանսարկու [1]:

1 Կոմսն Պոնվալ անուանի է 'ի պատմութեան ժամանակին այնր իւրոց բանսարկութեանց՝ որովք հնարէր ընդ միշտ արկանել զԱւստրիական և զդրանն Օսմանեանց: Պատճառ իւր ուրանալոյ նորա 'ի հայրենի հաւատոյն՝ նախ թեթևամտութիւնն էր, և երկրորդ՝ թշնամանալ ընդ պատերազմին Գերմանացւոց Եւգինէոսի, և ընդ կայսեր իւր գլխովին. թէպէտ և յատուկ ժամանակս 'ի պատերազմին Վարատինոյ ու այնս փաշութեամբ մարտուցեալ էր ընդդէմ Օսմանեանց: Ի պաշտօնակալ իւրում Ահմէտ փաշա անուանեալ՝ մարզեաց զգունդ մի զօրաց Օսմանեանց 'ի հրահանգս թնդանօթայից զօրացն Եւրոպացւոց, այլ ոչ եր-

Իսկ կարծեցեալն որդի Շահ Հիւսէյնեայ զկնի հաշտութեանն եղելոյ ընդ Պարսս՝ մերկացեալ յարքունական շքոյն որով զարդարեալ էր յուսով, առաքեցաւ նախ 'ի Գարահիսար, և ապա յամրագոյն ևս կալանս բանտի 'ի Սամսուն:

Դարձեալ ընդ նոյն ժամանակս Իպրահիմ ոմն խրուաթ յազգէ մինչդեռ վիճէր ընդ Տաճկաց ոմանց և գուն գործէր դարձուցանել զնոսա 'ի քրիստոնէական հաւատս, ձերբակալ եղև, և ոչ զերծաւ 'ի մահուանէ՝ բայց ուրանալով 'ի հաւատոցն: Այսպ մինչդեռ 'ի Կիպրոս էր՝ ոչ դադարէր 'ի համբաւելոյ, եթէ ինքն 'ի վեշտասան ամաց հետէ մարգարէ առաքեալ է յԱստուծոյ, և թէ ինքն իսկ Մահմէտն է յարուցեալ 'ի մեռելոց, և եկեալ մօտ 'ի կատարած աշխարհիս 'ի վկայել ճշմարտութեան քրիստոնէական կրօնից. և թուղթս բազումս գրէր զայսցանէ առ վէզիրն մեծ 'ի տաճիկ և 'ի լատին բարբառս: Վճիռ ետ գտնելեան եթէ այրս այս ոչ եթէ յիմար է, այլ մոլորեցուցիչ չար. և դատապարտեցաւ նա 'ի մահ ':

[illegible] աստղի [illegible] խամ աստ-
[illegible] :

1 Այսպէս յայտնանէ պատմաբանն [illegible] պատմագիրն Օսմանեանց [illegible], բացում բա- [illegible]

Յամսեանն օգոստոսի Նասէյր Մէ-հէմմէտ փաշա սակս խռովոյ կուսակալ բարուցն արկաւ յիշխանութենէն, և եկաց փոխանակ նորա վէզիր մեծ Սէյխա Նայասուլլահ փաշա. որ ոչ միայն փոփոխութիւնս բազումս արար ընդ յաճախ սովորութեան 'ի դասս աւագանւոյն, այլ և արգել խստիւ զվաճառ գինւոյ 'ի Պէյօղլու և 'ի Ղալաթիա. « Ոչ ևս էր անսանել այնուհետև, ասէ պատմագիրն Իսի, հոլանի և բացագլուխ զզուանքն այգւոյ զարբեցութիւն, որ ընդ մարդարէին ձայնի՝ մայր է ամենայն ախտից. և արք կնամարդիք ժամանակին փոխանակեցին ընդ ապակւոյ անապակին զյախճապակին դահլէի »: Յաւելու ապա 'ի բանս իւր, և 'ի պատմել զհրդեհն պատահեալ 'ի Սամաթիա ուր գինետունք բազումք էին՝ ասէ. « Քանզի ջերմաջերմ աղօթք հառաչանաց ծխեալք 'ի պապակեալ կոկորդաց արբշիռ գինեմոլից՝ բորբոքեցոյց եօթնպատիկ զհուրն, և չէր հնար շիջուցանելոյ »:

Ահազնագոյն ևս ձարակէր յայնժամ 'ի Պարսս այլ իմն ազգ հրդեհի․ Քանզի ոչ ևս հանդուրժեալ նախա-

արքային շահէպ փառանձոց, որ 'ի հերձուածո-դաձնոց յածին, ասէ, ընդ ամենայն աշխար-հըս մեր, և որսան շփոթեցուցանէր 'ի բրեստո-նէութեան:

բարացն Աղուանից և Պարսից 'ի բռնութեանց Նատըր շահայ, միաբանեցին ընդ իւրեանս արս երեքհազար, և զերկուս ոմանս 'ի Թիկնապահաց Նատըրայ՝ սպանանել զնա. զի և խորհուրդ չար 'ի մտի եդեալ էր բռնակալին կոտորել 'ի միում գիշերի զամենայն զպարսկազգեանս՝ որ չառնուին յանձն զնորահնար աղանդն իւր: Գոձա պէյ և Սալիհ պէյ, քանզի այս անուն էր Թիկնապահացն, մտին գիշերայն ընդ մէջ պահապանաց մինչև 'ի վրան Նատըրայ, խեղդամահ արարին զպառաւն որ հսկէր միշտ առ դրան վրանի բռնակալին, և մտին 'ի ներքս 'ի խորանն ուր ննջէր և խորդայր Նատըր: Համարձակեցաւ հարաւ մի ոմն 'ի նոցանէ 'ի վերայ բռնաւորին և կշռեաց զմահաբեր հարուածն: Ի վեր ոստեաւ Նատըր, և անդէն մերկնեալ բուռն հարկանէր զկայմէ վրանին. այլ յարձակեցաւ անկաւ 'ի վերայ նորա և միւսն, և սրախողխող արարեալ սապալեցին զնա 'ի գետին: Շփոթք անհնարինք յուզեցան ընդ այգն 'ի բանակի անդ, և զունդք Պարսից և Աղուանից սուր 'ի կող ընկերի եդեալ պատերազմեցան ժամս ինչս. մինչև 'ի պարտութիւն մատնեալ Աղուանից փախեան 'ի Գանտահար: Իսկ կնքապահն Նատըրայ եդ զգլխակն տեառն իւրոյ 'ի վերայ ուղտու և տանէր 'ի Մէշհէտ.

այլ ամիրոխ Քրդաց հասեալ 'ի վերայ նորա զՃանապարհայն՝ հարկեցուցին զնա ընկենուլ զզխակնն 'ի վիհ մեծ և ծածկել: Եւ յետ բազում խռովութեանց յուզելոց 'ի Պարսս յաղագս ժառանգութեան աթոռոյն, զորոյ չէ անգսոյս յերկարել, ախրապետեանց յաշխարհի անդ բառ մասին Շահրուխ Միրզա որդի Ըխզա գուլի խանին 'ի գաւերէն Դահմասպայ:

Յաւուրս սորանման 'Նատըր շահայ, որ օր քսաներորդ երրորդ էր ամսեանն յունիսի, գեսպանն Օսմանեանց Քէօրիէլի Ահմէտ փաշա անդ 'ի սահմանս աշխարհին Պարսից հանդերձ իւրովք հազարաւոր ուղեկցօքն և ընծայիւք․ սակայն 'ի լուր աղեաց և խռովութեանց աշխարհին աՃապարեաց դառնալ և խուսել 'ի Պաղտատ: Իսկ 'ի Կոստանդնուպօլիս ցնծութիւն մեծ եղև, ասէ Իսի, ընդ վախճանել ահարկու բռնակալին, թէպէտ և Օսմանեանք հաշտ կամէին մնալ ցանդ ընդ թագաւորս Պարսից:

Յաւելաւ խնդութիւն դրանն արքունի 'ի տեսանել անդ յաւուրսն յայնոսիկ զկառափունս նախարարացն Եգիպտոսի Մէմլուք անուանելոց ընկեցեալս զանմօք իւրովք․ քանզի կուսակալ երկրին Րաղիպ փաշա մեծաՃարտարութեամբ և քաջութեամբ յինքն յանկուցեալ նախ զնոսա, ապա կոտո-

բնայ զամենեսեան 'ի միում՝ աւուր ։

Երբեւ յամենայն կողմանց հաշտութիւն խաղաղութեան պատեաց զաշխարհն Օսմանեանց, Մահմուտ արքայ միտ եդ այնուհետեւ պարապով 'ի խրախութիւնս հարսանեաց դստերացն իւրոց, եւ 'ի շինուածս մզկիթաց եւ պատշգամաց ։ Նա չէր ինչ որ խափանէր զանդորրութիւն 1748 ամին, բայց միայն սակաւուք խռովութիւնն յուզեալ 'ի Քրդաց ոմանց 'ի Թագաւորեալ քաղաքին ։ Քանզի կամեցեալ սոցա աւար հարկանել զճոխագոյն մասին վաճառանոցին որ Պէզազխաթանն կոչի, յեղակարծում ժամու խռով մեծ հարին, եւ ընթացեալք ընդ փողոցս աղաղակէին՝ թէ ահա կործանել կամին ապստամբք զամենայն զկրպակս ։ Այլ արիութիւն զօրավարին Ենիչէրեաց 'ի դերեւս եհան զանմիտ անինկալութիւն նոցա. զի յաւելեալ զգունդս զօրաց իւրոց 'ի խուռնս կրպակաւորացն, յարձակեցաւ սպան զոմանս յանդգամաց անտի, եւ զայլս ցիր եւ ցան կացոյց ։ Այս ինչ նշանաւոր էր 'ի դէպսն, զի վէզիրն մեծ բառ վճռոյ դենպետանին եւ քարոզ կարդալ, եթէ հրաման է եւ Յունաց եւ Հայոց կոտորել յանխնայս զխռովիչսն որչափ եւ ձեռնհաս լինիցին ։

Ընդ այն ժամանակս շփոթ մեծ անկանէր յաշխարհին Արաբիոյ յերեսաց նոր ինչ աղանդոյ Մահմետականաց, որ

ապա յետ կիսոյ դարու աւելի ևս աղմկեալ վրդովեցոյց զարեւելս ողջոյն ։ Քանզի վրանաբնակ ազն արաբացի ՚ի տոհմէն Վահապի՝ Աբդուլվահապ անուն՝ նորոգող կամեցեալ լինել աղանդոյն Մահմէտի. և որպէս սովորութիւն է զայսօրինակ մոլելոց՝ պատճառանօք յանուն կանգնելոյ զնախնին կարգ բարեպաշտութեան մահմետականաց՝ եդ ՚ի մտի յապաւել ՚ի դենէ անտի զամենայն զկարգս և զօրէնս որ օտար թուէին ինքեան և եկամուտ ։ Զօրավիգն մեծ եգև Աբդուլվահապայ փեսայ նորին Մէհէմմէտ Իպն Շիւուտ կոչեցեալ, որոյ հաւն Սիւլէյման անուն՝ հանրու մեծ ունէր յԱրաբիա. և պատմէր իսկ բան յԱրաբացիս, եթէ այս Սիւլէյման տեսեալ իցէ երբեմն յերազի, զի բոց հրոյ բորբոքեալ ՚ի ծոցոյ իւրմէ ծաւալէր ընդ անհուն անապատն և ծախէր զբնակիչս նորա ։ Արդ զայս երազ դիւրաւ մեկնաբանեաց Մէհէմմէտ ՚ի վերայ անձին, և ՚ի սուղ ժամանակի բազմացոյց զհետեւողս աղանդոյ աներոյն իւրոյ ։ Յերրեակ պատուիրանս ամփոփէր Աբդուլվահապ զգիտութիւն փրկութեան. ՚ի ճանաչել զԱստուած, ՚ի գիտել զսկզբունս հաւատոյ, և ՚ի դաւանել մարգարէ զՄահմէտ ։ Իսկ սկզբունս հաւատոյ զերիս զայսոսիկ անուանէր. ա, հաւատալ յԱստուած, ՚ի հրեշտակս, ՚ի Մահմէտ, ՚ի գիր-

սուլթա, և 'ի դատաստանի վերջին · Բ, Ցաղօթս կալ հնգիցս յաւուր, և առնել զողորմութիւն՝ զհինգերորդ մասն ընչից տուեալ կարօտելոց · Դ, Պահել զպահս րամազանին, և գնալ մի անգամ յուխտ 'ի Մէքքէ ։ Զառաջինն ոչ կարացին բիծ ինչ դնել զաւանութեանն Ապտուլ Վահապայ խմաստագոյնք անգամ յՕսմանեանց և 'ի Պարսից · այլ ապա 'ի գործոց հետևելոց նորին տեսեալ, զի բաց յաղարտելոյ զամենայն զխորհս դենին իւրեանց՝ անհաշտ թշնամի էին նոքա և պաշտաման սրբոց և մարգարէից, և զուն գործէին քանդել կործանել զամենայն ուխտատեղիս, և զՄահմէտին անգամ զգերեզմանն, խուժեցան յոյժ և ապստամբեցան, և ոչ գիտէին թէ զիարդ խափանեսցեն զամբոխն 'ի հրձծանայն առ հասարակ տարածելոց ։

Լուր եհաս 'ի նոյն աւուրս եթէ կուսակալն Մուսուլայ Մէհէմմէտ փաշա զանեալ է ընդ հողով անօթս երկուս լիս ոսկի դրամովք վասն Ժամանակաց, որոց գինք էին չորեքհազար հինգհարիւր քսան և երեք մաճառ ոսկիք · որք առ հասարակ յարքունիս առան ։ Այլ ազդողագոյն գատ 'ի զգուշացուցանել զամբոխն այն՝ զի Մահմուտ արքայ յայնմ ամի ընդ ծածկութի Քեհայէին առաքեաց 'ի Մէքքէ և առանձինն ընծայս ծանրագինս

յորինեալս 'ի մեծամեծ ականց պատուականաց ։

Ի սկզբան 1750 ամին արքու. յիշխանութենէ վեզիրութեան Մէյիտ Ապտուլլահ փաշա, և ամբարձաւ 'ի անդր Նորին Տիֆլիթտար Մէհէմմէտ Էմին փաշա ։ Եւ զի տասն աւուրբք յառաջ պատահեալ էր խաւարումն լուսնի, Նախրահաւատ ռամիկն անդէն հաստատեցաւ 'ի կարծիս իւր՝ եթէ նշան էր այն մթագնելոյ փառաց վեզիրին մեծի ։ Դէպ եղև յետ հնգից աւուրց խաւարել և արեգական ևս. և ոչ ևս երկմտեաց ամբոխն ասել եթէ անշուշտ չարեաց ինչ գուշակ է այն վասն արքայի. մանաւանդ զի գտաւ 'ի տումարս և բան ինչ աստացեալ 'ի ծերունւոյ ումեմնէ Խոյնեւ Արեպի կոչեցելոյ՝ յաղագս խաւարելոյ երբեմն արեգական և լուսնի միանգամայն ։ Ընդէն հրաման եղև յարքայէ խափան առնել այնպիսի զրուցաց, և բազում աստեղաբանից խեղդամահ սպանան՝ փոխանակ զի յանդգնէին շրջաբերութեանց լուսաւորացն պատճառս առնուլին խռովութեան արկանելոյ 'ի մէջ մարդկան ։ Սակայն դարձեալ երկիւղ մնայր պաշարեաց զռամիկն վասն հրդեհին մեծի որ բորբոքեցաւ 'ի դուռն Ալայմ դափուսու, և տևեալ ժամս երեսուն՝ բոցակիզեաց տունս վեց հազար վեցհա_

բիւր վաթսուն և եօթն , ընդ որս և զա_
պարանս զօրավարին Ենիչէրեաց ։ Այլ
արքայ վաղվաղակի կառոյց զայն չքե_
ղագոյն քան զառաջինն , քառասուն
հազար դահեկանս առաքեալ առ Ենի_
չէրիս ։ Զհետ երկուց ամսոց բորբոքե_
ցաւ այլ հրդեհ 'ի վաճառանոցի զի_
նուց ։ Նոյնհետայն պատուէր ետ ար_
քայ վեզիրին մեծի և զօրավարին Ենի_
չէրեաց պահ ունել զօրք եղի և մեծ
վաճառանոցին , որպէս զի մի՛ դուցէ
յափշտակեսցէ ամբոխն զմթերս զինու_
ցն այնոցիկ՝ որովք մարթէր սպառա_
զինել քառասուն հազար արանց . և
նոքա փոյթ յանձին կալան մանաւանդ
ազատել ինչ 'ի հրկիզութենէ անտի՝
քան պատճառս տալ խռովելոյ քաղա_
քին ։

Եւ բռնակալն պետութիւնք 'ի ժամա_
նակին Մահմուտայ արքայի յոր 'ի պա_
տերազմունս գոլով ընդ միմեանս , դե_
սպանք նոցին եկեալս առնէին զիրերօք
ընծայաբեր լինել օսմանեան դրանն ,
յիւրեանց կողմն կամեցեալ զնա յան_
կուցանել . սակայն Մահմուտ արքայ 'ի
ընին եւեթ կայր խրացն , և զընծայսն
մատուցեալս բազում շնորհակալու_
թեամբ ընդունէր . քանզի , ասէ աստա_
նօր պատմագրին Խոհի , քաջ գիտէր զբան
կուրանին , եթէ « Իշխանութիւն եւ
Աստուած չան 'ի միերայ խոզի » . և թէ
« Ազգք անհաւատից զմի միայն կազմեն

ժողովուրդ․ առ հասարակ 'ի կորուստ եղիցին ։։ և որ այլն են ։

Իսկ զայնչափ փարթամութեանցն մթերս ոչ միայն 'ի չինուածս ծախէր Մահմուտ արքայ, այլ և 'ի գրգռել զգունդս զօրականաց իւրոց, և մանաւանդ զենիչէրիս ։ Յառաջ ժամանակաւ օրէն էր անխախտելի, զի յանցանել արքայի հանդէպ հին զինուորանոցի ենիչէրեաց՝ որ ընդդէմ կայր մըզկըթին Շէհզատէլէր Ճամիին կոչեցելոյ, զօրագլուխ վաթսուներորդի առաջներորդի գնդին մատուցանէր նմա լի բաժակաւ օշարակ, և մատակարար նոյն գնդի այլ բաժակ մատուցանէր առ ներքինապետն, և արքայ ընոյր զբաժակն ոսկեով ։ Արդ արքայն Մահմուտ առաջեաց առ գասս ենիչէրեաց հրովարտակ ինքնագիր, որով սահմանէր զի յայնմ հետէ յանցանել արքայի զառաջեաւ ապարանից զօրավարին ենիչէրեաց, զօրավարն մատուցէ նմա զբաժակ օշարակին, և փոխանորդ նորա ներքինապետին ։ Եւ այս բանք գովեալ ենիչէրեաց էին 'ի գլուխ հրովարտակին ․ ։ Ենիչէրիք գերապանծ գրանս խմոյ արի անխոյեանք էն հաւատոյ, և օրհնութիւն իմ՝ որ պատկեր եմ Աստուծոյ 'ի վերայ երկրի՝ հանդուցեալ է 'ի վերայ նոցա, և այժ ժողովըրդեանն Աստուծոյ 'ի նոսա յուսացեալ կան ․ և գութք խնամոց մերոց 'ի յաւե_

բուլ զինուս և զպատիւ նոցա՝ առ հա_ւատչեայ իմն է, երջանկութեան յառա_ջին և յանտոյն կեանս » և որ 'ի կարգին : Եւ հրամանն ետ բաշխել 'ի հարիւր ին_նըսուն և ինն խումբս ենիչէրեացն վեց_հարիւր ութսուն և ինն քսակս արծա_թոյ :

Խրախուսանօք Մահմուտ արքայ բազ_մապատիկ պարգևօք և զխանն Խրիմու զԱսլան Քէրէյ յամրացուցանել և եւ զբերդորայս Խրիմու, մանաւանդ զՕր_ղափուսու և զԱրապաթ : Փոյթ կա_լաւ նորոգել և զպարիսպս Պէքլէրասու․ և զգեղեցկանիստ ապարանսն որ 'ի Գանտիլլի առ ափամբ Վոսփորի՝ հիմ_նովին նորոգեաց : Այլ ոչ լոկ թագա_ւորեալ քաղաքին յանդորրու վայե_լէին և արտաքին գաւառք պէտու_թեանն․ և աշխատասիրութիւնք և խո_հեմութիւնք և առաքինութիւնք մեր 'ի վայր առնէին զՊասրա, զՊոսնիա, զԿի_լիկիա, զՄոլտովիա և զփոքրն Ասիա : Եւ զի գլխաւոր պատճառք չարեացն էր տարապայման հարկահանութիւնք բդեշխից և մերձակացուաց կողմանցն այնոցիկ, Մահմուտ արքայ հրամայեաց նուազել զթիւ հարկացն և զչափս նո_ցին․ մխիթարեաց և զկուսակալս կող_մանցն, և զյանցաւորսն 'ի մահ ետ ան_խնայ, և հանդարտեաց երկիրն առ ժա_մանակ մի :

Սակայ ստէպ հրդեհք քաղաքին այ_

ըեցին դարձեալ զձմերոցս ենիչէրեաց. և 'ի յապաղել խուռն ինչ աւկին կարգելոյ 'ի չինութիւն ձմերոցացն՝ և աշախատ՝ հարեալ ապստամբէին ենիչէրիք ։ Հզօր էր 'ի ժամանակին ներքինապետն Պէշիր՝ յաջորդ իննամեա Անոյն Պէշիրայ, Թէպէտ և չէր նորա աւելի քան զքսան և ութ ամ հասակի. սա զառաջս առնուլ կամեցեալ զխռովութեանն՝ եւ ընկենուլ 'ի պատուոյ զվէզիրն մեծ զՆիշին Մէհէմմէտ փաշա, և ամբառնալ զՄուստաֆա փաշա ։

Ներքինապետն Պէշիր յածուցեալ այսպէս զաղմուկ ենիչէրեաց, յետ սուղ ինչ աւուրց ինքն իսկ մատնեցաւ 'ի կուր ցասման և ատելութեան զխոնականաց, որ 'ի բազմաց հետէ խռայլին ընդ նմա ։ Քանզի զակատեալ նորա 'ի սէր ընչից յոյժ, որով և զամէր իւր յամենայն վայելս ճոխութեան հրապուրեալ, եկից զարքունիսն ազգի ազգի պերճութեամբք և ամենայն իրօք պատուականօք՝ ըստ յարգի և ըստ նիւթոյ և ըստ գործուածոյ. և այլքայ զուարճանայր ընդ իրան, ոչ գիտելով եթէ այնր ամենայնի տատանպատէկ յաճախութիւն է առ ներքինապետսն ։

Ունէր նա և գերի մի վրացի Սիւլէյման անուն, և ընդ ձեռն նորա գործէր զամենայն. զհարուստն կեղեքէր, և զակարս աշխատեցանէր, և յամենեցուն շահուց ոսկւոյ ակնկալեալ ըս-

տանէր : Ի դէպս դատաստանի առն ուրումն՝ որում պաշտպանէր Ներքինապետն , դատաւորն Խուրշիտաղայ չէառ յանձն ընդունել 'ի նմանէ զկաշառս : Ընդ որ խռովեցեալ Ներքինապետին՝ կոչեաց զդատաւորն յատեան , և կշտամբեալ զնա՝ ապտակ ետ և ածել նմա : Բայց կալաւ դատաւորն սակս անլուր թշնամանացն առ դենպետն , և դենպետն առ Վէզիրն . և նա ոչ ինչ 'ի հնարից ոչ եթող առ հանդարտելոյ զայրն , զի մի հարկ լիցի 'ի վեր գալ ընդ Ներքինապետին բռնութեան : Սակայն զխնամակալանացն դասք համօրէն զդատաւորութեանցն կալան զկողմն . յորմէ երկուցեալ Ներքինապետին՝ 'ի չարագոյնն ձեռն արկանէր եղեռն , խնդրամահ առնել զդատաւորն յանկալին Նորին , և զտունն Նորա փլուզանել 'ի վերայ Նորա , և համբաւել՝ որպէս թէ դէպքին ինչ այնպէս պատահեալ իցեն : Այլ խարբեցաւ և ոչըր . և ուր կանխաւ ուսուցանէին եւեթ ոտայր ընդդէմ Ներքինապետին, յայնմ՝ հետէ և զխանակունք և զօրականք և ամենին առ հասարակ 'ի բարկութիւն սրամտութեան մեծի բորբոքեալք՝ հուր հորկանել կամէին 'ի շուկայն և 'ի տունս քաղաքին : Խորհուրդ ետ դենպետն արքային և ասէ . եթէ կամիս ամոքեցուցանել զամենայն քո և զաթոռդ , հարկ 'ի վերայ կայ հեռացուցանել 'ի

քէն զներքինապետն զՊէշիր ։

Մահմուտ արքայ քանզի ծառայ էր 'ի պատրուակել զկիրս սրտին որպէս և ամենայն ինքնակալ թագաւորք՝ գենայց երբեմն ընդ ներքինապետին սիրեցելոյ 'ի մի յապարանիցն որ առ Վոսփորի. այլ այն ինչ ելանէր 'ի ցամաք՝ հրամայեաց ցպոսթանճիպաշին, և նա վարեաց 'ի խորս զնաւակն և տարաւ զՊէշիր 'ի Գըզ գուլէսի ։ Խորհէր արքայ աքսորել նեթ զայրն յԵգիպտոս. այլ իբրև գիտաց զի այս պատուհաս ոչ ցածուցանէր զքէն վրիժուզխնդականացն՝ հրամայեաց սպանանել զնա ։ Մերկեաց խափշիկ ներքինապետն զսուսեր իւր և մարտեաւ ընդ պաշտօնեայս արքունի յարձակեալս սուսերամերկ 'ի վերայ նորա. այլ ընկճեալ 'ի բազմութենէ նոցին անկաւ 'ի բերան սրոյ, և արեամբ նորա շիջաւ հրդեհ ապստամբութեանն որ բորբոքել հանդերձեալ էր առ վաղիւ ։ Եւ գտան առ նմա յիսուն միլիոն դահեկանք, և բազմաթիւ թուղթք աղաչանաց՝ որովք աղաչէին զնա յոլովք խոստմամբ կաշառուց և ընծայից հասուցանել զխնդրեանս 'ի բարձս ինչ պատուոյ ։

Շնորհ մեծ ունէր յաչս ներքինապետին և սիրելին Սիւլէյմանայ՝ մերազնեայ ակնեցին Նազլում, զի ունէր 'ի կնութեան զքոյրն Սիւլէյմանայ՝ որ էր

արծաթագին ադախին տուեալ ինքեան 'ի հայազգի իշխանէ ումեմնէ, առ որում երբեմն ծառայ էր Նազուալ։ Արդ սա այնչափ մեծացաւ ընդ ձեռն Սիւլէյմանայ ընչիւք և պատուով, զի յայնժամ չէր կայեալ 'ի Կոստանդնուպօլիս մերազգի ոք համեմատ նմին։ Իսկ ինքն զփառասիրութեանն փոյթ յայն հաստատեալ էր, զի բարիս արասցէ այլոց. որով և զբազումս մեծացոյց, և բազմաց օգնելի եղև։ Սմին իրի թէպէտ և զատ էր կալան ընդ Սիւլէյմանայ, այլ հնար էր զերծանել նմա 'ի մահուանէ՝ եթէ չէր դնեալ նմին ոխերիմ մի ոմն 'ի համազգեաց իւրոց։ Որոյ որոգայթեալ զնա ներքինապետին և զՍիւլէյմանայ որպէս քաջադէպ ճարակ ոխակալութեան իւրոյ ընդդէմ Նազուալայ. փոխանակ բարեխօս լինելոյ վասն նորա՝ գրգռեաց զվէզիրն հակառակ նմին. և 'ի սոյն պատճառս որչափ ինչ պարտս պարտէր ինքեան վէզիրն, զամենեցուն զմուրհակս պատառեաց, և շնորհեաց նմա զպարտսն. և վէզիրն ետ սպանանել զՆազուալ 'ի սուգ և 'ի տրտմութիւն Հայոց, Յունաց, Հրէից և Օսմանեանց։

Ի նմին 'ի 1752 ամի և Յոյնք չորեքհարիւր աղմկեալք յանկարծ մոլին խառն 'ի խուռն 'ի պատրիարգարան իւրեանց, և բազում սպառնալեօք նախատակոծ զպատրիարգն առնէին՝ փո-

խանակ զի փարեալ էր նորա յաջողս դյոյն զօրք միանձն : Բաղդք կալան առ վեզիրն մեծ զի ընկէսցէ զպատրիարգն . և նա արար այնպէս . այլ յետոյ 'ի միոս եկեալ՝ կախեաց զամանս 'ի խաչից ամօթի առ դրան պատրիարգարանին 'ի խրատ այլոց :

Նշանաւոր է այն ամ և աւելս սասանութեամբ մեծի , յորմէ կործանեցաւ գօտեցիս բազմանդամ քաղաքն Հաֆիա , և խախտեալ քայքայեցան մեծամեծ մզկիթք անդամ որ յԱգրիխանութեան : Նոյնպէս և տարափք անձրեւոյ լեալ ամառն յաւուր և տևեալ ժամս տասն անընդհատ , այնպէս բարձրացաւ գետն որ 'ի Վէլադանխանէ , զի տունք հարիւր վաթսուն և հինգ հանդերձ ջրաղացօք ամանք ջրատար եղեն 'ի Գաւազմ փաշա : Եւ յետ երկուց ամաց մրրիկ և բքաբեր սաստիկ եղեալ՝ նաւս քառասուն ընկղմեաց 'ի ծոցի անդ Նիկոմիդիոյ , և երկերիւր նաւս համբարակաւորս 'ի ծովուն Մարմարայի :

Յերկրորդի աւուր ամսեանն սեպտեմբերի սաստկացաւ երկրի շարժքաման անդամ 'ի Կոստանդնուպօլիս . և մնան ինչ հին պարսպաց քաղաքին , և մի յեօթն աշտարակաց Եօթնուլէին փլուզեալ անկան . և երկուքին մզկիթք քաղաքին գեղեցկագոյնք և հնագոյնք քան զամենեսին , որ են Այա Սոֆիա և սուլթան Մէհէմմէտ , քայքայեալ

խարխարեցան 'ի անդիս անդիս, և ոգիք յիսուն կամ վաթսուն մեռանէին ընդ փլատակաւ տանց խուրձանց: Եւ հրամայեաց արքայ աղօթս և պաղատանս առնել առ Աստուած, ըստ որում սովորութիւն է յայսպիսի դէպս, այս ինքն է 'ի սովու, 'ի ջրհեղեղի, ևս և յերկրայթս խաւարման արեգական և լուսնի: Եւ մինչդեռ յահի մեծի կային 'նանրահաւատ ռամիկն՝ ոչ միայն յաղէտից անտի յորս արդեամբք ըմբռնեալ կային, այլ և 'ի հանդերձեալ չարեաց՝ որոց գուշակ զդէպսն համարէին, հիւանդացաւ Մահմուտ արքայ. և ամենեքեան եդին 'ի մտի թէ ահա այն իսկ էր աղէտն գուշակեալ:

Ցերեքտասաներորդի աւուր դեկտեմբերի, որ օր ուրբաթ էր, բուռն արար արքայ անձին խրում և գնաց գաւառեալ 'ի մզկիթ. այլ հազիւ կարացին ածին ունել զնա 'ի վերայ երիվարին զինակիրն և այլ սպասաւորքն արքունի՝ որ Ընթակալ կամ Գօլթուգ վեզիրի անուանեալ են: Նոյա 'ի դառնալ խռում անդրէն յարքունիսն՝ այն ինչ կոխեալ 'ի սեամս արտաքնոյ դրանն և փչեաց զոգին: Նոյնժամայն հնչեցին Թնդանօթք արքունեաց և ձայնողք յաշտարակաց մզկթաց զմահն արքայի և զԹագաւորել եղբօր 'նորա Օսմանայ երրորդի, որդւոյ Մուստաֆայի Բ:

Եւ մեռաւ Մահմուտ արքայ Ա.

ամեայ գոլով յիսուն և ինն, և Թագա-ւորեալ ամս քսան և չորս մեծաւ գո-վութեամբ խաղաղասէր և արդարակո-րով Թագաւորի : Աւուրք Թագաւո-րութեան նորա լի գտան շինութեամբք և ուսումնական յառաջատութեամբ. և ըստ յաճախելոյ օտար դեսպանու-թեանց ՚ի դուռն նորա՝ անցին զանցին զաւուրբք այլոց Թագաւորաց ամենե-ցուն. զի նա ինքն Մահմուտ արքայ խորհրդով խոհական մեծերաց իւրոց դաշնադիր եղև հետ զհետէ ոչ միայն ընդ Գաղղիացիս և ընդ Գերմանացիս և ընդ Ռուսս, այլ և ընդ Շուէտս և ընդ Նէապօլսեցիս և ընդ դքսին Թոսքանայ :

Սուղ մեծ զգեցաւ ընդ մահ արքայ-ին Մահմուտայ բովանդակ քաղա-քըն Կոստանդնուպօլսոյ. զի քան զա-մենայն գիտութիւնս, որոց և չէր ինչ անտեղեակ, քաջ գիտայր յանդորր խա-ղաղութեան պահել զժողովուրդս իւր : Եւ ՚ի ցոյց ազնուական մտաց հայրախնամ գնացիցն շատ գրեալ ա-ռաջիկայդ պատահար :

Իբր նմա երբեմն անցանել ընդ Վոս-փոր յայլափոխ կերպարանս՝ զպաշ-Թանձնիկայշին ևեթ առընթեր ունե-լով. և ահա դայր ՚ի հանդիպոյ նաւակ մի քառաթի, և ՚ի միջոցի նաւակին ՚ի վերայ ազնիւ կերպասու և ոսկեթել բարձիկներոյ ընկողմնեալ ոմն, և ընդ

երկայնամիտ խաղաղական զարդարեալ 'ի սաթ ազնիւ և յակնի շողշողուն՝ ձգէր զծուխ և զնայր : Եւ էր այն այր հրեայ՝ համբարակապետ ենիչէրեաց : Պաթանճիպաշին . քանզի ճանաչէր զհրեայն և մախայր ընդ ճոխութիւնս նորա, 'ի դէպ ժամուն սկսաւ չարախօս լինել առ արքայ զդաւողութենէ նորին : Որում՝ պատասխանի տուեալ թագաւորն ասէ. «Ո՛հ անմտութեանդ. և չտեսանիցես դու, եթէ զորպիսի փառս յաճախէ ինձ այրդ այդ : Ապաքէն անմտաց կացցէ 'ի պատմութիւնս ազգաց, զի յաւուրս թագաւորութեան իմոյ և հրեայք անգամ անարգեալքն յամենայն մարդկանէ՝ յայտնապէս վայելէին յազատութեան և 'ի պերճութեան » :

# ՍՈՒԼԴԱՆ ՕՍՄԱՆ Գ·

ՕՅԻՍՆՆՄՆԱՆ աւուրան 'ի փոխարա-նի անդ արքունեաց անցուցեալ Օսման արքայ, անմարձու յաթոռ թագաւո-րութեան հօրն իւրոյ Մուստաֆայի Բ: Եւ էր ըստ նկարագրի կերպարանացն թանձրամարմին և կարճամիզ, և մի յա-սոյն բարձր քան զմիւսն, որպիսի էր և եղբայր նորին Մահմուտ արքայ Ա· իսկ ըստ բարուցն ծանր և ցասկոտ, այլ ոչ պատերազմասէր: Եւ թէպէտ սովոր էր ընդ վայր հարկանել զամե-նայն զգործս եղբօրն իւրոյ, սակայն յայսմ զգօնութիւն մեծ եցոյց՝ զի հաստատեաց անդրէն յիշխանութիւնս իւրեանց զվէզիրն մեծ և զգենդեան:

Ցնննորդի աւուր թագաւորու-թեան իւրոյ, որ օր ծննդեան էր դեկ-տեմբերի, ածաւ զսուր իւր ընդ մէջ Ջեյուպ· և զձանապարհայն յայց եւ շիրմին Մեհեմմետայ Բ, և մտանե-գարանին որ առ նովաւ, զոր հիմնեալ էր եղբայրն իւր Մահմուտ:

Իբրև դարձաւ յարքունիս՝ բաշխեաց 'ի դասս զօրականաց զտովորական պար-

գեան, և էին երկու հազար երեքհա-
րիւր խնամուն և չորք հազար քառակք
արծաթոյ, որ առնէն միլիոն մի և հա-
րիւր խնամուն և եօթն հազար դահե-
կանս ։ Այսպէս դեսպանք արձակեցան
առ համաձայնակից պետութիւնս ա-
ւետաւորք թագաւորութեանն Օսմա-
նայ արքայի ․ Մխիթարլի Աղի փաշա ա-
ռաքեցաւ ՚ի Լեհաստան, Խալէթ Աղի
փաշա և Տէրմէշ էֆէնտի ՚ի Բեթր-
պուրկ, և Խալիլ էֆէնտի ՚ի Վիեննա ․
որք և մինչև յուղի անկեալ՝ մեծարե-
ցան յարքունս պատմուճանօք ։

Նախկին գործ անուշութեանն Օս-
մանայ արքայի եղև արգելուլ ամենե-
ցուն խառնիլ զգինեմոլութիւն ․ և կա-
նանց չերևել ՚ի փողոցի յաւուրս կի-
րակէից և ՚ի հինգշաբաթիս և յուր-
բաթս, զի ինքն կամէր շրջագայիլ յա-
ւուրսն յայնոսիկ ․ և երրորդ անգամ՝
չերևնել ամոլկաց, այսինքն է քրիստո-
նէից և հրէից՝ ըստ չափ և ըստ կանոնս
կարգեալս ՚ի նախնի թագաւորաց ՚ի
տարազս զգեստուց ։ Սակայն վաղ լու-
ծան և երեքին այս պատուէրք ։

Ի սկզբան 1755 ամին փոխեաց Օս-
մանն արքայ զգենպեան ․ յետ սակաւուց
և զվեզիրն մեծ զՄուսդաֆա փաշա, և
ընտրեցաւ երրորդ անգամ Հէքիմզատէ
Աղի փաշա որ կուսակալ էր ՚ի Քէօթա-
հիա, և մի միայն երևէր ՚ի ժամանակին
այր արժանաւոր այնմ բարձի ։

Ի ձմերայնի տարւոյն այնորիկ առ-
սաստկագունոյ ցրտութեան օդոյն
սառեցաւ Նաւահանգիստն Կոստանդ-
նուպօլսոյ ծայր 'ի ծայր, մինչև անցա-
նել մարդկան հետի 'ի Տէֆթէրտարէ
'ի Սիւալիւճէ : Յայնչափ ցրտութեան
ժամանակին եկն և հաս ծերունին վեզիրն
ընդ Ճանապարհ Տրապիզոնի յՍկիւ-
տար, և անտի մեծաշուք հանդիսի-
անց եմուտ յարքունիս :

Յայսմ յերրորդ Նուագի իշխանու-
թեան իւրոյ ոչ ժամանեաց Ալի փաշա
կարեւոր ինչ փոփոխմունս առնել 'ի
պետութեանն. զի յետ յիսուն և երից
աւուրց հարկեցաւ 'ի բաց առնուլ զկնիքն
արքունի՝ որպէս թէ անփոյթ լեալ իցէ
'ի հրդեհին դեռ ևս պատահելոյ, և
աքսորեցաւ 'ի Գըզ գուլէսի և անտի 'ի
Կիպրոս. և էր բուն պատճառ աքսո-
րից Նորա զինակիրն արքայի Ալի : Կա-
լաւ զիշխանութիւնն մեծ Նայիպի Աղ-
աուլլահ փաշա այր կիրթ 'ի գործս
տէրութեան և հմուտ դիւանութեանց.
սակայն և սա ևս ոչ բաւեաց տևել
ընդդէմ հզօր զինակրին, և 'ի գլուխ
երից ամսոց տեղի ետ նմա :

Յամանեանն յուլիսի հրդեհ իմն պա-
տահեաց 'ի քաղաքին՝ 'ի Հնդեստան
ժամուց մինչև այրեաց տունս երկու-
հազար. պատմագիրն Վասըֆ էֆէնտի
կոչէ զհրդեհս զայս մանկական. իսկ
լուացեալ զայն անուանէ՝ որ երեւուն

և վեց ժամս անկեալ եհաս մինչև 'ի դուռն ապարանից վեզիրին մեծի ։ Օսմանն արքայ ինքնագիծ նամակաւ գովեաց զգործունեայ ջանս վեզիրին . այլ յետ չորից եօթնեկաց հրամայեաց և գլխատեցաւ Ալի փաշա . զի անհոգ կոչէր զնա արքայ , և ստասաց և կաշառակուրծ ։ Չև անցեալ երկուց ժամուց 'ի վերայ՝ սարջացաւ Օսմանն ընդ կորուստ սիրեցելոյ զինակրին իւրոյ , այլ յանօգուտ . և ընտրեաց փոխանակ նորա զՄէհէմմէտ Սայիտ փաշա զորդի Չէլէպի Մէհէմմէտայ Յիրմի սէքիզ կոչեցելոյ , որ և սա գնացեալ էր երբեմն դեսպանութեամբ 'ի Գաղղիա ։

Մինչդեռ այս փոփոխութիւնք գործէին 'ի Թագաւորեալ քաղաքին , յաճախէին և յարտաքին գաւառս պետութեանն խռովութիւնք ապստամբ իշխանաց . յորոց մի էր և Ալայէտտին պէյ , որ բռնացեալ 'ի Մուշ գաւառի յամուրն Ռատնբլուր՝ զդէմ կալաւ ընդերկար զօրաց կուսակալին Կարնոյ՝ որում անուն էր Ապտուլլահ փաշա ։

Առ անուշութեամբ վեզիրին մեծի Սայիտ Մէհէմմէտայ կատարեցաւ մեծաշուք հանդէս նաւակատեաց մզկթին մեծի, զոր յեօթն ամաց հետէ հիմնեալ էր Մահմուտ արքայ . և զի յաւուրս Օսմանայ եղև աւարտ շինուածոյն , ամին իւր անուանեցաւ Նուրի Օսմա-

նիչէ ։ Եւ է մզկիթս 'ի ձև քառակուսի միոյ միոյ յորմոցն ունելով քայլս եօթանասուն և վեց յերկայնութեան . և որ զարմանալին է յաչս հմտագունիցն անգամ 'ի ճարտարապետութեան արուեստին, մի միայն գմբէթ է բովանդակ մզկթին, և նոյն չափ տրամագծի լայնութեան նորա, և սիւն կամ խարիսխ չիք 'ի միջի նորին ։ Յաւուր յորում յայց ել մզկթին Օսման արքայ, հրամայեաց սամուրենիս և խիլայս պատուոյ արկանել զամենայն աւագանւոյն և զգխանականոց ։

Զհետ աւուրց երկոտասանից, 'ի քաններորդի չորրորդի աւուր դեկտեմբերի զկէս գիշերաւ երևեցաւ յերկինս գունտ մեծ հրոյ մրրկեալ, որոյ մերձեցեալ յերկիր՝ բաժանեցաւ յերկու բոցս և աշագին ճայթմամբ շիջեալ անհետացաւ ։ Եւ զի 'ի նոյն աւուրս ձերբակալ եղեալ գլխատեցաւ աւազակապետն Օսմանն օղլու, որ բռնանայր 'ի կողմանս Այտընայ, ոչ ինչ երկմտեաց ռամիկն եթէ այնմ գուշակ իցէ օդերևոյթն պատահեալ 'ի մօտոյ ։

Վեց ամիսք էին յորմէ հետէ Մէհէմմէտ Սայիտ փաշա վարէր զվեզիրութեանն պաշտօն . և կարի խին էր այն առ թագաւորութեամբն Օսմանայ Գ · ամբաստանեցաւ նա որպէս ծանրացուցիչ հարկաց, և ընտրեցաւ երկրորդ անգամ Մուստաֆա փաշա, որ յայնժամ

հարկահան էր 'ի Մուշ ։

Առ սովաւ պատահեաց 'ի Կոս-
տանդնուպօլիս հրդեհ ահագին, որ-
պիսի չէր եղեալ երբեք անդանոր՝ առ է
պատմագրին Վասուֆ ։ Բորբոքեցաւ
հուրն 'ի Թաղէն Հրէից որպէս բա-
զում անգամ՝ արտաքոյ քան զդուռն
Ճիւպալեայ . անտի անցեալ 'ի ներքս
'ի քաղաքն բաժանեցաւ յերեքտասան
առաջս, և անարգել ընթանայր հողմով
հիւսիսոյ և լափէր զամենայն անհնարին
սաստկութեամբ ։ Զամանեաց 'ի սկզբն
անդր Թագաւորն ինքնին, այլ 'ի զուր .
և ժողովուրդն ահաբեկ անին ունէր՝ զի
'ի հասանել բոցոյն 'ի մեծաշէն տաճար
սրբոյն Սոֆիայ, անդէն և զանեցի կալ-
ցի . և ահա կապար գմբէթի նորուն
հալեալ 'ի տապոյ անտի՝ հեղեղաբար
հոսեցաւ վերուստ 'ի վայր և խառնա-
կեաց զբազումս 'ի տապակոյ պղնձա-
նօրդաց ։ Յայնժամ անփութին սա հա-
տորակ յապշութիւն ընկղմեալ՝ կային
անդարձ 'ի վնէն աղետալի տեսլեանն ։

Այն ինչ յուսային եթէ լափեալ
հրոյն զամենայն ծովեզերեայս, և առ
պարապատն էկեալ դադարեսցէ, փո-
խեցաւ հողմն մեծաւ ուժգնութեամբ
յարեւելեան, և վարեաց տարաւ զբոցն
ընդ երկուս հազարս կանգնոց և աւելի
'ի բուն մէջ անդր քաղաքին . և որ զատա-
ջինն յերեքտասան առաջս ընթանայր՝
առաջս զամ քան զզամ 'ի մի վայր միա-

ցեալ՝ արար զԿոստանդնուպօլիս ծով_ խին բոցեռանդն բազմածուփ։ Ամենայն ճիգն հրաշիջայց զօրականին ոչ միայն 'ի գերեւ ելանէր, այլ և 'ի վնաս նոցին յեղափոխէր. և գունդ մի ողջոյն Ենի_ չերեաց՝ որ 'ի փլուզանել վաստակէին զսունս առաջի բոցոյն, յանկարծակի խին պատեալ պաշարեալ երկուստեք յայլոց բազկաց հրդեհին՝ մաշեցան 'ի ճարակ նորուն։ Աղաղակ եղկելեացն փոթորկելոց 'ի մրրիկ անդր սարսա_ փելի հնոցին, ճչիւն ողայոց և կանչիւն կանանց անզերծանելի պաշարելոց, շառաչիւն տանցն փլուզելոց, ճարճա_ տիւն գերանացն ընդ օդս թռուցելոց, ամբոխ աղաղակի բիւրաւոր ժողո_ վրդոցն խուճապելոց, և ահագնալուր բառաչ թշուառականացն՝ առ անհնա_ րին տագնապ սրտիցն յիմարաբար 'ի բոց անդր արշաւելոց, արդարև զահեղ աւուրն կատարածի բերէր զնկարագիր տեսակի, զոր մինչև տեսեալ՝ չէ հնար ումեք մտօք բովանդակել։

Ապա՛ յետ երկուց աւուրց ոչ ևս էր տեսանել յերկայնաձիգ տարածու_ թեան անդ, բայց կոյտս կոյտս ածխա_ ցեալ աւերակաց և սփիւռ բլուրս գե_ զագէզ մոխրոց, յՈւն գափանը ա_ նուանեալ շտեմարանացն մինչև 'ի Սիւ_ լէյմանիէ, 'ի հրապարակէն Վէֆա մէյ_ տանը մինչև 'ի Շէհզատէլէր ճամիի, 'ի մզկթէն սուլթան Սէլիմայ մինչև 'ի

դրունն Այա գափուսու և Եննի գա_փու : Եւ էր թիւ տանցն այրելոց ա_ւելի քան զութ հազար, յորս էին հինգ_հարիւր և ութսուն ջրաղացք, եօթա_նասուն բաղանիք, իջևան մի մեծ, եր_կերիւր մզկիթք, և հազար կրպականի :

Փոյթ մեծ կալաւ Մուստաֆա փաշա աղ կառուցանել անդրէն զայրեցեալ շինուածսն, այլ և ոչ այնպէս յերկարեալ 'ի բարձին քան զամիսս հինգ փոխեցաւ, և կալաւ զտեղի նորա իմաստուն խոր_հրդականն և Ճարտար աշխարհագէտն Րաղիպ Մէհէմմէտ փաշա :

Այլ 'ի գալ միւսոյ ամին յերեսնե_րորդի աւուր ամսեանն հոկտեմբերի հնչեաց յանակնկալ դոյժ մահուանն Օս_մանայ արքայի : Զօրավորք ենիչէրեաց քննեցին նախ զգլուխն նորա տեսանել թէ արդարև բնական մահուամբ իցէ վախճանեալ. և ապա մեծապէս հան_դիսիւ տարեալ թաղեցին 'ի Վալիտէ Ճամիին առ եղբօրն իւրում Մահմու_տայ : Եւ թագաւորեաց որդին Ահմէ_տայ Գ, Մուստաֆա Գ, ամաց գո_լով քառասուն և միոյ :

# ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՍԹԱՖԱ Գ. ՂԱԶԻ

ԱՌԱՋԻՆ 'ի գործս արքային Մուստաֆայի, և օգտակար 'ի պէտս աշխարհին քան զամենայն այն էր, զի անդէն ընդ թագաւորել իւրում հաստատեաց զՌաղեպ Մէհէմմէտ փաշա յիշխանութեանն : Ռաղեպ փաշա յերկրորդի աւուրն առաքեաց արքայի ըստ յաճախ ամփոփութեան յիւրուն անօթս յախճապակէայս զարդարելս ծաղկօք և մրգօք, և արքայ 'ի հաստատել աւուրն առաքեաց առ նա ընդ ինքեագիծ հրովարտակին զնինք թագաւորութեանն իւրոյ զնոր [1] :

Ամենայն աւագանին պետութեան կայր ժողովեալ յապարանս մեծի վէ-

[1] Սովորութիւն է առ Օսմանեանս փաղեալ նշանս իւրոյ յօրինել վասն արքայից ընդ թագաւորել նորա. առաջինն' որոյ յառաջակայ է յն' առ թագաւորին ձեռ, ոչ երեք բուլուայեան աւանդին վէզիրին մեծի, և փիլաւ չարապան, և մեծի ունէլ դադարն արքայեան :

զիրն ըստ օրինի, և աՀա գայր Նուխրամպեան՝ բարձեալ բերելով վերամբարձ 'ի վերայ գլխոյ իւրոյ զորբայական Հրովարտակն պատեալ 'ի շղարշ ազնիւ. վեզիրն մեծ և ամենայն ժողովականք զՀետ նորա երթեալ ընդ առաջ Նուխրամպին մինչև 'ի մէջ անդր ատենին, Համբուրէ վեզիրն զՀրովարտակն և առեալ և 'ի ճակատ իւր Հպեցուցեալ՝ տայ ցրէիս էֆէնտին, և նա կարդայ 'ի լուր ատենակալաց զգրուած Թագաւորին: Անդէն վեզիրն մեծ ագուցանէ Նուխրամպին սամուրենի պատմուճան, և նա Համբուրէ զքղանցս նորա. նոյնպէս և այլք խնդակից լինին վեզիրին մեծի, և դնան խրախճանս 'ի տուն իւր: Իսկ վեզիրն առ ժամայն գրէ առ Թագաւորն Թուղթ շնորՀակալեաց. և Թղթատարն մեծարի յարքունեանս անդ պարգևօք Հարիւրաւոր ոսկւոյ և սամուրենեաւ:

Քաջահմուտ էր Րաղըպ Մէհէմմէտ փաշա ակար և նորաւէր բարուց ամենայն նոր Թագաւորաց, և ևս առաւել արքայիս Մուստաֆայի. և խորագէտ գոլով քան զամենայն զնախորդս իւր՝ ոչ ինչ վտանգեցաւ ինքն, զի Թոյլ ետ արքայի զառաջինն առնել զամենայն ըստ Հաճոյից կամաց իւրոց: Խորագիտագոյն ևս գտաւ առ 'ի Հաստատուն կալոյ 'ի մեծի բարձին՝ զերծեալ 'ի մեքենայից ոսոխին իւրոյ Ներքինա-

պետոյն Եուսուֆ Ահմէտ աղա կոչե-
ցելոյ : Քանզի տեսեալ սորա եթէ չիք
այլ ևս ակնկալութիւն ապրանաց Օս-
մանեայ արքային՝ ընտրեաց 'ի վերայ մեծ
փոխանակ Սաղիպայ զԱլի փաշա , և
առաքեալ կոչեաց յարքունիս զՍաղիպ
որպէս թէ 'ի կարևոր ինչ խորհուրդ՝
կամեցեալ 'ի բաց առնուլ 'ի նմանէ
զկնիքն : Իբրահիմ քեահեա ատե-
նադպիր ներքինապետին՝ զեկոյց Սա-
ղիպայ զիրսն , և զմտադրութեան վախճանն
թագաւորին . և Սաղիպ նոյնհետայն
յայլակերպս եղև և անձնատրեաց
թագչել ուրեք : Հասին յապարանսն
Իբրահիմ քեահեա և այլք 'ի պալատա-
կանաց փութացուցանել զՍաղիպ 'ի
կոչն արքային . որոնեցաւ ներքինա-
պետն և խնդրակս առաքեաց զհետ վե-
զիրին , այլ 'ի զուր : Իսկ ընդ երեկա-
նալ աւուրն իբրև լուր եղև 'ի քաղաքի
վախճանել Օսմանեայ արքային՝ եկն և
Սաղիպ փաշա յարքունիսն . և ահա
հաստատեալ էր զնա Մուստաֆա ար-
քայ 'ի պաշտամանիւրում :

Զհետ լինն աւուրց գնաց Մուստա-
ֆա արքայ յԷյուպ՝ ածել ընդ մէջ
զսուսերն արքունական : Իսկ զի յակա-
նատես մարդկանէ ունիւք զնկարագիր
հանդիսին , տացուք և զայն մեք աստ-
նօր վէր 'ի վերոյ . և ամենայն ինչ ըստ
կանխատահման օրինաց աշխարհին և
անփոփոխ : Ամենայն պաշտօնեայք և

իշխանք պետութեանն եկին ժողովե֊ցան ընդ այգն յառաջնում գաւթի արքունեաց, և անտի ամիրքն եւս թա֊փորին ։ Ցաւագինթաց լինէին քաղա֊քապետն և փոխանորդ նորա, և զկնի նոցա նուիրակքն և պատգամաւորք՝ չա֊ւուշ և մուլթէֆէրրիգա կոչեցեալք. և թռչակաւորքն և ժառանգաւորք՝ որ են խուլէֆէլի և կէտիքլի ։ Ապա գային զօրագլուխք սպայակոյտ հեծելոց, սե֊նեկապետք, աւագ գլխանականք, չէիք և էմիրք, և ապա ատենականք, և հա֊մարակալքն երեքին, և նիշանճին և ռէիս էֆէնտին, և երկոքին դատաւորք զօրաց և վէզիրք, և զկնի նոցա վէզիրն մեծ և գենդպետն զուգագնացք ։ Զհետ նոցա գային երիվարք արքայի երեսուն և երկու պալարականք և ոսկեսանձք. և երկոտասանք 'ի նոցանէ ունէին կա֊խեալս 'ի կողմանէ վահանս վահանս զարդարեալս ակամբք և մարգարտօք ։ Ապա թագաւորն ինքնին երեւէր շուրջ պատեալ 'ի թիկնապահաց խուռն և 'ի զօրականացն փէյիք և սօլագ անուա֊նելոց. և առաջինքն սաղաւարտս ու֊նէին լուսանշոյլս, և այլք փետրազարդ գլխանոցս աճեղատեսիլս. ախոռա֊պետն արքայի գնայր ընդ ահեկէ նո֊րին, և սենեկապետն մեծ ընդ աջմէ. փոխանորդ ախոռապետին զձախ երա֊սանակն կալեալ էր, և գրօշակիրն մեծ զաջակողմեանն ։ Ցիջանել անդ արքայի

յերկնավորէն՝ յատուկ մատեան ութերին անթակալ աւազանին ¹ . այլ զօրավորին ենիչերեաց և վէզիրին մեծ և ներքինապեան եւեթ ձեռն եառն արքային՝ որպէս օրէն է 'ի հանդիսի :

Զհետ արքային մանկլաւիկք երկու բարձեալ բերէին 'ի վերայ ուսեթեւ բարձկներոյ խոյրս արքունականս կըրկին՝ որ նշանակք են թագաւորելոյ նորա կրկին մասանց աշխարհի և ծովուցն երկուց, որպէս և պաշտպան կալոյ նուիրական քաղաքացն երկոցուն՝ Մեքքէի և Մեդինէի . և զի մի ծանր լիցի արքային ողջունել յուղւոջ անդ զաստի և զանտի կացեալ ժողովուրդան, մանկլաւիկքս երկոքեան անդադար յաջ և յահեակ գլխոյան հակեալ տասանէին, և գանձապետն արքունի ընդ ամենայն Ճանապարհն արծաթ առ ժողովուրդն Ճապաղէր : Զայս օրինակ հանդիսիեանց Մուստաֆա արքայ և ընդ մէջ ենիչերեաց յերկուս կարգս առելոց, և ինքնին ողջունեաց ձեռօք զնոսա . և նոքա յընդունելութիւն ողջունին խոնարհեալ հակէին զծանրաբեռնեալ գլուխն 'ի վերայ աջեակ ուսոց իւրեանց որպէս օրէն էր նոցա : Հասեալ

¹ Այս ինքն են սիլիհտար, չօխատար, տիւլպէնտար, իպրիքտար, ռիքէապտար, պէրպէրպաշը, և ենիչէրի աղասը և պօսթանճըպաշը :

զառաջնեաւ հին ձմերոյին ենիչէրի եաղ՝ զկայ էառ արքայ, և զօրագլուխ վաթանէրորդի առաջնէրորդի գնդին մատոյց նմա գօշարակն. առընկալու զայն արքայ և ասէ ցզօրականն զսովո_րութեան մաղթանան, « Եթէ ուտան կամք լիցին՝ ուսցուք զմիմեանս 'ի Գը_զըլ էլմա » այս ինքն է 'ի Հռովմ. և ըն ոսկեով գարձոյ զբաժակն առ զօրա_գլուխն. և նա մատոյց 'ի զոհ վասն կե_նաց թագաւորին երիս ոչխարս : Զճա_նապարհայն յայց եւ արքայ շիրմին Ֆա_թիհ Մէհէմմէտայ. ապա 'ի մզկիթին Էյուպայ գէնպեան և Նագըլպիւլ_էշրաֆ ածին ընդ մէջ նորա զսուսերն Մահմէտի. և 'ի գաւթի անդ մզկիթին զենան 'ի զոհ ոչխարք յիսուն :

Սովորական գեսպանութեանցն ա_ռաքելոց առ Լեհս, և Ռուս և Գերմա_նացիս, և թղթոց գրելոց առ ամենայն պետութիւնս՝ հասին պատասխանիք և փոխադարձ դեսպանութիւնք յամենե_ցունցն բազմապատիկ ընծայիւք. այլ Մուստաֆա արքայ անդստին յաւուրց թագաւորելոյն խորոյ պատուէր եւս րէիս էֆէնտիին ասել ցդեսպանս Նե_րոպացւոց, եթէ քան զամենայն ըն_ծայս թագաւորաց նոցին հաճոյական է ինձ պարգև՝ ազատութիւն գերեաց ամենեանց որ առ նոսա : Կարգեաց և դրամ բազում յարձակուրդ կալա_նաւորաց ըմբռնելոց վասն պարտուց :

Յայց եղեալ նաւարանին և գործարանացն որ 'ի նմա, առաքեաց առ վեզիրն մեծ գաղտնեկանս քսան հազար՝ զի բաշխեսցին 'ի զօրագլուխս ծովամարտիկ զօրաց և այլոց պաշտօնէից ծովայեալին: Այսպէս աշխատասէր և գործօն էր Մուստաֆա արքայ, և գրեա թէ յանդ շուրջ յածէր ընդ ամենայն քաղաքն՝ էր զի բազմութեամբ արանց և էր զի միայնանձինն և յայլակերպս. և խիստ էր միայն 'ի պահանջանսն՝ զի մի պճնազգեստ լինիցին քրիստոնեայքն և Հըրեայք, և զի կանայք մի երևեսցին արտաքոյ տանց իւրեանց ըստ պատուիրելոյ կուրանին:

Իսկ վեզիրն մեծ Րաղըպ Մեհեմմէտ փաշա բազում զգօնութեամբ կալեալ զամենայն կառավարութեան աշխարհին, ոչ զանց առնէր և ոչ զմիով իւիք որ կարեւոր էր 'ի բարեկարգութիւն երկաց պետութեանն ներքոյ և արտաքոյ. բառնայր զգեղծմունս, և կարգս հաստատէր պիտանիս. նուաճէր զապըստամբս և զաւազակս բռնացեալս 'ի զանազան գաւառս աշխարհին, և քաջիկ ընտրութեամբ փոփոխէր զպաշտօնեայս պետութեանն. որով եւս քան զեւս ահաւոր երևէր յաչս ամենեցուն, և յաչս արքային սիրելի էր միանգամայն և պատկառելի: Ցընկեցիկն լինել րէիս էֆէնտիին որ կոչէր Աղաբի՝ կամէր արքայ ամբառնալ 'ի պաշտօն նորին զփե-

սայ քեռն խորոյ վնուրի ոպէյ. այլ Րա-ղըպ քանզի խիթայր յաղագս ակամանութե-նէ առնն ընդ արքայէ՝ լաւ քան զնա ա-սաց զՄէհէմմէտ Խմին փաշա. կրկնեաց և երկրկնեաց արքայ գրով զկարծիս իւր և զհաճոյութիւն, սակայն միշտ զհակա-ռակն ՚ի վէզիրէն ընկալեալ՝ ապա գրեաց ՚ի միրջնում թղթին Րաղըպայ և ասէ. « Եթէ նուրի ոպէյ ոչ լինիցի բեխ էֆէնտի, և Մէհէմմէտ Խմին լիցի ոչ. ընտրեա զայլ ոք » : Եւ ընտրեցաւ Խօմէր էֆէնտի :

Ոչ կարէր Րաղըպ փաշա՚ի հաստատել իւրում այնպէս յիշխանութեանն յան-կարծածի կալ յերեսաց ներքինապե-տին, կամ անյիշաչար լինել թշնամու-թեանն նորա, այլ սպասէր գիպող ժա-մու. և անբարտաւանութիւն ներքի-նապետին յառաջագոյն խոկ քան զվէ-զիրն խայտառակեաց զնա: Քանզի փո-խեալ էր ներքինապետս Խղուղուֆ զառաջնորդ կարաւանին ուխտաւորաց զԽասա փաշա, և զայլ ոմն զհամբարա-կապետ, և այլս յարանց անընչանից կարգեալ ՚ի տեղիս նոցա : Դէպ եղե ՚ի նմին 1757 ամի անկանել աւազակաց ՚ի վերայ մեծի կարաւանին և կողոպ-տել զայն. և թէպէտ գուն գործեաց ներքինապետն թաքուցանել զիրան յար-քայէ, սակայն վաղ առաջածեցաւ համ-բաւ ընդ քաղաքն ամենայն: Իւ յաւուր տօնի ծննդեանն Մահմէտի իբրև չերեէր

ուխտաւորն ողջամբ ժամանելոյ կարա_ւանի տարւոյն 'ի Մէքքէ, 'ի տրտունջ մեծ հատաւ ժողովրդն. և Մուստա_ֆա արքայ հրամայեաց գլխատել զներ_քինապետն, և եդաւ կառափն նորին 'ի բացի այսու մակագրաւ. « Այս հա_տուցումն է որոց վիշտս հասուցանեն ուխտագնացիցն Տաճկաց »:

Ընդ այն ժամանակս մեռանէր վաս_տակաւոր ծերունին Հէքիմզատէ Ալի փաշա 'ի կուսակալութեան իւրում 'ի Քէօթահիա, թողեալ յիշատակ 'ի Կոստանդնուպօլիս զմզկիթն որ դեռ ևս 'ի նորա անուն յորջորջի: Արար և կտակ յորում ըղձանայր զի մի անթլփատ մը_նասցեն երկոքին որդիքն իւր. և Րաղիպ փաշա խնամ մեծ ցուցեալ 'ի կատա_րումն կտակին, յաւուր յորում զիւրոց մանկանցն տանէր զթլփատութիւն՝ կա_տարեաց և զնորայն անհնչանս:

Յամին 1759 ծնաւ արքայի դուստր մի Հէյպէթուլլահ անուն, և զաւուրս եօթն Ջահալոյցք եղեն 'ի Կոստանդնուպօլիս հանդերձ հրապարակաւ տօնական և ընծայական խաղովք և ուրախութեամբք. և էր տեսանել 'ի գիշերի 'ի բարձրաւանդակ տեղեաց զամենայն զքաղաքն իբրև զծով բոցածաւալ: Յայնժամ եկին 'ի յայս և [illegible] ընծայն Կոստանդնուպօլսոյ 'ի մեծ բարձմութիւն. զի ուր քառաստան ամէն յառաջ ութ հազար քառ ցորենոյ և այլ բաւական էին յոր բառ օրէ պա_

րէն քաղաքացեացն , առ Մուստա-
ֆայիւ Գ. սլլտոյ եղև չանհնարանս նո-
րանոր չինել և մեծամեծս՝ յորս զնի-
ցին հարիւր հազար քառ ցորենոյ :

Բաղխեալ Մէհէմմէտ փաշա փեսայա-
ցեալ արքայի, և եւ յաւելեալ 'ի զօրու-
թիւն, և զայլ փեսայս արքայի հնարիւք
իմն հեռացոյց 'ի քաղաքէն : Այլ յիշ-
խանութենէ զխանն Խրիմու զՀալիմ
քերէյ՝ փոխանակ զի հեղգացեալ էր
նա ցածուցանել զաղմուկ ապստամ-
բութեան Նողայ Թաթարաց, և ամ-
բարձ 'ի տեղի նորա զեղբօրորդի նորին
զԱռըլան Գէրէյ որ յոքունս կայր 'ի Հռո-
դոս : փոփոխեաց և զԻշխանս Մոլտա-
վիոյ և Վլախաց վասն պէսպէս պատ-
ճառաց , և պատուէր սաստիկ եդ 'ի
վերայ ուստարղզի դեսպանաց մի տալ
թարգմանաց իւրեանց մուրհակս ա-
զատութեան . զի և նոքա վաճառեալ
զմուրհակն օտարնեան հպատակաց՝
խառնէ ցուցանէին զնոսա 'ի պարտուց
պաշտաման նոցին : Արգել ևս խստա-
գոյն մի առնուլ Եւրոպացւոց 'ի կնու-
թիւն զդստերս օսմանեան ազգաց, և
մի տալ 'ի քաղաքին կալուածս
անշարժս : Եւ առ 'ի կարող լինելոյ
պարապոյ մեր զնել այսպիսի բարե-
կարգութեանց, և խափանելոյ զարգս
'ի հանապազորդ շրջագայութեանցն 'ի
քաղաքին՝ որով բազում գտանանանք
տա...ց հասուն խորհրդոյ վճարէին .

հնարէր պարապեցուցանել զարքայ 'ի
կառոյցս չինուածոց՝ որ սիրելին իսկ
էր արքային :

Զհետ Նորոգութեան ապարանիցն
Ադրիանուպօլսոյ՝ խորհուրդ ետ Բաղիպ
ցՄուստաֆա արքայ յառաջ վարել
և հանել 'ի գլուխ զառաջարկութիւնն
պիտանի, որ բազում անգամ սկսեալ և
անգործ մնացեալ էր . այն իսկ է միաւո-
րել զՍեաւ ծով ընդ ծովն 'Նիկոմիդեայ
'ի ձեռն ծովակին Սապանճայի : Ընտ-
րեցան 'ի գործն ճարտարք արուես-
տագէտք յարքունի դրանէ . սահմանեաց
արքայ 'ի ծախսն վեց հազար քսակս
արծաթոյ . և դեսպանքն Անգղիացւոց
և Գաղղիացւոց մեծապէս սատար լի-
նէին գործոյն խորհրդով և խրատու :
Սակայն յետ բազում պատրաստու-
թեանց այն ինչ ձեռն 'ի գործ առնէին՝
ազդ արարին վէզիրին մեծի, զի ջուր
բազում եղանէր 'ի սպեղել անդ վհո-
րանցն, և վտանգ էր ողողելոյ զամե-
նայն երկիրն 'ի վնաս մեծ բնակչաց .
և դադարեաց գործն կարեւոր սակս
դուզնաքեայ պատճառաց այս վեցե-
րորդ անգամ 1 :

1 Քանզի յառաջ ժամանակաւ ըստայն թագ-
թագաւորին Նախ Բաֆառութ Բիւթանացւոց,
ապա կայսրն Տրայիանոս . Եւ երրորդ անգամ օ-
րէնսդիր արքայն Սիւլէյմանն 'ի ձեռն ճարտա-
րապետին Սինանայ . չորրորդ՝ առ Մուրատա-

Մուստաֆա արքայ իբրև պարապ էառ 'ի շփոթութեանց առ ժամանակ մի, սկսաւ գործել յաճախել յայլակերպս 'ի փողոցս քաղաքին : Յաւուր միում վաղ քան զընդ այգն եհաս 'ի միջնադուռն արքունեաց, և չգտեալ անդանօր և ոչ զմի զոք 'ի քառասուն պահանորդաց անդուռին՝ հրամայեաց ձերբակալ առնել զնոսա և բանտել յԵախդուլէ, և զերկուսեան զօրագլուխս նոցա արկ յիշխանութեանցն նոցին : Յայլում աւուր մինչդեռ անցանէր յանձանօթս զառաջեաւ խոհակերոցին արքունի՝ պատահեցաւ ծերունւոյ ումեմն որ ծխամած էր ամանսն և խուռեալ. եհարց ցնա և ասէ. «Ո՞վ ես դու, և քանի՞ ամք են յորմէ հետէ կաս աստէն 'ի սպասու»: Ասէ այրն. «Խոհակեր եմ ես, և ծառայեմ՝ աստանօր յաւուրց անտի Ահմէտայ արքայի»: Եւ հրամայեաց արքայ նմա շնորհել զբաղմագանձ կալուած Թոշակին, զոր դանդաղէր ինն ընդունել մի ոմն 'ի մանկլաւիկն անուանեալ պաշտօնէից :

Ի սկզբան միւսոյ ամին, այն ամ էր 1760, հիմնեաց Մուստաֆա արքայ զմզկիթն Լալէլի անուանեալ 'ի ձև մզկիթին սուլդան Սէլիմայ. և եդ 'ի նմին սիւնս հինգ մարմարինեայս գեղեցիկս

Երրորդն՝ զեղեցիկն թէ Սինան փաշա. և հինգերորդն անգամ Մէհէմմէտ արքայ շինեալ :

յոյժ, որ յաւերակս այլ և այլ տեղեաց քաղաքին գտեալ էին ։ Այսպէս յաջողէր մեծի վէզիրին յաճախ զկարեւորս յածել զմիտս արքային. այլ հոգացաւ և զդրօշմն նորա յօգուտ աշխարհին 'ի կիր արկանել ։ Քանզի սահմանեաց բազմութեան զօրականաց հրահանգս զինուորութեան և փորձս պատերազմի կատարել առաջի արքային. և հրամայեաց ես սպաս 'ի գաւառն ատաբակինս՝ զի 'ի նոյն հրահանգս մարզեսցին ամենայն հեծելազօրք ։

Ի նմին ամի դէպ եղև խաւարել արեգական ողջոյն. և զի ամփոփութիւն էր ամբոխին շշուանչ մեծ հանել 'ի տեսիլ այսպիսի պատահարաց, Բաղխա փաշա պատմէր ես ամենայն քաղաքացւոց քաղաքին՝ փարատել 'ի մտաց ռամկին զառասպելական երկիւղ յերևոյթնական երևութից ։ Նա որ պատմագիրն է ժամանակին Վասըֆ Էֆէնտի՝ 'ի հաստատութիւն խրատու մկայ 'ի մէջ ածէ զբան կուրանին. քանզի ասէ, յաւուր մեռանելոյ Իպրահիմայ որդւոյն Մահմէտի իբրև խաւարեցաւ արեգակն, ասաց Մահմէտ առ որս մերձն կային. «Արեգակն և լուսին հրաշակերտք են աստուծոյ՝ որ ոչ խաւարին սակս մահուան առն միոյ »։

Ընդ այն ժամանակս կուսակալն Զըւալըլայ Իլհամ Ահմէտ փաշա միաբանեալ ընդ Լազկեցիս՝ ապստամբեաց

յայտնայէ , այլ վաղ ձեռնարկեալ եղեալ գլխաւորացս : Սա շինեաց զհոյակապ մզկիթն որ յԱխալցխա , և զոր առ նովաւ զմատենադարանն անուանի [1] : Կուսակալն Գարամանայ Ահմէտ փաշա ամբաստանեալ 'ի բնակչաց երկրին՝ արկաւ յիշխանութենէ իւրմէ . այլ ոչ անսայեալ հրամանի վէզիրին մեծի , 'ի բանս եարկ զպատգամաւորսն , և ինքն խառնամբոխ մարտիկօք խաղաց 'ի Կոստանդնուպօլիս : Ժամանեալ 'ի Պօլու՝ ընկալաւ թուղթ 'ի գրանէ , և անդէն դարձ արար յերկիր ծննդեան իւրոյ 'ի Լարէնտէ՝ որ է Նիկշէհիր , և անդ կեայր խաղաղութեամբ : Պատմագիրն Վասըֆ համարի թէ բնաւ և գիտել կուսակալին 'ի թագաւորեալ քաղաքն հնարք էին մեծի վէզիրին Րաղըպայ առ երկեղուկս իմն արկանելոյ արքային : Չարագոյն եւս մինս գործեաց վաս-բանջութիւն քրիստոնեայ մանկտւոյն 'ի ծովամարտ ընտրելոց բառ սովորութեան : Քանզի մինչդեռ նաւատորմին արքային խարիսխ արկեալ կայր հանդէպ Կոս կղզւոյ՝ որ է Իսթանքէօյ , յաւուր միում ուրբաթու յելանել ծովակալին և մեծի նաւապետին 'ի ցամաք և 'ի գնալ 'ի մզկիթ , յարեան երիտա-

1 Ի վերջնում պատերազմի [illegible] Ռուսաց 'ի Պետերբուրգ :

սարդքն այնոքիկ 'ի վերայ պաշտպանաց խրեանց և սպանին զնոսա, և մտեալք 'ի նաւ ծովապետին՝ պարզեցին զամենայն զաւարառն և գիմեալ գնացին 'ի Մալթա. և դրօշնաւին այն էր՝ զոր չէրիֆն Մէքքէի առաքեալ էր առ արքայ. այլ սա դարձուցաւ 'ի Կոստանդնուպօլիս 'ի ձեռն դեսպանին Գաղղիացւոց: Իսկ արքայի լուեալ զկորուստ ծանրագնութեան եղև յոյժ 'ի վերայ ծովակալին և նաւապետին, և հրամայեաց կառափնատել զնոսա:

Ի ժամանակին յայնմիկ ամենեքեան մոլեալ էին, սաէ Վասըֆ էֆէնտի, զհետ ազգի ազգի մուշտակաց և վենետիկեան գլխալակաց. և բազումք եւս զհետ էին ափիոնի: Արդ Մուստաֆա արքայ նորանոր պատուիրանաւ զուն գործեաց կարճել զյաճախութիւն զեղծմանցն: Բաձի ակէյ ոմն անուշ մզկիթի սուլթան Մէհէմմէտայ՝ ունէր յայնժամ պաշտօն խնկարկելոյ առաջի արքայի 'ի գալ նորին 'ի կատարել զաղօթս ուրբաթուն. սա այնպէս զակատեալ էր 'ի կուլ ափիոնին, զի վատնգեալ անտի առողջութեան մարմնոյն՝ « Եւ քան զգիծն Եւկլիդեայ անօսրագոյն լեալ էր անձամբն, սաէ Վասըֆ. ձայն նորա նմանեալ էր կարկաջելոյ գորտանց, ըմպայութիւնք նորա անգործք էին քան զմումիայսն, և մարմին նորա կմախք էին Թափանցիկք »: Եւ

յաւուր միում՝ դէպ եղև նմա յերթալն զառաջեաւ արքայի դեգերել անկանել յանզգաստից։ Գթացաւ արքայ յայն, և եհարց զնա եթէ զո՞ր իշխանութիւն պատուոյ խնդրիցէ․ և նա խնդրեալ ընկալաւ զպաշտօն համարակալութեան զինագործ զօրականաց։ Այս դիպուած փոխանակ կարծելոյ զխնամակալն հեշտութիւն զախոնի՝ առաւել ևս համարձակեցոյց 'ի նոյն։ Նա էր տեսանել այնուհետև 'ի հրապարակին որ առ Սիւլէյմանիյէ մզկիթաւ յամենայն երեկոյս գունդագունդ ժողովեալ արս գեղջկեալս և երկիթայեալս, գողգոջեալս և գեգեկեալս, սորեալս աչօք և խախտեալս ամենայն անդամօք, որ զուրուականաց ոմանց բերէին զնմանութիւն։ Անդ էր տեսանել զկէսս 'ի նոցանէ բազմեալս առ գետնով, զի կլանէին համս համս ափիոնի ըստ իւրաքանչիւր կարի, և որք ուժեղագոյնքն էին՝ քառեակ համս կլանէին ըստ չափու ձիթենւոյ։ Չև անցեալ 'ի վերայ միոյ ժամու, և ահա մտանէր զնոսա ափիոնն յարբեցութիւն խինս նոզկալի կամ 'ի թմրրութիւն անհնարին, յորում համարէին կատարեալ արդեամբք զամենոյն զանձանձն և զանհեթեթ երևոյթս մտաց խուրեանց. ընդ բոց անցանել անկէզ, ընդ ալիս գնալ անթաց, 'ի ծով դրդանաց լողալ, յերկինից վայելս բերկրել, 'ի դրախտին հեշտութիւնս

պարտիլ, 'ի պատշգամս մարգարտեայս զրօնուլ, զականակնիս աղբերք գեգերիլ, 'ի յաւերժհարսանցն պարաւորութիւնս մտանել, և որ այլ այսպիսիք :

Յամին 1761 հաստատեաց Ռաղիպ փաշա դաշինս ուխտի բարեկամութեան և ընդ Թագաւորին Բրուսիոյ Փրիդերիկոսի Բ. և կարծելի է թէ կամէր նա լուծանել տակաւ զբարեկամութիւնն որ ընդ Օսմանեանս և ընդ Աւստրիականն պետութիւն :

Դեսպանն Ռուսաց Շախովսքի եկեալ 'ի խնդակցութիւն Թագաւորելոյն Մուստաֆայի, ամբաստան ևս եղև զդնայցիցն Օսմանեայ, որ դեսպանութեամբ հասեալ 'ի Բեթրպուրկ՝ ոչ շատացաւ ինքնին իւրով ձեռամբ տալ 'ի ձեռս կայսրուհւոյն զթուղթս իւր, այլ և բարձրավիզ և անոպայ զրուցիւքն ուծացոյց յինքենէ զամենայն զարքունիս :

Եկն և յաշխարհէն Լեհաց դեսպանութեամբ կրօնաւոր ոմն Թովմաս Մուսելինցքի անուն՝ որ պատուէր ունէր միաբանել ընդ դեսպանս Գաղղիացւոց, Վենետիկեցւոց, Գերմանացւոց և Նեապոլսեցւոց, և խնդրել 'ի մեծէ դրանէն զի առ հռովմէականս դարձուսցին անօրինական տեղիքն որ յԵրուսաղէմ : Այլ զի նորա հրովարտակս առեալ էր արքայի զանուղին

'ի ձեռս Յունաց, ոչ իշխեցին դեսպանքն բանս 'ի մէջ առնուլ զիրացն վերստին. մանաւանդ զի դեռ ևս 'ի վերայ հասեալ կայր հալածումն մեծ 'ի վերայ ուղղափառաց Հայոց: Քանզի խռովայոյզն այր Մանուէլ բալուեցի, և ատրիչ Յովհաննէս, և այլք ոմանք յաղդատեաց մարդկանէ զըպարտեալ զոմանս յեղբարց իւրեանց իբրու փրանկացեալս և ապստամբս 'ի պետութենէ՝ հակառակ կամաց Յակոբայ պատրիարգին առին ապստարս արքունի, և դիմեալ յեկեղեցիս Լատինացւոց՝ կալան և կապեցին զորս և գտին 'ի նոսա առ յիսուն և երկու, և մատնեցին յարգելանս նաւատեղեաց: Մի էր 'ի կալանաւորաց անտի Սրբմաքէչ Պաղտասար անուն պարոն Միքայէլի Տիւզեան առն զքանչելւոյ 'ի մէջ ազգիս և սիրելւոյ յաչս արքայի: Արդ 'ի նմին աւուր՝ որ օր 22 էր ամսեանն Նոյեմբերի, մինչդեռ գործէր պարոն Միքայէլ զգործ արուեստին իւրոյ 'ի ներքս անդ յարքունիս, եկն առ նա մանրիկն նորա զինակիրն արքայի, և տեսեալ զնա լի տրամութեամբ՝ եհարց և խնդայազպատճառն. « Նա չիցէ՞ ճշմարիտ, ասէ զինակիրն, եթէ փրանկացեալ են ոյքն՝ որպէս առացան մեզ »: Նա պարոն Միքայէլ եցոյց նմա հաւաստեաւ ստութիւն ամբաստանութեանցն. և յաւելեալ 'ի բանս իւր ասէ. « Հաւա-

տա լինձ տէր, զի բանտարգելքն այնո_քիկ և ամենայն ընտանիք նոցա ոչ գա_դարեն աղօթս առ. Աստուած մատու_ցանել զօր հանապազ վասն կենաց ար_քային, և զի լիցի տէառն մերում արքային զաւակ արու »: Զայս ամենայն ծա_նոյց զենակիրն արքային ըստ պատեհի, և ահա յետ ամսօրեայ ժամանակի ծնաւ արքային որդի մի Սելիմ անուն. և անդէն հրամայեաց արքայ հանել արձակել յարգելանէ անտի զկալանա_ւորս Հայոց: Ապա բազմօրեայ ջահա_լուցութիւնք եղեն 'ի քաղաքին, և խաղք և հանդէսք որոց ոչ գոյր թիւ:

Յամին 1762 հիմնեցոյց Րաղիպ փա_շա զմատենադարանն իւր և զվարժոց, և անդր զետեղեաց զամենայն զմա_տեանսն զորս հաւաքեալ էր յապարանս իւր. կարգեաց և տեսուչս մատենա_դարանին և վարժեալ որ հրահանգիցեն ձրի մանկունս քաղաքին. և առ մա_տենադարանաւն աղբիւր կանգնեաց գեղեցկաշէն, որպէս զի որք միանգամ պապակիցին 'ի տապոյ տենչանաց գի_տութեան՝ անդանօր հարցեն զպա_տուք ծարաւոյ իւրեանց՝ առէ պատմա_գիրն Վասըֆ: Քան զամենայն մատե_նադարանս Կոստանդնուպօլսոյ, որ աւելի հաշուին քան զերեսուն և հինգ, շքեղագոյն է Րաղըպայն. այլ մինչ չէ աւարտեալ շինուածոյն՝ գմբէթ նորին 'ի վայր հոսեցաւ, և չարագուշակ

զդեպսն համարեցաւ ամբոխն ։ Նա հաստատեցաւ ևս 'ի վայրապար կասկածանսն. իբր զի 'ի միւսում ամին մեռաւ Րաղիպ Մէհէմմէտ փաշա ամաց վաթսուն և հնգից, և թաղեցաւ 'ի հոյակապ և 'ի վանդակապատ շիրմի որ է 'ի գաւթի մատենադարանին իւրոյ. և այս տապանագիր է 'ի վերայ գամբանի նորա. «Յանուն մշտնջենաւորին Աստուծոյ ամենակալի. Մեծ վէզիրն Րաղիպ փաշա է որ արար զայս գործ բարի և կանգնեաց զվայելչակերտ շինուածքս ։ Մաղթեսցեն սմա հաւատացեալք զողորմութիւնն Աստուծոյ, և անուշահոտ բուրմունք դրախտին պատեսցեն զնշխարս սորա ։ Ասասջիք վասն հոգւոյ սորա զառաջին գլուխ կուրանին » ։

Մահուամբն Րաղիպայ զրկեցաւ աշխարհն Օսմանեանց յառնէ որ սիւն հաստատութեան պետութեանն էր իւրով խոհական և հմուտ տեսչութեամբ, և նախամեծար քան զամենայն գիտնականս ժամանակին՝ իւրով ուսումնասէր հմտութեամբ և քաջ մատենագրութեամբ, մինչև կոչել զնա պատմագրին Վասըֆայ Սատր իւր վիզէրս, այս ինքն է իշխան վէզիրաց, և Սուլդանի շուարայի Րում, այն է թագաւոր քերթողացն Օսմանեանց ։

Բազում են յոյժ որ ցարդ ևս յածին 'ի բերանս ժողովրդեանն Կոստանդ-

նուպօլսոյ դէպք և պատմութիւնք նշանակք զգօնութեան և ճարտարմտութեան վէզիրիս մեծի։ Մի 'ի նոցանէ համարի օրինակ իմն և առաջիկայդ։ Ածաւ առ նա երբեմն դերմանացի ոմն ուրացեալ 'ի հաւատոցն քրիստոնէութեան, որ ասէր զանձնէ՝ եթէ տեսեալ իցէ յերազի զՄահմէտ, և առ 'ի նմանէ յորդորեալ 'ի դարձ և 'ի փախուստ յաշխարհէն արևելից։ Ասէ Րաղըպ․ « Վա՛շ անմտութեան առնդ․ ահա այս եօթանասուն ամք են զի ես անայյթաք կատարեմ զհնդեակ պահուց զաղօթսն, և Մահմէտ չև ևս երևեցաւ ինձ․ և այլազգուոյդ ո՞յդչափ դիւրընկալ եղեալ իցէ այդ շնորհ։ Անշուշտ եմ զի կամ զհայր իւր և կամ զմայր սպանեալ է դորա․ արդ ասա դմա թարգմանդ դու, զի թէ ոչ խոստովան լիցի զճշմարիտն՝ այժմ իսկ կախեսցի »։ Եւ արդարև խոստովան եղև դերմանացին այն, զի մանկածու գոլով իւր յերկրին իւրում՝ և առ ստահակութեան դնացիցն աքսորեալ էր անտի։ Զոր իբրև դիտաց Րաղըպ՝ ասէ․ « Քաջ է սպա․ թող տացէ զդաւանութիւն դենիս մերոյ․ այլ ապա ժողովրդապետն մեր այս անուն ուսուսցէ դմա՝ եթէ չէք կրօն յաշխարհի որ իրաւունս տայցէ այդպիսի անօրէնութեանց »։

Մեծապէս խնամ ունէր Րաղըպ փաշա 'ի վերայ Համիտ Համզա փա-

չայլն յերեսուն ամաց հետէ. վասն ո-րոյ 'ի նա յանձնեցաւ և կնիքն արքու-նի. այլ քանզի որ ընդ այլոյ ձե-ռամբ այր ընտիր ճանաչի, ինքնիշխան կացեալ էր՝ յաճախ ապիկար յանդի-մանի, և Համիտ Համզա զհետ վեցամ-սեայ իշխանութեանն ընկեցաւ 'ի պա-տուոյն. և դարձեալ սկսան ստէպ ստէպ փոփոխութիւնք վեզիրաց:

Պահիր Մուստաֆա փաշա կացեալ երկրորդ անգամ վեզիր մեծ՝ խստա-գոյն քան զառաջինն վարեցաւ ընդ ուագանւոյ աշխարհին, և զբազումս 'ի նոցանէ փոփոխեաց. և զփեսայս անգամ արքայի զՄիւհսինզատէ Մէ-հէմմէտ փաշա և զՍիլիհտար Մէհէմ-մէտ փաշա զերկոսին զկողմնապետսն հեռացոյց 'ի Թագաւորեալ քաղաքէն: Սակայն և ինքն ոչ ինչ աւելի յերկա-րեալ 'ի բարձին քան զամիս ութու-տասն՝ աքսորեցաւ 'ի Մելիտինէ և անդ գլխատեցաւ:

Ի նմին ամի սպանաւ և Աճէմ Ալի մտերիմն Ռաղըպայ՝ ամբաստանեալ որ-պէս կաշառակուրծ. և ընդ նմին 'ի մահ վարեցաւ և լումայափոխն իւր հայազգին Ղազէր:

Չև ևս անցեալ էին աւուրք տասն յետ հասանելոյ նորոյ վեզիրին 'ի Կոս-տանդնուպօլիս, և ահա հրդեհք կրկին մեծամեծք բորբոքեալք յայլ և այլ կողմանս քաղաքին՝ այրեցին զբազում

տեղիս, և երկրքեան եւ անեցին ժամտամն և երկոտասան ։ Ի միւսում ամին որ էր 1766, սաստնութիւն մեծ եղև 'ի Կոստանդնուպօլիս, և բազում շինուածք հոյակապք մեծապէս դեան կլեցին, մանաւանդ մզկիթն սուլթան Մէհէմմէտայ. մինչև կասկածել նանրահաւատուժանին եթէ մեծամեծ չարեաց գուշակ իցէ պատահարն, և աչագին սպառնալեք կայցեն 'ի վերայ պետութեանն ։ Աւել քան հազար քսակք արծաթոյ առատաձեռնեալք յարքայէ 'ի նորոգութիւն աւերածիցն՝ խցին զբերանս զրաբանից ։ Խանգարեցան և ջրըշեղջքն և ջրանցք քաղաքին. այլ արքայ ոչ խնայեաց 'ի ծախս առ 'ի նոցին եւ նորոգութիւն ։

Զհետ չորից ամաց եղև հանդէս սկսանելոյ արքայորդւոյն Սէլիմայ զուսումն ընթերցանութեան ։ Հարաւ խորան մեծ հանդէսպ պատշգամին Ինձիլի քէօշք կոչեցելոյ. և իբրև եհաս անդր Մուստաֆա արքայ, վէզիրքն և գխանականք երթեալ կացին առաջի և անդի մեծի դրան կանանոցին ։ Եկն եւ հընդեմեան արքայորդին, և ընդ նմա ներքինապետն և գանձապետն, և ողջոյն ետ ժողովականաց. և երկրքեան դաստուրքն եւրոպական և ասիացի զօրաց և Նագիբիպեւլ էշրաֆ և խմամքն երկրքին համբուրեցին զձեռս նորա ։ Ապա 'ի մտանել թափօրին 'ի խորան

անգր՝ վէզիրն մեծ եւ ընդ առաջ արքայորդւոյն և ընկալաւ զնա 'ի ներքս . և յանկարծակի արքայն գենդեան և վէզիրն մեծ անցին բաղմեցան յաջմէ և յահեկէ Մէլիմայ, և գենդեան ակիզքն արար ուսման աղօթիցն ասելով . « ՊԻՍՄԻԼԼԱՀ ԷՐՐԱՀՄԱՆ ԷՐՐԱՀԻՄ . ԷԼԻՖ, ԳԷ. ԲԷ. ՎԷ » . և 'ի կամել արքայորդւոյն համբուրել զձեռս նորա, նա գրկեաց զնա և համբուրեաց զուս նորին ։

Այս երկոքումբք վէզիրօքն որ յետ Բաղիպայ՝ տակաւ առաւելան չփոթք աշխարհին Լեհաց ։ Քանզի 'ի մեռանել արքային Օգոստեայ Գ., երկպառակեցան Լեհք . և կէսք 'ի նոցանէ յօգնութիւն կարդացին զՌուսս և զՔրուսս և զԳերմանացիս . և գլխոյն Ռուսաց կայսրինէ ածապարեաց առաքել 'ի Լեհաստան գունդ մի զօրաց , և թագաւորեցոյց անդանօր զՍտանիսլաւ Փոնեաթովսքի հակառակ բաղմաց 'ի բըդնակչաց աշխարհին ։ Ոչ գադարէին և երկաքանչիւր կողմանքն դեսպանս առաքել 'ի դուռն արքունի 'ի Կոստանդնուպոլիս . ոմանք բողոք հարկանելով զմտացն Ռուսաց 'ի Լեհաստան, և այլք հաստատութիւն խնդրելով յարքայէն Մուստաֆայէ վասն թագաւորելոյն Փոնեաթովսքեայ ։ Իսկ Մուստաֆա արքայ թէպէտ և կամէր կամք ամբողջ և անարատ պահել ապստամբութեան հաստարակապետութեան Լե-

հայց, սակայն և թշնամանաւ ընդ Ռուսաց առ ժամայն չառնոյր յանձն. սմին իրի և զերկաքանչիւր կողմանց զգեօ-պանան խաղաղութեամբ ընկալեալ արձակեայ, և Թուղթս ևս ետ ՚ի ձեռս նոցա՝ յորս խրատէր զաւագորեայն Ղ[illegible] հայց ՚ի սէր և ՚ի միաբանութիւն, թէ կամիցին յառին պահել զազատութիւն աշխարհին ։

Յամին 1765 եկն Սէլիմ Քէրէյ խանն Խրիմու ՚ի Կոստանդնուպօլիս՝ ամբաստան լինել զՌուսաց յաղագս կանգնելոյ նոցին ամրոցս ՚ի Կապարթա. և մեծապէս պատուեցաւ ինքն և որդիք իւր և որք ընդ նոսա ։

Ընդ այն ժամանակս խռովութիւն բազում էր և յաշխարհին Վրաց. յորում իշխանն Խմէրէթայ Սողոմոն վետարանջեալ յՕսմանեանց՝ զինու զօրութեամբ զգէմ կալաւ յանձն կուսակալացն Չըլտըրայ և Տրապիզոնի. և յետ երից կամ չորից ամաց ուր ուրեմն խոնարհեցաւ նա ընդ ձեռամբ Օսմանեանց, և անդրէն հաստատեցաւ յիշխանութեան իւրում ։

Խռովք մեծ հարկանէր և յարևմտեայ սահմանս պետութեանն ՚ի կողմանս Գարատաղայ միանձն ոմն աննշան. և իբրու գուշակ իմն լինելով գալստեան բազմութեան զօրաց ՚ի Ռուսաց աշխարհէն՝ դրդեաց զբնակիչս աշխարհին յապստամբութիւն, և ինքնին կացեալ

'ի գլուխ բանակի նոցա՝ բախեցաւ բա-զում ուրեք ընդ կուսակալին Պօտոլիոյ և ընդ այլոց բդեշխից. և 'ի վերջէ փա-խուցեալ յերեսաց նոցա ամփոփեցաւ յանմատչելի վայրս աշխարհին ։

Ոչ սակաւ շփոթք էին յամս ժամա-նակացն այնոցիկ և յԵգիպտոս՝ ուր բռնացեալ իմն էր Պուլուտ Ալի պէկ ամն, և յԱրաբիա. այլ Մուստաֆա արքայ հանդերձ ամենայն աւագանւովն մտ դնէր յայնժամ հանդերձանաց ա-հեղ պատերազմին որ ընդ հուպ բացաւ ընդ Ռուսս. զորմէ ժամ է տեղեկա-գոյն առնել աստանօր զընթերցասէ-րսն՝ խնամ կալեալ ցանդ չելանել ըստ սահման համառօտութեան մատենիս ։

Ընդ սմին 'ի սկզբանէ 1768 ամին չունէ պատերազմի էր յօժարեան գրանն, բայց 'ի հասարակ մարդկանէ խանէր և ոչ ոք. և առաջին որ լուաւ զայն 'ի բերանոյ նորին իսկ արքային՝ է-ղև բժիշկն Կոսլիս գերմանացի յազգէ ։ Քանզի մինչև ցայնժամ չէր օրէն ումեք բժիշկ լինել արքային՝ բայց եթէ 'ի գխո-նականացն Օսմանեանց ոք. այլ Մուս-տաֆա արքայ առաւել ևս 'ի համարի ունէր զեւրոպացի բժիշկս, և նա առա-ջին մուտ շնորհեաց սոցա 'ի կանանոցն արքունի ։ Նորա յաւուր միում սկսաւ արքայ խօսել յանկարծ առ Կոսլիս 'ի կանանոցի անդ մեծաւ բարկութեամբ ընդդէմ Ռուսաց և ասէ. «Զեք հնար,

յարեայց ես 'ի վերայ Ռուսաց 'ի մարտ պատերազմի. զի ընդդէմ ուխտի դաշանց մերոց վարին նոքա 'ի Լեհաստան և 'ի Վրաստան և 'ի Գարաստաղ. և վաղագոյն ես 'ի նոյն ձեռն արկանէի, եթէ ամենք 'ի գիտնականաց կուրացեալք 'ի կաշառուց ոսկւոյն Ռուսաց՝ չէին զիս խափանեալ »: Նւ արդարև սմին իրի իսկ դենպեան Տիւրրիզատէ ընկեցաւ յիշխանութենէն, և ամբարձաւ 'ի տեղի նորա Վէլիէտտին էֆէնտի ոխերիմն Ռուսաց:

Բողոք կալան Օսմանեանք առ դեսպանն Ռուսաց Օպրեզքով զմտից զօրացն Ռուսաց 'ի Լեհաստան, զկառուցանելոյ Ռուսաց ամրոց մի հուպ 'ի սահմանս Մոլտաւիոյ, զգրաւելոյ նոցա զմասն ինչ Կապարթայի, զգրգռութեանցն բնակչաց Գարաստաղու յապստամբութիւն, և զօժանդակութենէն որով ասէին Օսմանեանք թէ օգնեալ իցէ Ռուսաց վտարանջելոցն 'ի Վրաստան: Օպրեզքով ետ պատասխանի առ ամենայն պահանջանս Օսմանեանց, և եցոյց եթէ Ռուսք հրաւիրանաւ նոյին իսկ Լեհաց երկփեղկելոց մտին 'ի Վարսաւիա, և թէ ամրոցքն կանգնեալք 'ի կողմանս Մոլտաւիոյ և Կապարթայի ոչ 'ի սահմանս Օսմանեանց են, այլ յերկրի անդ Ռուսաց յապահովութիւն աշխարհին յերեսաց հինից և ապստամբութեանց: Մի էր յամբաստա-

նութեանց անուն և այս՝ զի վեց միանձունք ռուսք գրգռեալ էին զբնակիչս Մոլտաւիոյ ապստամբել յՕսմանեանց և փախչել յերկիրն Ռուսաց. և Օպրեզքով ետ պատասխանի՝ եթէ օսմանեան պետութեանդ անկ է խափանել զանցս փախստի իւրոց հպատակաց յօտար աշխարհս, կամ թէ կարծել զհարկահանութիւնս և զկեղեքմունս նոցա առ 'ի դիւրելոյ նոցին զբնակութիւն հայրենի աշխարհին իւրեանց: Եւ Օսմանեանք ոչ ինչ նուազ քան ընդ գործն զայրացան ընդ այս պատասխանի դեսպանին: Բազում երթևեկք եղեն ընդ մէջ գրանն մեծի և դեսպանացն Ռուսաց և Բրուսաց՝ որ միաբանք էին, այլ չեղև ինչ շահ. և յամսեանն յունիսի յամին 1768 ապառնացաւ Միւհսին զատէ վեզիրն մեծ և ասէ. Հրաման տամ Թաթարաց զի մտեսցեն 'ի Լեհաստան: « Զայդ եթէ արասջիք, ասէ Օպրեզքով, յայտ իսկ է զի ձայն տայք պատերազմի, և ես պատրաստեցայց 'ի մեկնել 'ի քաղաքէս »: Այդ եղև 'ի նոյն աւուրս՝ եթէ Ռուսք և Թաթարք բախեալ էին ընդ միմեանս 'ի Պալթա. և դեսպանն այնուհետև վճիռ ետ իրաւացի լինել պատերազմին, թէպէտ և չև ևս գիտակ էին իւրացն ժողովուրդն և զօրականք:

Մինչդեռ այս պատրաստութիւնք պատերազմի 'ի վերայ կային՝ ընկեցա-

վէզիրն մեծ Մուհսինզատէ Մէհէմ-մէտ փաշա յիշխանութենէ իւրմէ, իբ-րեւ այր երկչոտ եւ ապիկար, փոխա-նակ զի համարձակագոյնս խորհրդակից լեալ էր արքային՝ որպէս ասէ Վասիֆ՝ ամբոխեցուցանել նախ զսահմանածայրս աշխարհին, եւ ապա 'ի պատերազմն ձեռն արկանել: Աքսորեցաւ նա 'ի Թենետոս, այլ ցանգ դողալով 'ի մա-հուանէ. զի նոյն սեննեկալեալ էր ա-ռաջնորդ իւր՝ որ եւ զՊահիր Մուստա-ֆա տարեալ 'ի Մելիտինէ, եւ ապա զկառափն նորին դարձուցեալ էր 'ի Կոստանդնուպօլիս. եւ կալաւ զտեղի նորա կուսակալն Ալայիոյ Համզա փաշա՝ փեսայ արքային:

Ի չորրորդի աւուր ամսեանն հոկ-տեմբերի տանեան մեծ խորհրդոյ կար-գեալ՝ հաստատեցաւ պատերազմն Ռուսաց. այլ քանզի չեւ եւս տեսեալ էր նորոյ վէզիրին զՕպրեզքով, կոչեցաւ սա 'ի դուռն զի ծանիցէ զպատճառս պա-տերազմին: Վէզիրս մեծ փոխանակ յո-տին կալոյ ըստ օրինի՝ բազմեալ կայր անշարժ 'ի վերայ բազմոցի յեց 'ի բարձ-կնեայն. եւ այն ինչ սկսանէր դեսպանն բանս ինչ բարեմաղթութեան խօսել առ վէզիրն, նա եհատ յանկարծ զթել բանից նորա եւ ասէ. « Շատ խակ է զոր ինչ խօսեալն է քո առ րէիս էֆէն-տին ». եւ անդէն հանեալ ետ նմա 'ի ծոցոյ իւրմէ գրուած ինչ՝ յորում յա-

ռաջ քան զամս չորս խոստանայր Օպրեգքով եօթն հազար ևեթ զօրականս Ռուսաց և ոչ աւելի առ մնել 'ի Լեհաստան 'ի պահ զգուշութեան աշխարհին. «Եւ արդ զի՞ է, ասէ, զի երեսուն հազար Ռուսք են անդանօր»: Եւ յասել Օպրեգքովայ եթէ քան և հինգ հազարք են, գոչեաց մեղմին ընդդէմ նորա և ասէ. «Մատնիչ դաւաճան և յանդուգն ուխտադրուժ, չամաչե՞ս դու յԱստուծոյ և 'ի մարդկանէ ընդ անգթութիւնն զոր գործեն յօտար երկրի ազգակիցքդ քո. ո՞չ ապաքէն ձեր թնդանօթք են որ հիմն 'ի վեր տապալեցին զմի յապարանից խանին Խրիմու»:

Յետ այնորիկ մատուցան առ Օպրեգքով պայմանք խաղաղանելոյ պատերազմին՝ զի յանձն առեալ ստորագրեսցէ 'ի նոսա. այս ինքն է զի մի ևս այլ մնասցին Ռուսք յերս պետութեան աշխարհին Լեհաց՝ երաշխաւորս խոստմանն ունելով զերկոսին դաշնակից պետութիւնս զԴանեաց, զՊրուսաց, զԱնգղիացւոց և զՇուեդաց, և զի հանցեն 'ի բաց 'ի Լեհաստանէ զամենայն զօրս խրեանց: Օպրեգքով չէառ յանձն և ոչ զմի ինչ 'ի պայմանացս, և մեղմին ասէ. «Կամեցարուք ապա 'ի պատերազմ»: Ասէ Օպրեգքով. «Ռուսաստան ոչ կամի բնաւ ընդ պատերազմ. այլ թէ դուք յառնիցէք պատերազմու

'ի վերայ նորա, զգեմ կալցի ձեզ ամե_
նայն զօրութեամբ իւրով »: Զայս
պատասխանի այսպէս փոխեաց թարգ_
մանն 'ի տաճիկ բարբառ. « Ռուստա_
տան անյեղլի է 'ի բարեկամութեան
իւրում. բայց եթէ դուք ընդ պատե_
րազմ կամիցիք, այդ այլ ինչ է »: Կըրկ_
նեաց և երեքկնեաց դեսպանն զիւրն
պատասխանի, և ստիպէր զթարգմանն
ճշգրիտ թարգմանել զնոյն, այլ 'ի
զուր: Համառ դեսպանն 'ի դաւիթ ա_
տենին. և յետ երից ժամուց եկն հրա_
ման յարքայէ. 'ի բաց կացին յՕպլեղ_
քոմեայ ենիչէրիքն կարգեալք 'ի պահ_
պանութիւն նորին. և ինքն համանգերձ
ընտանեօքն և թարգմանօք արգելաւ 'ի
գիպահոջ յԷտիգուլէ:

Յետ սակաւ աւուրց փոխեցաւ խանն
Խրիմու Մագսուտ_քէրէյ, և ամբարձաւ
դարձեալ Գրիմ_քէրէյ ոխերիմ թշնա_
մին Ռուսաց: Սորին խորհրդով արկա
յիշխանութենէն և Համզա փաշա և
աքսորեցաւ 'ի Կէլիպօլու, և ընտրեցաւ
'ի վեզիր մեծ Նշանըճըզատէ Մէ_
հէմմէտ Էմին փաշա: Մեռաւ 'ի նոյն
աւուրս և դեսպանն Վէլէտոսին, և կա_
լաւ զիշխանութիւն նորա մներիմն ար_
քայի Օսման Մոլլա թշնամի Ռուսաց:

Իսկ վեզիրն նոր առաքեաց վաղվաղա_
կի ընդ ամենայն աշխարհն հրովարտակս
երկերիւր՝ պատուիրեալ ամենայն կու_
սակալաց և բդեշխից գալ ժողովել յա_

ռաջիկայ ամենայն մարտի յԱդրիանու-
պօլիս քաղաք՝ ուր երթալ ունէր ինքնին
արքայ հանդերձ նուիրական դրօշաւն։
Բայց 'ի մեծ և 'ի փոքր թուչակաւորաց՝ որ
էն Զիամէթ և Թիմար անուանեալքն՝
անցին 'ի Րումէլի և ինքնակամքն որ
Նէֆէրիք և Էվլեաի Ֆաթիհան յորջոր-
ջին։ Չորեքտասան գունդք ենիչէրեաց,
երեսուն գունդք զինագործ զօրակա-
նաց, և վեց գունդք թնդանօթաձիգ զօ-
րաց պատուէր ընկալան գնալ փութա-
նակի 'ի սահմանս աշխարհին Վլահաց։
Առաքեցան 'ի Րումէլի վեց հազար
քսակք արծաթոյ. և չորք հազար ըղ-
պայք անցին յԽասկիւղէ յայսկոյս։
Ի Մոլտաւիա քառասուն հազար զօրա-
կանք կային արդէն 'ի պատրաստի. եր-
կոտասան հազարք հազարաց արծաթոյ
աւանդեցան համարակալին վասն ծա-
խուց պատերազմին. հինգհարիւր հա-
զարք տուան մատուցորդաց՝ հոգալ զպէ-
տս բանակին, և քսան բիւրք խանին
Խրիմու։ Առաքեցան և կառոյցք եր-
կուց նաւաց, և արկան սոքա 'ի ծով.
միումն Ջաֆէր կամ Յաղթութիւն
կոչեցեալ անուն, և միւսոյն Ֆէթհ՝ որ
է Յաղթանակ։

Համբաւ ևս հնչէր 'ի ժամանակին
եթէ դաշնակցութիւն միաբանութեան
իցէ 'ի մէջ չորից պետութեանց, Ռուս-
սիոյ, Պրուսիոյ, Աւստրիոյ և Անգղիոյ.
նմին իրի խնամով գուն գործէր վէզիրն

մեծ հաւաստեաւ 'ի վերայ հասանել իրացն, և ջանայր զԳերմանացւոցն քակել 'ի վտանգաւոր դաշնակցութենէն : Նա պատասխանի դեսպանն Գերմանացւոց՝ եթէ և իւր պետութիւն հաւանեալ է ընդ թագաւորել Փոնեաթովսքեայ 'ի վերայ Լեհաց . վասն որոյ ոչ ունի իրաւացի պատճառս թշնամանալոյ ընդ դշխոյին Ռուսաց, թէպէտ և պատրաստ է միջնորդ խաղաղութեան կալ ընդ նա և ընդ ձեզ : Զնոյն առաջարկեցին և դեսպանք Անգղիացւոց և Բրուսաց . սակայն վէզիրն ամբք բանիւք մերժեաց զմիջնորդութիւնս նոցա : Իսկ դեսպանք Վենետկեցւոց, Հոլանդացւոց և Դանեաց յայտ արարին նմա՝ եթէ ինքեանք չկամին բնաւ խառնիլ յիրս պատերազմին : Գաղղիացւոցն միայն դեսպանք ստէպ ստէպ երթևեկեալք 'ի Խրիմ՝ ոչ դադարէին 'ի գրգռելոյ զխանն ևս քան զնա 'ի պատերազմ ընդդէմ Ռուսաց :

Օպրեզքով նեղեալ յոյժ յարգելանին իւրում, զի մթին էր տեղին և խոնաւուտ և անձուկ, բողոք կալաւ առանձինն թղթով առ վէզիրն մեծ և ասէ . “ Խիստ է դատաստանդ այդ որով նեղէք զիս 'ի մահաբեր տեղւոջս՝ զայր որ զամս ութուտասն հաւատարիմ գտեալ եմ 'ի պաշտամանս իմում ” . այլ չեղև լսելի :

Յամսեանն մարտի յամին 1769 խա_

զայց գնաց բանակն մեծ և զաւք զաւք
արուեստաւորաց ըստ յաճախ սովորու-
թեանն հանդիսից . և այսպ պարզեցաւ
դրօշն նուիրական՝ յորոյ 'ի տեսիլ խրա-
խոյս մեծ բառնան առ հասարակ տաճ-
կադենք :

Յայնժամ երեկոյի դեսպանն Գերմա-
նացւոց Պրոնեաու երթեալ էր հանդերձ
կնաւ իւրով և դստերբք և աղախնեօք
և թարգմանօք 'ի տուն ուրեք 'ի թաղն
Թեքքէ մահալլէսի առաջի Դռափ զա-
փու դրան՝ կալ 'ի զննել անցանելոյ բա-
նակին . և ահա եհաս 'ի վերայ խմանն,
այս ինքն է ժողովրդապետ թաղին այ-
նորիկ և վարեաց զնոսա 'ի տանէ անտի .
« Երթայք 'ի բաց , ասէ . զի բնակիչք
խոյ թաղիս ոչ յայնցանէ են որ ժոյժ
ունիցին տեսանել 'ի մէջի իւրեանց այս
այլազգիս և այլադենս » : Ելին այդն
'ի տանէ անտի . և անդէն կուտեալ 'ի
վերայ նոցա խաժամուժ ամբոխ տե-
ղւոյն սպառնալեօք և թշնամանօք և
հարուածովք անգամ բրաց և սուսե-
րաց հալածեցին վարեցին զնոսա շատով
տագնապաւ ընդ ամենայն արձակավայ-
րին մինչև 'ի դուռն քաղաքին . և յայնժմ
գիշերի 'ի տան միոյ ուրուք 'ի մերազ-
նեայց ագաւ դեսպանն և որք ընդ
նմա՝ ցրուեալք յառաջադոյն յայլ և այլ
տեղիս : Ի վաղիւ անդր չև ևս զիջեալ
դեսպանին և իւրոյն 'ի հետաքննու-
թեանն փորձութենէ, եկին կոչին իբրև

'ի դարանի 'ի խանթի ուրեք սափրչաց , և զենիչերիան իւրեանց զերկաւան և այլ ևս քանի մի զօրականս կացուցին հանդէպ իւրեանց 'ի պահպանութիւն : Սակայն ոչ ծածկեցան 'ի տեսութենէ ամբոխին . և անթիւ խուժան կանանւոյ հաւաքեալ 'ի տեղին՝ ահագին կանչիւն և ճչիւն և յիշոցս և հայհոյանս արձակէին ընդդէմ նոցա : Երևեցաւ և մի ծայր թափօրի բանակին , որ էին բազմութիւնք կանաչագլուխ էմիրաց՝ որ ընդ դրօշուն Մահմէտի գնան 'ի պահ զգուշութեան նորին . և 'ի յաճախել բիւրաւորաց՝ աղմուկ անհնարին յուզեցաւ 'ի տեղւոջն , և զայս բարբառ հնչեցուցանէին առ հասարակ իբրև ընդ մի բերան . « Հարէք հարէք զանհաւատսդ . խաւարեսցին աչք նոցա զի մի տեսցեն զդրօշն սուրբ , հարէք » : Յարձակեցաւ ամբոխին մոլեգին և հարաւ 'ի վերայ ամենայն տանց և կրպակաց քրիստոնէից որ էին անդանօր . յաւար և յաւարի մատնեցան կահք և կարասիք նոցա , անկան 'ի սուր նոցա ոգիք աւելի քան զհարիւր , և բազումք ևս վիրաւորեալք խոցեցան : Պաշարեցին պատեցին զտունն յորում կային ապաստանեալ դեսպանն . ընթացան ելին 'ի վեր ընդ պատուհանսն , խորտակեցին զվանդակապատսն . և այնչափ էր կատաղութիւն նոցա , զի ոմանք 'ի նոցանէ ատամամբքն իւրեանց վակձայծ լեալ և

Ջարդել զվանդականն երկաթիս կամէին։ Խորտակեցին զդրունս տանն, և խուռն 'ի ներքս յորդեալք հալածէին բռօք և բանցի զորս 'ի տան անդ խուճապէին. և կանայք զերծեալք 'ի վերարկուայն քարշեցան ընդ գետին և կոխոտեցան չարաչար։ Հազիւ ուրեմն եհաս 'ի վերայ գնդապետ մի խուռն գնդաւն և զերծոյց զանխոհեմն 'ի ժանեաց ամբոխին մոլեգնելոյ 'ի տուն Հայոյ ուրումն, և անտի 'ի միւսում աւուր մեծաւ ըզգուշութեամբ հասոյց 'ի տուն նոյին 'ի Պէյօղլու։ Մեծապէս գժկամակեցաւ աւագանին ընդ այս գործ. և զգօնագոյնքն յՕսմանեանց ոչ ինչ երկմտեցին եթէ ձախող ելից պատերազմին լինէ գուշակ այսօրինակ սկզբնաւորութիւն չուոյն։ Եւ յիրաւի խակ էր կասկած երկիւղին, ասէ Րէսմի Ահմէտ Էֆէնտի՝ այր այլովք ամենայնիւ քաջ.քննողան և իմաստուն, այլ ախտարական գուշակութեանց ոչ ինչ նուազ քան զսամիկն դիւրահաւան. զի և 'ի զուգընթացուն երևակին և լուսնոյ յաստեղատան կարծին, ասէ, պատահէր պատերազմն։

Զհետ երկուց աւուրց չոգաւ դեսպանն Գերմանացւոց Պրոնեառ 'ի բանակ անդր՝ առ վեզիրին մեծի զողջոյն հրաժեշտին. և ոչ ինչ բնաւ յիշեաց զանցիցն անցելոց ընդ նա երկաւուրբք յառաջ. ընդ որ զարմացաւ և վեզիրն ինքնին։ Յայնժամ հաստատեաց Մէհէմ_

մէջ Էմին փաշա բանիւ և գրով՝ զի դաշն ուխտի բարեկամութեան Օսմանեանց ընդ Գերմանացիս մշտնջենաւոր և անվախճան լիցի. քանզի ցայնժամ անաւահման էր ժամանակ հաշտութեանն Պելկրատու, և զրաջան վաստակեալ էին դեսպանք Գերմանացւոց՝ տալ դրանն մեծի յաւելուլ 'ի բանս դաշնագրին և զբառս « Մշտնջենաւոր խաղաղութիւն » : Նա ոչ միայն առլինմէ, այլ և պարգևօք սամուրենեաւ և այլոց ծանրագին ապարանց առ Պրինեսս և առ կին նորա հնարեցան Օսմանեանք վարձահատոյց լինել համբերատարութեան նորին. սակայն մեծ կամին բանից ոչ վանց առար գրել 'ի Վիեննայէ առ Պրինեսս թուղթ յանդիմանութեան վասն իւրայն եղելոց :

Վաղու ևս պատուէր առեալ էր Մուստաֆա արքայ խանին Խրիմու խաղալ գնալ 'ի սահմանս աշխարհին Լեհաց. և Գըրըմ.քերէյ անցեալ 'ի գլուխ հարիւր հազար թաթարաց՝ էանց ընդ Պուկ գետ, և յերկիս առաջս զօրուն բաժանեալ ասպատակեաց ընդ ամենայն երկիրն հարաւային Ռուսիոյ. հազարաւոր ոգիս 'ի սուր սուսերի կոտորեաց, նոյնչափ ևս 'ի գերութեան վարեաց. աւելի քան զգիւղս հարիւր յաւեր յանապատ դարձոյց, և զամենայն շտեմարանս երկրին հրդեհեալ բոցակիզեաց, և յետ աւուրց չորեք-

տանէից մեկնեցաւ 'ի Գաւշան 1 :

Ընդ զօրս Թամարայ համագունդ-
մարտնչէին ընդդէմ Ռուսաց և Իհատ
խաղաղիք . յորոց օրինակ առեալ այլոց
ամբեցին և Զաքարոսեանք խաղաղիք
'ի զօրավարէն իւրեանց որ ընդդակայն
էր Եղիասաեթկրատ քաղաքի , և յաւե-
լան 'ի Թամարայ յաղթութեան 2 :

Զհետ անմօրեայ ժամանակի մեռաւ
Գորմ քերկ՝ դեղեալ 'ի յոյն բժշկէն
որ կոչէր Սերովբոլը . զոր իբրև լուաւ
մեղրն մեծ 'ի ժամանել իւրում 'ի

1 Ի բանակին անդ Թամարայ էր և զօ-
րավարն Թոռն՝ բնիկ Ճաճառ յազգէ , և որ-
դի տէրպան Գուրգենեայ հայեալ ա-
նին : Բազում ինչ հէքեաթին աւանդէ ա
'ի Յիշատակարանս իւր զԹամարայ և զբա-
րեաց նոցին . այլ 'ի ճոխաբանութեան իւր
յաւելու և զանհաւատալիս և զմեղացածին
ա 'ի յաճախագոյնս 'ի զարմանս կրթելոյ
ընթերցողի վերծանողին :

2 Զաքարոսեանքն խաղաղէք են որ ա-
ղերէք Տէրերք Փեզոյ Բնակէալ՝ ամեն-
ազգաց զօրականք են Ռուսաց . իսկ Իւանէ՝
ամ ուղղագոյն ևս Իվնեա խաղաղէքն անուա-
նեալք նոքա են՝ որ առ ծամանակօք մեծին
Գէորգեայ զհետ երթեալք Իփնաբեան արքայն
կարաննեցին 'ի Ռուսաց . վասն որոյ ասամ
խոսան է առաջասածն էթէ առեա առ յամա-
ռութեան բարոյից Իւանէ խաղաղէ իցեն
անուանեալ :

Սիլիվրի՝ անուանեալ 'ի անգղի նորա խան Խորխմու զՏէվլէթ քէրէյ զորդի Սէլամէթ քէրէյայ զայր ապիկար և յողդողդ։

Իսկ դշխոյն Ռուսաց Կատարինէ Բ. զժամանակ ձմերայնոյն ծախեալ էր 'ի հանդերձանս մեծի պատերազմին։ Աղէքսանդր Միխայլովիչ Կալիցին վաթսուն և հինգ հազար արամբք՝ յորս ինն հազար Խազախք էին՝ խաղաց գնաց 'ի Փոտոլիա 'ի հարաւակողմն աշխարհին. Պետրոս Ալէքսանդրովիչ Րումեանցով վաթսուն հազարաւ՝ յորս տասն հազար Խազախք էին և քսան հազար Խալմուխք՝ առաքեցաւ 'ի պահ զդուշութեան սահմանացն որ ընդ մէջ Տնեբեր գետոյ և Ազախու, և 'ի կառուցանել վերստին զամուրսն Ազովայ և Թայղանու. զօրավարն Վէյմարն տասն կամ մետասան հազարաւ գնայր զդէմ ունել յարձակմանն Լեհաց դաշնակցելոց 'ի Պար քաղաքի. զօրապէտն Մետեմ գիմեաց 'ի Կապարթա, և զօրավարն Թոթլէպէն 'ի Տփխիս՝ հարկանել զկողմանս Կարնոյ և Տրապիզոնի օժանդակութեամբ իշխանացն Վրաց որ 'ի Քարթլի, 'ի Մընկրէլ, 'ի Կիւրէլ և յԻմերէթ, որք առ հասարակ վտարանջեալ էին յՕսմանեանց։ Առաքեցան և առ բնակիչս Գարատաղու դրամք և զէնք և պօրագլուխք. և պաշարեցաւ աշխարհն Օսմանեանց 'ի Թշնամեաց

անովք յարեւելից և յարեւմտից և 'ի հիւսիսոյ միանգամայն ։

Մինչդեռ տակաւին յուղւոջ էր վեզիրն մեծ՝ Երթալ յեղերս կոյս Դանուբայ, կալցին անց ըստ գետն Տնեստրեր և պաշարէր զամուրն Խոթուն, յորում պահ ունէր Չէթէճի Եկէն Հասան ։ Ի քաներորդի և յառաջնում աւուր ամսեանն ապրիլի սկսան Ռուսք հարկանել զամրոցն, այլ վաղ հարկեցան յետս կասել․ քանզի եհաս յօգնութիւն պաշարելոցն Գահրէման Հասան փաշա կուսակալն Թեսաղոնիկեայ քան հազար արամբք․ և Ռուսք յետս անդրէն դարձեալ անցին միւսանգամ ըստ Տնեստրեր ։ Իբրև հնչեաց 'ի կոստանդնուպօլիս աւետիս ազատութեանն Խոթունայ, խնդաց արքայ և ամենայն աւագանին յոյժ յոյժ․ և պատուէր հրամանի արձակեցաւ ընդ գաւառս գաւառս առ համօրէն իմամս Օսմանեանց՝ յաւելուլ այնուհետև յաղօթս ուրբաթուն յանուանս արքային և զպատիւս Ղազի՝ որ է յաղթական, կամ ախոյեան հաւատոց 1 ։

1 Քանզի 'ի կարգի անդ բանից Խոստ_ վենին՝ որ ի Բերա հանգանակ իմն է հատուածն Տաճկաց աշխարհական յառաջ յօրինեալ 'ի Մահ_ մետայ՝ որպէս ասեն, զոր և յամենայն տար_ բերս ձեռագրաց չկամն առնել հերձանել յերեւելի մեկնիչս, այսպիսի ձայնիւ կարդա_

Ի սկզբան անդ ամսեանն մայիսի չուեալ գնաց վէզիրն մեծ բանակաւն հանդերձ 'ի Պասպատաղէն յԽասդաձի. և զաւուրս քանի 'ի պատրաստութիւն նիւթոց պատերազմին ծախեալ՝ կարգեաց ապա ատեան խորհրդոյ, և ինքնին սկսեալ ատենաբանել ասէ. « Ցո՞ր կողմն ուղղել լաւ համարիցիք զընթացս բանակիս. քանզի ես անհմուտ եմ իրաց պատերազմի. ձեզ մնայ խորհել զօգուտ իրաց մերոյ պետութեանս և զփառս զինուց տէրութեան մերոյ արքայի. արդ խօսեցարուք համարձակ և նպաստ լերուք ինձ ձերովդ խորհրդովդ »: Յապաշ հարան ամենեքեան ընդ բանին,

րին և ճառն յուրաքանչիւր թագաւորաց. « Ողորմեա տէր ամենայն ուղղադաւան ամիրապետաց որ քայլեցին գործովք բարեաց և երկնատուր պարգևօք, և զիրաւունս և զարդարութեան արարին. օգնեա տէր և պաշտպանեա և պահեա զծառայ քո զարքայից արքայ, զմեծագոյն խաքան, զթագաւորն Արաբացւոց և Պարսից (Արէպ վէ Աճէմ, այսինքն են ամենայն ազգք աշխարհի), զպաշտօնեայն երկոցուն նուիրական քաղաքաց (Մէքքէի և Մէտինէի), զսուլտան որդի սուլտանայ և թոռն սուլտանայ զսուլտան Մուսդաֆա խան Ղազի, զորոյ [illegible] զինաւորեսցէ տէր Աստուած զամրապետութեան և զթագաւորութեան և զիշխանութեան. ամէն »:

և լուռ ևեթ կացեալ հայէին 'ի դէմս երկոցուն · ուր ուրեմն Շէհիտ Օսման էֆէնտի ոմն ճառ արկեալ խօսեցու_ թեանս բազումս՝ որ յայս իմաստ բովան_ դակէին՝ թէ Վասըֆ էֆէնտի, եթէ քանզի 'ի խոհեմութեան նախ ուշ արարին Թշնամիք · Թուի թէ արդ ընդ Պէնտէր դիմեսցեն ։ Մինչև էր վախճան արտա_ բեալ նորա բանիցն ։ Շատ է, ասէ Վէ_ զիրն · Թող զի և այլք ամենեքեան խօ_ սեսցին ։ Յայնժամ ասացին ամենք 'ի խոհեմութեան դիմել, զի Օզու և Պէնտէր ամ_ րոցայինք են ասէին · և այլք լաւ հա_ մարէին անցանել նախ ընդ Դանուբ, և ապա ըստ կրացն դէպ տալոյ յար_ ձակմունն առնել · և ընդ այս հաւա_ նեցաւ և Վէզիրն մեծ ։ Նաւակամուրջք արկան հանդէպ Խադճը աւանին, և անց բանակն 'ի Գարթալ, և անտի 'ի Խանտէփէ որ 'ի բնակչաց տեղւոյն Բեսապայա Մոհիլա անուանի ։

Անդր 'ի Խանտէփէ ժամանեաց 'ի բանակն փոլթոցքի դեսպան դաշնակ_ ցացն Լեհաց՝ եկեալ ընդ Պէնտէր, և մեծարեցաւ յոյժ · և 'ի մեծահանդէս ա_ տենին ոճով իմն ատենաբանեալ խրա_ խուսեաց զՕսմանեանս 'ի պաշտպա_ նել ազատութեան Լեհաց, զոր և 'ի վերջէ ընդ հզօր Թևարկութեամբ վէ_ զիրին մեծի ապաստանեալ լսեաց ։ Իսկ վէզիրն մեծ 'ի պատասխանի բանիցն փոլթոցքեայ այնպիսի իմն պատաս_

նեայ Ճառ , զոր և Վասըֆ Եփեսոսի անհեթեթ և անճոռնի յորջորջէ ․ քանզի յետ պախարակելոյ զփոյթ և ըղկոկոզավէպ ամբարտաւանութիւնն Լեհայ՝ որով մատնեցին առ զերասանակ սանձին 'ի ձեռս օտարաց , ասէր ․ « Իսկ ես 'ի լռումն պարտուց իմոյ իշխանութեանս ոչ դադարեցից ոչ այժմ և ոչ յետոյ՝ ոչ զամառն և ոչ զձմեռն 'ի հալածական տանելոյ զթշնամին ամենայն ուրեք ուր և գտանիցի նա , մինչև անհետ արարից զնա զօրութեամբ իմոյ յաղթական երկաթոյս ։ Փեսայ եմ ես և որդի իմոյ մեհափառ թագաւորիս և տեառն ախեղերաց՝ յորոյ 'ի ձեռս է ներդաշնակութիւն իրաց աշխարհի ․ սպարապետ նորա եմ ես , և միւս նա ․ նոր Աղեքսանդր եմ ես յարշաւանս իմ, և 'ի ձեռս իմ է յաղթութիւն ․ արագագոյն քան զփայլակն են գնացք իմ ։ Եթէ անկեղծաւոր իցէ բարեկամութիւն քո և ազատ յամենայն դաւաճանութենէ , հասոյս ազդ արտաքիր հասարակապետութեանդ քում զի զատուցեալ մեկնեսցէ զընտիր ընտիրս 'ի Լեհաց՝ որք ոչ միաբանեցին ընդ թշնամւոյն ․ և դու պատրաստ լեր զհետ երթալ Մէհէմմէտ փաշային կողմնապետին Եւրոպայ որ պատրաստեալ է զօրուն կարգելոյ զԼեհաց 'ի Լեհաստան » ։

Անդամին 'ի սկզբանէ արշաւանին չքաւորութիւն էր համբարոց 'ի բանա-

կին, որպէս ասէ Րէամի Ահմէտ էֆէն_
տի 1՝ յոր յաւելեալ և խուռն բազմու_
թիւն գոռեխաց և բռնոց՝ անհնարին
տագնապ անձկութեան հատուցանէին
'ի վերայ զօրուն. Թող և զծարաւ ջրոյ
որ յոգիս ապաստան արար զբանակն
ողջոյն. ամէն իրի և հրաման եղև 'ի
Գէնաէր գնալ, և բանակեցան Օսմա_
նեանք 'ի տեղւոջն որ Նասարդէփէ ա_
նուանի. այլ անդր ևս ժամանեցին

1 [illegible]

սաղն և ծաղու և պիծակացն բազմու-
թիւնք ։ Հիւանդացաւ անկաւ 'ի մա-
հիճս և վէզիրն ինքնին, և որ քան զոր
ամենակալեալ մնային բժիշկք մեռանելոյ
նոքա · բայց նա սփոփէր կամեցեալ
զորս մերձն կային՝ ասէր · «Մի ինչ
բնաւ երկնչիցիք · Նմին է անուն իմ, որ
է անուն Գաբրիէլի աւետաւորին բա-
րեաց · և բարեգուշակ առաղ անուանմե-
րոյ ողջոյն ոչ 'ի բաց կացցէ 'ի նմանէ»։

[illegible]

Պատասուրին զօրաց Ալթընճըգ Աղ-տուլլահ (զոր հեգնելով խմն յիշատակէ վարքի Ալթընըչօդ յուրջուրջմանց) վճռեալ յառենի խորհրդոյ՝ եթէ պարտ և պատշաճ է մարտ դնել ընդ թշնամիս և ընդ այնոսիկ 'ի Լեհաց որ անձնատուր եղեն 'ի Ռուսս. և Փոթոցքի հաճեցաւ ընդ խորհուրդն, և բան ետ եւ ինքնին հոգալ զպարէնս համբարոյ վաթսուն հազար զօրականաց օսմանեան բանակին ։

Ապա եղև յաւուրսն յայնոսիկ եթէ անցին դարձեալ Ռուսք ըստ գետն Տնեստեր և պաշարեցին զԽոթուն ։ Անդէն արձակեցաւ 'ի Գաւշան առենադպիր վէզիրին մեծի Ֆէյզի Սիւլէյման՝ որպէս զի խանն Խրիմու ինքնին եկեալ զերծուցանել զԽոթուն 'ի պաշարմանէ անտի. և մինչև եկեալ նորա՝ առաքեցաւ յօգնութիւն ամրոցին Մոլտովանճի Ալի փաշա. իսկ վէզիրն մեծ մեկնեցաւ վերստին 'ի Խանտէփէ ։ Իբրև եհաս Տէվլէթ քէրէյ 'ի Գաւշանէ, միաբանեցան ընդ նմա և երեսուն հազարք Օսմանեանց և դիմեցին 'ի Խոթուն. և զայն տեսեալ Կալիցին՝ միւս ևս անգամ յետս կասեցաւ և անց յայն կոյս ։

Ընդ աւետեաց երկրորդի ազատութեանն Խոթունայ ազդ արարին զօրավարք զօրուն 'ի Կոստանդնուպօլիս զապիկարութենէ վէզիրին մեծի և զմա-

խանաց նորա ընդդէմ Մոլտովանճի Ալի փաշային. և միանգամայն զպատճառս սակաւութեան յաջողուածոյն արկին զդաւաճանութեամբ Թարգմանին արքունի որ կոչէր Տրագօ, և զիշխանաւն Մոլտաւիոյ՝ որում անուն էր Քալլիմաքի, որպէս թէ գաղտ բանագնաց էին նոքա ընդ Ռուսաց: Յետ սակաւաւուրց եհաս 'ի բանակ անդր պատգամաւոր յարքայէ՝ պատուիրանաւ ընկեցիկ առնելոյ զվէզիրն մեծ և աքսորելոյ 'ի Տիմէթոքա: Էջ պատգամաւորն նախ 'ի խորան փոխանորդի վէզիրին. և նա երթեալ առ վէզիրն ընդ ատենադպրի իւրում՝ գուժեաց նմա զհրամանն արքունի: Ածաւ վէզիրն յԱդրիանուպօլիս, և անդէն գլխատեցաւ, և կառափն նորա առաքեալ 'ի Կոստանդնուպօլիս եդաւ արծաթի սկտեղբ առաջի դրան արքունեացն այսու մակագրաւս. « Այս կառափն է Մէհէմմէտ Էմին փաշայի որ երբեմն վէզիրն էր, և իւրով գոռոզութեամբն փոխանակ հարկանելոյ զթշնամին ժամավաճառ եղև 'ի տարապարտ երթևեկս. նուաղ արար զհամբարս բանակին, ոչ օժանդակեաց խանին Խրիմու 'ի կարևոր պահու, և կարի իմն վտանգեաց 'ի Թարգմանն արքունի. որոց վասն ընկալաւ ահա զարժանին պատիժ պատուհասի »: Առ գլխով իշխանին Մոլտաւիոյ՝ որ ընդ մէջ սրունից գլխակամ նորին

կայր՝ այս էր մակագիր․ « Այս կո-ռափն է անխծապարտին Գրիգորի Քալլիմաքեայ իշխանին Մոլտաւիոյ, որ չհարկեր քաւկս արծաթոյ զկարգեալսն 'ի մԹերս համբարոյ բանակին՝ յինքն շորԹեաց, և մատնոտ եղև ապստամբութեանս »։ Իսկ առ գլխակամբ Թարգմանին արքունի մակագրեր․ « Այս պիղծ գլխակն է Թարգմանին և սարկի Նիկողայոսի Տրապզօ, որ յաղագս դաւաճանութեանն և ընդ իշխանին Մոլտաւիոյ խորհրդակցութեան գլխատեցաւ »։

Մոլտավանջի Ալի փաշա կացեալ վեզիր մեծ փոխանակ Մէհէմմէտ Էմինայ, գուն գործեաց 'ի դէպ վարել զեռանդն զօրականին խրախուսելոյ ընդանգանել Ռուսաց վերստին յայնկոյս Տնեստերայ․ և կամեցեալ մխել բանակաւն 'ի Փոտոլիա՝ հրամայեաց կամուրջ արկանել առ Խոթինաւ։ Զորեքհազար Օսմանեանք որ յայնկոյս գետոյն պատնշափակ կային՝ վանեցան 'ի Ռուսաց, և Կալլիցին հրամայեաց և զկամուրջն հրձիգ առնել․ սակայն արք քաջք և անվեհերք 'ի բանակէն Օսմանեանց՝ յարձակեցան և հանին ձգեցին 'ի ջրոյ անտի զարկղ վառօդոյն զոր գիշերախառն արկեալ էին Ռուսք 'ի մատն ինչ կամրջին․ որոյ վասն և ընկալան 'ի նշանակ քաջութեան իւրեանց ձեղանակս 'ի գլուխ ։

Զհետ եօթն աւուրց եանց վէզիրն մեծ ընդ գետն կխում չափ բանակին, և 'ի հնգից կողմանց պաշարեաց զՂռուսս · զի յերից կողմանց յարձակեցան կողմնապետքն Ասիոյ, Եւրոպայ և Տիգրանակերտոյ, և խանն Խրիմու 'ի կողմանէ Կամենիցու, և վէզիրն մեծ 'ի կողմանէ անտառին: Հարին կոտորեցին Օսմանեանք 'ի Ռուսաց անթիւոյս ութհարիւր, և առին 'ի նոցանէ թնդանօթս վեց և այլ ինչ կահս պատերազմի · այլ քանզի և յՕսմանեանց անկեալ էին առ իւրու երեք հազար, մեկնեցաւ Մոլտովանձին և անց յայս կոյս: Յետ այնորիկ դարձեալ անցոյց վէզիրն յայնկոյս ախոյեանս երկոտասան հազար · այլ գիշերայն յորդեալ բարձրացեալ ջուրց գետոյն՝ խորտակեցին զկամուրջն, և առ 'ի չգոյէ նաւակաց՝ մայլս 'ի գետ անգր աղեցին · սակայն յորովք յՕսմանեանց անկան 'ի ձեռս զօրացն Ռուսաց, կէսք գետահեղձոյց եղեն, ոմանք 'ի փախուստ ցրուեցան, և սակաւք ոմանք ևեթ 'ի լող ապրեցան· « Յաւուր յայնմիկ ահագին բազմութիւնք անհաւատից թօթափեցան 'ի հուր դժոխոց, ասէ Վասիֆ էֆէնտի, և ոմանք 'ի ճշմարիտ հաւատացելոց արբեալ զմայլեցան յաղբերականց դրախտին »: Ընդ գոյժ խորտակմանս թուլացեալ լքեալ ամրականացն Խոթունայ՝ առ հասարակ 'ի փախուստ աճա-

պարեցին, և անդէն եկեալ մօտին Ռուսք և տիրեցին քաղաքին յութուտասնե_րորդի աւուր ամսեանն սեպտեմբերի :

Վեզիրն մեծ խոյս տուեալ վերըս_տին 'ի Խանտէփէ՝ ատեան կարգեաց պատերազմի, յորում խանն Խրիմու ատենաբանեալ եցոյց եթէ անհրա_ժեշտ բախտին եւեթ է գրելի կորուստն Խոթինայ. և վեզիրն մեծ գումեաց զըա_նըս նորա, և ապա հրաման ետ չուել բանակին յԻսապճի : Անհնարին էր աղ_մուկ շփոթի Օսմանեանց յայնմ ճա_նապարհի. քանզի մեծ էր չքաւորու_թիւն համբարոց, և ցրտութիւն ձմե_րայնոյն աճէր օր քան զօր. և հազիւ զիջաւ ամբոխն 'ի տրտնջանաց՝ տե_սեալ զընկեցումն կողմնապետացն Ա_սիոյ և Եւրոպայ 'ի պաշտամանց իւ_րեանց, քանզի նոքա համարէին առաւե_լապէս պատճառք ձախողելոյ իրացն : Սակայն իբրև այգ եղև եթէ հարին Ռուսք զՕսմանեանս և առին զԿալաց և զԻսաչ և զԴուքրէշ, և թէ զբնակիչս նոցին զատաճկազգեանս կոտորեցին, և զիշ_խան աշխարհին Գրիգոր Հիքա 'ի գերու_թեան վարեցին, ոչ ևս էր չափ բողոքոյ և տաղտակի Օսմանեանց, մինչև վճռե_ալ գենդպետին՝ զի յանխնայ 'ի մահ տացին ամենայն Մոլտովանք և Վլահք որ հպատակեցին Ռուսաց. ինչք նոցա յարքունիս տացին, և կանայք նոցա և որդիք 'ի գերութեան վարեսցին : Այլ

այս վճիռ ոչ այլ ինչ օգուտ գործեաց, առէ Վասլֆ էֆէնտի, բայց անձկագոյնս զօգէլ զՄոլտովանն և զՎլախս ընդ պետութեամբ Ռուսաց · քանզի ամենայն աւագանին նոցա որ Պոյարքն կոչին՝ երդուան գչխոյին Ռուսաց զերդումն հաւատարմութեան և հպատակութեան ։

Ի նոյն աւուրս Տաղըստանի Ալիպաշա յարձակեցաւ եհար և ցրուեաց զառաջապահս զօրացն Ռուսաց, և ապա մտեալ արիաբար 'ի Կալաց՝ հարկեցոյց զՌուսս հրաժեշտ առնել զքաղաքն և 'ի բաց ելանել անտի · և յաղագս այսորիկ մեծապարգև պատուեցաւ 'ի վեզիրէն ։ Սակայն ինքն Մոլտովանձի 1 Ալիփաշա արկաւ յիշխանութենէ իւրմէ, և կալաւ զտեղի նորին Խալիլ փաշա այր անփորձ և անհմուտ իրաց պատերազմի · և 'ի փոփոխութիւնս պաշտամանց զորս արար սա՝ երևելի է ընկեցիկն լինել խանին Խրիմու Տէվլէթ Քէրէյայ, փոխանակ զի յետ այնչափ բարիս և պարգևս ընդունելոյ յարքունի դրանէ՝ ոչ ինչ այսա ծառայութեան հարկանէր պե_

1 Նա կոչէր առ Մոլտովանձի, քանզի յառաջ ժամանակաւ յաւուրս սուլտան Օսմանայ զինուոր գոլով սորա առաջակային՝ երևելեալ էր ընդդէմ հաւաշխահարացն Մոլտաւիոյ, և ամօր էր յերբեակաւ առնել զարս և զխանդաւաւորհին և 'ի վաճառ հանել ։

տուԹեան • մանաւանդ Թէ 'ի խորտակել կամրջին Տնեստերայ՝ այնոցիկ միայն 'ի գետատար եղելոցն ձեռն օգնուԹեան կարկառեալ էին Թաթարք՝ որ գրաւմն խոստանային հատուցանել. և սպառեալ զՏէվլէԹ 'ի Կիրիմու կարգեցին փոխանակ նորա խան Խրիմու զԿափլան քէրէյ յերկրորդի աւուր մարտի յամին 1770 :

Այդ եղև 'ի բանակին Օսմանեանց եԹէ աչա զամենայն զօրուԹիւնս իւրեանց ժողովեն Ռուսք 'ի Փոքշան , և անտի սպառնան դիմել յԽամսիլ . յԻպրայիլ և 'ի Ճուրճով՝ որ է Երկէօկի : Եղան փաշա սպարապետն Մոլտաւիոյ դիմեաց անդէն 'ի Պուքրէշ . այլ առ Ճուրճով քաղաքաւ հարեալ ընդ ՇԹոֆէլն անուն զօրավարին Ռուսաց՝ կորոյս արս երեք հազար . այրեցին Ռուսք զՃուրճով, և մտին յաղԹանակաւ 'ի Պուքրէշ : ՄատնուԹեամբ երիցանցն Մոլտաւիոյ անկաւ 'ի ձեռս Ռուսաց և քաղաքն Զլաթինա . և Ռուսք ոչ դադարէին 'ի գրգռելոյ յապստամբուԹիւն զՅոյնս Մայնացիս դրամովք և խոստմամբ օգնականուԹեան երկրախումբ և ծովախումբ մարտից : Եւ արդարև տորմիղ քսան և չորից մեծամեծ նաւուց և բազմաց մանունց ելեալ 'ի Պալթիկ ծովէ մտին 'ի Միջերկրականն և հասին մինչև հանդէպ Յունաստանի : Ծովակալն Սփիրիտով ե-

հաս մինչև 'ի կղզիս Արշիակ գաւառին, և Ֆէտտար Օւլով էլ 'ի ցամաք հինգ հարիւր զօրականօք 'ի կողմանս Մայ-նայի, ուր յիսուն հազար սպառազէնք 'ի բնակչաց երկրին ակնկալեալ միայն նմա։ Անդէն երթեալ պաշարեցին ա-քա զՄիխիթրա, և առեալ զայն՝ 'ի սուր սուսերի կոտորեցին զՏաճիկս որ 'ի նմա. պաշարեաց Օւլով և զԿորոն, այլ սակաւութիւն զօրաց իւրոց հարկ տարաւ նմա վաղ մեկնել անտի։ Նոյն-պէս և եղբայր նորին Ալէքս Օւլով հարկեցաւ բառնալ զպաշարումն Պատ-րայի։ Յետ այնորիկ դիմեցին Ռուսք յառումն Թրիփոլիցա քաղաքի, և ընդ նոսա հնգետասան հազար Յոյնք աներկ-միւք ընդ յաղթութիւն, որք և զկանայս իւրեանց 'ի միասին առեալ էին հան-դերձ պարկօք՝ յորս ամանիցեն զճոխու-թիւն աւարին. այլ խաբեցան։ Քան-զի յոլովք 'ի բդեշխից կողմանցն զօրա-ժողով լեալ ընդ ձեռին բաւականի յարձակեցան հարին զՅոյնսն 'ի հա-լածս չարաչարս հուպ 'ի Թրիփոլիցա. ապա մտեալ 'ի քաղաքն՝ առ հասարակ 'ի սուր սուսերի կոտորեցին զայն բնա-կիչս քաղաքին, և զդիակունս նոցա 'ի հուր այրեցին, և զկանայս և զմանկունս 'ի գերութեան վարեցին։ Այլ Տոլօն-բուքի հաա ընդ նոյն աւուրս զՆաւա-րին, զԼեոնտարի և զԱրկադիա. և Ալէքս Օւլով դիր յայտարարութե ափուեաց

տա. ամենայն Յոյնս որ ընդ ձեռամբ Օս-
մանեանց, յորում ծանուցանէր նոցա
զվճիռ գենդպետին 'ի կոտորել զամե-
նայն զՄ'ոլտովանս և զՎալահս, և ապա
խրախուսէր վառանջել և միաբանել
ընդ հաւատակիցս իւրեանց ընդ Ռուսս։

Մինչ չև մտեալ նաւատորմին Ռու-
սաց 'ի Միջերկրականն ծով հնչեաց
համբաւն 'ի Կոստանդնուպօլիս. սա-
կայն աւագօրեայն Օսմանեանց հա-
ւատալ անգամ չկամէին, ասէ Վասիֆ
էֆէնտի, եթէ մարթ իցէ 'ի Պալթիկ
ծովէ ելելոցն մուտ 'ի Միջերկրականն
գտանել։ Զոր իբրև ուր ուրեմն ստու-
գեալ ծանեան' մեծապէս բարկեցին
նախ զՎենետիկեցիս ընդ ձեռն դեսպա-
նին նոցա, փոխանակ զի ոչ խափանե-
ցին նոքա զանցս Ռուսաց ընդ Ադրի-
ական անդունդն. և ապա արձակեցին
փութանակի զծովականն հիւսամէտին
փաշա' զԹօռն Ճանըմ Խօճա ծովա-
կալին, և զՃէզայիրլի Հասան փաշա
երեսուն նաւուք ընդ մեծ և ընդ փոքր,
ընդդէմ նաւատորմին Ռուսաց։ Պա-
տահեցին իրերաց տորմիղքս երկոքեան
հանդէպ Չէշմէ քաղաքի, և անդէն
ձեռն արկին 'ի նաւամարտ։ Նաւ ծո-
վակալին Ռուսաց, յորում էր և Սփի-
րիթօվ բախեցաւ ընդ նաւու նաւապե-
տին Օսմանեանց Ճէզայիրլի Հասանայ,
և երկոքին միանգամայն հրդեհեալ
բորբոքեցան։ Այն ինչ Սփիրիթօվ և

Գետոր Օուլով փոխուցեալ զերծանէին 'ի մակոյկ մի պատրաստական, և աՀա նաւն Ռուսաց 'ի վեր ընդ օդս Հարեալ քայքայեցաւ, և մեռան արք եօթնՀարիւր որ էին 'ի նմին. իսկ ծովապետն Օսմանեանց Հիւսամէտտին, և նաւապետն Ճէզայիրլի Հասան և նաւավարք ոչ բազումք 'ի լող ապրեցան: Այլ որ մեծն է, 'ի միւսում գիշերին որ օր վեցերորդ էր ամսեանն յուլիսի՝ Հրդեհեցին Ռուսք զբովանդակ նաւատորմն Ռուսաց 'ի նաւաՀանգստին Չէշմէի. ընդ որ ուրախ խնդացին Ռուսք՝ մինչև դշխոյին Չէսմեայի անուն կարդալ այնուՀետև Օուլովայ և կանգնել նմա կամար յաղթութեան մերձ 'ի Բեթերբուրգ, ըստ նմին չափու և Օսմանեանք սուգ մեծ զգեցան 'ի կոստանդնուպօլիս, և զերեսին Հրդեհն պատաՀեալս Հետ զՀետէ 'ի քաղաքին՝ այնմ աղետից գուշակ լեալ Համարեցան:

Ընդ այս դոյժ Հրդեհելոյ նաւատորմին աղմուկ մեծ Հարին Օսմանեանք բնակեալքն 'ի Զմիւռնիա, և յարձակեալ կոտորեցին առս աւելի քան զութՀարիւր 'ի յոյն և յեւրոպացի բնակչաց քաղաքին: ՆոյնՀետայն փոխեցաւ ծովապետն, և ընտրեցաւ ծերունին Ճաֆէր փաշա. և Մոլտովանճի Ալի փաշա որ փոքր մի յառաջ վեզիրն էր՝ արձակեցաւ ամրացուցանել զբերդորայն

որ 'ի Չանագգալէսի, և ընդ նմա զօրագլուխն Գաղղիացւոց Թօթ. քանզի արդարև ինն նաւուք մեծամեծօք սկսան Ռուսք հարկանել զերկդորայն, այլ վաղ յետս կասեցան. միայն քան նաւս Օսմանեանց նաւապահաւորս ձերբակալ արար զօրավարն Ռուսաց Էլֆինսթոն հանդէպ Թենեդոսի: Յայնմ ժամանակի յետ վաթսնօրեայ պաշարմանն այն ինչ առնոյր Օռլով զԼեմնոս կղզի, եհաս 'ի վերայ արի նաւապետն Ճէզայիրլի Հասան, և մարտ սաստիկ եդեալ անխայեաց զՌուսս մեկնել 'ի բաց գնալ 'ի անդուոջէ անտի յամենայնն հոկտեմբերի:

Մինչդեռ այս անցք անցանէին 'ի վերայ ծովու, 'ի Մոլտաւիա պատահէր արիւնըռուշտ պատերազմն որ 'ի Գարթալ: Քանզի 'ի վերջ կոյս ամսեանն յուլիսի վեզիրն մեծ անց ընդ Դանուբ գետ հանդերձ մեծաւ մասամբ բանակին, և հակառակ խորհրդոց բազմաց հաստատեցաւ յառեննիներթալ ընդ առաջ Թշնամւոյն: Առաջապահ բանակին կարգեցաւ սպարապետն Ապտի փաշա. աջումն Թեխին զօրագլուխ Եկազ Ապազա փաշա, և ձախումն կուսակալն Անատոլ Հասան փաշա. և զգիշերին ողջոյն աշխատ եղեալ վասն հաստ- և շերտաւոր զբանակաւն պատնեշին, և մի ոմն յաւուր որերորդն Խալրահիմ Էֆէնտի անուն՝ ջահ 'ի ձեռին վերակա-

ցու եղև գործոնացն . որոյ վասն և Մաշալաճի կամ Քահրնկալ մականուն եղաւ նմա ։ Վէզիրն մեծ աւելի քան հարիւր հազար արամբք ճակատեցաւ ընդդէմ բանակին Բումեանցովայ , որ խանն Խրիմու հարիւր հազարաւ 'ի Թիկանց կուսէ Ռուսացն կայր ։ Յարձակեցան միանգամայն գունդք երեք 'ի բանակէն Ռուսաց՝ որոց զօրավարք էին Պաւէռ , Փլեմաննիքով և Պրիւս , և տիրեցին բանակատեղւոյն Օսմանեանց , և Թափեցին 'ի նոցանէ աւար բազում և Թնդանօթս հարիւր և քառասուն , և տուղս մեծամեծս երկուս՝ յորս էին ազգի ազգի ճեղանակք և նշանք պատուոյ առ 'ի տալ քաջացելոցն 'ի մարտին , և բաշխեցան առքա 'ի սպայս բանակին Ռուսաց . և եղև Թիւ անկելոցն 'ի ճակատուն հազար այր 'ի Ռուսաց և երկու հազար յՕսմանեանց ։

Յետ այնորիկ հապճեպով առեալ խորհրդոյ կողմեայց վէզիրն մեծ , յորում կէսք առէին պատնշափակ ամրանալ անդէն 'ի տեղւոջն . իսկ այլք վանդաւոր զխորհուրդն առայցին՝ յուղածել զդէպս պատերազմին Ջէնթայի . և յաղթեաց այս խորհուրդ ։ Վէզիրն դադարագնաց եղեալ անց գիշերախառն յայսկոյս հուպ յԽաղճի , և ապաստանեալ Ասպահ փաշա և Աղապայ փաշա երեսուն հազար զօրօք փախուցեալ անկան 'ի կողմանս Խամայիլայ ։

Զօրավարն Ռուսաց Ռեփնին առաքեալ 'ի Րումէանցովէ պաշարեաց զԻսմայիլ հնգետասան հազար արամբք · զոր անսեալ ամիրականացն Տաճկաց որ քան հազարք էին՝ խոյս ետուն 'ի Քիլի ։ Նոր աւետեաց լսելի եղև ընդ այն աւուրս՝ եթէ Սիլիհտար Իպրահիմ՝ փաշա վանեաց զՌուսս յՕր գաւիու , որ աւան է 'ի պարանոցին Խրիմու · սակայն այս ևս ուրախութիւն 'ի սուգ փոխեցաւ 'ի գուժել առժամն Քիլեայ 'ի Ռեփնինայ յերկրորդի աւուր ամենայն սեպտեմբերի ։

Խորհուրդ արար վէզիրն մեծ եթէ զո՞ր ինչ պատճառս վարկանել պարտ իցէ այսմ ամենայնի պարտութեանց , և զո՞ր հնարել գործմանս ։ Ոմէքին ասենք եթէ պատուհասել արժան է զփախստեայսն և ջնջել զանուանս նոցա 'ի համարոյ զօրականաց · զարման վառանգաւոր , որ և երբեմն ահագին խռովութեանց լեալ էր պատճառք յԱսիա ։ Այլք զամենայն զվնասն զխառնամբոխ մարտիկօքն արկանէին՝ որ Լէվէնտ և Կէօնիւլլիւ անուանին , զի նոքա նախ քան զայլս զէնընկէցք և թիկնադարձոյցք սովոր էին լինել · վասն որոյ և հաստատեցին զուռճիկս նոցա բարձել 'ի կանոնաւոր զօրականան 'ի խրախոյս նոցա · թող զայս , այլ և վերաւորեցն 'ի Ճակատամարտին որ 'ի Գարթալ՝ բաժանեաց վէզիրն գահեկանս

տասն հազար . և սակայն ոչ դղըր Թի-գասալըք փախուստէին 'ի բանակէ ան-տի զցայգ և զցերեկ ։

Յայնմ ժամանակի առին Ռուսք զԱք-քիրման , և յամսեանն սեպտեմբերի կոմսն Փանին էառ սաստիկ պատերազմաւ զամուրն Պէնտէր յետ երկամսեայ պաշարման . քանզի մեծաւ արիութեամբ զդէմ ունէին Ռուսաց պաշարեալքն՝ մինչև ձարակեցաւ 'ի նոսա տարաժամ մահ, յորմէ մեռաւ և զօրապետն Պէնտէրայ ։ Ժամս տասն տևեալ վերջին յարձակումն Ռուսաց անհնարին սաստկութեամբ յերկաքանչիւր կողմանց . և 'ի վրէժ մեծաց վնասուցն զօրս կրեցին Ռուսք՝ բազում անգթութեամբ վարեալ ընդ բնակիչս քաղաքին, էր զօրս սրախողխող արարին և էր զօրս ընդ փլածիւք տանցն կործանելոց և այրելոց թաղեցին, և ոգիս հինգհազար և հինգհարիւր յամայացեալ քաղաքէն 'ի գերութեան վարեցին, ընդ որս և զնոր սպարապետն Պէնտէրայ զՄէհէմմէտ Էմին փաշա և այլ ևս բդեաշխս երկուս ։ Յետ այնորիկ արձակեցին Ռուսք յԽամայլէ 'ի բանակ վեզիրին պատգամաւոր զոք, և ընդ նմա զհամարակալն Պէնտէրայ զՂասըմ էֆէնտի և զայլ ոմն . և ածէր պատգամաւորն թուղթ 'ի Ռումեանցովէ առ վեզիրն մեծ խօսել զհաշտութենէ՝ բայց առանց ինչ ընդ մէջ մտանելոյ օտար

պետութեանց ։ Եւ վէզիրն քանզի չունէր իշխանութիւն յարքայէ խօսել 'ի խաղաղութիւն , առաքեաց զԹուղԹն 'ի Կոստանդնուպօլիս , և բանիւ բերանոյ խոստացաւ պատգամաւորին զպատասխանին արքայի ։

Յամենայն նոյեմբերի առաւ 'ի Ռուսաց և ամուրն Իպրայիլ յետ ութսուտամն աւուրց սաստիկ պաշարման . և 'ի սմա ևս Ճորակէր ախտն ժանտ . և յարձակումն Օսմանեանց ներքուստ և արտաքուստ յօգն քաղաքին՝ դերևացաւ ամենևին ։ Եւ վէզիրն մեծ չուեալ բանակաւն յԻսաքճեայ մեկնեցաւ 'ի ձմերոց 'ի Պապա տաղի ։

Ամուր ամուր քաղաքք պետութեանն 'ի սահմանածայրս աշխարհին , Ադքերման , Պէնտէր , Քիլի , Իսմայիլ և Իպրայիլ այսօրինակ ելեալք 'ի ձեռաց Օսմանեանց՝ 'ի սուգ մեծ նստուցին առհասարակ զՄուստաֆա արքայ և զամենայն աշխարհն ։ Հրաման եհաս փոփոխութեան այլ և այլ կուսակալաց . փոխեցաւ և Գափլան քէրէյ , որում յաջորդեաց Սէլիմ քէրէյ . և վէզիրն մեծ աքսորեալ 'ի Փիլիպպէ՝ կարգեցաւ 'ի տեղի նորա կուսակալն Պոսնիոյ Սիլիհտար Մէհէմմէտ փաշա ։

Ընդ ամենայն ժամանակս պատերազմին մեծաւ ջանիւ Ճգնէին և ելեելս զմիմեամբք առնէին դեսպանք այլոց պետութեանց 'ի Կոստանդնուպօլիս՝

միջնորդ խաղաղութեան լինել ընդ Օսմանեանս և ընդ Ռուսս: Այլ Մուստաֆա արքայ քան յԱնգղիացին և 'ի Գաղղիացիս՝ 'ի կայսրն Գերմանացւոց վստահացեալ, յորդոր եղև դեսպանի նորին Թուկութայ ընդ ձեռն առագանւոյն՝ միաբանել զսէտութիւն իւր ընդ Օսմանեանս ընդդէմ Ռուսաց, և գաղանածածուկ խորհրդով առաջի տրար նմին բաժանել յիւրեանս զԼեհաստան՝ յետ վանելոյ անտի զՌուսս. այլ Թուկութ յայս տրար եթէ ոչ է ժամպատեհ զայդպիսեաց խորհելոյ, բայց միայն զկարևորն խաղաղութենէ. որոյ վասն և միջնորդ լինել ոչ դանդաղեցայց ասէր: Զնոյն յորդորանս և առ Գաղղիացին տրար արքայ. սակայն նոքա հնդետասան նաւս նեթ խոստացան առաքել նմա յօգնութիւն: Այսպ 'ի վեցերորդի աւուր ամսեանն յուլիսի յամին 1771 դաշնադիր եղև Թուկութ գիշերայն և 'ի ծածուկ ընդ Օսմանեանս՝ յանձն առնուլ զմիջնորդութիւնն, որով խոստանայր տալ Ռուսաց դարձուցանել յՕսմանեանս զամենայն տեղիսն դեռագեռ գրաւեալս 'ի նոցանէ, և յոտին պահել զազատութիւն ազգին Լեհաց. և Օսմանեանք խոստացան հատուցանել 'ի միամեայ միջոց ժամանակի քան հազարքսակս արծաթոյ, որ ըստ այնր ժամու արժէից գումարէին 'ի ֆլորինս

մեռատան միլիոն երկերիւր և յիսուն հազար ։ Ընդ Գերմանացւոյն միաբանեցաւ յետ սակաւուց և գեսպանն Փրիդերիկոսի արքային Բրուսաց Յէկէլին ։ Արդ 'ի հատանել Թղթոյն Րումեանցուցն 'ի Կոստանդնուպօլիս, րէիս էֆէնտին Իսմայիլ և համարակալն Օսման էֆէնտի յետ բազում խորհրդակից լինելոյ ընդ Թուկութայ և ընդ Յէկէլինայ ետուն պատասխանի, եթէ ոչ յանձն առնու արքայ խօսել 'ի խաղաղութիւն առանց միջնորդութեան Գերմանացւոց և Բրուսաց ։ Եւ 'ի ունդել դշխոյին Ռուսաց զպայմանն ազազատութիւն Օպրեզքովայ, խորհուրդ ետ Թուկութ և արձակեցաւ Օպրեզքով 'ի Պէլկրատ ։ Ի նմին ժամանակի գաղտ բանագնացութեամբ ընդ կայսերն Գերմանացւոց՝ յայտ արար նմա Կատարինէ զխորհուրդ իւր գրաւելոյ զԽրիմ և զՄոլտաւիա և զերկիրն Վլահաց. որով և ձեզ ոչ ինչ դժուարին լիցի ասէր տիրել Պոսնիոյ և Դալմատիոյ ։ Յետ սակաւուց առաջի արարեալ նմա և զբաժանումն աշխարհին Լեհաց՝ յոր միաբան էին և Բրուսք, յանձն էառ Կատարինէ զմիջնորդութիւն կայսերն առ 'ի դուլ զինուց առնելոյ մինչև ցորոշումն պայմանաց հաշտութեանն ։

Մինչ դեռ այս պատգամաւորութիւնք լինէին ընդ չորեսին պետու֊

թիւնան, առին Ուռհայ և զճուրճովն և զԴուլճա, և այրեցին զհամբարանոցսն որ յԽապճի: Յասեան ենիչէրիքն և ընդ զօրագլուխն որ խոյս տուեալ էր 'ի խոթունոյ և յօշատեցին զնա. և զօրավարն ենիչէրեաց Սիւլէյման աղա ձերբակալ արարեալ ապա զգլխաւոր պատճառս չարեացն՝ արկ զամենեսեան 'ի խորխորատ ուրեք, որոյ վասն և սա Գույուճի յորջորջեցաւ:

Խալ Սիլիհտար Մէհէմմէտ փաշա ձմերեալ 'ի Պաղարճըգ որ 'ի Պաղատաղի՝ յամառնան այլիլի խաղոց գնաց 'ի ճուրճովերկատաան հազարաւ և էառ զայն. և իբրև դարձաւ անդրէն 'ի բուն բանակն՝ եւես զի բազմացեալ էր յոյժ թիւ փախստականաց: Հրաման ետուեալ 'ի վերայ եդաւ ամենայն նաւահանգստից Սեաւ ծովուն՝ զի մի տայցեն ումեք անցք փախստի. և արի զօրավարն ենիչէրեաց Սիւլէյման աղա դիչերապահ լինելով շուրջ յածէր զցայգն ամենայն 'ի բանակին, այլ 'ի զուր: Ի նմին ժամանակի և զօրավարք Ռուսաց Կուտուզովիչ և Վէյսման և Միլորատովիչ 'ի զանազան տեղիս հարին զզօրս Օսմանեանց:

Զախողագոյն.քան զպատերազմն որ առ Դանուբաւ՝ պատահէին յայնժամ իրքն Օսմանեանց 'ի Խրիմ: Քանզի Սէլիմքէրէյ յետ ձմերելոյն 'ի Պապատաղի՝ ուր ուրեմն եմուտ 'ի նաւ և

գնաց 'ի Պաղչէսարայ. և փոխանակ խափանելոյ զմուտս Ռուսաց 'ի Խրիմ, անձնատուր լինէր 'ի զեղխութիւն և 'ի մեղկութիւն: Իշխանն Տոլկորուքի երեսուն հազար ռուս զօրականօք և վաթսուն հազար Նողայ Թաթարօք եկին հասին յանկարծ յՕր գափու: Զայն իբրև լուաւ Սէլիմ՝ զարթեաւ 'ի թմբրութենէն, և անցեալ 'ի գլուխ յիսուն և եօթն հազարաց գնաց ընդդէմ Ռուսաց. այլ նոքա յարձակեցան առին զՕր գափու և զամուրն Թաման միանգամայն, և հեղան զեղան երկուստեք 'ի Խրիմ: Յայնժամ զարհուրեալ Սէլիմայ և մեծապէս տագնապեալ՝ գօգցես միայն ճողոպրեցաւ 'ի Պաղչէսարայ: Իբրև հասին Ռուսք մերձ 'ի պարիսպս քաղաքին, խոյս ետ Սէլիմ 'ի Գարասուազ անուանեալ լերինն, ուր ամրացեալ էին և բազումք յընտանեաց իւրոց. սակայն և անդ ևս երկուցեալ յերեսաց թշնամեաց, եմուտ դարձեալ 'ի նաւ և սակաւուք ոմամբք փախեաւ դէպուղիղ 'ի Կոստանդնուպօլիս: Զայս իբրև զգացին Թաթարք, առ հասարակ ազդեալ խռովեցան, և լքան անկան յամենայն զօրութենէ, և բազումք ևս 'ի նաւս և 'ի նաւակս մտեալ զերծան 'ի ծովեզերեայս Պոնտոսի: Ընդ սոսա փախեաւ 'ի Սինոպ Ապազա փաշա որ բդեաշխ էր Օսմանեանց յամուրն Ենիգալէ. և սա

վասն իւրոյ վատութեանն գլխատեցաւ 'ի հրամանէն արքայի ։ Պաշարեցին Ռուսք և զՔէֆէ , և նեղէին սաստկապէս . և մինչև հասեալ էր յօգնութիւն քաղաքին Իպրահիմ փաշա 'ի Խարասու քաղաքէ, երդուեան Թաթարք զերդումն հաւատարմութեան գլխոյին Ռուսաց . և Տօլկորուքի եմուտ յաղթանակաւ յերեքտասաներորդի աւուր ամսեանն յուլիսի 'ի Քէֆէ , և ապա 'ի Կերչ և յԵնիգալէ ։ Առան ապա և Կէօզլէվէ և Սուտաղ , և Իպրահիմ փաշա ածաւ գերի 'ի Բեթրպուրկ ։ Առաքեաց Տօլկորուքի առ Կատարինէ և զերկուս որդիսն Սէլիմայ հանդերձ քառասուն և երկու իշխանօք աշխարհին . և մինչև 'ի դառնալ նոցա անդրէն՝ անուանեաց խան Խրիմու ազատ յՕսմանեանց զՇահին Քէրէյ ։ Միայն յառնուլ զՕզու և զԳըլպուրուն տկարացան Ռուսք . քանզի առաջնոյն զօրավար էր վէզիրն քաջ Ալի փաշա , որ կեղծ փախստեամբ ածձգեաց զՌուսս մինչև մօտ առ պարիսպն , և ապա հարուածեալ զնոսա չարաչար՝ ստիպեաց բառնալ զպաշարումն . և յերկրորդէն հալածական տարեալ վանեաց զՌուսս Ապտուլլահ փաշա ։ Եւ վէզիրն մեծ ըստ արժանեայն վարձահատոյց եղև երկաքանչիւր զօրավարաց ։ Իսկ Սէլիմ Քէրէյ որ իջեւանեալ էր 'ի Պիւյիւքտէրէ՝ 'ի ձեռն բարեխօսութեան համարակալին Օս-

մանայ հաղիւ զերծաւ 'ի ցասմանէն արքային ։

Վէզիրն մեծ խորհէր 'ի ժամանակին ածել զբանակն 'ի ձմերոց յԱդրիանուպօլիս . այլ բնակիչք քաղաքին ամբոխ արարեալ պատեցին զտուն զօրապետացն, մինչ 'ի ներքս զինեալք 'ի սուր և 'ի հրացան, և անհնարին կատաղութեամբ գոչեցին ընդդէմ վէզիրին և ասեն . « Զխրիմ մատնեցեր դու 'ի ձեռս Ռուսաց . արդ և զմեր աշխարհս մատնել կամիցիս նոցա » ։ Զգոյժ աղմկին լուեալ արքային 'ի Կոստանդնուպօլիս՝ կոչեաց վաղվաղակի զատենադպիր վէզիրին զՍպահիբրիզադէ Էֆէնտի, զայր քաջ և անվեհեր և ճշմարտախօս, և տեղեկացեալ 'ի նմանէ լիով ամենայն հանգամանաց պատերազմին և պատճառաց խռովութեանն՝ եհարց 'ի նմանէ և խորհուրդ պիտանի, և նորին խորհրդով արկ յիշխանութենէ զվէզիրն, և ընտրեաց դարձեալ զՄիւհսինզադէ Մէհէմմէտ փաշա ։ Սա յառաջ քան զամենայն 'ի բարեկարգութիւն զօրականին ուշ եդեալ, մեծաւ խստութեամբ պատուհասել սկսաւ զյափըշտակողս և զկեղեքիչս . զօրաժողով եղև այլ ևս տասն հազար արանց, և բաշխեաց զնոսա զափամբք Դանուբայ . ժողովեաց և համբարս բազումս, և մեկնեցաւ ձմերել 'ի Շումնա որ ամուր քաղաք է առ ոտս Պալքան լերանց ։

Ընդր եհաս առ վէզիրն Մագսուտ քէրէյ՝ անուանեալն յաղթայէ խան Խրիմու, և ընկալաւ 'ի նմանէ պարգևս հնգետասան հազար դահեկանաց ։

Ցամենեանն յուլիսի գուլ եղև զինուց երկուստեք ընդ ծով և ընդ ցամաք ։ Լուր եղև եթէ հասին 'ի քաղաքն Նաշ պատգամաւորք Ռուսաց կոմն Գրիգոր Օռլով և խորհրդականն Ալէքս Միխայլովիչ Օպրեզքով. և ընտրեցան պատգամաւորք 'ի դրանէն Օսմանեանց Նիշանճի Օսման էֆէնտի՝ այր շաղակրատ և թանձրամիտ, որպէս ասեն Վասըֆ և Րէսմի, և դատաւորն Կոստանդնուպօլսոյ Եասընճիզատէ, և համարակալ ոմն Քիւչիւք Խալլահիմ էֆէնտի ։ Եկին զհետ նոցա և դեսպանք Աւստրիացւոց և Բրուսաց Թուգութ և Ցեկէլին, և մեծապարգև մեծարեցան 'ի Շումնա 'ի վէզիրէն մեծէ սամուրենեօք և յամբարաւ և հալուէիւ ։

Տեղի ժողովոյն սահմանեալ էր մերձ 'ի Ֆոքշան քաղաք. և յիննեւտասներորդի աւուր ամսեանն օգոստոսի յամին 1772 համին ամենեքեան 'ի պատրաստեալ վրանսն. միայն թէ պատգամաւորք Ռուսաց չառին յանձն զմիջնորդութիւն դեսպանացն երկոցուն, իբր զի չունէին հրաման առէին 'ի դշխոյէն մերժէ վասն այսորիկ, թէպէտ և զբարեկամութեան յորդորանս 'ի խաղաղութիւն՝ մատչիւր յօժարու-

թեամբ ընդունիմք. ընդ որ դժկամակեցան դեսպանքն ոչ սակաւ. և Օսմանեանցն ևս պատգամաւորք մխիթարեալ զնոսա՝ առէպ առէպ խորհրդակից ընդ նոսին լինէին ։

Յառաջնում խորհրդի անդ հաստատեցաւ յերկարել զդուլ պատերազմին մինչև ցքսաներորդ առաջներորդ սեպտեմբեր ամսոյ. և յերկրորդին առաջի արարին Ռուսք երիս գլխաւոր պայմանս հաշտութեան ։ Առաջին, կարծել այնուհետև զամենայն պատճառս թշնամութեան ընդ երկուս պետութիւնս, որոյ վասն հարկ 'ի վերայ կայ առէին ինքնիշխանս թողուլ զԹաթարս Խրիմու ։ Երկրորդ անգամ, քանզի Օսմանեանք էին որ սկիզբն արարին պատերազմին, հարկ է առէին տուժել ձեզ իւիք իրօք զինուոր մեր. և յայս սակս պահանջէին զի համարձակ լիցի Ռուսաց նաւարկել յամենայն 'ի ծովս որ պատեն զտահմանօք Օսմանեանց, և զի վաճառականք Ռուսաց ևս վարեսցին ամենայն ազատութեամբք այլոց եւրոպական ազանց ։ Եւ երրորդ՝ այնպէս առէին յօրինել կազմել զիւրս հաշտութեանն, զի և Ռուսաց և Օսմանեանց մեծապէս օգտակար լինիցին արդիւնք իւրայն ։

Մեծաւ ուժգնութեամբ մերժեցին Օսմանեանք զառաջարկութիւն ազատութեան Թաթարաց իբրև զհակառակ

օրինաց և հաւատոյ. քանզի արքայս մեր
որպէս ամիրապետ և յաջորդ Մահմէ-
տի՝ իշխան է ասէին 'ի վերայ ամենայն
Սիւննի Տաճկաց. և հեռաւորութիւն
վայրաց միայն է որ խափանէ զնա 'ի վա-
րելոյ զնոյն իշխանութիւն և 'ի վերայ
Թագաւորացն Հնդկաց և Պուխարայի
և Մարոքայ որ նոյնպէս զՍիւննի աղան-
դըն պաշտեն: Օսման էֆէնտի սիրտ 'ի
բերան խօսեցաւ զայսմանէ բանս բա-
զումս յոյժ յոյժ, և տեղ տեղ սաս-
տէր ինն պատգամաւորացն Ռուսաց
լուռ կալ և համբերել մինչև աւար-
տեցից ասէ զբանքս: Եւ նոքա անհնա-
րինս սրտմտեալ, բայց 'ի չափու կա-
լեալ զանձինս ասեն. « Հանճար բա-
զում է յՕսման էֆէնտի, այլ բանք
նորա անիմանալիք են ». և խնդրեցին
գրով զիմաստ բանիցն: Յանձն առին 'ի
վախճանի Օսմանեանք շնորհել զազա-
տութիւն Թաթարաց. սակայն արքայի
պահեսցի ասեն դարձեալ կարգել
զխանս նոցա և զդատաւորս. և վասն
տուժելոյ զծախս պատերազմին խոս-
տացան տալ Ռուսաց զմասն ինչ Պե-
սարապիոյ՝ եթէ այնպէս հաճեսցի ար-
քայ: Բայց Ռուսք արարին պատաս-
խանի, եթէ ոչ ազատութիւն է այն
ազգի՝ յորժամ իշխան նորա ընդ այլով
կայցէ իշխանութեամբ. և յայտ ևս
արարին գրով, եթէ այս հրաման է
մեր 'ի դշխոյէն՝ զի թէ ինքնիշխան ա-

զատուԹիւն Թաթարաց հաստատեսցի ոչ, դադարեսցեն բանք և զայլոցն պայմանաց ։

Յետ այնորիկ պատգամաւորքն Օսմանեանց յետս կոչեցան, և Օռլով դարձաւ 'ի քաղաքն Եաշ. այլ Ռումեանցով գրեաց առ վէզիրն Թուղթ յորում յայտ առնէր զցասս սրտին ընդ անյաջողել բանադնացութեանցն, և մեղադիր եւս լինէր զի Օսման էֆէնտի չէառ յանձն յերկարել զդուլ պատերազմին ։ Յայնժամ վէզիրն մեծ արձակեաց առ Ռումեանցով զպատմագիրն խոհական զՎասըֆ էֆէնտի՝ որ 'ի հերուն հետէ 'ի գերութեան եւս անկեալ էր Ռուսաց և ապա ազատեալ, զի խնդրեսցէ դարձեալ զբանադադարութիւն վեցամսեայ ։ Մինչ դեռ ելանէր Վասըֆ 'ի խորանէ վէզիրին՝ առէ ցնա փոխանորդն Ռէսմի Ահմէտ՝ մի խնայել և ոչ 'ի մի ինչ առ 'ի յերկարելոյ զբանադադարութիւնն գոնեա զաւուրս սակաւս. քանզի յորմէ հետէ լու եղև դարձն Օսմանայ 'ի բանակ անդր՝ աւելի քան զկէս բանակին 'ի փախուստ դարձեալ էր, և մնացեալքն պատեհի փախստեան սպասէին ։ Ի հասանել Վասըֆայ 'ի Ռուսճուգ, պատուէր ետ զօրավարի տեղւոյն որ էր Տաղըստանի Ալի փաշա՝ զգուշանալ յոյժ զի մի զեան ինչ հասցէ Ռուսաց առ ժամն 'ի կողմանէ զօրաց իւրոց. ընդ որ դժկամակութեան

յայժ եցոյց Ալի փաշա . « Քանզի յանձնարկեցն է ինձ, ասէ, սանձել զպատերազմասէր եռանդն զօրաց իմոց . և եթէ չխափանէր վէզիրն մեծ՝ զխելքն իմ էր մեզ անցանել արդ ըստ Դանուբ , և տիրապետել ամենայն երկրին մինչև ՚ի Քիէվ քաղաք :

Մերձ ՚ի քաղաքն Եաշ պատահեցաւ Վաշիֆ պատգամաւորացն Օսմանեանց զի դառնային ՚ի բանակն , և մատուցեալ ՚ի կառսն՝ յայտնեաց առ Օսման էֆէնտի զպատճառս դարձեան իւրոյ : Ասէ ցնա Օսման . « Րումեանցով չունի իշխանութիւն յերկարելոյ զզինադադարութիւն . և վասնզի մեծ է պատուոյ օսմանեան պետութեանս խնդրել ինչ՝ որոյ կատարածն հաւաստի է » : Եւ Վաշիֆ քանզի գիտէր զբարս առնն և զմեծարանս նորա առ արքայն՝ եհարց ցնա եթէ զինչ արդ առնելիցէ ինքեան . և ասէ Օսման . « Դարձ ընդ իս ՚ի բանակն » . և նա դարձաւ : Հասեալ ՚ի Ճուրճով Օսման էֆէնտի ած զՎաշիֆ առ դեսպանս Գերմանացւոց և Բրուսաց . և նոքա յանդիմանեցին զդնացս Օսմանայ , և ստիպեցին զնա զի արձակեսցէ զՎաշիֆ ՚ի գործ յոր առաքեալն էր :

Բազում պատուասիրութեամբ ընկալաւ Րումեանցով զՎաշիֆ , և քառասուն աւուրց ևեթ զինադադարութիւն խոստացաւ , մինչև գրեսցէ զխնդրոյ

վէզիրին առ դշխոյն · իսկ Վասըֆ կեղծեալ տարակուսանս՝ եթէ հաւանեացի վէզիրն ընդ բանսն՝ խնդրեաց ժամանակ աւուրց տասանց մինչև հարցցէ ցնա ։ Ի վաղիւ անդր ժամանեալ 'ի Իսուաճուգ իբրև հարցաւ 'ի Տաղըստանի Ալի փաշայէն զելից իրացն՝ ետ պատասխանի · « Պատրաստ լեր անցանել ըստ Դանուբ յետ երից կամ չորից աւուրց » ։ Ընդ այս բանն գուճատեալ զօրավարքն և զդողանի հարեալ ասէ · « Անհնարին իմն է այդ անէր · զի զօրք Պոսնիոյ հարեալք լուծմամբ որովայնի՝ հանդոյն ճանճից օր ըստ օրէ անշընչանան , և այլք 'ի զօրականացս ըստ օրինակի խորդուց և ծիծառանց գունդագունդ փախուցեալք դիմեն 'ի հայրենի աշխարհս իւրեանց · դատարկ են արկեղք գանձուց , և համբար չիք · ասա աղաչեմ զվէզիրն մեծ առաքել առ իս զկարևորսն , ապա թէ ոչ՝ հրաշից պէտք են առ 'ի փրկելոյ զԻսուաճուգ » ։ — « Եւ զիարդ այսպէս վաղվաղակի փոխեցար , ասէ Վասըֆ , յանընկճելի արիութենէդ » ։ Ասէ զօրավարն · « Քանզի երկնչէի յայնժամ 'ի բանից յախորժանաց զորս զհամբաւի հարեալ էր Օսման էֆէնտի , և հարկ համարեցայ ըստ նորին ոճոյ յարդարել զբանս իմ » ։ Իսկ վէզիրն մեծ հանդերձ ամենայն ատենակալօքն այնչափ ուրախ եղև ընդ քառասնօրեայ դա_

դար զինուց, զի յարձակել խրուման_ դրէն զՎասլֆ՝ պարգևելոյ նմա և կա_ լուած մեծ հուպ ՚ի Գաւառահխաւր ՚ի փոքրն Ասիա :

Զհետ աւուրց քանից ընկալաւ մե_ ծերն ՚ի Բուսեանցումն և այլ Թուղթս՝ որովք խոստանայր նա ՚ի գլխոց դշխոյ_ ին զինադադարումն չորեքամեայ, և յայտ եա առնէր եթէ իշխանութիւն ունի Օպրէգքով բանագնաց լինել ընդ Օսմանեանս ՚ի Պուքրէշ : Ընտրեցաւ ՚ի մեզերէն նոր պատգամաւոր բէխ է_ ֆէնտին Այսախըրրիզադ, և ընդ նմա խորհրդականք Միւլէյման փէնաշ, Ա_ դայլուհ ալէյ, Խալլի էֆէնտի, և Վա_ սըֆ էֆէնտի . իսկ դեսպանք Գերմա_ նացւոց և Բրուսաց ոչ հրաւիրեցան ՚ի ժողովն :

Ի քաննեորրդի աւուր ամսեանն նոյ_ եմբերի սկիզբն արարեալ ժողովոյն, Օ_ պրէգքով լսեաց զԹաթարաց, և յառաջ քան զամենայն զծախուց պատերազ_ մին խօսեցաւ, որում նախկին պատ_ ճառ զՕսմանեանս համարէր . բայց Այսախըրրիզադ ժխտեալ զկրան զօրա_ ւոր բանիւք, և զԽրւեան եա զուգադէս պատճառս առաց եղծանելոյ հաշտու_ թեանն : Յետ բազում պատգամաւո_ րութեանց Օպրէգքով առաջի արար Օսմանեանց գրուած ինչ՝ յորում ՚ի տասն գլուխս բանից բովանդակէին ա_ մենայն պահանջմունք Ռուսաց . և այս

իմաստք էին գրուածոյն 'ի կարճոյ· «ա. Անյիշաչար լիցին Օսմանեանք ընակչացն Մոլտաւիոյ և երկրին Վլահաց, և ամենայն քաղցրութեամբ վարեսցին ընդ նոսա: բ. Ամենայն ամրոցք Վլաց աշխարհին դարձուսցին առ Օսմանեանս՝ պայմանաւ զի մի ևս վաճառք լիցին առ սոսա Վլացի գերեաց: գ. Դեսպանք Ռուսաց պատիւ մեծ ունիցին առաջի օսմանեան դրանն: դ. Ամենայն պաշտօնեայք և Թարգմանք դեսպանացն Ռուսաց ազատ լիցին յամենայն հարկաց և 'ի տրոց: ե. Ուրացողքն 'ի քրիստոնէական հաւատոց եթէ կրկին և երեքկին հարցաքննեալք առաջի Թարգմանաց հաստատուն կայցեն 'ի կարծիս իւրեանց, մի բռնադատեսցին 'ի Ռուսաց: զ. Բայց նոյն ուրացողք եթէ գողանայցեն ինչ, ստիպեսցին դարձուցանել անդրէն զգողօնն: է. Մեծն և փոքր Կապարթա Ռուսաց տացին: ը. Խանն Խրիմու ընտրեսցի այսուհետև 'ի նոցին իսկ 'ի Թաթարաց: թ. Գերեդարձ լիցի գերեաց երկուստեք առանց փրկանաց և փոխանակութեան, այլ 'ի շնորհակալեաց ասկի: ժ. Յետին դաշն հաշտութեանն (որ 'ի 1643) անզօր և յոչինչ դրեսցի»:

Զայս ամենայն պայմանս իբրև ընկալան Օսմանեանք և ձեռնագրով իւրեանց հաստատեցին, Օրլեզեօվ

բանս 'ի մէջ էառ և զիրացն Խրիմու. և յետ երկար զրուցից սահմանեցաւ, Ա, զի յամենայն մզկիթս Խրիմու յիշատակեսցի դարձեալ անուն արքային Օսմանեանց. Բ, զի խանք ընտրեալք ազատօրէն 'ի Թաթարաց՝ հաստատեսցին յարքայէ 'ի նմին իշխանութեան. և Գ, զի դինականք Թաթարաց 'ի Կոստանդնուպօլսոյ ընկալցին զվճիռս հաւատոյ և քաղաքականութեան ։

Զկնի աւուրց քառասնից առաջի արար Օպրեզքով և այլ ևս եօթն գլուխս բանից զորս դեռ ևս ընկալեալ էր 'ի Բեթրպուրկէ. Ա, զի Ռուսք երաշխաւորք ծանիցին ազատութեան Թաթարաց. Բ, զի Կերչ և Ենիգալէ մնասցեն 'ի ձեռս Ռուսաց, և նաւք սոցա համարձակ խաղասցեն ընդ Սեաւ ծով և ընդ Արշիպեղագոս. Գ, զի այլ ամենայն ամրոցք Խրիմու թողցին 'ի Թաթարս. Դ, զի իշխանն Մոլտաւիոյ Գրիգոր Հիքա որ գերեալ էր 'ի Ռուսաց՝ հաստատեսցի դարձեալ յիշխանութեան որդւոց յորդիս, և հարկեսցի Օսմանեանց յերկս ամս միանգամ այնչափ ինչ ևեթ՝ որչափ իցեն հարք երկրին իւրոյ ամ ըստ ամէ. Ե, զի մշտ կացցէ ոք 'ի Կոստանդնուպօլիս 'ի դիմաց պետութեանն Ռուսաց. Զ, զի Գըլպուրուն 'ի Ռուսս թողցի և Օզու քանդեսցի. և Է, զի Թագաւորն Ռուսաց պատուեսցի յՕսմանեանց փատի-

չաւ կոչմամբ, և պաշտպան ծանուցի ամենայն յունադաւան հպատակաց դրանն արքունի ։ Եւ յաւելոյր ասել գլխոյն, զի թէ յանձին ունիցին Օսմանեանք զպայմանս զայսոսիկ՝ ոչ ինչ աւգանս պահանջեսցին 'ի նոցանէ ։

Բոլըք կալաւ Ապտուրրեզագ զխըստութենէ պայմանացս և ասէ ․ « Լաւ է մեզ հեղուլ մինչև ցյետին շիթս արեան մերոյ, քան զմի 'ի պայմանացդ անգամ յանձն առնուլ » ․ և սակայն բստ խորհրդոյն Օպրեզքովայ արձակեաց զԱպտուլլահ ալէյ 'ի Շումնա հարցանել զկարծիս աւագանւոյն ։ Եւ նոքա ատեան մեծ կազմեալ ասեն ․ « Քաջայայտ է 'ի բանից այտի, զի ամենայն ջանք Ռուսաց բերին 'ի գրաւել զԿերչ և զԵնիգալէ ․ բայց լաւ ես լիցէ տոււանել յիսուն հազար քսակս արծաթոյ, քան անզի տալ այդպիսի պայմանաց խաղաղութեան՝ որ վնասակարագոյնք են քան զառանձնամեայ պատերազմ » ։ Զայս կարծիս ասենին տարաւ Ապտուլլահ ալէյ 'ի Կոստանդնուպօլիս, և անդ ևս մերժեցան պայմանքն ․ և դարձաւ 'ի Պուքրէշ ։ Բայց Ապտուրրեզագ քանզի պատուէր ընկալեալ էր 'ի վէզիրէն՝ քաղցրութեամբ 'ի գործ արկանել և յերկարաձգել զբանն, բազումս աշխատ եղև 'ի համոզել զՕպրեզքով, այլ շահեցաւ և ոչ ինչ ։ Եհաս առ նա 'ի ծածուկ և թուղթ յարքայէ՝

զի խոստացի Ռուսայ դահեկանս եօ-
թանասուն միլիոն, կամ ըստ Վասըֆայ
ութսուն միլիոն, եթէ կասեցին 'ի
պահանջելոյ զԿերչ և զՅենիգալէ. առ
որ եւ պատասխանի Օպրեգքով.
« Համարձակիմ երաշխաւորել քեզ, զի
պետութիւնս մեր չքաւոր առ 'ի քէն
մնուանեալ ոչ ինչ դժուարացի նոյն-
չափ ինչ ձեզ պարգևել, եթէ յանձն
առնուցուք այժմէն զկարևոր պայ-
մանքս »։ Եւ 'ի սատկանալ վիճմանցն
յուշ արար Ապտիւրրիզագ Օպրեգքո-
վայ զհաշտութիւնն առ Փրութաւ, և
զվեհանձնութիւն սպարապետին Օս-
մանեանց. « Յորժամ Պետրոս թա-
գաւոր ձեր 'ի յետին տագնապ ժա-
մանեալ ոչ այլ ինչ ճարակ գտանէր
առէ, բայց զկեղևս ծառոց, Օսմա-
նեանս պետութիւն ձեռնպահ եղև 'ի
սպանանելոյ զնա և կամ 'ի գերու-
թիւն վարելոյ, և շատ գրեաց զոր-
չութիւն Ազովայ։ Յետ այնորիկ ոչ
կացէք դուք 'ի խոստման ձերում,
այլ յայնժամ ևեթ ձեռն 'ի գործ ա-
րարէք յորժամ մտադրուտ հասեալ
կայր 'ի վերայ ձեր պատերազմն նոր »։
— « Սպարապետն ձեր Պալթաճի
Մէհէմմէտ փաշա, ասէ Օպրեգքով,
բազում զգօնութեամբ վարեցաւ յայն-
ժամ. քանզի գիտաց նա խորհել, զի թէ
բռնադատէր զյուսահատ զօրականն
'ի նոր ճակատամարտ, վասնզի անշուշտ

էր կորուսանելոյ զառաջեան յաղթութիւնն ։ Եւ բաժանեցան 'ի միմեանց երկոքին կողմանքն յամսեանն մարտի յամին 1773 , և արքայ առանձինն յայտարարութեամբ ծանոյց այլոց եւրոպական պետութեանց զպատճառս քակտելոյ ժողովոյն ։

Ի ժամանակի անդ զինադադարման արժանի յիշատակի դէպք էին որ անցին յԵգիպտոս ։ Բռնակալն Ալի պէյ ապստամբեալ և երկրին Ասորւոց և Արաբիոյ՝ յինքն յանկոյց և զշէխն Դահէր որ նոյնպէս բռնացեալ էր յամուրն Աքեա ։ Բանադրեալ եղեալ և ընդ ծովակալն Ռուսաց Օռլովայ՝ ընկալեալ 'ի նմանէ խոստմունս բազումս և տիրեաց ամենայն Պաղեստինոյ . այլ 'ի վերջէ պատրեալ 'ի քեռառնէն իւրմէ որում անուն էր Աբուզէհէպ՝ խորտակեցաւ 'ի պատերազմի ուրեք դաւաճանութեամբ նորին , և ինքն վիրաւորեալ ածաւ յԵգիպտոս և անդ մեռաւ . և գտան 'ի ճակատուն ընդ անկեալսն չորք սպայք Ռուսաց և իբր չորեքհարիւր զօրականք ։ Եւ Աբուզէհէպ ինքնին տարաւ 'ի Կոստանդնուպօլիս զկառափն Ալեայ և զչորեցունց սպայիցն ։

Լուծումն ժողովոյն Պուքրէշայ արգոյն հակառակ էր կամաց արքային և վէզիրին մեծի և Աբտիւլրիզագայ , և արգասիք գիտնականացն ևեթ անյողդողդ հաստատութեան ։ Այլ քանզի

հարկ 'ի վերայ կայր վերստին 'ի գէն ընթանալ, հրովարտակ արար արքայ առ ամենայն զօրագլուխս եւ կուսակալս վառել կազմել զզօրս իւրեանց առ 'ի ձեռս բերելոյ արութեամբ քաջութեամբ զխաղաղութիւնն ցանկալի։ Եւ յոլովք յաւագ որերոյն օրինակ բարի առեալ՝ յիւրեանց ընչիցն կազմեցին գունդս բազումս յօգնում հայրենի աշխարհին։

Ընդ լուծանել ժողովոյն անցին Ռուսք դարձեալ ընդ Դանուբ մերձ 'ի Պալիա ալօղաղի, ընդ մէջ Սիլիստրէի եւ Հըրշովայ, եւ 'ի շրջակայս Դուըշայի, եւ խաղացին գնացին ընդ մղոնս իբրու հարիւր եւ քսան մինչեւ 'ի Պազարճըգ եւ 'ի Գարասու։ Սակայն կամեցեալ առնուլ եւ զՌուսճուգ՝ հարան չարաչար յՕսմանեանց որոց զօրավարէր Տաղըստանի Ալի փաշա. որ եւ թափեաց 'ի Ռուսաց Թնդանօթս երիս, եւ ձերբակալ արար գերիս հազար, ընդ որս եւ զկոմսեր եղբայր զօրապետին Ռուսաց զՌեփնինն. եւ վէզիրն մեծարանօք ընկալեալ զնա առաքեաց 'ի Կոստանդնուպօլիս. իսկ առ Ալի փաշա մեծամեծ պարգեւս արձակեաց։

Յայնմ ժամանակի պաշարեաց Ռումեանցով զամուրն Սիլիստրէ՝ յոր 'ի վաղուց հետէ ակն եդեալ էր, եւ եօթանասուն Թնդանօթք տեղացին անդադար զհուր 'ի քաղաքն ժամս վեց, մին-

չև խոյս տալ ընակչաց յարուարձանեայս նորին : Ցարձակեցան մինն և անդր զօրք Ռուսաց · այլ ապարապեան Օսմանն փաշա մարտ եդեալ կռուեցաւ ընդ նոսին ահագին քաջութեամբ, և ստիպեաց զնոսա 'ի փախուստ · և մեռան 'ի ճակատուն 'ի զօրացն Ռուսաց ոգիք ութհազար, և հազար մի վիրաւորեցան : Նա պատուեցաւ Օսմանն փաշա Ղազի յորջորջմամբ և սամուրենեաւ և ականակուռ սուսերաւ · և եօթն հազար Ճեզանակք և փետուրք պատուոյ բաշխեցան 'ի զօրականսն :

Մինչև մեկնեալ 'ի ձմերոց՝ կամէր Բումեանցովն հանդէս ինչ առնել քաջութեան յայսկոյս Դանուբայ և այնպէս կնքել զարշաւանն : Սպարապետն Տօլկորուքի պատուէր ընկալաւ անցանել 'ի Հըրշովա, և զօրավարն Ունկերն 'ի Գարասու · և առ Գարա Մուրատ աւանաւ միացեալ երկոցուն բանակացըս բախեցան մեծաւ սաստկութեամբ ընդ Օսմանեանս և վանեցին զնոսա մինչև 'ի Պալզան և 'ի Շումնա, և առին զամենայն զկահ բանակին · և Տաղըստանի Ալի փաշա փախուցեալ անկաւ 'ի Պազարճըք : Ապա վերստին գրոհեալ երկոցուն բանակացն Ռուսաց յիրերաց՝ Ունկերն դիմեաց 'ի պաշարել զՎառնա, և Տօլկորուքի 'ի Շումնա : Զայն իբրև լուաւ վեզիրն մեծ՝ տագնապեալ յանկարծադէպ իրօքն

կազմեցաւ 'ի պատերազմ. այլ արքն Աշտարխանեայք գիմացրաւ եղև առ_նուլ զառաջս Թշնամւոյն, և սակաւա_ձեռն գնդաւ յարձակեալ յայլակար_ծուց 'ի Պաղարճիգ՝ հալածական տա_րաւ զՌուսս : Յամենանն հակառակելոյն պաշարեցին Ռուսք և զԱզարնա յերից կողմանց միանգամայն. այլ Քէլէճի Օսման փաշա հասեալ 'ի Սեաւ ծովէ, և պաշարեալքն 'ի ներքուստ անտի մարտ եդեալ վանեցին զՌուսս, և Տոլ_կորուքի մեկնեցաւ 'ի Պաղատաղի, և Ռւնկերին յԻսմայիլ :

Գոյժ պարտութեանն Օսմանեանց 'ի Գարասու մեծապէս սրտաբեկ արար զաւագանին որ 'ի Կոստանդնուպօլիս. և առաւել ևս գառնացաւ նոցա սուգն անբուժելի խօթութեամբ արքային և մահուամբ նորա : Քանզի Մուստա_ֆա արքայ 'ի բազմաց հետէ հիւան_դացեալ անկեալ դնէր 'ի մահիճս. և լուեալ 'ի գեղջկաէն զգոյժ պարտու_թեան զօրացն իւրոց, գոչեաց զայ_րագին. « Տաղտուկ է ինձ այսօրինակ մրցութիւն սպարապետաց իմոց. ես ինքնին երթայց յԱդրիանուպօլիս »: Ի նմին գիշերի կոչեաց զանեղապահն և զՇէխ էֆէնտին և յայտնեաց նոցա զխորհուրդ իւր. և յասել նոցա եթէ հարկ է առնել խորհրդոյ կազմել վասն իւրոցն՝ ժողովեցան 'ի վաղիւ անդր դիւա_նականք և աւագանին ամենայն, և յայտ

արարին եթէ չէ օրէն չէ պատշաճ ա-
մեննեին գնալ արքայի յԱդրիանուպօլիս
յայնպիսում ժամանակի և յայնմ խռո-
վութեան վիճակին : Նա յետ երկամ-
եայ աւուրց մեռաւ Մուսդաֆա ար-
քայ 'ի քսաներորդի չորրորդի աւուր
ամսեանն դեկտեմբերի յամին 1773,
Թագաւորեալ ամս եօթն, և ցուցեալ
յամենայնի զկիրճս խիզախութեան անաչու-
թեան աշխարհին : Իսկ ուսումնասի-
րութիւն նորա եւ առաւել յայտ է 'ի
տնօրութենէն որով յամենայն գիշերս
պահոց րամազանին կոչէր առաջի իւր
զգասս գիտնականաց և լսէր զորանա-
խօսութիւնս նոցին և զմեկնութիւնս 'ի
վերայ բանից կուրանին. և ձեռնա-
րուեստն իւր կազմ էր մատանից 1 :
Սիրէր և շինութիւնս առնել, որպէս
տեսաւ. և նա է որ արտաքոյ Ենի գա-
փու դրան շինեաց թաղ մեծ՝ որոյ եր-
կոտասան հազար կանգնոյ երկայնու-
թիւն է, և վեցհազար լայնութիւն : Նա
Թագաւորեաց փոխանակ նորա կրտսեր
եղբայր նորին Աբտիւլհամիտ Ա :

1 Քանզի պատուէր է մարգարէին նո-
րանց, զի ամենայն արքայազունք ուսանի-
ցին 'ի մանկութենէ արուեստ ինչ. որովհե-
տև, ասէ նա, և Դաւիթ զինագործ էր. և
Սողոմոն կողովահիւս. ամէն իրի և յարգա-
նի Օսմանեանց անյեղլի է օրէնս այս, բայց
որոյ և Օսման Գ. Մուստաֆա յօրինէր :

# ՍՈՒԼԴԱՆ ԱՊՏՈՒԼՀԱՄԻՏ Ա․

ԱՊՏՈՒԼ ՀԱՄԻՏ *արքայ որդի էր Ահմէտայ երրորդի. և 'ի մեռանել հօր իւրոյ հնգեմեան գոլով քառասուն և ութ ամաց էր յորժամ թագաւորեաց : Նա նախ ինքնագիծ հրովարտակաւ հաստատեալ զվէզիրն և զամենայն զաւագանին յիւրաքանչիւր պաշտամունս, յաւուրն վեցերորդի գնաց յէյուպ ըստ վաղընջուց սովորութեան ածել զսուսերն ընդ մէջ մեծաշուք հանդիսիւ :*

*Այս առաջին անգամ չբաշխեցան 'ի զօրականս պարգևքն սովորականք, որովհետև դատարկացեալ լինէր գանձն արքունի 'ի պատճառս վերահաս պատերազմին. թէպէտ և մահուամբ ականաւոր իշխանաց ոչ սակաւ գանձք մթերեցան ընդ նոյն ժամանակս յարքունիս : Քանզի Ապուզէհէպ առաքեաց յեգիպտոսէ չորեքհազար քըսակս արծաթոյ յընչից Ալի պէյին. Մուստավանճի Ալի փաշա դեռ ևս վախճանեալ եթող քսակս հազար և հինգհարիւր. շէխն Դահէր մատուցանէր ար-*

քայի ամի ամի քսակս եօթն հազար՝ պայմանաւ զի տիրեսցէ Աքեայ և Սպատայի ազգաւ, և որ այլն են։

Փոփոխեաց արքայ զոմանս յաւագորերոյն ըստ յաճախ սովորութեան. և յետ սակաւ աւուրց երթեալ 'ի Քեաղաթխանէ 'ի զնին եկաց վարժից Թնդանօթաձիգ զօրաց, և հաճեալ ընդ մարզս նոցին հրաման ետ պարգևել հրահանգողի նոցին, որ էր պարոն Թօթ, լի քսակաւ ոսկի։

Այսուհետև Համիտ արքայ, որպէս և վէզիրն մեծ Միւհսինզատէ և աւագաբեարն ամենայն, կամէր խաղաղութիւն առնել ընդ Ռուսս որպէս զխարդ և հնարիցէ. այլ քանզի գիտնականացն գաղտ առ հասարակ պնդէին՝ եթէ հակառակ է դենին և ճշմարիտ պետութեանս մատնել 'ի ձեռս Ռուսաց զԿերչ և զԵնիգալէ, հրաման եղև սկիզբն առնել պատերազմին այս հինգերորդ անգամ։ Աւուրբք յառաջ արձակեաց Րումեանցով 'ի բանակն արքունի սպայ զոմն խնդակից լինել վէզիրին մեծի ընդ թագաւորել նորոյ արքային, և միանգամայն առաջի առնել նմա զհաշտութիւն խաղաղութեան ըստ պայմանացն հաստատելոց 'ի Պուքրէշ նախ քան զլուծանել ժողովոյն։ Զնոյն գրեալ էր և առ դեսպանսն Գերմանացւոց և Բրուսաց, և նոքա զամենայն ջիգն 'ի վեր արկեալ ջանացին հնարս հաշտու-

թեան դառնել . սակայն ՚ի զուր :

Յամսեանն ապրիլի րէիս Էֆէնտին Ապուխըրլըզադ առաքեցաւ յատումն Հըրշովայ , և Նէյլի Ահմէտ աղա արձակեցաւ յԱդրիանուպօլիս՝ զի խափանեսցէ զանցս փախստականաց : Այլ Ռուսք յարձակեցան միւս ևս անգամ ՚ի Պազարճըգ . և յառաջապահ գունդ բանակին Ապուխըրլըզադայ դիմեաց յօժանդակութիւն քաղաքին : Զօրավարքն Ռուսաց Քամէնսքի և Սուվորով հալան բախեցան ընդ Օսմանեանս որոց քսան և հինգ հազար էր թիւ համարոյ , և ցիր և ցան կացուցին զնոսա , և առին ՚ի նոցանէ թնդանօթս քսան և ինն , ընդ որս և զմի ՚ի մեծամեծ թնդանօթիցն զորս ածեալ էր Ռուսաց ՚ի պաշարել անդ զՍիլիստրէ : Մինչդեռ Ապուխըրըլզադ և եղբայր խանին Խրիմու Պախթքէրէյ փութային հասանել ՚ի տեղի ճակատուն՝ տեսին զի ենիչէրիք համագունդ դարձ առնէին ՚ի բուն բանակն . ասէ ցնոսա Ապուխըրլըզադ . « Զի՞ է զի թողէք , եղբարք , զպատերազմն սուրբ » : Ասեն . « Զվիրաւորս մեր դարձուցանեմք » : — « Եւ ինչ պիտոյ , ասէ , ընդ իւրաքանչիւր վիրաւորս յուղարկ երթալ յխումն արանց . և երկուք ոմանք չիցե՞ն շատ . հապա դարձցին այլք ՚ի պատերազմ . և եղէց ձեզ առաջնորդ » : — « Ո՞ զի հանճարեղ ես ՚ի խօսել՝ ասէ մի ոմն ՚ի

նոցանէ․ զու հեծեալ ես յերիվար, և մեք հետի գնամք․ եթէ վասն ինչ մեզ հասցէ, զու նախ առաջին փախուցեալ զերծանիցիս ”։ — “ Քաւ լիցի ինձ թողուլ երբեք և լուանել զձեզ, գոչեաց Աղաթլուրիզադ․ եթէ կամիք և ես ևս հետիոտս ընթացայց իբրև զձեզ ”։ Իսկ աչա թնդումն հրացանի միոյ եհատ զթել զուարթութեանն, և յարեաւ աղմուկ մեծ 'ի անդուռն անդ․ յոլովք յուղեկցացն Աղաթլուրիզադայ անկան անդէն, և ինքն և Պախթ քերէյ միանգի ճողոպրեցան 'ի փախուստ։

Յայնմ վայրի յառաջեցին Ռուսք և հասին մինչև յԷնիպազար մերձ 'ի Շումնա, ուր ամրացեալ նստէր վէզիրն ութ հազար արամբք։ Բէխսն Աղաթլուրիզադ էֆէնտի փորձ փորձեաց վանել խրախուսական բանիւք զզօրս և զընտկեչս քաղաքին 'ի պաշտպանութիւն անձանց և կանանց և որդւոց իւրեանց։ Ապա և հրամանն խիստ 'ի վերայ եդաւ ամենեցուն որ փախչել անտի կամիցին։ Աւենտադպիր փոխանորդի վէզիրին Նուզհէթ էֆէնտի կամեցեալ խոյս տալ 'ի քաղաքէն՝ զգեցոյց կնոջ իւրում հանդերձ առնացի զի և զնա փախուսցէ։ Կասկած կալաւ զբարապան քաղաքին զկրացն, և 'ի վերայ եղ դաւաճանութիւն․ և զօրականքն մոլեգնեալ մերկացին զսուսերս իւրեանց և յարձակեալ խողխողեցին զկինն և զայր նորա։ Նուզհէթ

Էֆէնտի մինչ չև մեռեալ էր աղաղա-
կեաց և ասէ. « Ո՛րք, աղախին ըէխին
է կինն իմ »: Սմին իրի ևս առաւել
գգրգռեալ զօրականացն՝ ընթացան 'ի
խորանն Ապտիւլրիզագայ: Նորա խնա-
ցեալ զաղմուկն, և աճապարեալ ան-
կեալ էր 'ի վրանն՝ յորում պահէր գրօշ
նուիրականն. անդր դիմեցին և աղ-
միկեալքն. այլ հազար Աննուռուք
կարգեալք 'ի վէզիրէն առ դուրս վրա-
նին՝ հարին և ցրուեցին զնոսա. և Ապ-
տիւլրիզագ դաղտագողի ելեալ 'ի
Շումնայէ ապրեցաւ փախստեամբ 'ի
Կոստանդնուպօլիս, և հազիւ զերծեալ
'ի մահուանէ աքսորեցաւ և բանտեցաւ
'ի Քիւթահիա:

Մինչդեռ Ապտիւլրիզագ փախու-
ցեալ երթայր 'ի Կոստանդնուպօլիս,
Քամենսքի ելին եհաս հանդէպ Շում-
նայի, և 'ի չորեքտասաներորդի աւուր
ամսեանն յուլիսի պաշարեաց սաստկա-
պէս զվէզիրն յամենայն կողմանց: Տագ-
նապեցաւ Մուհսինզատէ յոյժ յոյժ,
և առաքեալ վաղվաղակի պատգամա-
ւոր զոմն առ Ռումեանցով խնդրէր
դուլ առնել զխնուց. այլ 'ի չառնուլ
նորա յանձն և 'ի պահանջել զհաշտու-
թիւն՝ արձակեաց պատգամաւորս հաշ-
տութեան զՐէսմի Ահմէտ փաշա և
զՄիւնիփ Ահմէտ 'ի Գայնարճըգ, ուր
անդ էր Ռումեանցով, 'ի տեղւոջ յո-
րում 'ի ճակատամարտի ուրեք Ռուս-

ցաց ընդ Օսմանեանս 'ի հերուն հետէ՝ անկեալ էր արի զօրավարն Վէյսման։ Միանգամայն և Լալէլի Մուստաֆա տարաւ 'ի Կոստանդնուպօլիս զԹուղթ վէզիրին ստորագրեալ յամենայն աւագանւոյն և 'ի զօրավարաց զօրուն, յորում յետ առաջի անելոյ համառօտիւ զաղէտալի հանգամանս բանակին՝ հայցէր զհաստատութիւն պայմանացն խաղաղութեան։

Ի քսաներորդի առաջներորդի աւուր ամսեանն յուլիսի, այն օր էր յորում հաստատեալ էր երբեմն դաշն ուխտին որ առ Փրութ գետով, եղև հաշտութիւնն խաղաղութեան 'ի Գայնարճըգ ըստ պայմանացն հաստատելոց 'ի Պուքրէշ. միայն թէ պայմանեցաւ ևս զի Օսմանեանք յերից ամաց ժամանակի հատուսցեն Ռուսաց չորս միլիոն րուպլիս, և Ռուսք մեկնեսցին 'ի կղզեաց Յունաստանի և յամենայն տեղեաց զորս գրաւեալ էին յայնմ արշաւանին. բայց միայն զԿերչ, զԵնիգալէ և զԱզով և զկրկինն Կապարթա, և զՕզու և զԳըլպուրուն կալցին յիւրեանս։ Իսկ զիրացն Լեհաց որ նախկին պատճառք էին պատերազմին՝ և բանք յիշատակի անգամ ոչ եղեն։

Միւհսինզատէ փաշա ընդ կնքել դաշանցն արկաւ յիշխանութենէ, և մինչդեռ դառնայր 'ի Կոստանդնուպօլիս՝ հիւանդացեալ մեռաւ զճանապար-

հայն . Են որք առեն եթէ դեղամահ եղև 'ի հրամանէ աւագանւոյն կոստանդնուպօլսոյ , որպէս զի 'ի պահանջել Օսմանեանց 'ի նմանէ զհամար անտրգական հաշուեթեանն՝ մի կարասցէ ամբաստան լինել զնոցանէ և անբասիր առնել զանձն իւր :

Իբրև այսօրինակ վախճան եղև մեծի պատերազմին , Օսմանեանք միա եգին այնուհետև 'ի նուաճել զմանաւոր ապստամբս իւրեանց աշխարհին , որ ձեռնտու լեալ էին 'ի թշնամիս , և որ պատճառ 'ի պատերազմէն առեալ խռովէին զերկիրն : Իշխանն Մորաւիոյ Հէքա գլխատեցաւ և կառափն նորա ածաւ 'ի կոստանդնուպօլիս , փոխանակ զի ոչ գիտաց թագուցանել զոր 'ի ներքս 'ի սրտին ունէր զհակամէտ բերումն առ Ռուսս . և ծովակալն Հասան ալէյ զերծոյց զպետութիւնն յերուզակաց ոմանց որ 'ի հերուն հետէ տագնապէին զընակիչս մերձագաւառացն . կալաւ և գլխատեաց զԱյվազ ալա զբռնացեալն 'ի կողմանս Զմիւռնիոյ , և զծերունի բռնակալն զԴահիր 'ի նեղ արկեալ յԱքրա 'ի ծովէ և 'ի ցամաք կուսէ՝ խորտակեաց մինչ 'ի սպառ . և 'ի փախչել անդ Դահիրայ ընդ լեռնակողմն կոյս տապաստ արկին զնա Օսմանեանք : Հասան ալէյ կարգեաց 'ի տեղի նորին կուսակալ Աքրայի և Սայտայ զԱհմէտ փաշա զմակ-

անուանեալն Ճէզզար, այս ինքն է մսագործ, որ յետ սակաւուց ապստամբեաց և նա յարքայէ։

Իսկ Ապտիւլ Համիտ արքայ գիտակ գոլով՝ եթէ ոչ յոյժ յերկարեսցի խաղաղութիւնն այն որ կնքեալ ընդ Ռուսս վնասուք իւրոյ պետութեանն, և թէ քանի կարեւոր պէտք իցեն կանոնաւոր հրահանգաց զօրականին առ զդէմ ունելոյ Եւրոպացւոց, խնդրեաց ընկալաւ 'ի Գաղղիոյ զօրավարս հմուտս իրաց զինուորութեան, և սկսաւ վարժել 'ի նմին և զիւրսն, մանաւանդ զումբարաճիդ զօրականս. և ծովակալն Հասան պէյ նովին նախանձաւորութեամբ իւրոյ արքային վառեալ՝ բարեկարգեաց յոյժ յոյժ զնաւահանգիստն Օսմանեանց։

Ի հեռանալ Ռուսաց 'ի Խրիմէ չփոթք անհնարինք ծագեցան 'ի կղզւոջն յամին 1775. զի Տէվլէթ քէրէյ խան անձնատուր էր յՕսմանեանս, ուր ժողովուրդ իւր ըստ մասին լաւ համարէր 'ի Ռուսս հատուածիլ, և զՇահին քէրէյ կացուցանել իւրեանց առաջնորդ. ամին իրի գունդք Ռուսաց մտեալ դարձեալ 'ի Խրիմ՝ խաղաղութիւն առնելոյ աղագաւ, և Տէվլէթ նեղեալ 'ի Ռուսաց և 'ի Թաթարաց միանգամայն՝ փախեաւ ահաբեկ 'ի Կոստանդնուպօլիս. և արքայ բնակեցոյց զնա 'ի կողմանս Չաթալճայի, այն

է փարսաղխա ։ Յայնժամ Ռուսք կարգեցին խան փոխանակ Տէվլէթայ զՇահին . և 'ի բողոքել դրանն Օսմանեանց զայնմանէ՝ Շահին ապաւինեցաւ առ Ռուսս , և Օսմանեանք առ ժամն ընտրեալ կացուցին այլ խան զՍէլիմ գէրէյ ։

Զայն տեսեալ Ռուսաց՝ յարձակեցան 'ի վերայ Թաթարաց կուսակցացն Սէլիմայ , և Սէլիմ անձապարեաց 'ի փախուստ ։ Ընդ այս գործ Ռուսաց ծանրացաստումն յոյժ եղեն Օսմանեանք , և կամէին միւս անգամ 'ի պատերազմ ձեռն արկանել . սակայն ըստ աղաչանաց դեսպանին Գաղղիոյ յանձն առին դարձեալ խօսել ընդ Ռուսս յիրաւախոհութիւն , և նովիմբ հաստատեցին զՇահին քէրէյ յիշխանութեանն ։

Յամին 1777 արքայն Պարսից Սատըդ խան եղբայր Քէրիմ խանին անազդ իմն պատերազմաւ յարձակեալ 'ի սահմանս Օսմանեանց էառ զքաղաքն Պասրա . և կուսակալն Պաղտատայ քանզի անփոյթ լեալ էր դիմել յօգնութիւն պաշարելոցն՝ ընկեցիկ եղև յիշխանութենէ իւրմէ ։ Ի միւսում ամին տագնապեցաւ Թագաւորեալ քաղաքն և յահագին կոտորած է ժանտ ախտին՝ որպիսի չէր պատահեալ անդանօր 'ի բազում ժամանակաց հետէ . քանզի Թէպէտ և սաստկութիւն նորին ոչ տևեաց աւելի քան զաւուրս քառա-

տուն, սակայն Թիւ մեռելոցն յայնմ ժամանակի ոչ ինչ նուազ հաշուէր քան զերիս հարիւր հազարս, Թէպէտ և անհնարին տարածուԹիւն քաղաքին մեծի խափանէր յաչաց տեսանելեաց զամայուԹիւն պղոտայից նորուն։

Ի ժամանակս պատերազմին Ռուսաց ոմանք 'ի Յունաց և յԱռնաւուտաց Պեղոպոննիսդայ աւելի իմն համարձակուԹիւն առեալ էին. սմին իրի արձակեցաւ անդր ծովակալն Ճէզայիրլի Հասան պէյ, զի ընաջինջ բարձցէ 'ի միջոյ զազգն ողջոյն. այլ նա խոհական խորհրդով շատ համարեցաւ ըստ քաղաքաց քաղաքաց գլխատել զՅոյնըս՝ զորոց կասկածէր մատնոտս առ Ռուսս լինել, ոչ ինչ խնայելով 'ի տիս և 'ի հասակ. և դիզանէր կուտէր զկառափունս զրահանս զրահանս առ դուրս քաղաքաց։

Ընդ այն ժամանակս խանն Խրիմու Շահին կարի խիստ ուծացեալ 'ի հայրենի սովորուԹեանցն, և զակատեալ զհետ բարուցն և գնացից Ռուսաց՝ մինչև զգենուլ և ըստ տարազու զօրագլխաց նոցին, ատելի եղև Թաթարաց. քանզի ոչ միայն ինքնին ասպետ լեալ Ռուսաց և ըստ նոցին կարգացն վարէր, այլ և հրահանգս զօրացն Բրուսաց հնարէր մուծանել 'ի Թաթարս, և կանանայն իւրում գաղղիացի ագուցանէր տարազ, և զամենեսեան 'ի սոյնպի-

սխս բռնադատէր յանօգուտ նորաձեւու-
թիւնս ։ Միաբանեցան ելին 'ի վերայ
նորա և երկոքին եղբարքն իւր, մինչ
փախչել Շահինայ յամին 1782 ընդ
հիւպատոսին Ռուսաց 'ի Կերչ քաղաք. և
լցաւ այնուհետև Խրիմ անհնարին կո-
տորածիւք և ապականութեամբ ։ Դես-
պանն Ռուսաց Պուլհաքով յայտ ա-
րար գրանն մեծի՝ եթէ հարկ 'ի վերայ
կայ Օսմանեանց ձեռն միաբանու-
թեան կարգել ընդ Ռուսս, և ցածու-
ցանել զաղմուկ շփոթի Թաթարաց.
սակայն ընկալաւ պատասխանի՝ եթէ
ըստ պայմանի դաշանցն հաստատելոց
'ի Գայնարճըդ ոչ է արժան Ռուսաց
այլ և ոչ Օսմանեանցս մտել յերս Խրի-
մու, բայց միայն Ռուսացդ պարտք են
պաշտպան կալ խանին ընտրելոյ 'ի Թա-
թարաց ։ Յայնժամ զօրավարն Սա-
մույիլով մտեալ 'ի Խրիմ քան հազա-
րաւ արանց՝ վանեաց զխռովիչսն, և զո-
մանս ձերբակալ արարեալ հեղձոյց, և
վերստին հաստատեաց իշխան երկրին
զՇահին քերէյ ։ Առաքեցին և Օսմա-
նեանք բդեաշխ զոմն 'ի Թաման ըստ օրի-
նակի Ռուսաց. առ որ պատուէր յղեաց
Շահին զի դարձցի անդրէն յերկիր իւր.
իսկ բդեաշխն գլխատեաց զդեսպան
խանին ։ Յայնժամ Փոթեմքին յանուն
դշխոյին իւրոյ նախատինս անձին վար-
կուցեալ զգործն, եմուտ զօրօք իւրովք
'ի Խրիմ, եառ զՔէֆէ, և արգել 'ի

զիպահոջ զխանն ։

Ի սկզբան միւսոյ ամին անուանեալ Շա-հինայ զանհիմն հաստատութիւն իւ-րուին պետութեան և զկեղակարծն իւր զիշխանութիւն , յայտ յանդիմա-նութեամբ հրաժեշտ կալեալ յաթո-ռոյն և 'ի տէրութենէն . զորս յանձն առնէր 'ի ձեռս Ռուսաց պայմանաւ , զի ինքն մեկնեալ երթիցէ նստիլ 'ի գաւառ ինչ ուրեք աշխարհին Ռուսաց, և առցէ իւր հաս 'ի նոցանէ ամ ըստ ամէ երեքհազար րուպլիս ։ Զայսօրի-նակ վախճան եառ աւաղիկ իշխանու-թիւն Թաթար խանից Խրիմու՝ յորում տիրապետէին նոքա 'ի հինգհարիւրոց ամաց հետէ ։

Դշխոյն Կատարինէ առեալ զաւե-տիսն, և զերդումն հաւատարմութեան ամենայն աւագանւոյ և գլխաւորականացն Խրիմու , արձակեաց անդր զսպարա-պետ զօրաց իւրոց զՓոթեմքին Ժառան-գել զերկիրն . և նորա մտեալ 'ի Խրիմ վաթսուն հազարաւ արանց՝ կալաւ անհակառակ զամենայն զամուր ամուր տեղիս և զնաւահանգիստս աշխարհին, ևս և զԿուպան և զՔերսոն և զնաւա-հանգիստ Ազախու , և եդ 'ի նոսա պահանորդս ։

Յայտ իսկ էր որ ինչ զհետ ունէր գալ զեղելոյս . վասն որոյ Ռուսք մե-ծաւ պատրաստութեամբ կազմէին 'ի պատերազմ։ Թող զվաթսուն հազարս

փոթեմքինայ, Ռուսինին գայր նմա 'ի նիզակակցութիւն քառասուն հազարաւ, եւ Րումեանցով այլով գնդաւ չէր հեռի 'ի Խրիմէ։ Խռովեցաւ կոստանդնուպօլիս ընդ գայժ առմանն Խրիմու, եւ բողոք պատերազմի հնչէր 'ի բերանս մեծի եւ փոքու։ Զօրաժողովեղէն Օսմանեանք որանց բազմաց 'ի սահմանս Դանուբ գետոյ, եւ յաւելին բազմացուցին զթիւս նաւուց իւրեանց։ Դեսպանն Գաղղիացւոց հնարեցաւ միջնորդ խաղաղութեան կալ 'ի միջի, յորդորելով զՌուսս զիջանել Օսմանեանց. եւ կայսրն Գերմանացւոց Յովսէփ զնոյն առաջի առնէր խաղաղութիւն, սակայն զՕսմանեանս ստիպէր մի յետս պահանջել զԽրիմ. եւ սպառնայր եւս նիզակակից լինել Ռուսաց՝ եթէ բանք իւր չլինիցին լսելի։ Տագնապ էր Օսմանեանց ամենայն ուստեք, եւ առանին խռովութիւնք եւս ոչ պակասէին 'ի Րումէլի, եւ 'ի Դամասկոս, յԵգիպտոս եւ 'ի Պաղտատ. եւ սակայն վեզիրն մեծ ընդ պատերազմն կամէր մանաւանդ քան հաշտել ընդ Ռուսս։ Ուր ուրեմն յաղթեաց խորհուրդ խաղաղասէր արքային եւ այլ աւագանւոյն. որոց կանխատես խորհրդով զգուշացեալ յառաւելագոյն չարեաց՝ յանձն առին ստորագրել 'ի նոր յեակար ուխտի յամին 1784, 'ի 14 աւուր ամսեանն ապրիլի, որով եւ հրաժարե-

ցին ընաւ յիշխանութենէ երկրին Խրի-մու ։ Իսկ Շահին քէրէյ իբրև ետես զանձն իւր թողեալ լքեալ յիւրոյն և 'ի Ռուսաց՝ եդ 'ի մտի փախչել 'ի Կոս-տանդնուպօլիս . այլ մինչև ժամանեալ անդր ձերբակալ եղև , և ածաւ 'ի Հռոդոս կղզի ։

Թէպէտ այսպէս հանդարտեցին առ-ժամ մի կողմանքն երկրին , սակայն օր ըստ օրէ տարածել աճել պետութեանն Ռուսաց զկողմամբք Պոնտոսի 'ի գա-ւառսն որ ընդ մէջ կան Սեաւ ծովու և Կասբիականին , խէթ էր սրտին Օս-մանեանց ։ Քանզի և Հերակլ արքայ Վրաց ոչ ևս հանդուրժեալ բռնու-թեանցն Պարսից՝ 'ի հերուն հետէ , այս-ինքն է յամին 1783 , հրաժարեաց յիշ-խանութենէն իւրմէ և երդուաւ Ռու-սաց զերդումն հաւատարմութեան ։ Զնորին չոգան զհետ և որ շուրջն կայ-ին իշխանք և պետք գաւառաց , և զհովանաւորութիւն Ռուսաց խնդրե-ցին . ընդ որս և Եգերացիք և Օսք և Մնկրելք ։ Իսկ դշխոյն Ռուսաց վասն պայման խնդրեաց 'ի նոցանէ , զի մի ևս մարդավաճառ լիցին ըստ յաճախ սո-վորութեան իւրեանց ։ Նա քանզի խա-փան մեծ էր այս շահու վաճառակա-նացն Օսմանեանց , բողոք կալեալ առքա-ու վէզիրին , և նա հրամանն ետ բդեշխին Ախըլցխայի ստապատակ սփռել 'ի գա-ւառս Եգերացւոց և Աբխազաց , և ժո-

զովել կուսել զմարգարէին ։ Մեծապէս սատար եղև այսմ արշաւանիս և նոր ումն աղանդապետ Շէխ Մանսուր անուանեալ, որ զմարգարէի անուանթեկն առեալ՝ մեծարոյ գտաւ յոյժ յաչս թաթարացն որ 'ի Կովկաս, և հմայս և յուռութութիւնս բաշխեալ 'ի նոսա խրախուսէր զնոսին 'ի պատերազմ ընդդէմ Ռուսաց. և էր թիւ հետևողաց նորա աւելի քան զքսասուն հազար, որք բախեալ ընդ զօրս Ռուսաց՝ հարան խորտակեցան 'ի նոցանէ ։ Անափ և Պուլհաքով բողոք կալեալ վէզիրին կարծել զասպատակութիւնս Լազկիեցւոց. այս թէ ոչ՝ առէ, մեր պետութիւն հոգ յանձին կալցի ինքնին առնուլ զվրէժ ապականութեանցն գործելոց առ 'ի նոցանէ ։ Յաւել 'ի բողոքն և այլ ևս պահանջանս ինչ, որպէս և զայն՝ զի սատացեն Օսմանեանք եթէ յինչ ակնարկիցեն հանդերձանք պատերազմի զօրանեն նոքա ընդ ծով և ընդ ցամաք. և զի դադարեսցեն 'ի խոշտանգելոյ զքնակիչս Մոլտաւիոյ և զՎլախն 'ի պատճառս իշխանաց նոցին ։ Պատասխանի ետ դուռնն արքունի և ասէ. ա. « Ինքնագլուխ են Լազկիեցիք, և մեր չէ իշխանութիւն սաստել զնոսա զի թողցեն 'ի բաց զզէնս իւրեանց ։ բ. Դուռնն արքունի ցանդ խնամ ունի անձին պաշտպանութեան, որպէս և ա-

միայն Թագաւորք Եւրոպայ, առանց
ինչ Թշնամութեան տալոյ նշանակ։
Է. Անգորրութիւն ընակչացն Մոլ-
տաւիոյ և Վլաչաց յօգուտ Օսմա-
նեանցս բերի մանաւանդ քան Ռու-
սաց, վասն որոյ մեր փոյթ լիցի հոգել
'ի պահպանութիւն նորին »։

Այս 'ի գալ Կոստանդնեայ դշխոյին
ընդ Յովսեփայ կայսեր 'ի Խրիմ յամին
1787. Թէպէտ և ոչ ինչ խորհուրդ պա-
տերազմի էր 'ի միջի, այլ կասկած եր-
կիւղի կալաւ զյոլովս 'ի պետութեանց
Եւրոպայ՝ եթէ այն ուղևորութիւն
դշխոյին և կայսեր ոչ յայլ ինչ ակնար-
կիցեն՝ բայց 'ի ծաւալել և ևս յառաջ
վարել զերկրակալութիւնս Ռուսաց.
և դեսպանքն Անգղիացւոց և Բրուսաց
զամենայն հնարս հնարեցան առ 'ի
յարուցանելոյ զՕսմանեանսն 'ի վե-
րայ Ռուսաց։

Ինքնայօրդոր իսկ վառէին Օսմա-
նեանք 'ի մարտ, և 'ի տանել անդրէն
զընտիր ընտիր գաւառս իւրեանց որ
հետ զհետէ ելանէին 'ի ձեռաց նոցա.
սակայն ոչ փոքր ինչ խափան լինէր ձը-
պոյն առանին խռովութեանցն յաճա-
խութիւնք։ Քանզի Մահմուտ փաշա
կուսակալն Շքօտրա-քաղաքի յաշխար-
հին Առնաւուտաց՝ ապստամբեալ յար-
քայէ և դրամ ևս հատանէր յիւր ա-
նուն. որ և 'ի բազում նուագս եհար
վանեաց զգունդս զօրաց արքունի ար-

ձակելոց հետ զհետէ 'ի վերայ նորա։

Ոչ ինչ նուազ խռովեալ էր յամաց հետէ և աշխարհն Եգիպտացւոց. և Ճէզայիրլի Հասան փաշա երթեալ անդր բազմութեամբ նաւուց՝ հալածեաց զբռնացեալ իշխանսն զՄուրատ պէյ և զԻպրահիմ պէյ. և պատրաստէր կաղմէր սպառսպուռ ջնջել յաշխարհէ անտի զբռնակալութիւն Մէմլուքաց, զորս և կիսով չափ առաքեաց 'ի Կիպրոս և 'ի կողմանս Կիլիկիոյ. ած 'ի գանձն արքունի իբրու ութսուն հազար քսակս արծաթոյ, և բարեկարգեաց զտուրսն զոր հարկէին Եգիպտացիք ամ ըստ ամէ մեծի դրանն Օսմանեանց։

Յամին 1786 գլխապարտ եղև Ապուչեխցին Փէթրաքի, որ լումայափոխ էր փողերանոցին արքունի։ Սա իւրով խոհական գնացիւք սիրելի լեալ մեծամեծաց՝ փարթամացաւ յոյժ և զայլս ևս փարթամացոյց. այլ ապա 'ի հպարտութիւն ամբարտաւանութեան յեցեալ, ոչ ձեռնպահ եղև 'ի մխելս յիւր տեսչութեան աւազանւոյն. որով և առել եղև յաչս վէզիրին մեծի Եուսուֆայ և ծովակալին Հասանայ։ Քանզի 'ի կամել սոցա իշխան կարգել երկրին Վլախաց զՄաւրօ Եանի զոմն յոյն աննշան՝ Փէթրաքի հնարեցաւ խափանել առաջարկութեան գործոյն. վասն որոյ և յեղակարծուց ձերբակալ եղև, և յետ դառն տանջանաց՝ մինչ-

դեռ Մավրօ Եանի պատուեալ իշխանութեամբն եղանէր 'ի դրանէ վեզիրին, գլխատեցաւ փէթրաքի առաջի աչաց նորա, և ամենայն ինչք նորա գրաւեցան յարքունիս ։

Զհետ երկուց ամաց գլխատեցաւ և Գիաֆիյօյին Աքսանամի՝ գոգցես 'ի նոյնօրինակ պատճառաւ․ զի լոմպայափոս էր Խամա սուլթան դշխոյին, և ընդ ձեռն նորա առնէր զոր ինչ և կամէր․ վասն որոյ բազումք յաւագանւոյն թշնամացան ընդ նմա․ և 'ի մեռանել Խամա սուլթանին յամի 1788 կալան և զԱքսանամի, և 'ի մէջ բերեալ զամենայն զրկանս նորա և զչարատահարութիւնս՝ գլխատեցին զնա և զեղբայրն նորա ։

Այսպիսւլ Համիտ արքայ յակամայ կամս հաւանեալ 'ի յորդոր աւագանւոյն որ 'ի բանի լեալ էին դեսպանին Անգղիացւոց, պատուէր հրամանի արար առ Հասան փաշա թողուլ քանել զերս Եգիպտոսի և արշաւել բովանդակ նաւատորմաւն 'ի վերայ Ռուսաց ընդ Սեաւ ծով․ և ամբացոյց զբերդեանն որ յափունս Դանուբ և Տնեստեր գետոց կան, զԽոթուն, զՊէնտէր, զՆոր Գիլի, զԽաճալիլ, և մանաւանդ զամուրն Օզու ։ Դեսպանն Գաղղիացւոց Շուազէօլ Կուֆիէ անուն զամենայն ճիգն 'ի վար արկեալ խափանել կամէր զխաղաղն․ բայց ոչ միայն չկարաց ինչ ազդել ընդդէմ թելադրութեանց անգղիականին, այլև

մատն և տուր եղև 'ի նմանէ. քանզի մատենագրեալ էր սորա 'ի պատանեկութեան գոլով ախս զուղեգնայութեան իւր ընդ Յունաստան աշխարհ, յորում տարապայման իմն հիացմամբ ընդ նահատակութեանս առաջնոցն Յունաց՝ ոչ ինչ զգուշացեալ էր խրախուսել և զարդել Յոյնս յընդվզել յարքունի դրանէ: Այդ զբանս մատենին այնորիկ Թարգմանեալ անգղիացւոյն մատոյց 'ի դուռն և ասէ. « Տեսէք զԳաղղիացին զոր մեծարիմ ձեզ կարծէք. տեսէք զինչ 'ի բերանոյ խօսի, և զինչ 'ի գիր դրոշմեալ »: Աճապարեաց Շուազէօլ ժողովել յամենայն կողմանց զօրինակս իւրոյ մատենին ծանր ծանր հատուցմամբք, այլ յաջողեցաւ և ոչ ինչ:

Յերկոտասաներորդի աւուր ամսեանն օգոստոսի խորհուրդ արարեալ աւագորերոյն՝ յերկարագոյն նուագօք զբանիւք անկանէին. և ապա ազդ արարին առ դեսպանն Ռուսաց Պուլհաքով եռօրեայ ժամադրութեամբ՝ գալ հանդիսիւ 'ի դուռն արքունի: Կասկած կալաւ զմիտս Պուլհաքովայ, և ծանոյց նախ դեսպանին Գերմանացւոց որ էր պարոն Հէրպէրթ. և նորա առաքեալ զթարգման իւր առ վեզիրն հարցանէր եթէ զինչ պատճառք իցեն անակնկալ կոչոյն: Պատասխանի ետ վեզիրն մեծ և ասէ. « Ինքնիշխան է և մերս պետութիւն հանդոյն Ռուսացն

պետութեան , և ըստ կամս իւր յար-
գարէ զամենայն , և չպարտի համար
ումեք տալ զիւրուրոյն տեսչութենէ .
վասն որոյ անտեղի իսկ է հարցափննու-
թիւն դեսպանիդ »: Խելամուտ եղև
Հերպերթ բանիցն զօրութեան , և 'ի
նմին գիշերի դարձեալ առաքեաց զեր-
կոսին զամենադպիրս իւր առ վեզիրն և
ասէ . « Եթէ կամք իցեն օսմանեանդ
պետութեան մնալ պատերազմի յար-
գարել ընդդէմ Ռուսաց , յուշ լիցի ձեզ
զի կայսրն մեր դաշնադիր է ընդ Ռուսս ,
և ոչ լռեսցէ անշուշտ յիւրս պատերազմիդ
այդորիկ »: Վեզիրն Կիւրճի Եուսուֆ
փաշա քանզի այն ինչ զարթուցեալ էր
'ի քնոյ` խառնագոյնս ետ պատասխանի և
ասէ . « Չգիտեմ յորո՞ց իրաւանց խառ-
նեսցի կայսրն 'ի պատերազմ յորում չիք
նմա մասն բաժնի »: Ասեն արքն . « Այլ
կարող է միջնորդ խաղաղութեան ընդ-
խռովեալսդ լինել »: — « Այսպէս նի-
զակակից է Ռուսաց կայսրն ձեր , ասէ
վեզիրն . և զիա՞րդ հնար է նմա միջնորդ
խաղաղութեան լինել . այլ խնդամք
մեծապէս զի և նա պատճառ իսկ մարտ
յուզել 'ի մեր վերայ , որպէս ակնարկեն
և զօրաժողովք նորա յերկրին Մաճա-
ռաց »: Իսկ Պուլհաքով եղեալ նախ
յանկոյթ տեղւոջ զկարևոր թղթեանն
իւր` գնաց 'ի դուռն : Հարցին ցնա և
ասեն . « Ունիցի՞ս իշխանութիւն ձեռ-
նադրել 'ի մուրհակ դաշնագրութեան`

որոյ պայմանք այն լիցին որ 'ի Գայնարճըգ հաստատեցան, 'ի մէջ այսրէն դարձուցանելով զԽրիմ» : — « Ոչ է իմ իշխանութիւն այնպիսի» ասաց դեսպանն, և յարեաւ 'ի գնալ. այլ նորա մխեցին 'ի նա զձեռս իւրեանց և ածին յԵօթն-գուլէն յութուտասներորդի առուր ամսեանն օգոստոսի. Թոյլ ետուն նմա հոգալ և առնուլ ընդ իւր զամենայն զկարևոր պէտսն, և յընտանեաց իւրոց զոր ոք և կամէր. այլ զնաւս Ռուսաց որ 'ի նաւահանգստի անդ էին՝ տարան 'ի նաւակայս, և զնաւավարսն արկին 'ի կապանս երկաթիս : Տրտունջ կալան զայմանէ դեսպանք այլոց եւրոպական պետութեանց. և ռէիս էֆէնտին ետ նոցա պատասխանի. « Վաղնջական օրէնք են առ մեզ՝ արգելուլ զդեսպանս յԵօթն-գուլէն՝ ոչ 'ի վնաս ինչ նոցա, այլ զի անկորոյթ լիցին 'ի ցասմանէ ժողովրդեան» :

Յետ այնորիկ հրովարտակ արարին Օսմանեանք՝ յորում զայս օրինակ յայտ առնէին զպատճառս պատերազմին. ասեն. « Յամին 1774 հաշտեցաք մեք ընդ Ռուսս 'ի Գայնարճըգ, որպէս զի խնամ կալցուք սովին անդորրութեան մերոյս ժողովրդոց. սակայն Ռուսք ցանդ զհակառակսն բերեալ՝ առին յանկարծակի զԽրիմ՝ որ ըստ դաշանց պայմանի ազատ ունէր մնալ, և զիշխանն Վրաց ապստամբեցուցին յօսմա-

նեան դրանէս : Բան եղեալ էաք զի զաղեհանան որ 'ի Գըլպուրուն՝ բնակիչքն Օզուլի պեղեցեն, և Ռուսք խափան արկին առաջարկութեան գործոյն : Հիւպատն նոյին որ 'ի Մոլտաւիա կայր՝ փախոյց խաբանօք զիշխան երկրին զԱղէքսանդր Մաւրոքորտաթ, և 'ի պահանջել մերում չետ զնա 'ի դուրս · այսպէս ամենայն ուրեք հիւպատս կարգեալ Ռուսաց, գուն գործեն զհպատակս մեր խաբել պատրել և 'ի պարտուպատշաճ հպատակութենէ նոցին արտաքս հանել: Այն չէ շատ, և 'ի կարգս տէրութեան մերոյ մխել սկսան, և պահանջեն զի պատուհաս 'ի վերայ կապեցուք մոքապետացն մերոց և կուսակալաց և կողմնապետաց : Ազատութիւն շնորհեալ մեր վաճառականացն Ռուսաց՝ թափել զվաճառս իւրեանց յոր և պէտ կողմն աշխարհիս, նոքա.քան զամենայն ազգաց զմերոյ ազգի վաճառականն նեղեն 'ի քաղաքս իւրեանց · յորոց և զոմանս մինչև 'ի Սիպիր աքսորեալ են և 'ի մահ եւ տուեալ, որպէս լսեմք · և յորժամ նաւք մերոյն նշանաւորաւ Օսմանեանց 'ի նաւահանգիստս Ռուսաց մտանէին, նոքա թնդանօթս արձակեալ՝ 'ի բաց զնաւսն վարէին : Ի վախճանի դեսպանն Ռուսաց պատճառք է պատերազմիս, քանզի նա առիպէր առնուլ յօսմանեան դրանէս յետակար ուխտ՝ որով հրաժարիցեմք

մեք յիշխանութենէս զոր ունիմք 'ի վերայ Վրաց աշխարհին . ապա թէ ոչ, ասէր, զօրավարին Փոթեմքին պատուէր հրամանի ունի մխել 'ի սահմանս Օսմանեանց հարիւր հազար զօրականօք, և բռնան զօրութեամբ առնուլ զյետակարն, և որ այլն ևս » ։

Ընդէն հրապարակեցին և Ռուսք զերեանցն յայտարարութիւն, որ ունէր զայս ձև օրինակի . « Թէպէտ մշտնջենաւոր էր խաղաղութեանն պայմանն զոր ընդ Ռուսս հաստատեցին Օսմանեանք, այլ այս երկրորդ անգամ լուծին նոքա զնոյն, և զպատգամաւորն մեր և զդեսպանն և խորհրդական զՊուլհաքով արգելեալ փակեցին յամրոցն Եոթդուլէ · զօր վստահեցին դեսպանքն Գերմանիացւոց և Գաղղիացւոց զառաջս ունել գործոյն ։ Արդ զի կարող լիցին ամենեքեան դատ առնել, ծանօթս տամք աւասիկ ամենեցուն, զի յամին 1768 Օսմանեանք ինքնին մարտ պատերազմի յուզեցին, ապա յամին 1774 'ի հաշտութեան ժամանակին զդաստաւոն զորս կալեալ էաք՝ մեծաւ մասամբ անդրէն դարձուցաք, լաւ համարեալ զհաշտութիւն քան զերկրակալութիւն ։ Յամի 1783 իշխանն Վրաց հանդերձ իւրովքն կամակար յօժարութեամբ եա զանձն իւր 'ի մերս հպատակութ՟ն և դաշնագիր եղև ընդ մեզ . և հաւանելս մեր ընդ այս՝ ոչ ինչ

հակառակ ելանէր ուխտի դաշանց մե-
րոց որ ընդ Օսմանեանն էր. սակայն
նոքա ընդ ձեռն բդեշխին Ախլցխայի
գրգռեցին զԼազիկեցիսն ապստամբել
յաշխարհն Վրաց, և զիշխան աշխարհին
հրապուրեցին լուծանել զզօդ դաշանցն
որ ընդ մեզ, և առ նոսա հաստատել:
Հիւպատք մեր և վաճառականք բազում
նեղութիւնս կրէին յիշխանացն Օսմա-
նեանց սակս որոց և հարկաց՝ յետս ընդ-
դէմ դաշանցն մերոց, և այս շատ էր 'ի
մարտ զմեզ յարուցանել. բայց մեք ըստ
մերոց խաղաղասէր բարոյից իբրև ե-
կաք 'ի Խրիմ՝ անդր կոչեցաք զՊուլհա-
քօվ և պատուէր տուաք նմա խաղաղու-
թեամբ վճարել զիրսն. զնոյն և Գեր-
մանացւոցն և Գաղղիացւոց ծանուցեալ՝
գովեցին զմերս խաղաղասիրութիւն:
Ի դառնալ Պուլհաքօվի անդրէն 'ի
Կոստանդնուպօլիս՝ ոչ ինչ խաղաղու-
թեան ետես նշանակ, այլ և կոչեցաւ
'ի գրանէն 'ի 15 աւուր ամսեանն օգոս-
տոսի, և առէ ցնա ըէիս էֆէնտին.
ա. Թող հրաժեշտ կալցին Ռուսք 'ի դա-
շանց ուխտէն հաստատելոյ ընդ Վրաց
իշխանին, և մի ևս խառնեսցին յիրս
այլոց գաւառաց Ասիոյ: բ. Իշխանն
Մոլտաւիոյ Մաւրոքորտաթ յանձնեսցի
'ի ձեռս մեր: գ. Փոխանորդ հիւպա-
տին Ռուսաց որ 'ի քաղաքն Եաշ՝ 'ի
բաց կոչեսցի. քանզի զրպարտեալ էր
այրն՝ որպէս թէ նա փախուցեալ իցէ

գիշխանն և զայլս 'ի բնակչաց երկրին ։ Դ. Երեսուն և ինն աղեհանք որ 'ի Գըլպուրուն՝ առ. Օսմանեանքս դարձուցին, զի մեր է երկիրն ըստ դաշանցն պայմանի ։ Ե. Հիւպատք Օսմանեանց կարգեցին յամենայն նաւահանգիստս Ռուսաց. և որ 'ի Խրիմ նստէին՝ վաղ ընդ փոյթ յիւրաքանչիւր տեղիսն դարձուցին ։ Զ. Ամենայն նաւ Ռուսաց որ ընդ կիրճն Կոստանդնուպօլսոյ անցանիցէ՝ յայսմ հետէ զննեսցի մանր, զի մի տաճիկ նաւավարք լիցեն 'ի նմա, և ոչ խահվէ, ձէթ և բրինձ, Թէպէտ և 'ի դաշանցն Թղթի ազատութիւն էր յաղագս այսոցիկ ։ Է. Վաճառականք Օսմանեանց մի ինչ աւելի մաքս վճարեսցեն քան զերիս առ հարիւր ։ Եւ զպատասխանի պահանջմանցս սպառնալից բանիւք խնդրեաց ըէիս էֆէնտին 'ի 20 աւուր օգոստոսի. Թէպէտ և չիք բնաւ համեմատութիւն ընդ այս միջոց ժամանակի և ընդ բացատ Կոստանդնուպօլսոյ 'ի Բեթրպուրկէ. և յաւելեաս ասել՝ եթէ յոչինչ դրեն Օսմանեանք զամենայն զդաշինսն կռեալս յետ հաշտութեանն որ 'ի Գայնարճըզ ։ Ջրավաստակ եղեն դեսպանքն Գերմանացւոց և Գաղղիացւոց ցածուցանել զայրմուկն. Նա դարձեալ միաբանգամ կոչեցին Օսմանեանք զՊուլհաքով, և տախալէին զնա յետս անդրէն տալ զԽրիմ 'ի ձեռս Օսմանեանց. ընդ որ

քանզի չկարէր հաւանել Պուլշաքով արգելլին զնա յՆտիկուլէն ։ Ցաղագս այսորիկ և մեր հրաման է առ զօրագլուխն մեր փոխեմքին և Բուլեանցով՝ զի ելցեն 'ի պատերազմ 'ի վերայ Օսմանեանց » ։

Յայնմ ժամանակի զօրաժողով եղեն Օսմանեանք արանց իբրու հինգհարիւր հազարաց, թող զնաւամարտիկսն որ լցան զեղան 'ի Նաւատորմն բազմութիւ՝ որպիսի չէր երևեալ ցայնժամ 'ի Պոնտոս ։ Ձեռնտու եղեն սոցա և Ճէզայիր և Ֆէս Նաւուք և դրամովք ։ Սապահ քէրէյ որ երբեմն խան լեալ էր Թաթարաց՝ ընկալեալ դարձեալ զամուրենին և անուանեցաւ սպարապետ ամենայն զօրացն Թաթարաց. իսկ Շահին քէրէյ որ յաքսորս կայր 'ի Հռոդոս՝ յօշոտեցաւ յանկարծ 'ի տաճիկ բնակչաց տեղւոյն ։ Կիւրճի Եուսուֆ փաշա հրաման ետ Թաթարացն Օզուի յարձակել առնուլ զԳիլպուրուն, և 'ի սկզբան 1788 ամին կանգնեցան ձարքն ձողաբարձք առ դրան վէզիրին մեծի, և 'ի վեցերորդի աւուր ամսեանն մարտի խաղաց գնաց բանակն հանդերձ Նուիրական դրօշաւն. բայց զայս նուագ չեղև հանդէս արուեստագիտացն դասու ։ Մեծապէս խրախուսեցան Օսմանեանք և 'ի դիպացն յաջողութենէ որ պատահեցին ընդնոյն աւուրս. քանզի մինչդեռ նաւա-

տորմն Ռուսաց շուրջ յած էր ընդ Սևա-
ծով յաշնանային ժամանակին, քանի
ինչ 'ի նաւաց անտի վարեալ մղեցան 'ի
բուռն մրրկաց 'ի ծովեզերեայս Ախոյ,
և նաւ մի մեծ որ տանէր թնդանօթս
քառասուն և երկուս՝ մղեցաւ նմին
'ի կիրճն Կոստանդնուպօլսոյ ։ Նաւա-
պետն որ անգղիացի ոմն էր՝ կամէր
հուր 'ի վառօդանոցն հարկանել՝ քան
անկանել 'ի ձեռս Օսմանեանց, այլ որք
'ի նաւին էին ոչ ետուն նմա թոյլ. և
տիրեցին Օսմանեանք նաւին, և մտեալ
անդր խուռն բազմութեամբ ածին
զառաջեաւ ապարանիցն արքունի, և
անտի 'ի նաւակայս քաղաքին. ուրա-
նօր նորոգեալ զխաթարմունսն եդին
նմա զանունս Խիւնտավէրամի՝ որ է աս-
տուածատուր ։

Ցերիս առաջս բաժանեցան զօրք
Ռուսաց. որոց միումն զօրավարէր
սպարապետն Փոթեմքին, երկրորդին
Րումեանցով, և երրորդին միւս Փո-
թեմքին. և ոչ ինչ միտ եդեալ սաստ-
կութեան ձմերայնոյն՝ չուեցին հասին
մինչև 'ի սահմանս Լեհաց ։ Աճապարե-
ցին Օսմանեանք խրատել զԼեհս զի մի
տացեն Ռուսաց անցս և կերակուր.
այլ մինչ նոքա զանդաղէին՝ մխեցան
Ռուսք 'ի Փոտոլիա և անցին յՈւքրա-
նիա ։ Նախկլին արշաւանք Օսմանեանց
յառնուլ զԴիլլպուրան ոչ յաջողեցաւ.
և հարեալ վանեցան 'ի Ռուսաց 'ի ցա-

մաքէն և 'ի ծովէ. Թէպէտ և ոչ սակաւ նախճիրս և 'ի Ռուսացն գործեցին, և զզօրավար նոցին զՍուվորով կարեվէր խոցեցին: Հարաւ խորտակեցաւ և Շէխ Մանսուր իւրովքն երկոտասան հազար արամբք, և խոյս ետ 'ի լերինս Կովկասու. և գնդապետն Ռուսաց Միխթով յամսեանն դեկտեմբերի 'ի լող անցուցեալ զզօրս իւր ընդ գետն Կուպան՝ նուաճեաց զԹաթարսն ընակեալս յաշխարհին:

Իսկ դեսպանն Գերմանացւոց իբրև ետես եթէ բանք իւր չեղեն լսելի, յայտ արար վէզիրին զկամս Յովսեփայ կայսեր ընդ պատերազմն. և հազիւ զերծ մնացեալ յարգելանէն յԵտիգուլէ՝ մեկնեցաւ յաշխարհ իւր. և յայնմ հետէ հրաման ետ կայսրն իւրոցն աւելի քան հարիւր և յիսուն հազարաց մխել 'ի Պոսնիա և յերկիրն Վլախաց. այլ նոքա կէս մի վանեցան յՕսմանեանց, և կէս մի ըմբռնեալք 'ի տենդ և յայլ հիւանդութիւնս՝ նուաղեցին յոյժ, և դուն ուրեք յաջողեաց արշաւան նոցա: Այն ինչ կամէր կայսրն դադար տալ պատերազմին մինչև այլ զօրք յԱւստրիոյ և 'ի Բոհեմիոյ հասցեն իւրոցն յօգնականութիւն, ժամանեցին Օսմանեանք երկերիւր հազարաւ մինչև 'ի Պելկրատ և 'ի Դիմըշվար. և թէպէտ ախտ սրածութեան ճարակեալ 'ի նոսա՝ բազում կոտորածս առնէր,

սակայն և Թշնամեաց խափան մեծ էր երկիւղ ժանտ ախտին առ 'ի չկամելոյ զնոսա ։ Այգ եղև կայսեր՝ եթէ եհաս վէզիրն մեծ բուն բանակաւն մինչև յափունս Դանուբայ . եթող 'ի Զեմլին արս քսան և հինգ հազար, և ինքն վաթսուն հազար զօրօք ընդ Լասցի սպարապետին զինեաց յամուրն Լուգոշ՝ առ 'ի ջնջելոյ Օսմանեանց մինչ 'ի Թրանսիլվանիա ։ Սակայն մեծապէս արիացան Օսմանեանք յայնմ արշաւանին, և յամսեանն սեպտեմբերի 'ի բաղում տեղիս խորտակեցին զզօրս Գերմանացւոց , և զբանակեալն նոցա յաւարի առին . յորոց 'ի միումն քանզի գիշերախառն յարձակեցան Օսմանեանք, աղմուկ շփոթի անկաւ 'ի Գերմանացիս. և կայսրն ինքնին անկեալ յերիվարէն իւրմէ հարաւ զքարի , և վտանգեցաւ յոյժ՝ մինչև արիւն թքանէր , և պատսպարեալ յայլ երիվար՝ հազիւ զերծաւ 'ի փախուստ ։

Այլ.քանզի պատածութիւնն երթալով երթայր և զայրանայր 'ի բանակին Օսմանեանց, և մասն ինչ բանակին Գերմանացւոց միացաւ ընդ Ռուսս յերկրին Վլահաց, հրաման ետ վէզիրն 'ի ձմերոց ժողովել իւրոյն 'ի կողմանս Պելկրատու. և կայսրն դարձաւ 'ի Զեմլին ։ Յայն միջոց ժամանակի քաջահմուտ զօրավարն Գերմանացւոց եօթանասնամեայն Լաւտոն 'ի խնդրոյ կայսեր իւրոյ անցեալ 'ի գլուխ բանակին՝ զինեաց

'ի Պոնտիա յամսեանն հոկտեմբերի , և սաստիկ պատերազմաւ և պաշարմամբ էառ զամուրն Նովի , և ապա գնաց մեկնեցաւ 'ի Զեմլին :

Նաւատորմն Օսմանեանց յետ ընդ երկար կռուոյ մերձ 'ի Պիւյիւքտերէ՝ խաղաց գնաց 'ի Սեաւ ծով. և էր Թիւ նաւուցն ութսուն ընդ մեծ և ընդ փոքր : Բազում քաջութիւնս գործեաց ծովապետն Հասան յայնմ պաշաւանին · այլ 'ի վախճանի պարտեալ 'ի նաւամարտի ուրեք առ Օղու քաղաքաւ՝ խոյս ետ 'ի Վառնա : Պաշարեցին յայնժամ Ռուսք զամուրն Օղու ընդ ծով և ընդ ցամաք · և ոչ ինչ կարեալ 'ի սաստկատուոյ բքաբերաց ձմերայնոյն՝ ակնդեաց Փոթեմքին զպաշարումն , և յետ բազում ճգանց և կոտորածի յերկաքանչիւր կողմանց՝ յեօթնետասներորդի աւուր ամսեանն դեկտեմբերի յարձակեցան Ռուսք սաստկապէս և առին զքաղաքն , զզինակոցացն կոտորեցին , և ժողովեցին աւար բազում յոյժ յոյժ , Թէպէտ և ինքեանք ևս ոչ սակաւ զեան կրեցին · զի հինգ զօրավարս կորուսին 'ի խուան անդմարտին և սպայս յիսուն և վեց , և արս իբրու վեց հազար ընդ մեռեալ և ընդ վիրաւոր : Եւ մեկնեցան երկուստեք 'ի ձմերոց :

Ի սկզբան միւսոյ ամին , այն ամ էր 1789 , ահագին տարափք անձրևաց ե-

զեն 'ի Կոստանդնուպօլիս զաւուրս երկուս. այլ բուն սաստկութիւն սահանացն ժամ մի և կէս տևեալ՝ ծովացոյց առ հասարակ զփողոցս քաղաքին. բազում աւերմունս գործեաց 'ի Գասըմ փաշա, և զքարինս աղօրեացն Թաւալգլոր խաղացոյց 'ի ծով անդր. ողողեաց զտունս որ 'ի ձորամիջս կան 'ի գիւղօրէս Վոսփորի, և զկարասին վարեաց Թափեաց 'ի ծով. ած կուտեաց 'ի վաճառանոցին հող բազում 'ի լերանցն Կոստանդնուպօլսոյ, և զյատակս փողոցացն գրկաչափ Թանձրութեամբ բարձրացուցին ուղիղ քան զկրպականին. և ահ պատեաց առ հասարակ զբնակիչս քաղաքին: Յայնմ տարակուսանաց ժամանակի եհաս 'ի վերայ և այլ տագնապ քաղաքական. քանզի ել հրաման 'ի դրանէն արքունի՝ զի առ որում ումեք գտանիցի սպաս արծաթի շատ կամ սակաւ՝ ածցեն 'ի փողերանոցն, և պետութիւնն փոխս տան հատուցեալ առ մի մի որամ՝ գնէր զարծաթն: Աւագորեարն ամենայն երկուս կամ երիս եւթ կաղմածս երիվարաց արծաթիս առ իւրեանս պահեալ, զայլն տարան յարքունիս. իսկ ոսկերչացն խանութք առ հասարակ փակեցան զամիսս բազումս, և ձայն ուռան ոչ ևս էր լսելի. և Հրեայք երկու յարգելանս բանտի ածան՝ փոխանակ զի ցուցակս ինչ արծաթիս յօրինեալ էր

նոցա ։ Ապա և հարկ 'ի վերայ եդաւ սարկաց ժողովել արծաթ բազում և յորբունկս տալ. և հատուցին Յոյնք վեց հազար օդգա, Հայք չորեքհազար, և Հրէայք երեքհազար ։

Ի լրումն աղետից այսոցիկ եհաս վախճան կենաց խաղաղասէր արքային Ապտիւլ Համիտայ յանակնկալս իմն 'ի քաններորդի եօթներորդի աւուր ամսեանն մարտի յամին 1789. և թաղեցաւ 'ի շիրմին զոր ինքն իսկ շինեալ էր 'ի Պահչէ գափուսու հանդէպ արքայանոցի մզկիթին որ կոչի Լալիպէ Ճամիի։ Նուէ եղեն ամք թագաւորութեան նորա հնգետասան, և ամիսք ութ ։

Յաւուրս արքային Համիտայ յաճախեաց 'ի բնակիչս Կոստանդնուպօլսոյ սովորութիւն գիւղազքոս գիւղաբնակ լինելոյ յամենայն ամառայնի. զի նա զարդարեաց շինութեամբք զգիւղն Պէյլէրպէյի և զայլ գիւղօրէս ։

Առ նովաւ դարձեալ երևելի էին 'ի դրան արքունի փէփէկլի Հասան էֆէնտի, Նազիֆի էֆէնտի և գաճաճն Ապտուլլահ աղա, և սոցին խորհրդով գործէր արքայ զամենայն. այլ մեծարոյ ևս և խոհական քան զսոսա համարէին ըէիս էֆէնտին Խալիլ պէյ, և ծովակալն Ճէզայիրլի Հասան փաշա, որ բազում զգօնութեամբ բարեկարգութեան աշխարհին եղեն պատճառք ։

Սիրող էր յոյժ Համիտ արքայ և ա-

կանոնական և մարգարտազարդ անկուածոց, ամէն իրի մեծամեծս բարգաւաճեալ առ նովաւ արուեստ ոսկերչութեան, և յաւելաւ պայծառութիւն արուեստաւորաց մերոյ ազգիս, որոյ առաջին և մեծանուն ճարտարապետ էր ազնուատոհմն Միքայէլ չէլէպի Տիւզեան: Իսկ ՚ի վերջիս Համիտայ արքայի հռչակ մեծ կալաւ Սիլիհտար Խասէյա Մէհէմմէտ փաշա յաղագս իւրոց խաղաղասէր և աշխարհաշէն բարոյից՝ հանդերձ անկեղծաւոր մտօքն և արդարախօս գնացիւք: Սորա անուանել զի որք ոչն կամէին ընդ աճել իշխանութեան իւրոյ՝ ստէպ ստէպ հրաժարութեամբք յայտնէին զքէն ատելութեան իւրեանց, հնարեցաւ ճապաղել յենիչէրիս ոսկի բազում իբրու երեքարիւր հազար քսակաց, և այսպէս ՚ի մի վայր ժողովեալ զգնդապետսն՝ պատուիրեաց նոցա և ասէ. « Գիտասջի՞ք զի ուր և բորբոքեսցի յայսմ հետէ հրդեհ մեծ կամ փոքր, զգնդապետս պահանորդաց տեղւոյն մահու դատեցայց ». և ոչ ևս պատահեաց հրդեհ ՚ի Կոստանդնուպօլիս յաւուրս իշխանութեան նորա:

Առ նովաւ երևեցաւ ՚ի թագաւորեալ քաղաքին և այլն անծանօթ Սիւֆիւրկէճի անուանեալ, զի աւել ՚ի ձեռին մտու և էլ առնէր յապարանս մեծամեծաց՝ որպէս զձանձախարիթ վա-

ռազմանաց, և զգլխաւորն զօրս առնուլ 'ի
նոցանէ՝ յաղթասար բաշխէր, և ամե_
նայն կարօտելոց 'ի Թիկունս հասա_
նէր. այլ չէր յայտ եթէ զոր հաւատա
ունիցի այրն: Կոչեցեալ 'ի վեզիրէն և
հարցեալ եթէ զինչ անուն իցէ նորա՝
ասէ. «Ծառայ եմ ես Աստուծոյ, և
Ապտուլլահ անուն է իմ». և զհա_
ւատոյն չկամէր յայտնել. բայց բռնա_
դատեալ 'ի վեզիրէն՝ յանձն էառ, ա_
սեն, նշան մահմետականութեան զնել
'ի վերայ հանդերձից իւրոց և 'ի մզկիթ
եւս երթալ: Յետ աւուրց ինչ եւ յա_
տեան վեզիրին և դատանեաց զքրիստո_
նէութիւն իւր, և առ օրին գլխատե_
ցաւ: Նուքանդի յերկիկէ երթեալ յե_
կեղեցի Յիսուսեանց և հաղորդեալ էր
սուրբ խորհրդոց, ասաց առին ոմանք
ասել՝ եթէ առհմիկ ոք էր այրն եկեալ
անդր յՆուրպայ, և յապաշխարու_
թեան սակս գործեալ զայնպիսիս:

## ՍՈՒԼԴԱՆ ՍԵԼԻՄ Գ·

Քսան և ութից ամաց էր Սելիմ արքայ երրորդ՝ որդի Մուստաֆայի երրորդի, և թագաւորեաց ՚ի տեղի հօրեղբօր իւրոյ Համիտայ ՚ի քսաներորդի չորրորդի աւուր ամսեանն մարտի յամին 1789. և թէպէտ և յոլովք յաւագ որերոյն ՚ի բանակի անդ էին, սակայն ոչ ինչ ՚նուազ շքեղաշուք հանդիսիւ երթեալ յէյուպ՝ ած ընդ մէջ իւր զսուսերն արքայական: Այլ մինչև կատարեալ զհանդէսն երկու ինչ գործեաց ըստ ոչ սովորութեան. առաջին զի չոգաւ շիջուցանել զհրդեհ. և երկրորդ՝ զի երթեալ ինքնին ՚ի նաւակայս քաղաքին՝ ետ գլխատել զաւեսուչ ՚նորին. որպէս և զորդի նորա զՆաղիֆի էֆէնտի՝ կոչեցեալ ՚ի բանակէն: Իսկ առաջին գործ բարեկարգութեան զայն արար, զի երբեմն ՚ի թագաւորեալ քաղաքէն զառ հացի որ ՚ի մէկից ամաց հետէ նեղէր զբնակիչսն. ծախեալ յիւրոց գրամոց քան հազար քսակս արծաթոյ:

Յառաջնում ամի թագաւորութեն

Սէլիմայ արքայի դաշինս ուխտի Նի-
զակակցութեան հաստատեցին Օսմա-
նեանք ընդ Շուետս. և այն առաջին
անգամ ինքնին արքայ ձեռնագրով իւ-
րով հաստատեալ վաւերացոյց զդաշին-
սն: Ապա հրաման ետ Սէլիմ արքայ
զօրաժողով լինել, և վառեցան կազմե-
ցան հարիւր և վաթսուն և ինն հազար
հետևակաց և երկերիւր և երկոտասան
հազար հեծելոց, և ամրացոյց նորօք
զբերդաքաղաքս աշխարհին, մանա-
ւանդ զՍիլիստրէ և զՊէլկրատ. զոմանս
'ի բդեշխից սահմանածայր տեղեացն
գլխատեաց սակս անհոգութեան նո-
ցին, և զայլոց ներեալ զյանցանս՝ մոռ-
գիւրագոյնս գործեաց զնոսա յառա-
ջիկայսն: Եհան և հրովարտակ յոր-
դորական առ ամենայն Օսմանեանս՝
զի քաջութեամբ մարտուցեալ վանես-
ցեն զթշնամիս. և իշխանն Վլահաց
Մավրօ Եանի ոչ դադարէր բանիւք
շատխօսութեան մեծամեծս կոտորել
առաջի արքայի, և խոստանայր վաղ ընդ
փոյթ հանել մերժել զՌուսս 'ի սահ-
մանաց աշխարհին:

Յայնմ ժամանակի բանակն Ռուսաց
շեղ առեալ դադարեալ կայր առ Սի-
րէթ գետով. սպարապետն Փոթեմքին
'ի կողմանս Պէնտէրայ դեգերէր, և
հուպ առ նմին զօրապետն Քամենսքի,
և Խաղախք ապստամբ սփռեալ ընդ
դաշտս յաւեր և յապականութիւն

գնէին զամենայն ։ Իսկ Աւստրիականք նորանոր կազմութեամբ 'ի հանդերձանս պատերազմի պատրաստէին ։

Այս 'ի պատուել ասուրց զինուց գաղափարման ակինքն եղև մարտին 'ի Պասեա յամնեանն փետրուարի, և 'ի անդին անդին բախեալ Գերմանացւոց ընդ Օսմանեանս՝ էր զի հարկին զնոսա, և բազում այն էր զի հարան 'ի նոցանէ, մինչև կայսրն Յովսէփ սպարապետ զօրացն կարգեաց զերկրորդն Լաւտոն․ և նա եկեալ բազմութեամբ զօրք էառ սաստիկ պատերազմաւ զԿլրատովա, և ապա խաղաց գնաց պաշարել զամուրն Պելկրատ յամնեանն սեպտեմբերի կանգնեաց զնովաւ պատնէշս և մարտկոցս զօրմանայն Հարստութեամբ և արագութեամբ, և 'ի քսաներորդի իններորդի աւուր նորին ամսոյ էառ զքաղաքային մասն քաղաքին․ և յետ ութ աւուր էառ և զբերդաքաղաքն՝ խաղաղութեամբ․ Թոյլ ետ Օսմանեանց՝ որ էին քան և չորք հազարք՝ ելանել գնալ յոյ և կանամբքն, և զկուսակալն Պելկրատու զԱպտի փաշա հրաւիրեալ 'ի կոչունս իւր հանդերձ գլխաւոր զօրապետօքն՝ մեծապատիւ մեծարեաց․ և նա յետ ընթրեացն խնդրեալ ընկալաւ 'ի Լաւտոնէ գիր վկայութեան, եթէ որչափ զժուարին էր նմա տան հազար զօրք զդէմ ունել պաշարմանն․ այլ որ- զերծաւ այնու․ Այսպէս 'ի ցասմանէն

արքային, և գլխապարտ եղև։

Իսկ վէզիրն մեծ Եուսուֆ փաշա յամենայնի մայնի խաղաց գնաց 'ի վե-րայ բանակին Ռուսաց 'ի Մոլտաւիա հարիւր հազար զօրօք, անց ընդ գետն Դանուբ, և բախեցաւ ընդ Ռուսս և ընդ Գերմանացիս, որոց զօրավարք էին Սուվորով և Քօպուրկ։ Այլ երկ-չոտութիւն ենիչէրեացն գերևացոյց զջանս վէզիրին. և 'ի փախչել նոցա առ-հասարակ անդստին 'ի սկզբանէ մար-տին, զնոյն և սպայքն արարին. ապա և վէզիրն ինքնին ակամայ կամօք խոյս տուեալ մեկնեցաւ յԻպրայիլ։ Յետ այսր մեծի պատերազմիս որ եղև 'ի 22 սեպտեմբերի՝ առաւ Մոլտաւիա ող-ջոյն. և զի առ Ռիմնիք աւանաւ լեալ էր ճակատամարտն, գլխոյն կատարի-չին Ռիմնիգցի անուն եդ Սուվորովայ։

Գոյժ առմանն Պելկրատայ և խոր-տակման բանակին Օսմանեանց խռո-վեցոյց զկոստանդնուպօլիս. և Սէ-լիմ արքայ ընկեցեալ զԵուսուֆ յիշխա-նութենէն՝ կարգեաց 'ի տեղի նորա վէզիր մեծ զաւթմանամէնի ծովակալն զՃէզայիրլի Հասան փաշա. այլ մինչ չև ժամանեալ սորա առնել ինչ գործ կարևոր՝ առին Ռուսք և զԳօճապէյ որ է Օտեսսա, և զԳաւշան, և զԱզքեր-ման և զՊէնտէր։

Ի սկզբան 1790 ամին արքային Բրու-սաց ու խո նիզակակցութեան հաստա-

տեալ ընդ Օսմանեանս՝ հաւանեցոյց և զկայսրն Լէոբոլտ զյաջորդն և զեղբայր Յովսեփայ կայսեր 'ի հաշտութիւն խաղաղութեան : Ի նոյն և զՌուսս յորդորեաց, այլ նոքա ետուն պատասխանի · « Քանզի ոչ 'ի մէնջ ինչ եղև սկիզբն պատերազմիս, հարկ 'ի վերայ կայ զի յօգուտ և 'ի պարծանս մեր լիցի հաշտութիւնդ, և առանց ուրուք միջնորդելոյ » : Այպա 'ի հանել Օսմանեանց զդեսպանն Ռուսաց յարգելանէն Եօթն դուլէի՝ զիջագոյնս խօսեցան Ռուսք · սակայն մարտ պատերազմին չև ևս դադարեաց ընդ ծով և ընդ ցամաք · և փոթեմքին զսաստկութիւն ձմերայնոյն օգնական գտեալ՝ յարձակեցաւ էառ զամուրն Քիլի, և ապա սաստիկ պաշարմամբ և ահագին հրձգութեամբ և անթիւ հարուածովք էառ և զանառիկն Իսմայիլ : Եւ Սելիմարքայ այլ յայլմէ եղեալ սակս տուգանացն մեծի՝ մահու պարտ արար զծերունին Հասան փաշա : Ի միւսում ամի Գօճա Եուսուֆ փաշա վերստին կացեալ վէզիր և պատրաստեալ բանակին՝ զօրաժողով եղև դարձեալ հարիւր հազար արանց, և դիմեաց առնուլ անդրէն զԻսմայիլ · այլ պատրաստեան Ռուսաց Ռեփնին անցեալ ընդ Դանուբ քառասուն և հինգ հազարաւ՝ խորտակեաց զբանակն Օսմանեանց : Անտի և զօրավարն Կուտուզով վանեաց զԹա-

Թարս Կուպանայ, և էառ զամուրն Անափա. և Քութուզով և այլ զօրապետք Ռուսաց առին զայլ ևս ամուր ամուր տեղիս առ Դանուբաւ: Զայս ամենայնտեսեալ Մեծի վեզիրին՝ խնդրեաց 'ի Ռեփնինայ դուլ զինուց առնել. զի Սելիմ արքայ յօժարեալ էր խօսել 'ի հաշտութիւն՝ յորդորեալ և 'ի տէպ տէպ բանագնացութենէ դեսպանաց այլոց եւրոպական պետութեանց. և նախադուռն բանիցն խաղաղութեան այն եղև, զի Օսմանեանք տացեն 'ի ձեռս Ռուսաց զՕզու հանդերձ ամենայն նահանգաւն. և սահմանեցաւ զի տեղի հաշտութեանն լիցի Եաշ քաղաք: Եւ յետ ոչ ինչ յերկար բանակցութեանց 'ի մետասաներորդի աւուր ամսեանն յունուարի յամին 1792 հաստատեցան պայմանք դաշինն, որ 'ի տասնեակ գլուխս բանից բովանդակէին. այս ինքն են,

ա. Յայսմհետէ և անդր սէր և աննենգ բարեկամութիւն հաստատեսցի ընդ մէջ Ռուսաց և Օսմանեանց:

բ. Որպէս յառաջ քան զպատերազմն՝ նոյնպէս և յետ այսօրիկ հաստատուն կացցեն դաշինքն յառաջագոյն կընքեալք 'ի միջի:

գ. Գետն Տնեստեր սահման լիցի ընդ մէջ երկուց պետութեանց:

դ. Օզու և ամենայն գաւառն նորին 'ի Ռուսս թողցի:

Ե . Բնակիչք Մոլտաւիոյ և Երկրին Վլահաց ապահարկ լիցին զամս երկուս, և ազատութիւն լիցի նոցա գնալ յոր վայր և կամք իցեն վաճառաշահութեան աղագաւ :

Զ . Խնամ կալցին Օսմանեանք անդորրութեան աշխարհին Վրաց՝ պատուէր 'ի վերայ եդեալ մերձակայ բդեշխից իւրեանց մի ևս նեղել բնաւ զՎիրս :

Է . Նոյն խնամք ցուցցին և 'ի վերայ բնակչաց կողմանցն Կովկասու :

Ը . Զամենայն հնարս հնարեսցի արքայն Օսմանեանց առ 'ի կարճելոյ զապստամբութիւնս հինիցն Ճէզայիրայ և Թունուզայ :

Թ . Արքայն Օսմանեանց պարտ յանձին կալցի հատուցանել զայժմ հպատակաց իւրոց՝ եթէ չպահեսցին երբեքեան պայմանքն յիշատակեալք 'ի վերոյ :

Ժ . Արձակուրդ և ազատութիւն լիցի ամենայն գերելոցն և բանտարկելոց :

Ի վերայ այսորիկ հաստատեցան և պայմանք երկու 'ի ծածուկ . ա՛ , Զի մի ևս խառնեսցին բնաւ Օսմանեանք յիրս աշխարհին Լեհաց . և բ՛ , Զի հատուսցեն Օսմանեանք Ռուսաց դահեկանս երկոտասան միլիոն յերկինուագս իւր 'ի հատուցումն վնասուցն : Այլ իբրև երկուստեք ձեռնագրեցան պայ-

մանիքս, պատգամաւորն Ռուսաց Պեզ-
պոռոտաքեյայս առար Օսմանեանց՝ ե-
թէ զչխոյն իւր շնորհէ նոցա ըղ-
դրամոյն տուգանս :

Յառաջագոյն քան զամիսս հինգ
հաստատեցաւ և դաշն մշտնջենաւոր
խաղաղութեան ընդ Օսմանեանս և ընդ
Գերմանացիս 'ի Սիսթով քաղաքի 'ի
չորրորդում աւուր ամսեանն օգոստո-
սի. որով պայմանեցաւ զի ամենայն
ինչ կացցէ և մնասցէ որպէս յառաջ քան
զպատերազմն, բայց միայն զհինն Հըր-
շովա հանդերձ փոքու գաւառաւն ետ
Սէլիմ արքայ 'ի Գերմանացիս. և այ-
նուհետև դեսպանք նորանոր երկուս-
տեք առաքեալք բազմապատիկ ըն-
ծայիւք՝ հաստատեցին զուխտ դաշանցն
բարեկամութեան. և Եուսուֆ փա-
շա մեծահանդէս շքով դարձաւ եմուտ
'ի Կոստանդնուպօլիս: Այլ սակայն ոչ
բազում ինչ աւուրց արկաւ յիշխանու-
թենէն, և կարգեցաւ 'ի տեղի նորա
ծերունին Մէլէք Մէհէմմէտ փաշա :

Ի լուր աւետեաց երկոցուն հաշտու-
թեանցս դադարեցին յաշխարհէն Օս-
մանեանց և առաւելին խռովութիւնք և
ապստամբութիւնք որ բազմացեալ էին
յԵգիպտոս և 'ի փոքրն Ասիա և յերկ-
րին Անատուլուայ :

Յամս ժամանակացն այնոցիկ մինչ-
դեռ թագաւորք Եւրոպայ ելեալ զմի-
մեամբք առնէին, խաղաղասէր և զօ-

տանէր արքայն Սելիմ միա եղեալ պա-
րապէր 'ի բարեկարգել զիւր իւրոյ աշ-
խարհին, և հանդերձել կազմել զեր-
ջանկութիւն հպատակաց իւրոց ։ Ցա-
ռաջ քան զամենայն ուշ 'ի կուրծս ա-
րար կանոնաւորել զզինուորութիւն
աշխարհին, յորդորեալ 'ի սոյն առաւե-
լապէս 'ի Չելէպի Մուստաֆայէ ու-
մեմնէ. սմին իրի գունդ մի նոր յօրինեաց
Նիզամի Ճէտիտ անուանեալ, ձմերոցս
նորանորս կառոյց ; և ճարտար գաղ-
ղիացիս ժողովեալ՝ հրաման ետ մարզել
իւրոցն 'ի հրացանութիւն և 'ի ռմբաձիգ
լինել ։ Սահմանեաց և ընդարձակու-
թիւնս տեղեաց 'ի հրահանգս զինուո-
րացն 'ի Դոփխանէ, 'ի Քէաղաթխանէ,
յԻւսկիւտար և յայլ վայրս, և բազում
շինութեամբ զարդարեաց զնոսին։ Կար-
գեաց և աւուրս և ժամս հրահանգաց
գնդից գնդից զօրականին առաջի իւրա-
քանչիւր ձմերոցաց, յորս երևելին էր
որ 'ի Լէվէնտ չիֆթլիկի. և հասս և ա-
ճիկս 'ի սոյն սակս հաստատեաց խոհա-
կան կարգաւորութեամբ՝ տուրս մա-
նունս և թեթևս արկեալ 'ի վերայ հպա-
տակաց ։ Շինեաց և միթերանոցս համ-
բարուց 'ի Կոստանդնուպօլիս և յա-
փունս Դանուբ գետոյ. և 'ի գիւղն
Աշտալուր վառօդանոց մեծ կառոյց,
զոր և այխանի գործեօք զարդարեաց 'ի
մերազնեայց ջաճխատ Առաքել աղա.
և յայնմ հետէ և վառօդ Օսմանեանց ոչ

ինչ ընդհատ էր ազնուութեամբն 'ի վաճառօդս Անգղիացւոց և Հոլանտացւոց :

Զուգապատիւ սմին հռչակեցաւ ընդ այն ժամանակն 'ի մերազնեայս և քաջ մատենագիրն Մուրատճա, որոյ ընտիր մատենագրութիւնքն 'ի բարբառ գաղղիացի յաղագս Օսմանեան կրօնից և պետութեան՝ հաճոյ գտան և արքային Սելիմայ, և առաջինք 'ի տալ Եւրոպացւոց ստուգապատում հմտութիւնս զՕսմանեանց :

Յայս ամենայն բարեկարգութիւնս մեծապէս նպաստ եղեն Սելիմայ որքայի որք եօթն երևելիք, այս ինքն էն Չէլէպի Մուստաֆա էֆէնտի որ գլուխ էր նորակարգ զինուորութեանն, Իպրահիմ քեահեա՝ փոխանորդ վէզիրին մեծի, Եուսուֆ աղա՝ գործակալ մօրն արքայի, Հաճի Իպրահիմ էֆէնտի, ատենադպիրն Մուստաֆա էֆէնտի, Մապէյինճի Ահմէտ պէյ, և Գահվէճի պաշը Րիւսթէմ աղա : Սոցին խորհրդով ոչ միայն 'ի զինուորականս, այլ և 'ի քաղաքական իրաց տեսչութիւնս ոչ սակաւ բարեկարգութիւնք գործեցան․ յորոց սակի և այն էր, զի յայնժամ սկսան ատենակալք Օսմանեանց 'ի ծածուկ պահել զգաղտնիս պետութեանն, և լռեալ ունել ամենայն ուրեք․ և ոչ միայն սամուրենիս ագուցանել 'ի պատիւ, այլ և ըստ Եւրոպացւոց օրինի նշանս ունկս բաշխել՝ մանեկ

և աստղ ունելով 'ի վերայ · կառուցաւ
և գործարան թղթոյ 'ի Հինդքեար
Խոքէլէսի , և վերստին բացաւ յիւսկիւ-
տար տպագրատունն տաճկական բարբա-
ռոյ որ 'ի բազմաց հետէ 'ի խափանի
կայր ։ Սակայն կարի իմն համարձա-
կեալ եօթանեցունց արանցս՝ ձեռն ար-
կին ինքնակամ ինքնագլուխ իշխանու-
թեամբ գործել բազում ինչ , և հակա-
ռակ ևս կամաց Սէլիմայ արքայի , և կե-
ղեքել զհպատակս նորա ։

Մի միայն այր արժանի սիրոյ և
մեծարութեան այնպիսւոյ արքայի ցու-
ցաւ Գիւչիւք Հիւսէյին փաշա , այր
փոքր անձամբ , այլ եռանդուն և արի
և ճարտար յոյժ յոյժ , և զգօնութեամբ
մտաց և սիրով օգտի պետութեանն՝ ա-
մենեցուն վեհագոյն ։ Որոյ կարգեալ
յարքայէ 'ի ծովակալութեան պատիւ,
անթիւ բարեկարգութիւնս արար 'ի
Նաւատորմին Օսմանեանց · ոչ էր չափ
առատաձեռնութեան նորա առ վաս-
տակաւորս , և ոչ դարձեալ ահարկու-
ցասմանն ընդդէմ յանցուցելոց ։ Ընդ
որ մխայեալ եօթանց այլոցն բռնա-
ցելոց՝ հնարեցան և ուր ուրեմն յաջո-
ղեցան արձակել զայրն քաջ ապարապե-
տութեան պաշտամամբ 'ի վերայ Փա-
ղուան օղլու ապստամբին , և ապա գե-
ղամնաց սպանին անդանօր զայրն բա-
րերար և բարեբարոյ ։

Տագնապ մեծ եհաս և արքային Սէ-

լիմայ յերեսաց խռովութեանն Գաղղիոյ՝ յորմէ վրդովեալ տատանէր Եւրոպա ողջոյն ։ Քանզի Գաղղիացիք յինքեանս կամէին զՕսմանեանսն արկանել, իսկ Բրուսք և Գերմանացիք զնիզակակցութիւն նոցին խնդրէին ․ սակայն Սելիմ արքայ լաւ համարեցաւ և յերկոցունց կողմանց անտի ձեռնպահ լինել, և խնամոց իւրոյ աշխարհին կալ մտադիր ։

Ապստամբեաց 'ի նմանէ յամին 1797 բդեաշխն Վիտինայ Փազուան օղլու 'ի գաղտ գրգռութենէ Գաղղիացւոց, և զօրու ծանու դիմեալ էառ զՆիկոպօլիս, զՍիսթով, զՓասարովիչ, զՍէմէնտրէ և զՍոֆիա, և անտի խաղացեալ գայր յԱդրիանուպօլիս՝ խորտակեալ և հալածեալ զյոլովս 'ի կուսակալաց արձակելոց 'ի վերայ նորա ։ Ապա յարձակեցաւ ընդդէմ բռնակալին Քիւչիւք Հիւսէյին փաշա, և հալածական տարեալ զՓազուան օղլուն փակեաց անդրէն 'ի Վիտին ։ Ծանեաւ սա զի 'ի նորա բանի լեալ էր և ձառադէմ բդեաշխին վիթխարի Քիւրտ Ալօ փաշա անուանեալ, զոր կանխաւ իսկ առաքեալ էր Օսմանեանց ընդդէմ ապստամբին․ վասն որոյ կամէր բառնալ զնա 'ի կենաց, այլ չէր ոք որ իշխէր ձեռն ամբառնալ ընդդէմ անձառնի առնն ։ Եդ 'ի մտի ինքնին սպանանել զնա ․ և ըստ սովորութեանն կոչեալ զնա յաւուր միում ընդ վրանաւ

խուռն՝ եցոյց նմա և ետ 'ի ձեռս նորա ճարտարագործ հրացանս երկուս , և ապա առեալ արձակեաց հանդէպ իւր ընդ լուսամուտն իբրու փորձոյ աղագաւ ։ Զնոյն փորձ և 'ի վաղիւ անդր արարեալ , և յաւուրն երրորդի այն ինչ դարձեալ կարկառէր Աղօ փաշա զձեռն իւր առնուլ զհրացան գործիսն՝ Հիւսէյին արձակեաց զնոսա 'ի վերայ նորին . և հուժկուն Աղօ Թէպէտև կարեվէր խոցեցաւ , սակայն կանգնեցաւ եկաց և մերկեաց զսուսեր իւր . յայնժամ՝ հարան 'ի վերայ նորա որ շուրջն կային , և տապալեալ զնա անդրէն յերկիր՝ գլխատեցին և արկին զկառափնն առաջի զօրաց նորա ։

Ի նմին ամի աղմուկ մեծ յուզեցաւ 'ի քաղաքին Զմիւռնացւոց . զի յոյն ոմն սպան պայլագին 'ի պահանորդ ենիչէրեաց զօք . ընդ որ մոլեգնեալ առհասարակ զինուորակցաց առնն դիմեցին առ հիւպատոս Եւրոպացւոց և պահանջէին զի 'ի բուռն տացի նոցա սպանողն . և իբրև ոչ հասին խնդրոյն իւրեանց , հուր հարեալ այրեցին տունս և կրպակս եօթն հազար , և զինչս նոցա առին յաւարի ։ Բողոք կալան հիւպատոսք ամենեքեան 'ի դուռնն արքունի . և գունդք զօրաց առաքեալ անտի 'ի Զմիւռնիա ցածուցին զենիչէրիսն . և որք 'ի նաւս փախուցեալ էին Եւրոպացիք՝ անդրէն դարձան , և սակաւ

ինչ հազիւ թէ 'ի բուռն արկին յընչից իւրաքանչիւր ։

Ընդ այն ժամանակս ամբաստանայր յԵւրոպա Նափոլէոն Պօնափառթէ սպարապետ Գաղղիացւոց ․ և զապըստամբութիւնս իշխանացն Արաբացւոց յԵգիպտոս պատճառս կալեալ իւրումն անյագ ըղձից տիեզերակալելոյ յընդհանուրս, յամսեանն մայիսի յամին 1798 վարեաց զօրմիղ նաւուց իւրոց 'ի Գաղղիոյ, և առեալ խաղաղութեամբ զՄելիտէ, որ է Մալթա, զկնի երկամսեայ աւուրց եկն եկաց առաջի Աղեքսանդրիոյ Եգիպտացւոց, և տիրեաց քաղաքին ։ « Ոչ է իմ պատերազմ, ասէր, ընդ արքային Օսմանեանց ․ այլ 'ի կործանել հասեալ կամ զբռնութիւնս Արաբացւոց, և զզրկանս՝ որովք նեղէին դոքա զվաճառականս Գաղղիացւոց » ։

Այլ այս բանք ոչ ինչ զօրեցին առաջի Օսմանեանց, որոց անհաւատալի ևս թուէր յարձակումն այնպիսի 'ի վաղեմի բարեկամացն իւրեանց ։ Արգելին յԵտիգուլէ զդեսպան նոցին, զվաճառականս Գաղղիացւոց որ գտանէին ընդ ամենայն աշխարհն՝ արկանէին 'ի բանտ՝ յափշտակեալ զինչս նոցա, և զնաւատորմն իւրեանց խառնեցին ընդ տորմիղս Ռուսաց և Անգղիացւոց դաշնակցելոց ընդդէմ հասարակաց թշնամւոյն ։

Իսկ Գաղղիացիք վանեալ պատե-

բազմաւ զԱրաբացիս՝ առին զԵգիպ-
տոս, և 'ի սուղ ժամանակի կերպարա-
նափոխ արարին 'ի նմա զամենայն:
Գրեաց Նափոլէոն և Թուղթ բարեկա-
մութեան առ շէրիֆն Մէքքէի և առ
կուսակալն Աքեայի. և Թէպէտ նա-
ւատորմն իւր խորտակեցաւ յԱնգղիա-
ցւոց, Թէպէտ և Արաբացիք՝ որոց ա-
ռաջնորդք էին Մուրատ և Իպրահիմ,
շատ ջանացան վտանգել զնա, այլ նա
յաղթական եղև ամենեցուն, և որք
գիտնականք որ էին ընդ նմա՝ յուզեցին
քննեցին իմաստնապէս զամենայն եր-
կիրն: Սակայն ոչ ընդ երկար վայելե-
ցին Գաղղիացիք 'ի դիւրագին ժառան-
գութեան անդ ականաւոր աշխարհին:
Քանզի բդեաշխն Աքեայի Ճէզզար
Ահմէտ փաշա ոչ միայն մերժեաց
զԹուղթ սպարապետին Գաղղիացւոց,
այլ և հաշտեալ ընդ Թագաւորին Իւ-
րում Սէլիմայ՝ միաբանեաց ընդ իւր և
զայլ կուսակալս կողմանցն և զդէմ կա-
լաւ Թշնամեաց: Գաղղիացիք առին և
զՅոպպէ, և զամբականն 'ի սուր սու-
սերի կոտորեալ՝ լցան լիացան աւարօք
նոցին. այլ քանզի ժանտախտն Ճարա-
կէր 'ի կողմանսն յայնոսիկ՝ ընդ սմու-
րենեացն աւարելոց զգեցան և զմահն
տարաժամ, և օր ըստ օրէ ծախէր
սպառէր բազմութիւն նոցա: Անտի
դիմեաց Պօնափառթէ յառումն Ա-
քեայի, զոր 'ի բազմաց հետէ ամրա-

ցուցանէին Օսմանեանք և Անգղիացիք, և սաստկապէս պաշարեաց զայն: Սաստկագոյնս ընդդիմացան նմա և պաշարեալքն, և հուսկ ուրեմն հարկեցուցին զնա մեկնել անտի յԵգիպտոս:

Այս իբրև ետես Պոնափառթէ՝ զի Օսմանեանք բազմաթիւ նաւուք միաբանեալ ընդ Ռուսս և ընդ Անգղիացիս վանեցին զիւրան 'ի Յոնիական կղզեաց, և խաղան գան 'ի վերայ իւր, եւ ընդդէմ նոցա յիջանել նոցին 'ի ծովափինն Աղեքսանդրիոյ յամուրն Ապուքիր, և էառ զայն 'ի ձեռաց նոցա:

Դարձ արար ինքն այնուհետև յամին երկրորդի 'ի Գաղղիա, թողեալ զտեսչութիւն բանակին և զաշխարհին 'ի զօրավարին Քլէպէր, որ իւրով ազատամիտ գնացիւք սիրելի լեալ էր իւրոցն, և պատկառելի յաչս բնակչաց երկրին: Այլ Գաղղիացիք յոյժ նուաղեալ էին 'ի պատերազմաց և 'ի տառապանաց, յօդոյ երկրին և 'ի նորանոր հիւանդութեանց, և Քլէպէր ազդ արար 'ի Գաղղիա զհանգամանաց իւրոյ բանակին: Անկաւ այն թուղթ 'ի ձեռս Անգղիացւոց, և առաւել ևս խրախուսեցին ընդդաշնակցաց իւրեանց Օսմանեանց և Ռուսաց՝ աճապարել 'ի բնաբարձ ջնջումն Գաղղիացւոց յԵգիպտոսէ:

Ի յամել պատասխանւոյն 'ի Գաղղիոյ՝ Քլէպէր եդ 'ի մտի խաղաղութիւն առնել ընդ Օսմանեանս՝ խոստա-

նաւով եկանել յԵգիպտոսէ, և վերջին հասանելով իմն թուէր 'ի նոյն: Այլ յընդդիմանալ դեսպանին Անգղիացւոց, և 'ի պահանջել զի Գաղղիացիք առ հասարակ 'ի բաց եդեալ զզէնս իւրեանց մտանիցեն 'ի գերութիւն, Քլէպէր պատրաստեցաւ 'ի պատերազմ, և խորտակեաց զբանակն Օսմանեանց: Այս պատուհասակոծ արար զբնակիչս Եգիպտոսի՝ որ սատարեալ էին թշնամեաց իւրոց, և կոտորեալ էին զբազմութիւն Գաղղիացւոց եղելոց 'ի քաղաքին: Յայնժամ և Մուրատ պէյ որ բազում վէշտս հասուցեալ էր զօրացն Գաղղիացւոց՝ հաւանեցաւ 'ի հաշտութիւն ընդ Քլէպէրայ, և ընկալաւ 'ի նմանէ զիշխանութիւն վերնոյն Եգիպտոսի:

Այսպէս ուր ուրեմն հանդարտեալ Եգիպտացւոց՝ եդին 'ի մտի եթէ տընտեսութեան վերին խնամոցն էր գործ տիրանալ Գաղղիացւոցն յիւրեանց աշխարհին. և Քլէպէր այնուհետև ներումն շնորհեալ նոցա, և յամենայնի արդարութեամբ և հայրախնամ գթով վարեալ՝ սիրելի եղև ամենեցուն: Ապա մինչդեռ յաւուր միում ճեմ առեալ շրջէր ընդ ճարտարապետի ումեմն յիւրում նորաշէն պալատան, այր ոմն զգեստաւորեալ ըստ արևելեան տարազու՝ յարձակեցաւ եմուտ մոլեգին սուսերամերկ 'ի սրահն, և եհար 'ի սիրտ

Քլէպէրայ ։ Իսկ և կամէր Ճարտարա-
պետն ունել զայրն՝ հարուել ինքն 'ի վէց
հարուածս՝ և փշրեաց զոգին առ ոտս
զօրավարին իւրոյ . հազիւ կարացեալ
ազդ առնել առ որս ժամանեալ էին 'ի
տեղի անդր՝ զկերպարանս դաւաճա-
նին ։ Գտաւ այրն, զի Թաքուցեալ էր
'ի մացառս ուրեք 'ի պարտիզին, և 'ի
խոշտանգանս գանից խոստովան եղև
զՃիրն . յայտնեաց և զդաւակիցս իւր,
և Նոքօք հանդերձ չարաչար մա-
հուամբ եղոյծ զվրէժն ։ Այլ Քլէպէր
ոչ ևս էր կենդանի, և Մընու զօրավարն
ուրացող անցեալ 'ի տեղի Նորա՝ իւրով
անմիտ գնացիւք ունայնացոյց զամե-
նայն ճիգն Քլէպէրայ և պայլոց զօրա-
գլխաց ։

Քանզի Օսմանեանք և Անգղիացիք
յերից կողմանց ընդ ծով և ընդ ցամաք
մերձ յԵգիպտոս, բաղումն անգամ հա-
րին վանեցին զսակաւաձեռն գունդս
Գաղղիացւոց, և 'ի Նեղ արկին զնոսա.
մինչև Պէլիառ ոմն 'ի զօրապետաց Նոցին
խոստացաւ բանս եդ ընդ սպարապե-
տին Անգղիացւոց Հուչինսոնայ և ընդ
Եուսուֆ փաշայի, և մեկնեցաւ իւրով-
քըն հանդերձ 'ի Գաղղիա յիններորդի
աւուր ամսեանն օգոստոսի ։ Մընու,
որ 'ի ժամանակին յայնմիկ ամփոփեալ
կայր յԱղէքսանդրիա, վառեալ 'ի ցա-
սումն բարկութեան՝ անզօր և անօրէն
կոչէր զդաշինն, և ակնդէր մարտ դնել

մինչև 'ի սպառ ։ Այլ 'ի պաշարել Հուչինսոնայ սաստկապէս զքաղաքն, խնդրեցին Գաղղիացիք և ընկալան 'ի նմանէ զխաղաղութիւն , պայմանաւ՝ զի զօրականք Գաղղիացւոց հանդերձ կահիւ և կարասեաւ և մետասան ևեթ թնդանօթիւք մեկնեսցին յԱղէքսանդրիոյ 'ի տասն աւուրս ։ Այսպէս զրաւեցաւ արշաւանն Գաղղիացւոց յԵգիպտոս՝ համբաւեալ յայժ յանցս ութուտասներորդի դարուն ։

Յայնմ ժամանակի 'ի տիրապետել Նափոլէոնի Պօնափարթեայ 'ի Գաղղիա՝ խաղաղութիւն արար ընդ նմա Սէլիմ արքայ յինններորդի աւուր ամսեանն հոկտեմբերի . որով Եգիպտոս բոլորովին դարձուցաւ առ նա , և Յոնիական կղզիք որոշեցան յառանձինն հասարակապետութիւն . եղեն և գերեդարձք երկուստեք , և նորոգեցաւ նախկինն սէր բարեկամութեան ընդ երկոսին պետութիւնս ։

Ի բառնալ ապա խաղաղութեան Եւրոպայ յերեսաց պատերազմացն Նափոլէոնի, Սէլիմ արքայ ուշի ուշով միտ դնէր չկորուսանել զիւրն . ամրացուցանէր զբերդորայս իւր 'ի սահմանագլուխս աշխարհին , և զօրս առաձեռն գումարէր հետ զհետէ 'ի կողմանս Տնեստերայ և Դանուբայ ։ Բայց առաւել քան զամենայն գուն գործէր 'ի հրահանգս նորակարգ զինուորութեանն ,

ոտավակն ունէր ըստ Եւրոպացւոց օ-
րինի զդէմ ունել նոցին յորժամ դէպն
պահանջիցէ։ Այլ 'ի պատճառս մե-
ծամեծ անցիցն որ զհետ եկին այսր զի-
նուորութեան՝ լաւ իցէ 'ի սկզբանէ ան-
տի առեալ վերստին՝ սակաւուք զիրսն
պարզաբանել։

Ի ժամանակս ապստամբութեան
փազուան օղլու բդեշխին դեսպան 'ի
Գաղղիոյ եկեալ 'ի Կոստանդնուպօլիս
Օպէռ Տիւպէյէ անուն՝ երբեր 'ի պար-
գեւ արքայի Թնդանօթս պատերազմի
հանդերձ իւրեանց կազմածովք, և ընդ-
նովին այայս և զինուորս և զինա-
գործս, որպէս զի ուսուսցեն զարուես-
տըս իւրեանց և Օսմանեանց։ Եւ ոչ
դերեւացաւ խորհուրդն. զի վաղ ուսան
սոքա զիրսն և հրահանգեցան, Թէպէտ
և ենիչէրիք չառին ընաւ յանձն մտա-
նել ընդ գաղղիական կրթութեամբ։ Ա-
պա 'ի մեռանել դեսպանին նուազե-
ցաւ և գունդն նորընտիր՝ յորում ոչ
սակաւք էին քրիստոնեայք ուրացեալք
'ի հաւատոց, և բազումք 'ի մարզիչ զօ-
րագլխաց անտի մեկնեցան 'ի Գաղղիա։
Հիւսէյին փաշա առեալ զիշխանու-
թիւն ծովակալութեան՝ զոմանս 'ի նո-
ցանէ և 'ի գնդէ անտի ցրուելոյ յինքն
ընկալաւ, և տայր նոցա առնել հրա-
հանգս մարտի առաջի իւրոյ ապարա-
նիցն՝ մանաւանդ յաւուրս ուրբա-
թուց, և ժողովուրդն խուռն բազմու-

թեամբ անդր ընթացեալ լինէին 'ի ղնին . էին եւ որք ունչս առնէին , եւ այլք՝ որ բանս նախատանաց բարբառէին առ նոսա : Իբրեւ բացաւ դուռն պատերազմին Օսմանեանց ընդ Գաղղիացիս յամին 1798 , Հիւսէյին փաշա տարաւ զզունդն զայն ընդ իւր յԱսորիս եւ յԵգիպտոս , եւ նոքա արիաբար կռուեցան'ի պաշարման անդ Աքեայի . վասն որոյ եւ 'ի դարձին իւրեանց 'ի Թագաւորեալ քաղաքն՝ մեծապէս պատուեալ գովեցան առ հասարակ յամենեցունց :

Ի գովութեանց աստի ամբոխին քաջալերեցաւ Սէլիմ արքայ յաւելուլ զթիւ նորընտիր զօրականին , եւ կարգել նոցա ռոճիկ առանձինն . եւ ամենայն աւագանին առ մեծ ունէր յիրացն , բայց ծովակալն Հիւսէյին աներկիւղ էր յամենայնէ , եւ դենպետն Վէլիզադէ Էֆէնտի յանդորրու ունէր զգխնականս : Ջօրապետն ենիչէրեաց եւ այլք 'ի գլխաւորաց խռովայոյզ գնդին էին յայնժամ ընդ վէզիրին յԵգիպտոս . եւ վասն այնորիկ Հիւսէյին եւ դենպետն ոչ ինչ հարկ համարեցան որսալ զսիրտ ենիչէրեացն մնացելոց 'ի քաղաքին , այլ շատ վարկան տալ հանել արքայի հրովարտակ հաստատեալ վճռովք դենպետին :

Սկսան այնուհետեւ բանքն արդիւնք լինել , եւ կուսակալք փոքուն Ասիոյ

ձեռն 'ի գործ արկին զօրս ժողովել և մարզել ըստ եւրոպական օրինի, և զարգասիս ջանիցն վաղվաղակի տեսին ականերև: Քանզի բազմացեալ էին յաւուրսն յայնոսիկ աւազակք և հուղկահարք 'ի Ռումէլի. և ուր յոլով գունդք Ենիչէրեաց արձակեալք 'ի վերայ նոցա ոչ ինչ կարացին սանձել, չորս գունդք 'ի նորընտիր զօրականէ և վաշտ մի հեծելոց հարին վանեցին զխուժան աւազակացն և փախուցին յանմատոյց լերինս Պոսնիոյ:

Զայն իբրև ետես Թագաւորն՝ հրատարակ արար յամին 1805, զի յամենայն գիւղս և 'ի քաղաքս պետութեան ընտրեսցին յԵնիչէրեաց արք կորովիք և յաղթանդամք 'ի քսանամենից մինչև 'ի քսանեհինգեմեանս և յաւելցին 'ի նորակարգն զինուորութիւն: Ընդ այս հրաման Թագաւորին դառնացեալ առ հասարակ խռով հարին Ենիչէրիք ընդ ամենայն տեղիս աշխարհին, զմունետիկսն խոշտանգեցին, զդատաւորս ոմանս չարամահ սպանին, և դենպետն անգամ հազիւ թէ անդորրացոյց զաղմկեալ զխոնականսն. հարկ եղև աւագանւոյն լռել առ ժամն: Այլ 'ի լինել պատերազմին Գաղղիացւոց ընդ Ռուսս և ընդ Բրուսս, առաքեցաւ հրաման առ Գասը փաշա կուսակալն Կիլիկիոյ՝ առաւելուլ զթիւ նորընտիր զօրաց և ածել զնոսա 'ի Կոստանդնու-

պօլիս, և նա արար այնպէս :

Յայնժամ համբաւեցաւ 'ի քաղաքին և ընդ աշխարհն ամենայն՝ եթէ այն գալուստ նորոյ գնդին զմծատալուս պատուհաս ենիչէրեացն գուշակլիցէ · վասն որոյ միաբանեցին առքա ընդ աւազակս արեւմտակողմանցն, և ամրացեալք յԱդրիանուպօլիս՝ աշս յիքեանց տասն հազար արձակեցին ունել զանցս Նըպիպապա լերին : Գաւառ փաշա ուր ուրեմն եհաս խուռնքն 'ի տեղին, և ոչ կարացեալ անցանել յԱդրիանուպօլիս՝ դարձաւ 'ի Պուրկազ, որպէս զի երթիցէ անտի 'ի Ռուսճուգ՝ ուր մնայր նմա Մուստաֆա Պայրագտար սպարապետ այնր ժամու բանակին :

Խակ ենիչէրիք միաբանեալք ընդ աւազակաց՝ կանխեցին կալան զճանապարհըն, և ամրացան 'ի Չորլու, և անտի մտեալ եղեալ հալածեցին զԳաւառ փաշա 'ի Սիլիվրի :

Իբրև ազդ եղև 'ի Կոստանդնուպօլիս այս պարտութիւն նորընտիր զօրականին, ոգի առին ենիչէրիք որ մնացեալ էին 'ի քաղաքի անդ, և փոքր միաւս՝ և ամենայն ժողովուրդն ապստամբէր յարքայէ · զի և գիտնականք ոչ դադարէին 'ի Ջրելոյ զվճիռս դենպետին : Յայնժամ դենպետան ինքնին բարեխօս հաշտութեան եկաց ընդ Թագաւորին և ընդ ենիչէրիս, և ողոքով և պարգևօք և փոփոխմամբ աւագորերոյն փոխեաց

զԹագաւորն և զգունդն նոր 'ի սրտմտութենէ ենիչէրեաց, և ինքն կամովին աքսորեցաւ 'ի Պրուսա, և եղև խաղաղութիւն։ Գատը փաշա դարձ արար յերկիր իւր, և նորընծայ զօրականքն մեկնեցան յիւրեանց ձմերոցս. այլ արքայ չէկաց յետս յառաջադրեալ խորհրդոյն, և ենիչէրիք ոչ երբէք 'ի բաց եդին զկասկած երկիւղին 'ի սրտից իւրեանց։

Ընդ նոյն աւուրս ժամանեաց 'ի Կոստանդնուպօլիս դեսպան 'ի Գաղղիոյ համբաւեալն Սեպաստիանի, այր եռանդուն և գործունեայ. և էր նորա պատուէր հրամանի 'ի Նաբոլէոնէ՝ ջանահնար լինել 'ի գրգռութիւն մարտի Օսմանեանց ընդ Ռուսս. յորում և յաջողեցաւ նա վաղ ընդ փոյթ. քանզի իմացեալ զգաղտնի բանագնացութիւնս իշխանացն Մոլտաւիոյ և Վլախաց ընդ Ռուսս՝ Թելադիր եղև Օսմանեանց փոխել զնոսին յառաջ քան զսահմանեալ ժամանակն առանց ինչ ազդ առնելոյ Ռուսաց՝ որպէս պայմանեալ էր նոցա 'ի վերջնում մուրհակի անդ հաշտութեան։

Բողոք կալաւ դեսպանն Ռուսաց Իտալինսքի զեղելոցն, և խնդրէր զի հաստատեսցին անդրէն առաջինքն յիւրաքանչիւր իշխանութիւնս։ Զնոյն պահանջէր մեծաւ ուժգնութեամբ և Արպըթնոթ դեսպանն Անգղիացւոց

դաշնակցաց Ռուսիոյ՝ համդերձ սպառնալեօք, և Սէլիմ արքայ կատարեաց զկամս նոցա։ Սակայն Ռուսք և այնու ոչ լինէր հանդարտեալ ՚ի ցասմանէ՝ որշաւեցին ՚ի Մոլտաւիա և ՚ի Վլախս, և ՚ի սակաւ աւուրս առին բաց յոլոց ամուր ամուր տեղեաց և զՅաշ և զՊուքրէշ։ Եւ ընդդէմ նոցին Մուստաֆա Պայրագտար, և ընդ նմա փաղուան օղլու, որ յետ յերկար ընդդիմանալոյ խրուժն Թագաւորին՝ հաշտեալ և անմեկնելի սիրով կապեալ էր ընդ նմա. այլ սոքա վանեցան ՚ի Ռուսաց և մեկնեցան ՚ի Ռուսճուգ։

Յանակնկալ արշաւանէ անտի նորոգեցաւ ՚ի սիրտս Օսմանեանց վաղեմի ատելութիւն նոցին ընդդէմ Ռուսաց, և այնպէս խին խռովեցաւ առ հասարակ ժողովուրդն, զի Սէլիմ արքայ առ անքոյթ պահելոյ զկեանս Իթալնաքեայ առաքեաց գունդ մի ենիչէրեաց ՚ի պահպանութիւն ապարանից նորին։ Այս իբրև հարցաւ դեսպանն զպատճառս յարձակման Ռուսաց ՚ի սահմանս Օսմանեանց՝ ետ պատասխանի թէ չեմ ես բնաւ հմուտ իրացն. թէրևս առէ, չև իցէ ժամանեալ ՚ի Բեթրպուրկ երկրորդն իմ թուղթ՝ յորում ծանուցեալ էր իմ զանդրէն հաստատութիւն իշխանացն ընկեցիկ եղելոց։

Եւ մինչդեռ անագանէր պատասխանի դրանն Ռուսաց, Օսմանեանք հրա-

տարակեցին ընդդէմ նոցա մարտ պատերազմի. այլ 'ի խնդրոյ դեսպանին Գաղղիացւոց և 'ի հնարից Արալըթնոթայ չարգելաւ Խթալինսքի յՇտոխտուլէն՝ որպէս էր սովորութիւն. քանզի հաւանեցաւ Սէլիմ 'ի բանս Սեպաստիանեայ՝ որ անվայելուչ ասէր լինել զգործն ազատամիտ թագաւորի հետամուտ եղելոյ եւրոպական բարեկարգութեանց:

Մինչդեռ մեկնէր Խթալինսքի 'ի Կոստանդնուպօլսոյ, ձայն եղև 'ի քաղաքին՝ եթէ տորմիղնաւուց Անգղիացւոց դիմեալ գայ 'ի կիրճն Չանագ գալէսի: Յորմէ խիթացեալ արքայի՝ հրամայեաց անդադրում յառաջ վարել զնորոգութիւն բերդորէից տեղւոյն, զոր և խորհրդով դեսպանին Գաղղիացւոց սկսեալ իսկ էր առնել: Ի նմին ժամանակի նորոգ պատուէր ընկալեալ Արալըթնոթայ յիւրմէ թագաւորէն՝ պահանջէր զի Օսմանեանք լուծցեն զբարեկամութիւն իւրեանց ընդ Գաղղիացիս, արձակեսցեն 'ի բաց վաղվաղակի զՍեպաստիանի, և տացեն յԱնգղիացիս զՉանագ գալէսի և զամենայն նաւատորմն իւրեանց, և 'ի Ռուսս զՄոլտաւիա և զերկիրն Վլախաց: Բաց գիտէր դեսպանն զոր ինչ ունէր առնուլ 'ի պատասխանի տարադէպ պահանջմանցն. վասն որոյ եդ 'ի մտի յառաջ քան զգալուստ իւրոյ նաւա-

տորմին գաղթականաց լինել 'ի քաղաքն հանդերձ ամենայն Անգղիացւովք որ գտանէին անդանօր ։ Ի սոյն պատճառըս եւ այնպէս համբաւել՝ եթէ իւր կամք են կոչունս խրախութեան առնել համօրէն ամենայն ազգականաց իւրոց յայս նիշ նաւի . և իբրև եկին ժողովեցան ամենեքեան՝ յայտնեաց նոցա զկամս իւր , և խոստացաւ ընուլ յարքունուստ զամենայն զկորուստ և զվընաս զոր կրէին առ շտապ տագնապի փախստեանն ։ Եւ 'ի նմին իսկ գիշերի առագաստ պարզեալ՝ եւ ընդ կիրճն արտաքս անվտանգ ։

Իբրև եհաս 'ի Թենեոս՝ ուր էր նաւատորմին Անգղիացւոց, անդ ոխաւ պատգամաւորել ընդ ծովակալին և ընդ փոխանորդի նորուն՝ որ կոչէր Ֆէյզի Էֆէնտի . և այնչափ յերկարեաց զբանագնացութիւնն և դեգերեցոյց վայրապար զՕսմանեանս , մինչև եհաս տորմիղն Անգղիացւոց 'ի բերան կրճիցըն . և էին 'ի նմա ութ նաւք մեծամեծք , երկու միջակք, երկու փոքրիկք, և երկուք ռմբաբերք, և 'ի գլուխ նաւատորմին անցեալ կայր ծովակալն Տուքվորթ ։

Իսկ ծովակալն Օսմանեանց վստահացեալ 'ի չեւս աւարտումն բանագնացութեանցն՝ համարէր եթէ Անգղիացիք ձեռն առնուն անդանօր , և ոչ մատիցեն երբէք յառաջ ։ Այլ սոքա յա-

Ջողակ հողմով մեկեցան 'ի կիրճսն յաւուր յորում տօն էր Օսմանեանց, և Թնդանօթաձիգքն չէին յիւրեանց պահըս, այլ ցրուեալք 'ի տունս և 'ի ժողովարանս հասարակաց։ Հազիւ ուրեմն հրամայեաց նոցա ծովակալն դիմել յիւրաքանչիւր տեղիս, և ահա նաւք Անգղիացւոց սլանային մտանէին մի զմիոյ կնի ընդ ահագին ջրանցսն։ Ծովակալն խռովեալ և այլ յայլմէ եղեալ գոչէր հառաչէր, և առ զայրոյթ սրտին հրամանն անդամ տալ ըստ կարգի անկարանայր։ Ընթացան ենինչէրիք և այլ բերդակալեանն ինքնին 'ի բերդսն, որ կոչին Քիլիտ իւլ պահր և Սուլդանիէ գալէսի, և երկուստէք բուռն զօրութեամբ որձակեալ զԹնդանօթսն՝ ոչ սակաւ վնասեցին զնաւ ծովակալին Անգղիացւոց, որ յառաջընթաց լինէր քան զայլսն։ Յայնժամ և նաւքն Թշնամեաց որձակեալ աստի և անտի անդադար զիւրեանց Թնդանօթս՝ ծածկեցան 'ի Թանձրամած ծուխս կուտակեալ, և այնպէս խոյս տուեալ զերծան 'ի հըրձգութենէ բերդականացն։ Գործ էր զդէմ ունել և նաւատորմին Օսմանեանց՝ որ 'ի բերան կղզեացն սպասեալ մնայր. այլ ծովակալն ինքնին չէր անդ մօտ, և նաւապետին յանկարծ իմն պատահեալ Թշնամեաց՝ Թէպէտ և մարտ եդեալ կռուեցան մեծաւ քաջուԹեամբ, սակայն 'ի վախճանի խորտա-

կեցան , և մին եւեթ 'ի մեծից նաւուցն փախուցեալ գնաց 'ի Կոստանդնուպօլիս ։ Բայց յառաջ իսկ քան զժամանել նաւուն հնչեաց գոյժն 'ի քաղաքին ընդ ձեռն արանց դեսպանին Գաղղիացւոց՝ որ էր 'ի ժամուն 'ի Զանդագ գալեալ · և ամենայն մեղն անկաւ 'ի վերայ ծովակալին և փոխանորդին նորուն ։ Առաջինն քանզի սիրելի յոյժ էր արքային և աւագանւոյն՝ յիշխանութենէն եւեթ և յընչիցն զրկեցաւ · իսկ երկրորդին կենօք չափ տուժեաց զանփութութեան զյանցանան ։

Ի լուր գալստեան անգղիական նաւատորմին զառաջինն յաղմուկ անհնարին պաշարեցաւ Կոստանդնուպօլիս · և արքայ անդէն վաղվաղակի զինանել իմն կամեցեալ 'ի պահանջանս Անգղիացւոց՝ խորհէր 'ի բաց արձակել զԳաղղիացւոց դեսպանն զՍեպաստիանի · առժամն փութացաւ անցուցանել զամենայն զկանանին 'ի հինն արքունիս ։ Այլ իբրև ետես՝ զի ժողովուրդն փոխանակ խռովելոյ ըստ օրինակի աւագանւոյն և լքանելոյ՝ 'ի զայրոյթ սրտմտութեան բորբոքեալք ընդ անիրաւ և անարգ յարձակումն օտար պետութեանն՝ ահաստակ 'ի դէն ընթանային 'ի շինել կանգնել մարտկոցս մեծաւ արագութեամբ 'ի ծովափնեայս քաղաքին, ուր էառ , և սկսաւ քաջալերել զվաստակաւորսն՝ տալով նոցա զամենայն պէտս

պաշտպանութեան առատապէս, և ինքնին անձամբն շուրջ գալով առ նոքօք: Եմուտ առ այլքայ և Սեպաստիանի, և գովեալ զարիութի ժողովրդեանն՝ խրախուսեաց զնա, և ապա ընկալեալ հրաման օգնելոյ քաղաքին խորհրդով և ձեռնտուութեամբ՝ ժողովեաց զամենայն զԳաղղիացիս և բաշխեաց զնոսա 'ի պահ մարտկոցացն, և դրամս ոսկւոյ Տապաղէր վաստակաւորացն Օսմանեանց:

Ընդ երեկս աւուրն երկրորդի երեւեցաւ նաւատորմն Անգղիացւոց 'ի հեռաստանէ, և առ հողմոյն հակառակութեան ոչ կարաց ըստ կամս յառաջադէմ լինել, այլ անդէն իբրու երիւք մղոնօք 'ի բացեայ հարկեցաւ խարիսխ արկանել: Խորհուրդ կալաւ Ծովակալն ընդ դեսպանին՝ և գրեաց 'ի դուռն արքունի թուղթ սիրալիր հրաւիրանաց՝ զիջանել 'ի պահանջանս Անգղիացւոց. այլ թղթաբերքն 'ի տեսիլ դառն և տխուր և սոսկալի կերպարանաց առենին Օսմանեանց զարհուրեալք՝ ոչ համդարձեցին առնուլ զպատասխանի թղթոյն. և 'ի կոչել իւրեանց յարքունիս՝ առաւել ևս ահաբեկեալ խոյս ետուն 'ի նաւահանգիստ անդր: Ի յերկարել այսպէս իրոյն՝ ռամիկն և զօրականք առ հասարակ, Օսմանեանք և Եւրոպականք, Յոյնք և Հայք և Հրեայք անխտիր վաստակէին 'ի շինութիւն

մարտկոցաց՝ բերելով զքարինս և զփայտըս և ձգելով զԹնդանօԹս ։ Բազմութիւն նաւուց 'ի կրկին կարգս տողեալ փակէր զերկուսին զմարտկոցան մեծամեծըս, զծայր ապարանիցն արքունի և զԴոփխանէին. եօԹն նաւք լայնատարածք հանդէպ Պէշիքթաշայ պահ ունէին Վռափորի, և 'ի Դոփխանէ անհամար նաւակք կային 'ի պատրաստի՝ յորս լի էին զինուորաւ նիւԹք արձակելիք 'ի Թշնամիս. և յերկուս աւուրն շարեցան 'ի վերայ մարտկոցաց Թնդանօթք ոչինչ պակաս քան զհազար և երկուհարիւր ։

Դարձեալ նաւմականի արարին Անգղիացիք յաւուրն երկրորդի 'ի գուռն՝ սաստկագոյնս առաջի առնելով զպահանջանս իւրեանց. և աւագանին յերկարաձգէին խորհրդով զպատգամաւորութիւնն զաւուրս քանի մի ։ Այասկան և ինքեանք յախորժագոյնս տալ ոցա պատասխանի. և միանգամայն արձակեցին 'ի Չանաք գալէսի զարի և զխոհական բդեաշխն Խամայիլ փաշա, և ընդ նմա այս պատերազմի և Թնդանօթաձիգ զօրականս ։ Զայն իբրև զգաց Տուքվորթ՝ յերկրորդում աւուր ամսեանն մարտի պարզեաց ընդ այգն զառագաստս իւր. և մինչդեռ քաղաքացիքն բովանդակ կազմ և պատրաստք ամարտկոցօքն կային՝ ակնունելին սկսանելոյ հրձգութեանց և պատերազմին,

և ահա նաւատորմն Անգղիացւոց դարձուցեալ յանկարծ անկի զառաջնաւացն և հողմալից առագաստիւք սրընթաց եղեալ ծածկեցաւ յաչաց ժողովրդեանն՝ որ 'ի ձայն բարձր օրհնէին զԱստուած, զի ապրեցան 'ի մեծէ վտանգէն :

Ոչ այնպէս դիւրաւ ելս գտին Անգղիացիք 'ի կղզեացն որպէս զմտաւն դնեալ էր . զի ահագին ռումբքն արձակեալք յերկուց կողմանց վտանգեցին զնաւս նոցա յոյժ . և թէ մեծամեծ թնդանօթք Օսմանեանց չէին հաստատեալք 'ի գետնի և անշարժք՝ որպէս զի հնար լինէր դարձուցանել զկշռութիւն նոցին ըստ կամս և ըստ պէտս , թերևս բնաւ իսկ չկարէին ապրել յանձողոպրելի որսգայթէն : Յառաջնում անցն ըստ Անգղիացւոցն ասելոյ մեռան 'ի նոցանէ ոգիք երեսուն , և արք հարիւր վիրաւորեցան . իսկ յերկրորդումն թիւ մեռելոցն եղև հարիւր և յիսուն և եօթն , և վիրաւորելոցն չորեքհարիւր և երկոտասան :

Յայնմ ժամանակի Արաբացիք վերըստին գլուխ ամբարձեալ բռնակալէին յԵգիպտոս . և գունդ մի Արնաւուտաց արձակեալ յարքունի դրանէ ընդդէմ նոցա՝ թէպէտ և զառաջինն ախոյեար 'ի վեր եկին ընդ Արաբացիս , այլ 'ի վերջէ միաբանեցին ընդ նոսա : Սակայն յետ սակաւուց դարձեալ ձգեցան 'ի նոցանէ և եղեն խնդրողութք : Ի սո-

ստ երեւելի էր յայնժամ՝ այժմու կու-
սակալն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի
փաշա սակս իւրոյ քաջակորով և մեծա-
հանճար բարոյից. որոյ ընկալեալ 'ի
գլանէ զօրս և արծաթ բազում, յինքն
յանկոյց զազգականս իւր, և ելեալ
ընդդէմ Արաբացւոց՝ զբազումս յիշխա-
նաց նոցին գտեալ և մատնութեամբ
որոյ Ճարակ եա, և ընդ միացեալն
Ճակատ յարդարեալ խորտակեաց մինչ
'ի սպառ, և հալածեալ փախոյց զնոսա
'ի վերինն Եգիպտոս, և ինքն եառ զկու-
սակալութիւն Եգիպտոսի՝ խոստանա-
լով տալ յարքունիս ամ ըստ ամէ
զհարիւր երկու հազար և հինգհարիւր
քսակաց ոսկւոյ:

Արդ Անգղիացիք կամելով տիրել Ե-
գիպտոսի որպէս արարին նախանձորդ-
քըն իւրեանց Գաղղիացիք, յեղանել
իւրեանց 'ի Կոստանդնուպոլսոյ՝ դէպ
ուղիղ անդր ուղ արարին, և անհակա-
ռակ տիրեցին Աղեքսանդրիոյ, զի Մէ-
հէմմէտ Ալի յԵգիպտոս էր յայնժամ:
Անդի մի ամն 'ի զօրավարացն Անգղիա-
ցւոց հազար և երկերիւր զօրականօք
խաղաց և եմուտ խառն 'ի խառն 'ի
Րաշիտ քաղաք. և քաղաքացիքն իբրե-
ւես զի ամենեքեան մտին 'ի ներքս՝
ետ կոտորել զնոսա 'ի սուր սուսերի
յանձուկ և 'ի մանուածոյ փողոցս քա-
ղաքին, և սակաւք ոմանք եւեթ փա-
խուցեալք Ճողոպրեցան: Եհաս ապա

'ի վերայ Անգղիացւոց և ինքն Մէհէմմէտ Ալի փաշա բազմութեամբ զօրաց, և վանեաց և պաշարեաց զնոսին յԱղեքսանդրիա : Այլ նոքա աճապարեցին, ուխտ խաղաղութեան հաստատեցին ընդ նմա, և առանց մեծագոյն վնասուց մեկնեցան անտի :

Զայս ամենայն տեսեալ արքայ Սէլիմ հրապարակեաց զպատերազմ ընդդէմ Անգղիացւոց, և հաստատեաց զգաշն նիզակակցութեան ընդ Գաղղիացիս . այլ Անգղիացիք փոխանակ պատասխանի տալոյ յայտարարութեանն յետս կոչեցին անդրէն զամենայն զնաւս իւրեանց, որով ցուցին զժկամութիւն իւրեանց ընդ նոր պատերազմ :

Ի մեկնել Անգղիացւոց 'ի Կոստանդնուպօլսոյ՝ ձեռն 'ի գործ արարին Օսմանեանք ամրացուցանել զկիրճսն Չանագ գալէսի . և ծովակալն Սէյիտ Ալի փաշա մարզեալն առ ոտս Ճէզայիրլի Հասան փաշային՝ այր հուժկու և որտեայ՝ էր 'ի Հելլէսպոնտոս ինն մեծամեծ նաւուք, և պատահեալ նաւատորմին Ռուսաց՝ որով զօրավարն Սինեաւին դեգերէր 'ի Միջերկրական ծովուն, բախեցաւ ընդ նոսա ուժգին զօրութեամբ . այլ առ անհրահանգ բարուց նաւապետաց իւրոց ցրուեցաւ տորմիղն, և ինքն հարկեցաւ առ ժամն խոյս տալ 'ի տեղւոյէն : Այլ և

գլխաւորել զփոխանորդ իւր զՃէրէմէթ-ակէյ, և հանդերձէր կազմէր յարձակել վերստին ընդդէմ Ռուսաց· բայց նոքա քանզի ոչ սակաւ տուգանս կրեալ էին 'ի նաւամարտին, մեկնեցան 'ի Յոնիականն կղզիս, և ոչ ևս դարձան այսրէն:

Եւ իբրև այսպէս անդորրացան Օսմանեանք 'ի ծովական մարտանց, խորհէին այնուհետև ընդ ցամաք լինել զօրաժողով, և վանել զՌուսս 'ի Մոլտաւիոյ և յերկրէն Վլահաց. և ժամանակն իսկ ձեռնտու օգնական էր նոցա սակս յաղթանակութեանց Նափոլէոնի յարևմտակողմանս:

Պատուէր հրամանի եղև կուսակալին Պոսնիոյ խաղալ նախ 'ի վերայ Սերվոյ՝ որ այսպէս պատճառանօք մաքառեալ էին ընդ Ռուսս: Իսկ կողմանակեան եւրոպեան հանդերձ այլովք կուսակալօք կողմանցն արձակեցան 'ի Շումնա, ուր ունէր լինել ժողովածոյն մեծի բանակին: Մուստաֆա Պայրագտար, որ իբրով խիզախ և անվեհեր բարոյիւք անուանի եղեալ էր՝ հրաման ընկալաւ յարքայէ մնալ 'ի Ռուսճուգ, և անդ յարշաւել վեզիրին մեծի 'ի Մոլտաւիա՝ դիմել ընդ նմա 'ի Վլահս:

Յամենեանն տարիլի ընկալան Ենիչէրիք զուռճիկս իւրեանց և չուեցին 'ի Շումնա՝ ունելով իւրեանց զօրագլուխ զայր ոմն սիրող եւրոպական հրահան-

դայ։ Յետ սակաւուց ելին 'ի Կոստանդնուպօլսոյ և վեզիրն և փոխանորդ նորա, եւ և համարակալն արքունի և րէիս էֆէնտին և այլ ամենայն աւագորեարն. և միայն անդէն Մուսա փաշա տեղապահ, և այլք ոմանք 'ի մեծամեծաց. և նորակարգ զօրականացն գունդք սփռեցան 'ի մարտկոցս Վոսփորի։

Ընդ այն ժամանակս վճարեցաւ 'ի կենցաղոյս խոհական դեսպանն Վէլիզաւէ. և Սէլիմ արքայ 'ի դարման մեծի տուգանացն ընտրեաց 'ի տեղի նորա զեւրոպեան զօրաց դատաւորն. զի կարծէր զնա այր լինել հանճարեղ յոյժ, ներհուն յամենայնի և սիրող օգտի հասարակաց. այլ խաբեցաւ. զի նա ոչ միայն 'ի շահ և 'ի փառս անձին կարգէր զամենայն զխորհուրդս իւր 'ի ծածուկ, այլև ոխերիմ թշնամութիւն բերէր յանձին հակառակ արքային և խորհրդոց նորա։ Վասն որոյ սկսաւ անդէն վաղվաղակի չարիս մեքենայել ընդդէմ տեառն իւրոյ և բարերարի։ Եգիտ իւր խորհրդակից և զտեղապահ վեզիրին զՔէօսէ Մուսա փաշա զայր փառասէր և անագորոյն, որ ոխութիւն մեծ տածէր 'ի սրտի իւրում ընդդէմ ամենայն խորհրդականաց սիրելեաց արքային։

Զհետ մեկնելոյ Անգղիացւոցն 'ի Թագաւորեալ քաղաքէ անտի փոյթ

կալաւ Սէլիմ արքայ ոչ միայն զկիրճսն Մարմարայի ամրացուցանել, այլ և զնեղուց Սեաւ ծովուն՝ մաւտակայս երկուստեք Վոսփորի կառուցանելով և հրապէնս և պահնակս 'ի նորընծայ զօրականէն 'ի նոյին կարգելով. այլ այս իսկ նիւթ եղև բորբոքելոյ խռովութեանն՝ որով և յաթոռոյ և յարեէ իսկ անկաւ տարաբախտիկ արքայն Սէլիմ:

Քանզի որ աւտուչքն էին շնութեան մաւտակոյացն Վոսփորի՝ Մահմուտ էֆէնտի և Սէյիտ Մէհէմմէտ էֆէնտի՝ առ սակաւ սակաւ մուծին 'ի պահանորդութիւն նորաշէն մաւտակացն զունդս զունդս 'ի նորակարգ զօրականէն, որ և Հաճանի կամ Արքունական անուանէր զինուորութիւն: Եւ զի մինչև ցայնժամ պահեկապանքն Վոսփորի խառնամբոխք ոմանք էին 'ի Վրաց, 'ի Պօնտացւոց, յԱռնաւուտաց, և առաւելապէս 'ի Լազից, որք և Եամագ կամ Օժանդակք կոչէին, սոքա գժկամակէին յոյժ յոյժ 'ի մերոյ նորաձևութեանցն, մինչև 'ի մէգ ևս եկեալ ընդ արքունական զօրուն՝ 'ի բաց վանեցին զնոսա 'ի մաւտակայաց անտի մի անգամ և երկիցս, և հալածեալ ցածեան առ սուղ ինչ ժամանակ յողքոյ և 'ի սպառնալեաց զօրապետի պարտիզապան զօրականացն, որ է պոսթանճի պաշի:

Յաւուր միում կոչեաց Սէլիմ արքայ զպոսթանճի պաշին և ասէ ցնա.

« կամիմ զի ամենայն զօրականք որ ընդ ձեռամբ քով իցեն՝ փոխեսցեն զտարազ զգեստուց իւրեանց և մարզեսցին ըստ եւրոպեան օրինի » : Եւ նա համարձակագոյնս բան եառ և ասէ. « Հրաման է տեառն իմոյ արքայի. և թէ կամիցի տէրդ իմ՝ ոչ միայն զգեստուցն առնեմ ես փոփոխութիւն, այլ և խոյր եւրոպական ազուցանեմ ես նոցա » : Ասէ արքայ. « Եթէ դու զայդ առասցես, ահա և ես խոստանամ քեզ, զի ցորչափ կեցցես դու՝ մի պակասեսցէ 'ի քէն երբեք ձարիցն իշխանութիւն. առէք ընդ քեզ ». և ագոյց նմա անդէն զվերարկուն նորաձև զգեստուց : Իսկ նորա կոչեցեալ զմի ոմն 'ի զօրագլխաց բերդակալ զօրացն՝ որում անուն էր Խասէքի Խալիլ աղա՝ պատուիրեաց նմա ըստ հրամանին արքունի առնել փոխել զտարազ զգեստուց զօրականին :

Ի քսաներորդի հինգերորդի աւուր ամսեանն մայիսի յամին 1807 'ի խորհուրդ կոչեաց Խալիլ աղա զօժանդակսն 'ի մարտկոցս անդ, և յայտնեաց նոցա զհրամանն արքունի. այլ նոքա ըմբոստացեալ մերժեցին զհրամանն : Ասէ Խալիլ. « Գիտեմ զի սակաւք ոմանք են 'ի ձեզ անօպայք և անաստք. և եթէ զնոսա բարձից 'ի միջոյ, խոյր ես եւրոպացի ազուցից ես ձեզ ». և նոքա ասեն. « Արա զոր գիտես » : Այն ինչ հրաման տայր Խալիլ զայս ոք և

զայն ունել վաղվաղակի , ամենեքեան առ հասարակ յարձակեցան 'ի վերայ նորա և ասեն . Հարէք : Տագնապեալ Խալիլայ ընկէց զանձն իւր 'ի ծով զի 'ի լուղ զերծցի , այլ նոքա 'ի ջուրս անդ փաղատեցին զնա և զապատաւոր նորին ընդ նմա : Իսկ Մահմուտ էֆէնտի որ յեւրոպեան մարտիկոցն էր՝ լուեալ զաղմուկ չփոթին զարհուրեցաւ յանձն իւր , և փութացեալ եմուտ 'ի նաւակն որպէս թէ առ խուսափական դնայցէ . այլ օժանդակքն դէտակն 'ի վեր առեալ իբրև տեսին զի Մահմուտ դէմ փախստի առնէ , աճապարեցին խառնեցան 'ի նաւակ մի , և որոցան կալան զառաջս նորա : Նա նորա անձնատացեալ եւ 'ի Պիւյիւքտէրէ , և անդ նստաւ չուարեալ . և օժանդակքն հասեալ 'ի վերայ՝ սպանին զնա 'ի տեղւոջն և զպատօնեայ նորին առ նմա :

Զայս իբրև արարին՝ եկին 'ի մի վայր ժողովեցան ամէն և ասեն . « Ոչ այսպէս վճարեցին իրքս . եկայք լռումն տացուք առաջարկութեան խորհրդոյս » . և եդեալ սուսեր 'ի միջավայրի՝ երդմնի եղեն և նզովեցին զանձինս նախ մի ճաշակել դինի մինչև 'ի դլուխ տարցին զխորհուրդն . երկրորդ մի ինչ զեան գործել աղքատաց ժողովրդեանն . երրորդ՝ մի ընաւ նեղել զքրիստոնեայսն և զՀրեայս . չորրորդ՝ զդրժողն այսմ կանոնի անդէն յօշատել . և հինգերորդ՝

երթալ համագունդ 'ի հրապարակն Էթմէյտանի, և վճռով դենպետին իրաւացի զգործն համարել: Եւ հաւանեալ ամենեցուն՝ վաղս առին զսուսերաւն որպէս է սովորութիւն: Եւ էին գլխաւորք յապստամբեան Օսմանձի Սիւլէյման, Պէքիր, Ալի, Խալիլ, Մէմիշ, և Գապագձի Մուստաֆա:

Նոքա ազդ եղեն լրքս 'ի քաղաքի անդ, խորհուրդ արարին փութանակի աւագորեայն և գլխաւորք առ հասարակ, և արձակեցին 'ի Վոսփոր զպոսթանձիպաշին և զայլս ումանս 'ի հին ենիչէրեաց. պոսթանձիպաշին երկեաւ գնալ անդր, և 'ի կէս ճանապարհին զկայ առեալ՝ դարձաւ անդրէն. իսկ այլք երթեալ առ ապստամբան՝ զառաջինն յորդոր եղեն նոցա ցրուեալ իմն 'ի խաղաղութիւն, և ապա 'ի նոյին խոկ յաւելուն:

Սէլիմ արքայ մինչև ցայնժամ ոչ ինչ ոչ գիտէր զեղելոյն, և 'ի գալթի անդ ալքունեաց 'ի հրահանգս զօրականին պարապէր: Մի ոմն 'ի ներքին պաշտօնէից անտի յայտնեաց նմա զաղմուկն և զվտանգ կենաց նորա. այլ անդէն 'ի ներքս մտեալ ատենադպիրն Հանդարտեաց զարքայ և ասէ. « Յանկարծադէպ ինչ իրք էին առ արքայ, և ագուաւուց ժողով. ահա արձակեալ զպոսթանձիպաշին ցրուեցաք և նկուն արարաք զմիտաստացեալն »: Նմուս և

պատանձնկալաշին , և նա ևս ըստ նմին բանից խօսեցաւ և յապահովս արար զայնքայ :

Ի վաղիւ անդր բազմութիւն ժողովոյ ապստամբաց , որոց թիւ համարոյ էր հազար և ութհարիւր այր , գրոհ տուրեալ ցին, և տաւաշխարդ զԴապալադձին կալեալ խաղացին գնայցին ընդ ցամաք 'ի Կոստանդնուպօլիս , և ընդ բազում զխաղորէս անցեալ՝ 'ի մէթան գիշերի եկին հասին մինչև 'ի Գաւալադաշ, և անդ զկայ աւերալ՝ աւարեցին արս 'ի ձմերոց ումբահիդ զօրացն և ասեն . « Եթէ իցեն սիրտք ձեր իբրև զմիրտս մեր՝ այդ արասջիք մեզ » . և նոքա ասեն . « Բարեաւ իցէ գալուստ ձեր . և մեք ընդ ձեզ եմք . եկայք 'ի ձմերոցս մեր » : Յայնժամ չուեցին եկին 'ի Դոփխանէ . այլ երկուցեալ մնանել 'ի ձմերոց՝ 'ի հրապարակի անդ ագան ղայն գիշեր : Եւ ընդ այգն եկեալ խնդրեցին առին զկատոսայս ումբահիդ զօրացն , և անցեալ ընդ Դալաղիս 'ի Գալաթաթ երի՝ մտին 'ի նաւակս նաւակս և անցին յայնկոյս յՈւն գաւառն , և անտի յՈւզուն չարշը . և ժողովեալտամբայն երթալով երթայր և աճէր 'ի բազմութիւն . զի այս բարբառ առէպ առէպ ընթանայր 'ի բերանս նոցա . « Որ միանգամ առաջիկք իցեն՝ հասցե ընդ գրոշաւս զինեացն . աղուէսք և հպատակք անհերկիւղ լիցին և զկրապակ ,

ոյն մի փակեսցեն »: Սակայն վաճառականքն առ հասարակ իբրև յանհնարին մրրկէ հալածեալք 'ի փախուստ աճապարեցին ահագին խուճապմամբ· փակեցան շուտ տագնապաւ կրպակք ամենայն, հատան դոյնք երեսաց մեծի և փոքու, և գոչիւն աղաղակի խռովելոցն և տագնապ փախստի պակուցելոցն զաւուրն կատարածի բերէին զնմանութիւն: Մտին ապաստանք 'ի Սիփահի պազարը, և որք ոչ գոյին զէնք' առին զէնս և ելին 'ի Տիվան եօլու, և գնացեալ ժողովեցան յԷթմէյտանին որք իբր ութսուն հազար:

Յայնմ ժամանակի Սէլիմ արքայ ճեմ առեալ յարքունիսն հառաչէր և յոգւոց հանէր տագնապաւ, և զելս իրացն ոչ գտանէր· և ատենադպիրն Ահմէտ Էֆէնտի, և Մապէյնճի Ահմէտ պէյ խոյս ետուն յարքունեաց: Ասեն ցարքայ մտերիմքն 'ի պաշտօնէայս նորին· « Զի՞ գործես տէր արքայ· եթէ պաշարեսցին միանգամ արքունիքս, վճարեալ է այնուհետև վասն քո· հապա փութա 'ի ներքս առնուլ զսեղապաշն և զգխանականս, որպէս զի 'ի խնդրել ապստամբաց զկառափոխն նոցին' տացես նոցա, և զանձն քո ապրեցուսցես »: Այլ արքայ ետ նոցա պատասխանի և ասէ· « Լաւ է ինձ հրաժարել յաթոռոյս՝ քան պատճառ լինել մահուան տաճկազնեից,

և անպարտ քրիստոնէից » ։

Իսկ ապստամբացն ժողովք կոչեցին ՚ի հրապարակ անդր զդենպետն, զերկոսին զդատաւորս զօրաց, և զդատաւորն Կոստանդնուպօլսոյ և զայլ գխնականս , և զզօրապետն բարակապան զօրաց՝ որ է Սէկպան պաշի ։ Սոքա յայնմ պաշտօն ՚ի դրան վեզիրին կային ժողովեալ ՚ի խորհուրդ , և ոչ գիտէին թէ զինչ արասցեն · բազում բազում ինչ ասացին , այլ բազմադոյնք զդէմ ունէին բանից նոցա · և ՚ի վերջէ ասէ Չէլէպի էֆէնտի ոմն · « Լուարուք ինձ տեարք · մի միայն հնարք ապրանաց առ այժմայս թուի ինձ , զի այր իւրաքանչիւր մեկնեալ աստի փախիցուք և թաքիցուք յո և այէս կարող իցեմք · եթէ ապրեսցուք , բարի է · և թէ ՚ի վտանգ ինչ հասանիցէ անկանել՝ ահա վճարեալ է ամենայն · ողջ կացէք » · և անդէն ցիր և ցան ՚ի փախուստ աճապարեցին ամենեքեան ։ Չէլէպի էֆէնտին հեծեալ ՚ի ձի անպիտան՝ փախնու ՚ի տուն իւր , և կոչեցեալ զծառայսն և զընտանիս՝ հասուցանէ զխարձնոցին , և ինքն յայլակերպս երթայ թաքչել յապարանս Խասախճէ սուլթանին , և այլք յայլ տեղիս ։

Գխնականացն դասք յակամայ կամօք եկեալ գնացին ՚ի հրապարակն ։ Ասեն ցնոսա ապստամբքն · « Ո՞ւր իցէ մատեան ձեր · բացէք զի տեսցուք ե-

թէ ուրանօր գրեալ իցեն անխրատութիւնքդ ձեր » . և 'ի գանգատել գիտնականաց 'ի պատասխանին՝ ասէ Գապաճին ցդեսպանն . « Զի՞ եկեալ հասեալ եմք մեք այսր , և զձեզ զի՞ կոչեցաք . ո՞չ ապաքէն զի դատաստան արդար դատեսջիք . և եթէ մեղապարտ իցեմք՝ տո՛ւր զդատակնիք մեր , և եթէ անպարտ՝ տուր աղէ զվճիռդ » : Դեսպանն ակնկորեալ և զմորուսն 'ի ձեռս առեալ շուարէր և չտայր ինչ պատասխանի . և 'ի ստիպել ապստամբացն ասէ . « Զի՞նչ իցեն պահանջանք ձեր , ասացէք զի լուիցուք » : Եւ նոքա ասեն . « Վասն ո՞յր ստեղծ Բարձրեալն զկորեակ » . ասէ . « Վասն թռչնոց » : — « Վասն ո՞յր զգարին » : — « Վասն անասնոց » : — « Եւ յո՞յր սակս զցորեանն արար » : Ասէ դեսպանն . « Սակս մարդոյ » : Յայնժամ հանէ մի ոմն 'ի ծոցոյ իւրմէ պատառ մի հացի և ասէ . « Աղքատն տառապեալ ահա զայս հաց ուտէ , որ ոչ կորեակ է և ոչ գարի , և չար ևս է քան զմոխիր և քան զգուղձ շաղախոյ : Թող զայս . ( հանէ 'ի ծոցոյ իւրմէ հաց ճերմակ զոր աւագորեարն ուտէին և ասէ . ) մեծամեծաց այս իցէ կերակուր , և ժողովրդեանն Մահմէտի մուրն ճարակ . և դուք զիա՞րդ լռեալ կայք » : Ասէ դեսպանն . « Արդար են բանքդ » : — « Երկրորդ անգամ , եթէ խաբիցէ և սուտ խօսիցի արքայ , ար-

ժամն իցէ նմա հաստատուն կալ յաթոռին » ։ Ասէ գենուէտն. Ոչ ։ — « Երրորդ անգամ, եթէ զամս ութուտասն ոչ լինիցի որդւոյն զաւակ, օրէն իցէ նմա հաստատուն կալ և յաղօթս ուրբաթուն գնալ » ։ Գենուէտն ասէ. « Չէ օրէն » ։ Ասեն առաքեալքն. « Ոչ այդպէս. այլ դու գենուէտդ զթուղթ 'ի ձեռին քում, և գրեա զանուանս արանցն զորս մեք աւանդեցուք քեզ » ։ Այն ինչ առնոյր գենուէտն զքարտէսն 'ի ձեռին, ձայնեաց մի ոմն յամբոխէ անտի և ասէ. « Են սոքա ևս չորք որ ընդ ձեռն աւագանւոյն գործեն զոր կամին. գրեցէք զի ապանցին և նոքա » ։ Ասէ այլ ոմն յապաստամբաց անտի. « Քաւ 'ի ձէնջ եղբարք, մի շաղախիցէք զձեռս ձեր յարիւն անպարտ. զի ոչ ինչ է մեղ մարդկանն որք 'ի պալատուց պաշտաման իւրեանց ապաստահարկու գտանին աւագանւոյն, և հարկ 'ի վերայ կայ նոցա հաւատարիմս լինել » . և լռեցին. և էին արքն այնոքիկ Շամշի Մուսի, Չէլէպի Թաւուրաքի, Նիշան ուստաւր Էրմէքճի Յարութիւն, և քաջատոհմիկն Յովհաննէս չէլէպի Տիւզեան ։ Իսկ աւագանին զորոց գրեաց գենուէտն մի առ մի զանուանս՝ այսոքիկ էին. տեղապահ վեզիրին Քէօսէ Մուսա փաշա, փոխանորդ նորին Խալլահիմ քեահեա, Հաճի Խալլահիմ Էֆէնտի, գործակալ մերն ամբայի

Եուսուֆ աղա, Չէլէպի էֆէնտին, փոխանորդ վէզիրին Մէմիշ էֆէնտի, համարակալն Ահմէտ պէյ, րէիս էֆէնտին, Սաֆի էֆէնտի, և այլ ևս ոգիք երեքտասան :

Մինչդեռ այս իրք գործէին 'ի հրապարակին՝ Սելիմ արքայ կոչեաց զպօսթանճի պաշին և պատուիրեաց 'նմա զի ժողովեսցէ ածցէ յարքունիս զամենայն զպարտիզպանն զօրականսն որ ընդ ձեռամբ 'նորա էին . այլ 'նոքա ոչ անսացին բնաւ զօրապետին իւրեանց . և 'նա եմուտ անդրէն առ արքայ : « Զի է զի ոչ երևին արքն » ասէ Սելիմ. և զօրավարն ասէ . « Չկամին գալ տէր » : Յայնժամ յանհնարինս զայրացեալ ընդ 'նա արքայն՝ հրամայեաց գլխատել զնա և զկառափնն տանել առ խռովեալսն յէթմէյտանին :

'Նոքա յայնժամ պահու հանեալ զԻբրահիմ քեահեա 'ի Թաքանէնէ իւրմէ՝ անթիւ նախատանօք և հայհոյութեամբք և ձգձգմամբ ածին մինչև 'ի հրապարակն : Եւ տեսեալ 'նորա զվախճան մօտեցեալ՝ խնդրեաց ջուր ըմպելոյ, և 'նոքա եդին առաջի 'նորա լի գուլիւ մածնոյ զջուր, և սկսան տեղալ 'ի վերայ 'նորա զհարուածս սուսերաց անգութ և անողորմ կատաղութեամբ : Գոռայր և գոչէր այրն ողորմագին, և յաղթէր գոգցես աղաղակի բազմաթիւ ամբոխին . այլ 'ի վերջէ յօշատեալ մե-

ռաւ եղկելին ։ Այս նման էր և մի ոմն 'ի հաւատարիմ սպասաւորաց նորա, որ աղէկէզ մորմոքմամբ կայր և ողբայր զդառնակտուտ մահ տեառն իւրոյ ․ բազում անգամ յետս մղեալ վարեցին զնա 'ի բաց ; այլ նա սքանչելի առաքինութեամբ ոչ մեկնեցաւ անտի, և հարին սպանին անդէն և զնա ։

Սեղիմ արքայ 'ի վարանս տարակուսանաց անկեալ՝ առաքեաց թուղթ առ տեղապահն և պատուիրէր, զի հասցէ զգլուխս աւագորերոյն զորս ապստամբքն խնդրէին և տացէ նոցա առ 'ի ցածուցանելոյ զնոսին ։ Իսկ նա քանզի ինքն իսկ էր պատճառք չարեացն և գլուխ ապստամբեացն այնորիկ ․ դէպ ժամանակ վրէժխնդրութեան գտեալ՝ կոչեաց զփոխանորդն և զռէիս էֆէնտին, և խեղդամահ արարեալ զնոսա՝ զկառափունսն առաքեաց յԸնթմէյսանին, և զգլխակուռն նոցա արկ 'ի Գում մէյտանի ։ Յղեաց կոչել և զտեսուչ փողերանոցին՝ զՊէքիր էֆէնտի ․ իսկ նա քանզի լուեալ էր զկրս փոխանորդին և զրէիսին՝ համարեցաւ եթէ կամի տեղապահն զնա ինքն կորզել փոխանորդ, և փութացաւ 'ի կոչն՝ զի մի այլ ոք կանխեցաւ զբաժին իւր ։ Եւ ողջունեալ նախ զտեղապահն ըստ օրինի ասէ ․ «Հաստատ արասցէ Աստուած զաւուրս ձեր ․ արդար ես դու տէր իմ ․ ահա այդպէս պարտ և պատ-

չամ է հատուցանել անօրինաց ըստ գործոց նոցին, զի անդորրասցի աշխարհս »: Հայեցաւ տեղապահն զարմացմամբ ընդ երեսս Պէքիրայ, և սա ասէ · « Հրամայեա առաջս եղանել, զի բանք ինչ են իմ ընդ քեզ »: Յայնժամ իմացեալ Պէքիրայ զաղմուկն յոր ըմբռնեալ էր ասէ · « Նա զի՞նչ յանցանք իցեն իմ տէր · զի՞ արարի ես »: Նա նա ասէ · « Համարեաց թէ վասն առաջնոց գործոցդ պահանջիս · — առէք 'ի ներքս և զանօրէնդ »: Իբրև հանին զայրն՝ թալացեալ անկաւ · և խեղդեալ զնա հատին զկառափն նորա և առաքեցին յԷթմէյտանին :

Ի վաղիւ անդր քանզի ուրբաթ էր՝ եմուտ Սէկպան պաշին առ արքայ և ասէ · « Հրամայեա տէր արքայ յաղօթըս ուրբաթու եղանել, զի քեզ սպասեալ մնայ ժողովուրդն ամենայն »: Ասէ ցնա արքայ · « Չեղանեմ ես այսօր 'ի մզկիթ, զի և չիք իմ պաշտօնեայ · և ծանեայ զի վասն իմ է կռիւդ »· և անդէն առաքեալ արս առ հօրեղբօրորդին իւր առ սուլդան Մուստաֆա ասէ · « Հրամայեա գալ բազմել յաթոռս, զի ոչ ևս կամի զիս ժողովուրդն, և վճարեալ է այսուհետև վասն իմ · տէր տացէ յաջողութիւն թագաւորութեան քում »: Յայնմ ժամանակի դրունք արքունեացն փակ էին, և միայն դուռնըն Սողուգ չէշմէ գափուսու անուա-

նեալ՝ ըստ ժամուն պիտոյից բանայր և
փակէր. վասն որոյ և խուժան ապըս-
տամբացն խռնեալ մնային արտաքոյ 'ի
փաշա գափուսու դրանէ մինչև յայն
դուռն: Այր մի ոմն 'ի պալատականաց
բարբառեցաւ 'ի ներքուստ երիցս ան-
գամ և ասէ. « Կամիցի՞ք զսուլդան
Մուստաֆա ». և նոքա երիցս ետուն
պատասխանի. « Կամիմք »: Յայնժամ
դենպեան և տեղապահն մտին ընդ
դուռնն Տէմիր գափու՝ ամբառնալ
յաթոռ զՄուստաֆա: Իսկ նորա լը-
ւեալ զհրաւէրն սկսաւ լալ և ասել.
« Ոչ էր ինձ կամք զայսօրինակ թագա-
ւորել, և ոչ տեսանել զաղէտս հօրեղ-
բօրորդւոյն իմոյ. լաւ էր ինձ մնա-
նել քան զայսպիսի կեանս իմ. չելա-
նեմ ես աստի. Թող արասցեն զոր կա-
մին »: Մինչդեռ սուլդան Մուստաֆա
'ի ներքս անդ ողբայր, Սէլիմ արքայ
արտաքոյ անէծս և նզովս արձակէր ար-
տասուալից որոց պատճառք աղէտից
լինէին. և կոչեալ զամենայն զպաշտօ-
նեայս իւր զառաջեաւ ասէ ցնո-
սա հեկեկանօք. « Տեսէք տեարք
իմ, ներեցէք ինձ թէ յանցեայ ինչ
կամ ընդունայնացայ, և սրտի մտօք
ծառայեսջիք թագաւորին որ գալոց
է ». զայս ասէր և լայր բարեբարոյ
արքայն. լային և նոքա անկեալք առ
ոտս նորա: Իբր ուրեմն երթեալ առ
Մուստաֆա պաշտօնեայքն Սէլիմայ՝

հաւանեցուցին զնա ելանել 'ի վանդակէ անտի և յանձն առնուլ զԹագաւորութիւնն. ապա Թէ ոչ, ասէին, վտանգ է անշուշտ կենացն Սելիմայ արքայի:

Մինչդեռ Սելիմ իջեալ յաԹոռոյն երԹայր 'ի ներքս՝ Մուստաֆա արքայ դայր բազմել յաԹոռ անդր. և պատահեալ միմեանց գիրկ ընդ խառն եղեն և լացին ժամս ձիգս. ապա ասէ Սելիմ. « ԵրԹ որդեակ իմ և բազմեայ յաԹոռ քո, և տէր յաջողեսցէ քեզ 'ի բարի. ինձ այսպէս սահմանեալ էր 'ի տեսչուԹենէն Աստուծոյ ». և համբուրեաց զճակատ նորին, և Մուստաֆա համբուրեաց զոտս նորա: Եւ ասէ ցնա Սելիմ. « Լուր որդեակ և մի մոռանար զխրատս հօրեղբօրորդւոյս քո. մի երբէք տացես համարձակուԹիւն քոց պաշտօնէից, և մի հաւատասցես բանից նոցա. հայեաց յօրինակս իմ և զգոյշ լեր անձին քում. տես յոր Թշուառութիւն հասուցին զիս »:

Ի քսաներորդի իններորդի աւուր ամսեանն Մայիսի յառաւօտուն պահու Թագաւորեաց Մուստաֆա արքայ, և դենպետն և տեղապահն հանդերձ ամենայն գիտնականացն դասու եկեալ յարքունեաց եկին հանդիսիւ 'ի դուռն վեզիրին. և քարոզքն սփռեալք ընդ քաղաքն աւետաւորեցին զամբաւն նորոյ Թագաւորի: Այն ինչ ուրախա-

ցեալ ժողովրդեան ընդ աւետիսն խըն-
դակից միմեանց լինէին և դաւանային
յիւրաքանչիւր տեղիս, և ահա դար-
ձեալ աղմուկ մեծ շփոթի յարեաւ 'ի
տեղւոջն, և ամենեքեան առ հասարակ
զահի զերկիւղի հարեալ խուճապէին,
և յոլովք զպատճառս անգամ ձեռայն
տագնապի անդիմանային : Քանզի
խուժան ապստամբացն 'ի բուռն ար-
կեալ զՄապէյնձի Ահմէտ պէյ՝ ածէին
աղաղակաւ 'ի հրապարակ պատշգա-
մին որ Ալայ-քէօշքի անուանի. և ա-
հագին աղաղակաւ և մոլեգին յարձակ-
մամբ մերկացեալ զսուսերս իւրեանց,
և ոչինչ երեւս արարեալ զարհուրելի
բռնաչմանց առնն հսկայի՝ յօշ յօշ
կոտորեցին զնա : Ըստ նմին օրինակի
կալեան ապա և զՀաձի Խալրահիմէֆէն-
տի, և հարցանէին ցարքայ եթէ զինչ
արասցուք սմա : Եւ նա ասէ. « Տուք
զդա կենդանւոյն 'ի ձեռս ապստամ-
բաց զի արասցեն զոր կամին ». և ա-
ռեալ տանէին զայրն յԷթմէյտանին.
այլ զճանապարհայն տեսեալ զի ան-
ցանէր կաթայ ենիչէրեաց, անդէն յօ-
շատեցին զԽալրահիմ և ասեն. « Թող
զոհեսցի մերում կաթայիս » : Ի վա-
ղիւ անդր ատենադպիրն Ահմէտ էֆէն-
տի ելեալ 'ի Թոփանէնէ և կացեալ 'ի
վերայ տանեաց՝ ծափ զծափի եհար
ձեռօքն երկիցս, և վազս առեալ տանուլ
կամէր 'ի միւս տանիսն. իբրու զի մի

ոմն 'ի գիտնականաց պատուիրեալ էր ասեն՝ նմա , զի թէ վտանգ ինչ 'ի վերայ հասանիցէ՝ ելցիր 'ի տանիս և ծափեա և վերացիր ընդ օդս , և անդէն հանեալ օդային ոգիք տարցեն զքեզ յաներևոյթս 'ի տեղի անքոյթ : Այլ յասնուլ անդ խուռն մանկունս չարաչար այրն եղկելի 'ի փողոցն . հասին 'ի վերայ նորա ենիչէրիք և գլխատեցին , և ապա տարան զոտիւքն արկեալ գէշաքարշ արարին ցհեռաւոր տեղիս :

Իսկ բազմութիւն ապստամբացն յերեկէ իսկ երթեալ 'ի դուռն արքունեաց՝ անկեցին երկուտասանք գդրօշս իւրեանց , և ինքեանք առանձնեալ զիւրաքանչիւր հրացանս՝ կարգեցան կացին 'ի շարս մինչև ցմզկիթն սուլթան Ահմետայ , և սպասէին ելանելոյ արքային յաղօթս ուրբաթուն : Եւ 'ի վեց ժամու ել արքայ ընդ դուռնն մեծ , և ամենայն բազմութիւնն զաղաղակ բարձեալ գոչեցին . « կեցցէ արքայ » : Տեսեալ արքայի զահագին ամբոխ խառնաղանձին այլայլեցաւ , և գոյնք երեսաց նորա շրջեցան և դողայր առ ահի . իսկ նոքա խառն 'ի խուռն երթալով յառաջոյ և զկնի նորա գոչէին . « Ո՛զի գեղեցիկ է թագաւորս մեր » :

Ապա յերկուշաբաթի աւուր որ օր երկրորդ էր ամսեանն յունիսի՝ երթեալ ապստամբաց յատեան աւագանւոյն , և ընկալան դաշամբ ուխտի

զխոստումն արքայի և զմեծամեծաց՝ զի բարձցին 'ի միջոյ ամենայն նորակարգ սահմանադրութիւնք, և ամենայն ինչ դարձեալ հաստատեսցի որպէս առ հասարակ։ Եւ այսպ մնեալ 'ի նաւս և 'ի նաւակս դարձան 'ի Վօսփոր՝ ուրախացեալք ընդ գործս ձեռաց իւրեանց, և արձակելով հրաւէրս 'ի նշան ցնծութեան զօրէին. « Քաջալերեցարուք ով քաջք. յեօթն տէրութիւնս հնչեսցէ անուն մեր »։

Այսպէս վախճան եղև առաջնոյ խռովութեանս. յորում այս ինչ նշանաւոր է յոյժ, զի ոչ ինչ վնաս գործեցաւ ամենևին քրիստոնէից և հրէից. նա և պաշտպանս նոցա կոչէին զանձինս ապստամբքն։ Եւ էին սկզբնապատճառք ազմկին դենպէտն Ազատուլահ Մէհէմմէտ էֆէնտի, տեղապահն Քէօսէ Մուսա փաշա, և Սեկպան պաշին և այլք. և գործակից և առաջնորդ գործոյն Պապադաճի Մուստաֆա, որ և զկնի այսր ամենայնի իբրու 'ի հատուցումն քաջութեան իւրոյ տեսուչ կարգեցաւ ամենայն բերդորէիցն Վօսփորի։

## ՍՈՒԼԴԱՆ ՄՈՒՍԴԱՖԱ Դ

ՉՈՐՐՈՐԴՍ այս Մուստաֆա արքայ երիտասարդ էր գեղադիտակ և եռանդուն, և ըստ խոհականութեան մասին ևս գովելի. սակայն աղէտք պետութեանն որ 'ի ժամուն և որ զկնի չետուն նմա թոյլ գործել ինչ, և զբոյս բարուցն առնել յայտ:

Քանզի 'ի ձեռս խռովայոյզ ապստամբացն մատնեալ գոլով քաղաքին, ամենայն ինչ խառն 'ի խուռն էր 'ի նմա: Խորհուրդ կալան զխնտականք ընդ անդաղապաշին եւս իւրեանց դառնել, և հաստատեցին նուաճել հնարիւք զապստամբսն. բայց նոցա զգացեալ զկրան ժողովեցան յետ երկուց ամսոց 'ի գաւիթ Սիւլէյմանիյէ մզկթին, և ղաղաղակ եղեալ գոչէին. « Զկամիմք զգենդրեան, զանդաղապաշն, զՍեկպան մաշին » և զայլս սմանս յաւագ որերոյն՝ որ զերծեալ էին 'ի խողխողմանէ: Եւ փոխեցան անդաղապաշն և զենդրեան, և այլք սմանք. սակայն նոքա ոչ զիջան 'ի մալեզին բանակալութենէ իւրեանց, և դարձեալ եասն փոխել զանդաղապաշն

և կարգել զԴաւյեար փոխան՝ զոր հակառակ Ջանաչէֆին նորանձնութեանցն Սելճեայ :

Լուր խռովութեանն յուզելոյ 'ի Կոստանդնուպօլիս՝ իբրև ազդ եղև 'ի բանակին արքունի, համարձակեցաւ զօրավարն Ենիչէրեաց պախարակել յայտնապէս զգնացս խռովայուզիցն. ամին իբրև յարեան Ենիչէրիք 'ի վերայ նորա և անդէն խողխողեցին : Վէզիրն ինքնին գժկամակութիւն իւր ցուցեալ ընդ արարս տեղապահին իւրոյ՝ ընկեցիկ եղև յիշխանութենէ անտի իւրմէ, և կալաւ զտեղի նորին Չելէպի աղա Մուստաֆա փաշա : Այլ այս փոփոխութիւնք որպէս միշտ՝ նոյն և այժմ խոչ մեծ եղեն յաջողութեանց առաջիկայ պատերազմին. քանզի և սպարապետն Ռուսաց Միքէլեան այն ինչ պատրաստէր մեկնել 'ի Մոլտաւիոյ առ 'ի գնալոյ ընդդէմ Նափոլէոնի՝ 'ի լուր խռովութեանն Կոստանդնուպօլսոյ ոչ ինչ խլրտեցաւ 'ի տեղւոջէն իւրմէ :

Իսկ 'ի Կոստանդնուպօլիս տաճիկք և քրիստոնեայք առ հասարակ 'ի մեծ տուայտանս կային յերեսաց կեղեքանաց խռովելոցն, և չէր ոք որ իրաւունս առնէր նոցա : Յաւուր միում խումբ մի յապստամբաց եմուտ յեկեղեցին Յունաց որ 'ի գիւղն Փէնէր, և ըստ տաճկական օրինի սկսան ձայնել յաղօթս. և ապա ազդէին թէ մզկիթ եղև եկե-

դեցին · այլ գեներալ անուանեալ պա-տասխանոյն Յունաց՝ զհակառակն եւ մ Ջին : Դարձեալ և յայլում աւուր կի-րակէի զօրականք Ծովակալին մտեալ յանկարծ յեկեղեցին Հայոց որ 'ի Գա-սըմ փաշա՝ կալան զերէցն 'ի ժամ պա-տարագի, և զգեստուքն հանդերձ ա-ռեալ տարան զնա և զժողովուրդն 'ի նաւս · սակայն Ծովակալն Սէյիտ Ալի փաշա արձակեաց ապա զնոսա :

Այլ և տաճիկ կանայք գունդ կազ-մեալ դիմեցին յամենայն մզկիթս յա-մին 1808 յապարանս դատաւորին Կոս-տանդնուպօլսոյ 'ի ժամ Ճաշու, և 'ի բաց առեալ զխուփս պղնձեայ աման նորա և հետազօտեալ զոր 'ի նոսայն կերակուրք էին, գոչեցին ընդդէմ նորա և ասեն · « Ա՜յ անօրէն, դու այսպէս 'ի դա-համանս խորտկաց պարարիս, և մեք տառապիմք պապակիմք 'ի սովոյ, և զմի լեարդ ոչխարի ընդ քսան և հինգ փողոյ հազիւ առեալ ուտեմք » : Եւ 'ի յոր-ձակել նոցա 'ի վերայ դատաւորին՝ նա աչաբեկ խոյս ետ 'ի սեղանոյ անտի և զերծաւ 'ի կանանցն լեր : Ապա գիր բողոքոյ մատուցին կանայքն առ արքայ՝ մինչդեռ 'ի մզկիթ երթայր, և բարձեալ տանէին յառաջոյ իւրեանց զձող մի բարձր՝ կապեալ 'ի ծայր ձողոյն լեարդ և միս, և բազում ինչ եւս համարձակ բարբառեցան առ արքայ · այլ շահե-ցան և ոչ ինչ · զի և ոչ իշխանութիւն

ինչ էր 'ի ձեռս արքային ։

Գասպարդձի Մուստաֆա որ 'ի բերդն Ֆէնէր օրջացեալ էր յանդորր խաղաղութեան դէտակին կալեալ սպասէր ելից թշնամութեան աւազանոյն, լաւ համարեցաւ յանձին օգուտ՝ զգենլէոյն բարեկամութեամբ գալ ․ խորհուրդ կալաւ ընդ գենլէոյն՝ ընկենուլ զԴայեար փաշա յիշխանութենէ տեղապահութեանն, եւ կարգել 'ի տեղի նորա զխամայիլ փաշա՝ որ 'ի ժամուն սահկանն էր չինուածոյ 'ի Զանադ գալէսի ։ Զայն իբրեւ զգաց Դայեար, աճապարեաց դէպ մահու արբայց խամայէլի եւ սպան զնա ․ սակայն եւ ոչ ինքն եհաս իւրոյն ըղձից ։ Քանզի Գասպարդձին միաբանեալ ընդ իւր բաց 'ի գենլեաէն եւ զչաուշպաշին՝ ետ առնուլ 'ի նմանէ զպաշտօն, եւ տալ առն միում՝ որ յամենայնի ըստ կամս իւր եւ գենլէոյն վարէր ։ Եւ այս դարձեալ սկիզբն եղեւ աչագին շփոթից 'ի թագաւորեալ քաղաքին ։

Ալեմտար (կամ Պայրագտար) Մուստաֆա փաշա որ կուսակալէրն յայնժամ 'ի Ռուսճուգ, ոչ դադարէր յաւաղ կորդալոյ ընդ անպարտ թշնամութիւն բարբարոսին իւրոյ Սելիմայ, եւ յետեւելոյ զգործադիրս իւրոյն եղելոյ ։ Արդ Դայեար փաշայն փառաւոր յոգի վրէժխնդրութեան՝ զխմեաց առ նա, եւ 'ի վեր հանեալ նմա զամենայն

հանդամանս տրքունեաց՝ եցոյց և զհնարըս կործանելոյ զԳաւապադձին հանդերձ օժանդակօք նորա, և ամբառնալոյ անդրէն յաթոռ թագաւորութեանն զՍէլիմ:

Յայնժամ առաքեաց Մուստաֆա փաշա առ վէզիրն մեծ որ յԱդրիանուպօլիս էր՝ զայր ոմն քաջահմուտ զինուորական իրաց, հաւատարիմ յոյժ առ Սէլիմ արքայ, և թշնամի ենիչէրեաց, որում անուն էր Պէհիճ էֆէնտի, որպէս զի որսասցէ զմիտս վէզիրին և զաւագանւոյն առանց ինչ յիշատակելոյ զՍէլիմ, և ապա անցցէ 'ի Կոստանդնուպօլիս և խօսեսցի ընդ բարեկամս Սէլիմայ, թէ որպէս կարասցեն հանել 'ի գլուխ զառաջադրեալ զխորհուրդս խորեանց: Արար զայն Պէհիճ և յաջողեցաւ յամենայնի 'ի վեր քան զակնկալութիւն Մուստաֆային: Սմին իրի արս չորս հազար յիւրոց անտի առեալ նորա դիմեաց 'ի թագաւորեալ քաղաքն 'ի բարձուածս օժանդակաց. բայց և այլոց զօրացն իւրոց, որ էին երկոտասան հազար՝ հրաման ետ գալ զհետ իւր բացագոյն. և ապա ցրուեալ զնոսին ևս ընդ աւանս և ընդ գիւղս՝ ինքն սակաւուք ոմամբք եմուտ յԱդրիանուպօլիս: Անդանօր առեալ խորհրդոյ կազմեալ աւագանւոյն՝ հաստատեցին, զի վէզիրն մեծ նուիրական դրօշիւն հանդերձ մնասցէ 'ի Կոստանդնուպօլիս, և

Մուստաֆա ժամանեալ է զինի՝ սատարել խորհրդոց նորին ։ Ալլ Բամիզ էֆէնտի խրատ ետ արձակել նախ 'ի գիւղն Ֆէնէր գումարտակ մի հեծելոյ՝ զի բարձցեն 'ի միջոյ զԳապուտճին ։ Յանձն եղև կատարումն խորհրդոյս 'ի Հաճի Ալի ումն այր ճարտար յայսպիսիս · որոյ ունելով ընդ իւր զհրովարտակ 'ի վէզիրէն մեծէ առ 'ի բառնալոյ զթշնամին պետութեան և զալքայի՝ և տիրելոյ բերդորէից և մարտկոցացն Վոսփորի , յերկրորդում գիշերին որ օր երեքտասան էր ամսեանն յուլիսի՝ եհաս 'ի Ֆէնէր և պաշարեաց յանկարծուստ զտուն Գապուտճի Մուստաֆայի · ապա առ ընդ իւր արս չորս քաջամարտս զինեալս ընդ համդերձիւք , և 'ի ձեռին իւրում հրովարտակ վէզիրին , և բախեալ զդուռնն՝ առէր ունել թուղթ 'ի տեղապահէն առ տանուտէր տանն ։ Իբրև բացաւ դուռն , ոտքս անդէն կապեալ կաշկանդեցին զդռնապանն և զորս ընդ նմին վազեալ էին արտաքս · և իմացեալ եթէ Գապուտճին 'ի կանանոցի անդ է , եմուտ Հաճի Ալի անվեհեր 'ի ներքս · այլ ոչ եգիտ զնա , զի նա վաղ զգացեալ զաղմուկն , և ընդ պատուհան տանն ոստուցեալ զերծեալ էր 'ի տանն մօտակայ ։ Հարցանէ Ալի ցկին նորա՝ եթէ ուր իցէ այրն քո · և նորա զահի զդողանի հարեալ՝ մատնացոյց լինի և յայս առ-

նէ եթէ 'ի մերձակայ տանն է ։ Հաստանէ անդր Ալի տակաւուք, և տանել բանէ զզօրսն. և Գապուտաճին կարծէս 'ի մտի եդեալ եթէ ապստամբք իւր իցեն առ դրանն՝ հարցանէ ցնոսա 'ի վերուստ և ասէ. « Միթէ գնայցի՞ն 'ի բաց ». և նոքա ասեն. « Գնայցին և մեկնեսցին » ։ Յայնժամ փութայր էջ Գապուտաճին որպէս էրն՝ շապիկ ևեթ զգեցեալ. և նոքա անդէն բուռն հարեալ կալան զնա պնդապէս ։ Այն ինչ զարհուրեալ Գապուտաճին աղաղակէր առ նոսա, « Ողորմեցարուք որք եղբարք, թոյլ տուք ինձ գոնեա զօրինակսն լուացմանս առնել », Հաճի Ալի տապալեցոյց զնա 'ի գետին, և ընդ քարշ ածեալ մինչև 'ի սեամս դրանն արտաքնոյ, եհար զկառափինն և փաղփաղակի առաքեաց առ Մուստաֆա փաշայ ։

Այն ունէր Հաճի Ալի՝ եթէ 'ի տեսիլ հրովարտակի վեզիրին հանդարտեսցեն օժանդակքն. սակայն նոքա լուեալ զկանչիւն աղաղակի կանանւոյ Գապուտաճի Մուստաֆայի՝ առ հասանել 'ի զէնս և 'ի թնդանօթս ընթացան ։ Յայնչափ աղմկէ խռովութեանն եղելոյ յայնմ գիշերի բազմամարտիկ ուրք խառնամբոխք հնչէին ընդ քաղաքն. և ուստանին ինքնին գլխովին ոչ ինչ խելամուտ գոլով իրացն, գիտէին եթէ՝ զի վեզիրն և Մուստաֆա փա_

շա գլխեալ զան 'ի Կոստանդնուպօլիս . և ոչ բնաւ ձեռն արկին 'ի գործ ինչ ։ Նա օժանդակացն անսեալ զի չէք որ օգնական լինիցի նոցա , բարձին զպաշտօնն աշտարակին՝ ուր ամրացեալ էր Հաճի Ալի իւրովքն հանդերձ ։

Միօրեայ ճանապարհաւ հեռի էր Ալէմտարն 'ի Կոստանդնուպօլսոյ՝ յորժամ եհաս առ նա Հաճի Ալի ։ Այս արձակեաց վէքիլն զրէիս էֆէնտին առ արքայ՝ և ասէ . « Խորհուրդք իմ և Մուստաֆա փաշային այս է , աղաչել զԹագաւորդ մեր և զժողովուրդ քաղաքիդ յանօրէնութեանց օժանդակացն , որ անցուցին զանցուցին զչափ յանդգնութեան իւրեանց այս հնգետասան ամիս . և թէ 'ի ծածուկ պահեալ Թագուցաք ցարդ զայս մեր խորհուրդ , այլ և այն առ անքոյթ և անշըփոթ բառնալոյ էր զառաջնորդ չարագործացն ։ Արդ եթէ անակնկալս ինչ անսանդ մերում գործեցաք , խնդրեմք ասանիկ զներումն , և աղաչեմք սանձել զմտաս և զխառնահմիկ զօրականն , և փոխել զգենդկեանն՝ որ յամենայնի 'ի յագուրդ եւեթ իւրոյ ժլատ ագահութեանն մին գնէ » ։ Մուստաֆա արքայ , որ խնդայր հանել 'ի ձեռաց զԹագն և Թերևս զկեանն իսկ , խրախ եղև ընդ Թեթևութիւն պահանջմանց վէքիլին և Ալէմտարայ , և առ ժամայն կատարեաց զնոսին ։

նա և յաւուրն երկրորդի պատճառա-
նօք տեսանելոյ զգլուխն նախկինն՝
գնաց մեծահանդէս շքով 'ի բանակն
Ալէմտարայ և պատուասիրեաց զնա
յոյժ . և նա հաւատարմութեանց արքայի
զմխամխոն և զմեծարեալ ծառայութիւնս
իւր . և ամենեցուն որ յայն եկանէին
առ նա՝ առէր քաղցրութեամբ . « Գո-
հացարուք զտեառնէ , զի այսպէս դիւ-
րաճար եղև մեզ գործս այս մեծ , և
ահա դառնամ ես անդրէն զօրօք խմբովք
զեզերամբք Դանուբայ » : Եւ քանզի
զօրք նորա կանոնաւոր հրահանգօք
մարզեալք յամենայն օրէնս զինուորու-
թեան՝ ոչ ինչ նեղէին ընաւ զժողո-
վուրդն , անդորր և անկասկած խաղա-
ղութիւն եղև 'ի քաղաքին :

Ի քսաներորդի ութերորդի աւուր
ամսեանն յուլիսի վաղ քան ընդ առա-
ւօտն էառ Մուստաֆա փաշա զայրե-
նիր զօրս իւր հինգ կամ վեց հազար՝
առ հասարակ հրացանաւորս , և եր-
թեալ նախ յապարանս վէզիրին մե-
ծի՝ եմուտ 'ի ներքս և բազմեցաւ առ
նմա : Եւ յետ բազում զրուցատրու-
թեանց իբրև ետես զի չէ սիրտ առնն
իբրև զսիրտ իւր 'ի կատարումն առաջ-
արկեալ խորհրդոցն իւրոց , էառ իշ-
խանաբար 'ի ձեռանէ նորա զկնիքն ար-
քունի , և եդ 'ի չաուշպաշին , և
զՉէլէպի աղա առաքեաց 'ի բանակն
իւր : Իսկ ինքն պահապանս յիւրոց զօ-

րաց շուրջ զքաղաքաւն կայուցեալ, խաղաց գնաց վեցհազար սպառազինօք, և եմուտ 'ի մէջին հրապարակ ապարանիցն արքունի, և փակեցան դրունքն, որպէս զի չէր հնար այլ ևս ումեք մտանել կամ ելանել: Ընդ ընդ նմա էին և աւագորեայրն ամենայն և գխանակիրք և գնդապետք ենիչէրեաց. որովք մտեալ ընդ դուռնն Սողուգ չէշմէ գափուսու՝ և ընդ միջնադուռն, և երթեալ նստաւ հանդէպ դրան ներքինապետին սպիտակ ներքինեաց, այն է Աք աղա գափուսու: Եւ կոչել զզինակիրն արքայի և ետ 'ի նա զկնիքն արքունի. և յետ սուղ ինչ պահու դարձեալ եկն զինակիրն, և ընդ նմա գենպետն և ներքինապետն, և ասեն ցՄուստաֆա փաշա. « Աւետիս տեառնդ մերում, զի տէր մեր արքայ քեզ տայ աւասիկ զկնիքս »: Ասէ ցնոսա Մուստաֆա. « Ես ոչ վասն այդորիկ եկեալ կամ. չպահանջէ ոք որ զկնիքդ առնուցու. ես եկի զի տեսից զարքայն Սէլիմ, և համբուրեցից զոտս նորա, զի զհաց և զաղ նորա կերեալ է իմ. հապա ածէք զնա արտաքս, զի բանք ինչ են իմ ընդ նմա »: Զայս իբրև լուան արքն՝ խռովեցան յոյժ և դարձան 'ի ներքս. և Մուստաֆա կացեալ մնացեալ 'ի տեղւոջն ժամս ձիգս, իբրև ոչ ոք երևէր՝ զայրացաւ յոյժ իւր, և զայլ ումն արձակեալ կոչեաց

զՆերքինապետն ։ Նա իբրև եկն՝ գոչեաց Մուստաֆա ընդդէմ Նորա և ասէ. «Զի՞ է զի այսչափ յապաղէք զկատարումն բանիս. և ընդէ՞ր ոչ հանէք առ իս զՍէլիմ արքայ. կամ թէ չխմացա՞ր զբանս իմ»։ Ասէ Ներքինապետն. «Գիտասցէ տէրդ իմ զի Նա չեւանեմ ասէ»։ Յայնժամ յայտնեաց Մուստաֆա զխորհուրդ իւր և ասէ. «Երթ ասա ցՄուստաֆա արքայ, զի իջեալ յաթոռոյն և երթեալ 'ի ներքս հանգիցէ 'ի հողոց, քանզի ոչ է Նա թագաւոր մեր առ այժմ. թերևս եկեսցէ ժամանակ զի ըստ կարգի թագաւորեսցէ և Նա. բայց այժմիկ Սէլիմ արքայ է թագաւոր մեր, և Նմա կարօտ է աշխարհս, և ես վասն Նորա եկեալ հասեալ կամ 'ի տեղւոջս»։ և ասէ ցիշխանսն որ շուրջ զիւրեւն կային. «Կամիցի՞ք իշխանքդ զՍէլիմ արքայ»։ և աղաղակեցին Նոքա իբրև ընդ մի բերան. «Այո՛ տէր, զարքայն Սէլիմ կամիմք մեզ 'ի թագաւոր»։ — «Երթ ապա, ասէ Մուստաֆա ցՆերքինապետն, և ած այսր զՍէլիմ»։

Իբրև եմուտ Ներքինապետն անդրէն 'ի ներքս, փակեցաւ դուռնն. և Մուստաֆա փաշա ցասուցեալ ընդ գործն աղաղակեաց և ասէ. «Զի՞ փակէք զդրունդ»։ Եւ իբրև չէր ոք որ տայր Նմա պատասխանի, սկսաւ բազում ապառնալից բանիւք կշտամբել

զգնացս աւագանւոյն, զի յանձն առնին ընկենուլ յաթոռոյ զՍէլիմ։

Մինչդեռ Մուստաֆա փաշա առ գրան անդ ահագինս ամենախօս լինէր առ ժողովականն, 'ի ներքս յարքունիսն ահագնագոյն աղէտք գործէին։ Եւ նախ 'ի սպանել ներքինապետին առաջի արքային Մուստաֆայի զրանս Ալէմտարայ՝ ասէ արքայ ի յատամանք. « Ես ոչ խնդրեմ յաթոռոյ ատոր. և զինչ յանցանք իցեն իմ. միթէ զամօ՞թս ինչ աշխարհիս մատնեցի թշնամեաց, կամ զո՞ր մնաս գործեցի. ա՜հ ո՜չ. լաւ է ինձ ատէն խակ մեռանել, քան խնդանել ատոր և ծառայ և ծանակ կալ. Ո՞չ ապաքէն դուք էիք որ բռնի ինձ ստիպէք ելանել յանդորր բնակութենէս և գաւառայր. արդ զի է զի խնդանել հրամայէք. այլ գիտեմ ես զինչ արարից... »

Իսկ անպատրաստ արքայն Սէլիմ որ ոչ ինչ ոչ գիտէր զեղելոցն, յայնմ ժամու բազմեալ 'ի վերայ ակմբին ընթեռնոյր մատեան ինչ, կամ որպէս այլք ասեն յաղօթս կայր. և ներքինապետն մի֊ ատեալ առ նա յեղակարծումն՝ ասէ. « Զողովուրդն եկեալ է աստ, և խնդրէ անանել զքեզ. հրամայեա ելանել »։ Ասէ ցնա Սէլիմ. « Ո՛հ, և զինչ խնդրեն յինէն. ապաքէն է նոցա թագաւոր, և չեն ունիք կարօտացեալք, զի ոչ թողուն զխայանդորր հանգստեան »։

Ջայս և զայսպիսի բազում բարբառեալ, լիրբն եւս զի պնդեալ յամառեալ է այրն 'ի բանս իւր՝ ել արտաքս 'ի սենեկէն ։ Ընդ առ դրանն կային 'ի գարանի ոմանք երկոտասան 'ի մեծամեծաց ալքունեացն, որք նոյնհետայն յարձակեցան մոլեգին 'ի վերայ Սէլիմայ ։ Նորա զարհուրեալ 'ի դիպացն՝ աղաղակեաց և ասէ. «Ա՛հ ա՛հ, խնայեցէք յիս, զի ոչինչ ոչ գիտեմ ես»։ այլ փոխանորդ գանձապետին էած նմա ապտակ մի ուժգին, ներքինապետն եհար զդաշոյն իւր 'ի լանջս նորա, և այլք ընդ երկոսին խափշիկ պահապանս Սէլիմայ մարտուցեալք սպանին զնոսա, և յարձակեցան 'ի վերայ անմեղ արքային ։ Էր որ զմորուսն փետէր, էր որ զգլուխ նորին կոփահարէր ; և էր որ չասաղ տագնապաւ յառաջոյ և 'ի Թիկանց Թրածեծ առնէր, մինչև տապալեցին զարի արքայն 'ի գետին, որ գոչէր և ասէր. «Ա՛հ, անխնայեցէք յիս. չգիտեմ զի՞նչ լինչ չար արարի ձեզ. ա՛հ, անխնայեցէք»։ և մինչդեռ գաղանացեալ դահիճքն հարեալ 'ի վերայ նորա խեղդ ընդ պարանոցն արկանէին՝ ասէր. «Աւա՛ղ ինձ և եղո՛ւկ եմ ես. զի բարիս արարեալ ժողովրդեան իմում՝ չարիս 'ի նոցանէ կրեցի. աւա՛ղ»....։ Եւ մինչդեռ անէծս ցասագինս կարդայր 'ի վերայ չարագործացն՝ նոքա պնդեցին զխեղդամն և երկ_

ուստեք ձգտեալ ուժգնակի հեղձամըղ-ձուկ արարին զանմեղ ալքայն զՍէլիմ, զհայրն հասարակաց, զբարերարն աշխարհի, զդրուատեալն յօտարաց և զսիրեցեալն յիւրոց հաւատարիմ ծառայից. ուր և ցարդ ևս ոչ առանց արտասուաց յիշատակեն զաղէտս ազնուականս ալքային :

Ուր ուրեմն յետ երկուց ժամուց անցանելոյ եւ անդգամ ներքինապետն առ Մուսդաֆա փաշա և ասէ 'ի ներքուստ. « Ասացաք ակեր, և չկամի ելանել, զի հիւանդ ևս է » :

Յայնժամ լի եղև Մուսդաֆա սըր-մտութեամբ և բարկութեամբ, և աղաղակեալ որոտաձայն սպառնալեօք ասէ. « Մինչև խափշիկ, եթէ չարիք ինչ պատահեսցեն Սէլիմայ արքային, ոն և ոն արասցեն ինձ երկինք, զամենեսին զձեզ բայց 'ի սուլդան Մահմուտայ 'ի սուր սուսերի կոտորեցից » : Յայնմ պահու լուեալ եղև 'ի ներքուստ 'ի կանանոցէն ալքունի ահագին վայիւն և կանչիւն. զոր իբրև լուաւ Մուսդաֆա, վառեցաւ բորբոքեցաւ 'ի հուր բարկութեան. և հրամանն ետ խորտակել զդրունսն, և կոփիւն ստակայի դրանն հնչէր մինչև 'ի հեռաւոր տեղիս : Զարհուրեցան պալատականքն առհասարակ և ընթացեալ բացին ինքնին զդրունս. եմուտ Մուսդաֆա փաշա իբրև զկայծակն 'ի ներքս, և ընթացեալ նստաւ 'ի գետնի առա-

քի մեծի ապարանիցն որ կոչի Ալըղ օտա-սը : Աճապարեաց զհնակիրն արկանել փաշային օԹոց ազնիւ 'ի բաղմել . այլ նա փոքր միւս եւս և անդէն առ անեղեա-ւըն սատակէր զայլըն . սակայն իւրքն որ խուժեալ էին ընդ նմա 'ի ներքս՝ խափանեցին զնա : Այն ինչ ապաստեալ մնայր Մուստաֆա գալստեանն Սէլի-մայ , և ահա բերեալ ընկեցին առաջի նորա զցուրտ դիակն տարաբախտ ար-քային սպանեալ 'ի կապերտի : Զայն իբրև ետես Ալէմտարն խռովեցաւ յո-գի իւր և շուարեցաւ , և այլ յայլմէ ե-ղեալ սկսաւ կոծել զանձն իւր , և մռըն-չել սոսկալի ձայնիւ տառապանաց . և առ-սաստիկ ցասուցն հրաման ետ կոտորել սպառել զամենեսեան որ յարքունիս անդ էին բաց 'ի սուլդան Մահմուտայ : Այն ինչ խլեալ էին իւրքն , և չփոԹեալք 'ի յանկարծադէպ իրացն անգիտանային Թէ զինչ գործեսցեն , և ահա սընԹաց վաղվաղակի փախչէր սուլդան Մահմուտ կողմանէ 'ի կողմն ընդ դատախարականին իւրում՝ որում անուն էր Ամպէր աղա . քանզի յետ Սելիմայ մեռանելոյն և զՄահմուտ կամէին սպանանել արիւն-ռուշտ պալատականքն : Տեսեալ Մահ-մուտայ զՄուստաֆա փաշա վառեալ 'ի զէն և 'ի զարդ՝ երկեաւ յոյժ , զի ոչ ճանաչէր զնա . իսկ նորա ընԹացեալ փարեցաւ զոտիւք նորա և ասէ . « Ծա-ռայ քո եմ ես տէր իմ արքայ » . և արքն

որ ընդ նմա էին՝ գոչեցին իբրև ընդ մի բերան և ասեն.«Կեցցէ Մահմուտ արքայ»: Անդի դարձաւ Մուստաֆա փաշա կոծել զմահն Սէլիմայ, և լուծեալ ՚նստեալ յողբս ցաւագինս՝ զգերարտօսրն ուղխօրէն իջուցանէր յաչացն այրն քաջ և յաղթանդամ, որպէս առիւծ մատակ որ զկորիւն իւր զգլխ՚նոցեալ կորզեալ իցէ ՚ի ձեռաց անգութ որսողաց, և նստեալ մնչիցէ յանտառին և զմայրս առհասարակ դողացուցանիցէ:

Իսկ սուլդան Մուստաֆա կարծիս ՚ի միտ եդեալ եթէ և կրտսեր եղբայրն իւր Մահմուտ բարձեալ է ՚ի կենաց, հրաման արար ՚ի զէն ընթանալ ամենեցուն որ յարքունիս անդ էին. զի զինու զօրութեամբ մարթ գտնիցէ ընդ Մուստաֆա փաշային: Եմուտ առ նա գենապետն և ասէ.«Հրամայեա ՚ի վանդակն, զի Թագաւորեաց Մահմուտ արքայ»: Գումարեցաւ յանձն իւր Մուստաֆա և ասէ.«Զինչ խօսիս. ասա՛ իմոյ բախտիս». և առեալ տարան զնա ՚ի տօսախուան որ Չինինլիկն անուանի:

Ի վաղիւ անդր ուրբաթուն եկին ժողովեցան յարքունիս աւագորեարն և գլխաւորքն ամենայն, և Մուստաֆա փաշա հանդերձ ամենայն զօրօք իւրովք որք առհասարակ հրացանաւորք էին. և բարձեալ զգլխին Սէլիմայ մեծաշուք

հանդիսիւ տարան 'ի Լալէլի Ճամին և թաղեցին առ հօրն իւրում: Այս վախճան եղև խոհական և արի արքային Սէլիմայ, որ թագաւորեաց ամս ութուտասն, և մեռաւ ամաց քառասուն և եօթանց:

Ի նմին աւուր չոգաւ Մահմուտ արքայ 'ի մզկիթ Այա սօֆիային. ապա զԱլէմտար Մուստաֆա փաշա կարգեաց վէզիր մեծ, և ետ նմա հրաման և իշխանութիւն մաքրելոյ զաշխարհն 'ի չարասէր մարդկանէ: Եւ նա անդէն 'ի նմին իսկ աւուր ձեռն 'ի գործ արարեալ կալաւ մի առ մի զամենայն զաւագորեայն, ոչ միայն զապանողս Սէլիմայ, այլ և զորոց կասկած ինչ գժկամակութեան տեսանէր՝ արս աւելի քան զերեսուն և հինգ, և ետ գլխատել 'ի հրապարակի. և լռեաց աշխարհն առժամանակ մի:

Ողբացին Օսմանեանք զկորուստ մեծի փառացն իւրեանց 'ի Սէլիմ, և յիրաւի. այլ ոչ անդիւտ էր կորուստն. և տեսչութիւնն Աստուծոյ սփոփեաց զնոսա տալով նոցին թագաւոր զայն, որ ոչ միայն զառաքինութիւնս և զլաւութիւնս Սէլիմայ յանձին կրէր, այլ և զոր ինչ ոչն արդեօք ունէր նա՝ զանմկանդ հաստատութիւն 'ի խորհուրդս, զխոհական ընտրութիւն իւրոց պաշտօնէից, զանակնառու արդարութիւն առ յամենայն, և զմարդասէր զիջումն

առ տկարս, աս ստացեալ կալաւ, և զորդին նման ահա այս երեսուն և երկու ամ մեծամեծ գործովք յայս յան-գիման եցոյց՝ սիրեցեալ յիւրոյն, և գրուատեալ յօտարաց. և զարտասուս ժողովրդոցն որ լացին զմահ նորա՝ սըր-բեաց. հօրամոյն նորին որդի Ապտիւլ Մէճիտ արքայ։ ժամ է արդ խմբա-գրել աստանօր առ ժամայս կարճ 'ի կարճոյ զգլխաւորագոյնս յաշխար-հալուր գործոց արքային Մահմուտայ ըստ ստուգագոյն պատմութեանց ա-կանատես պատմագրաց, և յարել 'ի նոյն մասն ինչ կարևոր զթագաւորե-լոյն Մէճիտայ արքայի։

## ՍՈՒԼԴԱՆ ՄԱՀՄՈՒՏ Բ·

### ԱՏԼԻ

ՍԵՆՑԱՂԱԳԷՏՆ 'ի մերազնեայց Մուրատճա, որ առ հարքն մեծի արքայիս և առ Սէլիմաւ եւս առաջին մատենագիր զարեւելեան ազգաց վկայեցաւ յԵւրոպա, Նախատեսեալ գուշակէր երբեմն զհանդերձեալ փոխակերպութիւնս օսմանեան պետութեանն և ազգի. քանզի ասէ. « Խոչք խափանարարք պայծառանալոյ օսմանեան պետութեան այսոքիկ են. կանխակալ սովորութիւնք խուժանին, սնապատիր կարծիք և վարկածք մերժեալք 'ի նոցունց անդամ յՕսմանեանցն իմաստնոց, և խարական ինչ կանոնադրութիւնք թելադրեալք ըստ մեծի մասին յինքնահաճոյ միոց, կամ 'ի կրից ուստեք, և կամ յառժամայն շահուց ինչ ակնկալութենէ... Արդ ոչ այլ ինչ պիտի, ասէ, 'ի բարձումն խափանարարացս, բայց թագաւոր մի իմաստուն, յառաջամիտ, և անվեհեր ձեռնարկու 'ի մեծամեծս... Թող բազմեսցի յայն աթոռ Մէհէմմէտ ոմն Բ., Սէլիմ ոմն Ա., Սիւլէյման ոմն Ա., թող սատարեսցէ նմա խոհական

խրատուք ոմն Խայրէտտին փաշա, ոմն Սինան փաշա, ոմն Փէօփրիւլիւ փաշա և նմանիք նոցին, և ահա տեսցին Օսմանեանք կենցաղել անխտիր ընդ Եւրոպացիս, նոցին վարել օրինօք զինուորութեան, բարգաւաճել զարուեստս և զգիտութիւնս, և համառօտ՝ այլափոխել բնաւ իսկ զկերպարանս թագաւորութեանն»:

Ամբարձաւ Մահմուտ արքայ՝ ոչ զմիոյ, այլ զբազմաց յանուանէ թագաւորաց անուն կրելով յանձին զհանգամանս, և տանէր արդեօք 'ի գլուխ զայն ամենայն փոփոխութիւն ցանկալի, եթէ էր նմա և ժամանակին յաջողութեան լեալ ձեռնտու:

Այլ ուր մատեանս երկարապատումն արժան էր արձանագրել տասանօր, սակայն 'ի ժամանակին կարի հուպ լինելոյ, և 'ի պատմաբանութեան արուեստին յանյեղլի օրինաց բռնադատիմք առ ժամս համառօտել եւեթ զերեւելի երեւելի արարուածս թագաւորիս մեծի, զմանուածքն հարեւանցիկ արարեալ:

Պատմագրեսցուք և զոր 'ի ժամանակին վրդովմունս օսմանեան աշխարհին, որովք նախ տարուեալ և ապա կայկայեալ ամրացաւ հոյակապ թագաւորութիւն արքայիս Մահմուտայ. և յետ այնորիկ տեսցուք զմիջօրեայ պայծառութիւն ախրապետութեան նորա և արժանաժառանգ որդւոյ նորին՝ յոր

վայելեմքս զուարթամիտ և երախտապարտ սրտիւ:

Քանն և երից ամաց էր Մահմուտ արքայ 'ի Թագաւորել իւրում. և յամսեանն օգոստոսի յաւուր մետասաներորդի յամին 1808 ածաւ ընդ մէջ զաւակին երկայրի: Նորատեսիլ ինչ դէպք պատահեցին յայնժամ. զի մեծ վէզիրն Մուսդաֆա Պայրագտար՝ անսաւ 'ի հանդիսի անդ. շուրջ պատեալ յերեքարիւր Անատոլու զօրականաց վառելոց 'ի հրացան, 'ի սուսեր և 'ի դաշոյն, և ինքն 'ի ձեռին իւրում ունելով հրացան փոքր. և այս ամենայն հակառակ ինչ էր օրինաց աշխարհին, որ 'ի հասարակաց հանդէսս պատուիրեն անզէնս լինել ամենեցուն, և ենիչէրեաց անգամ դաւազանս պղնձեայս ևեթ ունել 'ի ձեռին:

Քաջ խելամուտ էր այրն Մուսդաֆա կարևոր պիտոյից կանոնաւոր զօրաց, զորոյ զփորձն ևս տեսեալ էր 'ի վերջնում պատերազմին ընդ Ռուսս. և զայն կարի դէպ ժամանակ վարկանէր 'ի կատարումն իւրոյն խորհրդոց: Վասն որոյ նախ առաջին զորոց միանգամ կազկած 'ի մտի ունէր թէ հակառակեսցին ելից իւրոյն, զնոսին հոգացաւ բառնալ 'ի միջոյ, զԳարայեար փաշա ետ գլխատել, և զՍէյիտ Ալի յաքսորս առաքել, և զայլս ընկէց յիւրաքանչիւր պատուոյ, կարգեալ 'ի տեղիս նոցին զՏամիզ փա-

շա, զՊէչին Էֆէնտի և զայլս 'ի մտերմաց իւրոց:

Այդ խորհուրդ կալաւ Մուստաֆա ընդ համախոհս իւր. և տեսեալ զի յոլովք 'ի քաղաքականացն և 'ի զինուորական աւագաց մեծամեծս շահելով 'ի վաղեմի կարգաց զինուորութեանն՝ չկարէին դիւրաւ հաւանել ընդ նորոգութիւն այնպիսի, եդ 'ի մտի հրաւիրել 'ի Կոստանդնուպօլիս զամենայն աւագ որեար պետութեանն, և յայտնել նոցա զխորհուրդս իւր. այսինքն էր նորոգել զնախնի կարգս ենիչէրեաց, բառնալ զզեղծմունս սպրդեալս 'ի նոսա 'ի ժամանակին յերկարութենէ և 'ի մեղկիչ ձոխութեանց, մուծանել 'ի նոսա զեւրոպացւոյն զինուորութեան զմարզս, և հաստատել անդէն վաղվաղակի օրինակի աղագաւ գունդ մի զօրաց կանոնաւոր Սէյմէն անուանեալ. քանզի վատահամբաւ եղեալ էր այնուհետև անունս Նիզամի Ճէտիտ:

Ի սկզբան ամսեանն Հոկտեմբերի կոչեցան ամենայն բդեաշխք և կուսակալք պետութեանն 'ի թագաւորեալ քաղաքն անդր առ 'ի խորհուրդ 'ի մէջ առնուլ, որպէս ասէր Մուստաֆա, զկարևոր ինչ իրաց. և որ չկարիցեն ոք ինքնին գլխովին գալ 'ի կոչն՝ արձակեսցեն զայլ ոք իւր գործակալ և փոխանորդ:

Գային հասանէին այնուհետև 'ի Կոստանդնուպօլիս կողմնապետքն Ռուր-

լիոյ և ասիակողման, կուսակալք և գաւառապետք մօտաւոր վայրաց քաղաքին, կուսակալն Գարամանայ, և իշխանք և ցեղապետք հզօր տոհմիցն Չափան օղլու և Գարա Օսման օղլու անուանելոց, եւ և Գաւոր փաշա արամբք մարտկօք իբրու երեք հազարաւ:

Խորամանկ բդեաշխն Եանեայի Տէփէտէլէնլի Ալի փաշա արձակեաց 'ի տեղի իւր 'նուխրակ զոմն՝ հանդերձ սակաւաձեռն գնդաւ, որում և պատուէր էր քաջ զննել զամենայն, սակաւախօս լինել, և զբազմացն կարծիս հաստատել: Բազումք 'ի կուսակալացն Բուլղարաց նախանձաբեկք ընդ փառս Պայրագտարին՝ ոչ միայն չեկին 'ի հրաւէրն, այլ և ոչ փոխանորդս առաքեցին: Բդեաշխքն Կարուց, Կարնոյ, Մուսուլայ, Պաղտատայ, և միջագետաց կարի բացականք էին. և կուսակալն Եգիպտոսի Մեհէմմէտ Ալի փաշա, քանզի չունէր ենիչէրի զօրք 'ի գունդըս իւր, ոչ ինչ հարկ համարեցաւ գալ 'ի ժողովանդր:

Արդ իբրև ժողովեցան հրաւիրականքն 'ի մեծի սրահի անդ յապարանս վէզիրին, 'նա շուրջ պատեալ յաւագանւոյն և 'ի խորհրդական ատենակալաց պետութեան և 'ի գլխաւոր օրէնսգիտաց, կալաւ ատենաբանել անդանօր ահեղ ձայնիւն և խիզախ կերպարանօք, և առաջի արար 'նոցա իբրև 'ի դիմաց

արքային ութ գլուխս լանից որ յայս բովանդակէին, զի մի ևս լիցի զօրագըլխաց ենիչէրեացն կաշառովք ժամանել յայն պատիւ. զի ամենայն ենիչէրիք անամուսին 'ի ձմերոցս բնակեսցեն, և նոքա ևեթ ընկալցին զռոճիկս. զի մի վճարեսցին ռոճիկքն տարաժամ. զի չափ դիցի ռոճկի և պարենի և զգեստուց ենիչէրեացն ըստ վաղեմի կանոնադրութեանց արքային Սուլէյմանայ, և զի վարժեսցին նոքա 'ի հրահանգս զինուց կարևորաց ըստ օրինի այլոց Եւրոպականաց: Եւ քանզի դժուարին իմն է, ասէ, բառնալ 'ի միջոյ վաղ ընդ փոյթ պարականութիւնս զայսոսիկ, կամք այս են մերոյ արքային՝ զի տասանին առցին ընտրանաւ արուորագոյնք յենիչէրեաց և յամփոփեն ըստ իւրաքանչիւր կամացն ազատութեան, և մարզեսցին 'ի վարժս եւրոպական հրահանգաց, և յաւելցին նոքա 'ի համար Սէյմէն անուանելոյն զօրականաց: Ժողովականքն ամենեքեան իբրև ընդ մի բերան գովեցին զխորհուրդն, զի ոչ ոք էր որ անդիմանայր զաղառնում բոլոր ենիչէրեաց. վասն որոյ և առ հասարակ ձեռնագրեալ հաստատեցին զհրովարտակն արքունի, և դենպեան լինելին առանձին վճռաւ կնքեաց զկրաւունս գործոյն:

Մինչև ցայս վայր բազում խոհական զգօնութեամբ վարէր Մուստաֆա փա-

շա, օժանդակեալ և յիւրոյին համաձայնոյ և յօտարին խորհրդոց. և չէր ինչ անյուսալի հանել նմա՛ ՚ի գլուխ զգործն զայն զմեծ: Այլ նա բարձրամտեաց յոյժ ընդ յաջողուածս, և անփոյթ արար այնուհետև զկարևոր խնամովք զգուշութեան. և փոխանակ ձեռնարկելոյ առակաւ ՚ի նորոգութիւն կարգաց ենիչէրեացն՝ յինքն յանկուցանելով զզօրավարս նոյին հանդերձ օրէնսագիտացն դատուք, վաղվաղեաց մեծախստութեամբ խլել և քակել զհնացեալ ապականութիւնն արմատացեալս ՚ի ժամանակացն յերկարութենէ: Եւ քանզի դրամոց պէտք էին ՚ի շուտափոյթ կատարումն գործոյն, հարկ ՚ի վերայ եդ իշխանաց և զօրագլխաց շատանալ երիր մասամբ առաջնոյ ռոճկին իւրեանց, և զնորընտիր զօրականն ևս ոչ որպէս կարծելի էր նոցա վարձատրեաց. և որ առաւել ընդհարաւ յաչս ամբոխին՝ զի զնոր զայն դունդ ոչ յենիչէրեացն ձմերոցս բնակեցոյց. այլ ՚ի ձմերոցս նորակարգ զօրականացն Սելիմայ բարձելոյ ՚ի միջոյ, այն որ յԻւսկիւտար:

Այսոցիկ աղագաւ թշնամացան ընդ Պայրագտարոյ և բարեկամք անգամ նորին, ևս առաւել երկոքին դասաւորքն զօրաց, և պալատականքն առհասարակ: Եւ ինքն իսկ արի արքայն Մահմուտ չկարէր հաւան լինել ընդ

այնչափ խրոխտանս լուրոյ փոխանորդին :

Մուստաֆա փաշայ յեցեալ 'ի զօրութիւն վեշտասան հազար խուժանին լուրոյ՝ և յերիս հազարս Գասըր փաշային, յընչայ քերէր զամենայն բանս ամբոխին և զուսադանեայն : Եւ արդարև ահագինք իսկ էին արքն արիւնըռուշաք ճկեալք 'ի սար աշխարհէ . սակայն թշնամիք նորա հնարեցան խորտակել զզօրութիւնս նոցին, և գրգռեալ շարժեցին զոմանս 'ի բդեշխից եւրոպակողմանն, ընդ որս և զհամբաւեալ բդեաշխն Փիլիպպէի զՄոլլա աղա, ապստամբել 'ի սահմանս Վլահաց մօտ 'ի Ռուսճուգ : Աճապարեաց Ալէմդարն արձակել անդր արս վեց հազար յիւրոց անտի . նոքա լքեալ հարան 'ի Մոլլայէն՝ արձակեաց և զայլս հետ զհետէ մինչև չմնալոյ առ իւր աւելի քան զարս վեցհազար :

Անզգուշութեան էր գործն . այլ անզգուշագոյն ևս գտաւ 'ի չպահել զարսն մնացեալս համախումբ 'ի մի վայր, այլ թողուլ ցնոսս վայրավատինս ընդ փողոցս քաղաքին :

Եկին հասին աւուրք ծոմապահութեան Ռամազանին . և 'ի ժողովել Տաճկաց յամենայն գիշերս 'ի հասարակաց ժողովարանս քաղաքին, ոչ այլ ինչ էր լսել յամենեցուն բերանոյ՝ եթէ ոչ բանս քրթմնջմանց և բամբասանաց և

նզովից ընդդէմ Մուստաֆայի. մինչև թղթեան անդամ հաստատել աստ և անդ 'ի քաղաքին, յորս յայտնապէս սպառնային բառնալ ընդ հուպ 'ի միջոյ զՄուստաֆա հանդերձ խորհրդովքն աւազակուս արամբք: Քանզի հարկ իսկ էր վաղ ընդ փոյթ զկնի տօնին թողուլ լքանել ենիչէրեաց զկարգն վաղեմի և զանուն, և նորանոր 'ի տեղի նոցին յանձն առնուլ, և կամ վարատական գնալ ցրուել յիւրաքանչիւր երկիր հայրենի:

Այդ առնելին Ալեմտարայ բարեկամքն իւր և խրատ տային գնալ յԱդրիանուպօլիս, ընդ իւր ածելով և զարքայ և զեղբայր նորին զՄուստաֆա. թողուլ լքանել զՌուսճուգ, և զարսն իւր դարձեալ զանձամբ գումարել: Այլ նա խրոխտացեալ յանհոգս և մեղկեալ 'ի ժիր և 'ի գործունեայ աչալրջութենէ, ոչ ինչ անսաց նոցա:

Ապա 'ի հնդետասաներորդի աւուր ամսեանն նոյեմբերի, յորում 'ի վաղիւն տօն էր Տաճկաց՝ Գատրը կէճէսի անուանեալ, վեզիրն ըստ վաղեմի սովորութեան չոգաւ ընդ երեկս յայց դենպեային՝ ունելով ընդ իւր թիկնապահս ոչ ինչ աւելի քան զերկու հարիւր: Եւ իբրև ելանէր անտի, տեսեալ զի հրապարակն ամենայն խռնեալ էր մարդկամբ, հրամայեաց իւրոցն կազմ ունել զզէնս իւրեանց, և լախտիք և մա_

հակօք վանել յառաջոյ զամբոխն։ Ժողովուրդն որ 'ի տեսիլ եւեթ հանդիսին թուէր հասեալ անդր՝ զարհուրեցաւ 'ի սպառնալեաց անտի և 'ի մահակէ սպառուիրակացն, և վաղ ընդ փոյթ զերկիւղն 'ի զայրոյթ փոխեալ՝ գումարեցան դարձեալ 'ի ժողովատեղի իւրեանց և 'ի ձայն բարձր բողոք ունէին այնուհետև զարարուածոցն Մուսդաֆայի ։

Ընդ այն բարբառ աղաղակի դղրդեցաւ քաղաքն ամենայն. խուռն բազմութիւնք սպառազինաց զինեցին առ զօրավարն Ենիչէրեաց. անդր ընթացան և ոմանք յօրինագիրաց. և խորհուրդ 'ի մէջ առեալ հաստատեցին խորտակել նախ զպաշտօնորդս Ալէմտարայ, և միանգամայն յարձակել 'ի վերայ նորին, որ յայնմ պահու յանհոգս կայր յիւրումն կանանոցի ։ Ի յեղակարծ շփոթից անտի յահի լեալ արանցն Ալէմտարայ, ոչ յայլ ինչ ուշ կալան՝ բայց 'ի զերծուցանել զանձինս իւրեանց փախստեամբ ։ Ի նմին ժամանակի մինչ չև հասեալ սպառազինաց յապարանս վէզիրին, ոմանք յԵնիչէրեաց հուր հարին 'ի մերձակայ տունս ըստ շինելոյ հողմոյն սաստկութեան, որով ընդ հուպ բորբոքեցաւ և պալատն մեծ ։

Այն ինչ շտապէին պաշտօնորդքն Ալէմտարայ 'ի շիջուցանել զհրդեհն, հասին 'ի վերայ նոցա Ենիչէրիք սպառա-

զէնք վեց հազար, և խորտակեցին զնոսա. և ապա շուրջ բոլորեալ զապարանիւքն՝ չետուն բնաւ թոյլ ջրհանս ածել կամ օգնականութիւն ինչ հրդեհելոյ պալատանն հասուցանել: Այրէր տոչորէր չինուածն ահագին իբրև զկատարս հրաբուղխ լերանց. սոսկալի էր ճարճատիւն յարկացն և կործանումն պարսպաց, անպատմելի աղմուկ չփոթի պաշարելոցն, և աղետալի աղաղակ և կառաչ պահանորդաց և սպասաւորաց. որ 'ի դիմել իւրեանց կխայրեացս 'ի փախուստ՝ խողխողէին անդրէն 'ի տեղւոջն 'ի սրոյ Ենիչէրեաց: Անագան զգացեալ էր զիրսն Մուստաֆա փաշա, և ոչ ևս էր հնար ապրանաց. լուծալքաւ այնուհետև յընդաբոյս արութենէն, և 'ի բուռն արկեալ զարկղ մի ականց պատուականաց և քսակս ինչ ոսկւոյ, խոյս ետ ընդ երկուց ոմանց յընտանեաց իւրոց և Թագեաւ յաղիւսակերտ աշտարակ մի փոքրիկ՝ զոր իբրև անքոյթ պատսպարան պատրաստեալ էր յառաջագոյն 'ի պարտիզի անդ ապարանիցն, և ընդ աշտարակաւն ական հատեալ էր, և անցս գողունի ճանապարհի, և վառօդ և լուցկիս բազում հանդերձեալ յականին:

Ի վաղիւ անդր 'ի շիջանել հրդեհին համարէին Ենիչէրիք եթէ և Մուստաֆա փաշա հրկէզ լեալ իցէ. այլ իբրև տեսին զաշտարակն տակաւին ևս կան-

դունն մնացեալ, յարձակեցան 'ի վերայ նորա, և սկսան հրացանս ընդ լուսամուտն 'ի ներքս արձակել. և որք ընդ Ալէմտարայ 'ի ներքս անդ էին՝ մեծաքաջութեամբ զդէմ կալան նոցա, այլ 'ի վախճանի անկան մեռեալք, և ոմանք ևս ընդ պատուհանն փախուցեալ զերծան: Իբրև ետես Մուստաֆա փաշա զի ենիչէրիք ածին և թնդանօթ մեծ 'ի բախել զաշտարակն, և բազմութիւն յոյժ 'ի նոցանէ խռնեալ կայր 'ի վերայ ականին զոր իւր խել հասեալ էր, հուր եհար ինքնին իւրով ձեռամբ յականն, և աշտարակն և պաշարիչք առ հասարակ ահագին ճայթմամբ ընդ օդս 'ի վեր ոստուցան. իսկ ինքն անդէն ընդ փլատակաւն անկաւ մեռեալ:

Յանհնարին խռովութեան ժամանակին սիւն հաստատութեան պետութեանն եկաց Րամիզ փաշա՝ որ ծովակալ էր յայնժամ: Իբրև այդ եղեն նմա իրքն՝ գումարեաց վաղվաղակի զամենայն սպայս իւր և զզօրականս, և երդմնեցոյց զնոսա՝ չլսել այլ ումեք բայց արքային հրամանի: Միաբանեաց ընդ իւր զզօրագլուխ թնդանօթաձիգ զօրացն, և զնորընակի գունդսն կոչեաց 'ի ձմերոցացն նոցին, և հրամայեաց նաև երկուս մեծամեծս ածել կացուցանել հանդէպ ապարանից զօրավարին ենիչէրեաց, և հարկանել զնոյն արձակմամբ ռմբից անդադար: Կոչեաց 'ի Թիկունս

զԳատըր փաշա՝ որ խուռմբ հազարօքն կայըր յԻւսկիւտար. արձակեաց ընդ ամենայն Ճանապարհս որ հանեն 'ի Թագաւորեալ քաղաքէ անտի յԱդրիանուպօլիս և 'ի Սիլիվրի արս, զի զօրս միանգամ գտանիցեն յենիչերեաց՝ ընդ սուր անցուսցեն: Նա ևս համբաւել եթէ Պայրագտարին փախստեամբ զերծեալ 'ի հանդերձ կանացի, և զզօրսն իւր վերստին զիւրև ածեալ հանդերձ բազմութեամբ այլ ևս զօրաց գնայ 'ի Կոստանդնուպօլիս. այլ ոչ ինչ զարհուրեցան ենիչէրիք. քանզի թէև համօրէն Սէյմէն անուանելոցն զօրաց ոչ ինչ աւելի էր քան զտասն հազար:

Մահմուտ արքայ չկարէր գործել 'ի Պայրագտարին՝ որ իւր իսկ ընդդէմ իշխեաց բռնանալ. սակայն խոհական խորհրդով հարկ համարեցաւ զնորա կողմն ունել առ ժամն, զի և անդէտ էր անցիցն անցելոց ընդ նա: Հրաման ետ պալատականաց ամենեցուն 'ի զէն ընթանալ. կոչեաց 'ի ներքս զնորընտիր գունդսն, և կարգեալ զնոսա 'ի վերայ պարապաց 'ի ցամաքակողմն կոյս՝ հրամայեաց վարել հրացանօք զամենեսին որ անդր մերձենայցեն. և Գատըր փաշա խուռմբ գնդաւն եկն եմուտ յառաջին դաւիթ անդր ապարանիցն արքունի:

Ի վաղիւ անդր որ օր վեշտասան էր նոյեմբերի, յայգուէ մինչև ցընդերեկս հրձիգ եղեալ նորընտիր գնդացն յենի-

չէրխս անդր , վանեցին զնոսա . և երկո-
քին նաւքն ոչ դադարէին 'ի հարկա-
նելոյ զաւուն զօրավարին ենիչէրեաց և
զամենայն ամբոխն որ ընդ այն անցխ
յածէին ։ Միայն աւանք քաղաքին յան-
դորրու կային , և Թնդանօթաձիգ զօրա-
կանքն 'ի պատնէշս և 'ի ձմերոցս խու-
րեանց զկայ առեալ մնային լռացն կա-
տարածի ։

Ակսան այնուհետև և ենիչէրիք զան-
գիտել և արշանալ՝ զի վաղ յայտնեցին
զխորհուրդս խուրեանց ։ Զայն իբրև գի-
տաց Րամիզ փաշա , քարոզ կարդաց
Թողութեան ամենայն ենիչէրեաց՝ բայց
'ի զօրավարէ նոցին ։ Այլ Գատը փա-
շա ոխերիմ Թշնամի ենիչէրեաց՝ խոր-
հուրդ եա յարձակել 'ի խռովիչսն , և
հարկանել կոտորել զնոսա 'ի սուր սու-
սերի , 'ի խրատ զգուշութեան ամենայն
ժողովրդեանն մի ևս այլ յայնպիսի ո-
ճիրս մտաբերել ։ Այլքայ հաւանեալ
էր ընդ խորհուրդ ծովակալին . իսկ
Գատը փաշային Թոյլ եա ցածուցանել
եւԹ զաղմուկն առանց ինչ մեծի հա-
րուածոց և հրկիզութեանց ։

Եւ Գատը փաշա ընդ այգն չորեքհա-
զար արամբք և չորիւք Թնդանօթօք յա-
պարանից արքունի . և յերխս առաջն
բաժանեալ զզօրսն՝ անհնարին նախճիրս
գործեաց յենիչէրիս , և լցան փողոցք
քաղաքին առ հասարակ դիականամբք կո-
տորելոց . զի զաղաղակ բարձեալ գո-

չէին Սէյմէնքն.... Ո՞ւր իցեն ենիչէրիք. եկեսցեն կացցեն 'ի մէջ, զի մարտ դիցուք». և զորս միանգամ ընդ առաջ պատահէին՝ անդէն 'ի տեղւոջն դիաթաւալ կացուցանէին:

Եհաս Գաւառ փաշա մինչև 'ի ձիարձակարանն և վանեաց զամբոխն որ շըրջափակեալ կայր տակաւին զապարանիւք վեզիրին. և թողեալ անդ հաւուած մի 'ի զօրացն իւրոց, զմնացեալսն և ս յերիս գունդս բաժանեաց. զմին արձակեաց յՆշանիդուլէ, զմիւսն 'ի մզկիթն Սուլէյմանիյէ, և զերրորդն ինքնին առեալ դիմեաց 'ի տուն զօրավարին ենիչէրեաց. պատուէր տուեալ և այլոց՝ անյապաղ վճարել զգործն յոր երթային, և գալ ժողովել առ իւր:

Այլ նոքա զահատեալք դհետ յանխըրշտակութեանց, մտանէին 'ի տունս տունս և սուր 'ի վերայ եդեալ կոտորէին յանխնայ զամենեսեան զայս և զկանայս, զծերս և զմանկունս: Իբրև տեսին ենիչէրիք զգործս նոցա և զգրուժն՝ քաջալերեցան, գունդ կազմեցին և յարձակեալ կոտորեցին զաւարառուսն զայնոսիկ. յորոց վերայ և քաղաքացիքն 'ի վերուստ 'ի պատուհանից իւրեանց հոսէին զամենայն որ ինչ 'ի ձեռս անկանէր նոցա, ոմն վէրգս, ոմն մաճակս, և ոմն իւղ և ձէթ եռացեալ. որով բորբոքեցան 'ի տեղիս տեղիս և հրդեհք բազումք:

Իսկ երրեակ գունդք Գասըր փաշային դարձան յետս, և զերծան նախ 'ի ձիարձակարանն, և ապա յարտաքին հրապարակ ապարանիցն արքունի. ուրանօր մեծաւ քաջութեամբ մաքառեալ ընդ ենիչէրիս՝ վանեցին զնոսա առ տեղեաւն. այլ նոքա երթալով երթային և աճէին 'ի բազմութիւն, որք և հրձիգ արարին զձմերոցն Այա սոֆիայի, և ընդ նմին զամենայն զփողոցն զայն՝ որ մի էր 'ի մեծամեծ թաղից քաղաքին: Մահմուտ արքայ որ յարքունեաց անտի դէտակն ամբարձեալ 'ի զնին կայր աղետալի անցից հրդեհին՝ պատուէր հրամանի արար առ Գասըր փաշա դադարել 'ի կռուոյն, և առ զօրավարն ենիչէրեաց հրովարտակս արձակէր՝ զամենայն փոյթ 'ի մէջ առնուլ առ 'ի զառաջս ունելոյ զհրդեհին, ապա թէ ոչ՝ մահու մեռանիցիս ասէր: Ի նմին ժամու դադարեցին հրձգութիւնք պալատականացն յենիչէրիս, և զօրավար նոցա փութոյ անդութեամբ հասուցեալ ջրըհանս և շիջուցիչս՝ ճգնէր խափուցանել զբռնութիւն հրդեհին. և եթէ չէին հրապարակքն և մզկիթք, քաղաքն ամենայն 'ի մեծի վտանգի կայր հանդերձ պալատամբն:

Այնչափ խնամք թագաւորին և նա ղայրացուցին զխառնամբոխս խուժան ապստամբացն. որոց դիմեալ 'ի մեծ դուռն ապարանից արքունի՝ ապաւնա-

լից գոչմամբ լուտային ընդդէմ պալատականաց և արքային իսկ գլխովին . և ոմանք ևս զաղաղակ բարձին՝ որպէս թէ կամիցին զթագաւորել Մուստաֆայի : Յայնժամ որ շուրջն կային զարքայիւ առաւել ևս բռնադատէին զնա 'ի կատարել զխորհուրդ խուրեանց՝ զոր յաւուրց հետէ անդադար տային նմա , բառնալ 'ի միջոյ զեղբայրն իւր զՄուստաֆա՝ յորոյ սակս մարտնչէին ենիչէրիք : Եւ յայտ ևս եղև , զի սուլդան Մուստաֆա ընդ ձեռն հէյպէթուլլահ դշխոյին թուղթս երիս ինքնագիրս առաքեալ էր ցայնժամ առ ենիչէրիս , ստգտելով նոցա սպանանել զՄուստաֆա փաշա , ընկենուլ յաթոռոյ զարքայն Մահմուտ , և զանձն իւր ամբառնալ վերստին . և խոստանայր նոցա դրամս երկու հազար քսակաց : Զայս թուղթ իբրև ընթերցան 'ի պալատան անդ , 'ի հրամանէ արքային յարձակեցան 'ի վանդակ անդր և սպանին զՄուստաֆա :

Յայնմ պահու մինչդեռ ամբոխն զհետ էր յուզել յաւերակս ապարանից վեզիրին զոսկի և զարծաթ , առ ոտամբ աշտարակին փոքու գտաւ դուռն մի երկաթի . զոր իբրև բացին՝ տեսաւ սենեակ մի , և 'ի նմա գլխակունք երեք . յորոց մի էր նա ինքն Մուստաֆա փաշա , և առ նոքօք գտէին քսակք ոսկւոյ և արկեղք ականց պատուականաց : Ազդ

*եղև գիւտն վաղվաղակի առ զօրավարն Ենիչէրեաց, որ խուռովքն հանդերձ ակնկալեալ մնայր ցայնժամ արշաւանին Ալէմտարայ 'ի քաղաքն արտաքուստ. վասն որոյ խնդացին առ հասարակ, և առին զոտից դիականն արկեալ քարշեցին մինչև 'ի հրապարակն Էթմէյտանի, և ժամս հինգ կախեալ զոտից՝ ապա իջուցին զնա և տարեալ ընկեցին 'ի փոս մի արտաքոյ Եդիգուլէին :*

*Յայնժամ լքան պարտասեցան բարեկամք և կուսակիցք Ալէմտարայ. և Սէյմէնքն անուանեալք և զօրականք Գատր փաշային առ հասարակ արկին 'ի բաց զզէնս իւրեանց՝ եղբարս իւրեանց կոչելով զԵնիչէրիսն, և ապաւինեցան եւ 'ի կորուստ մատնել զԳատր փաշա և զծովակալն Րամիզ, որ վաղու ևս անձապարեալ էին 'ի փախուստ : Քանզի Մահմուտ արքայ ինքնին խնայեալ յարոն՝ ասաց նոցա մնանել 'ի նաւն պատրաստական և խուսել 'ի քաղաքէն : Սակայն Ենիչէրիք ընթացեալք յապարանս նոցա, հուր հարին, և զինչսն առին յաւարի :*

*Ուրբաթ էր օրն, և հարկ 'ի վերայ կայր 'ի մզկիթ երթանել արքային: Սմին իրի եմուտ զօրավարն Ենիչէրեաց առ արքայ. և մինչ չև նորա բարբառեալ ինչ էր գոչեաց արի արքայն զայրագին ընդդէմ նորա և ասէ. « Մինչև ցե՞րբ ոչ դադարիցէ յանդուգն անզգամու-*

թիւն և ապերասան խժդժութիւն ենիչէրեացդ. և յորոց իրաւանց այսչափ մահուանք գործեցան և արիւն անպարտ հեղաւ 'ի գետին։ Միթէ ես ինչ հնարեցի զՍէյմէնացն գունդս, կամ թէ վեզիրն յանձնէ ինչ համարձակեաց զնորաձևութիւնս զայս. ոչ ապաքէն համօրէն ամենայն իշխանք և պետք աշխարհիս, և ենիչէրիքդ իսկ գլխովին հաւանեալ հաճեցայք և բան եդուք, և երդուայք ես 'ի գլուխս ձեր ». և ցուցեալ նմա զթուղթ դաշինն ասէ. « Ո՞չ ահա ձեր ենիչէրեացդ է կնիքս։ Այլ քաջ իսկ 'ի վերայ հասեալ ծանեայ ես զխորհուրդըս անզգամութեան ձերոյ. զի զՍէլիմ արքայ սպանիք, և զՄուստաֆա արքայ եդուք սպանանել. և արդ ես միայն մնացի. ոչ այդպէս, այլ ահա և ես ինքնին իսկ դեղամահ եղանեմ 'ի կենցաղոյս, և դուք արարէք զոր ինչ և կամիք »։ Զայս ասացեալ բուռն եհար 'ի բաժակ օշարակին. այլ զօրավարն աղաղակեաց անդէն, և ընթացեալ յափըշտակեաց 'ի ձեռանէ նորա զբաժակն և եհար զգետնի ասելով. « Զի՞ գործես տէր արքայ, մի՛ տէր ». և անկեալ համբուրեաց զոտս նորա, և յաւել խօսել առ նա բազում բանս ողոքանաց։

Յայնժամ ասէ ցնա արքայ. « Ելից ես 'ի մզկիթն. այլ թէ տեսից յուղւոջ անդ զինեալ զօք, մեռանիմ 'ի տեղւոջն »։ Եւ վաղվաղակի զօրավարն ար-

տաքս, և ետ քարոզ կարդալ ընդ ամե֊նայն փողոցս քաղաքին, եթէ « Ահա կալաք զԴատր փաշա և զՄամիզ փաշա և տարաք յԷթմէյտանն, և 'ի ցից ունիմք հանել զերկոսին միանգամայն . հապա որ ենիչէրի որք իցէ՝ անդր դումա֊րեսցի » : Եւ 'ի սուտ համբաւոյն պատ֊րեալք ընթացան 'ի տեղին ոչ միայն ենիչէրիք, այլ և 'ի քաղաքացեաց անթիւ անհամար մարդիկ : Յայնմ պահու էր որքայ 'ի մզկիթն, և դարձաւ անդրէն, և ետես և ոչ զոք :

Յետ այնորիկ բարձին ենիչէրիք զգլխակն սուլդան Մուստաֆայի, և տա֊րեալ թաղեցին առ հօրն իւրում . և չե ևս զիջեալ 'ի յախուռն լրբութենէ իւ֊րեանց՝ դարձան յարքունիս, և պահան֊ջէին տալ 'ի բուռն զայս որք և զայն 'ի պալատականաց . սակայն ոչ ինչ դըր֊դուեցուցին զարքայ յարիական հա֊տատութենէն . զի ընկալան 'ի նմանէ պատասխանի . « Զտամ ես ձեզ և ոչ զոք . և թէ մեզ ինչ իցէ ուրուք յիմոց պաշտօնէից, կարող իսկ եմ ես ինքնին պատուհասել զնա » : Եւ նոքա պա֊պանձեալ դարձան յիւրաքանչիւր տե֊ղիս :

Իսկ ապա խորհուրդ 'ի մէջ առեալ գլխաւորացն 'ի զօրագլուխս ենիչէ֊րեաց՝ խնդրեցին զներումն յարքայէ, և երդուան նմա զհաւատարմութիւն անդրժելի . և դենպեան հանդերձ համ֊

օրէն օրինականացն դատու խնդակից եղև արքայի վասն խաղաղութեան պետութեանն: Զնոյն և ամենայն բդեաշխք և կուսակալք առարին. և թէպէտ ոմանք 'ի նոցանէ փորձեցին դարձեալ ձեռնտու լինել 'ի ծածուկ կուսակցացն Ալէմտարայ, այլ ոչ ինչ ոչ կարացին վճարել. և հզօրագոյնքն 'ի նոցանէ յետ սակաւուց բարձան 'ի միջոյ:

Քանզի Րամիզ փաշա՝ որ ընկեր էր 'ի Խըրիմէ, փախուցեալ անկաւ 'ի Ռուսաստան. Գատըր փաշա յոյլակերպս եղեալ փախեաւ յԻկոնիոն, և խորհէր դարձեալ զօրաժողով լինել 'ի ջնջումն Ենիչէրեաց, այլ անկաւ 'ի բուռն և նա և չարամահ եղև: Ալի էֆէնտի և Պէհիճ էֆէնտի ամիս ինչ ճողոպրեալ զանձինս 'ի ձեռաց թշնամեաց իւրեանց, 'ի լուր թողութեան եղելոյ յանցանացն 'ի վեր երևեցան, և խեղդամահ եղեն: Նա ահա զայսօրինակ վախճան եղև մեծի խռովութեանն՝ որպիսի չէր երբեք երևեալ 'ի Կոստանդնուպօլիս:

Յետ այնորիկ հաստատեաց Մահմուտ արքայ զուսադրեալն յիւրաքանչիւր իշխանութիւնս. զկնիքն արքունի ետ առ ժամն ցՄէհէմմէտ փաշա, և զՍէյիտ Ալի փաշա կարգեաց վերստին 'ի ծովակալութեան իւրում. և հրամանս ետ վաղվաղակի ձեռն 'ի գործ առնել 'ի շինուած ապարանից վեզիրին և այլոց հրդեհակէզ անկելոց: Հրաւի-

բեալ ապա 'ի կայսերէն Ռուսաց 'ի հաշտութիւն խաղաղութեան, արձակեաց 'ի քաղաքն Եաշ պատգամաւորս 'ի դիմաց իւրոց զՐէիս էֆէնտին Գալիպ փաշա և զՄուրատ Մոլլա, և ընդ նոսա թարգման մեծ զՏիմիթրաշքօ Մուրուզ: Այլ պատ 'ի պատ հնարք դեսպանացն Անգղիացւոց և Աւստրիոյ յաղաղեցին զիրսն. քանզի ուշ եդեալ ջանային առա 'ի թշնամութիւն գրգռել զՕսմանեանս ընդդէմ Գաղղիացւոց և Ռուսաց՝ այն ինչ տակաւին հաշտելոց ընդ միմեանս: Իսկ իբրև 'ի մի վայր եկին պատգամաւորք Ռուսաց և Օսմանեանց, կոմն փոխադարձ հիմն պայմանաց հաշտութեանն զայս եդ, զի ամենայն երկիրն որ յայնկոյս Դանուբայ 'ի ձեռս Ռուսաց մնացէ: Եւ 'ի պնդել Օսմանեանց՝ եթէ կարի իմն է պահանջումն և հակառակ կամաց մերոյ արքայիս, լուծաւ ժողովն. և Մահմուտ արքայ ակամայ կամօք հրաման ետ անդրէն զէն առնուլ և վանել զՌուսս 'ի սահմանաց աշխարհին:

Յայնմ ժամանակի գժտութիւն մեծ կայր ընդ կուսակալս ափանցն Դանուբայ և ընդ կուսակալն Ռուսճուգայ՝ որում Քէօսէ Քեահեա անուն էր: Քանզի սա համախոհ և տեղակալ գոլով Ալէմտարայ՝ բազում պատուասիրութեամբ ընդունէր զկուսակիցս նորին զփախուցեալս 'ի Կոստանդնուպօլ-

այ. որոյ վասն առեալ եղեալ բդեշխից կողմանցն՝ մարտ եւ եդ ընդ նոսա. և 'ի փախձանի յանհնարս մտեալ՝ հատուածեցաւ կուսակցօքն իւրովք առ Ռուսս 'ի Պուքրէշ, և անտի անց 'ի Ռուսիա։ Յայնժամ զօրաժողով եղեալ կուսակալաց կողմանցն մարտեան ընդ Ռուսս, այլ վանեցան 'ի նոցանէ. և զի ենիչէրիք զվէզիրաւն արկանէին զմեղն, էառ արքայ 'ի նմանէ զկնիքն և ետ ցեօթանասնեմին Եուսուֆ փաշա։ Որոյ հասեալ յաշխարհէն բարձր Հայոց 'ի Կոստանդնուպօլիս՝ զօրաժողով եղև դարձեալ զօրաց բազմաց, և դիմեաց ընդդէմ Ռուսաց։

Մինչդեռ Եուսուֆ փաշա բանակ հարեալ կայր առ Սիլիստրաւ, զօրավարք Ռուսաց՝ որ էին Բագրատիոն իշխան, Լանժըրոն, Մարքով, Փլաթով և Միլորատովիչ, առին զբազումամրոցս որ առ Դանուբաւ և 'ի ծովեզերին, զԻսաքճա, զԴուլչա, զՄաչուն, զՀըրսովա, զԻսմայիլ և զԻպրայիլ։ Այլ 'ի յարձակիլ Բագրատիոնի 'ի վերայ բանակին Օսմանեանց՝ հարաւ խորտակեցաւ 'ի նոցանէ չարաչար յոյժ և 'ի փախուստ դարձաւ, և անկան 'ի Ռուսաց յայնմ մարտի ոգիք տասն հազար։

Եուսուֆ փաշա աւետաւորս յաղթութեանն արձակեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ մեկնեցաւ 'ի ձմերոց յամուրն Շումլա. ուր և հիւանդացաւ, և յղեաց

'ի զօրաց նորին դատարկք եղեալ դարձան յիւրաքանչիւր տեղիս, և մնացին առ նմա այրք ոչ ինչ աւելի քան զքառասուն հազար։

Յայնժամ ձմերայնի առեալ Գաղղիացւոց զՎիեննա, և խաղաղութիւն արարեալ ընդ Գերմանացիս, յորդոր եղեն և Օսմանեանց հաշտել ընդ Ռուսս։ Սակայն Մահմուտ արքայ խրատեալ եղեալ՝ եթէ ոչ դադարեն Ռուսք զօր գումարել 'ի սահմանածայրս աշխարհին, պարտ անձին վարկաւ հանդերձել կազմել վերստին 'ի մարտ պատերազմի․ ստուարացոյց զբանակ վեզիրին, և բազմացոյց զօրմիղ նաւուց խուրոց, և զՍէյիտ Ալի փաշա ընկեցիկ արարեալ՝ ամիրալ փոխանակ նորին զԴայեար փաշա։

Ընդ այն ժամանակս Սերվացիք և Պօնացիք պատեհ առեալ զպատերազմին Ռուսաց՝ վտարանջեցին յՕսմանեանց, և սկսան մարտ դնել ընդ նոսա․ այլ շահեցան դոգցես և ոչ ինչ, և կրեցին զեան բազում, և զաշխարհն իւրեանց կոխան եդին ոտից զօրացն Օսմանեանց․ որոյ վասն և յոլովք 'ի նոցանէ պարտաւորեալք յանօգուտ արարուածոյն՝ ցածեան յմբոստութենէ իւրեանց․ մանաւանդ զի և Ռուսք ոչ որպէս խոստացեալն էին՝ առաքեցին նոցա զօրք և դրամովք։ Բայց միայն իշխանն Սերվիոյ Չէօրնի Ճօրճի անուա-

նեալ՝ նիզակակից էր բանակին Ռուսաց արամբք երեքհազարօք։

Ի գալ միւսոյ ամին մինչդեռ երկուստեք մեծամեծ պատրաստութիւնք պատերազմի գործէին, կարօտութիւն մեծ էր 'ի Կոստանդնուպօլիս ցորենոյ և այլոց պարենից. պատահեցաւ և հրդեհ մեծ յամանեանն աղբիւրին 'ի Պէյօղլու, և այրեցան տունք աւելի քան զերկու հազար. և Ենիչէրիք որ անշուշտ պատճառք էին բորբոքելոյ հրդեհին՝ բազում վնաս և կեղեքմունս հասուցանէին բնակչաց քաղաքին. մինչև հրաման տալ արքային՝ զի ամենայն ումեք համարձակ լիցի բռնութեամբ վանել զբռնութիւն։ Զհետ ամաց երկուց գուժեաց և ձախողել իւրաց պատերազմին, և առնուլ Ռուսաց զՍիլիստրէ և զայլ բազում մարզս, և գերել նոցա զՓէհլիվան փաշա, և պաշարել զբանակ վէզիրին մերձ 'ի Շումնա. և անկան ամենեքեան 'ի վարանս տարակուսի։ Միայն անընկճելին 'ի վտանգաց արի արքայն Մահմուտ ոչ ինչ կասեալ յաներկմիտ հաստատութենէ մտացն, զամենայն փոյթ 'ի մէջ էառ կուտել դարձեալ զօր բազում, ժողովել արծաթ յոյժ, և խրախուսել զազգն քաջալեր հրովարտակօք 'ի պաշտպանութիւն օրինաց և աշխարհին յերեսաց թշնամեաց. և խոստանայր ինքնին անձամբ առաջնորդել նոցա 'ի գլուխ բանակին։ Սակայն դենպեան և այլք

*յուսադրերոյն խիթացեալ 'ի չարամիտ ենիչէրեաց՝ խափանեցին զարքայ 'ի խորհրդոյ անտի ։ Այլ նոցին երկիղի և Զափան օղլու և Գարա Օսման օղլու քան հաղարօք իւրեանց ոչ ընդ Կոստանդնուպօլիս՝ այլ ընդ այլ անցին 'ի բուն բանակն ։*

*Մահմուտ արքայ ոչ ինչ թուլացեալ 'ի հանդերձանաց պատերազմին՝ որ յԵւրոպա, փոյթ մեծ կալաւ 'ի նմին ամի նկուն առնել և զԿահապին՝ որ բռնացեալ էին յԱրաբիա, և տիրապետեալ երկոցուն քաղաքացն Մէքքէի և Մէտինէի ։*

*Ոչ անտեղի թուի ցուցանել աստանօր սակաւուք զծածուկ զօրութիւնն՝ որ ընդ ամս յոլովս շարժէր զամենայն անխուս տէրութեանն և ածէր 'ի գլուխ նորա զամենայն եղեռն ։ Մահմուտ արքայ 'ի գահակալելն իւրում զամենայն ինչ գտանէր վեր 'ի վայր. առ մեղկութեան Սէլիմայ աւագանին ապականեալ, զօրականն ըմբոստ, աստ խլանութեանն յոչինչ, կուսակալք և պետք կողմանց կողմանց ապստամբք, ենիչէրեք յետ ընկենլոյ զՍէլիմ և ամբառնալոյ զՄուստաֆա՝ տիրացեալք պետութեանն ։ Սէլիմբաղմահմուտեալ յութուտանամեայ թագաւորութեանն վրիպակաց և 'ի թշուառութենէն, մինչ դեռ նա և Մահմուտ տակաւին արքայորդի 'ի ներքս անդ արգելեալ կայ-*

լին, խոստ տայր նմա, թէ « Կայ քեզ թագաւորել, որդեակ, զի անմտութիւն եղբօրքոյ ոչ ժառանգէ զաթոռն. այլ դու իբրև առցես զգահն, մի հաւատար պաշտօնէից. անձամբ տես և քննեա զամենայն. օրինակ առ յինէն, զի մի անկցիս 'ի փորձանս որպէս ես չարաչար խաբեցայ » : Մահմուտ արքայ զ'ի բնէ կասկածոտութիւնն ծայրացոյց խրատուքս՝ զամենայն ինչ քննել տեսանել իմանալ. որ թէպէտ և փափաքելին էր ժողովրդեան, բայց տագնապեցոյց զաւագանին և զամենայն գործակալս. անյողդողդ էր, արդարակորով, անխոնջ աշխատասէր և միայն հեշտութիւն իւր զվատակելն վարկուցեալ. զբօսանք իւր էր յանծանօթս շրջել տեսանել զկեանս ժողովրդեանն 'ի քաղաքին և հաւատալ զկատարումն հրամանաց իւրոց : Գնացք էին նորա և հրամանք իմաստուն. թերևս փոքր մի խիստ 'ի պատուհասել զմնունս անգամ, բայց և այն հարկաւոր արդեօք 'ի բարեկարգութիւն ժամանակին՝ յորում արհամարհեալ էր իշխանութիւնն : Հռչակ երթայր զնմանէ և յուսադրէր տեսանել զանէրութիւնն 'ի նախնի պայծառութեանն. և ոչ 'ի դերև ելանէր այս ակնկալութիւն, եթէ արքային անխափան նոյն ոճոյն էր գնացեալ: Այլ քանի գժուարին է մարդոյ չփարիլ, մանաւանդ առն թագաւորի : Ճողո-

պրել կամեցեալ 'ի պատրանաց դրանն, չարաչար ևս պատրեցաւ յառնէ միջէ:

Զխորասնիմ՝ ոմն անուն Էֆէնտի զԷհնիր Էմինի՝ կարգեալ էր իւր ազգաբար հաւատարիմ ամենայն անցից. այլ ոս այր ագէտ և մոլեխանձ՝ ոչ ունէր տալ զբոյցս ալքայի՝ բայց զոր 'ի ժողովարանս և յայլ երախանս շրջէր ժողովէր. սակայն իբրև արգարախօս ոք հաճոյ եղեալ էր նմա. և 'ի պակասելն հարկ էր զայլ ոք կացուցանել 'ի տեղի նորա. և վիճակեցաւ յայն Համէթ Էֆէնտի: Այրս այս անուշան, վաճառականի ուրումն դպիր, ընդ բազում գործս արքունի և ընդ իշխանութիւնս անցեալ՝ հմուտ եղեալ էր ամենայնի: Դեսպան կացեալ առ Նափոլէոնիւ՝ ուսեալ էր զլեզու գաղղիացի և հմտացեալ կարգի տեսչութեան այլոց տէրութեանց. և դարձ արարեալ այսրէն՝ կարգեցաւ քեահեա պէյ առ Թագաւորութեամբ Մուստաֆայի և աքսորեցաւ: Գործակալութիւն նորա առ առաջնով Թագաւորութեամբն բաւական էր խոչ ընդ ոտն լինել յառաջադիմութեան նորա, եթէ որ քան զկամս և զիմաստ մարդկային զօրաւորն է բախտն՝ չէր այլազգ ինչ անօրինեալ:

Սուլէյման փաշա կուսակալ Պաղտատոյ ապստամբութեամբ իւրով և կուսակցութեամբ ընդ Վահաբիս պատրաստուր գառնէր առաջի դրանն.

գատակնքեցաւ 'ի մահ ։ Այլ ոչ ևս այն աւուրք էին՝ յորս Գափուճի պաշին հրովարտակ 'ի ձեռին գնայր անաշխատ առնոյր զգլուխս. բռնութեամբ զօրաց վճարել անհնար էր. հարկ էր նենգ ինչ իմանալ, և 'ի յաջողութիւն իւրն ընտրել այր մի խորամանկ, և կարգաւ 'ի վեր քան զԳափուճի պաշի առ 'ի կեղծել և կարծեցուցանել զնա գործով ինչ կարևորաւ եկեալ։ Դուռն յանհնարիցն համարէր զելս իրացն, այլ զայս պատեհ 'ի ձեռն առ՝ կորուսանել զՀալէթ՝ յորոյ խորամանկ հնարիմացութեանցն նեղեալ էր ։ Մատուցաւ առ արքայ իբրև միայն բաւական 'ի գործն խիթալի. ընտրեցաւ կարգեցաւ ։ Իբրև 'ի Պաղտատ հասանէր, ոչ տայր նմա թոյլ կուսակալն գալ առ ինքն. այլ Հալէթ առաքեալ առ նա զնամականին և զկեղծուպատիր հրովարտակն, այնպէս գիտաց ձևանալ և ընդ միտ մտանել առնն, մինչև հրաման եղև նմա 'ի քաղաքն մտանել։ Անդ ապա 'ի գործ առեալ զամենայն մեքենայեալ խորամանկութիւն խորհրդոցն, արկանէր երկպառակութիւն 'ի քաղաքին, զիւրև ածէր զբազումս, մանաւանդ զլումփոխ կուսակալին զխախէլ հրեայ բնիկ, որ մատնիչ և դաւաճան լինէր կենաց երախտաւորի տեառն իւրոյ, մինչև հատաւ գլուխ նորա և բերաւ առ Հալէթ ։ Որոյ անդրէն գալ

արարեալ յաղթանակաւ 'ի կոստանդնուպօլիս՝ սասանեցոյց զամենայն թշնամիս իւր, որ օր յօրէ գէտակն կալեալ մնային համբաւոյ սատակման նորա 'ի կուսակալէ անտի։

Յետ սակաւ միոյ մեռանէր վերոյիշեալ շէհիր էմինի Խալրահիմ էֆէնտին, զոր որսացեալ էր Հալէթ իւրով ճարտարմտութեամբ, և պատկառելի և մեծարոյ ևս զանձն երևեցուցեալ յաչս նորա յիմաստութեան և 'ի յաջողակութեան մասին. որ և 'ի մեռանելն ընծայեցոյց զնա արքայի իբրև զմիայն կարող 'ի գործ ծառայութեան նորա։ Եւ յիրաւի իսկ առ ժամայն ցուցանէր նա զհանդէս ճարտարութեան և խորագիտութեան իւրոյ 'ի գործս վտանգաւորս, և մանաւանդ ընդ ենիչէրիսն՝ յորոց արքայ 'ի տագնապի կայր։ Այնչափ իմն շնորհս գտանէր առ Մահմուտ արքայի, մինչև 'ի սուղ ժամանակի զամենայն երասանակս տէրութեանն 'ի բուռն ածել. չէր ինչ որ գործէր առանց նորա և կամ գաղտ 'ի նմանէ։ Զառաջինն այնպէս գողացաւ յաչաց ամենեցուն զգործ մեծի պաշտաման, մինչև չգիտել ումեք՝ թէ խորհրդական կարգեալ իցէ արքայի. բայց ապա 'ի վեր ել բանն, և անուն Հալէթի հնչէր 'ի բերանս ամենեցուն. և այնուհետև անպատեհ իմն էր ծածկել արքայի զհրապարակագոյժ իւրն. ապա առ այլ արծ

զնա 'ի պատիւ Նիշանճի անուան ։
Իբրև զգև մի արձակեալ 'ի կապանաց՝
հանճար նորա չարարուեստ ոչ գիտաց
ասել շատ. վաղթար խրատուքն դար-
ձոյց 'ի չար զամենայն բարի բարի խոր-
հուրդս արքայի, զորոյ զմիտսն գերեալ
էր'ի վեր քան զբան. և փառամոլութիւն
նորա այնուհետև ելանէր զեղչր ընդ
չափ և ընդ սահման ։ Ոչ զոք հանդուր-
ժէր ունել իւր բարձակից. քաղընդոտ-
նեաց գրգռեցոյց տապալեաց զամե-
նեսեան և արար իւր նորանոր ձեռա-
սուն. հարկ էր այնուհետև կամ ընդ
դրօշիւ նորա մտանել, կամ կործանել։
Բարձրնկեցութիւնք, աքսորանք, ա-
ւարառութիւնք ստացուածոց և կա-
ռափնատութիւնք լինէին ընդ ամենայն
տէրութիւնն առանց ինչ այլոյ հարցա-
փորձի, բայց միայն 'ի հաճոյից կամաց
իւրոց, կամ 'ի բանսարկութենէ իւրոյն,
ևս առաւել հրէին խոխէլայ, զոր ընդ
իւր ածեալ 'ի Պաղտատայ՝ 'ի փոխա-
րէնս մատնութեան նորա սեղանաւոր
իւր արարեալ էր զնա և մտերիմ։ Չէր
ոք այլ գիտակաց նմա զօրութիւն՝ բաց
յենիչէրեաց. որ երբեք երբեք սաս-
տէր 'ի նա. բայց առատաձեռն պար-
գևօք գիտաց ոչ միայն լռեցուցանել և
զնոսա, այլ և 'ի գործ իւր արկանել։
Այսպէս այրս այս փոխանակ 'ի վերա-
ծնութիւն լինելոյ տէրութեանն կորս-
տամտութեամբ իւրով և խորագիտու-

թեամբ, պատճառ եղև ընդ հակառակն գլորելոյ 'ի խորխորատ չարեաց՝ յորմէ ոչ ևս կարաց ելանել։

Այլ զայսու ժամանակաւ կուսակալն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի փաշա յետ խորտակելոյ զբռնութիւն Քէօլէմէնաց, եհար վանեաց և զՎահապիս։

Այլ հարկ է համառօտել աստանօր և զարարուածս այսր մեծի կուսակալի որ 'ի մեծամեծ մարդկանէ մերոյ ժամանակիս վկայեալ է և յարգեանց և 'ի համբաւոյ։

Մէհէմմէտ Ալի փաշա ծնեալ յամին 1769 'ի Գավալա աւանի աշխարհին Առնաւուտաց, անդստին 'ի մանկութենէ հանճար և արութիւն բազում ցուցանէր․ այլ առաւել պայծառացաւ յարշաւանին Օսմանեանց ընդդէմ Գաղղիացւոց յԵգիպտոս, և սիրելի ամենեցուն գտեալ մեծի և փոքու՝ ամբարձաւ մինչև 'ի կուսակալութիւն աշխարհին։ Բազում անգամ ամբաստանեալ յատեանս իւրոց առ Մահմուտ արքայ, հրովարտակ ևս ընկալաւ 'ի Նմանէ երկիցս՝ մեկնել 'ի կուսակալութենէն Եգիպտոսի․ և 'ի վերջին երեսս հպատակութիւն ցուցեալ հրամանաց արքունի՝ ջան 'ի գործ արար և յաջողեցաւ հաստատուն կալ մնալ 'ի բարձին, զի յինքն յանկուցեալ էր զսիրտ իւրոց սպայից, ևս և զաւագանւոյն Կոստանդնուպօլսոյ․ և Գաղղիացիք անդստին յայնմ

ժամանակէ զօրս զկողմն ունէին հակառակ Անգղիացւոց։

Ընդ այն ժամանակս բռնացեալ յոյժ էին 'ի կողմանս Եգիպտոսի Մեմլուք կամ Քէօլէմէն անուանեալ իշխանք Արաբացւոց 1, և ձեռնտուութեամբ Անգղիացւոց յաւելուին օր քան զօր ըմբոստութիւն։ Արդ կամեցեալ Մէհէմմէտ Ալի նկուն առնել զնոսին՝ փոյթ յանձին կալաւ որսալ զնոսա քաղցրութեամբ. և յաւուր միում հրաւիրեալ 'ի կոչունս խրախճանի՝ ընդ սուր անցոյց զամենայն զգլխաւորս նոցին արս չորեքհարիւր և եօթանասուն, և զմնացեալսն հալածեաց ապա անձամբ և 'ի ձեռն որդւոց իւրոց մինչև 'ի Նուպիա 'ի վերնակողմանս Եգիպտոսի։

Յետ այնորիկ ըստ հրամանին արքունի հետամուտ եղև Վահաբեաց, և ընդ ձեռն որդւոյ իւրոյ Դուսունայ էառ սաստիկ պատերազմաւ զՄէտինէ և զՄէքքէ, և զփականս նոյին առաքեաց 'ի Կոստանդնուպօլիս յուրախութիւն մեծ արքայի և ամենայն ժողովրդեան։ Եւ զամս տասն մարտ եդեալ ընդ Վահաբիս Դուսուն և Իպրահիմ և Իսմայիլ որդիք կուսակալին, բազում քաջութիւնս գործեցին. և 'ի վերջէ նկուն արարեալ 'ի սպառ զբռնաւորսն, զգլխաւորսն 'ի

1 Տե՛ս վերոյանէ 'ի հատ. Ա., յէջ 287։

նոսա զԱպտուլլահ որդի Միւսթայ և զայլս ոմանս առաքեցին 'ի Կոստանդնուպօլիս, և անդ գլխատեցան: Յայնմ'ի ժամանակս արշաւանի կորոյս Մէհէմմէտ Ալի զերկուս յորդւոց իւրոց զԹոսուն և զԻսմայիլ. այլ ինքն զօրացաւ յոյժ յոյժ և ահարկու դատ ամենայն Արաբացւոց, և պատկառելի յաչս Օսմանեանց. և Եւրոպացւոցն ազգք անգամ զարմացան և դեռ ևս զարմանան ընդ ճարտարութիւն և ընդ անյողդողդ արիութիւն կուսակալիս: Մեծապէս սիրող է Մէհէմմէտ Ալի փաշա եւրոպական հրահանգաց, և քաջահմուտ ամենայն օգտից որ 'ի բարեկիրթ քաղաքականութենէ յառաջ գան. այնր իրի մի անգամ և երկիցս փորձ փորձեաց 'ի նորոգել զհրահանգս զօրաց իւրոց. և ոչ յաջողեաց, ապա սան առ սան յառաջ մատեաւ և փոխակերպեաց բնաւ իսկ զերեսս աշխարհին: Բազում մարդասիրութեամբ ընկալաւ զփախստեայս Գաղղիացւոց և զայլոց ազգաց՝ որոց անթիւ էր բազմութիւն 'ի ժամանակին 'ի պատճառս պատերազմաց Եւրոպայ, և ընդ նոցին ձեռս բարգաւաճեաց յԵգիպտոս և յԱղեքսանդրիա զարուեստս և զգիտութիւնս: Եւ թէպէտ կարի խիտ ինքնօրէն ազատութեամբ վարէր նա յայնմ ամենայնի, սակայն 'ի հատուցումն տարեւոր հարկին և պարտուպաշաճ ընծայից ոչ ինչ զառաջինն թերա-

ցեալ՝ ոչ ետ աւագանւոյն Օսմանեանց յայտնի ինչ դժկամակութեան պատճառս։ Այլ մեք դարձցուք ուշ ունել և այլոց ինչ անցից օսմանեան պետութեանն։

Յամին 1808 'ի բառնալ արքային 'ի կենաց զՍելիմ փաշա զկուսակալն Պաղտատայ՝ կալաւ զտեղի նորին Ապտուլլահ փաշա։ Սորա տեսեալ՝ զի չէ բաւական միայնակ զդէմ ունել արշաւանացն Քրդաց և Արաբացւոց, կոչեաց իւր 'ի թիկունս օգնականութեան զՄէհէմմէտ Ալի միրզա՝ զմի յորդւոց արքային Պարսից որ նստէր 'ի Կրմանշահան. և նա մտեալ երկոտասան հազարաւ 'ի սահմանս աշխարհին Օսմանեանց՝ փոխանակ օգնելոյ նոցին յարձակեցաւ 'ի վերայ Պաղտատայ, և նեղէր զքաղաքն։ Բողոք կալան Օսմանեանք առ Թագաւորն Պարսից, և ընկալան պատասխանի՝ եթէ անհրաման 'ի հօրէն գործէ զիրան արքայորդին. վասն որոյ ազատութիւն է, ասէր, Օսմանեանցդ վանել զնա 'ի սահմանաց ձերոց։ Յաւել առաքել արքայն Պարսից և դեսպան զօք 'ի Կոստանդնուպօլիս հանդերձ բազմաթիւ մարդկամբ և բազմապատիկ պատարագօք. և ոչ միայն փակեցաւ դուռն պատերազմի, այլ և սէրս բարեկամութիւն եղև ընդմէջ երկոցուն պետութեանցս։

Եհաս և յաշխարհէն Վրաց այլ դես

ապա՛ն առ Մահմուտ արքայ, և բողոք հարկանէր զյարձակմանէ Ռուսաց 'ի սահմանս երկրին, և հայցէր զօգնութիւն: Սակայն Ռուսք վաղու ևս տիրեցին Վրաստանի, և միոյ մասին Եգերացւոյն աշխարհի:

Իսկ 'ի Ձմերայնի 1810 ամին բազում բանագնացութիւնք եղեն յանօգուտս 'ի մէջ Ռուսաց և Օսմանեանց, և 'ի գարնայնի միւսոյ ամին Ահմէտ փաշա կոչեալ վէզիր մեծ փոխանակ Եուսուֆայ՝ խաղաց գնաց 'ի բանակն 'ի Շումնա: Սորա տեսեալ զի նոր սպարապետն Ռուսաց Քութուզով ոչ ինչ փոյթ ունի յամրի պահել 'ի ձեռին զբերդեանն որ յայսմ կողմանէ Դանուբայ, և հնարի ամփոփել զզօրս իւր յերկիրն Վլահաց և 'ի Մոլտաւիա, համարձակեցաւ յարձակել յառումն Ռուսճուգ քաղաքի, և վանեցաւ մի անգամ և երկիցս: Սակայն չև ևս խրատեալ հարուածովքն, իբրև ետես՝ եթէ հուր հարեալ այրեցին Ռուսք զՌուսճուգ, և զամրութիւնս նորին քակեալ կործանեցին, առաւել ևս ձեռն յանձին եհար, և ղեան մեծ հարոյց օսմանեան բանակին: Քանզի Ռուսք զառաջինն կեղծեալ զփախուստ և զտկարութիւն զօրաց՝ ձգեցին զՕսմանեանս զհետ իւրեանց մինչև յայնկոյս Դանուբայ, և յամենայն կողմանց պաշարեալ զնոսին՝ զբազումս կոտորեցին, և զմնացեալսն

յանել արգելանի փակեցին ։ Յայն-
ժամ աղաչեաց վէզիրն դուլ առնել
զինուց. և սկսան բանագնաց լինել երկ-
ուստեք յաղագս հաշտութեանն 'ի
Պուքրէշ։ Յորժամ ոչ զիջանէին Ռուսք
'ի պահանջմանց իւրեանց, այս ինքն է
զի մնասցեն 'ի ձեռս իւրեանց Վլաքք
և Մոլտաւիա, և երկիրն Սերվեաց ազատ
լիցի և ինքնիշխան, Օսմանեանք ևս ոչ
տանէին յանձն զհաշտութեանն պայ-
մանս. և վճռեցաւ իսկ յատենի աւագա-
նւոյն 'ի Կոստանդնուպօլիս՝ դարձեալ
վերստին զօրաժողով լինել ընդ ծով և
ընդ ցամաք։ Այլ քանզի ահագնագոյն
պատերազմ եհաս 'ի վերայ Ռուսաց յե-
րեսաց Նափոլէոնի Պօնափարթեայ,
և հարկ էր ակամայ կամօք 'ի ներքս անդ-
աշխարհին ամփոփել զոյժ զօրութեան
իւրեանց, կոմսն Իթալինսքի փոխեաց
յանկարծ զբարբառ իւր 'ի ժողովն
պատգամաւորացն 'ի Պուքրէշ յամին
1812, և 'ի բաց կացեալ յառաջնոց
անտի պահանջմանց իւրոց՝ շատ համա-
րեցաւ զի 'ի ձեռս Ռուսաց մնասցէ այն
մասն միայն երկրին որ յայնկոյս Փրութ
գետոյ կայ. և վէզիրն հաւանեցաւ ան-
դէն 'ի հաշտութիւն խաղաղութեան ։

Մահմուտ արքայ բնաւ իսկ դժկա-
մակ էր ընդ հաշտութիւնն և ընդ պայ-
մանս նորին. վասն որոյ թէպէտ և առ
ժամայն զիջաւ հաստատել զնոյն,
սակայն ընկեցիկ արարեալ զԱհմէտ

փաշա յիշխանութենէն աքսորեաց 'ի Պրուսա. և ամբարձ փոխանակ նորին զխուրշիտ Ահմէտ փաշա որ կուսակալ էրն 'ի Նիշ: Աքսորեցան ապա և գործակալք հաշտութեանն Ղալիպ էֆէնտի և Խալլահիմ աղա, և Թարգմանն արքունի Տիմիթրաշքօ Մուրուզ յօշատեցաւ 'ի հրամանէն արքունի՝ Հալէթի թելադրութեամբն. և եղբայր նորին Փանայոթ գլխատարու եղև 'ի Կոստանդնուպօլիս:

Ի մեկնել ապա Ռուսաց շատ տագնապաւ 'ի Մոլտաւիոյ և յաշխարհէն Վլահաց, Օսմանեանք կալան անդրէն զբերդորայն, յորոց զոմանս քանդեալ էին Ռուսք. և Սերվացիք անօգնական մնացեալք հպատակեցին դարձեալ Օսմանեանց, և առաջնորդ նոցա Չէռնի Ճօռկի խոյս ետ 'ի Ռուսս, որպէս և այլք ոմանք յիշխանացն Մոլտաւիոյ և Վլահաց:

Ի նոյն աւուրս եհաս 'ի Կոստանդնուպօլիս դեսպան 'ի Նափոլէոնէ զօրավարն Անտրէոսի, և մեծապէս պատուաւորեալ յարքայէ՝ հաստատեաց զդաշինս բարեկամութեանն որ էին 'ի մէջ ընդ Օսմանեանս և ընդ Գաղղիացիս:

Յայնմ ամի կոտորած մեծ գործեաց ժանտն 'ի Կոստանդնուպօլիս և 'ի Զմիւռնիա և 'ի Թեսաղոնիկ, և մեռան ոգիք աւելի քան զյիսուն հազար. և ան֊

հնարին սաստկութիւն ձմերայնոյ տարւոյն հագիւ կարծեաց զահագին կոտորածն. Թէպէտ և ոչ սակաւ նախճիրս գործեաց և 'ի բանակէ վեզիրին որ դառնայր գայր 'ի Շումնայէ յԱնդրիանուպօլիս: Ոչ ինչ յերկարեաց և խնդութիւնն արքային և ամենայն ժողովրդեան ընդ ծնունդ երկոցուն որդւոց Ապտիւլ Համիտայ և Պայէզիտայ, որ և մեռան 'ի մատաղ հասակի. այլ սակայն ոչ անագանեցին երկինք պարգևել նմին և այլ ևս որդիս 'ի սփոփանս հասարակաց:

Անդորրացեալ այնուհետև արքային Մահմուտայ յերեսաց պատերազմին Ռուսաց, մինչդեռ Մէհէմմէտ Ալի փաշա վաներ յարևելս աշխարհին զՎէհապէմէնս և զՎահապիս, ինքն փոյթ յանձին կալաւ նուաճել զոմանս 'ի կուսակալաց եւրոպականացն զապստամբեալս յիւրմէ. զոր և վճարեաց ամենայն յաջողութեամբ. և էին ընդդիմացեալքն Մօլլա փաշա Վիտինու, և Հաֆըզ Ալի փաշա Նիկոպօլսոյ՝ որդի Փազուանտ օղլու բռնակալին:

Ի վերջ կոյս այնր ամի գերեդարձ եղեալ Օսմանեանցն գերելոց 'ի Ռուսաց, փէհլիվան փաշա անցեալ եկն ընդ Ռուսճուք, և հասեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ մեծարեցաւ յարքայէ կուսակալութեան պաշտամամբ: Կայր աւ Ռուսս Րամիզ փաշա. զոր յաղթէ

խանից դիտելով արքայի, և կասկած վտանգի համարեալ զկալն նորա անդէն, երդումն ուխտի յղեալ առ նա հաւանեցոյց դառնալ գալ այսրէն. և գաղտ հրաման առաքեալ առ իշխանն Վլահաց՝ ետ գլխատել զնա 'ի հասանել նորա յիւր աշխարհն. և բերաւ կառափն նորա 'ի Կոստանդնուպօլիս:

Յամին 1813 բազում խնամով միեզ վէզիրն նկուն առնել զՍերվացիս, և Րէճէպ փաշա կուսակալն Վիտինոյ յամիս երիս կալաւ զամենայն զամուր ամուր տեղիս նոցա, նա և զՊէլկրատ, և զընդդիմակացն 'ի սուր սուսերի կոտորեաց: Եւ Ձէռնի Եօռկի դարձ արարեալ 'ի նոյն ժամանակս 'ի հայրենիսն իւր՝ ձերբակալ եղև յանկարծ յիշխանէն Սերվաց՝ որ էր Միլոշ Օպրէնովիչ, և չարաչար մահուամբ ելոյծ զվրէժ ապերախտութեանց իւրոց՝ որովք եղբայրասպան և հայրասպան ևս եղեալ էր: Առաւել ևս Ճգանց և ժամանակի պէտք եղեն առ 'ի նուաճելոյ զիշխանն Թէքքէի և Ատալիոյ. յորոյ վերայ առաքեալ ծովակալն Խարով Մէհէմմէտ փաշա՝ բազմօք աշխատ եղև, և նեղեալ զԱտալիա պաշարմամբ և սովու զամ մի՝ էառ զայն, և զապստամբ իշխանն ձերբակալ արար և գլխատեաց:

'Նոյնօրինակ յաջողութեամբ ցածոյց և Չափանզադէ Ճէլալէտտին փաշա

զըմբոստութիւն ենիչերեացն Բերլիոյ. և զգլխաւորս նոցին ընդ սուր անցուցեալ խաղաղացոյց զաշխարհն ։

Յետ այնորիկ յամին 1814 յորում Գաղղիացիք 'ի պարտութիւն մատնեցան 'ի Գերմանիա, և մեկնեալ 'ի բաց գնացին 'ի Յոնիական կղզեաց. Անգղիացիք առին զկղզին ընդ հովանաւորութը իւրեանց ըստ պայմանի դաշնակից պետութեանցն Եւրոպայ. և Մահմուտ արքայ ոչ ինչ հակառակեցաւ նոցա, այլ մանաւանդ ուշ 'ի կուրծս արարեալ հնարէր բարեկարգել զներքին անդորրութիւն աշխարհին իւրոյ ։ Գիտակ իսկ էր կարեւոր պիտոյից բարեկիրթ զինուորութեան, այլ քաջ 'ի միտ առնէր և զաղէտս հօրեղբօրորդւոյն իւրոյ Սէլիմայ. սմին իրի շատ գիտաց առ ժամայն զհնարաւորն կատարել ։ Հրովարտակ արար յամսեանն յուլիսի առ զօրագլուխս ամենայն զօրաց աշխարհին՝ որս յիսուն զատուցանել ընտրանաւ յամենայն գնդից, որ յամենայն ժամ կայցեն և պատրաստ լինիցին նոքա 'ի մարտ պատերազմի. և խոստանայր յաւելուած եւս տալ 'ի ռոճիկս զօրականացն այնոցիկ և զօրագլխաց նոցա ։ Բազում խնդութեամբ ընկալան ենիչերիք զհրամանն, և բազումք ինքնակամ գրեցան 'ի ցուցակին. և յոյս մեծ էր այսպէս առ փոքր փոքր քաղցրացուցանել նոցա զեւրոպական մարզիցն զխստութիւն ։

Զանգորր խաղաղութիւնն որ տիրեաց այնուհետեւ 'ի Թագաւորեալ քաղաքին՝ չէր ինչ որ խռովէր, բայց կոտորած ժանտախտին որ զերիս ամս ամ զամի զկնի անթիւ մահուանս գործեաց ընդ ամենայն խակ աշխարհն : Ոչ ինչ նուազ յոգիս արար ապստամբ զընակիչս Կոստանդնուպօլսոյ և յաճախութիւն հրկիզութեանց. քանզի յերկոսին յամսն եւեթ 'ի 1816 և 'ի 1817 հարիւրիւ չափ հրդեհք հաշուին պատահեալք 'ի քաղաքին և յարուարձանեայսն և 'ի գիւղօրէս :

Ի միում 'ի հրդեհից անտի վէզիրն մեծ Ռաուֆ Մէհէմմէտ փաշա և ծովակալն ինքնին եկին և կացին 'ի տանիս ուրեք որ մերձ էր 'ի բուն տեղի հրդեհին. և ահա ձեղունն գոգ աւեալ տեղի ետ ընդ ոտիւք նոցա, և հասեցան 'ի վայր, այլ վնասեցան և ոչ ինչ: Յայլում նուագի հրդեհեցաւ ապարանք Թագաւորին որ 'ի Պէշիքթաշ. և զի անդ էր կանանին ալքային՝ երկամեայ դուստր նորին դայեկաւն հանդերձ ձարակ եղև անողորմ բոցոյն: Դարձեալ և յայլ նուագ հրդեհեալ կիզան ապարանք դեսպանին Շուեդաց :

Յայնժամ սաստիկ պատուիրանս արդել վէզիրն մի ումեք շրջել գիշերայն ընդ քաղաքն և արտաքոյ անլոյս. և ոմանք 'ի զօրագլխաց ենիչէրեաց յաքսորս առաքեցան, և բազումք եւ յան-

հանգարտ զօրականէն 'ի մահ մատնե-
ցան, քանզի յայտնապէս խմն նոքա
էին պատճառք յաճախելոյ հրկիզու-
թեանց ։ Սակայն և յայլս յաւագորե-
րոյն տեղ տեղ փոփոխութիւնք գոր-
ծեցան յամեն յայնմանկ, զորոց չէ տե-
ղւոյս յերկարել ։ Այսր ամենայնի
սկզբնապատճառ և արարող Հալէթ
էֆէնտի. որ որքան զոր հզօրացեալ մե-
ծացեալ էր, և կարգեալ խել յարքայէ
Տեսուչ տէրութեան. յորմէ զարհու-
րեալ և Նշանջը Խաբաճա խլնան Վա-
հաց, թէ գուցէ յաւուր միում և
զնա ինքն կորուսանիցէ, գաղտագնաց
եղև զայսու աւուրբք և զերծաւ առ
Գերմանացին ։ Այլ Հալէթ համար-
ձակեցաւ և կարօղ եղև կարգել 'ի տե-
ղի փախստէին զխեսայացեալն նորա
զՄխիթար Սուզզօ, զհաւատարիմ դրան
նորա, որ առանձինն սիրելի իւր ե-
ղեալ էր ։

Յամին 1818 հրաման եղև յարքայէ
առ կուսակալն Նանեայի որ էր Տեփե-
տելէնլի Ալի փաշա՝ երթալ և առնուլ
զծովեզերեայ տեղիս ինչ Նուխաօի և
Դաղմատիոյ, որք յառաջ ժամանակաւ
'ի ձեռս Վենետիկեցւոց էին, և յամին
1815 դաշնակից սէրութեամբ Եւրո-
պայ 'ի ժողովին իւրեանց որ 'ի Վիեննա՝
աւանդեալ էին առ 'ի ձեռս Օսմա-
նեանց, և փոխանակ նոցին զնօթն կղզիս
Յոնիական ծովուն արկանել ընդ ձե-

ուամբ Անգղիացւոց. այլ բնակիչք Փարկա քաղաքի գլուխ ամբարձեալ. (քանզի և անուն իւրեանց ոչ էր ընդ յիշատակեալսն 'ի ժողովն անդ Թագաւորաց,) ոչ կամեցան մնանել ընդ իշխանութեամբ Օսմանեանց. և 'ի խաղալ 'ի վերայ նոցա Ալի փաշայի՝ նոքա այրեցին 'ի խարուկի զոսկերս նախնեաց իւրեանց, և ապա մտեալ 'ի նաւս և 'ի նաւակս մեկնեցան 'ի Կորկիւրա, որ է Քորֆու յամին 1819 ։

Զհետ երկուց ամաց ընկալաւ զարժանին պատուհաս իւրոյ անլուր անօրէնութեանց և այս Ալի փաշա Եանեայի ։ Սա էր 'ի Տէփէտէլէն աւանէ երկրին Առնաւուտստանայ, աւան Ճոխի՝ այլ աննշանի որդի. և բնածին անզգամութիւն նորա աճեալ և աճեցեալ որ քան զօր օրինակաւ աւազակապետոյ հօրն, և լրբենի և անագորոյն մօր Խամքօ կոչեցելոյ, հասուցին զնա 'ի ծայր չարութեան, և սկսաւ յելուզակել ընդ երկիրսն 'ի գլուխ աւժիկայից ամաց ։ Զօրովք նորա ձերբակալ եղեն միանգամ և երկիցս, այլ նա զերծաւ հնարիւք. և փեսայացաւ եա Գափլան փաշայի Տէլվինէ քաղաքի. և յետ սակաւուց ամբաստանեալ զաներն իւր իբրև զմասնակից իւրոյ ապստամբութեանն՝ ետ խողխողել զնա, և զինչսն առնուլ յարքունիս ։ Կարծիք 'ի մէջ էին Ալեայ՝ եթէ ինքն կարգեցի յարքայէ ժառանգ իշխանու-

թեան և ընչիցն Գափլանայ. և իբրև ետես թէ խորեցաւ ՚ի յուսոյն՝ գոռոզացաւ ընդդէմ պետութեան, և նախ դիմեալ ՚ի Տէփէտէլէն՝ ՚ի սուր սուսերի կոտորեաց զամենայն զգլխաւորս անդւոյն, և զարարս նոցին յափշտակեաց. ապա անկեալ ՚ի վերայ Քոզմոզօ աւանի, յորոյ ՚ի բնակչացն ոմն նախատինս արարեալ էր մօրն իւրում Խամքոյի, կալաւ զայրն և շամփրեալ խորովեաց ՚ի վերայ մեղմ կայծականց. և զայս քաղաքին առ հասարակ կոտորեաց՝ զկանայս և զմանկունս վաճառեաց ՚ի գերութիւն. զնոյն արար և ընդ բնակիչս Սուլու քաղաքի, և ընդ այլ աւանս և գիւղս, և փարթամացաւ և մեծացաւ յոյժ յոյժ. և բերդ ամուր կառուցեալ ՚ի Եանինա քաղաքի՝ անդր կուտեաց զամենայն զմեծութիւնս իւր: Ապա դեսպանս առաքեաց և առ Նափոլէոն Պոնափառթէ յամին 1812, և առ Անգղիացւոցն պետութիւն, յորոց և հրաւէրս բազումս ընկալաւ ընդ արծաթոյ: Վաղու ևս խէթ էր այնր անագորոյն՝ աչաց և սրտի մեծի դրանն. սակայն հանդարտեաց արքայ, և յամեցոյց զպատիժ պատուհասի եղեռնագործին այլ ևս ամս քանի մի:

Այս ամ 1819 նշանաւոր եղև աղետալի անցիւք ատենն Տիւզեանց գործակալաց արքունի փողերանոցին և ոսկերչաց արքայի. նենգ և ապաշնորհ

դաւաճանութիւն միաբանեցին նիւ-
թել զկործանումն նորա, որ անդրքան
զպարագայս ամաց հարիւրոց կացեալ
անվկանդ յերեսաց բիւրուց վտանգից՝
անցեալ էր ընդ յեղափոխութիւնս միա-
հեծան Թագաւորութեան՝ յորում ան-
պակաս էին անձողոպրելի ոտնխութիւնք:
Ցեցեալ 'ի մեծ անուն և 'ի համբաւ բա-
րի և 'ի շնորհս զոր ունէր առաջի ժո-
ղովրդեանն, անսասան կայր յարկածից
թշնամեաց՝ յորոց ցանդ պաշարեալն
էր, որոց և ամին իրի խել զայս նուագ զա-
մենայն փոյթ 'ի մէջ առեալ էր Թագու-
ցանել զմեքենայեալ դաւն իւրեանց:
Սակայն և այնպէս դժուարին էր գործն.
զի արքայ սիրէր զՏիւզեանս և ճանաչէր
զարդար վաստակս նոցա վկայեալ 'ի
նախնեաց անտի իւրոց, և զմիամտու-
թիւն նոցա առ ինքեան. և դեռ այն
ինչ 'ի մօտ աւուրս 'ի նշան մեծարանաց
զգեցուցեալ էր Գրիգորի Տիւզեան զամ-
մոյրն պատուոյ: Արդ հարկ էր ոչ
միայն ցուցանել արքայի զանհաւատար-
մութիւն նոցա, այլ և չթողացուցանել
նմա ինքնին 'ի քննին մատչել քաւու-
թեանցն. ապա թէ ոչ՝ նոցին չարախօ-
սաց անշուշտ առաջի կայր կորուստ:
Սովին խորհրդովք որսացան զՊէրպէր-
պաշի, այր հզօր առաջի արքայի. և թէ-
պէտ բարեկամ Տիւզեանց, այլ անհան-
դարտ բարուք. դիւրաւ ձեռներէց և փու-
թով սորջացօղ, և ոչ խել բաւական 'ի

տեսանել զբուն պատճառս գաղտնորո-
գայթ քսութեանցն ։ Զամենայն զոր
միանգամ լուաւ՝ չընջեաց գաղտ յունկն
արքայի ․ որ քանզի բերանոյ Հալէթի
անսայր, որպէս յայտ է, 'ի նա ապա-
տան առար զքննութիւն իրացն ։ Հա-
լէթ՝ որ 'ի դաւակցացն էր և մնայր
այսմ հրամանի, հաստատեալ զամենայն
զլուեալսն արքայի, զգուշացոյց չասել
ինչ կարծիս Տիւզեանց ․ ապա թէ ոչ ․
ոչ միայն զգանձն որ 'ի նոցա ձեռս է
կորուսանեմք, զոր և 'ի պատրաստի իսկ
կան՝ ասէ՝ առնուլ գաղթել յԵւրոպ․
այլ և այնչափ սիրելի են Ենիչէրեաց
և զօրաւորք, մինչև կարող լինելոյ յա-
րուցանել զնոսա և փոխել զտէրութիւն։
Առելի անուն Ենիչէրեաց, և միաբա-
նութիւն իւրոց մտերմացն ընդ նոսա
ընդ ոխերիմ թշնամիս իւր, ինքնին 'ի
բարկութիւն մեծ բրդէր զարքայ երդ-
նուլ զկորուստ նոցին ․ սակայն խրատ
տայր Հալէթ ծածկել առժամն զխորա-
մտութիւն իւր և դարձուցանել զմիտս
նոցա 'ի կարծեացն կասկածանաց ․ զոր
ոչ յապաղեաց առնել արքայ, ցուցա-
նելով առ նոսա սէր բազում եւս և ա-
ւելորդ ինչ յառաջ քան զյանկարծակի
բանտարգելութիւն նոցա ․ որ նախ 'ի
փողերանոցի եղան 'ի դիպահոջ, և
ապա 'ի զնդան պատժաւորաց արգե-
լեալ՝ ամենայն ինչք նոցա առան յար-
քունիս, կանայք և մանկունք նոցա բան-

տեցան 'ի պատրիարգարանն Հայոց 'ի բազում վիշտս տառապանաց անպատեհս չնորհապարտութեան ազգին առ մեծամեծ երախտիս տանն Տփեղեան: Դեռ են անցեալ իբրս և աշխարհածանօթ, ուսումն և անկարօտ մանրապատում առնելոյ, նա և համառօտութեանս ոչ 'ի դէպ: Երէքին եղբարք և մի հօրեղբօրորդի 'ի մահ դատացան 'ի 15 հոկտեմբերի. միւս եղբարքն և ամենայն ազգականք և գործաւորք անդամ փողերանոցին աքսորեցան յայլեւայլ կողմանս Ասիոյ և 'ի կղզիս Յունաց: —Անկումն ազգատոհմիս հնչեաց ոչ միայն յօսմանեան տէրութեան, այլ և ընդ ամենայն Եւրոպա: Ընդ բանաւ նորա և ամենայն գործք աշխարհին կալայան. վաճառականութիւն և ճարտարութիւնք արուեստից լուծան անկան անյայտ: Արքայ ինքնին փոյթ տարջացաւ ընդ կորուստն և խոստովանեա եղև մեծանձնութեանն, որպէս ասեն. և բազում մարդասէր խնամքն և պատիւ մեծարանաց՝ յոր բարձրացոյց ապա զմնացորդս տանն առաւել քան զառաջինն, արդարացուցանեն զհամբաւդ զայդ: Ըստ հասարակաց կարծեաց և նոցին իսկ Տաճկաց ասելոյ, պահանջ էր տէրութեանն այս ազգատոհմ. և զհետ անկման նորա եկին անբաւ աղէտք տարակուսի. պատերազմ ընդ Ալի փաշա Եանեայի, ապստամ_

բութեան Յունաց և ազատութեան, խորտակումն նուաստիմին 'ի Դաւարին, ձախողակ պատերազմն ընդ Ռուսս, կորուստ Ճեզայիրայ, հալածումն ուղղափառ Հայոց, պատերազմ ընդդէմ Մեհեմմէտ Ալի կուսակալին Եգիպտոսի, դաշնադրութիւնն 'ի Հիւնքեար իսկելեսի, պարտութիւն Նեզիպայ, վատրանջութիւն ծովակալին և մատնութիւն նաւահանգիստին, և հուսկ ապա մահ արքային Մահմուտայ. այս ամենայն անցք նշանաւորք անհետ 'ի վերայ եկեալք չետուն և ոչ փոքրիկ մի ոգի առնուլ օսմանեան տէրութեանն, որպէս անցցի յառաջիկայդ։

Մինչդեռ 'ի Կոստանդնուպօլիս փոփոխութիւնք աւագանւոյն գործէին, Ալի փաշա յայտնապէս ապստամբեաց յարքայէ. և հրաման առեալ դնել 'ի Թագաւորական քաղաքն և պատասխանի առնել վասն անձին իւրոյ՝ ըմբոստացաւ ամենևին. վասն որոյ և արքայ հրաման ետ զօրաժողով լինել մեծաւ պատրաստութեամբ 'ի վերայ առնն։ Գիտաց Ալի փաշա եթէ տագնապ է նմա յերեսաց բուռն զօրութեան նորոյ բանակին, թէպէտ և ինքն հզօր էր զօրութեամբ և փարթամութեամբ և համբարով պատերազմի. և զի կանխածանօթ էր խլրտելոյ տակաւին Յունաց յապստամբութիւն ընդդէմ դրանն մեծի, ձայն ետ նոցա յայտ-

նաղէս 'ի վատարանջութիւն, և պատգամաւորս ախտեալ ընդ ամենայն Յունաստան և 'ի Վլաչս և 'ի Մոլտաւիա, զարթոյց զոգիս ամենեցուն 'ի ձայն ազատութեան: Հրապուրեալք 'ի սէր արծաթոյ և 'ի ցանկութիւն աւարառութեան՝ եկին ժողովեցան ընդ դրօշիւք Ալի փաշային գունդք գունդք որիկայից և աւազակաբարոյ մարդկան: Էին նորա որդիք երեք, Մուխդար, Վէլի և Սալիհ. և Մուխդար իշխան էր 'ի Պէրաթ, Վէլի 'ի Փրեվեզա, և Սալիհ յԻնէպախթի: Արդ Ալի փաշա առաքեաց առ նոսա խրատս և օգնութիւն բազում. սակայն նոքա վաղ խորտակեցան առաջի զօրացն Օսմանեանց և քան. և ինքն ևս մնացեալ 'ի պաշարելոյ զօրուն արքունի՝ որ էին Փէհլիվան փաշա և Խամայիլ փաշա, խոյս ետ յամրոցն իւր արամբք եօթն կամ ութհարիւրովք և երկերիւր թնդանօթովք, և որմեալ զդուրս ամրոցին՝ պատրաստեցաւ մղել ընդդէմ զօրացն արքունի մինչև 'ի մահ: Եւ արդարև չկարացին սոքա ազդել ինչ ամրականացն զամիս բազումս, մինչև եկին փոխանակ Փէհլիվանին Խուրշիտ փաշա. սակայն և նա ոչ ինչ յաջողութեան պատահեալ. իբրև ետես և զբազմութիւն դասալք փախստէից իւրոյ բանակին, մեկնեցաւ յԱրթա, և անդ սպասէր հասանելոյ ձեռնտուութեան բազմաձեռն գնդաց:

Զայն պատեհ կալեալ Ալի փաշա՝ միաբանեաց ընդ իւր արս մեծաշաղոր 'ի քաջամարտիկ բնակչաց Սուլու քաղաքի. և յաւել ևս յաճախել զաղմուկն 'ի վերայ զօրացն արքունի գրգիռ տալով անդադար ազգին Յունաց :

Յայնժամ սկսան իշխանք Մոլդաւիոյ և Վլախաց. Ալեքսանդր Իփսիլանթի, Միխայլ Սուցցօ և Թէոդոր Վլատիմիրեսքօ յորդորել զՅոյնս յապստամբութիւն. և յամսեանն մարտի յամին 1821 յառն կացին յանկարծակի և գլուխ ամբարձին ընդդէմ Օսմանեանց բազում գաւառք Պելոպոննիսեայ. և ոմանք 'ի կղզեաց անտի աշխարհին հանդերձեցին կազմեցին անդէն տորմիղ նաւաց հարիւր և ութսնից: Սոցա հինաբար ասպատակեալ 'ի Միջերկրական ծովուն՝ կալան և զնաւ մի զՕսմանեանց, յորում էր մի ոմն յառաջնորդաց Մէքքէի հանդերձ կանանօք իւրովք. զի դայր 'ի Կոստանդնուպօլիս. խողխողեցին զնա և զկանայս նորա, և զնաւավարն 'ի գերութեան վարեցին :

Իբրև ազդ եղև այս ամենայն յականջս Մահմուտայ արքայի՝ յառաջ քան զամենայն փոխեաց զվեզիրն մեծ, և կարգեաց 'ի տեղի նորա զՊէնտէրլի Ալի փաշա: Սա քանզի յԱսիա էր յայնժամ, անագան ուրեմն ժամանեաց 'ի Կոստանդնուպօլիս 'ի 21 աւուր ամսեանն ապրիլի :

Այլ. քանզի գլուխ ապստամբութեան Յունաց 'ի Վլահաց մարզէն կայր ամբարձեալ Միխայլ Սուցցօ 'ի Հալէթէ կարգեալն, առ 'ի չքմեղս անձին կամեցեալ Հալէթի ազգովին մեղապարտ զՅոյնս ցուցանել և արգեամբք իսկ զայրացուցանել զգլխաւորս և գրգռել 'ի միաբան միախումբ վտարանջութիւն, զամենայն հնարս հնարեցաւ 'ի գրանն, և յականման կամս վեզիրին այն ինչ հասելոյ՝ 'ի վաղիւ անդր որ օր առն էր զատկին ետ հանել 'ի կախաղան զպատրիարգն Յունաց զԳրիգորիոս որպէս զհամախոհ և զկամակից ապստամբելոցն հելլենացւոց, թէպէտ և նորա ամսօրեայ ժամանակաւ յառաջագոյն նզովս բանադրանաց արձակեալ էր ընդդէմ ապստամբիցն. ընդ նմին կախեցին և զմետրապօլիտն Եփեսոսի, և այլ երկուս եպիսկոպոսս. և ոչ սակաւք յերևելեաց ազգին Յունաց սպանան, որպէս և մետրապօլիտն Ադրիանուպօլսոյ Կիւրեղ. և ոչ էր չափ արիւնհեղութեանց և ամենայն ազգի աւերածոց՝ որ գործեցան յայնժամ 'ի Թրակիա, 'ի Մակեդոնիա և 'ի փոքրն Ասիա: փոխեցաւ յետ տասն աւուրց և վեզիրն, և կարգեցաւ Փէփէյի Սալիհ փաշա. իսկ Գէնճէրլին աքսորեալ 'ի Կիպրոս և անդ գլխատեցաւ. և պատճառք այսպիսի յանկարծ 'ի մահ յափշտակելոյ նորա 'ի տանօրեայ պաշտամանէն, թշնամա-

նալ նորին ընդ Հալէթ էֆէնտի, ընդ որում դժկամակն էր 'ի սկզբանէ և խորշէր բառնալ զգլուխ նորա։

Դեսպանն Ռուսաց Սթրոկոնով թէ-պէտ և չկամէր համարձակ պաշտպան կալ փառանջութեան Հելլենացւոց, սակայն պարտ անձին վարկաւ բողոք ունել 'ի դուռն արքունի՝ զի մի վայրապար խոշտանգեսցին Յոյնք, այլ քաջ քննեսցին նախ և ապա դատեսցին որպէս պարտն է։ Ընդ այս դժկամակեալ Մեծի դրանն՝ ետ պատասխանի դեսպանին եթէ իշխան է ապաքէն թագաւորս մեր պատուհասակոծ առնել զչըպաստս իւր որպէս և զիարդ հաճոյ իցէ նմա. այլ Սթրոկոնով և ևս զայրագնեալ՝ ել ստանալեօք յապարանից իւրոց որ 'ի Պէյօղլու, և մեկնեցաւ իւրովքն հանդերձ 'ի Պիւյիւքտէրէ։

Յամսեանն մայիսի մնացին Օսմանեանք 'ի Մոլտաւիա և 'ի Վլախիա, և հարին խորտակեցին 'ի զանազան տեղիս զզօր ապստամբաց. զի և զօրավարք նոցա չէին ինչ միաբանք ընդ իրեարս։ Նշանաւորքն 'ի սոսա Տիմիթրի Իփսիլանթի, Կանտակուզենոս, Գէորգաքոթրոնի, Սաւո Միխալի, Մաւրոքորտաթօ և այլք ոմանք զօրացան արդարև 'ի տեղիս տեղիս, 'ի Հիդրա՝ որ է Զամըրճա, 'ի Նէապօլիս, 'ի Մալվազիա, 'ի Նաւարին, 'ի Թերմոպիլէ, և 'ի Թրիփոլիցա. սակայն և յոլով ուրեք ընդ ծով և ընդ

ցամաք զեան բազում կղզեցին Հելլենք, և անհամար անմեղ մարդիկ կոտորեցան 'ի Կիպրոս, 'ի Զմիւռնիա և 'ի Թեսաղոնիկէ ։

Խափանեցաւ առ դոյզն ինչ ժամանակ բուռն սաստկութիւն օսմանեան բանակին 'ի մերել անդ Պարսից յամսեանն նոյեմբերի 'ի սահմանս իւրեանց մինչև յառնուլ և զԿարս և զԹոփրագգալէ ․ սակայն 'ի մեռանել այլայորդւոյն Պարսից՝ որ կոչէր Մէհէմմէտ Ալի միրզա՝ 'ի քոլերա ախտէն, մեկնեցան զօրք նորա անդրէն յաշխարհն իւրեանց ։

Խուրշիտ փաշա մեծապէս նեղէր յայնժամ զՅանեացին Ալի փաշա՝ պատել պաշարեալ զնա յամրոցի նորուն որ 'ի ծովակի ուրեք ․ և յետ երից ամսոց յաջողեցաւ նմա խրամատել և խորտակել զկողմանս ինչ ամրոցին անդադար հրձգութեամբ և ականահատութեամբ ։ Յայնժամ զօրականք Ալի փաշային յոգիս ապստամբ եղեալ ախոյեան զնա անձնատուր լինել ․ և Ալի փաշա յայնժամ հեթ յանձին կալաւ ունկն մատուցանել բանին Խուրշիտայ ։ Նա յորդորել զնա Խուրշիտայ յուսադիր բանիւք քաղաքաւորութեան և սիրոյ ․ Ալի փաշա աւանդեալ 'ի ձեռս նորա զամուրն և ինքն մեկնեցաւ 'ի կղզեակ ինչ մօտաւոր, և անդ սպասել մինչ թողութիւն ընդունել յարքայէ որպէս

խոստանայրն Խուրշիտ։ Անցին աւուրք երեք, և ահա եկն եհաս յարքայէ դատակնիք մահու նորա։ Զայն իբրև ետես դաւաճն Ալի՝ բուռն եհար անդէն 'ի հրացանս իւր և գոչեաց զայրագին. «Արք վաշտուէք, մի՞թէ այդչափ կնամարդի՞ք որք համարիցիք դուք զԱլի»։ զայս ասացեալ հուր հարկանէ, և զմին 'ի սպայից անտի տապաստ արկեալ և զմիւսն կարեվէր խոցեալ՝ անկանի ապա և ինքն 'ի տեղւոջ 'ի վերայ նորա կապարեայ գնդակաց, 'ի հինգերորդի աւուր ամսեանն փետրուարի յամի 1822։

Յայնմհետէ առաւելագոյն ևս պարապով միտ եդ Մահմուտ արքայ 'ի նուաճել զՅոյնս։ Յամսեանն ապրիլի առին Օսմանեանք զՔիոս կղզի, որ է Սագըզ, և 'ի հարիւր հազար բնակչաց նորին քսան հազարք ևեթ մնացեալ, այլք մաշեցան 'ի հուր և 'ի սուր և 'ի գերութիւն անդարձ։ Խուրշիտ փաշա գլխեաց քսան հազարաւ 'ի Սուլու, Տրամա Ալի փաշա 'ի Մոռա երեսուն հազարաւ, և նաւատորմն Օսմանեանց 'ի Սամոս և յԻփսարա և 'ի ծովափնեայս Մոռայի։ Սակաւ ուրեք հարին զսոսա Մաւրոկորդաթօ և Ոդիսևս և Քոլոքոթրոնի զօրավարք Յունաց, և յոլովագոյն հարան 'ի սոցանէ. սակայն Խուրշիտ փաշա փոխանակ զի վանեցաւ առաջի Ոդիսեայ՝ ընկեցաւ յիշխանութէ իւրմէ, և յետ աւուրց ինչ մեռաւ ևս ա

վշտին և տու բազում աշխատութեան. և կալաւ զպատրաստականութիւնն ութսամենին ձէլալ փաշա, որ և նա մեռաւ զկնի երկուց ամաց։ Ի Կրետէ անպարտելի իմն էր մարտն և խռովութիւնք յերկաքանչիւր կողմանց, Թէպէտ և Օսմանեանք բազմաթիւ էին անդանօր, և օժանդակեալք եւ 'ի զօրաց կուսակալին Եգիպտոսի։ Իսկ 'ի ծովու յաջողութի 'ի դէպ եկեալ Յունաց՝ նաւապետք նոցին Միոլիս կամ Մնիաուլիս և Քանարիս բախեցան ընդ նաւատորմին Օսմանեանց, որում առաջնորդէր ծովակալն Գարա Մէհէմմէտ փաշա, հրրդեհեցին զնաւս ծովակալին և զայլոց ցիր և ցան կացուցին։

Լուր այսոցիկ ամենայնի պէսպէս հնչեալ 'ի Թագաւորեալ քաղաքն, ոչ սակաւ ամբոխեաց զբնակիչս նորին, և մանաւանդ զենիչէրիս՝ որ փոքր միա եւս և յուզէին ալմուկ անհնարին ընդդէմ աւագանւոյն և արքային իսկ գլխովին։ Յաւուրսն յայնոսիկ և լամայափոխ Հալէթի Խաճէլ Թիկունս և գործի իւրոցն անզգամութեանց արարեալ չնա՝ բազում չարիս մեքենայեաց 'ի վերայ քրիստոնէից, և զեան մեծ հասոյց օսմանեան պետութեան։ Եւ նոյն ինքն իսկ Հալէթ կարի իմն հետամուտ լեալ 'ի կործանել զերեկլի երևելի Յոյն Կոստանդնուպօլսոյ, որպէս կանխեցաք ասացաք, զայլոցայց և ևս զարաւքս

եղեալն, կամ գէթ այնպէս թուեցաւ յուշս յոլովից: Արդ ենիչէրիք սկսանէին վերստին ամբառնալ զձայն բողոքոյ իւրեանց զաղեալից աշխարհին եւ զանսչութենէ իւրոց պետութեանն. վասն որոյ փոփոխեցան բազումք յաւագորերոյն, զոր օրինակ վէզիրն եւ գենպեան, եւ եւս Պէրպէր պաշին. եւ ընկալաւ զկնիքն արքունական Տէլի Ապտուլլահ փաշա. որ տեղեակ գոլով ամենայն նենգագործութեանցն Հալէթի, իսկ եւ իսկ զգացոյց արքայի եւ առ հրաման աքսորել զնա յԻկոնիոն 'ի մենաստան Մէվլէվի տէրվիշաց. զի 'ի նոցանէ իսկ էր այրն. այլ եւ խեղդամահ առնել զնա անդէն. թէպէտեւ ունէր նա 'ի ձեռին յարքայէ գիր ապատութեան յամենայն պատուհասէ: Պատուհասեցաւ ընդ նմա մահու չարաւ եւ Խախէլ հրեայ, եւ յետ սակաւ ինչ Շապձի հրեայն, եւ ինչք նոցին գրաւեցան յարքունիս:

Յետ այնորիկ հրաման ետ արքայ զէն առնուլ ամենայն առն սամինջեայ 'ի հնգետասանամենից մինչեւ ցյիսնեմեանս, եւ տորմիղ մեծ կազմեալ թեթեւընթաց նաւուց՝ ետ 'ի ձեռս Խոսրով փաշայի 'ի սկզբան 1823 ամին եւ արձակեաց 'ի Յունաստան: Զօրավարք Յունաց Քոլոքոթրոնի եւ Նիքիթաս եւ Մաւրո Պոծալիս եւ այլք՝ ոչ սակաւ արիացան գոյզն գնդաւ ընդդէմ բիւրաւորացն

Օսմանեանց ընդ Ծով և ընդ ցամաք և յայսմ ևս արշաւանի. սակայն գործեալ վանեցան և ամրացան 'ի գղեակս աշխարհին, և 'ի վերջէ յամուրն Միսոլունկի, և անտի աշխատ առնէին զՕսմանեանս առ ժամանակ մի։ Էին և եկք ոմանք և օտարազգիք յԵւրոպականաց, որ բանիւք և գրամովք օժանդակէին ապստամբացն Հելլենացւոց. յորոց մի էր և համբաւեալն 'ի քերթողս այր գարու անգղիացին Լորտ Պայրն կամ Պիրօն. և սա տեսեալ զանկումն Միսոլունկեայ 'ի ձեռս Օսմանեանց 'ի մատնութենէ նոյին իսկ Հելլենացւոց՝ հիւանդացաւ հիւանդութիւն մեծ, որով և մեռաւ իսկ յետ աւուրց ինչ յապրիլի 19 յամին 1824. և սուգ մեծ առին Յոյնք 'ի վերայ նորա, զի և դրամոց և պարենից կարօտութիւն էր յոյժ յաշխարհին. և որ մեծն է՝ ցանդ ընդ իրեարս խռովեալ հակառակէին զօրավարք իւրեանց, և անդստին ելեալ զմիմեանց առնէին 'ի փոյթ իշխանասիրութեան։

Ի սկզբան 1824 ամին Տէրվիշ փաշա՝ որ կուսակալէրն 'ի Վիտին՝ կարգեցաւ Վալի կամ փոխարքայ և կուսակալ Մորայի. և Ծովակալն Խոսրով փաշա ել վերստին բազմութեամբ նաւուց 'ի Միջերկրականն։ Եհաս յԻփսարա կղզի, և բազում քաջութեամբ յորդորեալ զընակիչսն 'ի հպատակութիւն՝ իւրե

եգիտ զնաւս անսասան և ընդդիմակացս, բախեցաւ ընդ նոսա և խորտակեաց 'ի սպառ, և կառափունս հինգ հարիւր և ականջս երկերիւր տաճկաց 'ի Կոստանդնուպօլիս: Այլ այս խնդութիւն Օսմանեանց կարճեցաւ առ ժամն. զի զօրաժողովք Յունաց Միոլիս և Քանարիս առին դարձեալ զԻփսարա, և զնաւատորմն Օսմանեանց ոչ սակաւ տագնապեցուցին:

Յամենայն յուղիս եհաս յօգնութիւն ծովակալին Խոսրովայ և Իպրահիմ փաշա որդի Մեհէմմէտ Ալեայ կուսակալին Եգիպտոսի բազմութեամբ նաւուց. սակայն և նա հարաւ ուրեք ուրեք 'ի Հելլենացւոց. և ծովակալն դարձ արարեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ պատուեցաւ սամուրենեօք 'ի վեզիրէն մեծէ՝ որ էր Մեհէմմէտ Սելիմ փաշա, վասն ոչ անձնեալ ածելոյ հատուցանելոյ զնաւատորմն 'ի Կոստանդնուպօլիս:

Ի սկզբան ամին 1825 'ի վեր երևեցաւ ազմուկ ինչ ապստամբութեան յենիչէրեայն դասս. սակայն զգօնամիտ ալքայն Մահմուտ վաղ իմացեալ ըղձան՝ կալաւ 'ի նոցանէ արս յիսուն, և 'ի խոշտանգանս մատնեալ նախ՝ ապա խեղդամահ հրամայեաց առնել: Ի նմին ժամանակի և 'ի Սերվիա յուզեցաւ ինչ խռովութիւն. այլ իշխանն Միլոշ աջակցին խստութեամբ պատուհասեալ զխռովիչսն և զաղմուկն ցածու-

ցեալ՝ ընկալաւ յարդարակորով արքայէն զամէրութիւն աշխարհին Սերվայ։

Իսկ Մահմուտ արքայ ոչ ինչ վհատեալ ինու 'ի ներքին յուզմանց աստի՝ մեծապէս միտ դնէր 'ի հանդերձանս պատերազմին։ Իպրահիմ փաշա կալաւ զՆաւարին յամսեանն մայիսի, և մեծաւ զիջմամբ վարեալ ընդ բնակիչսն՝ հրաման ետ նոցա ելանել և գնալ յո՛ և կամք իցեն աղխիւքն իւրեանց հանդերձ, բայց միայն զի զկահս պատերազմի մի տարցին։ Յետ այնորիկ յերկս առաջս որոշեալ զզօրս իւր՝ արձակեաց ընդ Յունաստան. և առին նոքա զԱրկադիա և զՔալամաթա և զԹրիփոլիցա։ Նա զօրագլուխք և իշխանք Յունաց թէպէտ և 'ի բաց եդեալ զընդ միմեանս թշնամութիւն միաբանք էին 'ի վաստակս իւրեանց, սակայն 'ի բազմութենէ անտի ձախող արշաւանաց լուծան լքան 'ի զօրութենէ, և հայցեցին օգնութիւն յԱնգղիացւոց, բայց ընկալան և ոչ ինչ։ Միայն ամիրայեալքն 'ի Միսոլոնկի զդէմ կալան պաշարմանն և յարձակմանցն Օսմանեանց որոց զօրավարէր Մէհէմմէտ Ռէշիտ փաշա՝ զամիսս երիս անընդհատ, մինչև մեկնիլ նմա 'ի ձմերոց յերեսաց յորդահոսան անձրևաց աշնայնոյն։ Ընդ այս ծանրայատուածն եղեալ արքային՝ հրաման ետ Իպրահիմ փաշայի ելանել 'ի Թրիփոլիցայէ և գնալ յառումն Միսոլոնկեայ նիզակակցութի

ընչից փաշային և ծովակալին Խոսրո-վայ։ Եւ սաստկացուցեալ զօրավարացն երեցունց զպաշարումն 'ի վերայ Յու-նաց, ոչ ինչ նուազ սաստկութեամբ վանեցան 'ի նոցանէ բազում անգամ այլ ևս ամիս հինգ. սակայն ուր ուրեմն 'ի 22 աւուր ամսեանն ապրիլի յամին 1826 առին զամուրն. զի և սով ան-հնարին յոգիս ապաստան արարեալ էր զամրականսն, մինչև յանձն առնուլ նոցա ինքնին ելանել գնալ 'ի բաց. հեր-ձեալ զբազմութիւն պաշարողացն. և մնացին յամրի անդ ծերք ոմանք և կա-նայք և մանկունք։ Հազար և ութ հա-րիւր Սուլուցիք ևեթ անցեալ ընդ ան-չափ վտանգս և աշխատութիւն՝ հա-սին 'ի Սալոնա. իսկ այլք յամրականաց մեկնեալ 'ի մարտկոցն Պոծարեայ ընդ-րոտ ականն հատեալ էին՝ հուր հարին յականն և թաղեցան յաւերակս մարտ-կոցին, թէպէտ և յՕսմանեանց ևս վտանգեցան 'ի փլածին արք աւելի քան զերկու հազար։

Աւետիք առմանն Միսոլունկեաց հնչեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ ցնծու-թեամբ լցին առ հասարակ զքաղաքն։ Սակայն Մահմուտ արքայ ոչ ինչ կարի սփոփեցաւ ընդ յաղթութիւնն, զի չև ևս մեծագունին ժամանեալ էր յաղ-թութեան՝ որում 'ի հնգետասան ամաց հետէ ըղձանայր. այն իսկ էր հրահան-գել զզօրս աշխարհին խուրայ ըստ Եւրո-

պայուցոցն օրինի. յորմէ ոչ միայն երկրա_
կալուԹեանց և յաղԹուԹեանց բաղ_
մանց էր անկեալուԹիւն, այլ և մեծ
անդորրուԹեան իւրոց հպատակաց:

Եւ արդ ժամ է կարգադրել ոճով
ըստ տանելոյ մատենիս որչափ ինչ ա_
րար և կատարեաց այր արքայն Մահ_
մուտ 'ի հանդէս իւրումն անվեհեր և
մեծագործ բարոյից: Եւ առաջնորդ
հաւատարիմ կալցուք և յայսմ զարքու_
նական պատմագիրն զՇէտատ էֆէնտի:

Անյաջողել պիտանի խորհրդոյն Սե_
լիմայ արքայի 'ի նորոգուԹիւն կար_
գաց զինուորուԹեանն Օսմանեանց,
Թէպէտ և տարաժամ շտապոյ նորին
էր դրելի, սակայն և առաւել խառն_
րախ ենիչէրեացն ըմբոստուԹեան վե_
նաս էր այն. յորոց 'ի բառնալն 'ի մի_
ջոյ՝ դիւրացաւ ամենայն ինչ:

Արդ յամին 1826 խորհուրդ արա_
րեալ ընդ մեծաց ատենակալացն այր
արքայն Մահմուտ՝ հաստատեաց զա_
տուցանել 'ի դասու է անտի ենիչէրեաց
գունդ մի առանձինն, և Էշքինճի կամ
Գործօն անուն եդեալ նոցա՝ մարզել
'ի հրահանգս զինուորուԹեան: Այսպ
'ի խորհուրդ կոչեցաւ և վեզիրն Հիւ_
սէյին փաշա որ կուսակալ էր Խուտա_
վէնտիկեար և Գոճա Իլի գաւառաց,
և ունէր յայնժամ զանեսչուԹիւն բեր_
դորէիցն Վոսփորի, այր քաջահմուտ
ամենայն իրաց և բարուց ենիչէրեացն.

և նա պատասխանի տուեալ ասէ ցարքայ . « Թոյլ ինձ տէր , եթէ ոչ յանհնարից իմն լիցէ հաւանեցուցանել ըզգլխաւորս 'ի զօրապետաց և զզօրականացն գաւս 'ի հնազանդութիւն նորանոր կարգաց . այլ 'ի կրտսերագոյնս 'ի զօրագլխաց անտի բռնեալ են չարիք , այս ինքն է 'ի նոսա որ կոչին Միւթէսէլլի . Աչքի ուսթաղ , Խասէքի օթուրաղը , և որք ըստ նոցանէ արք վատք և գատարկանձունք և ընչաքաղցք . և զի ոչ կարի բազմաթիւք են սոքա , նախ առաջին հարկ 'ի վերայ կայ ըզսոսին բառնալ 'ի միջոյ » : — « Այլ իմ կամք են , ասէ արքայ , քաղցրութեամբ վճարել զիրս զայս . և թէ այն ոչ յաջողեսցէ՝ ապա 'ի խստութիւն բռնան հարկանել » :

Հարկ էր այնուհետև որսալ մի առ մի զզօրավարս ենիչէրեաց , մանաւանդ զայնոսիկ որ երևելիքն էին 'ի նոսա , որպէս բուն զօրավարն Ճէլալէտտին Մէհէմմէտ աղա , փոխանորդ նորին (գուլ քեահեասը) Հասան փաշա , երկրորդ փոխանորդ նորին (սէյմէն պաշը) Իպրահիմ աղա և այլք . և սոքա մտադիւրութեամբ յանձին կալեալ զառաջարկութիւնն՝ 'ի նոյն հաւանեցուցին և զամենայն սպասս և զօրագլուխս զօրացն , էր զոր բանիւ և էր զոր արծաթով և խոստաբանութեամբ :

Եւ 'ի պահանջել արքային՝ զի և գլ_

րով տացեն նմա զհաւանութիւն իւրեանց, ժողովեցան յապարանս դենպետոյն 'ի քսաներորդի հինգերորդի աւուր ամսեանն մայիսի վեզիրն Մէհէմմէտ Սէլիմ փաշա, դենպետն Մէհէմմէտ Դաշիր էֆէնտի, որ երբեմն դատաւորն էր եւրոպեան՝ Արիֆ պէյ էֆէնտի, բժշկապետն արքունի Մուստաֆա Պէհճէթ էֆէնտի, դատաւորն Կոստանդնուպօլսոյ Էլհաճ Սաադ էֆէնտի, համարակալն Դայեար էֆէնտի, և այլ աւագանին, և 'ի վերջէ զօրավարն ենիչէրեաց. և հաստատեցին 'ի գրի հարկանել զառաջարկութիւնն կարեւոր, և յետ երից աւուրց դարձեալ ատեան մեծ կարգել, և հաստատել զիրան :

Իսկ 'ի 28 աւուր ամսեանն մայիսի 'ի ժողովել միաբանգամ ամենայն աւագանւոյն և օրինականաց և զօրավարացն ենիչէրեաց՝ խօսել կալաւ վեզիրն և ասէ. «Անդստին 'ի ժամանակաց նախնի թագաւորաց Օսմանեան զարմի՝ պետութիւնս մեր հովանաւորեալ յերկնից, ճոխացեալ քաջամարտիկ արամբք և բազմութեամբ գանձուց՝ ահագին լինէր յաչս եօթն պետութեանց ¹ որպէս վիճակ եօթնագլուխ

¹ Սովորութեան է Օսմանեանց Նորին գըրեալ չափ եօթն պետս անուանել զամենայն Թագաւորս Եւրոպայ միանգամայն. այլ ոչ

յար բաց ունելով ընդդէմ միումիում 'ի նոցանէ զմի մի յահարկու խուրոց ըն_րանոց ։ Այլ փոխեցան ժամանակք · և զօրականքս մեր ոչ ևս փոյթ յանձին կալեալ արդ 'ի կատարումն պարտեաց խրեանց՝ առ 'ի լինելոյ արժանի խնամոց արքայից արքայիս , և 'ի մոռացօնս ևս դարձուցեալ զաստուածեղէն օրէնս , անդադար եղեն յապստամբութենէ · տկարացան անկաննոքս յառաջնոյ խ_րեանցն արութենէ , և առաջնորդեալք 'ի վատ և կամ յանհմուտ զօրավարաց՝ թիկնադարձոյցք զէնընկէցք եղեն բա_զում անգամ առաջի թշնամեաց , և ազգս մեր ողջոյն 'ի սուգ և յապաշա_նեալ ողբայ զամօթ պարտութեանց մերոց , և զկորուստ անթիւ գանձուց և ստացուածոց ։ Քանի՞ դառն է մեզ յուշ անգամ ածել զՅունացն խրս , որ մինչդեռ ստրուկքն անուանեալ՝ եղե_գունք ջախջախք էին առաջի ահագ_նասաստ ուղխից հոսանաց ամենեան պետութեանս , զդէմ կալեալ ահա մե_րոցս Զգանց , և մեզ չէ ևս յաջողեցու_չինջուցանել զհուր ապստամբութեան նոցա ։ Վկայեն գիրք պատմութեանց ազգին , եթէ զխարդ մարտիկքն մեր ա_

առնի ուրեք կայսրն Գերմանացւոց և Նըմ գըւալ պաշըն , առնի համարեցան ոմանք , որդեա և Միենինաքի , լօթն պետօք զէտյար_ընքերա Գերմանիոյ ներանձնալ ։

բազմինք նուիրէին 'ի սէր հաւատոյ զինչս և զանձինս իւրեանց . և որպէս անքակ և անյողդողդ պնդեալ խարսխէին 'ի ճակատուն տեղւոջ , և մանաւանդ հետևակազօրն արի ենիչէրեաց . այլ արդ ոչ ևս է այնպէս : Եւ ընդէ՞ր այս : Քանզի այժմ դատարկապորտք ապրդեալ մտեալ 'ի նոսա՝ խարխարեցին առ սակաւ սակաւ զհիմունս բարեկարգութեան նոցա . մատեանք ցուցակաց նոցին լցան զեղան անուամբք ենիչէրեաց , և մարտիկ որք ենիչէրի չիք որք չէք ուրեք . իսկ այրք վասք և անգործք և լուեալք օտարոտի պետութեանց լի են 'ի նոսա : Ի կերպս կերպս աղաւաղեալ մտանեն 'ի նոսա յոյն մարդիկ . և ենիչէրիքն ադէտք և զաչացուք անընտրողք ճշմարտին և սուտ տեղի տան ամենայն հրապուրանաց նոցին չարաց , և այլ ընդ այլոյ բանիւք յըմբոստութիւն և 'ի խռովութիւնս կրթին օր քան զօր , և ժահրալից բանք նոցա վաղվաղակի ճարակ գտեալ սփռին ընդ ամենայն զօրականաւն , և զքաջացն ևս ջլատեն զզօրութիւն : Իսկ պատճառք զայս օրինակ նուազելոյ զօրութեան զինուց մերոց այն է առաջին , զի հովացեալ են զօրականք մեր 'ի պահպանութենէ օրինաց , և բնաւ իսկ մոռացեալ եթէ որպիսի վարձք բարեաց պատրաստեալ կան արիացելոցն 'ի մարտս հաւատոյ՝ հպատակութեամբ ա-

ւագայ ։ Արդ ածէք զմտաւ զաւուրս բարեյիշատակ արքային Սիւլէյմանայ առաջնոյ , և տեսջիք եթէ իցէ ինչ նմանութիւն ընդ կարգս զինուորութեան այնր ժամանակի և ընդ զեղծմունս մերոցս ժամանակաց ։ Եւ ուստի՞ միտեալ իցէ այս փոփոխութիւն . միթէ պակասեա՞ց ինչ Թոշակ զօրականացն և պալատից մերոց , և կամ տակաւ՞ իցէ զօր ունի՞ն . այլ տեսցեն համարձակ . այսպէս , գոհութիւն երկնից , բաց է հանապազ գանձ մերոյ արքայիս ՚ի պէտս խրոց զօրականաց . զեղուն շտեմարանք պարենիւ , և չիք չափ մթերից կարևորաց ։ Վախճան բանիս , գիտակ իսկ էք դուք զօրութեան ուժոյ և խորհրդոյ Թշնամեաց մերոյ կրօնիս , և անկարգութեանց որ զօրացեալ են յենիչէրիսն մեր , զորս և ՚ի համար արկանել ծանր է լսելեաց և գժոխըմբեր՝ որոց զմտաւ անգամ ածել կամիցին . ձեզ արդ արժան է հաստատել կարգել , եթէ յո՞ր ինչ խորհուրդս ձեռն արկանել պարտ իցէ առ ՚ի խնամ ունել օսմանեանս փառաց . զիա՞րդ ցածուցանել զպոռոզութիւն մերոց Թշնամեաց , և վրէժխնդիր լինել մերոցս այլեաց ։ Հապա խօսեցարուք . ցուցէք մեզ զՃանապարհն՝ ընդ որ անկ իցէ գնալ , և մեք միով միաբանուԹեամբ հետևեսցուք ընդ այն ՚ի փառս և ՚ի յաջողութիւն պետութեանս մե_

րոյ »: Եւ 'ի վկայել ժողովականացն ամենեցուն բանից ճշմարտութեան վէզիրին, յաւել ասել բժշկապետն Պէհճէթ էֆէնտի. «Զամենայն փոյթ 'ի մէջ առնուլ արժան է յապաքինումն ժանտ ախտիս որ ճարակեալ է 'ի պետութեանս մերում, և զանկարգութեանն շարաւ զապականիչն հասարակաց ազգիս՝ նշտրակաւ իմաստութեան հարկ է 'ի բաց թափել: Եւ արդ ծն ատեալ յայտ արասցէ մեզ Րէիս էֆէնտին զհանդամանս իրաց պետութեան մերոյ որ ընդ արտաքինոցն իցեն, որպէս զի քաջիկ 'ի վերայ հասեալ համօրէն ազգեցութեանց չարաչար ախտիս՝ կարասցուք զպարտապատշաճ դեղոցն ածել 'ի վերայ զդարմանս »: Իսկ Րէիս էֆէնտին մի առ մի առաջի եդեալ զիրացն պայմանս՝ առաւել ևս զայնմանէ երկարաբան եղև, եթէ զիարդ 'ի վնաս պետութեանս մերոյ մտաբերեն Եւրոպացւոցն տէրութիւնք, և քանի անարդար պահանջմանս արդ խակ յուզեն 'ի Յունացն ապստամբութեան: Յայնժամ օրէնսականացն դասք ասեն ընդ մի բերան. «Քանզի արդար և իրաւացի են բանքդ, պարտ և պատշաճ է ամենայն մահմէտականաց հրահանգել 'ի վարժս զինուորութեան. և նախկին պարտք նոցա՝ հնազանդել հրամանացն արքայի »: Զնոյն և զօրավարք ենիչէրեացն ասացին, և

վեզիրին դրուատեալ զնախանձ նոցա՝ հրամայեաց ատենադպրին ընթեռնուլ զինքնագիր հրովարտակն արքայի, և ապա զօրինադրութիւն նորոյ կարգաւորութեանն, որ 'ի քառասուն և վեց գլուխս բանից բովանդակէր զամենայն զկարևոր և զպիտանի սահմանադրութիւնս ենիչէրեաց, և մանաւանդ զէշքինճի անուանելոց։ Յետ այնորիկ գենպեան օրինական վճռով հաստատեաց զառաջարկութեանն արդարութիւն, և զորս ոչն անսացին այնմ հրամանաց՝ արժանիս պատժոց պատուհասից դատեցաւ զնոսա։ Ապա ակնարկեաց առ քարոզն մզկթի սուլդան Պայէզիտայ՝ որ կոչէր Ահմէտ էֆէնտի, և նա մաղթանս ինչ արար յաղագս իւրոյն յաջողութեան, և ինքն զառաջին գլուխ կուրանին զկոչեցեալն Ֆաթիհա՝ զհետ կցեաց։ Յայնժամ ապա Նշանապահն եդ 'ի հրովարտակի անդ զանուն և զկնիք վեզիրին և զդենպետին, և զՀիւսէյին փաշայի, և զՄէհէմմէտ Իզզէթ փաշայի. և ապա այլք մի ըստ միոջէ ձեռնադրեալ հաստատեցին զբանս հրովարտակին։ Յետ այնորիկ սկսեալ զուգադրել ընդ միմեանս զկարևոր պիտանութենէ կարգացն կանոնելոց՝ զօրավարք զօրուն ճառ արկեալ խօսէին զբազմապատիկ պարտութեանց իւրեանց 'ի պատճառս անկարգութեան զօրականին, և նմին

հակառակ բարեպաշտագոյնքն 'ի նոսա՝ ասէ Էսատ Էֆէնտի՝ պատմէին իրերաց զհրաշալի յաղթութեանցն Մահմետի ընդդէմ այլազգենից՝ զթշնամեացն զէնս նոցունց հակառակ վարելով:

Իսկ վէզիրն ետ 'ի ձեռս ատենադպրին զվճիռ դենպետին, և զհրովարտակն արքունի 'ի ձեռս զօրավարին ենիչէրեաց, և 'ի ձեռս պատմագրին Էսատայ զձև երդմանն որ ամէն իրի յօրինեալ էր բովանդակելով զամենայն զկարևոր պայմանս, և հրաման արար նոցա և դատաւորին Կոստանդնուպօլսոյ և օրինականացն ամենեցուն երթալ առ ժամայն յապարանս զօրավարին ենիչէրեաց, և անդր ժողովեալ զամենայն սպայս և զդնդապետս զօրուն՝ ընթեռնուլ յականջս նոցա զնամականին, և ապա տալ նոցա ձեռնագրել և կնքել զթուղթ երդմանն. և պատուիրեաց զօրավարին ազդ առնել ինքեան զելս իրացն սակաւատող գրուածով, և օրինականացն դառնալ անդրէն առ իւր 'ի տուն դենպետին:

Եղեալ մեր յապարանսն, ասէ Էսատ, և աշտանակեալ յերիվարս ոսկեզարդս խաղացաք գնացաք մինչև առաջի պատշգամին որ Թէքէլի քէօշք անուանի, և մտաք 'ի մէջ խուռն ամբոխի ժողովելոց սպայիցն: Ընդ առանադալիին ընթերցաւ, ասէ, նախ զդատավճիռ դենպետին, ապա և զերդ-

մանն զձև. և ապա հրամայեաց զօրավարին միում ումեք 'ի գլխաւորագոյն իւրոց վերծանել զհրովարտակն: Իսկ այրն այն ընածին կամ կեղծ ինչ տգիտութեամբ սկսաւ, ասէ, խեղաթիւրել և թեքել զիմաստս բանիցն, մինչև բարկանալ զօրավարին. և կորզեալ 'ի ձեռաց առնն զհրովարտակն ետ 'ի ձեռս իմ և ասէ. « Արդ դու ընթերցիր զդա »: Եւ ես մաղթեալ ինձ յօգնութիւն զոգիս ամենայն մահմետականաց հանգուցելոց ընթերցայ զգեղեցիկ հրովարտակն զայն այնպիսի պայծառ և յստակ բարբառով, զի և անոփ կենացըն ընակչաց դիւրալուր էին, ասէ, բանք իմ: Յաւարտ ընթերցուածին եհարց զօրավարին զկարծիս մտաց նոցա. և նոքա առ ժամ մի դեգերեալ՝ ապա յանձն առին զպայմանսն, և էին ևս որք ասէին. «Արեամբ մերով կնքեմք մեք զհրովարտակդ». և արդարև այնչափ եռանդն վառեցաւ 'ի նոսա 'ի ժամուն, զի և որք ոչն ունէին կնիք, առ ոսկերիչս ընթացեալ նոյն հետայն հրամայէին քանդակել, և առ շատ մեծի տագնապին զմիմեանս ոտնակոխ արարին. որ և այս նոցին անհրահանգ բարուցն էն արդասիք՝ ասէ պատմագիրն: Իսկ այն որպէս և է, կնքեցին զհրովարտակն ողջք երկերիւր և ութ, և մի կողմն հրովարտակին լցաւ սևադեղով. և օրինականացն առեալ տարան

զթղթեանն առ մեզլին. իսկ նա առաքեաց զամենայնն առ արքայ. որ և իւրով ինքնագիր բանիւք հաստատեաց ՚ի վաղիւ անդր զանձնատուութիւն զօրականացն։

Յետ այնորիկ մեծաւ փութով հանդերձեցան ՚ի սակաւ աւուրս զէնք և զգեստք բաշխելիք յԷշքինձիան. և թիւ նոցա էր իբրու հազարաց հնգից։ Կամէին բազումք մեծահանդէս առնել զբաշխումն ՚ի դաշտին Տաւուտ փաշայի. սակայն զօրավարն ենիչէրեաց ետ խորհուրդ խոհական՝ ըստ մասնէ բաշխել զզէնսն, և ՚ի միում ուրեք ՚ի հրապարակաց քաղաքին։ Ապա յերկոտասաներորդի աւուր ամսեանն յունիսի ժողովեցան գլխաւորքն ՚ի դասս օրինականաց և զօրագլխաց յԱթմէյտանի, ուր երթեալ էին իբր երկերիւր զօրականք նորընտիրք. կատարեցին անդ միաբան զաղօթս ուրբաթուն, և ապա բաշխեցին զզէնսն և զհանդերձս։ Անդր կոչեցան և չորք ոմանք որ հրահանգիչ ունէին լինել զօրականացն. առաջին Իպրահիմ աղա ոմն որ հարիւրապետ կացեալ էր նորակարգ զօրականացն Սէլիմայ. երկրորդ՝ Տաւուտ աղա հազարապետ երբեմն լեալ զօրաց կուսակալին Եգիպտոսի, և այլ ևս երկուք ոմանք։ Եհարց զօրավարն ենիչէրեաց քաղցրութեամբ ցԻպրահիմ աղա և ասէ. « Յորմէ՞ գնդէ իցես »։

Իսկ նա փոխանակ պատասխանի տանելոյ հարցմանն հանդերձեաց զմի 'ի թեզանեայն, և ձգտեալ զմերկ բազուկ իւր առ զօրավարն՝ եցոյց զնշանագիծն կիտուածոյս զիւրոյ գնդին, և ասէ ապա. «Աւասիկ նշանք իմոց հաւատարիմ ծառայութեանցս»: Եւ նորա զայրացեալ ընդ բրտութիւն առնըն՝ դարձաւ և ասէ ցմերձակայս իւր. «Ո՛ զի սուտ է այրդ. և զիա՞րդ զայլս հրահանգեսցէ». և մերժեցաւ Իպրահիմ: Իսկ այլք երեքեան ընկալան զմեծագին հանդերձն առաքեալս 'ի վեզիրէն: Ապա դիւանադպիր դենպետին առեալ 'ի ձեռին իւրում հրացան մի և ասէ, «Յանուն Աստուծոյ գթածին և ողորմածի». և տայ ցզօրավարն, և նա ընդունի համբուրիւ: Զնոյն և այլ զօրագլխաց արարեալ՝ կարգին կան ապա 'ի միում շարի, և առնուն 'ի հրահանգչաց անտի զառաջին զվարժսն. իսկ զօրականքն 'ի հանդիպոյ կային 'ի զինին:

Յետ այնորիկ Կիւրճի Ահմէտ էֆէնտի օրհնեաց զգինուորութիւնն և զարքայ, և ամենեքեան զամէնն ասացեալ մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս:

Սակայն 'ի սահմանել բարձրելոյն զպատուհաս ամբարշտաց, ասէ Նատ էֆէնտի, ինքնին իւրեանց ձեռօք փորեն և պեղեն նոքա զգերեզմանս իւրեանց. որպէս և ենիչէրիքն արա_

րին ։ Վասնզի ունէաք 'ի սպայից և 'ի զօրագլխաց Ենկիչէրեացն , Թէպէտ և 'ի վերին երեսս կեղծաւորէին հնազանդել հրամանաց արքունի և վճռոյ օրինականաց , այլ 'ի ծածուկ խորհուրդ 'ի մէջ առեալ հնարս հնարէին խափանել զերացն կատարումն ։ Էին 'ի նոսա որ կամէին անդէն իսկ յառաջին հրահանգըս Էթմէյտանի հրապարակին 'ի վեր հանել զըմբոստութիւն իւրեանց ․ այլ մի ոմն 'ի նոցանէ արգել զնոսա և ասէ ․ «Ոչ է օրէն Ենկիչէրեաց երբէք յապստամբութիւն Թևակոխել մինչև հանեալ զկատարածն 'ի ձմերոցաց »։ Այլք ասէին եթէ հարկ է թոյլ տալ բազմանալոյ նորընտիր զօրականաց ․ իսկ կէսք փութային վաղ ընդ փոյթ յայտնել զհակառակութիւն իւրեանց և խափան արկանել ամենևին ։

Մինչդեռ այսքան դայթակղի չարաժողովեալք եկեալ վարանէին , յաւելան կասկածանք զօրավարին Ենկիչէրեաց ․ և կոչեցեալ առ ինքն զՔիխեա Նուրուլի և զայլս ոմանս 'ի գլխաւորաց նոցա , սկսաւ ողոք բանիւք պարզել առաջի նոցա զիմաստ բանից հրովարտակին արքունի զոր 'ի ձեռին ունէր ։ Նոքա խրատունս տուեալ նախ բանից զօրավարին , ապա ասեն ․ «Այլքն մեր որք Թանձրամիտք են և խստասիրտք ․ չէք նոցա ուսանք ահ երկիւղի , և այժմէն իսկ 'ի տրտունջ հասեալ բողոք

հարկանէն ատելով. Քաւ 'ի մէնջ յանձին առնուլ զպայլադենից հրահանգս»: Այս բանք և այլ սոցին նման ասացուածք և գնացք, ապստամբ զօրականացն մեծապէս տագնապէին զաւագորեարն, այլ չև ևս յայտ էր թէ յինչ վճարեսցին :

Ի հնգետասաներորդի աւուր ամսեանն յունիսի, որ օր հինգշաբաթի էր՝ ընդ արևուն մտանել ելին ապըստամբքն 'ի կաղաղոց խուրեանց, և մի մի կամ երկուս երկուս չոքան ժողովեցան յԷթմէյտանին. անդր կոչեցին և զյոլովս 'ի զօրագլխացն և 'ի սպայից, և լցաւ հրապարակն վաղվաղակի : Ապա զօրագլուխք նոցա գունդ մի զատուցեալ արձակեցին սպանանել զզօրավարն ենիչէրեաց զՃէլալէտտին 'ի տան իւրում : Ի հասանել սոցա 'ի տուն առնն՝ նա 'ի դուրս ելեալ էր. վասն որոյ չգտեալ զնա՝ յաւարի առին զկարասիս նորա և հուր հարին 'ի տունն և դարձան փութանակի 'ի հրապարակ անդր. բայց հրդեհն վաղ շիջաւ :

Իսկ ընդ արշալոյս առաւօտուն հանին ապստամբքն զկաթսայս 'ի ձմերոցաց անտի խուրեանց, և տարան յէթմէյտանին. յափշտակեցին ապա և զղինագործացն կաթսայս, և զնոսա ևս ձգեցին զհետ խուրեանց յաղմուկ անդըր. և համբաւեցին ստութեամբ եթէ ձերբակալ եղեն և սպանան վէզիրն մեծ

և Հիւսէյին փաշա և զօրավարին ենիչէրեաց․ որով յուսար կամելին գրգռել զժողովուրդն․ և ահա եկին ժողովեցան ՚ի տեղիան բիւրաւոր բեռնակիրք և այլք դատարկասունք ։ Յայնժամ գունդ մի հատուածեալ յապստամբաց անտի դիմեաց յապարանս վեզիրին, և առաջնորդ նոցին էր Եմինձի Մուստաֆա անուն․ և այլ գունդ յարձակեցաւ ՚ի վերայ Տաւուսա աղայի որ մի էր ՚ի հրահանգողաց նորընծից գնդին՝ առաջնորդ ունելով զՊէքրի Մուստաֆա զոմն ։ Վէզիրն յայնմ գիշերի գտաւ ՚ի գիւղն Պէյլէրպէյի․ և կանանին նորա ՚ի լուր յարձակման մոլեգնելոցն զարհուրեալք մինչ զօղեցան ՚ի ստորերկրեայ նկուղս ապարանիցն և զերծան․ այլ ենիչէրիք կողոպտեցին զամենայն ինչ զոր գտին ՚ի տանըն, և իբրև վեց հազար քսակս արծաթոյ ։ Իսկ որք ՚ի հրապարակի անդ մնացեալք էին՝ սփռեցան ընդ փողոցս քաղաքին, և ձայն բարձեալ գոչէին․ «Մեռցի դենպեան, մեռցին օրինականք․ կանայք նոցա ՚ի յափշտակութիւն, և ուստերք և դստերք նոցա ՚ի գերութիւն, և ինչք նոցա յաւար մատնեսցին ։ Թող բացցին կրպակք, և անկասկած լիցին վաճառականք․ և եթէ բեկոր ապակւոյ գողասցի ՚ի նոցանէ՝ ագաւանդ փոխանակեսցուք մեք նոցա․ և եթէ ՚ի մերայնոց ոք զրկեսցէ զինու՝

առ եւեղ յօշատեսցուք մեք զնա ”։

Ընդ այս աղմուկ շփոթի գղրդեցաւ քաղաքն մեծ, և ծփէր իբրև 'ի խխամրրկէ ։ Ազդ եղև վեզիրին, և նա անդէն արձակեաց զեղբայրն իւր զխալիլ պէյ առ Հիւսէյին փաշա և առ Մէհէմմէտ Նժիպ փաշա, զի երթիցեն վաղվաղակի յարքունիս 'ի ծովափնեայ պալատն Եալըքէօշքիւ անուանեալ. և ինքն մնեալ ձեպով 'ի նաւակ` հասանէ 'ի պատշգամ անդր, և զգանձապետ իշխանն առաքեալ առ արքայ ազդ տանել զեղելոցն, և աղաչէ հրաման տալ հանել 'ի դուրս զդրօշն Նուիրական, և անձամբ յանդիման լինել զօրականացն ։ Յայնմ պահու շատ տագնապաւ գային հասանէին 'ի տեղի անդր և դենպետն և օրէնականք և աւագանին ամենայն ։ Զօրավարն ենիչէրեաց ոչ ևս էր 'ի միջի. իսկ փոխանորդնորին Հասան աղա բազում անգամ ընդիմեալ յապստամբաց անտի` ոչ էառ յանձն երթալ առ նոսա. այլ արձակեալ 'ի հրապարակ անդր զաւենադպիրն մեծ զՐաշիտ էֆէնտի, հարցանէր թէ զինչ կամք իցեն նոցա ։ Եւ նոքա աղաղակեցին իբրև ընդ մի բերան. «Ոչ կամիմք մեք զհրահանգս անհաւատից. միայն հրահանգք մեր և կրթութիւն 'ի վաղնջուց ժամանակաց հնաւէ այս է. հրացան գործեօք նպատակ ունել զանօթս խեցեղէնս, և պո-

ղովառնին սուսերաւ հատանել կորել զԹաղիս ծաղածոյս . հապա Թող տացին մեզ գլուխք արանցն որ այժմ հրովարտակիս կացեալ իցեն Թելադիրք»։ Եւ ետուն զանուանս քաղուած աւագ որերոյ և քաղմագոյն պաշտօնէից դրանն մեծի : Եւ Հասան աղա զնա ինքն ըղԲաշխս առաքեաց առ վէզիրն մեծ, և Բաշխս պատմեաց նմա զամենայն զբանս ապստամբացն առաջի դեսպանացն և երկոցուն դատաւորացն զօրաց, և դատաւորին Կոստանդնուպօլսոյ, և համարակալին և այլոց : Իսկ վէզիրն սրամտեալ ընդ բանսն ասէ . « Խորհրդով իմաստութեամբ և վճռով օրինականացն սահմանեալ են իրքս, և կատարումն սոցին փառք և հաստատութիւն է օսմանեան պետութեանս . ոչ Թողումք մեք և քար մի անգամ խլել անօրինաց 'ի նուիրական շինուածոյ ատի . այլ տեառն օգնականութեամբ վանեսցուք զապստամբս, և լուծցեն նոքա զվրէժ յանդգնութեան իւրեանց. երԹ և զայս տուր նոցա պատասխանի»:

Իբրև մեկնեցաւ սանենագայլին Բաշխս, վէզիրն հանդերձ ամենայն ժողովականօքն որ հետ զհեան քաղմանային՝ գնաց 'ի փակարանն գազանաց, այն է Ասլանխանէ : Անդր եհաս և զօրագլուխն Թնդանօթաձգաց զօրաց Իսրահիմ աղա՝ այր քաջարագուն և հուժկու, որ մականուն Գավրա Ճէ-

հէննէմ կոչէր, և ընդ նմա Թնդանօթք և ռումբք, և մարտիկք ոչ սակաւ. և լցաւ նոքօք գաւիթ արքունեացն։

Իսկ Մահմուտ արքայ լուեալ 'ի գանձապետէ անտի զկրացն պատահումն՝ արձակեաց նախ զչպուպէքիր էֆէնտի զմուֆթի սէնեկապետն իւր առ մեզկին մեծ, զի տեղեկացուսցէ արագ զնա անցիցն անցելոց. սակայն և ինքն ոչ համբերեալ կալ մնալ անդէն 'ի Պէշիքթաշ, եմուտ 'ի նաւակ ընդ ատենադպրին իւրում Մուստաֆայի, և եկ ընդ Դօփ գափու յարքունիս. և ոգի առեալ խրախուսեցին ժողովականքն ամենայն։ Խօսել կալաւ արքայ ահեղ բարբառովն և ողդոզական բանիւք զմիաբանութենէ ենիչէրեաց. և ապա հարցուածոյ պայմանաւ խնդրէր զկարծիս օրէնգիտաց. և յաւել նոցա եթէ օրէնք մեր պատուիրեն սուր 'ի վեր առնուլ ընդդէմ եղբարց ապստամբաց, աղաղակեցին ամենայն ժողովեալքն և ասեն. « Յաղթեսցուք, կամ մեռցուք. տէր եղիցի մեզ օգնական, և մեք պատրաստ եմք դնել զանձինս մեր 'ի վերայ մեծի արքային »։ Նա Ապտուլրահման էֆէնտի ոմն առ սաստիկ նախանձու յուզեալ եհար զհամարիչ իւր զգետնի և գոչէր. «Հապա ժողովուրդ Մահմետի, ո՞ւմ մնամք. հապա ընդդէմ Թշնամեաց. հարցուք խորտակեսցուք

զնոսա և հալածեալ վտանեցուք »: Եւ 'ի լսելն ամենայն ժողովոյն ասէ արքայ. « Եկից և ես ինքն խառն ընդ հաւատացեալդ մարտ դնել կռուել ընդ թշնամիս անձին իմոյ »: Այլ իբրև աղերս արկեալ արգելին զնա յառաջարկութենէն, չոքաւ աւագանւոյն 'ի սենեակ պահեստի նուիրական դրօշուն, և հանեալ ետ զնոյն 'ի ձեռս վէզիրին, և օրհնեաց զնա. և քարոզքըն սփռեալ առ ժամայն ընդ ամենայն փողոցս քաղաքացն երեցուն, Ղալաթիոյ, Պէյօղլուի և Իւսկիւտարայ՝ հրաւիրէին զամենայն զՏաճիկս ընդ հովանեաւ դրօշու մարգարէին իւրեանց. և ահա եկին խռնեցան յամենայն կողմանց ժողովք բազումք յոյժ յոյժ: Որոց իբրև բաշխեցան սուսերք և նիզակք և հրացանք 'ի զինարանաց անափ արքունեացն, ելին փութանակի ըստ դրունն և գոչէին, « Ալլահ Ալլահ, Ալլահ էքպէր ». և դիմեալ 'ի մզկիթըն սուլդան Ահմետայ՝ անդ անկեցին զդրօշն նուիրական: Խորհուրդ արարին անդանօր վէզիրն և աւագորեարն ամենայն, եթէ զիա՞րդ զդէմ կալցին զապստամբելոցն: Կէսք ասէին արձակել նախ առ նոսա Ճարտարաբան զոք որ համոզկեր լինիցի նոցա 'ի հըպատակութիւն. այլ յաւել այլոց՝ եթէ զուր ջան է այն և անօգուտ առ արս խստապարանոցս, և ընդունայն

կորուստ ժամանակի, հաստատեցին զի վեզիրն զտեղի կալեալ դադարեսցէ առ դրօշիւն. և Հիւսէյին փաշա և Մէհէմմէտ փաշա զգեցան զհանդերձս սոկական զինուորութեան, և դիմեցին խուռն բազմութեամբ 'ի վերայ խուժանի ապստամբելոցն։ Եւ դենոյեան և այլ դասք օրինականաց մզկթին որ 'ի գաւիթն էին՝ պաղատանս յերկինս մատուցանէին։

Իսկ ենիչէրիք իբրև լուան զպարզել նուիրական դրօշուն՝ տագնապեցան յոյժ, և գունդագունդ դիմեալ 'ի կէս փողոցաց՝ խափանել հնարէին զընթացս ժողովրդոցն որ անհատ բազմութեամբ դային հասանէին 'ի ձիարձակարանն որպէս գետք սրընթացք 'ի ծով արշաւեալք։ Նա ոչ կարացեալ ընդէմ ունել բուռն սաստկութեան նոցա, մեկնեցան խոյս ետուն 'ի բունն իւրեանց յԷթմէյտանի. փակեցին զմեծ դուռն մտից հրապարակին, և կուտեցին յետուստ կողմանէ կարկառ մեծ քարանց։

Հասեալ 'ի տեղին ահագին բազմութեան ժողովրդեանն և զօրականաց զհետ արի զօրավարացն իւրեանց՝ պատեցին պաշարեցին շուրջանակի զհրապարակն և զամբոցս ենիչէրեաց. և մինչ չև հրձիգ եղեալ 'ի նոսա՝ քարբառեցաւ արտաքուստ Գալաս Ճէհէննեմ ու որս 'ի ներքս անդ էին, և յուշ ա-

բար նոցա 'ի ձայն բարձր զպարտս պաշտամանն նոցին 'ի հնազանդել օրինաց գենին և արքային • խոստացեալ նոցա և ներումն յանցանացն 'ի գթութենէ թագաւորին , և բազում անգամ կրկնեաց զբանսն , այլ 'ի զուր • զի ենիչէրիք բացէ 'ի բաց մերժեցին և ծաղր արարին զբանս Խպրահիմայ : Յայնժամ հրամայեաց Հիւսէյին փաշա հուր հարկանել 'ի թնդանօթան զորս բերեալ էին ընդ իւրեանս • իսկ Խպրահիմ աղա և Նիւմանն աղա առ 'ի պատրելոյ զպաշարեալսն՝ ետուն պատասխանի բարձր բարբառով և ասեն • « Չև ևս հասեալ է վառօդն • և զիա՞րդ արձակել իցէ զթնդանօթս » : Ամենք 'ի գլխաւորաց ապստամբացն խորամանկագոյն քան զընկերս իւրեանց երևեալ՝ ասէն ցնոսա • « Կացէք դուք աստանօր , և զգուշացարուք կառայցըն , և մեք ելցուք արդ ընդ փողը դուռն հրապարակին , և անկեալ 'ի թիկանց կուսէ 'ի վերայ պաշարողացն՝ առցուք զթնդանօթսն 'ի ձեռաց նոցա » • և նոքա այսպէս խուսափեցին : Իսկ որ 'ի ներքս անդ մնացեալք էին՝ մեծաւ անձնմտութեամբ խռնեալ կային յետուստ դրանն մեծի • և ահա յանկարծ արձակեալ թնդանօթ մի ահագին Ճայթմամբ և թնդմամբ խորտակեաց զմի 'ի փեղկից դրանն , և արս բազումս տապալեաց յերկիր : Ընդէն

յառաջեաց Մէհէմմէտ փաշա. և մի ոմն 'ի Թնդանօթաձիգ զօրաց Մուստաֆա անուն նախագրաւ շահատակեալ անց ընդ խրամատն, և եբաց և զմիւս փեղկըն. որոյ վասն ընկալաւ ապա դահեկանս երկու հազար և հինգհարիւր :

Ապա մխեցաւ 'ի ներքս և Գարա Ճէհէննէմ Իպրահիմ աղա, և կոչեաց և զայլս զհետ իւր : Հարաւ յոտս նորա գնդակ 'ի հրացանէ. սակայն ոչ ինչ Թուլացեալ նորա 'ի քաջութենէն՝ յետս յետս մեկնեցաւ սակաւիկ մի, և սուսեր 'ի ձեռին խրախոյս կարդայր իւրոյն ձայնիւ և շարժմամբք :

Զայն տեսեալ ապստամբացն՝ դէմ փախստի արարին, և կէսոցն խոյս տուեալ ամբոցան 'ի տեղին Թէքէէ անուանեալ 'ի միջավայրի անդ հրապարակին, և այլք անկան 'ի մեծաշէն ձըմերոցս իւրեանց, և աղմկեալք անհնարին մոլեգնութեամբ՝ միմեանց մեղ դնէին և զմիմեանս կափահարեալ Թըշնամանէին :

Յայնմ պահու երկոտասան կամ հընգետասան լուցկիք բոցավառք մի զմիոյ կնի արձակեալք 'ի Թնդանօթաց անտի 'ի վերայ այլ և այլ կողմանց ձմերոցին՝ վառեցին բորբոքեցին առ հասարակ ըղջինուածն մեծ իբրև զհնոց սոսկալի. և 'ի սակաւ ինչ վայրկեան ժամանակի աճիւնացաւ ամենայնն հանդերձ բազմութեամբ ապստամբաց որ անդր ա-

պաստանեալ էին ։

Անդէն վաղվաղակի աւետաւորք ըն-
թացեալք 'ի մզկիթն սուլտան Ահմէ-
տայ՝ լցին խնդութեամբ զմէջլիսն և
զորս ընդ նմայն էին . և նա արձա-
կեաց զայլս աւետել զնոյն և խնդակից
լինել արքային ։ Այլ մինչև ցընդ երեկս
աւուրն դադարեալ անդէն մէջլիսն՝
զամենայն զզօրագլուխս և զայլս
ենիչէրեաց որ 'ի բուռն անկեալ ա-
ծեալ լինէին զառաջեաւ՝ կշտամբէր
բանիւք խստութեան , և հրամայէր
արգելուլ փակել զնոսա առ ժամն 'ի
վրանի ուրեք 'ի մէջի ձիարձակարանին ։
Կոչեաց և զզօրավարն ենիչէրեաց ըղ-
Ճելալէտտին Մէհէմմէտ աղա , որ
յայլակերպս կայր 'ի Թաքստի 'ի տան
միում , և զնա ևս արգել ընդ այլսն առ
'ի քննելոյ զնոսա ։

Ի կոտորել այսպէս մեծի մասին ե-
նիչէրեաց՝ այլք ծակամուտ փախըս-
տեայ լինէին , և չերևէր ոք 'ի նոցանէ
'ի մէջի . սակայն առ խնամոց զգուշու-
թեան գունդք գունդք զօրականաց
կարգեցան առ միով միով 'ի դրանց
քաղաքին . և բնակչացն ևս Կոստան-
դնուպօլսոյ և Իւսկիւտարայ , Ղալա-
թիոյ և Պէյօղլուի պատուէր հրամանի
եղև պահ ունել իւրաքանչիւր թաղից
և փողոցաց ։

Յայնժամ գիշերի յորում լուսանայր օր
ուրբաթու՝ մէջլիսն և գենդպեան և

գլխաւորք յօրինականաց անդէն 'ի արահի մզկիթին օթեցան, և այլք 'ի բուն իսկ 'ի ներքս մզկիթին ընկողմնեալք ննջեցին : Իսկ Հիւսէյին փաշա, Մէհէմմէտ փաշա, Իպրահիմ աղա և 'ՆԷճիպ էֆէնտի զհետ յաղթութեան խուբեանց երթեալ 'ի հին ձմերոց ենիչէրեացն որ Էսկի օտալար կոչէր՝ խոյզ արկեալ որոնեցին յապստամբաց անտի, և չգտին և ոչ զոք. և երթեալ դադարեցին զայն գիշեր 'ի գաւթի Սիւլէյմանիյէ մզկիթին :

Ի վաղիւ անդր վեզիրն բազմեցաւ 'ի արահի մզկիթին, և պաշտօնեայք դրանն բոլորեալ կային շուրջ զնովաւ. հրաման ետ մուծանել առաջի իւր զմի մի յառաջնորդաց ապստամբութեանն և կշտամբէր զնոսա, և հրամայէր գահճաց հանել զնոսին և խեղդամահ առնել. և կուտեցան 'ի հրապարակի անդ յաւուր յայնմիկ դիականք աւելի քան զերկու հարիւր. թող զոր սպանանէր Հիւսէյին փաշա յապարանս զօրավարին ենիչէրեաց :

Այս վերջին ապստամբութիւն ենիչէրեաց կարի խիստ զայրացոյց զդիւանն Օսմանեանց առ հասարակ 'ի վերայ խստերախ բարոյից նոցա. վասն որոյ յայնմ աւուր յամենեցուն բերանս լըսէին խղճք և տենչանք սպառասպուռ ջնջելոյ կարգի և անուան ենիչէրեաց. ապա թէ ոչ ասէին, որպէս ոչ առա-

քին նուաղ է այս ապստամբելոյ նո_ցին, սոյնպէս և ոչ վերջին եղիցի : Իսկ տուեալ վանեցան բորբոքե_ցան 'ի սոյն խորհուրդ վեզիրն և դեն_պետն, և բժշկապետն ՊԷՀՃԷԹ և այլ ուսուցանիլն և գխանականք, և առ_անձինն առեալ կարգեալ և քաջ կշռեալ զամենայն՝ առաջի արարին զբանսն արքայի. և նա արար մօտ 'ի նոյն յօժարեալ՝ հրամայեաց ձեռն 'ի գործ առնել 'ի կատարումն խորհր_դոյն : Եւ նախ յերթալն արքայի բառ սովորութեան 'ի մզկիթ՝ ոչ կոչեցան 'ի հանդէս անդր հարխուրապետք և հա_զարապետք ենիչէրեաց. այլ փոխանակ նոցա զինուորք և Թնդանօթաձիգք. և քարոզն յասել անդ զմաղթանսն վասն կենաց արքային՝ գովեաց զնա զի շինեաց զաղմուկ ապստամբութեանն : Յետ այնորիկ ժողովեցան յայնմ գիշերի 'ի բրան մզկիթն սուլթան Ահմէտայ ամե_նայն ուսուցանիլն և յոլովք 'ի գխանա_կան մարդկանէ, և մանր քննեալ և հաս_տատեալ զխորհուրդ և զեղանակ բառ_նալոյ զենիչէրիան՝ մեկնեցան 'ի միմեանց. յանձն արարեալ վսեմախօս օրինագի_տին որ էր Փէրթէվ էֆէնտի՝ յօրինել հրովարտակ առանձինն. և նա 'ի նմին գիշերի արար և կատարեաց : Վկայե_ցին ամենեքեան լաւութեան հրովար_տակին, և առաքեցին 'ի վաղիւ անդր առ արքայ, և նա անդէն վաղվաղակի

հաստատելոյ զնոյն խրով ինքնագիր
յանձնուածով. և այս պատճէնն էր հրո_
վարտակին. « Գիտակ իսկ են Տաճիկք
ամենեքեան, զի սկիզբն և յառաջատու_
թիւն Օսմանեանս պետութեան որ
զօրացոյց զարևելս և զարևմուտս առ_
հասարակ, նախանձ մերոյ դենին է, և
սուսեր վառեալ 'ի պատերազմի հա_
ւատոյ. ամին իրի յամենայն ժամանա_
կի կարեւոր պէտք են նմա բազմաթիւ
և քաջամարտիկ զօրաց առ 'ի հանելոյ
զնոսին ընդդէմ թշնամեաց կրօնիս մե_
րոյ: Ենիչէրիք որ 'ի բարեկարգու_
թեան էին երբեմն՝ մեծամեծ վաստա_
կօք վաստակեցին 'ի մերումս պետու_
թեան, և քաջալանջ և անվկանդ ա_
րութեամբ իւրեանց 'ի պատերազմունս
անդ բազում անգամ կալան զյաղթու_
թիւն, սակայն 'ի վերջէ աղարդեցաւ և_
մուտ 'ի նոսա ոգի չար, և ըմբոստու_
թիւն փոփոխականաց ընդ վայելմի հլու_
թեան նոցա: Ի հարիւրոց ամաց հետէ
յամենայն 'ի պատերազմունս մեր ոչ
դադարեցին առքա բանս զրպարտու_
թեան յօդել հակառակ զօրավարաց
իւրեանց, առանձնանել հրամանաց նո_
ցա, դէմ փախանի առնել վատաբար,
և թուլութեամբ իւրեանց և անհրա_
հանդ բարոյիւք մատնել զամուրս մեր
և զգաւառս 'ի ձեռս թշնամեաց մե_
րոյ: Որոց խրախուսանօք 'ի տեսիլ այս_
պէս ջնջելոյ Օսմանեանս պետու_

թեան , քաջալերեցան և նա յարձա-
կել 'ի վերայ մեր , և որ քան զօր 'ի մա-
ւրդնութիւն թեակոխեալ և փոյթ 'ի
մախ կալեալ են , զոր մի արասցէ Աս-
տուած , ապաստանու ջնջել զազգս
Տաճկաց : Իսկ մեր բուռն հարեալ 'ի
փոյթ տաճկական կրօնիցս 'ի հնարս
հայթայթանաց մտաք՝ որպէս զի կարա-
ղասցուք յաղթահարել զթշնամիս մեր :
Նա քանզի յայժմու ժամանակիս որ
ինչ յաղթութիւնս գործել թուին այ-
լազգեաց՝ ամենայն արդասիք են կա-
նոնաւոր զօրաց նոցին բարեկարգու-
թեան , հարկ անհրաժեշտ համարե-
ցաք և զմեր պատերազմին 1202 ամի ,
և յետ այնորիկ ևս երկիցս անգամ զօրս
կանոնաւորս կազմել պատրաստել :
Սակայն գաղք ենիչէրեաց , իւրեանք
անոյխտանք առ ամենայն , հակառակ
ընդդէմ ելին և այսպիսամ զմնուորու-
թեան , և ոչ միայն խափանեցին զյօ-
րինուածութիւն նորին , այլ և պատ-
ճառք եղեն տարապարտ մահուան
թագաւորաց ոմանց որ կենդանաւորք
էին աշխարհի : Այսու ամենայնիւ հան-
դերձ արդահատէաք մեք 'ի սոսա իբրև
'ի հինաւուրց զօրականս , և լսէաք • և
չարութիւն և ապստամբութիւն բնա-
ւորեալ իւն սովորոյթ լեալ էր առ սո-
սա , և մեք երկայնամտեալ ժոյժ ունէ-
աք • այլ զինչ շահ • զի ահա թշնամիք
հաւատոյս մերոց ոչ դադարեն պատ-

Ճառս առնուլ յաղատամտութեանց անտի սոցա և աշխատել ՚ի բնաբարձ ջնջումն մեր , յորմէ ակն սպասեալ է »։ Ցետ այսորիկ ՚ի մէջ բերեալ զջանս պետութեանն ՚ի բարեկարգել զենի-չերիս , յընտրել զխշչինճի անուա-նեալսն և ՚ի հրահանգել զնոսա , և թէ զիարդ ենիչէրիք յանձին կալեալ նախ՝ և ապա մերժեցին զառաջարկութիւնն, և զահագին աղմուկն զայն յուզեցին , յորէ . « Ցետ այսչափ անկարգու-թեանցն ենիչէրեաց յայտ իսկ է , զի քաջ ՚ի բաց ՚ի նախնեացն խոտորեալ կարգաց՝ այք լեալ էին նոքա անպի-տանք և անկիրթք և խռովայոյզք , և քան զբարիսն յաճախեալ էին անպի-տանք ՚ի նոսա. Նա զի և ՚ի պատուհա-սեալսն զայս նուազ գտանեն ոմանք որ ՚ի բազումս խուրեանց ընդ 75 թը-ւանշանիս ունէին և նշան խաչի այլա-կրօնից. ահա այսպէս խառնուրդ ինն մնեալ էր ՚ի նոսա յազգաց ազգաց , և բազմացեալ լրտեսք օտար աշխարհաց, զորս յանօգուտ վտանգ էր մեր յարդ մաքրել և ջնջել ՚ի միջոյ նոցա ։ Ցաղագս այսորիկ ահա ժողովեալ այս օր ամենայն ուսագանութիւն ՚ի մզկիթի սուլթան Ահմէտայ առ նուիրական դրօշուն , սահմանեցին հասուն և միա-բան խորհրդով , զի բարձցի ՚ի միջոյ պյատուհեան կարգ և անուն ենիչէրեաց, և ընտրեսցի փոխանակ նոցա այլ զի-

նուորութիւն որ կոչեցի Մուալլէմ տաղքերի մոնաստրեի մուհամմէտակյէ (այս ինքն է Մորզիկ զօրականք յաղթողք մահմէտականք, կամ օգնեալք 'ի Մահմետէ)․ ապարապետ ոզլին կարգեցի Հիւսէյին փաշա, և բնակեցի նա 'ի տուն զօրավարին ենիչէրեաց, որ յայսմ հետէ կոչեցի Սէրասքէր փաշա գափուսու, (այն է Դուռն սպարապետի․) ընջեցին այսուհետև և անուանք և իշխանութիւնք զօրագլխացն ենիչէրեաց․ սակայն զռոճիկս իւրեանց և զխոշակս ազեն անխափան որք միանգամ յառաջնմէ իսկ առնուին, և ոչ ինչ վնաս ումեք գործեցի ": Այպա յորին բանք յորդորականք առ ամենայն մահմէտականս, որպէս զի փոյթ կալցին 'ի հաստատութիւն և 'ի կատարումն հրովարտակին:

Զայս հրովարտակ արքունի ես ինքնին ընթերցայ, ասէ Լուսո Էֆէնտի, նախ առաջին 'ի մզկիթի սուլթան Ահմէտայ 'ի լսոր յոքնախուռն բազմութեան հաւատացելոց, և ապա ընդ հրամանի վէզիրին մեծի ընթացեալ 'ի գիւանն մեծ՝ ետու ընդօրինակել զայն հարիւրաւոր գրագրաց, և սփռեցան պատճէնքն առ ամենայն ժողովրդապետս քաղաքին, և ապա առ ամենայն կուսակալս և գաւառապետս: Բայց մինչ չև ժամանեալ հրովարտակս 'ի ան-

զիան յորս առաւելութեամբ էր թիւ-համարոյ ենիչէրեաց, որպէս 'ի Դա-մասկոս, 'ի Բէրիա, յԱդրիանուպօլիս. 'ի Կարին և 'ի Պոնտիա. աճապարեաց վեզիրն կանխազեկոյց առնել կուսակա-լաց կողմանցն, զի եթէ գտանիցեն զոք յիւրեանց ենիչէրիան ըմբոստ կամ խռովարարս, փոյթ կալցին կորուսա-նել զնոսա նախ 'ի միջոյ, և ապա թէ վերծանել զհրովարտակն:

Ի նմին աւուր շաբաթու բաշխեաց Մահմուտ արքայ պատիւս և պարգևս թոփապանւոյն որ վճարեցին զգործն զայն զմեծ, և ամենայն ենիչէրեացն զօրագլխաց որ ոչ միաբանեալ էին ընդ-խռովիչս՝ նոյնպէս բաշխեաց դրամս և իշխանութիւնս. և զորոց միանգամ կասկած ինչ կալաւ չարութեան՝ 'ի մահ դատապարտեաց. և 'ի հասարա-կէլ աւուրն՝ դրօշն նուիրական բարձու-հանդիսիւ 'ի մզկթէ անտի և տարեալ ե-դաւ յիւրում տեղւոջ: Եւ Մահմուտ արքայ ինքն ընկալաւ զդրօշն 'ի ներքս՝ ժողովեաց 'ի մեծի սրահի անդ զամե-նայն աւագորեայն և զօրինականս, և ակնարկեալ նոցա բազմել՝ առանձնա-նեաց առ նոսա. և նախ փառս ետ Աստուծոյ զի իւրով ձեռամբ հաճեցաւ կատարել զիրսն, և ապա գովեաց զժո-ղովականսն՝ զի գործակից իւր գտան յարդիւնս ածել 'ի վերայ ապստամ-բացն գնդի զխորհուրդս վերին տես-

չութեան ։ Եւ 'ի վախճանի յայս արտաքեալ նոցա զկամս իւր 'ի բարեկարգել և ևս զիւր պետութիւնն, պատուիրեաց նոցա զտեղի առեալ մնալ անդէն յարքունիս և խորհուրդ 'ի մէջ առնուլ զկարևորս. և առաջին զայս կամիմ զի հաստատիցէք, ասէ, զի բարձցի այսուհետև սովորութիւնն այն՝ որով ինչք սակականաց ևս անժառանգ մեռելոց գրաւէին յարքունիս ։ Եւ 'ի մեկնել արքայի յատենէ անտի՝ նոքա 'ի խորհուրդ բազմեցան, և զաւուրս ինչ անդէն յարքունիսն 'ի վրանս 'ի վրանս օթագայեալ մնացին ։ Սակայն Հիւսէյին փաշա և Խզզէթ Մէհէմմէտ փաշա ոչ դադարէին 'ի դարանայոյզ առնելոյ զմնացորդս ապստամբացն և 'ի սպանանելոյ. և աւելի քան զհազար մատնէին յաւուրն 'ի բերան սրոյ ։

Ի վաղիւ անդր ըստ հրամանին արքունի ժողովեցան խառնաղանջ մարդիկ աւելի քան զքսան հազար, որ 'ի զանազան գաւառացն Ասիոյ և Եւրոպայ եկեալք 'ի Թագաւորական քաղաքն, և մինչև ցայնժամ բազում անկարգութե պատճառք էին և Թեարկեալք յենիչէրեաց. և առ հասարակ մուծեալք 'ի նաւակս նաւակս դարձուցան յիւրաքանչիւր հայրենի յաշխարհս ։ Յետ այնորիկ Ճոխաբար պարգևօք պատուեաց Մահմուտ արքայ զերիս հազար աշակերտս արքունական դպրոցաց, և զայլ

Ժողովուրդս և զզօրականն՝ որ կցորդեալ էին կատարածի ենիչէրեաց։ Ոչ ինչ հաղորդ եղեալ էին և օժանդակ զինաւորքն պաշտպանք մարտկոցաց Վօսփորի ապստամբութեան ենիչէրեաց. վասն որոյ և նոքա պարգևս և գովեստ ընկալան զառաջինն յարքայէ. բայց քանզի անմասնաց էր և նոցայն ձեռներեցութիւն նոյնօրինակ խռովութեան առ Սէլիմու արքայիւ, յետ աւուրց ինչ բարձաւ և նոցին զինուորութիւն. որ կամեցաւ ոք ՚ի նոցանէ գրեցաւ ՚ի կարգ Մանսուրի զօրականաց, և այլք փարատեցան ՚ի բունն իւրեանց ՚ի Լազիկիա։

Յամսեանն յուլիսի խորհրդով աւագանւոյն և օրինականաց և վճռով դենպետին բարձաւ և կարգն Պէկթաշի դէրվիշաց որք համարէին ձեռնտու և օգնական ենիչէրեաց յամենայնի, և դրդիչ նոցին յապստամբութիւն ընդդէմ հրամանաց արքունի. Թող զայս՝ այլ և մոլար աղանդովք ապականեալք և մոլորեցուցիչք ազինաց. երեք ումանք ՚ի գլխաւորաց նոցա որ կոչէին Գանձի Պապա, Ահմէտ և Սալիհ, գլխատեցան հրապարակաւ. մնացեալք նոցա և շիրիմք քանդեալ կործանեցան, ընակիչք նոցին փարատեցան յաքսորս յԱսիա, և որք մնացինն՝ ստիպեցան փոխել զգաբաղ զգեստուցն իւրեանց։

Ըստ նմին օրինակի առանձին հրապարակաւ արքունի ջնջեցան բարձան

'ի միջոյ և հեծելազօրք որ Սիփահի, Ջուլուֆէճի և Ղուրէպա կոչէին, այս_ինքն են սպայք և թոշակաւորք և ե_կամաւոր զօրականք. իբր զի և սոքա ոչ ինչ նուազ քան զենիչէրիսն սովոր էին յապստամբութիւն, և յաճախագոյնս գործակիցք նոցին: Իսկ այլ կարգք և գունդք զօրականաց առ հասարակ փո_խեցին զանուանս և զսովորութիւնս և զտարազ հանդերձից, և յանձն առին զօրէնս նորոյ զինուորութեանն, և սկսան ուսանել զհրահանգս Եւրո_պական կարգաց: Ի սուղ ժամանակի մեծապէս յառաջադէմ գտան օսմա_նեան զօրականքս 'ի խստութեան կըր_թանուն՝ մինչև զարմանալ Եւրոպացւոց անգամ. և ինքն Մահմուտ արքայ ստէպ ստէպ առաջիկայ գտեալ հանդիսից նոցին՝ ոչ դադարէր խրախուսել զնոսին և զզօրավարս նոցա քաջալերել բանիւք և առատաբաշխ պարգևօք: Կառոյց նոցա նորանոր և հոյակապ զինուորա_նոցս, և կանգնեաց վարժոցս զինուո_րութեան և բժշկութեան, և գործա_րանս զինուց, և այլ կարևոր տեղիս:

Ի վախճան ամսեանն օգոստոսի հըր_դեհ մեծ ծագեցաւ 'ի Պահճէ գափու_սու, և վարեալ 'ի բուռն փչմանէ հիւսի_սային հողմոյն՝ յերկարեաց և 'ի վեց ժամու ծախեաց գոգցես զութերորդ մասն քաղաքին: Այրեցաւ և Պէզազխանն և այլ պալատունք և մթերանոցք բազումք

յոյժ, մինչև հաշուել զվնասն գլխոյ ե-
րեքարիւր միլիոն դահեկանաց : Մահ-
մուտ արքայ աղեկիզեալ ընդ չար պա-
տահարն՝ եբաց զդրունս արքունեաց
իւրոց և այլոց ապարանից՝ անդր դիմել
ամենայն վտանգելոց 'ի հրկիզութենէ
անտի, և ապա յիւրոց գանձուցն առա-
տաձեռնեաց նոցա դրամս 'ի շինութիւն
վնասուածոցին : Այլ զի մի և խռովա-
սիրաց ումանց պատճառք անկարգու-
թեան լինիցի հրդեհն, յաւէտ կացոյց
զամենայն զկանոնաւոր զօրականն, և
զբազումս 'ի պաշտօնէից իւրոց սփ-
ռեաց ընդ քաղաքն յայլակերպ համ-
դերձս. որոց հասեալ 'ի ժողովատեղիս
հասարակաց՝ իբրև տեսանէին զոք մե-
ղադիր լինել քաղաքական կարգաց ժա-
մանակին՝ անդէն ձերբակալ արարեալ
գլխատէին. և կանայք ևս ոչ սակաւք 'ի
նոյն պատճառս կարեցան 'ի պարկս
պարկս և ընկեցան 'ի ծով. և լուեաց
քաղաքն յանօգուտ բրթմնջենէ :

Սակայն զհետ երկուց ամաց 'ի վեր
ել դարձեալ միաբանութիւն գաւառա-
նից ոմանց, որոց առաջնորդ էր տէրվիշ-
ոմն Պէկթաշի՝ Լիւլէճի Ահմէտ անուա-
նեալ : Սա չարաչար տանջանօք խոշ-
տանգեալ՝ ելոյծ զվրէժ ապստամբու-
թեան խորհրդոյն. և բազումք 'ի հին
ենիչէրեաց ընդ նմին անկան պատու-
հասիւ : Եւ Մահմուտ արքայ ամփոփ
ևս յաղթանակութեամբ պերճացեալ՝

համարձակագոյնս յառաջ վարեալ այնուհետեւ զհրահանգս զինուորութեան. և ինքն խակ տարաղ եգիպտացի զգեցեալ և խարազան 'ի ձեռին՝ առէպ առէպ առաջիկայ գտանէր հրահանգացն և վառէր զամենեսեան 'ի փոյթ բարեկարգութեանց իւրոց:

Իսկ 'ի Յունաստան ոչ ինչ գործեցաւ նշանաւոր 'ի ժամանակին. Իպրահիմ և Րէշիտ փաշա յոլովագոյնս յաղթեցին քան յաղթեցան. և 'ի ձմերայնոյն սաստկութենէ դադարեցին ապա 'ի մարտնչելոյ ընդ քաղաքին Աթենացւոց: Դեսպանք երեցուն պետութեանցս Եւրոպայ՝ այս ինքն են Ռուսացն և Գաղղիացւոց և Անգղիացւոց՝ ակսան յորդորել զՕսմանեանս 'ի հաշտութիւն խաղաղութեան ընդ Յոյնս. զի և դաշն միաբանութեան հաստատեցաւ 'ի մէջ նոցա 'ի Լոնտոն 'ի 6 յուլիսի, որպէս զի ստիպեսցեն զարքայն Օսմանեանց զիջանել և իրաւունս Հելլենացւոց առնել: Բայց արքայ զիրաւացին զիւր պատասխանի կրկնեալ առ նոսա՝ ոչ ինչ թուլանայր 'ի հանդերձանաց մարտին:

Յամսեանն սեպտեմբերի եկն եմուտ նաւատորմն Օսմանեանց յԱղեքսանդրիոյ 'ի Նաւարին. և փոխանորդ ծովակալին Անգղիացւոց Քոտրինկթօն և Գաղղիացւոցն, և այլք արարին առ Իպրահիմ փաշա զկամս պետութեանցն

գաշնակցելոց 'ի Լոնտրա. և Իպրահիմ խոստացաւ նոցա չհանել 'ի դուրս 'ի նաւահանգստէ անտի զնաւս իւր մինչև հասցէ նմա պատասխանի 'ի հօրէն իւրմէ և յարքայէն Մահմուտայ: Այն ինչ մեկնէին սոքա 'ի սակս համբարոց երթալ 'ի Միլօ և 'ի Զանթա, և ահա երկու աւազք նաւատորմին Օսմանեանց ելանէին 'ի Նաւարինէ: Զայն իմացեալ ծովակալացն Անգղիացւոց և Գաղղիացւոց՝ դարձան փութանակի յետս կոյս. հասին 'ի պահուն և նաւք Ռուսաց, և մտին ամենեքեան 'ի նաւահանգիստն Նաւարինայ 'ի 20 աւուր ամսեանն հոկտեմբերի, նախ անգղիական տորմիղն, ապա գաղղիականն, և 'ի վերջէ Ռուսացն, ընդ ամենայն նաւք քսան և քանի մի. իսկ նաւատորմին Օսմանեանց վաթսունիւ չափ նաւք էին, և կային սոքա լուսնաձև իմն կարգեալք 'ի ծոցի անդ նաւահանգստին յերիս շարս: Անդ սկսան տորմիղքն հանդիպակացք հրձիգ 'ի միմեանս լինել, և թէ ընդէր կամ որպէս՝ բաղում ինչ ասացին, այլ զհաւաստին գիտաց ամեն և ոչ ոք: Ահագին յոյժ էր նաւամարտն այն յանձուկ սահմանի անդ, և տևեաց ժամս աւելի քան զերիս, և ոչ մնացին 'ի նաւատորմէն Օսմանեանց՝ բայց միայն նաւք քսան մանունք դատարկացեալք 'ի մարդկանէ: Իպրահիմ փաշա ոչ էր 'ի պահուն 'ի Նաւարին. և յաւուրն չորրորդի

հասեալ անդր՝ Թէպէտ և սուգ մեծ է_
առ, այլ ոչ ինչ ցոյց բարկութեան ետ
ընդդէմ Եւրոպականացն :

Իբրև աղդ եղև 'ի Կոստանդնուպօլիս
գոյժ հրկիզութեն նաւատորմին, խռովե_
ցան ուսագանին յոյժ յոյժ . և 'ի պնդել
գործեալ դեսպանացն Եւրոպացւոց
զի ինքնիշխան ազատութիւն շնորհեսցի
Յունաց, Մահմուտ արքայ ոչ միայն ըն
ցասմամբ արար նոցա պատասխանի ,
այլ և գիր յայտարարութեան պատե_
րազմի հրատարակեաց յ18 աւուր ամ_
սեանն դեկտեմբերի ընդդէմ Ռուսաց ·
յորում ձայն տայր ամենայն տաճկացե_
նեաց զէն առնուլ 'ի պաշտպանութիւն
դենին իւրեանց և աշխարհին :

Զայսպիսի անպատեհ ժամանակ
պատեհ կարծեալ ոմանց 'ի գլխաւորաց
Հայոց, խորհուրդ առին բռնութեամբ
բառնալ ջնջել զուղղափառ Հայս յօս_
մանեան անէրութենէն : Եւ այնչափ
յուսացեալ էին 'ի յաջողութիւն հնար_
խմացութեան գործոյն, զի որ գտաւ ոք
'ի խորհրդի անդ խորագէտ նախատես
անյաջող ելից և մնասակարութեան
իւրեն, և խրատէր նոցին 'ի զգուշութիւն
յայնպիսի ձեռնարկութենէ , արհա_
մարհեալ 'ի բաց մերժեցաւ : Սկսան
ապա քսիս սատութեան 'ի դուռն ար_
քունի մատուցանել՝ որպէս թէ ուղ_
ղափառ Հայք 'ի խորհուրդս նենգու_
թեան 'ի բնէ յեւրոպացւոց՝ մանաւանդ

'ի գաղղիացիսն հակամէտք, լռեալք ի-
ցեն իւրաց պետութեանն և մասնիչ առ-
եւրոպեանս, առ որս ելումուտ առնեն
համարձակ 'ի Պէյօղլու՝ ուր բնակեալ
են յոլովագոյնքն և յաճախեն առ դես-
պանս տէրութեանց վասն նոցին իւրաց.
և թէ՝ ցորչափ որեար այսպիսի հմուտ
և տեղեակ ամենայն գաղտնեաց տէ-
րութեանն՝ 'ի տանէ բուսեալ կայ չար
'ի միջի նորա, անհնար է յաջողումն
գտանել խորհրդոց և գործոց նորին:
Ասմամբ յառաջ յածէր և շշնջիւն հնա-
րագիտութեամբ սփռեալ 'ի բերանս իշ-
խանաց և ամբոխին, իբրու այն թէ
ուղղափառ Հայք զնմանութիւն իմն
բերիցեն զաղանդոյն Պէկթաշի տէրվի-
շաց 'ի մէջ քրիստոնէից: Պատուէր ետ
գուռն երից իշխանաց իւրոց քննել զայս
ամենայն ամբաստանութիւն. և ոչ
ինչ ելեմուտս տեսեալ սոցա զուղ-
ղափառաց առ դեսպանս կամ բնաւ
առ Եւրոպացիս, և ոչ կասկած ինչ
նենգի, սակայն ոչ եղև լսելի վկայու-
թիւնս այս առաջի ումանց յաւագա-
նւոյն՝ որ որսացեալքն էին 'ի չարախօ-
սաց անտի. ընդ որս և Հիւանի ալէյ
պետ փողերանոցին և Րէիս էֆէնտի
ժամանակին Փէրթէվ. որք այր զառն
զկնի յաջորդեալ էին զՀալէթ 'ի գաղտ-
նի խորհրդականութիւն արքայի հան-
դերձ այլով գործակալութեամբն՝ զոր
ունէին: Փէրթէվ 'ի թեւադրութենէ

նոցա գիր ամբաստանութեան եւ մատոյց առ արքայ՝ ի ամենայն զրպարտութեամբ զուղղափառաց, մինչեւ կնքել զգրանն՝ թէ ցորչափ այս ազգ յաշխարհ տէրութեան մերոյ է, անհնար է մեզ գալ առնուլ 'ի նենգութենէ հաւատակցութեան նոցա ընդ թշնամիս մեր։ Այսպ խորհուրդ հաստատեցաւ. հալածել զնոսա 'ի թագաւորեալ քաղաքէն եւ վարել կանանիւք եւ որդւովք, եթէ ոչ դարձցին եւ հնազանդեսցին ազգապետին կամ թէ առել պատրիարգին Հայոց։

Այլ ուշ 'ի կուրծս արարեալ բանսարկուացն, զի թէ յառաջիկայութեան անդ եւրոպական դեսպանացն այս գործիցի, կարէ ծանր թուիլ բանն յաչս նոցա եւ զարթուցանել զնոսա 'ի պաշտպանութիւն ուղղափառաց. քանզի չեւ էին մեկնեալ դեսպանքն 'ի քաղաքէն, թէպէտ եւ խաժամուժք էին եւ կազմէին 'ի չու. Քանահնար եղեն, զի գուռն մի ինչ զիջցի նոցա 'ի պատճառս յունական իրացն, եւ ելցեն գնասցեն միանգամ դեսպանքն եւ բարձցին 'ի միջոյ խոչ եւ խութ ամից նոցա։ Զի այնպէս հաւանեցուցին զաւագանին, որպէս թէ առ յունական ապստամբութեամբն մեծ եւ խիթալի կասկած կայցէ պետութեանն յերեսաց ուղղափառաց։ Դեսպանքն ելին, եւ եւ հրովարտակ հալածմանն եւ տուաւ 'ի ձեռս

ազգապետին Հայոց՝ կատարումն տալ հրամանին արքունի ։ Նւ առ յարմարելոյ տաճկագէն մտաց՝ յորոց աչս միապէս խոտան են ամենայն քրիստոնեայք որոյ և է դաւանութեան, և առ 'ի պատրուակել ևս յաչաց Եւրոպացւոց զհալածումն ուղղափառ անուանն, խելագիւտ լինի մեծի հանճարոյ հնարեալ ըստ մտաց իւրեանց, զհալածումն և զվտարանդութիւն հրամայել տուեալ էին 'ի հրովարտակին ընդ անուամբ Գաղատացւոյ. որպէս թէ լքեալ զհայրենիս իւրեանց՝ եկեալ խռնեալ իցեն 'ի Թագաւորեալ քաղաքին ։ Այն լինի նախ աքսորեցան գաղատացի մեծամեծք և քահանայք, ապա ռամիկն նոցա. յետ այնորիկ հրաման եղև այլոցն ամենեցուն ելանել 'ի Պէյօղլուէ և յայլ արուարձանին անցանել ։ Ապա տակաւ հետ զհետէ զբնիկ քաղաքացին ևս ոչ գաղատացին՝ եռուն աքսորել երամ երամ ։ Թողին լքին այնուհետև բազմաթիւ ազգատոհմք զհայրենի երկիր և զտուն և զարարս. յորոց էր որ յափշտակեցաւ և էր որ խոտանեալ վաճառեցաւ, և ցրուեցան անկան կանամբք և մատաղ որդւովք և դստերօք 'ի դառն ձմերայնին 'ի ձիւնեղէն լերինս Ասիոյ, և բազում վտանգօք հազիւ հազ թէ հասանէին 'ի տեղիս աքսորանացն. յորոց և ոմանք զճանապարհայն մեռանէին, և այլք 'ի վատառողջ տեղիս վտարանդութեան ։ Ի

նմին ժամանակի արտաասահման արարին յաշխարհէ աէրութեանն և զայլ ամնայն քահանայս և զեպիսկոպոսունս ուղղափառաց, զորս ընդ ծով, զորս ընդ ցամաք. որպէս թէ զհօտն անհովիւ և վայրատեալ դիւրաւ որսայցեն 'ի կամս խորհրդոց իւրեանց. որ ոչ յաջողեցաւ նոցա 'ի մեծ զարմանս նոցին: Զի թէպէտ և անպատեհ իմն թուէր խոհական մտաց այսպիսի հալածումն յայսպիսում ժամանակի, սակայն այնպէս յուսալին առաջնորդք գործոյն և այնպէս հաւանեցուցեալ էին զդուռն, որպէս թէ յանառաջնորդ մնալ ուղղափառաց՝ նոյնհետայն առանց ընդ բանս իմն ածելոյ դարձցին առ հասարակ 'ի միութիւն ընդ Հայս, և խաղաղասցի պետութիւնն յահէ կասկածանացն:

Բայց թէպէտ և սուտ զրպարտութիւք դրդուէին հանապազօր զմիտս ամբոխին իւրեանց 'ի թշնամութիւն ընդ անպարտ հալածեալսն, սակայն էին յոլովք 'ի նոցին իսկ 'ի Հայոց՝ յաւագաց և 'ի կրօնաւորաց՝ որ գութ և ողորմ յանձին ունէին, որք յարտասուս հարեալ 'ի վերայ զուր տարապարտ չարչարելոյն և վտանգելոց՝ այպանէին զգործն ապիրատութեան օտար 'ի քրիստոնէութենէ. որոյ վասն և պատիժս իսկ ընդ այնր կրեցին ոմանք 'ի նոցունց յազգայնոցն: Եւ ոչ նոքա միայն, այլ և Հրեայք և այլազգիք անգամ՝ զնոյն աղէտս աղխանային

մարդկօրէն բանիւք և արդեամբք. և օրինականք տաճկաց յայտնապէս խել քրթմնջէին և բողոք հարկանէին զանպատեհութենէ իրացն և ըստ դենին իսկ իւրեանց, որ ոչ ներէ և ոչ յայլազգութիւն զոք բռնութեամբ ածել՝ թող թէ նախապատուութիւն տալ ումեք 'ի կեշանց քրիստոնէից և 'ի միոյ 'ի միւս բռնադատել կամ հրաւիրել անցանել: Իսկ այդն Յունաց ոչ սակաւ շնորհակալութեան արժանի զանձն երևեցուցանէր 'ի ժամանակին առ տառապեալսըն՝ որ յաքսորս և որ 'ի քաղաքին. ընդ որս կարեկից լեալ իբր ընդ վշտալիբեր մարդիկ, թէ արդեօք և իբր ընդ խոստովանողս հաւատոյ, զամենայն մարթելի խնամս ցուցին առ նոսա զմարդասիրութեան և քրիստոնէութեան: Նա թէպէտ 'ի նմին ժամանակի հրաման 'ի դրանէ ելանէր և առ պատրիարգն Յունաց՝ զնոյն անցս և ընդ իւրում իշխանութեան յունադաւան ուղղափառսն անցուցանել, սակայն խոհականութեամբ և ապագային նախատես լինելով՝ բայց 'ի բաց հրաժարեաց ամենևին:

Հալածումն, որոյ նմանն ոչ յիշատակի 'ի պատմութիւնս ազգիս, տևեաց զերկեամ մի մինչև ցելս 1829 ամին: Յոյժ քամնեցաւ Եւրոպա համօրէն՝ տեսեալ այսպիսի հալածումն յայտնի-սամլուսաւորութեան և խաղաղասէր

բարեպաշտութեան ժամանակի։ Այս դարձ արարեալ և դեսպանացն եւրոպացւոց և միաբան բողոքով ձայն բարձեալ 'ի պաշտպանութիւն ուղղափառացն հալածելոց, որպէս թէ 'ի թըշնամանս նոցին եւրոպական տէրութեանցն եղեալ իցէ գործն հակառակ հաւատոյ նոցին և մարդկութեան, յայտ ամենայնէ և 'ի վերին այցելութենէն ընդդատուցեալ արքային և ծանուցեալ զվեհապակն զոր եառն գործել, դարձոյց զաքսորեալսն զամենեսեան 'ի վտարանդութենէն. զտունս և զստացուածս նոցա դարձոյց 'ի նոսա, զատոյց վնաս յազգ առաջինն, ետ նոցա հաւասար այլոց ազգապետ առանձինն և եկեղեցիս, և զամենայն անդորրութեան խաղաղութիւն ընդ մեծաշուք իւրով հովանաւորութեամբ։

Յամենեանն փետրուարի խոստացաւ Մահմուտ արքայ պատրիարգին Յունաց Ագաթանգեղոսի, և ընդ ձեռն նորա բովանդակ ազգին, անյիշաչար լինել անցելոց իրաց, ապահարկս տանել վնասս, և չպահանջել զտուրս եօթնամեան ժամանակին. բազմապատիկ արտօնութիւնս շնորհել նոցա, և հայրապետութ խնամովք վարել առ նոսա։ Այլ նոցա խմացեալ 'ի նմին ժամանակի զապստամբութիւն Ռուսաց 'ի պատերազմ՝ ոչ ինչ անսացին յորդորանաց արքային։

Ի հրատարակել յայտարարութեանն Ռուսաց 'ի Կոստանդնուպոլիս՝ ոչ միայն Մահմուտ արքայ, այլ և ամենայն ժողովուրդն անյողդողդ կամակարութեամբ ձեռն 'ի գործ արարին պատրաստել կազմել ընդ ծով և ընդ ցամաք առ դէմ ունելոյ թշնամեաց ։ Սպարապետն Հիւսէյին փաշա կարգեցաւ 'ի պաշտպանութիւն ամրոցին Շումլայի ․ Նուսուֆ փաշա և ծովակալն Իզզէթ Մէհէմմէտ փաշա 'ի պաշտպանել Վառնա քաղաքի ․ և Խոսրով փաշա կալաւ զհրամանութիւն տեսչութեան Թագաւորեալ քաղաքին ։

Վաղու եւ անցեալ էր սպարապետն Ռուսաց կոմսն Վիթկենշթէյն ընդ Փրութ գետ ․ և յամսեանն յունիսի մեծ գունդն Միքայէլ դքսին ամսօրեայ պաշարման էառ զամուրն Իպրայիլ ․ զօրավարն Ռուտեւիչ զԽասգանա, զօրավարքն Ռէյ և Մէնշիքով զԱնափա, և այլք զայլ տեղիս, և 'ի սկզբան յուլիս ամսոյ մեծն Խագանն 'ի Պազարճըգ ։ Ի լուր այսր ամենայնի առաւել խորհրդոյ կազմեալ արքային 'ի Կոստանդնուպոլիս, հրամայեաց վեզիրին՝ որ էր Մէհէմմէտ Սէլիմ փաշա՝ խաղալ գնալ 'ի Շումլա ընդդէմ Ռուսաց ․ և 'ի մեկնել նորա 'ի Տաւուտ փաշա՝ ինքն իսկ արքայ յայտ արար զյօժարութիւն կամաց իւրոց 'ի զօրավարել բանակին իւրում ․ որոյ վասն և մեծահանդէս շքով գնաց 'ի Րամիզ

չիֆթլիյի 'ի 15 աւուր ամսեանն սեպ-
տեմբերի ։ Յառաջընթաց լինէին և
բերհաջող հեծեալք ասխացիք և 'ի մար-
զիկ գնդէ, և զհետ նոցա անդրուվարք
և ուղտք որ բարձեալ ունէին զկահ և
զգանձս արքային 'ի ձայն պատերազմա-
կանն նուագաց. ապա զօրավարք և պետք
և իշխանք և օրինականք. ապա այլ ևս
գունդ գունդ զօրաց, և ապարապետն
և ակզապահն և այլ աւագանին արք-
ունի ասպատարիւք և ծիրանեգոյն
մուշտակօք ։ Զհետ նոցա գայր գեն-
ալեան, և զնովաւ դասաւորք զօրաց և
էմիրք' որ կարապետ լինէին ուղեգած
կառաւյն յորում կայր դրօշն Մահմէտի,
և շուրջ զնովաւ երկաթասան երամիշաք
արքունի որ երգէին զմաղթանս մար-
գարէին իւրեանց ։ Զկնի նուիրական
դրօշուն գայր Մահմուտ արքայ աշտա-
նակեալ յերիվար աշխարհանց, և
զգեցեալ զգեստ պերճ ամենեքին և ան-
պաճոյճ, և յառաջէր միայն առանձինն
առանց պայալից և թիկնապահաց։ Փոքր
մի հեռագոյն զկնի արքային խաղային
գային մեծամեծ պալատականք և անձ-
նապահապետք նորա, և զհետ նոցին
արք երկուհազար և հինգհարիւր 'ի
մարզիկ գնդէ անուն ընդ հեծեալ և ընդ
հետևակ. ապա պարապիզապան զօրա-
կանք, և կառք բազումք վեցաձիք, և 'ի
վերջէ ամենեցուն բազմութիւնք հրա-
զինաց ։

Սակայն Ռուսք որ ըստ օրէ յառա-
ջադէմ լինէին մինչև 'ի Շումլա և 'ի
Վառնա, թէպէտ և ուրեք ուրեք հա-
րան ևս յՕսմանեանց ։ Ի պաշարման
անդ Վառնայի վիրաւորեցաւ մեծ զօրա-
պետն Մենշիքօվ. և կոմսն Վորոնցով
անցեալ 'ի տեղի նորա' պնդեաց յոյժ
զպաշարումն քաղաքին և խորամանեաց
զպարիսպն։ Եուսուֆ փաշա որ քաղա-
քապետն էր' կամէր անձնատուր լինել
'ի Ռուսս. և խիթն ոչ կարաց 'ի այն
խորհուրդ և զծովակալն խոնարհեցու-
ցանել. ինքն ևեթ եւ գնաց 'ի բանակն
Ռուսաց և մնաց անդէն. իսկ արի ծո-
վակալն Իզզէթ Մէհէմմէտ փաշա երեք-
հարիւր քաջամարտիկք ևեթ խոյս ետ
'ի միջնաբերդ անդր, և սպառնայր հուր
հարկանել 'ի դղեակն. և սպարապե-
տին Ռուսաց անդամ պահանջեալ ընդ-
քաջութիւն առնն' հրաման ետ նմա
ելանել գնալ իւրովքն հանդերձ յազա-
տութիւն ։ Ի գոյժ առմանն Վառնայի
խռովեցան Օսմանեանք 'ի Կոստան-
դնուպօլիս. ալքայ հրամայեաց յաղթու-
նիս զրուել զամենայն ինչս մատնչին
Եուսուֆայ, և գենպետն ինքնին նը-
զովիւք չափ բանադրեաց զնա։ Արկաւ
և վեզիրն յիշխանութենէ իւրմէ' փոխա-
նակ զի ոչ որպէս կարծելն էր արխա-
ցաւ նա 'ի պահուն, և աքսորեցաւ 'ի
Կելիպօլու. և կինքն ալքունի տաւ-
քեցաւ պատուովառ քաղ ծովակալն

Իշխեթ Մէհէմմէտ փաշա ։

Իսկ 'ի հասանել 'ի վերայ տարաժամ սաստկութեան ձմերայնոյն հարկեցան Ռուսք բառնալ զպաշարումն Շումնայի և Սիլիստրէի, և անցանել անդրէն ընդ Դանուբ՝ թողեալ յաւար Օսմանեանց ոչ սակաւ կահս պատերազմի ։ Հասեալ կային և նաւք ինչ Ռուսաց 'ի Զանգ գալէսի. բայց հակառակութիւն բազում կրեալ 'ի մրրկաց՝ ոչ ինչ ոչ կարացին վճարել ։

Յաջողագոյնս քան զնոցա պատահէին արշաւանք զօրացն Ռուսաց յԱսիա. և զօրապետն Փասքեւիչ էառ հետ պհետէ զԿարս, զՓոթի, զԱխլցխա, զՊայէզիտ, զՏիատին, զԹոփրագ գալէ և զայլ տեղիս, և մեկնեցաւ 'ի ձմերոց ։ Եւ յաւուրս անդ ձմերայնոյն ոչ դադարէին դեսպանք Եւրոպացւոց 'ի սակսելոյ զարքայ՝ զի ազատութիւն Հելլէնացւոցն շնորհեսցէ ։

Ի սկզբան 1829 ամին եհաս 'ի Կոստանդնուպօլիս դաղղիացին Ժոպէռ, բերեալ ընդ իւր զպայմանս դաշնակից պետութեանցն հասարակաց 'ի 16 Նոյեմբերի 'ի Լոնտրա, որովք ընդ հովանաւորութեամբ իւրեանց առնուին նոքա զՊելոպոնէս և զԿիկլադեայս, և պահանջէին զի և արքայ հաւանեսցի ընդ պայմանսն, և դուլ զինուց հրամայեսցէ՝ մինչև դարձցին անդրէն 'ի Թագաւորեալ քաղաքն դեսպանք իւ-

րեանց, և խոստացին բերան 'ի բերան յաղագս պայմանաց ազատութեանն Հելլենացւոց և սահմանաց աշխարհին նոցա: Այսմ ամենայնի հարևանցիկ իմն արարին պատասխանի Օսմանեանք, և պատրաստեցան հզօրագոյնս 'ի մարտն առաջիկայ. և յամսեանն փետրուարի ընկէց արքայ յիշխանութենէն զԻզզէթ Մէհէմմէտ, և կարգեաց փոխանակ նորա զՄէհէմմէտ Րէշիտ փաշա:

Յամսեանն մարտի լուեալ արքայի և զգոյժ առմանն Կելիպօլեայ 'ի Ռուսաց՝ առաւել ևս վառեցաւ 'ի զօրաժողովս և 'ի հրահանգս զինուորութեան. և հրաման արար զի ամենայն այր օսմանցի որ կարող իցէ զէն առնուլ՝ թողցէ 'ի բաց զլայնչի և զծանր հանդերձս և զարտախոյր և զփակեղն, և ագանել ըստ ձևոյ և ըստ տարազու մարզիկ գնդացն անձուկս և անպաճոյճ զգեստս, որպիսիս և ինքն էր զգեցեալ:

Յայնմ ամի ընդ ծով ևեթ յաջողեցաւ Օսմանեանց յաղթել մի անգամ նաւատորմին Ռուսաց, և ձերբակալ առնել զմի 'ի նաւուց նոցին 'ի մեծ խնդութիւն քաղաքացւոց. այլ ընդ ցամաք խորտակեաց սպարապետն Ռուսաց Տիպիչ զզօրս Րէշիտ փաշայի. էառ սաստիկ պաշարմամբ զՍիլիստրէ, էանց անլուր համարձակութեամբ ընդ կիրճս Պալքան լերանց, և կալաւ զՄիսիվրի, զԲուրկազ, զԱյտոս և զԳարինապատ,

տալս և զՄէհիմմէտ, և եհաս մերձ յԱ-
դրիանուպօլիս : Բդեաշխք քաղաքին
Խալրահիմ փաշա և Խալիլ փաշա ինքնին
յօժարեցան տալ զնա 'ի ձեռս Մուրատայ.
և տղայ յիննևտասներորդի աւուր ամ-
սեանն օգոստոսի մտին անդր որպէս
դաշնակից բարեկամք, քան թշնամիք
յաղթականք : Նոյնօրինակ յաջողու-
թեամբ եմուտ ընդ նոյն ժամանակս և
սպարապետն փաշքեւիչ 'ի Կարին և 'ի
Բաբերդ, և տալս վանեաց զկուսակալն
Տրապիզոնի :

Իբրև աղդ եղեն իրքս այս 'ի Կոստան-
դնուպօլիս, ծաւալեցաւ աղքայ 'ի խոր-
հրդականաց իւրոց և 'ի դեսպանացն
Եւրոպացւոց զինջանել 'ի հաշտութիւն
խաղաղութեան. և արձակեաց 'ի սոյն
սակս առ Տիպիչ զհամարակալն Մէ-
հեմմէտ Սայիտ էֆէնտի, և զդա-
տաւորն ամիացի զօրաց զԱնատոլուդա-
տրր այէյ :

Այն ինչ դեռ ևս մեկնեալ էր պատ-
գամաւորացն 'ի Թագաւորեալ քաղա-
քէն, և ահա խորով փաշա 'ի վեր
եհան զդաշանն դաւաճութիւն ենի-
չէրեաց ամանց. որոց կամք էին սպա-
նանել զարքայ և զորդի նորա և զամե-
նայն աւագանին և զԵւրոպացիս առ
հասարակ, և տալս ձայն տալ պատե-
րազմի առ ամենայն ազգս Տաճկաց :
Հասան ապա անն զօրագլուխ բերդակա-
նացն Վշոփունի՝ որ գլուխ համարեալ

էր դաւաճանացն, անդէն 'ի մահ դատապարտեցաւ. ընդ նմին և աղայք ոչ սակաւ, և ենիչէրիք վեցհարիւր. և քանդեալ կործանեցան ժողովատեղիք նոցա:

